Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ IV-XI ԴԱՐԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

А. А. МАНУЧАРЯН

РАЗЫСКАНИЯ ПО АРМЯНСКИМ СТРОИТЕЛЬНЫМ СВЕДЕНИЯМ IV—XI ВЕКОВ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
1977
ЕРЕВАН

1071

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ IV—XI ԴԱՐԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1977
ԵՐԵՎԱՆ

БИБЛИОТЕКА

72 Ар 1
Մ 28

Աշխատության մեջ վիմագրական և մատենագրական սկզբնաղբյուրների հիման վրա պարզաբանված են ճարտարապետական բազմաթիվ հուշարձանների կառուցման ժամանակը, ճարտարապետների անունները, նորոգումների բնույթը և ժամանակը: Քննության են առնված նաև այն երևույթները, որոնց մեջ արտահայտվել են դարաշրջանների պահանջներից բխող ճարտարապետական հորինվածքների առանձնահատկությունները:

Մ 30202/703 (02)—77 33—76

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն 1977

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ճարտարապետական մշակույթի ընդհանուր և մասնակի հարցերի լուսաբանման և ըստ ամենայնի ուսումնասիրման գործում առանձնակի կարևորություն ունի ճիշտ ժամանակագրության մշակումը, որի շնորհիվ հնարավոր կլինի պարզել ոչ միայն առանձին ճարտարապետական ձևերի ու հորինվածքների առաջացման պատմությունը, այլև այդ հիման վրա՝ էվոլյուցիոն մանրամասներն առհասարակ: Հայ ճարտարապետության համար դա ունի մեծ կարևորություն, որովհետև մինչև հիմա որևէ համակարգված, ամբողջացված ուսումնասիրություն չի կատարված: Ներկա աշխատությունը, հենված լինելով գերազանցապես վիմական և մատենագրական սկզբնաղբյուրների վրա, կարող է օգտակար լինել ճարտարապետության պատմության մասնագետներին, քանզի այդ սկզբնաղբյուրները ամենավստահելի և առավել կողմնորոշող հիմքն են հանդիսանում ժամանակագրության հարցում: Ըստ արժանվույն գնահատելով արձանագրությունների արտակարգ մեծ արժեքը հուշարձանների պատմության լուսաբանման գործում, քննության գլխավոր շեշտը դրել ենք դրանց վրա, աշխատելով վեր հանել այն ամենն ինչ կարող էր տալ նույնիսկ ամենահամառոտ և սակավախոս վիմական վավերագիրը: Վիմագրական սկզբնաղբյուրների վավերագրական արժեքն առաջին հերթին պայմանավորված է նրանց անմիջական բնույթով: Այդ բնագրերը շարադրվել և փորագրվել են կառուցողների կողմից և այդ իսկ պատճառով ամենահավաստին, ամենաբովանդակալիցը և ամենաբազմակողմանին են: Վիմագրական նյութերը սովորաբար շատ հազվադեպ են համառոտ տեղեկություն տալիս շինության մասին: Ունենալով շարադրանքի ավանդական բնույթ, նրանցում վավերագրվում էին կառուցողները՝ որոնք հիմնականում նպատավորողներն էին, երբեմն նաև ճարտարապետները, կառուցման թվականը՝ թվագրման տարբեր եղանակներով: Պատահում են նաև ինչպես հիմնադրման, նույնպես և ավարտի տարեթվերը, անգամ ամսաթվերը: Ավարտելով այդ հիմնական փաստի վավերացումը, արձանագրության մեջ հաճախ հիշատակվում են նաև նվիրատվությունները, որոնք տեղեկություն են տալիս նորաստեղծ վանքերի տնտեսական վիճակի մասին: Արձանագրությունները բովանդակում են նաև նյութեր նորոգումների վերաբերյալ և դրանով իսկ բացատրում հուշարձանի ճարտարապետական ձևերի մեջ տեղ գտած, ժամանակագրական առումով, անհամապատասխան տարրերի ու առանձնամասերի առկայությունը: Շինարարական արձանագրություններն ինքնին մի հուշարձան են, քանզի նրանցում արտացոլվել են յուրաքանչյուր դարաշրջանին բնորոշ շարադրանքն ու տառաձևերը, որոնցով և կարելի է որոշել թվական
չունեցող արձանագրությունների ժամանակը:

Մատենագրական տեղեկությունները քանակով չեն զիջում վիմագրական նյութերին, սակայն դրանց մի մասի հեղինակները ժամանակակից չեն

հուշարձաններին, ու թեև հարկ չկա կասկածելու նրանց բարեխղճության վրա, սակայն վկայությունների մեջ երբեմն սպրդել են անճշտություններ, որոնք կամ ձեռագրի հետագա ընդօրինակումների, կամ հեղինակի կողմից ավելի հին սկզբնաղբյուրներից ոչ ճիշտ օգտվելու հետևանք են: Բոլոր դեպքերում մատենագրական վկայությունները ևս անհրաժեշտ և հարուստ նյութ են բովանդակում հուշարձանների ուսումնասիրության համար:

Հուշարձանների պատմության ուսումնասիրությունը, ինքնաբերաբար, առաջ է բերում հարցերի քննության երկու մոտեցում՝ աշխարհագրական և ժամանակագրական: Մեր ընտրությունը կանգ է առել վերջինի վրա: Նկատի ունենալով նյութի զուտ ճարտարապետական աղերսը, ինչպես և ուսումնասիրության նպատակը քննության մեջ նախընտրելի համարեցինք հուշարձանները բաժանել տիպերի համակարգման եղանակով, որի շնորհիվ հնարավոր կլինի բացահայտել յուրաքանչյուր հուշարձանի դերն ու կարևորությունը ճարտարապետական մտքի աստիճանական զարգացման ընթացքի մեջ: Հուշարձանների քննության ժամանակագրական սկզբունքը հնարավորություն է ընձեռում տեսնել յուրաքանչյուր դարաշրջանի ամբողջական պատկերը, մինչդեռ աշխարհագրական բաժանումն, իր մեջ բովանդակելով առանձին նահանգների IV—XVIII դարերի հուշարձանները, կմասնատեր աստիճանական զարգացման պատկերը:

Աշխատությունը բաղկացած է երեք գլխից՝ ա) IV—V, բ) VI—VII և գ) IX—XI դարերի շինարարական վկայագրեր:

Վերջին գլուխն, ըստ ճարտարապետական դպրոցների, բաղկացած է չորս ենթագլուխներից՝ Սյունիք, Այրարատ, Անի, Վասպուրական:

IV—V դարերը քրիստոնեական մշակույթի ձևավորման շրջանն են: Տիպերի հորինվածքային ձևերն այդ ժամանակ ամբողջ երկրում եղել են նույնը: Աշխարհագրական բաժանումը, տվյալ դեպքում, բոլորովին անիմաստ է:

VI—VII դարերի հուշարձանները ներկայացված են գերազանցապես Այրարատյան նահանգի կենտրոնով, և աշխարհագրական բաժանումը տվյալ դեպքում պատմականորեն համընկնում է ժամանակագրական բաժանման հետ:

Աշխարհագրական և ժամանակագրական բաժանումները զուգորդվում են նաև երրորդ գլխում: Նկատի ունենալով IX—XI դարերում առաջացած առանձին դպրոցները Սյունիքում, Այրարատում և Վասպուրականում, հուշարձանների կառուցման պատմության ուսումնասիրությունը կատարել ենք ըստ աշխարհագրական բաժանումների:

Հայ ճարտարապետական հուշարձաններն ունեն մի առանձնահատկություն, որը որոշակիորեն հակադրվում է հարցերի լուծման ժամանակագրական սկզբունքին. մեծածավալ համալիրներն իրենց մեջ բովանդակում են տարբեր ժամանակներում կառուցված շինություններ: Նման դեպքերում, հուշարձանների ամբողջականությունը չխախտելու նպատակով, դրանց մի մասը ուսումնասիրել ենք ողջ համալիրով, անկախ նրա առանձնամասերի ժամանակագրական տարբերությանը: Որպես կողմնորոշման պարագա նկատի ենք ունեցել համալիրի շինությունների ժամանակագրական ընդհանուր պատկերը: Դրանց մեջ չեն մտնում Սանահինի և Հաղբատի հուշարձանները, որովհետև համալիրի մեջ միայն մեկական շինություն կա կառուցված X դարում: IX—XI դարերի հուշարձանների բաժնում են տեղ գտել Կեչառիսի

և Տաթևի համալիրները, որպես Այրարատի ու Սյունյաց դպրոցների արգասիք, թեև այնտեղ կան նաև ուշ ժամանակներում կառուցված շենքեր: Չմասնատելու նպատակով Անին ամբողջությամբ քննել ենք մեկ բաժնում:

IV—V դարերի հուշարձանների շինարարական վկայությունների ուսումնասիրությանը զուգընթաց մասամբ անդրադարձել ենք նաև եկեղեցու դավանաբանական որոշ հարցերին և հնարավորին չափով նյութ քաղել Հայաստանում կառուցված առաջին եկեղեցիների և նրանց կրած նախնական փոփոխությունների պատճառների վերաբերյալ:

Շինարարական վկայություններն ուսումնասիրելիս առավել ուշադրություն ենք դարձրել նրանց պատմական ճշտության վրա, քննության ենք առել արձանագրություններում արտացոլված պատմական, հնագրական, երբեմն լեզվական և այլ տվյալներ, աշխատել ենք հնարավորության սահմաններում ճշտել նրանցում հիշատակված պատմական անձանց ով լինելը, ճարտարապետական տերմինները, թվագրության ձևերը, հուշարձանի վրա տեղադրելու ժամանակագրական տարբերակները և այլն:

Ներկա ուսումնասիրության առաջնահերթ խնդիրը շինարարական բոլոր տեղեկությունների հավաքումն է, նրանց ուսումնասիրությունը և այդ հիման վրա նյութի ընձեռած հնարավորությունների սահմաններում հայ ճարտարապետության ժամանակագրական ամբողջական պատկերի ստեղծումը: Աշխատանքը կատարելու համար հենվել ենք մինչև այժմ հայտնի նյութերի, դաշտային աշխատանքների ընթացքում կատարած սեփական հետազոտությունների, վիմագրական և մատենագրական տեղեկությունների վրա: Լայնորեն օգտագործվել են մասնագիտական և հարակից գիտությունների հարուստ գրականությունը և մասնագետ ճարտարապետների դիտողությունները:

Աշխատության մեջ ընդգրկված են 121 շինարարական արձանագրություն, մատենագիր 33 հեղինակ և մանր այլ վկայություններ, որոնք այդ հուշարձանների ժամանակագրության առավել կարևոր ու ստուգախոս սկզբնաղբյուրներ են:

Շնորհիվ այդ վավերագրերի հայտնի են դարձել IV—XI դարերի ավելի քան 300 շինությունների կառուցման ժամանակն ու պատմությունը, 13 ճարտարապետների անունները, շինությունները նպաստավորող բազմաթիվ անձինք, շատ անգամ պատմությունից հայտնի նշանավոր դեմքեր, որոնց մշակութային գործունեության վերաբերյալ վիմական վավերագրերը միակն են: Շինարարական տեղեկությունները, միաժամանակ, ամենաբովանդակ ձևով իրենց մեջ արտացոլում են պատմական տարբեր դարաշրջաններում մշակույթի վերապրած վերելքներն ու անկումները, կազմավորման ու զարգացման ընթացքները, գեղագիտական սկզբունքները և, ամենակարևորը, ճարտարապետական մտքի ինքնատիպությունն ըստ ժամանակագրական պատկերի:

IV—XI դարերում հայ ճարտարապետական արվեստն անցավ կազմավորման չափազանց բարդ ուղի: Ստեղծեց տիպերի այնպիսի հարուստ ու ճարտարապետական ձևերի արտահայտիչ տարատեսակներ, որոնք բազմիցս գրավեցին օտար ժամանակակիցների ուշադրությունը: Սակայն առանց հուշարձանների պատերին պահպանված վիմագիր հիշատակարանների ու մատենագրական նյութերի մանրազնին ուսումնասիրության ճարտարապետության պատմությունն ուրվագծել կատարելապես անհնար է:

IV—V ԴԱՐԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ

Միջնադարյան հայ ճարտարապետությունն ուսումնասիրողներին ներկայանում է առավելապես պաշտամունքային շինությունների բազմազանությամբ: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ աշխարհիկ ճարտարապետությունը, եկեղեցականի համեմատ, ունեցել է նվազ նշանակալից զարգացման ընթացք:

Պալատական շենքերը, բերդերը, կամուրջները, կարավանատները և այլ տիպի շինությունները ճարտարապետական արվեստի այնպիսի մեծ ընագավառներ են, որ առանց ժամանակագրական ամբողջականություն ներկայացնող նյութի հնարավոր չէ պատկերացում կազմել դրանցից յուրաքանչյուրի զարգացման աստիճանական փուլերի, հորինվածքային առանձնահատկությունների և կառուցողական հնարանքների փոփոխման մասին:

Վաղ միջնադարյան աշխարհիկ շինությունների սակավաթիվ մնացորդներն ուսումնասիրելիս, երբեմն չեն բացառվում համեմատաբար լավ պահպանված հոգևոր ճարտարապետության հետ նրանց ավանդույթային կապը և ժամանակագրական զուգահեռներ որոնելը:

Հարկ է նշել, սակայն, որ հին ավանդույթների կիրառման ձևերը, ինչպես և չափերը հոգևոր և աշխարհիկ ճարտարապետության մեջ սկզբունքորեն տարբեր են եղել, որովհետև տարբեր է եղել այդ շինությունների կիրառական նշանակությունը: Պաշտամունքային շինություններում հին արվեստի ...նդական հիմքը դրսևորվում էր որպես կառուցողական տարր, հորինվ...յին նախադրյալ, որի վրա իրագործվում էին նոր մտահղացումներն ու նոր կերպարի որոնումները: Աշխարհիկ ճարտարապետության համեմատությամբ. պաշտամունքային շինություններում առավել կարևոր գործոնը գաղափարական արտահայտության պայմանն էր, որովհետև եկեղեցին մարմնավորում էր հին և նոր ժամանակների աշխարհըմբռնման հակադրությունների խորհրդանիշը: Եկեղեցին միջնադարյան հասարակության փիլիսոփայության դպրոցն էր, որտեղ ձևավորվում էին աշխարհի ճանաչման նոր սկզբունքներն ու իդեալները:

Վաղ միջնադարն իր հասարակական իրավակարգով առաջ եկավ հին աշխարհը կործանող քաղաքական ու տնտեսական մեծ ճգնաժամից: Այդ ճգնաժամն առաջ բերեց գաղափարական նոր հենք, որի վրա վերագնահատման ենթարկվեցին հեթանոսության ավանդներն ու բարոյահասարակական սկզբունքները: Հեթանոսության մարմնական գեղեցկության քաղաքացիական իմաստավորմանը քրիստոնեությունը հակադրեց հոգևոր գեղեցկության սկզբունքը: Եթե հեթանոսական տաճարը, ծառայելով մարդկանց հոգևոր պետքերին, միաժամանակ ներդաշնակում էր իրականության մարմնական

գեղեցկության հետ, արթնացնում աշխարհիկ զգացմունքներ ու քաղաքացիական գիտակցության գաղափար, ապա քրիստոնեական վարդապետությունը բարձրագույն իմաստը տեսնում էր ոչ թե իրական, շոշափելի, առարկայական գեղեցկության մեջ, այլ այն ամենի, ինչ կարող էր իմաստավորվել որպես մտավոր ոգեշնչության արտահայտություն: Մարդու հոգեկան կարողության առավելությունը մարմնական կատարելության հանդեպ դիտվում էր որպես ամենաբանական, հետևապես և ամենաբնական սկզբունք, ուստի և արվեստի, մասնավորապես ճարտարապետության ստեղծագործությունը, իսկ առավել ևս պաշտամունքային ճարտարապետության հորինվածքային կերպարներն առաջին հերթին պետք է սնեին մարդկային հոգևոր պահանջները: Հավատացյալ ամբոխի մոտ նրանք պետք է արթնացնեին հանդերձյալ աշխարհի հավիտենական ու խորհրդավոր պատկերը, որի մոտ պետք է նսեմանային հեթանոսական կուռքերի իրական, բայց անցողիկ արժանիքները: Ահա հենց այս աշխարհայացքների բախման ու հակադրման պայմաններում խաչաձևվեցին հեթանոսական ավանդներն ու քրիստոնեական որոնումները, որի ընթացքում նոր իմաստավորման ու մեկնաբանման ենթարկվեց հին ավանդական մշակույթը: Հեթանոսական ժամանակների ճարտարապետական վիթխարի ժառանգությունից քրիստոնեական շրջանում շատ բան մոռացության տրվեց և պաշտամունքային ճարտարապետության մեջ նորից վերակենդանացան շինությունների այն ձևերը միայն, որոնք կարող էին համապատասխան լինել նոր ծեսերին ու գեղագիտական պահանջներին: Հունական պերիպտերները, որոնք դիտվում էին որպես աստծու բնակարան, փոխարինվեցին ժողովրդի համար աղոթարան լինելու պահանջներին բավարարող բազիլիկներով: Բազիլիկ են եղել քրիստոնեական առաջին եկեղեցիներն Իտալիայում, Բալկաններում, Փոքր Ասիայում, Սիրիայում, Եգիպտոսում և առհասարակ քրիստոնեական համայնքներում ամենուրեք: Սակայն բազիլիկն ավելի հանդես էր գալիս որպես ժառանգական երևույթ, քան քրիստոնեական տաճարի սկզբունքային տեսակ: Այդ պատճառով թաղակապ կառուցվածքով այդ շինությունները չկարողացան երկար բավարարել պաշտամունքային շենքերին ներկայացված պահանջները: Աշխարհի վերացական մեկնաբանության սկզբունքի վրա խարսխված քրիստոնեական գաղափարախոսության համար միայն գմբեթն էր, որ իր հորինվածքային ուրվագծով և ներքին ծավալային լուծմամբ կարող էր համապատասխան լինել կերպարանավորված հոգու արտահայտության համար:

Այս ամենի մեջ մեծ կարևորություն ունեին նաև տեխնիկական հնարանքների, կառուցողական միջոցների, ձևերի կատարելագործումը և, առհասարակ, աստիճանական զարգացման հետ կապված հանգամանքները: Դրանք առավել նպաստավոր պայմաններ էին ստեղծում հորինվածքային ու կառուցողական համարձակ մտահղացումների իրագործման համար:

Եկեղեցական ճարտարապետության նոր ձևերի առաջացման կարևոր գործոններից են ծիսական պահանջները, որոնցով պայմանավորված էին պաշտամունքային շենքերի ծավալատարածական լուծման ձևերն ու տարբերակները:

Աշխարհիկ ճարտարապետության մեջ այդպիսի բազմատեսակ սկզբունքային հարցադրում լինել չէր կարող, և հեթանոսության շրջանում մոնումենտալ ճարտարապետության ժառանգական տարրը նրանում ավելի մեծ ասպարեզ պետք է գտներ: Ինչպես ցույց են տալիս Դվինի, Զվարթնոցի և

նույնիսկ ավելի ուշ շրջանի հուշարձանները (Օրբելյանների պալատը Հորսում), ճարտարապետական հորինվածքների առումով, աշխարհիկ շինություններում որպես սյունազարդ սրահներ գրեթե ամենուրեք օգտագործվել են բազիլիկի սկզբունքները՝ մինչդեռ դրանք եկեղեցական ճարտարապետության մեջ կարճ կյանք ունեցան:

Գաղափարական հակադիր հիմքի վրա կանգնած քրիստոնեության գեղագիտական պահանջները, բնականաբար, արտահայտվելու էին զուսպ և խստության համնող մոնումենտալ ձևերով: Դա հատուկ էր քրիստոնեության վաղ ժամանակներին, իսկ հայ իրականության մեջ, պատմական անցքերի անբարենպաստ բերումով, վերածվեց ավանդական սկզբունքի: Թեև հայ եկեղեցին բազմիցս տնօրինել էր աշխարհիկ իշխանությունից զուրկ երկրի քաղաքական ու հասարակական կյանքը, այնուհանդերձ, նա չուներ վիթխարածավալ, ճոխ շինություններ կառուցելու միջոցներ և չէր կարող մրցել արևելքի և արևմուտքի մեծահարուստ երկրների հետ: Դրան հակառակ, հայ ճարտարապետության ամենաավանդական հատկանիշը դարձավ արտակարգ զսպվածությունն ու դասական պարզությունը, որն առաջ բերեց ճարտարապետական ձևերի առավել ավարտվածության անհրաժեշտություն: Չնայած իրենց ծավալների փոքրությանը, հարդարանքների համեմատական համեստությանը, Հայաստանում մշակված կամ օտարներից փոխառնված ու տեղում վերամշակված առանձին տարրերը, կառուցողական ձևերը և հորինվածքային մտահղացումները մեծ ազդեցություն ունեցան հարևան երկրների վրա, կարևոր ներդրում հանդիսացան համաշխարհային ճարտարապետության գանձարանում:

Բնութագրելով հայ ճարտարապետության նշանակությունը Հ. Ստրժիգովսկին գրում է. «...անհրաժեշտ է միշտ հիշել, որ հայերը վաղ քրիստոնեության ժամանակներում ճարտարապետության մեջ այն էին, ինչ որ իրենց ժամանակի և Եվրոպայի համար դարձան բարոկկոյի իտալական մեծ ճարտարապետները՝ նորի, ինքնատիպի, արտասովոր աշխարհայացքի հանապազօրյա նախաձեռնողներն ու ստեղծագործողները»[1]:

Այս երևույթն, իր էությամբ, թերևս պայմանավորված էր քրիստոնեության տարածման ընթացքի և ձևերի հետ, որի առումով Հայաստանն առանձնակի տեղ է բռնում քրիստոնեական ամբողջ աշխարհում:

Հայաստանն աշխարհի առաջին պետությունն էր, որտեղ քրիս[illegible]ու-թյունը պետական ճանաչում ստացավ: 301 թվականին, երբ քրիստոնեու[illegible]նը Հայաստանում պետական կրոն հռչակվեց, նրա հաստատումը չափազանց անզիջում էր և բացարձակ, մինչդեռ 313 թվականի Միլանի հրովարտակը քրիստոնեությունը հայտարարում էր միայն հանդուրժելի հավատք[2]:

Համեմատաբար ավելի վճռական էին (325 թ.) Նիկիայի ժողովի կանոնները, սակայն այստեղ ևս հեթանոսությունը հաղթահարված չէր[3]: Հեթանոսության պաշտամունքի օջախները շարունակում էին գործել և նրանց ավանդույթները փոփոխակի հաջողությամբ պահպանվում էին նույնիսկ սենատում[4]:

1 *J. Strzigowski*, Die Baukunst Armenier und Europa, I, Wienn, 1918, S. 745.
2 Տե՛ս *Lactanti*, Die mortibus persectorum, p. 48.
3 Տե՛ս *Eusebii*, Vita Constantini, p. 24—42, 48—60.
4 Տե՛ս *Schiller*, Geschichte, j. romisch Kaiserzeit, II, S. 290—292.

Քրիստոնեության հաստատման պատմությունը Հռոմեական կայսրության սահմաններում բավականին ընդարձակ ժամանակաշրջան է ընդգրկում: Վերջնականապես այն իրագործվել է երկու հիմնական փուլերով, որից առաջինը Կոնստանդին Մեծի շրջանն էր, որպես արմատական բեկման փուլ և երկրորդը՝ IV դարի վերջին շրջանը, որպես վերջնական հաստատման փուլ:

Մինչև IV դարի սկիզբը Հայաստանը ևս անցել է պայքարի այդօրինակ փուլեր: Քիչ չեն տեղեկությունները քրիստոնեության առաջին համայնքների գոյության և անզիջում պայքարի մասին նույնիսկ աղբյուրներում՝ մինչև 301 թվականը[5]: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ վաղ քրիստոնեական շրջանի ամենանշանավոր քաղաքներից մեկը՝ Եդեսիան, հաճախ ընդունվել է որպես հայկական քաղաք և այնտեղ գահակալող թագավորներն էլ հայեր էին: Ասողիկը նշում է Եդեսիայի առաջին քրիստոնյա թագավոր Աբգարի և հայոց Սանատրուկ թագավորի ազգակցական կապը, և Եդեսիան այդ հիման վրա Հայաստանին միացնելու օրինականությունը[6]:

Բոլոր դեպքերում քրիստոնեության բացարձակ հաղթանակը 301 թվականին անտարակույս վկայում է, որ քրիստոնեական վարդապետության ազդեցությունը IV դարի առաջին տարիներին, թերևս III դարի վերջերին[7], հանդես էր գալիս նույնպիսի համատարած և բացարձակ ձևով, որպիսին Հռոմում՝ առնվազն դրանից մեկ դար հետո: Հեթանոսության այդ հզոր ու դասական երկրում անհամեմատ դժվար էր հաղթահարել հին հավատքը: Ահա թե ինչու I—IV դարերի նույն ժամանակաշրջանում քրիստոնեությունն ավելի խոր արմատներ գցեց ոչ թե Հռոմում, այլ Հայաստանում:

Ի տարբերություն քրիստոնեության տարածման ոլորտի մեջ մտած մնացած երկրների, Հայաստանը միակ անկախ երկիրն էր և իր ներքին գործերը կարող էր տնօրինել սեփական հայեցողությամբ: Այս երևույթը կարևոր էր այն տեսակետից, որ չնայած Հայաստանում չկային քրիստոնեության այնպիսի զորեղ օջախներ, ինչպիսիք էին Ալեքսանդրիան, Անտիոքը, Կեսարիան, Նիկոմեդիան և այլն, այնուհանդերձ, չկար նաև այնպիսի տարածման արգելակ, ինչպես Հռոմը:

Այս ամենից կարելի է պարզ պատկերացնել հայ աշխարհի կարևորությունը քրիստոնեական մշակույթի ձևավորման մեջ: Այդ մասնավորապես նկատելի է ճարտարապետության բնագավառում: Այն ժամանակ, երբ Հռոմում ու այլ երկրներում քրիստոնյաները ենթարկվում էին դաժան հալածանքների, երբ նրանք ապաստանում էին կատակոմբներում և իրենց հոգևոր կարիքները բավարարում էին ծպտյալ, գետնահարկ տներում, պաշտամունքային ճարտարապետության նոր ձևերի զարգացման մասին խոսք լինել չէր կարող: Մինչդեռ IV դարի առաջին իսկ տարիներից Հայաստանում քրիստո-

5 Տե՛ս Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 148—159, 201. Սրբոյն «Պատմութիւն տանն Արծրունեաց ի վերայ Արծրունւոյ», Կ. Պոլիս, 1852, էջ 49—52, Սրբոյն Հօրն մերոյ Մովսէս Խորենացւոյ, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1869, էջ 294, Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 347—348:
6 Տե՛ս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 46, Ասատուրեան, Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ 190-են, Ն. Ք., մինչև 428, Հ. Ք., Վենետիկ, 1912, էջ 198—200:
7 Տե՛ս Ա. Մալխասյան, Երբ են հայերը ընդունել քրիստոնեություն, «Էջմիածին», 1944, № 1, էջ 22—26: *A. Harnack*, Mission und Ausbreitung des christientum in den drei ersten Jahrhunderten, Leipzig, 1902. *Tournebize.* Histoire politique et religieuse de l'Arménie Paris, 1900, p. 428.

նեությունն արդեն հզոր քաղաքական ուժ էր, ուներ բոլոր հնարավորություն-ները և փորձեր էր կատարում քրիստոնեական վարդապետությունը մարմնա-վորող ճարտարապետական հորինվածքների որոնման գործում[8]։

Հայաստանի քրիստոնեական ամենավաղ, մասնավորապես IV դարի շինությունների հորինվածքային պանագանությունները պարզելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նրանց մի մասն առաջ է եկել հեթանոսական շինությունների օգտագործման, հարմարեցման կամ վերաշինության ճանապարհով։ Երկրորդ՝ գանվելով նոր գաղափարախոսության, հետևապես և նոր արվեստի ձևավորման դեռևս սաղմնային վիճակում առավելապես հենվել է ժողովրդական ավանդույթների և կառուցողական սկզբունքների վրա։ Թեև քրիստոնեության սկզբնական շրջանում Հայաստանում արդեն ձևավորվել էին բավականին հարուստ ճարտարապետական ավանդույթներ[9], որոնք կայուն հիմք էին ստեղծել դասական արվեստի համար, սակայն, հավանաբար, ինչպես և նախկինում, այն մեկուսացված չէր զարգանում և նոր շինությունների մեջ նկատվում են հունա-հռոմեական և սիրիական ազդեցությունները[10]։

Սիրիական և անտիկ ճարտարապետության շատ տարրեր նշմարելի են հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի հնագույն արվեստում։ Այդ տարրերը դեռևս շատ դարեր առաջ տարածվել էին Առաջավոր Արևելքի և հունական մշակույթի մեջ՝ վերջինիս կազմավորման շրջանում[11]։

Տեղական ավանդույթները հիմք էին հանդիսանում այնպիսի վճռական հարցերում, որոնցով պայմանավորված էին շինությունների հորինվածքային և գեղագիտական առանձնահատկությունները։ Տանիքի, գմբեթի, կամարների տեսակների և սյուների կառուցողական տարրերից շատերը կարելի է տեսնել ժողովրդական հնագույն փայտյա կառուցվածքներում[12]։

Նախաքրիստոնեական Հայաստանի մոնումենտալ ճարտարապետության կապը միջնադարյան ճարտարապետության հետ կարելի է տեսնել Հայաստանի առաջին եկեղեցիներից մի քանիսի տակ հայտնաբերված հեթանոսական հիմնապատերի և հեթանոսական տաճարների շենքը եկեղեցի դարձնելու մեջ, որի մասին բազմիցս տեղեկացնում են պատմիչները[13]։

Հեթանոսական հիմնապատերի առկայության վերաբերյալ առս ‚ է Ն. Տոկարսկին։ Նրա կարծիքով հեթանոսական շինությունները է կողմնորոշվեին միայն հյուսիսից հարավ և որպես ամենակարևոր ապ ․յց

8 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, 1, Երևան, 1942, էջ 209։

9 Տե՛ս Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIVвв., Ереван, 1961, стр. 11—36. «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 76։

10 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 47—53, Н. Я. Марр, Ереруйская базилика, Ереван, 1968, стр. 28—35.

11 Տե՛ս F. Sarre und E. Herzfeld, Iranische Felsrelefs, Berlin, 1910, S. 8, Lehmann-Haupt, Armenien, II, 2, S. 483, 484, 577, Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 201, 202.

12 Տե՛ս Ст. Лисициан, Крестьянские жилища Высокой Армении, „Известия" Историко-археологического института, IV, стр. 68, 69. Ս. Վարդանյան, Հազարաշենը և նրա նշանակությունը հայ ճարտարապետության մեջ, «Լրաբեր» հաս. գիտ., 1967, № 6, էջ 78—88։

13 Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 401—402, Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 12, Հովհաննես Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 35, Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, Երևան, 1967, էջ 45։

օրինակ է բերում Գառնիի հեթանոսական պերիպտերը[14]։ Այս հուշարձանի հյուսիսից հարավ կողմնորոշումը տարօրինակ բացառություն է ոչ միայն Հայաստանում, այլև հակասում է հելլենական տաճարների կողմնորոշման ավանդական սկզբունքներին։ «Աստծուն նվիրված հունական տաճարները գլխավոր ճակատով միշտ ուղղված են եղել դեպի արևելք, իսկ մահից հետո աստվածացված հերոսներին նվիրված տաճարները ուղղվում էին դեպի արևմուտք՝ մեռյալների թագավորության կողմը»[15]։ Ի դեպ, Գառնիի տաճարը հյուսիսից հարավ կողմնորոշումն այնքան էլ ճշտորեն չի պահպանված և այդպես է տեղադրվել, հավանաբար, տեղանքի հետ ներդաշնակելու նկատառումով։

Հայաստանի տաճարների կողմնորոշումը պարզելու համար հեթանոսական հիմնապատերի մնացորդները շատ ավելի վստահելի հիմք են և անտարակուսորեն վկայում են, որ կողմնորոշումն, առանց բացառության, եղել է արևելքից-արևմուտք։

Սկզբնական շրջանում բազիլիկներն ունեցել են քաղաքացիական նշանակություն։ Հռոմեական բազիլիկներում կենտրոնը եղել է շինության միջին մասը։ Բազիլիկ հորինվածքի ամենակատարյալ ձևերը սովորաբար կապում են հռոմեական ճարտարապետության հետ։ Այստեղ կարելի է հանդիպել միանավ և բազմանավ սրահներ[16]։
մ. թ. ա. IV—I դարերում կառուցված հայտնի տաճարների տիպը

Հին Հայաստանի կավաշեն մոդելներից հիշեցնում է միանավ խորանավոր սրահները[17]։ Թերևս հենց սրանք էլ պետք է համարվեն խորանավոր բազիլիկների հնագույն նախատիպերը։ Սակայն այս բազիլիկները տակավին շատ են հեռու քրիստոնեական խորանավոր բազիլիկների ճանաչված տիպից։
բազիլիկների առաջացման նախապայ-

Նկարագրելով քրիստոնեական բազիլիկների հնագույն շրջանում «Քրիստոնեական մանները, Գ. Ա. Սարգսյանը գրում է, որ հնագույն շրջանում «Քրիստոնեական ծեսի առաջին մշակված ձևը, հավանաբար, մահացած վկաների պաշտամունքն էր» և եկեղեցական շենքերը կրել են ոչ թե ծիսակատարության համար նախատեսված պաշտամունքային շինության, այլև մատուռի բնույթ։ Միայն 313 թվականից աղոթարահի և սրբացված վկաների պաշտամունքային ֆունկցիաները միացվեցին, որի հետևանքով առաջ եկան քրիստոնեական տաճարի երկու կարևոր բաղկացուցիչ մասերը[18]։ Այս երևույթի համաձայն քրիստոնեական առաջին շինություններն իրենց բուն նշանակությամբ չեն եղել աղոթարահ։ Բազիլիկ շենքը դիտվել է որպես հավաքույթների սրահ, որտեղ, ինչպես Թ. Թորամանյանն է ասում, «Հավաքված կատարեին հաց կտրելու գլխավոր արարողությունը և համեստ չափով աղոթք կամ սաղմոսերգություն։ Այս հավաքումը ավելի ընտանեկան կամ եղբայրական խմբակցության երևույթ ուներ»[19]։

14 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении, стр. 71, 72.
15 ВИИ (Всеобщая история искусств) М., 1956, т. I стр. 165.
16 Տե՛ս W. M. Ramsay and L. Bell, The Tousand and one churches, London, MCMLX, p. 308, J. Strzigowski, Die Baukunst..., S. 227, 358, ВИА, (Всеобщая история архитектуры), II, стр. 434, 450, 452, 540—543, 556, 558—561, 563 և այլն։
17 Տե՛ս С. А. Есаян, Бронзовые модели культовых площадок древней Армении, „Советская Археология", 1971, стр. 206—208.
18 Տե՛ս ВИА. IV, М.—Л., 1966, стр. 22—23.
19 Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 208։

Հայաստանում սկզբնական շրջանի եկեղեցական ծեսերի մասին Բուզանդը հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Մանավանդ սովորություն ունեին հավաքվել այն գլխավոր եկեղեցում և կատարել այնտեղ եղած սրբերի հիշատակը տարեցտարի սահմի ամսի յոթին, Հովհաննես մեծ մարգարեի մատուռում: Նույնպես և մյուս աշակերտների առաքելական մատուռներում և նահատակների վկայարաններում ամեն տարի հավաքվում էին, նրանց վարքի, կյանքի և քաջ գործերի հիշատակի տոնի օրը խմբովին ցնծում էին»[20]:

Ինչպես տեսնում ենք այս վկայությունից, ծեսերի հիմնական բովանդակությունը սրբերի հիշատակն էր: Այս տեղեկությունը վերաբերում է քրիստոնեության տարածման առաջին տարիներին: Սակայն հենց այդ ժամանակ միայն, երբ քրիստոնեությունն ազատություն ստացավ և դրա անմիջական հետևությամբ եկեղեցիները դարձան մասսայական աղոթատեղի՝ բազիլիկի մեջ սրբացված մասն արդեն անհրաժեշտ էր առանձնացնել: Առանձնացված տեղում կառուցվում էր որմնախորշի նման բարձրադիր հարթակով պաշտամունքային կենտրոնը:

Թ. Թորամանյանը ելնելով հունա-հռոմեական աստվածարանների մեկնություններից[21], քրիստոնեական խորանների առաջացումը կապում է Հովհաննու հայտնության Դ և Ե գլուխներում նկարագրված երկնային գահի պատկերի հետ[22]: Նմանօրինակ նկարագրություն ունի և Ղազար Փարպեցին[23]:

Այս նկարագրությունների մեջ էականն այն կարևորությունն է, որ խորանին վերագրել է քրիստոնեական դավանանքը, որով և այն տարբերվում է հունա-հռոմեական աշխարհիկ բնույթի խորանավոր սրահներից: Ինչ վերաբերում է պաշտամունքային շենքերին, ապա բոլոր նախադրյալները կան համոզվելու, որ խորանավոր սրահի այն տիպը, որն ընդունելի էր դարձել որպես քրիստոնեական տաճար, Հայաստանում գոյություն է ունեցել տակավին մինչև IV դարը:

Ագաթանգեղոսի տեղեկություններից երևում է, որ Գրիգոր Լուսավորիչը միշտ չէ, որ ավերել է հեթանոսական պաշտամունքային շենքերը: Կարճ ժամանակում համատարած կերպով եկեղեցիներ կառուցելն անհնար էր և, որպես սկզբունք, նա ավերում էր միայն կուռքերը և, շինության մեջ, նրանց տեղը կանգնեցնում խաչը[24]:

Նկարագրելով Լուսավորչի շինարարական առաջին գործեր[illegible]ղաթանգեղոսը նախ թվում է հեթանոսական պաշտամունքի առավե[illegible]ակված կենտրոններում գտնվող մեհյանները, մասնավորապես Աշտիշա[illegible]սկեմոր, Ոսկեծնի, Աստղիկի, Սենեակ-Վահագնի և Բագավանի տաճարները: Այնուհետև բերելով Հովհանն Մկրտչի և Քրիստոսի վկա Աթանագինեի մասունքները, Լուսավորիչը գալիս է Եփրատ գետի ափին եղած հռչակավոր մեհյանները (Բագավան) և «ի բարձրաւանդակ տեղի մեհենացն, կործանել զբագինսն, և շինել զվկայարանս նոցա»[25]:

Բագավանը նախաքրիստոնեական ժամանակներից ի վեր հեթանոսական պաշտամունքի առավել ճանաչված կենտրոններից մեկն էր: Նրա մասին

20 Բուզանդ, էջ 19:
21 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 209 (տողատակում):
22 Տե՛ս «Աստուածաշունչք», Վենետիկ, 1860, էջ 1201—1202:
23 Տե՛ս «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1907, էջ 60—61:
24 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 397:
25 Նույն տեղում, էջ 411:

հնագույն վկայությունները վերաբերում են մ. թ. ա. I դարի սկզբներին: Խորենացին գրում է, որ Տիգրան Բ-ը «...Պատուել զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի և Բագնացն աւանի, որ ի Բագրեւանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք»[26]: Հետագայում այս մեհյանի նշանակությունը գնալով մեծանում է: Խորենացին տեղեկացնում է, նաև որ Վաղարշակ թագավորը Նավասարդի ժողովրդական տոնն այստեղ է սահմանում: Այդ էր պատճառը, որ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեության տարածման ժամանակ այդ վայրին առանձնակի ուշադրություն դարձրեց[27]: Շարունակելով, վկայարանի հաստատման պատմությունը, Ագաթանգեղոսը նկարագրում է մեհյանի բագինն ավերելու մանրամասնությունները. «մրճօք տապալեսցեն զշինուածս բագնացն»[28]: Մուրճի գործածությունն այստեղ տպավորիչ բնութագրում է ավերման եղանակը: («Զշինուածս բագնացն», անկասկած, այն քանդակներն էին, որոնք Խորենացու վկայությամբ Վաղարշակ թագավորի պատվերով կանգնեցվել էին բագինի մեջ[29]: Այս պատմությանն Ագաթանգեղոսն ավելացնում է մանրամասներ մեհյանում կատարած վերափոխությունների մասին, հատկապես ընդգծելով, որ այդ վերափոխությունները վերաբերում են ներսի սրբացված առանձնամասը կազմող սեղանին: «Եւ եդ անդ զհիմունս եկեղեցւոյն, և ուղղեաց սեղան փառացն Քրիստոսի. զի նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց: Եւ ուղղեալ սեղան յանուն սուրբ Երրորդութեանն, և կազմեալ աւազան մկրտութեան...»[30]: Առաջին բառերը՝ «և եդ անդ զհիմունս եկեղեցւոյն» պետք է հասկանալ ոչ թե շինարարական, այլ պաշտամունքային օջախ հաստատելու իմաստով: Տեղեկության շարունակությունն այդ հանգամանքն ավելի է ընդգծում: Ագաթանգեղոսի տեղեկությունն ավելի կարևոր է, երբ նա խոսում է Էջմիածնի Մայր տաճարի մասին և նշում ոչ թե շենքի, այլ նրա մեջ սեղան շինելու փաստը[31]:

Տեղի ժողովրդին Լուսավորիչը մկրտում է Բագավանի եկեղեցու հաստատումից հետո: Այստեղից էլ հետևում է, որ Բագավանի եկեղեցին Հայաստանի քրիստոնեական առաջին պաշտոնապես ճանաչված պաշտամունքային շենքն է: Բագավանից հետո Գ. Լուսավորիչը շրջելով «ամենայն գաւառս...» «յաւանս և յագարակս շինէր եկեղեցիս, և առնէր մկրտութիւն և կացուցանէր քահանայս»[32]:

Նկարագրելով Աշտիշատի հեթանոսական տաճարներն Ագաթանգեղոսը, չի խոսում այնտեղ եկեղեցի հաստատելու մասին: Այդ բացը լրացնում է Բուզանդը, նույնպես ընդգծելով, որ Լուսավորիչն ավերել է ոչ թե մեհյանը, այլ բագինը[33]: Հակառակ Ագաթանգեղոսի, Բուզանդը վկայում է, որ առաջին եկեղեցին հիմնվել է Աշտիշատում: Այստեղ պետք է ավելացնել նաև Բուզանդի այն կարևոր տեղեկությունը, որ հեթանոսական մեհյանների

26 Խորենացի, էջ 201—202:
27 Տե՛ս *И. А. Орбели*, Избранные труды, Ереван, 1963,труды, стр. 455.
28 Ագաթանգեղոս, էջ 412:
29 Տե՛ս Խորենացի, էջ 216:
30 Ագաթանգեղոս, էջ 413:
31 Տե՛ս նույն տեղում, էջ 424, 425:
32 Նույն տեղում, էջ 414:
33 Տե՛ս Բուզանդ, էջ 19, 47, 48:

և քրիստոնեական եկեղեցիների մեջ սրբացված առանձնամասը գտնվում էր միևնույն տեղում: Աշտիշատի եկեղեցու մասին նա ասում է. «...Թագավորի, մեծամեծների, նախարարների ու ժողովրդի բուռն բազմության հետ միասին պատվել այն տեղերը, որոնք առաջ կուռքերի, պատկերների տեղերն էին և հետո ատծու անունով մաքրվեցին ու դարձան աղոթքի տներ...»[34]:

Այս տեղեկությունները կարևոր են նրանով, որ ցույց են տալիս հեթանոսական և քրիստոնեական պաշտամունքային շինության կառուցվածքային նույնությունը: Այսինքն՝ հեթանոսական տաճարն էլ քրիստոնեական եկեղեցու նման ունեցել է սրբացված առանձնամաս, որտեղ դրվել է սրբության սրբոցը, և Գրիգոր Լուսավորիչը ավերելով այն՝ նույն տեղում կանգնեցրել է խաչը: Այդպիսի մեհյաններ Հայաստանում կառուցվել են տակավին վաղ շրջանում[35]. Բագավանի մեհյանը կառուցվել է մ. թ. ա. I դարում: Այս բոլորը վստահելի հիմք են տալիս համոզվելու, որ Ցոլակերտի (Տաշբուռուն) եռանավ բազիլիկի նախաքրիստոնեական ժամանակներին պատկանելը օրինաչափ երևույթ է և տակավին մ. թ. ա. առաջին հազարամյակների սկզբներին կազմավորված խորանավոր բազիլիկի հորինվածքը հարատևել է հայ ճարտարապետության մեջ մինչև քրիստոնեության առաջին դարերը[36]:

Հեթանոսական ավանդների վրա կառուցված քրիստոնեական բազիլիկները ծիսական նոր պահանջների հետևանքով հորինվածքային զգալի փոփոխությունների ենթարկվեցին: Սկզբնական շրջանում այդ փոփոխությունները կատարվում էին առանձին հավելումների միջոցով, որոնք ստատիճանական զարգացման ընթացքում առաջ բերեցին հորինվածքային տարբերակների մեծ զանազանություն և լիովին ձևափոխեցին բազիլիկների սկզբնական պարզ կերպարը: Այդ պատճառով քրիստոնեական ճարտարապետության ժամանակագրական առանձնահատկությունները պարզաբանելու համար առաջնային նշանակություն կարող են ունենալ հավելումների առաջացման ու ստատիճանական ձևափոխման պատճառներն ու օրինաչափությունները:

Հորինվածքային նոր տարբերակների առաջացման նախապայմաններից ամենանշանավորը եկեղեցիներին կից կառուցված ավանդատների և արտաքին սյունասրահների հավելումն էր: Շինությունների ժամանակագրական հա կանիշներն ու ոճական առանձնահատկությունները քննելու համար կար է պարզել այդ հավելումների պատճառները և դրանց հիման վրա նրա առաջացման ժամանակը:

Թ. Թորամանյանը, ելնելով 555 թվականի Դվինի ժողովի որոշումներից, գտնում է, որ ավանդատները ծառայել են որպես քահանաների բնակարան[37]: Այդ ժողովի 14-րդ կետում ասված է. «Պաշտաւն և պատարագիք և սպասք սրբոյ եկեղեցւոյն ի գլխաւոր քահանային տան եղիցի, որպէս յառաջագոյն կարգեալ է: Եւ ինքն գլխաւոր քահանայն զեկեղեցին մի իշխեսցէ թողուլ եւ գործոյ տան պարապել, այլ մշտենջենաւոր ի սուրբ եկեղեցւոջն կացցէ, զի

34 Նույն տեղում, էջ 19:

35 Տե՛ս Խորենացի, էջ 117:

36 Ցոլակերտի բազիլիկի կիսակլոր խորանը Ա. Սահինյանի իրավացի կարծիքով հավելված է: Սակայն նա հակված է այն տեսակետին, որ այդ հավելումը կատարվել է նախաքրիստոնեական ժամանակներում (Տե՛ս «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը», Երևան, 1955, էջ 192):

37 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 148:



Արևիս. Թանահատի սբ. Ստեփանոս եկեղեցու ավերակները



Դվինի կենտրոնական թաղամասի աքսոնոմետրիկ պատկերը (ըստ Գ. Քոչոյանի)



Տեկորի տաճարը հարավ-արևմուտքից (մինչև ավերումը)



Սահակ Կամսարականի արձանագրությունը

պաշտաւնն աղաւթքն ատւնջեան եւ գիշերոյ ժամուցն եւ զտեսչութիւն ժողովրդոցն մի խափանեսցէ. իսկ այլ ընկերքն զաման փոխանակաւ կացցեն ընդ նմա անպղերգաբար»[38]:

Թ. Թորամանյանն այս տեղեկության հիման վրա ենթադրում է, որ ավանդատները հնում ծեսի համար գործածվող սրբացված իրերի պահարաններ չեն եղել, որովհետև այդ իրերը պահվել են ավագ քահանայի տանը: «Յառաջագոյն կարգեալ է» արտահայտությունը պետք է վերաբերվի շատ վաղ ժամանակներին: Այսպես է եղել քրիստոնեության տարածման առաջին տարիներին[39], երբ եկեղեցիներում ավանդատների կառուցումը տակավին ընդունված չէր: Բոլոր դեպքերում քահանաների բնակությունը եկեղեցում կարող էր միայն ժամանակավոր երևույթ լինել և ամենևին չէր կարող պատճառ դառնալ բոլոր ժամանակների համար հաստատուն բնույթ կրող ճարտարապետական ու ծիսական այդ տարրի կառուցման գործում: Այս առումով ուշագրավ է Մ. Օրմանյանի բացատրությունը, որը բերում ենք ամբողջությամբ. «Աւանդատուն—եկեղեցիներ սովորաբար պահարաններ ունեն, մեկն եկեղեցւոյ աջակողմն, որ և Մկրտումն կը կոչուի և միւսը ձախակողմն է, որ է Սարկաւագատունը, և այս ձախակողմի պահարանն է, որ աւանդատուն ալ կը կոչուի, որովհետև հոն կը պահին եկեղեցւոյ սպասներն ու զարդերը, որք են աւանդք, այսինքն՝ եկեղեցւոյ յանձնուած իրեր: Ըսպասներէն ու զարդերէն թանկագիններն ու ընտրելագոյնները յաճախ կը զատուին, և եկեղեցւոյս ետև ամուր և ամրափակ յատուկ պահարանի մեջ կը պահուին՝ որ կը կոչուի Գանձատուն: Այս տարբերութիւն յառաջ բերինք ճշգութեան համար, ապա թե ոչ սովորական գործածութեան մեջ աւանդատուն բառը կը գործածուի իբր պահարան անունին համանշանակ և երեք պահարաններուն ալ ավանդատուն անունը կը տրուի»[40]:

Ագաթանգեղոսը գրում է, որ դեռևս մինչև Նիկիայի ժողովը եկեղեցու ոսկեղենը և «զպատուական կարասին... ի տունս նուիրաց սրբոց վկայիցն դնէին»[41]: Այս վկայությունից պարզվում է, որ եկեղեցու սպասքը սովորություն է եղել պահել եկեղեցում մինչև 325 թվականը:

Հարցի լուծման համար մեծ կարևորություն ունի նաև ավանդատների տեղադրությունը: Ավանդատները սովորաբար կառուցվել են բեմական խորանին կից: Նրանց մուտքը գտնվել է դեպի բեմը տանող աստիճանների մոտ, իսկ երբեմն՝ ուղղակի բեմի վրա:

Ավանդատները հիմնականում ծառայել են որպես պահարան. այդ վերաբերվել է նաև մեկ ավանդատնով եկեղեցիներին: Ամենայն հավանականությամբ քահանաները բնակվել են այդ սենյակում, որից էլ գալիս է նրա սարկավագատուն անունը, սակայն ավանդատների առաջացման պատճառը ոչ թե քահանաների բնակության համար սենյակ ունենալու անհրաժեշտությունն է եղել, այլ նրանց այդտեղ բնակվելը բխել է սպասքներն այդ սենյակում հսկելու անհրաժեշտությունից:

Ուշագրավ են արտաքին մուտքերը որոշ եկեղեցիների ավանդատներում, որն էապես փոխում է նրանց գործառնական իմաստը: Թ. Թորամանյանը

---

38 «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 484:

39 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 395—410, Խորենացի, էջ 201:

40 Մաղաքիա արք. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1957, էջ 81:

41 Ագաթանգեղոս, էջ 444:

2—892

ենթադրում է, որ արտաքին սյունասրահների հետ միասին այդ ավանդատները ծառայել են որպես ապաշխարության սենյակներ[42]: Սակայն ավանդատների այս մուտքերը հանդիպում են շատ քիչ հուշարձաններում և հատկապես այն դեպքում, երբ գոյություն են ունեցել մի քանի սենյակներ և դրանցից մեկը օգտագործվել է այլ նպատակներով:

Այն, որ ավանդատների կառուցումը կապված է ծիսական երևույթների հետ ապացուցվում է նաև նրանով, որ միայն եկեղեցիներն են ունեցել ավանդատներ: Հոգևոր բնույթի այլ շինությունները (փոքրածավալ եկեղեցի, մատուռ, զանգակատուն, գավիթ) որտեղ ծիսական արարողություններ չեն կատարվել, ավանդատների կարիք չեն ունեցել: Գավիթներում ավանդատներ հանդիպում են միայն XIII դարի առավել շքեղ եկեղեցական շինություններում, որտեղ արարողությունները կատարվել են հավատացյալների մեծաքանակ բազմությամբ, և եկեղեցական շենքը ի վիճակի չի եղել բավարարել ծեսի տարբեր կարիքները:

Ավանդատների անհրաժեշտությունը, որպես պատարագի համար գործածվող իրերի և զգեստների պահարաններ, քրիստոնեության հաստատումից անմիջապես հետո առաջ գալ չէր կարող, որովհետև, ինչպես ասացինք, սկզբնական շրջանի պարզ ծեսերը մեծ քանակի իրեր օգտագործելու պահանջ չունեին և դրա համար էլ կարող էին պահվել ավագ քահանայի տանը: Սակայն, ավանդատների կարիքը զգացվեց քրիստոնեության տարածման առաջին տարիներից հետո, երբ եկեղեցին դառնալով հասարակական և ամենակարևորը՝ տնտեսական մեծ ուժ ունեցող հիմնարկություն, սովորական աղոթատնից վերածվեց խորհրդավոր արարողությունների վայրի: Գրիգոր Լուսավորչի օրոք եկեղեցիներն արդեն սեփականատիրական ինստիտուտներ էին: Նրանց հիմնարկությունն անհնար էր առանց նյութական հիմքի: Ագաթանգեղոսը տեղեկացնում է, որ քրիստոնեությունը Հայաստանում տարածելուց հետո Լուսավորիչը մեծ աշխատանք է կատարել եկեղեցու վարչական կազմակերպության գործում՝ հաստատել է թեմեր, միաբանություններ, ստեղծել է հոգևոր դասի աստիճանավորությունն ըստ պաշտոնների և այլն[43]:

Նման պայմաններում մեկ աղոթասրահից բաղկացած պաշտամունքային շենքը հազիվ թե բավարարեր տեղի հոգևոր հաստատության պաշտամունքային կարիքները: Եթե տնտեսական կարիքներին ծառայող [illegible]ը կարող էին տեղավորվել եկեղեցու շրջակայքում, ապա արարողու[illegible] համար անհրաժեշտ ամբողջ իրերն ու մասունքները պետք է գտնվեին եկեղեցու ներսում, մասնավորապես բեմին մոտ՝ գործածման հարմարության նկատառումով: Այդ տեղը միայն ավանդատունը կարող էր լինել:

Սկզբնական շրջանում բավարարվում էին մեկ ավանդատնով, որը կառուցում էին եկեղեցու արևելյան խորանի հյուսիսային կամ հարավային կողմում: Ծիսական արարողությունների աստիճանական ճոխացման հետևանքով ավելանում էր ավանդատների քանակը և փոփոխություններ առաջացնում շինությունների ընդհանուր հորինվածքում:

Հավելման երկրորդ երևույթը եկեղեցիներին կից կառուցված արտաքին սյունասրահներն էին, որոնց առաջացումը Ա. Սահինյանը կապում է Նիկիայի 325 թվականի ժողովի հետ և մեկնաբանում որպես ապաշխարության

42 Տե՛ս Թ. Թորամանյան Նյութեր..., I, էջ 154:

43 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 432:

համար նախատեսված առանձնամաս[44]: Նիկիայի ժողովի որոշումներից մեկում ասված է, որ ապաշխարողները պետք է դուրսը կանգնեն և դրսից լսեն եկեղեցում կատարվող արարողությունը[45]:

Ապաշխարության գաղափարը մեծ կարևորություն ուներ հատկապես քրիստոնեության տարածման սկզբնական տարիներին, երբ հալածանքներին զուգընթաց կարիք էր զգացվում հեթանոսներին զանգվածաբար հաղորդակից դարձնել եկեղեցուն, և պատահական չէ, որ այդ սրահները բնորոշ եղան միայն առաջին եկեղեցիներին ինչպես IV—V, նույնպես IX—X դարերում: Հայաստանում (որպես քրիստոնեությունը պետական կրոն ընդունած առաջին երկիր) արտաքին սյունասրահների կարիքը զգացվել էր տակավին Նիկիայի ժողովից առաջ, երբ քրիստոնեության տարածումը ընդունել էր մասսայական և համատարած բնույթ: Համենայն դեպս, ապաշխարության մասին բազմիցս նշում են մեր պատմիչները, երբ նկարագրում են քրիստոնեության մասսայական տարածման ընթացքը Լուսավորչի օրոք: Ուշագրավ են մասնավորապես Լուսավորչին վերագրված կանոնները, որոնցում խոսվում է արտաքուստ ապաշխարելու մասին[46]:

Հարկ է նշել նաև, որ որպես ճարտարապետական երևույթ ես դրանք բավական հին ծագում ունեն: Ավելի հավանական է, որ դրանք աշխարհիկ ճարտարապետությունից ընդօրինակված լինեն: Համենայն դեպս, այդպես է բացատրում Հ. Բաթլերը, սիրիական եկեղեցիների արտաքին սրահների առաջացումը, նկատի առնելով նրանց առկայությունը նախաքրիստոնեական մենատներում[47]:

Նիկիայի եկեղեցական ժողովը կարևոր իրադարձություն էր քրիստոնեական աշխարհում: Դա նոր կրոնի առաջին մեծ հաղթանակն էր համաշխարհային չափանիշով: Այն առանձնապես կարևոր էր Հայաստանի համար, որովհետև այդ ժողովում քրիստոնեությունը հայտարարվեց պետական կրոն ամբողջ Հռոմեական կայսրության սահմաններում, և Հայաստանն այլևս կղզիացած չէր շրջապատի երկրների մեջ: Նիկիայի ժողովին ակտիվորեն մասնակցել են նաև հայերը: Նիկիայի ժողովը կարևոր դեր խաղաց քրիստոնեության գաղափարախոսության հաստատման, ծեսի մեկնաբանության և մշակման գործում: Այս ամենն իր արձագանքը գտավ նաև Հայաստանում[48]:

Քաղաքական և գաղափարական առումով այս իրադարձությունը կարևոր երևույթ էր նաև քրիստոնեության մասսայականացման գործում: Խորենացին վկայում է, որ դրանից հետո քրիստոնեություն ընդունեցին նաև Իրանից գաղթած Կամսարականները[49]:

Արմատական և համատարած վերափոխություններ, հատկապես ծեսի հարցերում, կատարվեցին 354 թվականի Աշտիշատի եկեղեցական ժողովից հետո: Բուզանդը տեղեկացնում է, որ այդ ժողովում սահմանվեցին «հավատի ընդհանուր կանոնները...», «Ներսես եպիսկոպոսապետը ամենի վրա տարա-

44 Տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» էջ 95: Տե՛ս նաև Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 148—151:

45 Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 116—117:

46 Տե՛ս Նույն տեղում, էջ 245—249:

47 Տե՛ս H. C. Butler, Architecture and othe arts, New-Yourk, 1904, p. 122, 127.

48 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 445:

49 Տե՛ս Խորենացի, էջ 241:

ծում էր առաքյալներից սահմանված կանոններ...», «ամենայն վայելչությամբ հաստատվեցին կաթողիկե եկեղեցիների կարգերը»[50]: Կանոններ, սուրբ պաշտամունքային կարգեր արտահայտություններն աներկբայորեն վերաբերում են միայն ծիսական հարցերին: Եկեղեցական ծեսերի և կանոնների առավել մշակվածությունն ու ավարտվածությունը, բնականաբար, պետք է օրինականացնեին այն հավելումները, որոնք առաջացել էին ծեսի կատարման պահանջներից: Ծեսի ճոխացման երևույթը ճարտարապետության մեջ ունեցավ այն հետևանքը, որ ավանդատները դարձան եկեղեցական շինությունների օրգանական մասը, և կառուցվում էին արդեն ոչ թե կցման եղանակով, այլ առնվեցին շինության ներսը:

Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ժամանակագրական առանձնահատկություններն արտահայտող մյուս կարևոր հատկանիշները խորանների ձևերն ու տեղադրությունն են:

Առայժմ հայտնի են խորանի 3 ձևեր՝ կիսաշրջանաձև, պայտաձև և ուղղանկյուն: Այս երեքից քրիստոնեական պաշտամունքային շենքին բնորոշ էր առաջինը, թեև չի բացառվում, որ այն տարածված լիներ նաև հեթանոսության շրջանում: Պայտաձև խորանները գերազանցապես կառուցվել են վաղ քրիստոնեական շրջանում: Քրիստոնեական տաճարներում ուղղանկյուն խորանները բացառվել են և անկախ հիմնապատերից ենթարկվել վերակառուցման: Այդ երևույթը պայմանավորված էր տեխնիկական առաջադիմությամբ: Երբ գմբեթարդի կառուցումը դարձավ մասսայական, ուղղանկյուն խորանը գեղագիտական առումով չէր բավարարում ժամանակի պահանջները:

Հնագույն եկեղեցիներում կիսաշրջանաձև և պայտաձև խորանների քրիստոնեական կամ նախաքրիստոնեական ծագումը դժվար է զանազանել: Այս տեսակետից ամենաորոշակի հիմք տալիս են ուղղանկյուն խորանները: Քանի որ քրիստոնեության կողմից դրանք անընդունելի էին, նրանց առկայությունը կարող է միայն հեթանոսական ծագումն ապացուցել: Ուղղանկյուն ձև ունեն նաև Առաջավոր Ասիայի հնագույն, նախաքրիստոնեական շենքերը[51], և խորանի այդ ձևը լինելով ժամանակի տեխնիկական հնարքների արդյունք՝ ինքնին կարող է դիտվել որպես ժամանակագրական հատկանիշ, եթե ճարտարապետական այլ մանրամասները դրան չեն հակասո[illegible]

Ժամանակագրական հատկանիշներ կարելի է տեսնել նա[illegible]անների արտաքին և ներքին տեղադրության ձևերում: Հայ ճարտարապ[illegible]յան մեջ գոյություն ունի խորանները շինության պատերի մեջ ներառնելո[illegible]ետևողականություն, որի հիմքում, հավանաբար, հակասեյսմիկ նկատառումներ են եղել: Հաշվի առնելով այս հանգամանքը, արտաքնապես տեղադրված խորանով բազիլիկներն ավելի հավանական ենք համարում, որ ծագումով նախորդած լինեն որմնափակ խորանով բազիլիկներին:

Ժամանակագրական հատկանիշները դրսևորվում են նաև որմնադրության տեսակներում: Առավել հին շինություններում բացակայում է կրաշաղախը, և այդ պատճառով պատերը չափազանց հաստ են, կանգնեցված բազմաստիճան պատվանդանի վրա: Ժամանակի որոշման հարցում բավականին մեծ

---

50 Բուզանդ, էջ 84:

51 Տե՛ս J. *Strzigowski*, Die Baukunst..., I, S. 227, 358, *W. M. Ramsay and G. L. Bell*, The tousand..., p. 308.

տեղ ունեն զարդապատկերները, որոնք մանրամասն վերլուծության են ենթարկվել Ն. Տոկարսկու և ուրիշների աշխատություններում[52]:

Ամփոփելով ժամանակագրական հարցադրումները վաղ քրիստոնեական եկեղեցիների հորինվածքային տարբերակների վերաբերյալ, կարծում ենք, որ դրանք կարելի է բաժանել հետևյալ, միմյանց հաջորդող խմբերի: Առաջին և ամենահնագույն շինություններն են ավանդատուն և սյունասրահ չունեցող, ուղղանկյուն խորանով այն սրահները, որոնք նախկինում եղել են հեթանոսական տաճար, IV դարում օծվել են եկեղեցու և մինչև մեր օրերն ընդհանուր առմամբ պահպանել են իրենց հորինվածքը՝ նախնական վիճակով:

Երկրորդ տիպը կառուցվածքային առումով ավելի կատարյալ՝ բոլորաձև խորանով այն շինություններն են, որոնք նույնպես չունեն ավանդատներ:

Գիտական գրականության մեջ երկրորդ տիպին պատկանող Եղվարդի եռանավ բազիլիկի թվագրման հարցում տեղի է ունեցել շփոթմունք: Ավանդական է դարձել եկեղեցու կառուցումը կապել Մովսես Եղվարդցու կողմից էջմիածնում ձեռնադրված Կյուրոնի անվան հետ, որի հետևանքով ուսումնասիրողներն այդ հուշարձանը թվագրել են 574—603[53]: Սովորաբար վկայակոչում են Հ. Դրասխանակերտցուն կամ հարավային պատի արձանագրությունը: Հավանաբար այս հանգամանքն է եղել պատճառը, որ Հ. Ստրժիգովսկին ենթադրել է, թե արձանագրության մեջ պետք է Մովսես կաթողիկոսի անունը լինի, և եկեղեցու շինությունը նույնպես թվագրել է Մովսես Եղվարդցու ժամանակներով[54]: Ն. Տոկարսկին ուղղակի գրում է, որ եկեղեցու «միատող արձանագրության մեջ հիշատակվել է Մովսես երկրորդ կաթողիկոսը»[55]:

Ինչպես ցույց տվեցին արձանագրության մանրազնին հետազոտությունները, Մովսեսի անունն արձանագրության մեջ բնավ գոյություն չունի: Դրասխանակերտցին ևս նման, և նույնիսկ մոտավոր բովանդակությամբ տեղեկություն չի հաղորդում: Ուսումնասիրողների մեջ բացառություն է կազմել Ս. Սահինյանը, որը թվագրման համար հիմք ընդունելով ճարտարապետական ձևերը, հուշարձանը համարել է ավելի վաղ ժամանակների շինություն[56]:

Արձանագրությունը փորձել է վերծանել աղբյուրագետ Պ. Մուրադյանը, որի վերաբերյալ հրատարակել է երկու հոդված[57]: Սակայն հիմք ունենալով մի տառ՝ (ւ), արձանագրությանը նա վերագրել է շինարարական բովանդակություն, առաջարկելով սկզբում կարդալ «[հիմնարկեցա]ւ, [կատարեցա]ւ», իսկ երկրորդ հոդվածում չի բացառում նաև «նորոգեցաւ» վարկածը: Այս ամենին հաջորդում են չափազանց հեռուն գնացող հետևություններ: Դեռևս իր իսկ համար չպարզած, թե թվագրություններն ինչին են վերաբերում՝ հիմնարկմանը, թե նորոգմանը հեղինակն ասում է. «Եղվարդի եռանավ բազիլիկան կառուցված է 660 թվականին. եթե այդպես է՝ վերանայելի է դառնում ճարտարապետության պատմության մեջ ընդհանրական դարձած

---

52 Տե՛ս *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 157—167.

53 Տե՛ս Թ. Թորամանյան, *Նյութեր...*, 2, էջ 156:

54 Տե՛ս *J. Strzigowski*, Die Baukunst..., t. I, S. 145.

55 *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 90.

56 Տե՛ս Ս. Սահինյան, *Քասաղի բազիլիկայի...*, էջ 106—114:

57 Տե՛ս *«Եղվարդի ծածկագիր արձանագրությունը», «Երևանի համալսարան», 1974, № 1, էջ 36—39, «Պալեոգրաֆիկ ուսումնասիրության արդյունքները», «Երևանի համալսարան», 1976, № 1, էջ 47—52:*

այն դրույթը, թե Ավանից, Հռիփսիմեից ու համանման զմբեթակիր այլ կառույցներից հետո հնավանդ բազիլիկաներ չէին կառուցվում»[58]։

Պաշտամունքային շինությունը կառուցվում էր եկեղեցական կանոններին համապատասխան, և այդ պատճառով անախորժնիկ հորինվածքների շենք կառուցելու հնարավորությունը բացառված էր։ Եղվարդի բազիլիկն իր անավանդատուն հորինվածքով և խորանի արտաքին գրվածքով չէր կարող ոչ միայն Հռիփսիմեից և Ավանից հետո կառուցվել, այլև բացառվում էր նրա կառուցումը նաև VI, անգամ V դարում։

Ինչ վերաբերում է արձանագրությանը, ապա հիշյալ Ի-ից պահպանվել է միայն հորիզոնական ելուստի կեսը և դեռ հայտնի չէ, թե դա ինչ տառի մնացորդ է։ Չեն բացառվում Գ, Դ, Ժ, Ո, իսկ Ի-ի դեպքում՝ նույնիսկ ՈԻ տառերը։ Տեղում, այնուհետև, պահպանվել է «...ԵՏ ԾՆՆԴՄԱՆԷ ԿԵՆԴԱՆԱՐԱՐԻ... Ղ ԱԻԵՏԵ Ի ԲԱՆ ՄԱԹԷՈՍԱ ԱՌԱՋՆՈՐԴ... Ի ՅՈՐԴԻՆ ՇՆՈՐՀԱՅՆ ՊՏՈՒՂՍ ԸՆԴ ՄԻՈՅՆ Ճ(100), ԸՆԴ ՄԻՒՍՈՅ :Կ: (60), ԸՆԴ ՄԻՈՅՆ :Լ: (30) ԸՆ ՅԻՅ ԱՍԷ :Ջ: ՈՋ ԸՍՏ ԻՄ ԻՆՋ ՄՏԱՅԱԾՆ ՔՈՂԱԽՆԴՐ...»։

Բազմակետերով նշված տեղերում հողմնահարության և ավերվածության հետևանքով ոչնչացել են բավականին ընդարձակ (մոտ 3 մետր) հատվածներ, որոնք համոզիչ տվյալների բացակայության պատճառով վերականգնելու իրավունք մեզ չենք վերապահում։

«Առաջնորդ» բառից առաջ «Մաթէոս» անվան Մ տառը հողմնահարված է, Թ-ն գրված է Ա տառի աջ սանդղի վրա, որը միաժամանակ հաջորդ Ս տառի ձախակողմյան սանդղն է։ Այդ սանդղի վրա են գտնվում նաև Է տառի հորիզոնական ելուստները։ «Աւետե ի բան Մաթէոսա» արտահայտությունից երևում է, որ բերված են Մատթեոսի (Մատթէոս ավետարանիչի) խոսքերը։ Մատթեոսի ավետարանի ԺԳ գլխում գրված է. «Եւ այլն անկաւ յերկիր բարի, եւ տայր պտուղ. էր որ հարիւրաւոր (Ճ), եւ էր որ վաթսունաւոր (Կ), եւ էր որ երեսնաւոր (Լ)»[59]։

«Շնորհացն պտուղս» արտահայտությունն ինքնին նվիրատվական իմաստ ունի, իսկ ՃԿԼ-ն տարեթվեր չեն, այլ պտղի քանակը որոշող թվանիշեր։ Արձանագրությունն ավանդում է, թե որքան է այդ պտուղը շնորհվե... ընդ որում, նվիրատվությունը կատարվել է ավետարանական ավան... ան համաձայն։

«Լ»-ից հետո արձանագրությունը շարունակվում է այնպես, ինչպես նախորդ թվականներից հետո՝ ԸՆ ձևով, որտեղ, սակայն, բացակայում է Դ տառը ԸՆԴ լինելու համար։ Արձանագրությունը ընդհատվում է մուտքի ձախակողմյան եզրում և աջ կողմից շարունակվում է «ՅԻՅ ԱՍԷ Ջ» «Ոչ ըստ իմ ինչ մտացածն» վերջավորությունը մեկնաբանել արդ անհնար է։ Դրա բացատրությունը կարող է լինել միայն պակասող միջնամասում։ Արձանագրության գաղտնագիր լինելը լրիվ բացառված է[60], իսկ հաշվումներն էլ սխալ են։ Թեև «եա ծննդմանէ» արտահայտությունը Պ. Մուրադյանը վկայակոչում է որպես թվագրությունը մատնանշող արտահայտություն, սակայն հենց այդ արտահայտությունն էլ ցույց է տալիս, որ տարեթիվը փորագրված է եղել դրանից

[58] Պ. Մուրադյան, Եղվարդի ծածկագիր արձանագրությունը, էջ 38։

[59] «Աստվածաշունչը», էջ 956—957։

[60] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Եղվարդի ծածկագրության գաղտնիքը, «Երևանի համալսարան», 1976, № 2, էջ 41—47։

առաջ։ Արձանագրության վերջում բերված թվանիշերի հետ այն կապվել չի կարող, քանզի նրանց միջև այլ բովանդակության ընդարձակ բնագիր կա, ուր խոսվում է պտուղ շնորհելու մասին։

Երրորդ տիպը ներշինված խորանով բազիլիկների առավել տարածված եկեղեցիներն են։ Երկրորդ և երրորդ տիպի ժամանակագրության մեջ խիստ սահման դնել, իհարկե, չի կարելի։ Երրորդ տիպի շինությունների մի մասը կարող էր երկրորդ տիպի որոշ օրինակներից ավելի վաղ կառուցված լինել։ Տվյալ դեպքում ժամանակագրական այս բաժանումը կրում է ընդհանուր տեսության բնույթ։

Այդ տիպին է պատկանում Օշականի եկեղեցին։ Այն կառուցել է Վահան Ամատունին 443 թվականին՝ որպես Մեսրոպ Մաշտոցի վկայարան։ Կորյունը Մաշտոցի մահվանից՝ 443 թ.) գրում է. «Իսկ յետ երից ամաց անցելոց (Մաշտոցի մահվանից՝ 443 թ.) յաջողեցան Վահանայ Ամատունւոյ քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելովք, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յօրինեալ»[61]։

XVII դարում վկայարանն ավերված էր։ 1652 թվականին այն վերաշինել է Փիլիպպոս կաթողիկոսը[62]։ Շուտով վկայարանը նորից է ավերվում և նորոգվում քարաշեն տանիքով։ Վերջնականապես նորոգել է Գէորգ Դ կաթողիկոսը 1879 թվականին։ Իսկ 1884 թվականին Մ. Սմբատյանցը Մաշտոցի տապանի վրա մի քար է դնում և վրան փորագրում վկայարանի պատմությունն ավանդող արձանագրություն[63]։

Այս վերաշինությունների և նորոգումների հետևանքով վկայարանը լրիվ կորցրել է իր նախնական տեսքը։

Չորրորդ տիպը ներկայացվում է փոփոխված առաջին բազիլիկներով։ Դրանք միկողմանի ավանդատներով եկեղեցիներ են, որոնց մեջ կան նաև այնպիսիները, որոնք արտաքին սյունասրահի փոխարեն ունեն երկրորդ ավանդատունը, տեղադրված առաջինի արևմտյան կողմում (Աստվածընկալ, Ցաղաց քար)։

Թանահատի եկեղեցին առաջին անգամ հայտնաբերել է Ս. Բարխուդարյանը և պարզել, որ Ստ. Օրբելեանի տեղեկությունները վերաբերում են երկու տարբեր Թանահատների[64]։ Ստ. Օրբելյանը տեղեկացնում է, որ բազիլիկը կառուցվել է 151 թվականին[65]։ Ալիշանի կարծիքով Օրբելյանի ձեռագրում արտագրող գրիչը սխալ է ընդօրինակել թվականը և այն ուղղում է 451 թվականով[66]։ Ալիշանի ենթադրությունը բխում է գերազանցապես թվագրության բացառիկ լինելու պարագայից։ Սակայն այդ պատճառաբանությունը պատմական վավերագրերի մերժման համար հիմք լինել չի կարող։ Երբ նախաքրիստոնեական հայ ճարտարապետության մի օրինակ հասել է մինչև մեր օրերը դրա մեջ որևէ տարակուսելի իրողություն տեսնելն ինքնին տարօրինակ է, մանավանդ որ շինությունն ունի բացահայտ հին հատկանիշ-

[61] «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյն սրբոյն Մաշտոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ», Երևան, 1941, էջ 94։

[62] Տե՛ս Դավրիժեցի, Պատմութիւն հայոց, էջմիածին, 1896, էջ 271։

[63] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 191։

[64] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Հինգերորդ դարի երկու հուշարձան Սյունիքում, «Տեղեկագիր» պատմ. և գրակ. ինստիտուտի, 1936, № 1, էջ 90—132։

[65] Տե՛ս Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 160։

[66] Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 251։

ներ: Վերջապես, Օրբելյանի այս թվագրությունը կրկնում է նաև Վարդան աշխարհագիրը[67], իսկ դա նշանակում է, որ միևնույն սխալը տարբեր հեղինակների ձեռագրերում հնարավոր չէ և, եթե ենթադրենք, որ Վարդանն իր տեղեկությունը քաղել է Օրբելյանից, ապա պետք է ընդունենք, որ XIII դարում, Օրբելյանի կենդանության օրոք, նրա ձեռագրում թվականը եղել է այդպես, իսկ այստեղից հետևում է, որ հետագայում գրչագրական սխալ տեղի չի ունեցել:

Հիշյալ շինությունների մեջ ուշագրավ է Հովհաննավանքի միանավ սրահը: Հարավային կողմում պահպանվել է մի սենյակ, որը պատի փորվածքի տպավորություն է թողնում: Սակայն արևելյան կողմի ներսի պատի սալապատված լինելը վկայում է, որ ժամանակին այնտեղ եղել է ավանդատուն և հեռացվել է XIII դարում գլխավոր եկեղեցին տեղադրելու համար[68]: Զաքարիա Սարկավագի վկայությամբ եկեղեցին հիմնել է Գ. Լուսավորիչը IV դարի առաջին տարիներին և այնտեղ ամփոփել Հովհան Մկրտչի նշխարները[69]: Սկզբնական շրջանում եղել է փայտածածկ: 573 թվականին Աշոտ Դվինեցին դառնում է վանքի առաջնորդ, իսկ երկու տարի դրանից առաջ՝ 571 թվականին նա քանդում է փայտե տանիքը և վերաշինում քարից[70]:

Չնայած նորոգումներին նրա հատակագիծը պահպանել է իր նախնական հորինվածքային տիպը[71]:

Նիկիայի և, մանավանդ, Աշտիշատի ժողովներից հետո մեկ ավանդատընով եկեղեցիներն այլևս չէին բավարարում հզորացած եկեղեցիների պահանջները: Բազմատեսակ ու բազմաքանակ էին դառնում ծեսի կատարման համար գործածվող իրերը: Բուզանդը տեղեկացնում է, որ Աշտիշատի ժողովը բավականին նպաստեց եկեղեցիների բարգավաճմանը և հոգևոր պաշտոնյաների բազմացմանը[72]: Ներսեսի կաթողիկոսության վերջին շրջանում ծեսերը կատարվում էին բազմաթիվ սպասավորներով և ժողովրդի մեծ բազմությամբ[73]: Նման իրավիճակն անհրաժեշտ էր դարձնում նոր հավելումների պահանջներ, որի հետևանքով եկեղեցիներին կից ավելանում էին սենյակները: Այս տեսակետից չափազանց ուշագրավ են երկկողմանի ավանդատներով եկեղեցիները, որոնք, որպես T-աձև հատակագծով հորինվածքն բացառիկ կարևոր դեր խաղացին հայ ճարտարապետական մտքի հետ զարգացման ընթացքում:

Նկատի առնելով այս տիպի առավել կատարելագործված հորինվածքային կերպարը և ինքնատիպ մոտեցումն այն առանձնացնում ենք հինգերորդ խմբի մեջ, որպես IVդարի կեսի արգասիք:

Բեմական խորանի երկու կողմերում տեղադրված ավանդատները որպես առանցքի թևեր կարևոր դեր խաղացին խաչաձև հատակագծերի ձևավորման գործում: Այս երևույթի հետևողական զարգացման հաջորդ աստիճանը կարելի

67 Տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Փարիզ, 1860, էջ 15:

68 Տե՛ս Զաքարիա Սարկաւագ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1876, Գ, գլ. IX:

69 Տե՛ս նույն տեղում, գլ. III: Տե՛ս նաև «Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմութիւն անցիցն իւրոյ ի Նատր Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870, էջ 3—4:

70 Տե՛ս Զաքարիա Սարկաւագ, Գ, գլ. V:

71 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 19—21, տե՛ս նաև Դավրիժեցի, էջ 268, Սիմեոն Երեւանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 291:

72 Տե՛ս Բուզանդ, էջ 218:

73 Տե՛ս նույն տեղում, էջ 234:

է տեսնել Արթիկի ս. Աստվածածին եկեղեցու հատակագծային հորինվածքում:

Ողջաբերդի եկեղեցու հիման վրա գմբեթակիր կառուցվածքների առաջացումը Հայաստանում ուսումնասիրողները թվագրում են IV դարով[74]:

Գմբեթակիր եկեղեցիների առաջացումը IV դարում օրինաչափ է համարում Ա. Երեմյանը[75], իսկ Ն. Տոկարսկին գտնում է, որ վաղ քրիստոնեական եկեղեցիների գմբեթարդներն ինքնին մի վկայություն են, որ դեռևս շատ հնում քարաշեն գմբեթների կառուցումը միանգամայն մատչելի է եղել հայ ճարտարապետներին[76]:

Հայաստանում գմբեթների առաջացման ժամանակը որոշելու համար կարևոր է Ագաթանգեղոսի վկայությունը: Նկարագրելով Գրիգոր Լուսավորչի հայտնության տեսիլքը, նա մանրամասնորեն վերլուծում է եկեղեցու սրբազված առանձնամասերը և տալիս գմբեթի կառուցվածքային նկարագրությունը. «Եւ ի չորեցունց սեանցն ի վերայ խաչիցն կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան. և ի վերայ այնորիկ տեսի գմբեթաձև խորանարդ ամպեղէն շինուած աստուածակերպ, զարմանալի»[77]:

Կարևոր է նաև Ստ. Օրբելյանի վկայությունը: Նկարագրելով Շաղատի ս. Ստեփանոս եկեղեցին, որը կառուցել է Անդովկ Սյունի իշխանը, պատմիչը տեղեկացնում է, որ այն ուներ «գմբէթն և խորանքն չորեքկուսի, մի յարկ, մի տանիք և ոչ ուրոյն, ուրոյն որպէս և այլ գաղտոսաշէն եկեղեցիք»[78]:

Անդովկ իշխանը Սյունյաց նահապետ է հիշատակվում Խոսրով Բ-ի ժամանակ (330—339)[79]: Եկեղեցին կառուցված կարող է լինել առաջին տարիներին, որովհետև հենց այդ շրջանում էր, որ նա որպես տանուտեր գտնվում էր Սյունիքում: Տիրան Բ-ի օրոք (339—350 թթ.) անընդհատ ճանապարհորդում էր քաղաքական ու ռազմական գործերով, իսկ կյանքի վերջին տարիները նա անցկացրեց Բյուզանդիայում: 377 թվականին որպես տանուտեր նրան փոխարինեց իր որդին՝ Բաբիկը:

Եկեղեցին չի պահպանվել, պատմիչի նկարագրի համաձայն այն եղել է քառաթև և գմբեթակիր, հավանաբար պատկանել է Արթիկի եկեղեցու տիպին: Կարևոր է «և այլ գաղտոսաշէն» արտահայտությունը, որով ընդգծվում է եկեղեցու և նրա գմբեթի քարաշեն լինելը:

Հայաստանում գիտությանը հայտնի ամենահնագույն գմբեթի թմբուկը Տեկորի տաճարինն է, որն ունի քառանիստ կառուցվածք: Թմբուկների այդ ձևը պատահական չէ: Քրիստոնեական եկեղեցու գմբեթների հիմքը եղել է քառակուսի, և կլորավուն թմբուկին փոխանցելու համար առանձնակի կարևորություն է ունեցել առագաստների և տրոմպների մշակումը: Տեկորի տաճարի թմբուկն, ըստ էության, ունի բավականին բարդ կառուցվածք, որովհետև քառակուսի հիմքը ստեղծող կամարները հենվում էին ոչ թե պատերի, այլ մույթերի վրա, իսկ քառանիստ թմբուկը վերին մասում տրոմպների օգնությամբ վեր է ածվում ութանիստ հիմքի և միջնորդում անցնելու սֆերիկ ծածկին:

74 Տե՛ս Н. М. Токарский, Джрвеж и Вогджаберд, (результаты раскопок 1958—1962 гг.) II, Ереван, 1964, стр. 48—66.

75 Տե՛ս А. Б. Еремян, Храм Рипсимэ, Ереван, 1955, стр. 86.

76 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 90–91.

77 Ագաթանգեղոս, էջ 376, տե՛ս նաև 379—382:

78 Ստ. Օրբելեան, էջ 42:

79 Տե՛ս Բուզանդ, էջ 39:

Թեև Արթիկի եկեղեցու գմբեթը չի պահպանվել, սակայն, նկատի առնելով նրա հորինվածքային խիստ արխայիկ ձևերի առանձնահատկությունները, այդ եկեղեցին կարելի է համարել Տեկորին նախորդող մի աստիճան:

Այժմ դժվար է պարզել, թե ինչպիսին է եղել Արթիկի եկեղեցու հնագույն գմբեթը: Սակայն տրոմպների առկայությունը Ողջաբերդի եկեղեցում ցույց է տալիս, որ Տեկորի գմբեթի կառուցվածքը և ձևը եզակի չէ առաջին գմբեթակիրների մեջ: Հետևապես պարտադիր չէ առավել հին գմբեթների ձևերը պարզելու համար այն ընդունել որպես հնությունը որոշող տարբերակ, մանավանդ որ Իրանում և Սիրիայում կան ավելի վաղ ժամանակների կենտրոնագմբեթ շինություններ[80], որոնց հայ ճարտարապետներն անտեղյակ լինել չէին կարող:

Կենտրոնագմբեթ հորինվածքի կազմավորումը քրիստոնեական ճարտարապետության մեջ սերտորեն կապված էր խաչաձև հատակագծի հետ, որ հայ ճարտարապետության մեջ նույնպես բավականին հին պատմություն ունի: IV դարում խաչաձև հատակագիծ ունեցող շինություններից է Աղցի (364 թ.) դամբարանը: Այն կառուցվել է Անի-Կամախի դամբարանի փոխարեն և, հավանաբար, նրա ձևով, որը թվագրվում է նախաքրիստոնեական ժամանակներով:

IV դարի վերջին բազիլիկների ավանդական կերպարը դեռևս շատ էր ուժեղ և կենտրոնագմբեթ շինություններին զուգընթաց կատարելագործվում էին նաև անգմբեթ եկեղեցիների տարբերակները:

IV դարի վերջերին բազիլիկներն իրենց հորինվածքային ու ճարտարապետական ձևերի հարստությամբ և հավելումների բազմազանությամբ բավականին տարբերվում էին սկզբնական շինություններից:

Ինչպես արդեն նշվեց, IV դարի վերջին ծեսի կատարման մշակվածությունը, կանոնիկ բնույթն անխուսափելիորեն պետք է օրինականացներ ավանդատունը որպես եկեղեցական հոգևոր շենքի անհրաժեշտ բաղկացուցիչ մաս: Սրբացված իրերն ավանդատնից հանելու և բեմ տեղափոխելու արարողությունը ինքնին մի ծես էր, որը կատարվում էր եկեղեցիներում: Այդ պատճառով էլ բեմին կից ավանդատները պետք է առնվեին ներս: Հորինվածքային տեսակետից դա նոր լուծում էր, և սկզբունքորեն փոխում էր պաշտամունքային շինության ներսի բաղադրական խնդիրը: Այնուհան V դարի փորձերը բազիլիկների կատարելագործման բնագավառում վե էին, որովհետև դարի երկրորդ կեսից գմբեթների կառուցումը այնպիսի տարածում ստացավ, որ նույնիսկ բազմաթիվ շինություններ ենթարկվեցին վերակառուցման:

V դարի հորինվածքային կարևորագույն երևույթներից էր ներքին և արտաքին խաչաձև հատակագծերի մշակումը, որի առաջացման ակունքները կապված են Արթիկի, թերևս և Աղցի դամբարանի տիպերի հետ: V դարի վերջին և VI դարի սկզբից սկսած խաչաձև հատակագիծը դարձավ տաճարաշինության հիմնական հորինվածքը և դրանով իսկ հաղթահարեց հեթանոսական ժամանակներից ավանդ մնացած բազիլիկների տարածումը:

---

[80] Տե՛ս *A. Godard*, Les monuments ou fou Athār-é Iran, Annales de service, archeologique de l'Iran, III Paris, 1938, p. 41—42, *A. Hardy*, Le monument de Neisar Athār-e Iran, I, 1938, p. 163—166, *M. Siroux*, Petit monument sasanid près de Kazerun Athār-e Iran, III, p. 135—139, *M. de Vogüe*, Syrie central, t. 7, ВИА, I, стр. 343.

V դարի երկրորդ կեսը նշանավորվեց գմբեթաշեն բնույթի հիմնավոր վերակառուցումներով, որոնք իրենց հերթին տվեցին երեք տարբերակ:

Առաջին տարբերակը կարելի է ներկայացնել Տեկորի գմբեթակիր բազիլիկով: Թորոս Թորամանյանի կարծիքով այս եկեղեցին նախկինում եղել է հեթանոսական տաճար և ունեցել է ուղղանկյուն խորան[81]:

Երկրորդ տարբերակը Էջմիածնի Մայր տաճարն է, որն իր ներքին և արտաքին խաչաձևությամբ և կենտրոնագմբեթ հորինվածքով մեծ հեղաշրջում առաջացրեց տաճարային շինարարության մեջ: Էջմիածնի Մայր տաճարի հատակագծի խաչաձևությունը սկզբունքորեն տարբերվում է Արթիկի եկեղեցու հատակագծից: Արթիկի և Էջմիածնի եկեղեցիների մեջ գլխավոր ընդհանրությունը կենտրոնագմբեթության գաղափարն է, որը Հայաստանում նշմարվեց IV դարում, իր հետ բերելով նաև հավասարակողմ համաչափություններին անցնելու անհրաժեշտությունը: Այս հորինվածքներում առաջին հերթին միջին մաս տեղափոխվեց ներքին տարածության կենտրոնը: Բազիլիկ շինության կենտրոնը խորանն էր: Այն գտնվում էր արևելյան ծայրում և շեշտվում էր ձգված համաչափություններով: Գմբեթի տեղադրությունը շինության միջին մասում առաջ բերեց կենտրոնի երկատում: Ենթագմբեթային տարածությունը ևս ստացավ կենտրոնի նշանակություն, իսկ կենտրոնի տեղափոխումը միջին մաս իր հերթին խթան հանդիսացավ համաչափությունների հավասարակշռման հարցում: Բազիլիկի ձգվածությունը նման դեպքում ապակենտրոնացնող պարագա էր և հավասարակողմ համաչափություններին անցնելը եղավ միակ տրամաբանական ելքը:

Հավասարակողմ քառակուսի հատակագծերի մշակումը Հայաստանում պայմանավորված էր նաև հակասեյսմիկ միջոցառումների կիրառման հետ և այդ առումով ուներ կենսական նշանակություն[82]:

Ի դեմս Արթիկի ս. Աստվածածնի և Էջմիածնի Մայր տաճարի մենք ունենք խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիների երկու նախնական տարբերակներ: Տարբերակների առաջացման, ինչպես և նրանց հետագա զարգացման ուղիները տարբեր են եղել: VI—VII դարերում Արթիկի հորինվածքի նմանությամբ կառուցվեցին արտաքուստ և ներքուստ խաչաձև Ալամանի, Զաղավանքի և այլ հուշարձաններն իրենց տարբերակներով: Էջմիածնի Մայր տաճարի հորինվածքը առաջ բերեց Բագարանի, Մաստարայի և Արթիկի (ս. Գևորգ) հուշարձանների տիպը: Բազիլիկի վերակառուցման հետ է կապված V դարի երրորդ տարբերակը, որը նույնպես մեծ դեր խաղաց ճարտարապետական մտքի հետագա զարգացման մեջ: Այս տիպի հորինվածք է Զովունու Պողոս-Պետրոս եկեղեցին, որը ներկայացված է գմբեթավորված երկարավուն սրահով: Խորանի հյուսիսային պատի մոտ շարունակվող աստիճանավոր պատվանդանի առկայությունից Ա. Սահինյանը հետևցնում է, որ Զովունու եկեղեցին ժամանակին ունեցել է ավելի երկարավուն չափեր[83]:

V դարի երկրորդ կեսում, երբ մշակվեցին քրիստոնեական տաճարաշինության հորինվածքային կերպարները, և գմբեթի առակայությունն արմա-

---

[81] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 185—220:

[82] Տե՛ս *Г. Р. Мушегян*, О некоторых вопросах сейсмостойкости древнеармянских архитектурных сооружений, „Вопросы сейсмостойкости строительства", Ереван, 1949.

[83] Տե՛ս Ա. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը, «Լրաբեր», 1968, № 1, էջ 109, 112, 113:

տապես փոխեց ծածկի և պաշտամունքային կենտրոնով պայմանավորված ծավալային տարածական լուծումների բնույթը, բազիլիկ եկեղեցիների կառուցումը Հայաստանում այլևս դարձավ անիմաստ և առավել նշանակալի վայրերում ենթարկվեցին վերակառուցման: Ուշադրավն այն է, որ վերակառուցված բոլոր շինությունները եղել են բազիլիկներ և իրենց վերակառուցման տարբեր փուլերում անցել են վերը նշված հորինվածքային տարբերակների ուղիով: Այդ կարելի է տեսնել այնպիսի հուշարձանների վրա, ինչպիսիք են էջմիածնի Մայր տաճարը[84], Տեկորի[85], Մրենի գմբեթավոր բազիլիկները[86], Բագարանի եկեղեցին[87] և, հատկապես, Դվինի ս. Գրիգորը[88]:

Բերված ժամանակագրական դրույթների հիմքում, անկասկած, միայն հնագիտական հետազոտությունները և կառուցողական ու հորինվածքային ձևերի զարգացման տրամաբանությունը չէ: Այն առավելապես հիմնավորել ենք մեզ հասած գրավոր սկզբնաղբյուրներով:

Արդ, հարցի վերջնական պարզաբանման նպատակով անդրադառնանք այն հուշարձաններին, որոնց շինության վերաբերյալ մեզ հասել են գրավոր տեղեկություններ:

Այնքանով, որ վիմագրական հնագույն սկզբնաղբյուրները վերաբերում են V դարի վերջին քառորդին, ուստի ավելի վաղ ժամանակների վերաբերյալ շինարարական տեղեկություններ կարելի է քաղել միայն մատենագրական աղբյուրներից:

ԴՎԻՆ.—Հայաստանի վաղ միջնադարյան հուշարձաններից մատենագրական հարուստ տեղեկություններ ունենք Դվինի շինությունների վերաբերյալ:

Վաղ միջնադարյան հայ մատենագիրների մոտ Դվինն ուրույն տեղ է գրավում. առաջին հերթին որպես երկրի քաղաքական, հոգևոր և մշակութային կենտրոն և երկրորդ՝ շնորհիվ իր համեմատական երկարակեցության. այդ տեսակետից Հայաստանի տարբեր ժամանակներում ստեղծված մայրաքաղաքներից որևէ մեկը համեմատվել չի կարող[89]:

Մայրաքաղաքը Դվին տեղափոխելու մասին Մովսես Խորենացին գրում է. «(Խոսրով թագավորը) Ձաքունիսին փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»[90]:

Ա. Շահնազարյանն ուզում է որոշակի տարբերություն տեսնել [illegible]ն քաղաքի և արքունական պալատի հիմնադրման հարցի մեջ[91]: Նա նշում [illegible] որ Դվինը Խոսրովը հիմնեց ոչ թե քաղաքը, այլ միայն արքունական պալատը: Դվինը

---

84 Տե՛ս Ա. Սահինյան, Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը, ՊԲՀ, 1966, № 3, էջ 71—94:

85 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 185—220:

86 Տե՛ս նույն տեղում, էջ 20:

87 Տե՛ս *И. А. Орбели*. Избр. труды, стр. 378, 455—463.

88 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 89, Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 49—56:

89 Տե՛ս *А. Шахназарян*, Двин. Историко-географический очерк, Ереван, 1940, стр 27.

90 Խորենացի, էջ 265:

91 Տե՛ս *А. Шахназарян*, Двин..., стр. 23.

գոյություն է ունեցել տակավին վաղ հայկական ժամանակներում[92], սակայն, հավանաբար, որպես փոքրիկ ավան: Արքունական պալատի տեղափոխությունը Դվին նշանակում էր հաստատել մայրաքաղաք, այսինքն՝ վերաշինել այն և դարձնել քաղաք:

Դվին քաղաքի հիմնադրման, ինչպես և քաղաքի առավել նշանավոր ճարտարապետական կոթողներից մեկի՝ արքունական պալատի կառուցման մասին տեղեկություն է տալիս Փ. Բուզանդը «Եւ ետ հրաման թագաւորն (Խոսրով Բ) զաւրաւարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, եւ բերել զվայրենի կաղին մայրեաց, եւ տնկել զայն յԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչէն Գառնի, մինչև դաշտն Մեծամաւրի ի Բլուրն, որ անուանեալ կոչի Դուին, որ կայ հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն: Եւ կոչեաց զանուն նորա տաճար մայրի: Եւ միւս ի մայրեացն յեղէգնաբերանին ի նմանէ ի հարաւոյս լցին զդաշտն կաղնատուն տնկով եւ կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, եւ զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կեցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին»[93]:

Խոսրովը թագավորել է 330—339 թվականներին: Այսպիսով, IV դարում Դվինում կառուցվել է արքունական ապարանք: 1962 թվականի պեղումների ժամանակ ապարանքի ավերակների մնացորդները հայտնաբերվեցին միջնաբերդի կենտրոնում[94]:

Տեղում պահպանված սյան խարիսխն ունի անտիկ շրջանի զարդաքանդակներ: Կ. Ղաֆադարյանի կարծիքով պալատի դահլիճն ունեցել է եռանավ բազիլիկի հատակագիծ և միջին նավը երկու անգամ մեծ է եղել կողմնայիններից:

Հուշարձանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես աշխարհիկ շինություն: Ուշադրություն է գրավում ինչպես հորինվածքն, այնպես էլ տեղադրությունը՝ արևելքից-արևմուտք, որը նշում է հոգևոր և աշխարհիկ ճարտարապետության փոխադարձ սերտ կապի մասին:

Միանավ սրահ.—Գտնվում է քաղաքի կենտրոնական մասում, միջնաբերդի հարավային կողմում: Պահպանվել են միայն հիմնապատերը: Սրահն ունի երեք զույգ որմնամույթեր:

Վ. Հարությունյանը գտնում է, որ շինությունը ծածկված է եղել գլանաձև թաղով[95]: Հյուսիսային կողմում եղել է մի ավանդատուն: Ավանդատան հատակի մակարդակը տարբերվում է եկեղեցու հատակի մակարդակից և ժամանակագրական առումով տարբեր շերտ է կազմում: «Այնուամենայնիվ,—գրում է Ղաֆադարյանը,—(ավանդատունը) հետադարյան հավելվածք չէ և շինված է եկեղեցու հետ միասին»[96]: Կ. Ղաֆադարյանը եկեղեցին թվագրել է հիմնվելով Դրասխանակերտցու այն վկայության վրա, որ ումն Յիզտբու-

---

92 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման և հեթանոսական մեհյանի մասին, ՊԲՀ, 1966, № 2, էջ 44—49:

93 Բուզանդ, էջ 29—30:

94 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման և հեթանոսական մեհյանի մասին, ՊԲՀ, 1966, № 2, էջ 51—52:

95 Տե՛ս Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտ. հուշարձանները, էջ 81:

96 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 102:

գիտի մարմինը «Եդին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք»[97]: Քանի որ կաթողիկոսարանի արևելյան կողմում այլ եկեղեցի կամ մատուռ չի հայտնաբերվել, ուստի Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ միանավ սրահը եղել է Յիզտբուզիտի մատուռը և կառուցվել է, ըստ Դրասխանակերտցու, Ներսես Բագրևանդացու կաթողիկոսության շրջանում՝ 548—557 թվականներին:

Պետք է ասել, որ պատմիչի այս տողերը ճիշտ չեն հասկացվել: Այն վկայարանը, որն ըստ Դրասխանակերտցու կառուցվել է Յիզտբուզիտի աճյունը դնելու համար, որևէ կապ չունի այս եկեղեցու հետ: Դրասխանակերտցին միանգամայն որոշակի տեղեկացնում է, որ Յիզտբուզիտի մարմինը դրել են ոչ թե կաթողիկոսարանի արևելյան կողմում գտնվող եկեղեցու մեջ, այլ այդ եկեղեցու մոտ «կոփածո քարամբք» կառուցված վկայարանում. պարզ ասված է. «Մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ»: Պատմիչի այս վկայությունն այլ կերպ է բացատրել Ս. Մնացականյանը, որը կաթողիկոսարանի եկեղեցին ս. Գրիգորն է ընդունում[98]:

Կաթողիկե եկեղեցու արևելյան կողմում բացված է ուղղանկյունի փոքրիկ մի շինություն, որն ամենայն հավանականությամբ Յիզտբուզիտի դամբանական կոթողի մնացորդն է: Այս ամենից ինքնաբերաբար բխում է, որ Յիզտբուզիտի վկայարանը միանավ եկեղեցու հետ որևէ առնչություն չունի, այն կառուցվել է ս. Գրիգոր եկեղեցու արևելյան կողմում[99]: Իր հորինվածքով և կառուցվածքի առանձնահատկություններով միանավ եկեղեցին VI դարից շատ ավելի հին է: Թ. Թորամանյանը գրում է, որ «Միանավ բազիլիկ տաճարների նախնականությունը ցույց տվող առանձնահատկություններից մեկը պատերի անհեթեթ հաստությունն է»[100]: Այս երևույթն առանձնապես նկատելի է այստեղ՝ հիմնապատերն ունեն երկու մետր հաստություն: Ամենայն հավանականությամբ եկեղեցին ամենահնագույն շինություններից մեկն է և կառուցվել է քաղաքի հիմնադրման շրջանում:

Ս. Գրիգոր.—եկեղեցին գտնվում է միջնաբերդի հարավային կողմում, իր նախնական վիճակում եղել է երկարավուն համաչափություններով եռանավ բազիլիկ՝ յոթ զույգ սյուներով: Կ. Ղաֆադարյանը գրում է. «1948, 1949, 1951 թվականին կատարած մանրազնին ուսումնասիրությունները պարզեցին, որ կաթողիկե եկեղեցու սկզբնական շենքը երկու ամ ենթարկվել է խոշոր փոփոխությունների, և միայն վերջին ձևափո յան ժամանակ է, որ նա ստացել է գմբեթ և կողմնային խորաններ, իր սկզբնական շրջանում տաճարը եղել է զգալի մեծության եռանավ բազիլիկ շինություն, առանց արևելյան ավանդատների և արտաքին սյունասրահի»[101]:

Առաջին վերակառուցումը տեղի է ունեցել V դարի կեսին: Թովմա Արծրունին հաղորդում է, որ Վնդո և Շավասպ Արծրունիները եկեղեցին դարձրել են մեհյան, իսկ Վարդան Մամիկոնյանը քանդել և ավերել է «զմեհյանն եւ հատակեալ զտեղին շինեն նորեն քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորի

97 Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 64:

98 Տե՛ս Ս. Մնացականյան, Դվինի պալատի կառուցման ժամանակի մասին, ՊԲՀ, 1974. № 2, էջ 216, 218:

99 Տե՛ս А. Шахназарян, Двин..., стр. 39.

100 Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 113:

101 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., էջ 89, Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտ. հուշարձանները, էջ 49—56:

ի բլուր տեղւոջ, և փոխե անդ կաթողիկոսն զԳիտ»[102]: Այս տեղեկությունը կրկնում է նաև Դրասխանակերտցին[103]:

Թեև պատմիչը վերակառուցման մանրամասնությունները չի հաղորդում, սակայն հորինվածքային կերպարի մասին կասկածներ լինել չի կարող: Այդ բացը լրացնում է Ղազար Փարպեցին՝ նկարագրելով եկեղեցու արտաքին սյունասրահը V դարի 80-ական թվականներին: «Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի»[104]:

Այս տեղեկությունից պարզվում է, որ 488 թվականին, երբ Վահան Մամիկոնյանը նշանակվում է Հայաստանի մարզպան, եկեղեցին ուներ արտաքին սրահ, բնականաբար նաև կողմնային ավանդատներ: Այս վերափոխությունը Վարդան Մամիկոնյանը կատարել է 450 թվականին: Դատելով պեղումների ընձեռած հնարավորություններից, Վարդան Մամիկոնյանը հավելել է միայն ավանդատներն ու արտաքին սրահը, այլ ոչ թե քանդել ու շինել ամբողջությամբ, ինչպես ասում է Թովմա Արծրունին[105]:

Ի դեպ, այս տեղեկությունը հաստատում են նաև Հովհ. Դրասխանակերտցին[106] և Բարձրբերդցին[107]: Սակայն, քանի որ ժամանակակիցները լռում են այդ մասին, իսկ նրանց և հիշյալ պատմիչների տեղեկությունների մեջ որոշ հակասություններ կան պատմական անձանց բնութագրման հարցում, ապա Ա. Շահնազարյանը[108] չի վստահում այդ տեղեկություններին և նորոգումը ավելի շուտ վերագրում է Վարդան Բ Մամիկոնյանին, որն ապրել է VI դարում: Բոլոր դեպքերում պարզ է, որ V դարում այս եկեղեցին ուներ արտաքին սրահ, որի երևան գալը VI դարում անհնար է, քանզի նրա գոյությունը ժամանակին վավերացրել է Ղազար Փարպեցին:

Սեբեոսի հաղորդման համաձայն եկեղեցու վերջին վերակառուցումը ձեռնարկել է Սմբատ Բագրատունին, որը նախ թույլտվություն է ստացել Խոսրով թագավորից եկեղեցու կառուցման համար, եկել է Հայաստան, կարգավորել հայրապետական աթոռի հարցը և ձեռնամուխ եղել շինությանը: Նա գրում է. «Եւ նստուցին զԱբրահամ զՌշտունեաց եպիսկոպոսն յաթոռ հայրապետութեան: Ապա սկսան արկանել հիմն եկեղեցւոյն. ժողովեաց ճարտարապետս քարի, և կացոյց ի վերայ նոցա հաւատարիմ գործակալս, և հրաման ետ փութանակի հասուցանել ի կատարումն»[109]:

Սմբատ Բագրատունին Հայաստան է եկել Խոսրով թագավորի դահակալության 18-րդ տարում՝ 607 թվականին: Այս տեղեկությունից հետևում է, որ եկեղեցու շինարարական աշխատանքները սկսվել են 607—608 թվականներին և ավարտվել, հավանաբար, 618—619 թվականներին, որովհետև, համաձայն Սեբեոսի, եկեղեցին կանգնեցվել է Աբրահամի մահից հետո՝ Կոմիտաս կաթողիկոսի օրոք[110]:

102 Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Տփղիս, 1917, էջ 137—138:

103 Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 59:

104 Փարպեցի, էջ 394:

105 Հմմտ. Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման և հեթանոսական մեհյանի մասին, էջ 47:

106 Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 59:

107 Տե՛ս Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1860, էջ 74:

108 Տե՛ս А. Шахназарян, Двин..., стр. 26—28.

109 Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 65:

110 Տե՛ս նույն տեղում, էջ 78—79:

Սմբատի կատարած վերաշինության ժամանակ վերացավ արտաքին սյունասրահը, կրճատվեց եկեղեցու երկայնքը, կառուցվեցին գմբեթը, հյուսիսային և հարավային թևերը կազմող խորանները, իսկ հատակը բարձրացվեց 20 սմ։ Արտաքին սրահի կանխամտածված վերացումը նոր հորինվածքի հետ անհամատեղելիության հետևանք չէր, այլ այդ սրահի կարիքը այլևս չէր զգացվում։ Նման հետևության համար հիմք են տալիս մի կողմից Արթիկի ս. Աստվածածին եկեղեցին, որը խաչաձև հատակագծով շինություն լինելով հանդերձ, ունի արտաքին սրահ և վկայում է, որ կարիքը լինելու դեպքում արտաքին սրահը կարող էին պահպանել նաև այս եկեղեցում։ Մյուս կողմից եկեղեցու տիպի հարցն առաջին հերթին պայմանավորված է եղել գործնական պահանջներով։ Ճարտարապետները որպես օրենք չէին կարող ծեսի պահանջներին չհամապատասխանող հնացած հավելումներով շենք կառուցել։ Պատահական չէ, որ V դարի 80-ական թվականներից, այսինքն՝ էջմիածնի Մայր տաճարից հետո, անկախ եկեղեցու տիպից՝ լինի այն խաչաձև հատակագծով, թե հարթ պատերով ուղղանկյուն շինություն, արտաքին սրահ չի կառուցվել։ Այդ տիպի սրահ վերջին անգամ կառուցվեց Տեկորի տաճարում՝ V դարում։ Խաչաձև հատակագծի հաստատումն ու տարածումը Հայաստանում, պայմանավորված հայ ճարտարապետական մտքի յուրօրինակ տրամաբանությամբ և արտահայտված՝ հորինվածքային կերպարում առավելագույն միաձուլություն, կատարյալ ամփոփվածություն և իմաստավորված շեշտի արտահայտչականություն գտնելու միտումով, VI—VII դարերից ի վեր այլևս չէր կարող տուրք տալ ավանդական կաշկանդող ձևերին հատկապես այն պատճառով, որ նրանց պահանջը գործնականորեն գոյություն չուներ։ Նկատի առնելով այս հանգամանքը արտաքին սրահներն անվերապահորեն պետք է թվագրվեն ամենաուշը V դարի սահմաններով։

Եկեղեցու վերակառուցման մանրամասների վերաբերյալ Կ. Ղաֆադարյանը գրում է. «Երբ արևմտյան չորս մույթերին գմբեթ են դրել, արևելյան աբսիդը (խորանը) հեռու է մնացել տաճարի կենտրոնից և դրանով հատակաձևի խաչաձևության մեջ անկանոնություն է առաջ եկել, և որպեսզի տաճարի բեմը գմբեթից և կողմնային աբսիդներից շատ հեռու չլինի, եկեղեցու արևելյան մասը քանդել են և արևմտյան մույթին կից նոր աբսիդ շինել»[111]*։ Ինչպես ցույց են տալիս գմբեթի տեղադրության հետքերը, առաջին զույգ մույթերը դրվել են արևմտյան մուտքից երկրորդ և երրորդ սյուների միջև, իսկ մույթերի երկրորդ զույգը տեղադրված է չորրորդ սյունին կից։ Նա ընդ որում վերակառուցող ճարտարապետը հին սյուները լրիվ քանդել է։ Նա որևէ մտադրություն չի ունեցել այն մույթերին միացնելու և համատեղ օգտագործելու։ Այստեղից էլ հետևում է, որ եթե ճարտարապետը չի ցանկացել գմբեթն արևելյան խորանից հեռացնել, ապա այն կարող էր տեղադրել դահլիճի ուղղակի մեջտեղում։ Կառուցողական առումով դա նրա համար դժվար չէր, որովհետև նախկին սյուները բոլոր դեպքերում անտեսվելու էին։ Այստեղ պատճառը բոլորովին այլ է։ Գմբեթը նա տեղադրել է արևմտյան մուտքից այն հեռավորության վրա, որը նախատեսված նոր համաչափություններ դեպքում կարող էր ներդաշնակ լինել հյուսիսային և հարավային խորանների հեռավորության հետ, և դրանից հետո հորինվածքային նույն*

111 Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը...*, էջ 100։

Մաստարա. սբ. Հովհաննես եկեղեցին հարավ-արևմուտքից

Արթիկ. սբ. Գևորգ եկեղեցին արևմուտքից

Բագարան. սբ. Թեոդորս եկեղեցին հյուսիս-արևմուտքից



Ալամանի եկեղեցին հյուսիս-արևմուտքից

համաչափությունները պահպանելու նկատառումով համապատասխանորեն մոտեցրել է արևելյան խորանը։ Կարող է առաջանալ այն հարցը, թե ինչու հյուսիսային և հարավային խորանները համաչափորեն չի մոտեցվել արևելյան խորանին և կրճատումը կատարվել արևմտյան մասից, որը կառուցողական տեսակետից ավելի հեշտ խնդիր է, քան արևելյան խորանի վերստին կառուցումը։ Այս հարցը կապված է եղել ավանդատների շինության հետ։ Դրանք թե իրենց T-աձև դրվածքով և թե կառուցողական մանրամասներով նոր հորինվածքի հետ անհամատեղելի էին։ Բոլոր դեպքերում դրանք պետք է քանդվեին և կառուցվեին ներշինված։

Դվինի կաթողիկեի այս վերակառուցումը պատահական երևույթ չէր։ Ինչպես Էջմիածնի Մայր տաճարը, սա ևս բազիլիկը խաչաձև հատակագծի վերափոխման տարբերակներից մեկն էր։ Վերակառուցման հետևանքով առաջացած այս տիպի տարբերակների ստեղծումը կապված է եղել նախնական բազիլիկի համաչափությունների հետ։

Դվինի կաթողիկեի կառուցման տարեթիվը վկայում է, որ այն իր համաչափություններով և բազիլիկայի ատաղձի դրսևորումով մշակված պետք է լինի VI—VII դարերի սահմանաեզրին։

Կաթողիկոսարան.—Դվինի կենտրոնական մասում, ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային կողմում, եղել է բավականին շքեղ մի շինություն, որն մասնագետներից շատերի կարծիքով եղել է կաթողիկոսարանը։ Պալատի կենտրոնում եղել է ընդունարան դահլիճը՝ երկու կողմից ամփոփված կից սենյակներով։ Վ. Հարությունյանի կարծիքով դահլիճն ունեցել է ներքին սյուների վրա հենված փայտե հազարաշեն երեք գմբեթ[112]։ Իսկ Ն. Տոկարսկին ենթադրում է, որ միջին մասում ծածկ չի եղել։ Նրա վերակազմությամբ կենտրոնն իրենից ներկայացրել է սյունազարդ բաց բակ[113]։ Այս շինության վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնվել։ Առեղծվածը նախ նրա նշանակության մեջ է։

Կ. Ղաֆադարյանը այն համարում է կաթողիկոսական պալատ և կառուցման ժամանակի վերաբերյալ երկու կարծիք է հայտնել՝ V դարի 60-ական և 481—484 թվականները[114]։ Վերջին կարծիքը հավանական չէ, որովհետև կաթողիկոսարանի տեղափոխումը Դվին կապված էր Գյուտի անվան հետ, որը 471 թվականին զրկվել է հոգևոր իշխանությունից, իսկ 478 թվականին մահացել[115]։

Վ. Հարությունյանը նույնպես այդ շենքը համարում է կաթողիկոսական պալատ, սակայն թվագրում է VI—VII դարերով։ Նրանց հակառակ Ն. Տոկարսկին գտնում է, որ շինությունը իշխանական ապարանք է և թվագրում VII դարով։ Ն. Տոկարսկին իր համոզմունքը հիմնավորել է Վ. Հարությունյանի ներկայացրած համեմատական նյութի վրա՝ Արուճի պալատի և այլ շինությունների վերաբերյալ։ Որպես ապացույց նա վկայակոչում է նաև քարերին փորագրված VII դարի վարպետների նշանները, որոնցից պարզվում է, որ այստեղ աշխատել են Զվարթնոցի, Ջվարիի և VII դարի այլ հուշարձանները

112 Տե՛ս Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտ. հուշարձանները, էջ 56—80։
113 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 56—66.
114 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., էջ 115—116, 119։
115 Տե՛ս Փարպեցի, էջ 255։

կառուցող վարպետներ: Հենվելով նույն փաստերի վրա, պալատը VII դարով է թվագրում նաև Ս. Մնացականյանը:

Որ հայ պատրիարքները դեռևս V դարում ունեցել են իրենց նստատեղին վկայում են պատմիչները: Դրասխանակերտցին գրում է, որ Գյուտ կաթողիկոսը (461—478 թթ.) հայրապետական աթոռը Վաղարշապատից տեղափոխել է Դվին: «Եւ ի տեղի բազնին շինէ, եկեղեցի մեծ անուանակոչութեամբ Սրբոյն Գրիգորի, անդ փոխելով զաթոռ հայրապետութեանն. և հաստատեալ կացուցանէ ի նմա զմեծ հայրապետն Գիտ»[116]: Պատմիչի հաղորդած այս նկարագրի մեջ ամենաէականը կաթողիկոսական աթոռի հաստատման վայրի մասնավոր նշումն է, այն էլ երկու անգամ՝ «անդ» (ուր ս. Գրիգորն է) և «ի նմա» այսինքն՝ ս. Գրիգոր եկեղեցու մոտ: Պատմիչի նշած տեղադրությունը կասկած չի թողնում, որ կաթողիկոսական պալատը գտնվել է եկեղեցու մոտ: Միանգամայն հասկանալի է, որ եկեղեցին, որպես մասսայական աղոթքի վայր, նստատեղի լինել չէր կարող: Պարզ է նաև, որ «հաստատեալ կացուցանէ» բառերը նկատի ունեն որոշակի շենք, ուր կաթողիկոսը հաստատել է իր աթոռը: Հակառակ դեպքում կստացվի, որ նա նստել է եկեղեցու մոտ՝ բացօթյա: Այսպիսով, կաթողիկոսական պալատը կառուցվել է V դարում: Ժամանակի վերաբերյալ ավելի որոշակի տեղեկություն ունի Ս. Անեցին՝ «Սա (Գիւտ) կացեալ ընդ առաջ ամս Ը. հաստատեաց զաթոռ հայրապետութեան ի Դուին քաղաքի…»[117]: Ուրեմն, կաթողիկոսական աթոռի տեղափոխումը կատարվել է Գյուտի կաթողիկոսության 9-րդ տարում՝ 470 թվականին, որը և պետք է ընդունել այդ պալատի շինարարության ավարտի տարեթիվը: Սակայն սա է՞ արդյոք կաթողիկոսական պալատը:

Մենք նույնպես պաշտպանում ենք այս շենքը VII դարում կառուցված լինելու տեսակետը: Ինչ վերաբերում է V դարի կաթողիկոսարանին, ապա դա եղել է բոլորովին այլ շինություն: 1971—1973 թվականների պեղումների ժամանակ կաթողիկե եկեղեցու հարավ-արևմտյան մասում բացվեց մի նաանավ սյունազարդ դահլիճ, որին հյուսիսային և հարավային կողմերից կցված են եղել փոքր սենյակներ: Այս շինության կաթողիկոսարան լինելու հավանականությունը բխում է ժամանակագրական տվյալներից: Շինության պատկանելը V դարին ապացուցվում է նախ շերտագրական տվյալներով և, ապ[illegible] [illegible]նանյութով: Ինչպես և կաթողիկե եկեղեցու հնագույն շենքը սա ևս կ[illegible]ված է սպիտակավուն ավազաքարից[118]:

Էջմիածնի Մայր տաճարը.—*Ճարտարապետական այն եզակի հուշարձաններից է, ուր առավել պարզորոշ են պահպանվել անցած դարաշրջանի ժամանակագրական կերպարը բացահայտող մեծ վերակառուցումների հետքերը: Միաժամանակ Էջմիածնի Մայր տաճարն այն սակավաթիվ հուշարձաններից է, որի վերաբերյալ սկզբնաղբյուրներում առատ նյութ է պահպանվել:*

Առաջին տեղեկությունները տաճարի մասին տալիս է Ագաթանգեղոսը, որի համաձայն եկեղեցին կառուցվել է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ճանաչելու երրորդ տարին:

116 Դրասխանակերտցի, էջ 59:

117 Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 274:

118 Տե՛ս Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղամասի պեղումները 1971—1973 թթ., «Լրաբեր» հաս. գիտ., Երևան, 1975, № 7, էջ 93—98:

Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից Վաղարշապատ վերադառնալիս «Հասանէր և յառաջի դաստակերտն իւր, յոստանակն Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաք, ուստի նախ զառաջինն աստուածաստո հրամանացն լինէր սկիզբն. ուր նախ նշմարեացն և նշանակեալ կանգնեաց զնշան խաչին սրբոյ, ուր և սուրբ վկայքն Աստուծոյ զևտեղեցան. եւ ի նոցա վկայարանսն կանգնեաց սեղանս Աստուծոյ ի հանգիստս սրբոցն. և ընկալեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց, զցուցեալն նմա ի տեսլեանն, պէս և ի տեղիս մեհենացն զոր կործանեաց յառաջագոյն»[119]:

Ինչպես ցույց են տալիս Ա. Սահինյանի հետազոտությունները, Լուսավորչի ձեռնարկած այս շինությունը ունեցել է եռանավ բազիլիկի հատակագիծ, և, ինչպես սպասվում էր, առանց ավանդատների:

IV դարում Շապուհ II-ի Հայաստան կատարած արշավանքներից առանձնապես տուժեցին վանական շինությունները, հավանաբար՝ նաև Էջմիածնի Մայր տաճարը, որովհետև, ըստ Բուզանդի, այդ ավերածություններից հետո Ներսես կաթողիկոսը եկեղեցական շենքերն ամբողջապես նորոգեց և բարեկարգեց[120]: Շահխաթունյանցի կարծիքով այս նորոգումը տեղի է ունեցել 380 թվականին[121]:

Ա. Սահինյանը գրում է. «Երբ պարսիկները Հայաստանում զրադաշտական կրոնը արմատավորելու նպատակով ավերում էին եկեղեցիները կամ դրանք վերածում կրակատների, կործանվել է նաև Էջմիածնի Մայր տաճարի գլխավոր սեղանում բարձրացված՝ քրիստոնեական կրոնի «սրբության սրբոց» համարվող վեմ քարը և նրա տեղում ստեղծվել կրակարան: Իսկ երբ ժողովուրդը չհանդուրժելով բռնի կրոնափոխությունը, նորից վերականգնում է եկեղեցիները, Էջմիածնում չի ոչնչացվում կրակարանը, այլ ուղիղ նրա վրա՝ նորից բարձրանում է վեմ քարը»[122]: Սակայն ծանոթության մեջ Ա. Սահինյանն ավելացնում է՝ «Բացառված չէ նաև, որ կրակարանը գոյություն ունեցած լինի ավելի վաղ՝ մինչև եկեղեցու կառուցումը»:

Թեև Բուզանդն ուղղակի չի նշում Էջմիածնի Մայր տաճարի ավերման մասին, սակայն դա ինքնըստինքյան հասկանալի է դառնում նրա հաղորդած տեղեկություններից: Նկարագրելով Շապուհի Վաղարշապատում կատարած ավերածությունները, պատմիչը գրում է, որ ամեն ինչ կործանվում էր հիմքից[123]: Ա. Սահինյանն էլ այն կարծիքին է, որ այդ վերաբերում է նաև Մայր տաճարին, մանավանդ, որ մի փոքր անց, Բուզանդը խոսում է եկեղեցիների համատարած ավերումների մասին[124]:

Ըստ Սամուէլ Անեցու եկեղեցին նորոգվել է Սահակ կաթողիկոսի կողմից[125]: Հասկանալի է, որ նորոգել կարելի է միայն ավերված շինությունը և ոչ թե վեմ քարը, և եթե շենքը նորոգել են նշանակում է, որ այն վնասված

119 Ագաթանգեղոս, էջ 424—425:

120 Տե՛ս Բուզանդ, էջ 236:

121 Տե՛ս Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, Ա, Էջմիածին, 1842, էջ 20:

122 Տե՛ս ՊԲՀ, 1966, № 3, էջ 75:

123 Տե՛ս Բուզանդ, էջ 221:

124 Տե՛ս նույն տեղում, էջ 225—226:

125 Տե՛ս Ս. Անեցի, էջ 267—268:

կամ ավերված է եղել: Իսկ դա իր հերթին հաստատում է, որ Բուզանդի տեղեկությունը Վաղարշապատի եկեղեցիների ավերման մասին վերաբերում է նաև այս եկեղեցուն:

Սկզբնաղբյուրներից ստանում ենք այն տպավորությունը, որ Մայր տաճարի նորոգումը եղել է բավականին տևական՝ սկսվել է Ներսեսի կողմից և ավարտվել միայն Սահակ կաթողիկոսի օրոք (387—439): Այս հանգամանքը ևս մտածել է տալիս, որ Բուզանդի «կործանում էին հիմքից» վերաբերում է նաև Մայր տաճարին: Իսկ ամենակարևորը՝ պատմիչների տեղեկություններից երևում է, որ այս դեպքում պարսիկները եկեղեցին կրակատան չեն վերածել, այլ ավերել են հիմնովին: Հասկանալի է, որ կրակատան վերածելու համար կավերեին ոչ թե ամբողջ շենքը, այլ միայն «սրբության սրբոցը», որովհետև հիմնովին ավերված շենքը կրակապաշտական տաճար դարձնելն անիմաստ կլիներ: Պարսիկները մտադրված են եղել ոչ թե փոխել շինության պաշտամունքային բովանդակությունը, այլ, առհասարակ ոչնչացնել սրբավայրը: Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ տեղի կրակարանը պատկանում է ավելի վաղ ժամանակներին:

Հարցի լուծման համար կարևոր է Ագաթանգեղոսի տեղեկության վերջին նախադասությունը. «Սոյնպէս և ի տեղիս մեհենացն զոր կործանեաց յառաջագոյն», ուր պատմիչը ուղղակի նշում է տեղում հեթանոսական տաճար լինելու իրողությունը: Ավելի ուշագրավ է տաճարի կառուցման տեղի այլաբանական նկարագիրը. «շինեսջիր զտաճար անուանն Աստուծոյ ի տեղւոջն որ ցուցաւ քեզ, ուր սիւնն հրեղէն ունէր զոսկի խարիսխն»[126]:

Այս փաստարկումները թույլատրում են եզրակացնելու, որ Էջմիածնի Մայր տաճարը նախկինում եղել է կրակապաշտության տաճար:

Էջմիածնի տաճարը գիտական մեծ հետաքրքրություն ունի նաև իր հետագա վերակառուցումներով: Վերակառուցումների հորինվածքային այդ կերպարը կարևոր և նշանակալից դեր խաղաց խաչաձև հատակագծով գմբեթակիր հորինվածքների ձևավորման մեջ:

Թե կառուցվածքային առումով ինչպիսին է եղել Ներսես և Սահակ կաթողիկոսների նորոգումը ներկայումս անհնարին է պարզել, որովհետև սրան հաջորդած V դարի վերակառուցումն այնքան արմատական էր, որ որևէ հետք այդ նորոգումից չի մնացել:

Էջմիածնի Մայր տաճարը սկզբունքային վերակառու[illegible] ենթարկվեց V դարի վերջին քառորդում, որի վերաբերյալ Ղազար Փար[illegible]ն գրում է. «Եւ եկեալ հասանէր այնուհետև ի Վաղարշապատ քաղաք [illegible]անդերձ ողջախորհուրդ և աննենգ ուխտապահ նախարարօքն Հայոց կատարէր զավորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի, զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց, քաջ զօրաւարն Հայոց Մամիկոնեանն Վահան»[127]: Նորոգման պատճառը շենքի հնանալն էր: Այս հանգամանքի կարևորությունն այն է, որ «հնացեալ գործ նախնեաց իւրոց» արտահայտությունը կարող է վերաբերել միայն ճարտարապետական ձևերին, որովհետև վերջին նորոգումը եղել էր բավականին հիմնավոր և դժվար թե 50—100 տարի հետո շինությունն այնքան խարխլված լիներ, որ այն հիմնովին նորոգման կարիք ունենար: Դա եղել է ոչ թե նորոգում, այլ վերակառուցում[128], այսինքն՝ քանդել են հիմքից և կառուցել նոր տաճար:

2. Ստրժիգովսկին գտնում է, որ Փարպեցու նշած նորոգումը կատարվել է 483—484 թվականներին[129]: Սակայն այս թվագրումը մեզ մի փոքր կամայական է թվում: Նշված տարիներին երկիրը գտնվում էր պատերազմական ծանր վիճակում: Ղազար Փարպեցու նկարագրած Վահան Մամիկոնյանի մուտքը Վաղարշապատի եկեղեցին վերաբերում է 484 թվականին, երբ պարսկական բանակի կողմից երկար հետապնդվելուց հետո Վահան Մամիկոնյանին հաջողվեց վերադառնալ հայրենիք: Այդ տարիներին, նա ապատանում էր բյուզանդական Հայաստանում, շրջում էր նահանգից նահանգ՝ պատերազմներ վարելով, բնականաբար, եկեղեցի կառուցելու մասին մտածել անգամ չէր կարող: Վերջապես, Փարպեցին 484 թվականին միայն նկարագրում է Վահան Մամիկոնյանի մուտքը այն եկեղեցին, որն ինչ-որ ժամանակ նա կառուցել էր: Եկեղեցու շինությունը չէր կարող տեղի ունենալ ինչպես 481, նույնպես և 478 թվականից հետո, որովհետև այդ տարիներին ապստամբություն բարձրացնելու վերաբերյալ Պերոզի կասկածները փարատելու նպատակով արտաքնապես նա զրադաշտական կրոն էր ընդունել[130]: Եկեղեցու վերակառուցման տարեթիվը ճիշտ կլիներ որոնել Գյուտի կաթողիկոսության տարիներում (461—478 թթ.), որովհետև նա սերտ համագործակցության մեջ էր Վահան Մամիկոնյանի հետ և այդ համագործակցությունը պահում էր քրիստոնեության կողմնակիցներին, նույնիսկ Իրանի բռնապետության այդ մռայլ տարիներին: Իսկ դրանք այդ խիզախ և իմաստուն զորավարի կյանքի միակ համեմատաբար անխռով տարիներն էին:

Վահան Մամիկոնյանի վերակառուցման ժամանակ երջանիկ պատահականությամբ կրակարանը մնաց իր տեղում: Ինչպես ցույց տվեցին Ա. Սահինյանի հետազոտությունները, գմբեթակիր մույթերը ներկայումս հենվում են կրկնակի խարիսխների վրա: Ընդ որում, ստորիններն առավել հին խարիսխներ են, իսկ վերինների մասին, ելնելով նրանց կառուցվածքային առանձնահատկություններից, Ա. Սահինյանը գրում է, որ «ստեղծվել են իբրև գմբեթակիր շենքի խարիսխներ»[131]: Ըստ Ա. Խաչատրյանի Էջմիածնի Մայր տաճարը IV դարի սկզբին արդեն ունեցել է չորս մույթերով գմբեթակիր կառուցվածք[132]: Այսպիսով, ոչ միայն կրակարանը, այլև ամբողջ շենքի հիմնամասը մնացել է V դարում կառուցված շենքի տակ:

Բագրատունյաց շրջանում Էջմիածնի Մայր տաճարը, հավանաբար, նորից է ենթարկվել նորոգման, հատկապես նրա վերնամասը, ուր նկատվում է նմանություն Անիի Առաքելոց եկեղեցու հետ: Այդ մասին են վկայում հյուսիսային և հարավային պատերի վերնամասում պահպանված ճակտոնների հետքերը: Առաջին անգամ այս հարցի վերաբերյալ իր տեսակետն է հայտնել Դյուբուան[133]: Սակայն, Թ. Թորամանյանը ենթադրում է, որ այստեղ

---

126 Ագաթանգեղոս, էջ 384:
127 Փարպեցի, էջ 345, 346:

128 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 2, էջ 61, Ա. Սահինյան, Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը, ՊԲՀ, 1966, № 3, էջ 73—75:
129 Տե՛ս J. *Strzigowski*, Die Baukunst..., t. 1, S. 232.
130 Տե՛ս Փարպեցի, էջ 256:
131 ՊԲՀ, 1966, № 3, էջ 78:
132 Տե՛ս *A. Khatchatrian*, L'Architeture Arménienne du IV au VI ciecle,. Paris, 1971 p. 73.
133 Տե՛ս *Dubois de Montperaux*, Voyage autour du Caucas, Atlas, ser. III pl. VII, f. 1.

գոյություն են ունեցել հարակից մատուռներ, որոնցից մեկի «Ճակատնի մնացորդն են այսօրվա երեցած ironton-ի կտուրի և տաճարին կից պատի մնացորդը»[134]։

Մայր տաճարը բազմիցս նորոգվել է նաև XVII—XVIII դարերում, սակայն այդ նորոգումները V դարում ստեղծված տաճարի հորինվածքային կերպարի մեջ որևէ փոփոխություն չեն մտցրել։

Տեկորի տաճար.—Ըստ ուսումնասիրողների, նախաքրիստոնեական տաճարային շինության հաջորդ հուշարձանը Տեկորի տաճարն է։ Տաճարը գտնվում է պատմական Շիրակ գավառի արևմտյան մասում։ Ժամանակին այնտեղ եղել է խոշոր միաբանություն, որից XX դարի սկզբներին միայն հետքեր էին պահպանվել։ Ներկայումս նույն վիճակում է նաև եկեղեցին։ Սակայն դարի սկզբին Թ. Թորամանյանի կողմից կատարված մանրազնին հետազոտությունների, ինչպես նաև բազմաթիվ լուսանկարների և այլ հեղինակների թողած նկարագրությունների շնորհիվ հնարավոր եղավ խորամուխ լինել եկեղեցու ճարտարապետական առանձնահատկությունների մեջ։

Թ. Թորամանյանի ուսումնասիրություններից պարզվել է, որ մինչև V դարի վերակառուցումը Տեկորի տաճարը եղել է եռանավ բազիլիկ շինություն։ Նավերը եղել են թաղածածկ, արևելյան կողմում տեղադրված ուղղանկյուն խորանով։ Վերակառուցման ժամանակ քանդել և ձևափոխել են արևելյան պատը։ Խորանը դարձրել են կիսաբոլորակ, որի երկու կողմից ավելացրել են ավանդատները և շինությանը տվել T-աձև հորինվածք։ Զգալի փոփոխությունների են ենթարկվել նաև հյուսիսային, արևմտյան և հարավային պատերը։ Ամենաէականն, անկասկած, գմբեթի շինությունն էր, որը վերջնականապես կերպարանափոխեց տաճարի նախկին տեսքը։ Արտաքուստ գմբեթի թմբուկն ունեցել է քառակող կառուցվածք, իսկ ներքուստ՝ ութանկյուն։

Տեկորի տաճարի ուշագրավ կառուցվածքային առանձնահատկություններից են նաև պայտաձև կամարները։ Այս հանգամանքը չափազանց կարևոր է որպես ժամանակագրական հատկանիշ, որովհետև VII դարում այն փոխվում է կիսաշրջանաձևի և կարևոր է նաև թյուրիմացաբար ստեղծված այն կարծիքը հերքելու համար, որ դրանք արաբական ծագում ունեն։ Դեռևս IV դարի շարք այլ ծանոթ չլինելով Զարչարիսի, Հովհաննավանքի և հուշարձանների հետ, որոնցում կարելի է տես ոչ միայն հայկական պայտաձև, այլ սլաքաձև կամարների համատեղ գործածության օրինակներ, հենվելով միայն Տեկորի տաճարի վրա, այս թյուր կարծիքը առաջին անգամ առաջարկել է վերանայել Տեքսիեն։

Տեկորի տաճարի կառուցվածքային ձևերն ու հորինվածքի ժամանակագրական հատկանիշները պարզելուն մեծապես օգնում է նրա շինարարական արձանագրությունը։ Այն գտնվում էր արևմտյան մուտքի բարավորի վրա։ Արձանագրությունը վերջինիս զարդարված էր արմավենատիպ զարդարանքներով։ Արձանագրության երկու տողն այդ զարդաքանդակների վերին մասում էին, իսկ մյուս երկուսը՝ ստորին։ Տեղագրության այդօրինակ ձևը տարակարծիքների տեղիք է տվել։ Արձանագրության առեղծվածը, սակայն, միայն տեղագրության

134 Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 222։

հարցով չի սահմանափակվել։ Ինչպես կտեսնենք ստորև, առանձին ուսում-
նասիրողների կողմից այն մեկնաբանվել է տարբեր, նույնիսկ իրարամերժ
կարծիքներով։
Առաջին անգամ արձանագրությունը հրատարակել է Ս. Ջալալյանցը[135],
այնուհետև Ն. Սարգիսյանը[136]։ Սակայն ստույգ վերծանության նախապատ-
վությունը պատկանում է Ն. Մառին[137]։ Առանձին հարցերի ուսումնասիրու-
թյան կապակցությամբ Տեկորի արձանագրությանն են անդրադարձել Գ.
Տեր-Մկրտչյանը[138] և Կ. Ղաֆադարյանը[139]։ Արձանագրությունը ըստ տողերի
տեղագրության հետևյալ պատկերն է ներկայացնում.
ԵՊԻՍԿԱՊՈՍԻ ԵՒ ՏԱՅՐՈՆԻ ՏԵԿՈՐՈՅ ՎԱՆԱՑ ԵՐԻՑՈՒ ԵՒ ՄԱՆԱՆԱՅ
ՀԱԶԱՐԱՊԵՏԻ ՈՒՐԱՆԱՅ ՀՈՌՈՄԻ ՈՐ Շ...
ՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՑԱՒ ՏԵՂԻՍ Ի ՁԵՌՆ ՅՈՀԱՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹԱՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԵՒ ՅՈՀԱՆՈՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ
ՅԻՒՐ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈՎՈՐ ԱԶԳԻՍ ԵՒ ԱՄՈՒՍՆՒ ԵՒ ՈՐԴԵԿԱՑ
ԵՒ ՍԻՐԵԼԵԱՑ ԵՒ...
ՍԱՀԱԿ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՇԻՆԵԱՑ ԶԱՅՍ ՎԿԱՅԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ
Տարակարծության առաջին առիթը տալիս է արձանագրության տողերի
միջև քիվականական կապի բացակայությունը։ Առաջին տողը սկսվում է
սեռական հոլով ունեցող «եպիսկոպոսի» բառով և վերջում չպահպանված
ինչ-որ բառի Շ սկզբնատառն է մնացել։ Այս հանգամանքն անհնար է դարձ-
նում սկսել երկրորդ տողը «Ու» շաղկապով։ Դրան հաջորդում է «հիմնարկե-
ցաւ», որը չի հասկացվում թե ու՞մ է վերաբերում՝ եպիսկոպոսի՞ն, որի
անունը պետք է նախորդեր այդ կոչմանը և արձանագրության սկիզբը լիներ,
թե՞ «Տեկորոյ վանաց երիցուն»՝ Տայրոնին կամ Մանան հազարապետին։
Դեռ կարելի է ավելացնել նաև «Ուրանայ Հոռոմի» անունը, որի մասին
տեղեկությունը մնում է անավարտ։ Երրորդ տողը սկսվում է «յիւր» բառով
և ոչ մի կերպ չի համաձայնվում երկրորդ տողում հիմնարկող երկու անձանց
հետ։ Այս երեք տողերից առավել տարբերակվում է չորրորդ տողը, որն, ասես
ի հերքումն նախորդ հաղորդման, ամենայն պարզությամբ ավանդում է, որ
վկայարանը Սահակ Կամսարականն է շինել։
Ն. Մառի կարծիքով նախ և առաջ սա շինության արձանագրություն չէ և
գրված է ոչ թե հինգերորդ, այլ տասնմեկերորդ դարում, հավանաբար՝
1014 թվականին։ Իր մեկնությունը Ն. Մառը հիմնավորում է արձանագրու-
թյան մեջ հիշատակված «Ուրանայ Հոռոմի» անվան առկայությամբ։ Այս
առթիվ խորհրդակցելով Վ. Ն. Բենեշևիչի հետ, նա եկել է այն համոզման,
որ խոսքը XI դարի սկզբներին Հայաստան այցելած Անտիոքի մագիստրոս,
բյուզանդական ճարտարապետ Նիկիֆոր Ուրանի մասին է։ Նման մեկնության
անմիջական հետևությամբ արձանագրությանը վերագրել է նորոգման իմաստ,
ենթադրելով, որ տաճարը XI դարում նորոգվել է հիշյալ ճարտարապետի

135 Տե՛ս Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Բ, Տփղիս, 1858, էջ
51–52։
136 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, ի փոքր եւ ի մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 206։
137 Տե՛ս Н. Я. Марр, О ктиторской надписи Текорского храма, ХВ, III, вып. I,
стр. 56–71.
138 Տե՛ս «Արարատ» (ամսագիր), 1894, № 4, էջ 205—220։
139 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը, ՊԲՀ, 1962, № 2։

կողմից, իսկ արձանագրությունն էլ արտագրվել է հին բնագրից կամ փաստաթղթից։ Իր տեսակետն ավելի հիմնավորելու նպատակով Ն. Մառն այնուհետև վերլուծել է արձանագրության առանձին դարձվածքներն ու բառակազմությունները, ինչպես օրինակ «հիմնարկեցաւ», «ամուսնի»[140] նա համարում է հնագույն նիմն arkանեաց և ամուսնոյ ձևերի պարզեցումը, որը հնարավոր էր միայն VII—VIII դարերից հետո։

Ն. Մառի ամենամեծ հայտնագործությունն արձանագրության վերծանումն էր։ Հետազոտման ընթացքում նա սրամտորեն նկատել է, որ արձանագրությունն խմաստավորվում ու միանգամայն կապակցվում է, երբ ընթերցումը սկսում ենք վերջին տողից և համապատասխանաբար շարունակում այն մինչև առաջին տողը՝ այսպես.

4. ՍԱՀԱԿ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՇԻՆԵԱՑ ԶԱՅՍ ՎԿԱՅԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ
3. ՅԻՐ ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԱԶԳԻՍ ԵՒ ԱՄՈՒՍՆՒ ԵՒ ՈՐԴԵԿԱՑ ԵՒ ՍԻՐԵԼԵԱՑ ԵՒ...
2. ԵՒ ՀԻՄՆԱՐԿԵՑԱՒ ՏԵՂԻՍ Ի ՁԵՌՆ ՅՈՀԱՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹԱՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՅՈՀԱՆՈՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ
1. ԵՊԻՍԿԱՊՈՍԻ ԵՒ ՏԱՅՐՈՆԻ ՏԵԿՈՐՈՅ ՎԱՆԱՑ ԵՐԻՑՈՒ ԵՒ ՄԱՆԱՆԱՑ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ ՈՒՐԱՆԱՅ ՀՈՌՈՄԻ ՈՐ Շ...[141]

Արձանագրությունը մնում է անավարտ, այն էլ այնպիսի մի շարադրանքով, որ տեղիք է տալիս հիշյալ Ուրանի կողմից շինարարական աշխատանքներ կատարելու վերաբերյալ ենթադրություններ անել։ Վերջին Շ տառը, որին նախորդում է ՈՐ դերանունը, կարելի է վերականգնել ՇԻՆԵԱՑ... և այլն։

Հին բնագիր չլինելու հարցում, արձանագրությունը կասկածելի է հարուցել նաև իր տեղադրությամբ՝ վարդաքանդակ բարավորի նեղ սահմաններում։

VII դարի հուշարձաններում շինության արձանագրությունը հաճախ զետեղում էր եկեղեցին։ Ելնելով այդ հանգամանքից Ն. Մառն[142] այն կարծիքն է հայտնել, որ այդօրինակ տեղադրությունը վճռական պայման է նաև առավել հին հուշարձանների արձանագրության ժամանակը որոշելու համար։ Իսկ Թ. Թորամանյանը գրում է, որ «Տեկորի տաճարի նման մեծ շենք մը կանգնողի անվան հիշատակության վայել տեղը չէ այնտեղ ուր փորագրված է Սահակ Կամսարականի յիշատակարանը։ Ընդհակառակը, պատշաճ տեղը գրված է Բագրատունի Գագիկ Ա.-ի զուգակից Կատրանիդէ թագուհիի մի նվիրատվությունը»[143]։

Հիմնականում ընդունելով Ն. Մառի վերծանումը, Կ. Ղաֆադարյանը բոլորովին անհնարին է համարում նրա մեկնաբանությունը։

Միանգամայն իրավացիորեն նա տարակուսում է, թե ինչպես կարող են արձանագրության մեջ որպես գործող անձիք միասին հիշատակվել V և XI դարի մարդիկ։ Հոռոմի Ուրանի վերաբերյալ տեղեկությունները խիստ ենթադրական են և, ամենակարևորը, հակասում են պատմականորեն հայտնի անձանց առկայության փաստին և այդ պատճառով ընդունելի լինել չեն կարող։

140 Տե՛ս Н. Я. Марр, О ктиторской надписи Текорского храма, стр. 71, 59, 65, 66.
141 Նույն տեղում, էջ 71։
142 Նույն տեղում, էջ 64։
143 Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 218։

Սակայն, միաժամանակ, խնդիրն այստեղ ոչ թե արձանագրության բովանդակության ժամանակի որոշելն է, այլ նրա գրության՝ բնագի՞ր է արդյոք, թե արտագրված է հին արձանագրությունից կամ փաստաթղթից։ Այս հարցի լուծման առաջնային, դույն և որոշիչ խոսքը պատկանում է տառաձևերին։

Չնայած Թ. Թորամանյանը տեղեկացնում է, որ «Տառերու մեջ ալ ոչ մի ժամանակագրական ոճ չէ կարելի որոշ նշմարել, ամենահիններն մինչև ամենանոր տառերու ձևերը խառնված են»[144], սակայն դա իրականությանը չի համապատասխանում և ինքը Թ. Թորամանյանը հետագայում ստիպված եղավ վերանայել իր կարծիքը[145]։ Արձանագրության տառաձևերը գրված են, ճիշտ է, տարբեր չափերի, երբեմն էլ գեղագրության ոչ մեծ վարպետությամբ, սակայն ժամանակագրական առումով ամենահին՝ դասական բոլորաձև երկաթագրի կատարյալ օրինակներ են։

Հակառակ Թ. Թորամանյանի, Գ. Հովսեփյանն, ուսումնասիրելով հնագրության ձևերն, անհնարին է գտնում, որ արձանագրությունը VII դարից ավելի ուշ փորագրված լինի[146]։

Տառաձևերի հետևողական փոփոխումների ժամանակագրական պատկերի ընդհանուր ֆոնի վրա Տեկորի արձանագրության մեջ վառ կերպով արտահայտված է առանձին, փոփոխման առավել չափով ենթարկված տառերի բացառիկ հնաձևությունը[147]։

Արձանագրության սկզբնական բնագիր լինելն ապացուցվում է նաև տաճարի նորոգման վերաբերյալ կատարած ուսումնասիրություններից։ Ինչպես պարզվում է նորոգման հետքերից, XI դարում փոխարինվել են շինության ճակատային մասը երեսապատող քարերը, ընդ որում, միայն վերին հատվածում։ Արձանագրությունը կրող քարն իր տեղն է մնացել։ Ինչպես տեսանք, արձանագրության վերին տողն անավարտ է, և համաձայն տողերի հաջորդականության, նրա շարունակությունը պետք է գտնվեր վերին մասում, այսինքն նորոգման ենթարկված տեղում։ Եթե ենթադրենք, որ XI դարում այս քարը ևս նորոգվել է և արձանագրությունն էլ արտագրվել, ապա անհասկանալի կդառնա, թե ինչու՞ են արտագրել այդպիսի ոչ հարմար տեղում և այն էլ տողերի նմանօրինակ հաջորդականությամբ։ Վերջին հաշվով կարող էին բոլորովին չարտագրել, եթե այն կիսատ պետք է թողնվեր բառակեսին, չնայած շարունակության համար տեղի պակաս չի եղել։

Նորոգված քարերի սահմանում ընդհատվող արձանագրությունն ինքնին մի վկայություն է արձանագրությունը նորոգումից հին լինելու մասին։ Այն, որ արձանագրությունը չի արտագրվել, այլ բոլորովին անտեսվել է, երևում է Գագիկ Ա.-ի զուգակից Կատրանիդեի արձանագրությունից, որի համար էլ, հավանաբար, փոխարինել են երեսապատման քարերը, ոչնչացնելով հին արձանագրության վերջավորությունը։ Հին արձանագրությունն այնքան է անտեսվել, որ վերանորոգումից հետո եկեղեցին, հակառակ արձանագրության ավանդությանը, ս. Սարգսից վերանվանվել է ս. Երրորդություն։ Այս

144 Նույն տեղում, էջ 218։
145 Տե՛ս նույն տեղում, էջ 66։
146 Տե՛ս Գ. Հովսեփեան, Քարտեզ հայ հնագրութեան, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 171։
147 Տե՛ս А. А. Манучарян, Текорская надпись и первоначальные формы букв армянского алфавита по эпиграфическим материалам, „Эпиграфика Востока", XX, Л., 1971, стр. 56. 57.

ամենից պարզվում է, որ բարավորի հատվածում պահպանվել է հին բնագիրը, իսկ նորոգման ժամանակ տաշել է միայն վերջավորությունը, որը տեղադրված էր նրանից վերև։

Արձանագրությունը չի թվագրված։ Փորագրման ժամանակը որոշելու համար անհրաժեշտ է վերլուծել նրա բովանդակությունը և առաջին հերթին սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունները հիշատակված անձանց մասին։ Արձանագրությունը ավանդում է, որ եկեղեցին կառուցել է Սահակ Կամսարականը։ Սահակ Կամսարականը V դարի անձնավորություն է՝ Արշավիր Կամսարականի երեք որդիներից մեկը։ Ղազար Փարպեցու վկայությամբ նա մասնակցել է 481—484 թվականների ապստամբությանը և հիշատակված է Նվարսակի դեսպանական պատվիրակության կազմում[148]։

Արշարունյաց եպիսկոպոս Յոհանի և Տայրոնի վաներեցի մասին տեղեկություններ չկան։ Ալիշանը Կամսարականների տան եպիսկոպոսների ցուցակում երկրորդը հիշատակում է Յոհանին[149]։

Մանան հազարապետին Ն. Մառը համարում է եկեղեցու տնտեսը։ Սակայն Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ եկեղեցու տնտեսները երբեք այդպես չեն կոչվել, որ «հազարապետ» տիտղոսը շատ ավելի մեծ պետական դեմք է ենթադրում, քան եկեղեցու տնտեսը[150]։ Պետք է ասել, որ դա իրականությանը չի համապատասխանում[151]։ Բարձրաստիճան հազարապետին զուգընթաց այն բազմիցս օգտագործվել է նաև տնտեսի[152] և նույնիսկ հոգևոր տնտեսի իմաստով[153], և պատահական չէ, որ Մանան անունն այստեղ հիշատակված է կաթողիկոսից, եպիսկոպոսից և վաներեցից հետո՝ պահպանված է թվարկման հաջորդականությունն ըստ աստիճանի։ Այս հանգամանքն անհրկմաբեն վկայում է նրա ոչ բարձր աստիճանավոր լինելու մասին, և, դեռ ավելին՝ Մանան անունը գրված է արձանագրության այն մասում, ուր սկսվում է, նախ աշխարհիկ, և երկրորդ՝ օտարազգի մարդկանց անունների ցուցակը։ Օտարազգի, մասնավորապես պարսիկ տնտեսի առկայությունը Հայաստանի ավատական տիրույթներում, Վարդանանց պատերազմից հետո, 481—484 թվականների ապստամբությանը նախորդող մոտավոր տարիներին շատ բնական է։

Մանանի վերաբերյալ մի յուրօրինակ կարծիք է հայտնել Գ. Տեր Մկրտչյանը[154]։ Նա գտնում է, որ դա պարսիկ Վեհնամի անունն է, ո[...]ղար Փարպեցու հիշատակության համաձայն V դարի վերջին Հայաստա[...] հազարապետ էր նշանակված[155]։ Այս տեսակետը պաշտպանում է նաև Կ. Ղաֆադարյանը գտնելով, որ Մանան անունը կարող է Վեհման անվան ժողովրդական ձևը լինել։ Նա չի բացառում նաև, որ ճիշտը կարող է լինել Մանան և ոչ Վեհնամ[156]։ Սակայն այս երկու անունների նմանօրինակ նույնացումը

148 Տե՛ս Փարպեցի, էջ 162։

149 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 56։

150 Տե՛ս ՊԲՀ, 1962, № 2, էջ 44։

151 Տե՛ս «Բառագիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1749, էջ 491։

152 Տե՛ս «Աստուածաշունչք» («Ծննդոց»), էջ 39, («Յուդիթ»), էջ 478, («Թուղթ առ Գաղատացիս»), էջ 1149, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 446.

153 Տե՛ս «Աստուածաշունչք» («Թուղթ առ Պետրոսի Ա.»), էջ 1088, («Թուղթ առ Կորնթացիս Ա.»), էջ 1128։

154 Տե՛ս «Արարատ», ապրիլ 1894, № 4, էջ 205—220։

155 Տե՛ս Փարպեցի, էջ 118, 164։

156 Տե՛ս ՊԲՀ, 1962, № 2, էջ 44։

զուրկ է ստուգաբանական որևէ հիմքից։ Դրանք բոլորովին տարբեր անուններ են և հանդիպում են որպես ինքնուրույն ձևեր[157]։ Ի մի բերելով վերոգրվածը, կարելի է եզրակացնել, որ եթե Մանանի անունը հիշատակվել է արձանագրության վերջնամասում, աշխարհիկ անձանց հետ, որտեղ հիշատակվել են օտարազգիները, նկատի առնելով նրա անվան ակնհայտ պարսկական ծագումը և այն, որ ժամանակի պատմիչները նրա մասին որևէ հիշատակություն չեն պահպանել, ինչպես նաև այն, որ հայտնի է այդ ժամանակաշրջանի իրանցի հազարապետի իսկական անունը, կարծում ենք, որ Մանանը իրանցի վերակացու էր՝ նշանակված Արշարունյաց կալվածքների վրա։ Նրան նույնացնել Նիկիֆոր Ուրանի հետ անիմաստ է, որովհետև, ինչպես արդեն նշվեց, V և XI դարերի անձինք իրար հետ որպես համագործակից հիշատակվել չէին կարող։ Ցավոք արձանագրությունն ընդհատվում է այնտեղ, ուր պետք է «Ուրանայ Հոռոմին» ևս անհայտ անձնավորություն է։

խոսվեր Ուրանի մասին։ «Հոռոմի»-ն բացահայտում է նրա բյուզանդական ծագումը, իսկ առնչությունը եկեղեցու շինության կամ հոգևոր հաստատության հետ պարզելն անհնար է։ «Ուրան»-ին հաջորդող Շ սկզբնատառով նրան ճարտարապետ կամ, առհասարակ, շինարարական գործին մասնակից կարծելը բացառվում է, քանզի արձանագրության մեջ տաճարի շինության մասին տեղեկությունը կրկնվել չէր կարող։ «Ի տեղիս» Ն. Մառի մեկնաբանությամբ իմաստ է բովանդակում։ Թ. Թորամանյանը գրում է. «Տեկորի մէջ կար վանախումբ՝ Հոռոմոսի վանքի նման, որուն ամենահին ու աղանդի այս շրջանում պետք է տեղափոխենք առաջինն Սահակ Կամսարականի անունից և երկրորդ անգամ այս արդեն ավանդված է Սահակ հոգևոր հաստատության ... Տեկորո վանք, անունը մեզ յայտնի չէ և կամ անոնցմե մեկը կանվանվեր Տեկորո վանք, որուն մոտ կանգնեց Սահակ Կամսարական ս. Սարգիս վկայարան»[158]։

Ամփոփելով նշված դատողությունները և տվյալները, տաճարի արձանագրության փորագրման ժամանակը նախ պետք է որոնել Յոհաննի կաթողիկոսության շրջանում՝ 478—490 թվականներին։ Այս տասներկու տարիներից 481—484 թվականները բացառվում են Տեկորի նման շքեղ ու մեծածավալ շինություն և հոգևոր հաստատություն հիմնելու համար, որովհետև դրանք ապստամբական ծանր հերոսամարտի տարիներ էին և Կամսարականներն էլ թերևս մասնակցություն են ցուցաբերել այդ պայքարին։ Երկրորդ՝ 481 ակտիվ ամենակարևոր կողմնորոշումը Մանանի անվան առկայության մեջ է։ Մանանի անունը արձանագրության մեջ հիշատակվել չէր կարող, թվականից հետո այդ անունն արձանագրության մեջ դուրս էին քշվել որովհետև պարսիկները և, մանավանդ, հազարապետները Հայաստանից։ Այսպիսով, մնում է 478—481 թվականները։

Ժամանակի հարցը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է պարզել նաև արձանագրության տողերի այդ հետադարձ, անսովոր հաջորդականության պատճառը։

Ուշադրության է գրավում այն հանգամանքը, որ արձանագրությունն իր ընթերցանության հաջորդական կարգով կարող է ավարտված համարվել ինչպես առաջին, նույնպես և երկրորդ տողերում, իսկ դա նշանակում է, որ սկզբնական մտահղացմամբ այն պետք է լիներ մեկ տողով. ՍԱՀԱԿ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՇԻՆԵԱՑ ԶԱՅՍ ՎԿԱՅԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ, որը և գրվել է շինողի հիշատակին պատշաճ խոշոր տառերով։ Սակայն այս կարճառոտ

157 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 193 և Ե, Երևան, 1962, էջ 119։

158 Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 219։

հիշատակությունն անբավարար գտնելով որոշել են ավելացնել ևս մի տող՝ ՅԻՒՐ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԱԶԳԻՍ ԵՒ ԱՄՈՒՍՆԻ ԵՒ ՈՐԴԵԿԱՑ ԵՒ ՍԻՐԵԼԵՑ ԵՒ..., և որովհետև առաջին տողը գրվել է քարի ստորին սահմանի վրա, ուստի ստիպված են եղել երկրորդ տողը գրել վերևում։ Որպեսզի հետագա ընթերցանության համար նկատելի լինի երկրորդ տողը՝ տեղադրել են ամենամոտիկ միակ հնարավոր տեղում։

Կ. Ղաֆադարյանը ճիշտ է նկատել, որ արձանագրության շարունակությունը առաջին հատվածի հետ միաժամանակ չի գրվել։ Երկրորդ հատվածը վերաբերում է վանական հաստատության հիմնադրմանը և քանի որ այդ մասը շարադրվել է որպես Սահակ Կամսարականի արձանագրության շարունակություն, պետք է ենթադրել, որ Տեկորի տաճարի շինությունը հիմք է հանդիսացել այդ միաբանության հաստատման համար և արձանագրության առաջին հատվածի վրա էլ անմիջապես ավելացել է երկրորդը։

Այսպիսով, արձանագրությունը փորագրվել է երեք անգամ 478—481 թվականների ընթացքում։ Նկատի առնելով այս տարեթվերը, կարծում ենք, որ 478 թվականին շինությունն արդեն ավարտված է եղել և այդ ժամանակ էլ փորագրվել է արձանագրության առաջին տողը։ Արձանագրության վերջին երկու տողերն, ըստ էության, ավանդում են նաև տեղի միաբանության մի շարք շինությունների կառուցման մասին, որոնց ավարտի տարեթիվը պետք է որոնել 478—481 թվականների շրջանում։

* * *

ՏՍՈՒՐԳԵՏՆԵՐ. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ.—Վաղ միջնադարից եկեղեցական շինություններից բացի պահպանվել են նաև մի քանի դամբարանների մնացորդներ։ Դրանցից մեկը գտնվում է Ամարասի վանքում (Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջան)։ Դամբարանի վրա եկեղեցի է կառուցված։ Մուտքը եկեղեցու ներսից է, հարավային ավանդատան մոտ, որտեղից բացվում է ներքև տանող աստիճանավոր միջանցք։ Այդ միջանցքի պատին փորված է մի փոքր խորշ, որի երկու կողմերում քանդակված են վաղ քրիստոնեական ժամանակներին բնորոշ արմավենաձև զարդաքանդակներ, և անտարակույս, վկայում են դամբարանի խիստ հնության մասին։

Դամբարանը բաղկացած է մի քանի սենյակներից։ Միջինն [illegible]ից ներկայացնում է մեծ դահլիճ, որի երկու կողմերում տեղադրված են [illegible] սրահման սենյակներ։

Ամարասի դամբարանի վերաբերյալ պահպանվել է մատենագրական մի տեղեկություն, որը հնարավորություն է տալիս մոտավոր ճշտությամբ պարզել նրա կառուցման տարեթիվը։ Խորենացին տեղեկացնում է, որ Տրդատ Գ. թագավորի մահվան լուրը ստանալուն պես Փայտակարանի կուսակալ Սանատրուկը սպանում է Գրիգորիսին, որն ուղարկվել էր Աղվանք՝ որպես կաթողիկոս։ Գրիգորիսը ծագումով Լուսավորչի տոհմից էր՝ Վրթանեսի ավագ որդին։

«Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազասուտ արանց Աղուանից՝ սպանին զերանելին (Գրիգորիսին), ընթադրեալ ձիովք, բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով։ Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»[159]։

159 Խորենացի, էջ 259—260։

ժամանակագրման համար ամենալավագույն կողմնորոշումը տալիս է Տրդատ Գ-ի մահվան տարեթիվը, որի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր կարծիքներ, սակայն ուսումնասիրողների մեծամասնությունը գտնում է, որ այն տեղի է ունեցել IV դարի առաջին քառորդի վերջում։

Բուզանդը գրում է, որ նրան թաղեցին իր պապի՝ Գրիգոր Լուսավորչի շինած եկեղեցու մոտ[160]։ Անհամեմատ ավելի մանրամասն են Կաղանկատվացու տեղեկությունները։ Լուսավորչի մասին նա գրում է. «Եւ արկանէր հիմը եկեղեցւոյն ի գիւղաքաղաքին Ամարասայ եւ կացուցանէր գործունեայս և հրամանահարս շինել զեկեղեցին»[161]։ Ի տարբերություն Բուզանդի, Կաղանկատվացին ասում է, որ Գրիգորիսի դին դրեցին եկեղեցու մեջ՝ բեմի տակ դժվար է ունենալով, որ դամբարանը գտնվում է եկեղեցու մեջ՝ բեմի տակ դժվար է կասկածել, որ խոսքը հենց այդ դամբարանի շինության մասին է։ Գրիգորիսի նշխարները Ամարասում գտնվելու և, մասնավորապես, բեմի տակի դամբարանում պահպանվելու մասին վկայում է նաև Վարդան Աշխարհագետը[163]։ Իսկ այդ վկայությունը կարևոր է նրանով, որ Գրիգորիսի նշխարները Ամարասի դամբարանի մեջ գտնվելու փաստը արձանագրված է դամբարանի կառուցումից 900 տարի անց։ Այսինքն՝ VI դարի և հետագա շինարարական գործերը, որոնց մասին տեղեկություն է տալիս Կաղանկատվացին, վերաբերում են ոչ թե Գրիգորիսի դամբարանին, այլ ուրիշ շենքերի։ Կաղանկատվացին գրում է, որ ամփոփելով Գրիգորիսի մարմինը, նրա հետ միասին դամբարանում դրեցին ս. Զաքարիայի, ս. Պանդալեոնի նշխարները և, որովհետև սպառնում էր Սասանյան հոների արշավանքը, դամբարանը քողարկեցին։ Այդ պատճառով VI դարի կեսին Վաչագան թագավորը մեծ դժվարությամբ գտավ այդ նշխարները և Գրիգորիսի մասունքները վերցնելով տեղում շինեց մի եկեղեցի և մի մատուռ էլ՝ Գրիգորիսի գերեզմանի վրա։ Խոսքը գնում է մի շինության մասին, որը կառուցվել է դամբարանի վրա։ Այսինքն՝ Լուսավորչի եկեղեցին այլևս չկար և դամբարանական մասում կանգնեցվել էր միայն մատուռը։

Այժմ այդ մատուռը ևս չկա։ Դամբարանի վրայի եկեղեցին կառուցվել է XIX դարում։

Մասնագետների ուշադրությունը շատ ավելի գրավել է Աղցի դամբարանը։ Դամբարանը բաղկացած է կենտրոնական դահլիճից, որի երկու կողմերում տեղադրված են ուղղանկյուն, իսկ արևելյան մասում՝ կիսակլոր խորաններ։ Դահլիճից բացի դամբարանն ունի փոքրիկ նախամուտք։ Ա. Սահինյանը գտնում է, որ դամբարանը եղել է երկհարկանի[164], որի թաղակապ ծածկով ստորին հարկն է միայն պահպանվել։ Դամբարանի մուտքը և խորանների արտաքին պատերը զարդաքանդակված են։ Հարավային պատին քանդակված են աղվեսի և թռչունի պատկերներ, որոնք խաղողի ողկույզ են ուտում։ Մյուս կողմում Դանիելի ավանդական քանդակն է՝ առյուծների որջում։

Աղցի դամբարանի կառուցման ժամանակի վերաբերյալ որոշակի տեղե-

160 Տե՛ս Բուզանդ, էջ 26։
161 Կաղանկատվացի, 1860, էջ 28։
162 Նույն տեղում, էջ 30։
163 Տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 11։
164 Տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 90։

կություն է հաղորդում Բուզանդը: Նա գրում է, որ Անի-Կամախի ավերումը և Ազգի դամբարանի կառուցումը կատարվել են 364 թվականին[165]:

Ազգի Արշակունյաց հանգստարանի մասին տեղեկություն կա նաև Մովսես Խորենացու մոտ[166]:

Դամբարանն ունի խաչաձև հատակագիծ: Ն. Տոկարսկին գտնում է, որ այն իր կառուցվածքով նման է Միջլիայի (Սիրիա) դամբարանին[167]: Դրանք համարյա միաժամանակյա շինություններ են և դժվար է ասել, որն է նմանեցված որին: Բոլոր դեպքերում Ազգի դամբարանը կառուցվել է Անի-Կամախի դամբարանի ավերման պատճառով և, հավանական է՝ նրա նմանությամբ[168], որովհետև այդ էին պահանջում ավանդական նկատառումները, իսկ Անի-Կամախի Արշակունյաց դամբարանը շատ ավելի վաղ ժամանակներում էր կառուցվել:

Ազգի դամբարանի կառուցվածքային և հորինվածքային առանձնահատկությունների մեջ ամենակարևորը նրա խաչաձև հատակագիծն է, որի ակունքները հայ ճարտարապետության մեջ իրենց սկիզբն են առնում IV դարից կամ ավելի վաղ ժամանակներից: Այդ հորինվածքը մեծ դեր խաղաց քրիստոնեական պաշտամունքային շինության կերպարի ձևավորման գործում, քանզի քրիստոնեության վաղ շրջանում ամենատարածված պաշտամունքը ննջեցյալների հիշատակն էր և եկեղեցին ու վկայարանն ունեցել են ծեսի նույնիմաստ սկզբունքներ:

ԱՇԽԱՐՀԻԿ ՇԵՆՔԵՐ.—Եկեղեցիների պահպանումը կրել է համաժողովրդական բնույթ, որովհետև նույնիսկ կիսավեր վիճակում այն համարվել է սրբավայր և իր նշանակությունը երբեք չի կորցրել: Անհրաժեշտ է նկատի առնել նաև, որ հոգևոր իշխանությունը գոյություն է ունեցել միշտ և ինչ որ չափով կարողացել է խնամել ու նորոգել պաշտամունքային շենքերը, մինչդեռ աշխարհիկ տիրակալները բազմիցս փոխվել և ի վերջո մեծ մասամբ անհետացել են պատմության ասպարեզից, իրենց կանգնեցրած պալատների, բերդերի և այլ շինությունների հետ միասին:

Հայ թագավորների ու իշխանների կառուցած վեհաշուք, արվեստի տեսակետից կատարյալ ու մոնումենտալ պալատների, դղյակների, հասարակական տարբեր շինությունների, ինչպես նաև ներկայումս գոյություն չունեցող քաղաքների մասին իմանում ենք միայն մատենագրական տեղեկություններից ու առանձին վայրերում հայտնաբերված հուշարձանների մնացորդներից:

Սակայն այն, ինչ պահպանվել է չափազանց քիչ է աշխարհիկ ճարտարապետության զարգացման հետևողական ընթացքը և ժամանակագրական առանձնահատկությունները պարզելու համար: Ավելի քիչ են տեղեկությունները նրանց կառուցման վերաբերյալ և, ամենակարևորը, այդ տեղեկությունների մեջ բացակայում է հուշարձանի որոշակիությունը: Եղիշեն, Բուզանդը, Խորենացին և մյուս պատմիչները բազմիցս նշելով այս կամ այն բերդի, պալատի, կամուրջի և այլ աշխարհիկ քաղաքացիական շինությունների գոյության փաստը, հազվադեպ են ավանդում նրանց շինության պատմությունը: Այդպիսի վկայության մի եզակի օրինակ է մեզ հասել Արտագերս ամրոցի վերաբերյալ:

165 Տե՛ս Բուզանդ, էջ 151:
166 Տե՛ս Խորենացի, էջ 288:
167 Տե՛ս *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 73.
168 Տե՛ս Ս. Սահինյան, Քաղ. բազ. ճարտ..., էջ 196—197:

Բերդը գտնվել է Արշարունյաց գավառում. նրա մասին առաջին անգամ հիշատակված է I դարի սկզբին, երբ ավերվել է հռոմեացիների կողմից[169]: Այնուհետև այն վերաշինում են Կամսարականները և դարձնում իրենց դղյակը: IV դարում Արշակ Բ-ի և նախարարների միջև ծագած ներքին կռիվների ժամանակ Արշակը հաշվեհարդար տեսավ Կամսարականների հետ և Արտագերս ամրոցը, որպես վերջիններիս սեփականություն, բռնագրավեց հարքունիս, վերաշինեց այն և դարձրեց սննդամթերքի համբարանոց: Շինարարական այս իրողությունը Բուզանդն ավանդում է հետևյալ ձևով. «Թագավորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր Արտագերս անուն»[170]: Արտագերսը վերաշինվել է 358 թվականին[171] Կամսարականների կոտորածից անմիջապես հետո: Սակայն այս շեն վիճակը երկար չտևեց: 368 թվականին Արշակ Բ-ի կալանավորումից հետո պարսկական զորքերն ավերեցին բերդը: Հետագայում այն հավանաբար նորից է շինվել, որովհետև Վարդանանց պատերազմների ժամանակ Եղիշեն հիշատակում է Արտագերսը որպես իրանական զորքերի ամրոց[172]:

Վարդան աշխարհագիրն Արտագերս ու Կապույտ բերդերը նույնացնում է[173]: Սակայն Եղիշեի մոտ դրանք հիշվում են որպես առանձին բերդեր: Ալիշանի կարծիքով երկու բերդերը գտնվել են իրար մոտ[174] կամ երկու անունով կոչվել է լեռը, որի վրա գտնվել է բերդը[175]: Արդ անհնար է բերդի տեղը ճշտությամբ որոշել: Ալիշանն այն կարծիքին է, որ Քեռս գյուղի անունն առաջ է եկել Գերս՝ Արտա-Գերս անունից և հնարավոր է գտնում բերդի տեղագրությունը որոնել այդ գյուղի սահմաններում:

Վաղ քրիստոնեական շրջանի հայ ճարտարապետական հուշարձանների նշանակալի մասը ներկայումս գոյություն չունի, սակայն, չնայած դրան, պատմիչների վկայությունները հնարավորություն են տալիս պատկերացնելու շինարարական այն համատարած ու բազմակողմանի գործունեությունը, որի շնորհիվ ստեղծվել ու կատարելագործվել են հայ հողի վրա մշակված ճարտարապետական ավանդույթները:

Մատենագրական վկայությունները ցույց են տալիս, որ չնայած քաղաքական ու հասարակական անկանոն ու անբարենպաստ պայմաններին, քրիստոնեության առաջին իսկ շրջանում շինարարական ծավալուն աշխատանք է կատարվել Հայաստանում: Հայ ճարտարապետության զարգացման պատմության մեջ վաղ քրիստոնեության շրջանը մեծ հեղաշրջում առաջացրեց: Որպես հեթանոսական արվեստին անմիջականորեն հաջորդող փուլ, վաղ քրիստոնեական շրջանը յուրօրինակ կամուրջ հանդիսացավ հին ավանդների պահպանման և փոխանցման գործում: Հազարաշեն տանիքից մինչև թաղակապ բազիլիկ շինությունը, և, այնուհետև, գմբեթակիր հորինվածքը, սյուների տեսակներից մինչև գմբեթակիր մույթերի գաղափարը ընկած է զարգացման բավականին բարդ մի պրոցես, որը հայ իրականության մեջ իր ձևավորման կատարելությանը հասավ վաղ քրիստոնեության շրջանում:

169 Տե՛ս *Strabo*, XI, p. 14, 6.
170 Բուզանդ, էջ 138:
171 Տե՛ս *I. Markwart*, Die Enstehung der armenischen Bistümer, S. 90, 97.
172 Տե՛ս Եղիշե, էջ 68:
173 Տե՛ս Աշխարհացույց Վարդանայ վարդապետի, էջ 25:
174 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 57—58:
175 Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 234:

VI—VII ԴԱՐԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ

V դարի երկրորդ կեսի ազատագրական շարժումները մեծ նշանակություն ունեցան քաղաքական ինքնավարության պահպանման համար։ Սակայն դա վերաբերում էր Հայաստանի միայն իրանական հատվածին և փոփոխական հաջողությամբ շարունակվեց մինչև VII դարի 70-ական թվականները։ Ինչ վերաբերում է Բյուզանդիայի ներքո գտնվող Հայաստանին, ապա ազգային մշակույթի զարգացումն այստեղ արգելակվում էր մի կողմից քաղքեդոնական եկեղեցու ճնշման, իսկ մյուս կողմից՝ Հուստինիանոս կայսեր վերափոխությունների հետևանքով[1]։ Հուստինիանոսի ժամանակաշրջանում ազգային ինքնությունը պահպանած հայությունը զրկված էր գործունեության մեծ ասպարեզից և դատապարտված զբաղվելու գավառի, առավելապես տնտեսական նեղ խնդիրներով։ Այդ քաղաքականության հետևանքով սկիզբ առավ արտագաղթի սովար և տևական հոսանք դեպի մետրոպոլիա[2]։

Հայաստանի մեծ մասը գտնվում էր Իրանի տիրապետության ներքո։ Ինչպես բնակչության սովարության, նույնպես և քաղաքական առումով արևելահայությունն անհամեմատ ավելի կայուն դիրք ուներ, և հայ ազգի կազմալուծումը, եթե մասամբ հաջողվում էր Բյուզանդիային, ապա Իրանի ուժերից վեր եղավ։

Արևելյան Հայաստանում մշակույթի զարգացման համար նպաստավոր էին նաև քաղաքական իրադարձությունները, որոնք առաջ էին գալիս իրանաբյուզանդական մրցակցությունից։ VI դարի կեսերին, երբ Հուստինիանոսը համատարած հալածում էր հակաքաղքեդոնական դավանանքի քրիստոնյաներին, հայ եկեղեցին քաջալերվում էր Իրանի կողմից և արտա[illegible]ններ-րին, հայ եկեղեցին ... Իրանական մասում էր գտնվում նաև հայության հոգևոր [illegible]րոնը, որը պետականությունից զուրկ հայ ժողովրդի քաղաքական դերն էր և որոշակի դեր էր խաղում միավորման գործում։ Սակայն Իրանի կողմից ընձեռած համեմատաբար բարենպաստ պայմանները, լինելով սեփական շահախնդրությունների հետևանք, հայության համար սահմանափակ էին, ինչպես իրենց հնարավորություններով, նույնպես և տևողությամբ։ VI դարի 70-ական թվականներին նորից վերսկսվեցին հալածանքները, որին հաջորդեցին իրանա-բյուզանդական երկարատև պատերազմները։ Դեռևս այդ պատերազմների վերքերը չամոքած, VII դարի 40-ական թվականներից սկսված արաբական արշավանքները։ Թերևս սկզբնաղբյուրների սղուծայր առան

1 *Տե՛ս Ch. Diehl*, Justinient et la civilisation Byzantinean VI ciecle, Paris, 1961, p. 231–246.

2 *Տե՛ս Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, стр. 200—204.



Վ. Թալին. Ներսես Կամսարականի կառուցած սբ. Աստվածածին եկեղեցին հյուսիս-արևմուտքից



Աշտարակ. սբ. Աստվածածին (Կարմրավոր) եկեղեցին հարավ-արևելքից



Արամուս. Ծիրանավոր սբ. Նշան եկեղեցու ավերակները

Սիսիան. Սյունի վանքը հարավ-արևելքից

թյունն է պատճառը, որ պատմագիտության մեջ VI դարը V և VII դարերի
համեմատ դիտվում է մշակույթի նվազ զարգացման շրջան։ Սակայն եղած
կցկտուր տեղեկությունները էլ անվիճելիորեն վկայում են այդ դարաշրջանում
տեղի ունեցած կարևոր մշակութային իրադարձությունների մասին։ Ինչպես
հայտնի է VI դարում (506, 554 թվականներին) գումարվեցին եկեղեցական
երկու ժողովներ, որոնք մեծ դեր խաղացին ազգապահպանման գործում։
Այդ ժողովներում վճռականապես մերժվեց քաղկեդոնականությունը և դրա-
նով մեծապես սահմանափակվեց բյուզանդական ճնշումն ու դիմահեղման
քաղաքականությունը։
552 թվականին ընդունվեց ազգային մեծ տոմարը։ Դա մշակութային
և հասարակական մեծ իրադարձություն էր և վկայում է ազգային գիտակցու-
թյան ու հասարակական կյանքի բուռն վերելքի մասին։
VI դարում առանձնապես նշանակալի էր նաև թարգմանչական գրակա-
նությունը։ Նմանօրինակ պայմաններում, անկասկած, զարգացում է ապրել
նաև ճարտարապետությունը։ V դարի վերջերի ճարտարապետության վերելքը,
որը նոր դարաշրջան բացեց ճարտարապետական ձևերի զարգացման ընթաց-
քի մեջ, չէր կարող ընդհատվել VI դարի սկզբում ստեղծված անհամեմատ
ավելի խաղաղ և նպաստավոր պայմաններում։ Այդ են հավաստում մատե-
նագրական տեղեկությունները։
VI դարի հնագույն շինարարական վավերագրերը վերաբերում են
Երիցավանքին։

Երիցավանք.—*Հայաստանի վաղ քրիստոնեության ճարտարապետական*
հուշարձանների շարքում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Երիցա-
վանքը։ Այստեղ կարելի է տեսնել ինչպես հայ ճարտարապետության հնա-
գույն հորինվածքներից մեկը, նույնպես և ատրիճանական վերաշինությու-
ների բնույթը։
Հուշարձանն ընկած է պատմական Բաղքի, այժմյան Ղափանի շրջանի
Արծվանիկ գյուղից մոտ 3 կմ դեպի արևելք, բարձրադիր հարթակի վրա։
Մասնագետների կարծիքով Արծվանիկ անունը ծագել է Երիցվանիկից[3]։
Ժամանակին այստեղ եղել է միաբանություն։ Պահպանվել են գլխավոր
եկեղեցին և նրա հյուսիսակողմի փոքրիկ մատուռը։ Գլխավոր եկեղեցին
հսկայական չափերի բազիլիկ շինություն է, ժամանակի ընթացքում բազմիցս
վերաշինվել և նկատելիորեն կերպարանափոխվել է։ Արևմտյան հատվածը
կիսավեր վիճակում է։ Պատերը կանգուն են մնացել միայն մեկ մետր
բարձրությամբ, իսկ արևելյան կեսը մեզ է հասել ամբողջությամբ։
Շինարարական միակ տեղեկությունն այս հուշարձանի մասին տալիս է
Ստ. Օրբելյանը. «Եւ էր վանքն այն տեղի գեղեցիկ և զարմանատիպ ի վերայ
բարձրավանդակի միոջ շինեալ եկեղեցի յանուն սրբոյ Նախավկային նորին
Երիցակայ ձեռամբ, և պարսպեալ մեծամեծ քարամբք, և ի ներս ի պարսպին
խցկունք թուով միայն 40»։ «...օժանդակութեամբ և հրամանաւ սրբոյն
Տեառն Գիտոյ եկեալ ի տեղին յայն երկոտասան կրօնաւորօք և բազում
ընչիւք, զորս պարգևեալ էր հայրն Գիտ. շինեաց զեկեղեցին որ կոչեցաւ Նոր
Երուսաղէմ։ Բայց ուրուքն որ ի ժամանակին հալածեալ լինէին յանվայր
տեղիս, բնակեցուցեալ էր սուրբ հօրն Գիտոյ յայնմ վայրի, որք հակառակ
էին շինութեան Երիցկայ»։

---

[3] *Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 2, Երևան, 1960, էջ 133։*

4—892

«Եւ ինքն (Գիւտ) օր ըստ օրէ գործակից լինէր շինուածոյն, և գնաշ
շինողացն յղէր։ Եւ այսպէս շինեալ տուն Աստուծոյ և կանգնեալ տեղի փա-
ռաբանութեան՝ յարդարէ զնա ի բնակութիւն հրեշտակակրօն արանց»[4]։

Նկարագիրը հետևյալն է՝ Մուշե Ալբերցի Հայոց կաթողիկոսը գալիս է
Սյունիք տեղում առաջնորդ նշանակելու նպատակով։ Ժողովրդի միահամուռ
ցանկությամբ ընտրվում է Երիցակ վանականը։ Առաջնորդին հաստատելու
արարողության համար հոծ բազմություն է հավաքվում։ Երիցակն իմանալով
այդ մասին փորձում է պարանով իջնել վանքի պարիսպներից և փախչել,
սակայն պահապաններն արգելում են նրա փախուստը։ Պատմիչն ասում է,
որ այդ վանքը գտնվում է մի բարձրավանդակի վրա և այնտեղի ս. Նախա-
վկայի անունը կրող եկեղեցին կառուցել էր Երիցակը։ Նա պարսպել էր
վանքը մեծամեծ քարերով և կառուցել 40 խուց՝ միաբանների համար։ Այս
իրադարձությունները տեղի են ունեցել Մուշե եպիսկոպոսի մահվան տարում,
երբ առաջ եկավ նոր եպիսկոպոս ընտրելու հարցը։ Այսպիսով, ժամանակի
վերաբերյալ երկու կողմնորոշում կա։ Առաջինը Մուշե Ալաբերցի կաթողի-
կոսի հովվության տարիներն են (526—534 թվականները), երկրորդը՝ Մուշե
եպիսկոպոսի մահվան տարեթիվը։ Ստ. Օրբելյանի համաձայն Մուշե եպիս-
կոպոսն աթոռակալել է 36 տարի[5] և մահացել Մուշե կաթողիկոսի օրոք։
Պատմիչի թողած Սյունյաց եպիսկոպոսների ցուցակի[6] ժամանակագրությու-
նից դատելով Մուշե եպիսկոպոսը վախճանված պետք է լինի 529—530
թվականներին։ Երիցակը եպիսկոպոսությունը վարել է մեկ տարի և վախճան-
վել։ Էականն այն է, որ, ըստ պատմիչի, Երիցակը եկեղեցին կառուցել է
մինչ իր եպիսկոպոս դառնալը։ Երիցակի անցյալի մասին պատմիչը հայտ-
նում է, որ նա բազում տարիներ ճգնել է տեղի քարանձավներում, այնուհե-
տև գնացել իր ուսուցչի երանելի Գյուտի մոտ և նրա օժանդակությամբ՝
12 կրոնավորների հետ շինել է եկեղեցի ու կոչել այն Նոր Երուսաղեմ։
Նկատի առնելով վերոհիշյալ թվական տվյալները, հարկ է մտածել, որ
շինությունը կառուցվել է VI դարի երկրորդ տասնամյակի վերջին կամ
երրորդ տասնամյակի սկզբներին։ Բերված տեղեկություններից անվիճելիորեն
պարզ է, որ վանքի շինությունը տեղի է ունեցել երկու փուլով։ Սկզբում
Երիցակը կառուցել է ս. Նախավկայի եկեղեցին, պարսպել այն և հիմնել
վանքը։ Այնուհետև, Գյուտի օգնությամբ, վանքը հարստացել է Նոր Երուսա-
ղեմ անունը կրող ևս մի եկեղեցով։ Այժմ դժվար է ասել, ներկա
հուշարձանը հիշյալ երկու եկեղեցիներից որն է, սակայն դատել արտա-
քապետական մանրամասներից, պահպանված շենքը շատ ավելի հին ծագում
ունի։
Տեղում կատարած քննությունը ցույց տվեց, որ ժամանակին այն եղել
է ուղղանկյուն խորանով վիթխարածավալ հնգանավ բազիլիկ։ Բազմաթիվ
վերակառուցումների և ավերածության հետևանքով խախտվել է շենքի
հնգանավ հորինվածքը։ Եկեղեցու հյուսիսային երկու նավերը ներկայումս
գոյություն չունեն և այդ կողմն ավարտվում է կենտրոնական նավի հյուսի-
սակողմյան սյունաշարով։ Միանգամայն հասկանալի է, որ ներքին տարա-
ծությունն այդպես եզրափակվել չէր կարող և, որ այդ կողմում եկեղեցու

4 Ստ. Օրբելեան, էջ 75—76։
5 Տե՛ս Նույն տեղում, էջ 72։
6 Տե՛ս Նույն տեղում, էջ 497։

ներքին տարածությունը շարունակվել է՝ հատկապես նավերի ձևով։ Այդ են
վկայում նախ չպահպանված նավերը միմյանցից բաժանող մույթերից մեկը
(արևելքից 5-րդը) և շինության հյուսիս-արևելյան կողմում շարունակվող
պատը, որ բացվեց մեր կողմից՝ 1969 թվականին։ Հարավային մասում
կենտրոնականին կից երկու նավերն էլ պահպանվել են։ Եզրային նավը
եղել է բավականին լայն և ակներևաբար ունեցել է փայտաշեն տանիք։
Եկեղեցու ճարտարապետական ձևերի մեջ ժամանակագրական հատկանիշնե-
րից առանձնապես ուշագրավ են ավանդատների բացակայությունը և խորանի
ուղղանկյուն ձևը։ Եկեղեցին միաժամանակ ունի նորոգումների չափազանց
հարուստ մանրամասներ, որի համեմատական քննությամբ կարելի է զանա-
զանել նրա շինարարական պատմության ժամանակագրական բնութագիրը։
Նախ անհնար է պատկերացնել, որ Երիցակը կառուցել է ուղղանկյուն
խորանով հնգանավ բազիլիկ եկեղեցի։ Միջնադարյան հայ ճարտարապետու-
թյան մեջ դա բացառիկ օրինակ է և ավելի շուտ հնարավոր է նախաքրիստո-
նեական ժամանակների համար։ Այս առումով մեծ հետաքրքրություն է
ներկայացնում Ստ. Օրբելյանի տեղեկությունն այն մասին, որ երբ Երիցակն
այս վայրում ուզում էր վանք հիմնել, նա հանդիպում է տեղի բնակչության
կատաղի դիմադրությանը, և վանքը հիմնվում է միայն Գյուտի միջամտու-
թյան շնորհիվ։ Ինչո՞ւ պետք է քրիստոնյա ժողովուրդը դիմադրեր եկեղեցա-
շինությանը։ Մեր կարծիքով պատճառն այն էր, որ այդ հնգանավ բազիլիկը
եղել է հեթանոսական պաշտամունքային շենքի մնացորդ, որը մոլեռանդ
քրիստոնյաների կողմից նզովված էր։ Հեթանոսական տաճարները քրիստո-
նեական դարձնելու սովորույթը մեծապես տարածված էր Լուսավորչի օրոք,
սակայն նման քայլին դիմելու անհրաժեշտությունը դիտվում էր որպես
հեթանոսական սրբավայրից ազատվելու և համատարած կերպով եկեղեցիներ
հաստատելու թեև միակ, բայց բոլոր դեպքերում ոչ օրինական միջոց։ Այլ
էր վիճակը VI դարում։ Հեթանոսական պաշտամունքի շինությունը, բնակա-
նաբար, պետք է հակակրանք առաջացներ։ Մինչ այդ Երիցակը մի խումբ
ճգնավորների հետ ապրում էր մոտակա քարայրներում և, հավանաբար,
նրանց հետ միասին էլ կազմել է վանքի միաբանությունը։
Ինչպես և սպասվում է, Երիցակը նախ ուղղանկյուն խորանը դարձրել է
կիսակլոր։ Հին խորանը բավականին երկարավուն է եղել և կիսակլոր պատը
նրա մեջ տեղադրվել է անկյունամասերից 95 սմ խորացված։ Չնայած դրան,
երկու ձևի խորանների միացման հետևանքով արևելյան պատը չափազանց
լայնացել է։ Ներկայումս այդ կիսակլոր խորանի ներսի պատը
մի բացվածքից երևում է ուղղանկյուն խորանի ներսի պատը։
Այնուհետև, եկեղեցու չափերը փոքրացնելու նպատակով, Երիցակը
կենտրոնականին կից նավերը, որոնք լայնքով ամենափոքրն էին, միացրել է
լիցքով և այդ հատվածում պատը ստացել է եռակի հաստություն։ Միջին
մասում, պատի ավերվածության շնորհիվ, պարզ երևում են բոլոր երեք
շերտերը։
Անջատելով եկեղեցու կողմնային մասերը կենտրոնական նավից,
Երիցակը եզրային նավի արևելյան անկյունում տեղավորել է ավանդատունը,
որը չուներ և չէր կարող ունենալ հին շենքը։
Երկրորդ վերակառուցումը կատարվել է XI—XIII դարերում։ Այս
շրջանում երրորդ և չորրորդ մույթերի արանքում կառուցվել են հսկայական

պատեր և ստեղծված ընդարձակ միջանցքով եկեղեցին բաժանել երկու
մասի։ Արևմտյան վերջին երկու զույգ մույթերը վերափոխվել են որպես
գմբեթակիր։ Ամենայն հավանականությամբ այս մասը գավիթ է եղել։
Երրորդ շրջանում կառուցվել են բեմի երկու կողմերի մույթերը և նրանց
վրայի կամարը, որոնք կառուցողական ձևերով տարբերվում են եկեղեցու
ընդհանուր պատկերից։ Կամարը և որմնամույթը շարված են գրանիտե
սալաքարերից, որոնց դերը տանիքի ամրացումն է[7]։

* * *

V դարի վերջում, երբ տարածվել էին գմբեթակիր հորինվածքները,
թաղակապ բազիլիկներն այլևս չէին կարող տաճարաշինության համար
օրինակելի դիտվել[8], մանավանդ, եթե նկատի առնենք, որ հարևան Բյուզան-
դիայում կառուցվեցին ճարտարապետական ձևերով այնպիսի նշանավոր
շինություններ ինչպիսիք էին ս. Սոֆիայի, Սերգիի ու Բաքոսի (Վաքխի),
Առաքելոց եկեղեցիները Կոստանդնուպոլսում, Էֆեսի և Բոսրայի
կենտրոնագմբեթ եկեղեցիները Սիրիայում և, ամենակարևորը, այն բազմա-
թիվ շինությունները, որոնք Հուստինիանոսի օրոք կառուցվում էին Հայաս-
տանի բյուզանդական մասում[9]։
VI—VII դարերում գլխավոր շեշտը դրվեց խաչաձև հատակագծերով
գմբեթակիր շինությունների հորինվածքային տարբերակների մշակման վրա։
Այդ տարբերակների կազմավորումը և կատարելագործումն իրենց բազմա-
զանությամբ հիմնականում ընթացան երեք ուղիով։ Առաջինի համար հիմք
ծառայեց էջմիածնի Մայր տաճարի հորինվածքը, որի հատակագծով կառուց-
վեցին քառակուսի ներքնագմբեթային դահլիճ ունեցող քառախորան ճոխ ու
մեծածավալ շինություններ։ Երկրորդը՝ կենտրոնագմբեթ խաչաձև դասավոր-
ված թևերով փոքրիկ եկեղեցիներն ու մատուռներն էին, երրորդը՝ հին
շինությունների վերակառուցման հետ կապված հորինվածքները։ Հիմնակա-
նում պահպանելով բազիլիկ լուծումն, այդ շինություններն ունեին գմբեթա-
վորումից բխող տարատեսակ հորինվածքներ ու կառուցողական ձևեր։
IV—V դարերը տակավին որոնումների շրջաններ էին։ Հորինվածքային
այն նորությունները, որոնք համապատասխանում էին ծիսական, գեղագի-
տական ու ժամանակաշրջանի կառուցողական պահանջներին՝ զարգա
ընթացքի մեջ ձեռք էին բերում աստիճանաբար փոփոխվող փուլերի են
VI—VII դարերում, երբ հիմնականում գտնված էր քրիստոնեական տաճ
կերպարը, հայտնաբերված յուրաքանչյուր հորինվածք, կառուցողական որոշ
ձևափոխումներով, կարող էր երկար ժամանակ հարատևել նոր տարբերակ-
ների հետ միասին։ Հորինվածքային այդ տիպը, ուր ներքնագմբեթային քառա-
կուսի դահլիճը չորս կողմից ընդարձակված է կիսաշրջանաձև խորաններով,
Հայաստանում ներկայացված է Մաստարայի (Թալինի շրջան), Արթիկի,
Բագարանի (Արևմտյան Շիրակ), Հառիճի (Արթիկի շրջան), Ոսկեպարի
(Նոյեմբերյանի շրջան) եկեղեցիներով։
Մաստարա.—Եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում։ Ունի շինարարա-

---

7 Տե՛ս *A. Manuciarian*, La basilica Erizavank ad Artzvanik, Ricerca sull 'architettura Armena fonti, v. 1 (10), p. 8—13.

8 Երիցավանքը, որպես բացառություն, բատ էության վերաշինության արդյունք է։

9 Տե՛ս Գրոկ. Կեսարացի, Պատերազմների մասին, էջ 167—197։

կան բովանդակության հինգ արձանագրություն։ Սակայն, չնայած գրավոր
տեղեկությունների այդ առատությանը, կառուցման ժամանակը մասնագետ-
ները պարզաբանել են գլխավորապես ճարտարապետական առանձնահատկու-
թյունների հիման վրա, որովհետև թվագրության հարցում այդ արձանագրու-
թյունները չափազանց անորոշ են։ Թեև բոլոր արձանագրություններն էլ
ավանդում են շինության մասին, սակայն, ինչպես հաճախ է հանդիպում
սկզբնաղբյուրներում, «շինել» բառը միշտ չէ, որ շենքի հիմնադրումն է
ավանդել։ Այդ բառով հաճախ տեղեկացրել են նաև նորոգման, վերակա-
ռուցման մասին։ Հարցը ստուգելու համար անհրաժեշտ է ուշադրություն
դարձնել հետևյալ պարագաների վրա. շինարարական արձանագրությունները
V—VII դարերում ունեցել են տեղադրման որոշակի եղանակներ։ V—VII
դարերում շինարարական արձանագրությունները զետեղվել են արևմտյան
պատին, մուտքի կամ պատուհանի վերևը։ Ինչպես կտեսնենք ստորև VII
դարի առաջին երկու տասնամյակներում շինարարական բոլոր արձանագրու-
թյուններն այդպես են տեղադրվել։ Երկրորդ եղանակն առաջ եկավ VII դարի
30—40-ական թվականներին։ Այս շրջանում շինարարական արձանագրու-
թյունները մեկ տողով գոտևորել են եկեղեցիները։ Այնքանով, որ հիշյալ
տարիներին շինարարական արձանագրության այլ տիպի տեղադրություն չի
հանդիպում, պետք է ենթադրել, որ դա կանոնացված երևույթ էր։ Տեղադրման
այդօրինակ դեպքեր հանդիպում են նաև համեմատաբար ուշ՝ IX—X դարե-
րում, երբ բացատրվում է հին ձևերը պահպանելու նախասիրությամբ։
Նորոգման կամ մասնակի վերանորոգման մասին ավանդող արձանա-
գրությունների տեղադրման գործում ընդունված եղանակներ չեն եղել։ Դրանք
սովորաբար փորագրվել են այն պատերին, որոնք ենթարկվել են նորոգման։
Ուսումնասիրվող շինարարական արձանագրություններից մեկը փորա-
գրվել է հարավային խորանի պատուհանի վերևում։ Նախավերջին տողը
գտնվում է պսակի վրա, իսկ վերջինն ավելի ներքև, անմիջականորեն պատու-
հանի վրա։

ՅԱՄՍ Տ̅Ն̅ ԹԵՈԴՈՐՈՍԻ
ԳՐՆՈՒՆԵԱՅ ԵՊԻՍԿԱՊՈՍԻ
ՇԻՆԵՑԱՒ Ա̅Ծ̅[ԱՒ]Ն ՏՈՒՆՍ
ՔԱՒԵԼ ՋԳՐԻԳՈՐԱՍ
ԱՆԱՐԺԱՆ
ԵՒ ԻՆՋ ԿԵՓ... ԵՒ ԻՆՋ...[10]
Ք̅Ս̅ Ա̅Ծ̅ ԳԹԱ Ի ԳՐԻԳՈՐԱՍ ՄԵՂԱՒՈՐ

Երկրորդ տողում Գնունեաց բառի մեջ առաջին «Ն» տառի վերին մասում
աջից ավելացված է աղեղնաձև մի ելուստ, որի պատճառով առաջ է եկել
«Գնտունեաց» կարդալու վարկածը։ Սակայն ներքևի ձախ կողմից գոգավոր
ելուստի բացակայության պատճառով այդ վարկածն անընդունելի է։ Դեռ
ավելին՝ ճիշտ կլինի այստեղ ընդունել «Ը» տառի առկայությունը, որը
հաստատվում է կցագրի ստորին ձախ մասի անկյունավորությամբ։
Երկրորդ արձանագրությունը տեղադրված է արևմտյան պատի հարա-
վային հատվածի վերնամասում, ընդ որում վերջին երկու տողերի սկզբնա-
մասը գտնվում է արևմտյան խորանի հարավային նիստին.

---

10 Տե՛ս Յ. Շահխաթունեանց. Ստորագրութիւն..., Բ, էջ 46, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 134, Գ. Հովսեփեանց, Քարտէզ..., էջ 174։

ԳՈՇԱՆԱՄ ՁԱ̅Յ ՈՐ ԵՏ ԻՆՁ ԳՐԻ-
ԳՈՐԱՍԱՅ ՍԻՒՆԻՍԻ ԵՒ ԸՂՁԱՅԵ-
ԼՈՅ ՈՐԴԻՈՅ ԵՂԲԱԻՐ ԳՐԻԳՈՐԻ
ՇԻՆԵԼ ՁՏՈՒՆ ՓԱՌԱՅ ԵՒ ՍՈՎԱՒ ՄԻ[Ա]
ԲԱՆ ՁԻ ... ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՀՈՒՆԵԱՅ
ԱՍԷ ԱՊԱԻԵՆ ՄԱՁԴԱՐԱՒ. ԱՂԱՒԹԱՐԱՆ ԱՐԴԱՐԱՅ ՔԱՒԱՐԱՆ
ՄԵՂԱՒՈՐԱՅ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԻՆՁ ԵՒ ԻՄՈ[Յ]։ ՈՐՔ ԱՂԱՒԹ-
ԵՔ ՁՄԵԶ ՅԻՇԵՑԷՔ[11]

Երրորդ արձանագրությունը գտնվում է արևմտյան խորանի պատուհանի վերևում շքեղ զարդաձևերով շրջանակված խաչապատկերի երկու կողմերում և նրա տակը.

Ա̅Յ ԱՋՈՂԵԼ-
ՈՎ ԳՐԻԳՈ-
ՐԱՍԱ ՎԱՆ-
ԱԿԱՆԻ ՇԻՆ
ԵՑԱՒ ԱՊԱՒ-
ԷՆ ՄԱՁԴԱՐԱՒ։
ԱՅՍ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՐՄՆ ԽԱՉ-
Ի [Ս Ն] ՇԱՆ ԹԱԳԱՒ ՊՍԱԿԵԱԼ ՈՒՆԻ
[ՓԵ]ՍԱ ՁՔ̅Ս ՓԵՍԱՒԷՐ ՁԱՌԱՔԵԱԼՍ
ՄԱՐԳԱՐԷՍ ՎԿԱՅՍ. ՍՄԱ ԲԱՐԵՇԷ-
Ն ՈՒՆԻ ՁՄԱՁԴԱՐԱ ԵՒ ՓՐԿԷ ՁԳՐԻԳՈՐԱՍ[12]

Չորրորդ արձանագրությունը փորագրվել է հարավային մուտքի բարավորի վրա։ Միակն է, որ թվական ունի և անսրկիմաստ ձևով տեղեկացնում է դրան նորոգման մասին.

ՅԽ (891) ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ
ԵՍ ՍԱՐԳԻՍ ԾԱՌԱՅ Ա̅Յ
ՈՐԴԻ ԱՐՏԱՒԱՍՏ ՔԱՀԱՆԱՒ
ԿԱՆԿՆԵՑԻ ՁԴՐՈՒՆՍ ՁԱՅՍ Ի ԲԱՐԵԽՈՍՈՒԹԻՒՆ...

Հինգերորդ արձանագրությունը գտնվում է հարավային պատի արևմտյան հատվածում.

ՍՐԱՅ ԱՄՍՈՅ ԺԴ
ՆԱՒԱԿԱՏԻՔ ՍՐԲՈ-
Յ ԵԿԵՂԵՑՈՅՍ
ԵՒ ՅԻՇԱՏԱԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ...[13]

Այս արձանագրությունն ակնհայտորեն անավարտ է։
Երրորդ արձանագրությունը միակն է, որն իր տեղադրությամբ համա-
պատասխանում է շինարարական արձանագրության տեղին։ Սակայն, ինչպես
կտեսնենք ստորև, առեղծվածները դրանով չեն սպառվում։ Նավակատիքի և
891 թվականի արձանագրություններից բացի մնացած երեքի հեղինակը
Գրիգորաս վանականն է։ Առաջին արձանագրությունից պարզվում է, որ նա

11 Յ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն...*, Բ, էջ 47, Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 135, Գ. Հովսեփեան, *Քարտեզ...*, էջ 174—175։

12 Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 135։

13 *Նույն տեղում*, էջ 136։

եղել է եկեղեցու կառուցողը և կառուցել է այն Գնունեաց Թեոդորոս եպիս-
կոպոսի օրոք։ Երկրորդ արձանագրությունն ավանդում է, որ Գրիգորասը ումն
եղբայր Գրիգորի որդու հետ միասին աստծու կամքով շինել են եկեղեցին,
որն Ապահունեաց եպիսկոպոսը մեծարել է որպես Մաստարայի ապավեն։
Երրորդ արձանագրությունը ևս մեկ անգամ հավաստում է, որ եկեղեցու
շինողը Գրիգորասն է և, որ նա վանական է եղել։ Այս Գրիգորասները տարբեր
մարդիկ լինել չեն կարող, որովհետև նախ անվան Գրիգորաս ձևը Գրիգորի
կամ Գրիգորիսի փոխարեն տարածված չէր, և այդ պատճառով նրա կրկնու-
թյունը տարբեր ժամանակներում, այն էլ միատեսակ, շինողի դերով պարզա-
պես անհնար էր, և երկրորդ, արձանագրությունների տառաձևերը ժամանա-
կագրական բնութագրով միատեսակ են և, անկասկած, փորագրվել են
միաժամանակ։ Այսպիսով, ստացվում է, որ շինարարական իր աշխատանքը
հավերժացնելու նպատակով ումն Գրիգորաս վանական եկեղեցու պատերին
երեք անգամ փորագրել է իր անունը մեծարող արձանագրություններ։
Հայաստանի եկեղեցաշինության պատմության մեջ դա բոլորովին անհան-
դուրժելի երևույթ էր։ Այդպես չեն վարվել նույնիսկ նախարար պատվիրատու-
ները։ Վերջապես, դա հնարավոր չէր եկեղեցիներ կառուցող այն մարդկանց
համար, որոնք աստվածավախ համեստությամբ իրենց անվանում էին
«անարժան», «մեղավոր» և միակ հատուցումը կատարած մեծագործ աշխա-
տանքի դիմաց խնդրում էին, որ աղոթելիս մարդիկ հիշեն իրենց։ Այս
իրողությունը ունի միայն մեկ բացատրություն. արձանագրություններն
ավանդում են նորոգման մասին և գլխավորյալ փորագրվել են երեք անգամ
նորոգման տեղերը մատնանշելու համար։ Արձանագրությունների համաձայն
Գրիգորասը նորոգել է արևմտյան և հարավային խորանները, իսկ դրանց
միջև եղած անկյունավոր պատերը նորոգելու գործում նրան օգնել է եղբայր
Գրիգորի «ըղձացելոյ» որդին։ «Ըղձացելոյ» բնութագիրը հնարավոր է հաս-
կանալ որպես Աստծու ցանկացած, այսինքն՝ Աստծու կողմից կանչված, որ
նշանակում է մահացած։ Այս մեկնաբանությամբ Գրիգորի որդու մասնակ-
ցությունը ստանում է զուտ խորհրդանշական իմաստ, նպատակ ունենալով
հոր միջոցով բարեխոսության պարգևն հասցեագրել որդուն, որի անունը
բացակայության պատճառով չի հիշատակվել։
Գրավոր սկզբնաղբյուրներում Գրիգորասի ու Գրիգորի վերաբերյալ
տեղեկություններ չկան։ Այս հանգամանքը բավականին դժվարացնում է
արձանագրությունների թվագրման հնարավորությունը, թեև մոտավոր ժա-
մանակը կարելի է պարզել հիշատակված այլ անձանց միջոցով։
Երկրորդ արձանագրության մեջ վկայված է նաև Ապահունյաց եպիսկո-
պոսի ներկայությունը։ Հասկանալի է, որ այն արձանագրությունները, որոն-
ցում հիշատակվել են հիշյալ նախարարական եպիսկոպոսները չէին կարող
փորագրվել VIII դարից հետո, երբ ոչ այդ նախարարները կային և ոչ էլ այդ
անունները կրող եպիսկոպոսները։ Գնունյաց եպիսկոպոսությունն, ինչպես
վկայում է Ուխտանեսը, հիմնվել էր տակավին Լուսավորիչի կողմից[14]։ Այնու-
հետև Գնունյաց եպիսկոպոսի անունը հիշատակվում է 505 թվականի Դվինի
եկեղեցական ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցուցակում[15] և վերջին

14 Տե՛ս Ուխտանես, *Պատմութիւն Հայոց*, Վաղարշապատ, 1871, էջ 70։

15 Տե՛ս «*Գիրք թղթոց*», էջ 42։

անգամ՝ 645 թվականի ժողովին, որին, ի դեպ, մասնակցողը հենց Թեոդորոս անունով Գնունյաց եպիսկոպոսն է եղել[16]:

Տարակուսանք հարուցող պարագան Գնունյաց եպիսկոպոսի գործունեությունն է այս կողմերում: Ինչպես հայտնի է, այստեղ իշխել են Կամսարականները (Շիրակ, Արշարունիք), Գնթունիները (Նիգ), Առավեղյանները (Արագածոտն. ներկայիս Թալին-Աշնակ): Գնունիները հաստատվել էին Աղիովիտում[17]: Իսկ Ապահունիները՝ Արածանիի հովտում Բզնունիքի մոտ[18]: Սկզբնաղբյուրների մեջ առավել հետաքրքիր տեղեկությունը Սոփերքն էր բովանդակում, որտեղ Գնունիները հիշատակվել են որպես Շիրակի «մեծ» նախարարական տներից մեկը[19]: Շիրակն ամբողջությամբ պատկանում էր Կամսարականներին, սակայն այնտեղ կալվածքներ են ունեցել նաև Սահառունիները և, ինչպես երևում է, Գնունիները: Բոլոր դեպքերում Գնունիների այստեղ հաստատվելը կասկածի տեղիք տալ չի կարող, քանզի հիշյալ եպիսկոպոսից բացի, եկեղեցու արևելյան խորանի պատուհանի պսակի վերևում փորագրվել է արձանագրություն ևս մի Գնունու մասին ԳՆՈՒՆԻ ԱՆԱՍՏԱՍ համառոտ մակագրությամբ:

Գնունիների տարածվելը դեպի հյուսիս հավանաբար տեղի է ունեցել տոհմի աճի և մասնատման հետևանքով: Այս կարծիքը հաստատվում է այն փաստով, որ տոհմի մի մասը, այնուհանդերձ, չէր լքել իր ժառանգական տիրույթները: VIII դարի վերջերին նրանց նորից ենք գտնում Աղիովիտ գավառում, սակայն լրիվ անզորացած. Աշոտ Մսակերի օգնությամբ նրանք տեղափոխվում են Տայք[20]:

Առաջին արձանագրության մեջ հիշատակված Թեոդորոս Գնունին մնում է մատենագրությունից հայտնի միակ արժանահավատ անձնավորությունը[21], որի ժամանակով էլ կարելի է թվագրել ուսումնասիրվող արձանագրությունները, այսինքն՝ նորոգման աշխատանքները:

Եկեղեցու նախնական կառուցման ժամանակը պարզելու գործում մեր կարծիքով կարևոր տեղ ունի հունարեն արձանագրությունը, փորագրված հաբավային պատի արևմտյան հատվածի ստորին մասում. ΠΕΡΟΖ[ΑΡ]ΧΟΝΤ ΑΚ: Արձանագրության մեջ թաքնված տեղեկությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել նրա առկայության պատճառը, տալ ճիշտ վերծանությունը և որոշել նրա գրության առանձնահատկությունները: Արձանա[illegible]թյունը երկտող է: Տողերի սկիզբը վնասված է, որի պատճառով անհ[illegible]վ են Π տառի ստորին կեսը և ΑΡΧΟΝΤ բառի երկու տառերն ու երրո[illegible] կեսը: Վերականգնման վարկածը բխում է այն կարծիքից, որ, եթե առաջին բառն իրենից ներկայացնում է անձնանուն, ապա երկրորդի մեջ տրամաբանական է որոնել այդ անձը բացատրող որևէ լրացում: Տվյալ դեպքում արձանագրու-

16 Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Բ, էջ 214:

17 Տե՛ս Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XII—XIII դդ., II, Երևան, 1956, էջ 197, 200, 206, տե՛ս նաև Խորենացի, էջ 284:

18 Տե՛ս Խորենացի, էջ 71, Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, II, էջ 202:

19 Տե՛ս «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի», «Սոփերք հայկականք», Զ, Վենետիկ, 1853, էջ 15:

20 Տե՛ս Բարձրբերդցի, էջ 10:

21 Տե՛ս Հ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 345, Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 46, Գ. Հովսեփեան, Քարտեզ..., էջ 174, Н. Адонц. Армения..., стр. 304.

թյան պահպանված մասնիկներն առավել հավանական են դարձնում վերականգնել [ΑΡ]ΧΟΝΤ վարկածով, որի վրա բանավոր կարգով մեր ուշադրությունը դարձրեց Ս. Կրկյաշարյանը, ըստ որում վերջին երկու տառերը՝ ΑΚ նրա կարծիքով հարկավոր է համարել 21 թվանիշը: Ս. Կրկյաշարյանը միաժամանակ գտնում է, որ արձանագրության հեղինակը հույն չէ, որովհետև հակառակ դեպքում չէին կարող բացակայել հունարենին բնորոշ վերջավորությունները: Այս հիման վրա արձանագրությունը կարդացվում է այսպես՝ «Պերոզ արքայի 21 տարին»: Արձանագրության նման ընթերցումն անխուսափելիորեն առաջ է բերում մի շարք առեղծվածներ: Պարզվեց միայն հետևյալը. ոչ հույնը հունարեն գրել է Իրանի արքայի անունը հայկական եկեղեցու պատին: Իրանի արքան կարող էր միայն Հազկերտ Բ-ի որդին լինել, որը 459 թվականին նվաճեց գահը իր ավագ եղբայր Որմիզդից: Թագավորել է 25 տարի[22]: Նրա 21-րդ տարին համապատասխանում է 480 թվականին, որով էլ պետք է թվագրվի արձանագրությունը: Պերոզը հայտնի էր հակաքրիստոնեական քաղաքականությամբ, որը Հայաստանում առաջ բերեց ազատագրական պայքարի նոր ալիք: Արձանագրությունը կարող է միայն մեկ բացատրություն ունենալ. կրոնական ճնշումների պայմաններում եկեղեցիների կառուցումը կապված էր մեծ դժվարությունների հետ: Սակայն եկեղեցիներ, այնուհանդերձ, կառուցվում էին, ըստ որում և աչքի ընկնող, ինչպես Մայր տաճարը Էջմիածնում, Տեկորի տաճարը և այլն: 480 թվականին փորագրված արձանագրությունն անհրաժեշտ է դիտել որպես վավերացման մակագրություն, թույլտվության կնիք և, հետևապես, եկեղեցու կառուցման վկայություն: Իսկ հունարեն լեզվով գրվել է այն պատճառով, որ գրողը եղել է ոչ թե հայ, այլ Իրանի ներկայացուցիչը, որի համար քրիստոնեության պաշտոնական լեզուն հունարենն էր: Սակայն հուշարձանի թվագրությունը V դարով հակասում է շինության կառուցողական և, մասնավորապես, զարդապատման առանձնահատկություններին: Ահա այստեղ էլ օգնության են գալիս վերոհիշյալ շինարարական արձանագրությունները և ուսումնասիրվող ճարտարապետության մի քանի մանրամասներ, որոնց ավելորդ չի լինի անդրադառնալ հանգամանորեն: Բանը նրանումն է, որ հուշարձանը կանգնած է նույն տիպի մի այլ շինության վրա: Հին եկեղեցին եղել է ավելի մեծ: Նրա պատերը երևում են հյուսիսային և արևմտյան կողմերից: Արևելյան պատն ամբողջությամբ նստած է հին շենքի հիմնապատի վրա և դրանով հաստատում է նախ. որ այդ հատվածում հին և նոր եկեղեցիների պատերի տեղադրությունները համընկել են և, երկրորդ՝ ներկայիս եկեղեցին կառուցվել է ավելի ուշ: Ի տարբերություն ներկայիս եկեղեցու խորանների հնգանիստ կառուցվածքի հին եկեղեցու խորանն արտաքուստ եղել է կիսաշրջանաձև: Հ. Տահխաթունյանցն այդ խորանի մնացորդներն ընդունել է ավերված բերդապարիսպների տեղ[23]: Այդ տեսակետը բոլորովին անընդունելի է, քանզի կիսաշրջանաձև խորանից բացի պահպանվել են նաև ենթագմբեթային քառակուսի դահլիճի հյուսիս-արևմտյան հատվածի հիմնապատերը, որոնք վկայում են երկու շենքերի տիպային նույնության մասին: Վերջապես, ամենակարևորը հին շինության արևելյան պատի առկայությունն

22 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, II, Երևան, 1967, էջ 87, 109:

23 Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 47:

է ներկայիս եկեղեցու նույն պատի տակ, որն, ինչպես և ասացինք, կարող
էր միայն նախորդ շենքի մնացորդը լինել։
Ինչ վերաբերում է հարավային պատին, ապա ուսումնասիրությունը
ցույց տվեց, որ այն ոչ միայն համընկնում է հին շենքի հետ, այլև ըստ
էության դա հին եկեղեցուց պահպանված և օգտագործված մի մնացորդ է,
սակայն մի վերապահմամբ. արձանագրությունների համաձայն հարավային
ու արևմտյան պատերի վերնամասերը վերստին կառուցվել են VII դարում։
Ահա հենց այս պարագայով էլ պետք է բացատրել VII դարին բնորոշ
զարդապատումների առկայությունը պատուհանների պսակների վրա։ Սա-
կայն հարավային պատի ստորին կեսը, ուր, ի դեպ և գտնվում է հունարեն
արձանագրությունը, հանդիսանում է հին եկեղեցու մնացորդ։ Այդ մասին է
վկայում երեսպատման քարերի տարբերությունը, որ նկատվում է պատի
վերին ու ստորին կեսերի միջև։ Ինչպես ցույց է տալիս համեմատական
քննությունը այդ չի վերաբերում խորանին։ Այն անկասկած կառուցվել է
բոլորի հետ միասին։
Ուսումնասիրվող եկեղեցու շինարարական պատմությունն ամբողջակա-
նորեն պատկերացնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ևս մի
մանրամասնի վրա. եթե հարավային պատի ստորին կեսը կառուցվել է 480
թվականին, իսկ վերինը՝ VII դարի կեսին, ապա շենքի մնացած մասն ունի
բոլորովին այլ ժամանակագրական բնութագիր։ Հյուսիսային պատին այլևս
չկան շքեղ զարդաքանդակներ պատուհանների պսակների վրա։ Դատելով
այս ամենից մինչև VII դարի նորոգումը V դարի եկեղեցին վերակառուցվել
է և հյուսիսային ու արևմտյան կողմերից փոքրացվել։ Այդ շինության ժա-
մանակ պահպանել են հարավային պատը և նոր համաչափություններից
ելնելով վերաշինել հարավային խորանը։
Գրավոր սկզբնաղբյուրների բացակայության պատճառով անհնար է
պարզել, թե երբ է վերակառուցվել V դարի եկեղեցին։ Մասնագետների մեծ
մասը եկեղեցին թվագրում է VI դարի սահմաններով, կամ VII դարի
սկզբով[24]։ Ստրժիգովսկին գտնում է, որ եկեղեցու այս տիպը Հայաստանում
առաջ է եկել IV դարում և իր ծաղկման շրջանն ապրել V դարում[25]։ Ուսում-
նասիրողներին սովորաբար ապակողմնորոշել է VII դարին բնորոշ զարդա-
պատկերների առկայությունը եկեղեցու վրա։ Այժմ, երբ պարզվի[…] որ
արձանագրությունները վերաբերում են VII դարի կեսերին կատարս[…] ու-
գումներին, այդ տարօրինակ անհամապատասխանությունը, որ գ[…]ւմ
ուներ ճարտարապետության և զարդապատումների միջև դադա[…] է
խոչընդոտել եկեղեցու թվագրությանը VI դարի սահմաններով։
Բագարան.—Հիշյալ շինությունների շարքում հին և նոր ձևերի միահյուս-
վածքով առանձնանում է Բագարանի եկեղեցին, որի ներքին տարածությունը
բաժանված է չորս մույթերով։ VII դարի սկզբից մույթերի կիրառումը նորա-
կառույց գմբեթակիր եկեղեցիներում վերանում է։ Նրանց առկայությունը
սովորաբար կապված է հին շինությունների վերակառուցման հետ (ինչպես

24 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր…, 1, էջ 263, *Н. М. Токарский*, Архитектура Армении…, стр 116, 181, *А. Л. Якобсон*, Очерк…, стр 25, *В. М. Арутюнян*, и *С. А. Сафарян*, Памятники армянского зодчества, Ереван, 1951, стр. 43, *А. Б. Еремян*, Храм Рипсимэ, стр. 72.

25 Տե՛ս *J. Strzigowski*, Die Baukunst…, II, S. 465—471.

այդ տեսանք էջմիածնի Մայր տաճարի օրինակում)։ Բագարանի եկեղեցին
VII դարից ավելի վաղ թվագրելուն հակասում է շինարարական արձանա-
գրությունը, որի համաձայն եկեղեցին կառուցվել է 631 թվականին։ Արձա-
նագրությունը փորագրված է մեկ տողով և գոտևորում է ամբողջ շինությունը.
սկսվում է հյուսիսային պատի արևմտյան անկյունից և ավարտվում՝
հյուսիսային խորանի արևմտյան նիստի վրա։ Ըստ պատերի նիստերի
առանձին հատվածների, Հ. Օրբելին արձանագրությունը վերծանել է այսպես.
Ա. ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՐՈ-
Բ. ՐԴ ԱՄԻ ԽՈՍՐ-
Գ. ՈՎԱՅ ԱՐՔԱՒ ԵՐԱՆԵԼԻ Տ-
Դ. ԷՐ ԲՈՒՏ ԱՌՈՒԵՂԵԱՆ ՋԳԵԱՑ ՁՀԻ-
Ե. ՄՈՒՆՍ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑ[ԻՈՅՍ]
Զ. [ԵՒ]ԵՐԵՍ-
ԳՈՐԾ ԵՒ ԽՈՒՄԱԹ
Է. ՈՒՆ ԵՒ ՈՒԹ ԱՄՈՅՆ ԿՈՐՈՒՍԻՆ
Ը. ՋԲՈՏՆ
Թ. ԵՒ ՅԵՏ ԵՐԻՑ ԱՄԱՑ ՄԱՀՈՒԱ-
Ժ. Ն ԲՏԻՆ ԿԱՏԱՐԵԱՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ա-
ԺԱ. ՆՆԱՅ ԲՏԻՆ ԱՄՈՒՍԻՆ ՏՐ-
ԺԲ. Է ԱՄՍԵԱՆ Ք.
ԺԳ—ԺԵ . . . .
ԺԶ. [Ի ՄԱ]ՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԱԶ ՏԻՐՈՑ-
ԺԷ. Ի ՀԱՅՈՑ ԱՍՊԵՏԻ ՅԱՌԻԵՂԵ-
ԺԸ. ԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՀԱ ՅՆ ԱԻ <
ԺԹ. ՈԳԱԲԱՐՁՈՒԹԵ . . . .
Ի—ԻԱ . . . .
ԻԲ. ՅՐԿԱՆ . . . .
ԻԳ. ԵՒՍԵ ԿԱՄՍ
ՈՐԴԻՈՑ ՐԿԱՅ ԱՐԱԿԱՆԻ ԱՇԱՆՈՒՇԱ
ԻԴ. ԱՆԴ ՅԴՍ Ք ԱՆՆԱ ԴԵԱ
ՅԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆԱՅՈ ՏԵՐ ՅԵՒ ՈՐ ՀԱ-
ԻԵ. ԿՔ ԳԻՏ ԵՒ ՏԻԱՐԻԱՆԴ Ժ ՌԱՀԱՄԻ ՅԻՇԵ
Ն ՀՐԱՀԱ ԽՈՅ ՍԱՀԱԿԻ ՇՈՒՇԱՆ ՅԻ ԱՄ
ԻԶ. ԵՑԻ
ԵՒ ՈՂՈՐՄ
ԻԷ . . . . [26]
Արձանագրությունն ունի բազմաթիվ վնասված տեղեր և կորած հատ-
վածներ։ Հ. Օրբելու կարծիքով այն հետագա ժամանակների արտագրություն
է։ Այդ ենթադրությունը նա հիմնավորում է առանձին բառերի պարզեցված
ձևերով և տառակցումներով։ Սակայն այս պատճառաբանությունների հետ
համաձայնվելը դժվար է, որովհետև արձանագրությունը դասական լեզվի
օրինակ չէ և միանգամայն բնական է խոսակցական լեզվի պարզեցված
տարատեսակ դարձվածքների առկայությունը։ Ինչ վերաբերում է տառակ-
ցումներին, ապա այդպիսի օրինակներ VII դարի արձանագրությունների
մեջ սակավադեպ չեն։

26 *И. А. Орбели*, Избр. труды, стр. 391.

Արձանագրության շարադրանքը բավականին ընդարձակ է, որը մեկ տողով փորագրելու համար գրիչները ստիպված են եղել որոշ հատվածներ տեղադրել երկու տողով և նույնիսկ դիմել տառակցման: Այս հատվածներում շարադրանքի խառնաշփոթությունը, ակներևաբար, արձանագրության անհաջող տեղադրության հետևանք է: Չնայած երեք անգամ պարզորոշ նշված տարեթվերին, այդուհանդերձ, ուսումնասիրողները մի շարք ենթադրություններ ու դիտողություններ են արել նրա շուրջը: Եթե Հ. Ա. Օրբելին, այն համարելով պատճեն, անդրադարձել է հարցի մի կողմին, ապա Կոգյանը առաջարկել է արձանագրությունը թվագրել 629 թվականով[27]: Կոգյանին շփոթել է Խոսրովի անվան առկայությունը 631 թվականի արձանագրության մեջ, որովհետև Խոսրով Փարվեզը մահացել է 628 թվականին[28]: Հարցի պատասխանը պետք է որոնել թվագրության ձևերի մեջ, որոնք պատմողական բնույթ են կրում: Արձանագրության մեջ Խոսրովի գահակալման ժամանակաշրջանով թվագրվել է ոչ թե 631 թվականը, այսինքն շինության ավարտը, այլ հիմնադրման տարին: Ինչպես ցույց են տալիս հաշվումները, Բուտ Առավեղյանը եկեղեցին հիմնադրել է 624 թվականին և ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԱՄԻ ԽՈՍՐՈՎԱՅ թվագրությունը միանգամայն համապատասխանում է իրականությանը: Այնուհետև, երկրորդ և երրորդ թվականներում, բնականորեն, Խոսրովի անունն այլևս չի հիշատակվում: Երկրորդ թվականը 628-ն է. այստեղ արձանագրությունը տեղեկացնում է, որ ամն Գոբթը և Խումաթը սպանել են Բուտին և եկեղեցու շինությունն ավարտել է նրա կինը՝ Աննան, 631 թվականին: Արձանագրությունը փորագրվել է 631 թվականին, իսկ այն պատճառաբանությունը, որ Արշարունիքը իրանական էր և այդ պատճառով թվագրվել է Իրանի թագավորի գահակալության տարիներով[29] իրականությանը չի համապատասխանում: Արշարունիքը Բյուզանդիայի սահմաններում մեջ էր մտնում արդեն 623 թվականից[30]:

ԺԳ—ԺԵ հատվածներում արձանագրությունը չի պահպանվել, Հ. Օրբելու նկարագրությամբ այստեղից բացակայում է մոտ 32 տառ: Սակայն լրացուցիչ ուսումնասիրության մեջ[31] նա տեղեկացնում է, որ ԺԴ հատվածում հնարավոր է արձանագրություն բոլորովին չի եղել: Այս երկրորդ ենթադրությունն ունի է արձանագրություն բոլորովին չի եղել: Այս երկրորդ ենթադրությունն ունի տարրկելի տեղեր: ԺԲ հատվածի վերջում պահպանվել է Բ սկզբնատառը որը վկայում, որ նախկինում այդտեղ բառ է եղել: Ելնելով բովանդակությունից և պահպանված Բ տառի առկայությունից, այդ հատվածը ոչ միայն պետ համարել արձանագրված, այլև կարելի է ենթադրել բովանդակությու.

ԺԱ—ԺԲ հատվածում նշված ՏՐԷ ամիսը թելադրում է, որ բացակայող ԺԴ հատվածում հիշատակված է եղել շինության ավարտի ամսաթիվը, իսկ Բ տառը՝ որ այդ ամսաթիվը քանական միավոր է ունեցել: Հ. Օրբելին ենթադրաբար այս հատվածն առաջարկել է լրացնել երկու ձևով՝

ա) ՏՐԷ ԱՄՍԵՆ Ի ՔՍԱՆ ԱԻՐՆ ՅԱՌԱՋԻՆ ԱՄԻ ՈՐՄԶԴԻ ԱՐՔԱՒ Ի ՄԱՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ...

բ) Որմզդի փոխարեն տեղադրել Եզր կաթողիկոսի անունը:

27 Տե՛ս Ս. Կոգեան, Կամսարականներ, Տեառք Շիրակայ և Արշարունեաց, Վիեննա, 1926, էջ 137:

28 Տե՛ս նույն տեղում:

29 Հմմտ. Ս. Մնացականյան, Երբ է կառուցվել Մրենի տաճարը, ՊԲՀ, 1969, № 3, էջ 156:

30 Տե՛ս „История Византии“, I, М., 1967, стр. 361, 365.

31 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 413.

Երկրորդ տարբերակն ավելի հավանական է նախ այն պատճառով, որ Իրանում այս տարիներին գահակալական կռիվներ էին տեղի ունենում, և Որմիզդի գահակալ լինելը հաստատուն չէր, իսկ երկրորդը՝ եկեղեցու մոտ հայտնաբերվել են նույնանման արձանագրության առանձին բեկորներ, որոնք կարող են կազմել Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ բառը: Վերականգնված այս հատվածը կապակցված է և համոզիչ:

Արձանագրության առեղծվածային մասը երկրորդ կեսն է: Փորագրման ժամանակ խիստ աղավաղվել է նրա վերջին հատվածը, որը բավականին դժվարացնում է հիշատակված անձանց դիրքի ու կարևորության վերծանումը: Բացակայում է Կամսարականների տանուտերի անունը. Նշված է սոսկ՝ «Տեառն Շիրակայ և Արշարունեաց»: Կոգյանն այդ տիտղոսը տեղադրելու հնարավորություն է տեսնում բացակայող Ի հատվածում[32]: Նման տեղադրությունն անհնար է շարադրության առումով, որովհետև, բնականաբար, տիտղոսը պետք է հաջորդի անվանը և ոչ թե նախորդի, միաժամանակ, ինչպես երևում է ընդհատված վերջավորությունից, խոսքը վերաբերում է հոգեբարձուին և ոչ թե Կամսարականների տիտղոսին: Այստեղ ավելի հավաստի է Թեոփիլոսի անվան հնարավորությունը: Արձանագրության այս հատվածը վերականգնելու համար կարևոր մի ենթադրություն է արել Գալուստ Տեր-Մկրտչյանը՝ ՅՐԿԱՆ վերջավորությունը վերծանելով [ԵՂԲԱ]ՅՐԿԱՆ[33]: Այսպիսով՝ Եվսեբկիոսը, իր որդով հանդերձ, ոչ մի դեպքում տանուտեր և «Տեառն Շիրակայ և Արշարունեաց» ներկայանալ չի կարող, նախ այն պատճառով, որ ստույգ հայտնի է այդ շրջանում Ներսեհ Կամսարականի տանուտեր լինելը և, վերջապես, որ այս արձանագրության մեջ Կամսարականների անվանը հաջորդող պահպանված մասը բոլորովին այլ բովանդակություն է արտահայտում:

Հ. Օրբելին գրում է, որ Ի—ԻԱ հատվածում բացակայում է մոտ 21 տառ: Դրանցից երկուսը վերականգնվում են հեշտությամբ: Դա ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵ[ԱՆ] բառի վերջին երկու տառերն են: Չորս տառ հատկացվում է [ԵՂԲԱ]ՅՐԿԱՆ անվանը, իսկ մնացած 15-ը, եթե բովանդակությունից չշեղվենք, պետք է լինի այդ շրջանում Կամսարականների արձանագրություններից հայտնի Թեոփիլոս եպիսկոպոսի անունը, ինչպես և առաջարկում ենք վերականգնել այդ հատվածը: Ապա հաջորդում է. ԵՂԲԱՅՐԿԱՆ ՈՐԴԻՈՅ ՆԻՍԵՐԿԱՅ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ: Այս անշուշտ, այն ձևն է, որը ցույց է տալիս նրանց Կամսարական, բայց ոչ տանուտիրական ճյուղին պատկանելը:

Եվսեբկիոսի և Եղբայրիկի մասին ստույգ որևէ բան ասել հնարավոր չէ: Թե ինչ առնչություն են ունեցել այս եկեղեցու հետ հիշյալ անձինք, արձանագրությունը չի ավանդում և, առհասարակ, նրանց մասին լրացուցիչ տեղեկություններ չկան:

Վարազ-Տիրոցը Սմբատ սպարապետի որդին էր, մարզպանի պաշտոնում նշանակվել է Խոսրովի կողմից:

Գոբթի և Խումաթի մասին ևս տեղեկություն չի պահպանվել:

Բուտ անունը Հ. Աճառյանի ստուգաբանությամբ ասորական bud «եկեղեցական տեսուչ», քրմապետ ասորուշանի բառն է, որն իբրև հատուկ անուն է գործածվում»[34]:

32 Տե՛ս Ս. Կոգեան, Կամսարականներ..., էջ 138:

33 Տե՛ս *О. Галуст*, Замечания..., ХВ, т. III, вып. III, СПб, 1915, стр. 315—316.

34 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 422:

Արձանագրության մեջ հիշատակված Վահանն ուսումնասիրողների կողմից ընդունվել է որպես Կամսարական։ Սակայն բովանդակությունը ցույց է տալիս նրա Առավեղյան լինելը։ Ավելին՝ տանուտեր լինելը։ Պարզապես նա եղել է Բուտի որդին։ Այլ կերպ նրա անունն անհնար կլիներ հասկանալ ոչ միայն իր տեղում, այլ որևէ կերպ կապակցել արձանագրության հետ։ Բնագրում ավելի հնարավոր ենք համարում հետևյալ դարձվածքները՝ Ի ՏԵՐՈՒԹԵԱՆ կամ ՏԱՆՈՒՏԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՀԱՆԱՅ ԱՌՈՒԵՂԵԱՆ և ոչ թե ՅԱՌՈՒԵՂԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՀԱՆԱՅ։

Եղբայրիկից և Եվսերկիոսից բոլորովին անկախ հիշատակված է Աշանուշ անունը։ Նրա մասին բացատրություն չկա նաև հաջորդ հատվածում։ Այս հարցի լուծումը գտնվում է ԴՍՏԵՐՔ բառի մեջ, որի տակ հիշատակված է Գրիգոր Վանանդեցու միայն մի դուստրը՝ Աննան։ Վերջինս պետք է գրված լիներ ԴՍՏԵՐՔ բառից հետո, Աշանուշի կողքին, որով և կպատճառաբանվեր ԴՍՏԵՐՔ բառի հոգնակի ձևը։

Հիշատակված բազմաթիվ անձանց շարքում հանդիպում է նաև Սահակի անունը, որին Գ. Տէր-Մկրտչյանը համարում է Շուշանի ամուսին, Աննայի փեսա, ծագումով Կամսարական[35]։

Արձանագրության ԻԷ հատվածում ուսումնասիրողների կողմից անվերծանելի է մնացել մի փակագիր, որը կարևոր է արձանագրությունը ճիշտ կարդալու և պարզաբանելու համար։ Հ. Օրբելին տեղեկացնում է, որ «ԻԷ—(W) պատի երկրորդ քարի առաջին տողի, առաջին տառը թվում է, որ բացի Ի բնութագրից ունի նաև Ի բնութագիրը»[36]։

Մեր կարծիքով այստեղ թաքնված է Գրիգոր Վանանդեցու ևս մի որդու՝ ԳԻԻՏ-ի անունը։ Առաջարկելով այս վերծանությունը, անհրաժեշտ ենք տեսնում վերանայել նաև ԳՈԽԱՀԱՆ անունը, որի Գ սկզբնատառը կասկած է հարուցում։ Ավելի ճիշտ ենք համարում ՈԽԱՀԱՆ ձևը, ուր նկատվում է ՈԻ հնչյունի արխայիկ գրության սակավադեպ մի օրինակ որպես Ի—W Վահան[37]։ Իսկ Հրահատի վերջին «Տ» տառը նույնպիսի կրկնություն է և սղման արդյունք, ինչպես և հաջորդ քարին փորագրված ՏԻԱՐՎԱՆ ԴԺԽՈՅ բառերում «Դ» տառը։

Վերականգնելով վնասված, բացակայող, ինչպես և աղավաղված հատվածները արձանագրությունն առաջարկում ենք հետևյալ վերծանությամբ՝

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԱՄԻ ԽՈՍՐՈՎԱՅ ԱՐՔԱՒ, ԵՐԱՆԵԼԻ ՏԷ ԻՏ
ԱՌՈՒԵՂԵԱՆ ՉԳԵԱՅ ՀԻՄՈՒՆՍ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ԵՐԵՍՈՒՆ ԻԹ
ԱՄՈՅՆ ԳՈԲԹԻ ԵՒ ԽՈՒՄԱԹ ԿՈՐՈՒՍԻՆ ՉԲՈՒՏՆ ԵՒ ՅԵՏ ԵՐԻՑ ԱՅ
ՄԱՀՈՒԱՆ ԲՏԻՆ ԿԱՏԱՐԵԱՅ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՆՆԱՅ ԲՏԻՆ ԱՄՈՒՍԻՆ ՏՐԷ
ԱՄՍԷԱՆ Ի ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵԶՐԱՅ ԵՒ Ի
ՄԱՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԱԶ ՏԻՐՈՅԻ ՀԱՅՈՑ ԱՍՊԵՏԻ, Ի ՏԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՀԱՆԱՅ
ԱՌՈՒԵՂԵԱՆ Ի ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԹԵՈՎՓԻՂՈՍԻ ԵՂԲԱՅՐԿԱՆ ՈՐԴՒՈՅ
ԵԻՍԵՐԿԱՅ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ, ԱՇԱՆՈՒՇԱՅ ԵՒ ԱՆՆԱՅ ԴՍՏԵՐՔ ԳՐԻԳՈՐԻ

35 Տե՛ս *О. Галуст*, Замечания..., ХВ, т. III, вып. III, стр. 315.

36 *И. А. Орбели*, Избр. труды, стр. 391.

37 Հայկազյան բառարանում կա Ունտալ, այսինքն ուանտալ, Վանտալ օրինակը։ Տե՛ս «Բառագիրք Հայկազեան լեզուի», գ. I, Վենետիկ, 1769, էջ 323։

ՎԱՆԱՆԴԱՑԻՈՅ ԵՒ ՈՐԴԵԱԿՔ ԳԻԻՏ, ՈԽԱՀԱՆ ԵՒ ՏԻԱՐԻԱՆԴ, ԴԺԽՈՅ ՍԱՀԱԿԻ
ՌԱՀԱՄԻ ՇՈՒՇԱՆ։ ՅԻՇԵՑԻ ԱԾ ԵՒ ՈՂՈՐՄԵՑԻ։

* * *

Մրեն.—VII դարում մեծ տարածում գտած հորինվածքներից են գմբեթավոր բազիլիկները։ Հայաստանում հայտնի են այդ տիպի վեց հուշարձան Մրեն (Արևմտյան Շիրակ), Բագավան (Բագրևանդ), Ակոռի (Մասեացոտն). (Գայանե) էջմիածին, Լենինական (ավերակ) և Օձուն (Թումանյանի շրջան)։ Ձնայած բազիլիկ հորինվածքի ընդհանրությանն այս շինությունները մեծապես տարբերվում են միմյանցից։ Կարևորն, իհարկե, միայն այն չէ, որ բազիլիկը գմբեթավորելու եղանակով VII դարում երևան է գալիս եկեղեցական շինության նոր տիպ։ Էականը նրա առաջացման ակունքներն են։ Ինչպես հայտնի է, եկեղեցական շինության հորինվածքային կերպարի կենտրոնացման և դրա շնորհիվ հավասարակողմ համաչափություններին անցնելու հակումը սկիզբ առավ V դարում և VI դարից դարձավ հայ ճարտարապետության զարգացման կանխորոշող և ամենաբնորոշ ճարտարապետական կերպարը։ Սակայն բազիլիկից հրաժարումը հանգեցրեց շինության ներքին տարածության նկատելի փոքրացման և այդ պատճառով եկեղեցիների բազիլիկ լուծումը, շնորհիվ ծավալային առավելությունների, եղել է նախընտրելի նաև հետագայում։ VII դարում կառուցված գմբեթավոր բազիլիկներն, ինչպես և սպասվում էր, պետք է ունենային հավասարակողմ համաչափությունների հակում։ Այդպիսին են Լենինականի, էջմիածնի ս. Գայանե և Ակոռիի եկեղեցիները։ Հնագույն բազիլիկների երկարավուն համաչափությունների պահպանումով սրանցից տարբերվում են վերոհիշյալ համաչափությունների պահպանումով սրանցից։ Բագավանի եկեղեցին, ինչպես մնացած երեք գմբեթավոր բազիլիկները։ Բագավանի եկեղեցին, ինչպես հայտնի է, մինչև VII դարի իր գմբեթավորումը Հայաստանի հնագույն բազիլիկներից էր։ Օձունի արտաքին սրահի առկայությունը՝ համաչափությունների հետ միասին, վկայում է, որ սա ևս վերակառուցված հնագույն բազիլիկներից է։ VII դարի հետ չհամակերպվող այս ձգված համաչափությունների հետ միասին, Թ. Թորամանյանը Մրենի տաճարի մեջ ևս թյուններն են եղել պատճառը, որ Թ. Թորամանյանը Մրենի տաճարի մեջ ևս տեսել է հին շենքի վերաշինության հավանականություն[38]։ վավերագրեր, իսկ

Հիշյալ բոլոր հուշարձաններն ունեն շինարարական արձանագրություն։ Մրենի և Բագավանի տաճարները՝ նաև շինարարական արձանագրությունը փորագրված է երեք

Մրենի տաճարի շինարարական արձանագրությունը փորագրված է երեք տողով՝ արևմտյան պատուհանի երկու կողմերում, 12 քարերի վրա, որից այժմ բացակայում են տողերի սկիզբը կրող առաջին, յոթերորդ և տասներկուերորդ քարերը։ Սրանց տեղը ագուցված են երեք խաչքար և մի փոքր պատուհանի մոտ բազարդաքանդակ։

Առաջին տողում փորագրված է 77 (ներառյալ և պատուհանի մոտ բացակայող յոթերորդ քարի հատվածը, որը վերականգնել է Հ. Օրբելին), երկրորդ տողում՝ 75, և երրորդ տողում՝ 81 տառ։ Միաժամանակ, եթե հաշվի առնենք, որ առաջին և երկրորդ տողերում քարի վնասվածքները երեքից չորս տառերի տեղ են զբաղեցրել, բացակայող մասը կարելի է աննշան համարել։

38 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 201։

Առանց որևէ բացատրության Կ. Կոստանյանն այս արձանագրությունը զետեղել է 670 թվականի տակ[39]: Հնագրական ձևերը ներկայացնելու նպատակով արձանագրությունն օգտագործել է նաև Գ. Հովսեփյանը[40], իսկ նրանից առաջ մի փոքր, բայց բացառիկ կարևորության ներկայացնող հոդվածով հրատարակից Հ. Օրբելին[41]: Նրա համար հիմք են ծառայել մի լուսանկար և Ն. Մառի նշումները: Վերականգնելով արձանագրության բացակայող հատվածները Հ. Օրբելին այն վերծանել է այսպես՝

ԱՄԻՈ—

1. [ԱՄԻՈՅ- կամ ՅՆ ԵՐ-
2. Ն ՔՍԱՆ Ե— ԵՍՆԵՐ
3. Ի ԻՆԵՐՅՈՐԴԻ ՀԵՐԱԿՂԻ ԲԱՐԵՅԱՂԹՈՂ ԹԱԳԱՒՈՐԻ ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՒԹԻ ԱՄԵՆԱԳՈՎ ՊԱՏՐԿԻ ԿՈՒՐԱՊԱՂԱՏԻ ԵՒ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՀԱՅ-
4. ՈՑ ԵՒ ԱՍՈՐԻՈՑ ԵՒ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՍՐԲԱՍԻՐԻ ՏԵԱՌՆ ԹԵՈՎ- ՓԻՂՈՍԻ ԵՒ Ի ՏԱՆՈՒՏԵՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԵՀԻ ՇԻՐԱ—
5. ԿԱՅ ԵՒ ԱՇԱՐՈՒՆԵԱՅ ՏԵԱՌՆ ՇԻՆԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ԲԱՐԵԽԱՒ- ՍՈՒԹԻՒՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԱՑ ԵՒ ՄՐԵՆՈՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳԻ (կամ ԱՇԽԱՐՀԻ կամ ԵՐԿՐԻ)

Ներկայացված վերծանությամբ առաջին տողի սկզբում պակասում է 17 տառ: Մեկ տողով գրվել չէր կարող, որովհետև շատ հեռու կանգներ երկրորդ և երրորդ տողերի սահմանից: Այս հանգամանքը Հ. Օրբելուն ստիպել է թվագրությունը տեղադրել երեք տողով: Սակայն արձանագրության սկզբում անսովոր տեղադրության այս ձևը համոզիչ չէ:

Անվիճելի է, որ երկրորդ քարի վրա առաջին տողում պահպանված ՈՐԴԻ վերջածանցի բառասկիզբը եղել է առաջին քարի վրա: Իսկ այս դեպքում միանգամայն տրամաբանական է, որ երկրորդ և երրորդ տողերի սկիզբը ևս եղել է նույն քարի վրա և սկսել նույն տեղից: Պատուհանի երկու կողմերում տեղադրված արձանագրության աջակողմյան հատվածը (ներառյալ նաև պատուհանի մոտ պակասող մասը) մի փոքր երկար է ձախակողմյանից, և թեև բոլոր տողերի վերջին տառերը կիսատ են և վերջին տողն էլ անավարտ, այդուհանդերձ տողերի շարունակությունը համաչափության պահպանման համար կարող էր գտնվել ոչ թե չպահպանված վերջին, այլ առաջին քարի վրա, հաջորդ տողում: Հակառակ դեպքում, եթե պակաս հատվածը տեղադրենք 12-րդ քարի վրա, աջակողմյան հատվածն ավ կերկարի, իսկ ձախ կողմում առաջին տողը սկզբից կմնա մեկուսացա. Հ. Օրբելու վերծանության մեջ երկրորդ տողի սկզբից բացակայում է ‹, երրորդ տողից՝ 6, թվագրությունը պարունակող առաջին տողից՝ 17 տառ: 10—11 տառերի տարբերությունը մեկ քարի վրա բոլորովին անհնար է, մանավանդ նման համաչափ տառերով փորագրված արձանագրության մեջ: Քանի որ առաջին տողի սահմանը երկրորդ և երրորդ տողերի սահմանից 10—11 տառերի զբաղեցրած տարածությամբ հեռացնելու որևէ հիմք չունենք, ուստի հարցի լուծման միակ ելքը թվագրության տեղադրման և թվականի վերանայումն է, որի համար հիմք են տալիս նաև պատմիչների վկայությունները:

---

39 Տե՛ս Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, էջ 2:

40 Տե՛ս Գ. Հովսեփեան, Քարտեզ..., էջ 173—174:

41 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 397, 401.

Արագած. Գրիգոր ճարտարապետի կառուցած վեցախորան եկեղեցին հարավ-արևմուտքից



Եղվարդ. սբ. Զորավոր եկեղեցու ավերակները



Զվարթնոց. Ավերակների ընդհանուր տեսքը

Արձանագրության յոթերորդ՝ բացակայող քարի առաջին տողում Հ. Օրբելին պարզել է, որ եղել է կուրապաղատ Դավիթ Սահառունու անունը և ըստ այդմ էլ արձանագրությունը թվագրել 639—640, որովհետև, Սեբեոսի տեղեկության համաձայն, Սահառունին Հերակլ կայսեր կողմից կուրապաղատ է ճանաչվել Աթալարիկոսի դավադրության միջադեպից հետո՝ 637—638 թվականներին։ Քանի որ արձանագրության մեջ Սահառունին հիշատակված է հունական տիտղոսներով, ուրեմն խոսքն այս շրջանի՝ այսինքն Հերակլ կայսեր քսանութերորդ-երեսուներորդ տարիների ժամանակամիջոցի մասին է, որտեղ ՈՐԴԻ վերջածանցը պետք է ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴԻ, կամ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ պահպանված հատվածը լինի։ Որպես ապացույց Հ. Օրբելին բերում է նաև այն հանգամանքը, որ արձանագրությունը թվագրված է ոչ թե Խոսրով Փարվեզի գահակալության տարիներով, այլ Հերակլի, երբ Շիրակը գտնվում էր բյուզանդական տիրապետության տակ։ Սակայն այս մեկնաբանությունը հանդիպում է մի էական առարկության։ Արձանագրությունների թվագրման հարցում ժամանակին այդպիսի նկատառումներ չեն եղել։ Նրանց թվականները գրվել են միանգամայն կամայականորեն։ Այդպիսի օրինակներ կարելի է հանդիպել նաև Շիրակում։ Ժամանակով իրար բավականին մոտ՝ Բագարանի 631 թվականի և Ալամանի՝ 637 թվականի եկեղեցիների շինարարական արձանագրություններից մեկը թվագրված է Խոսրովի, իսկ մյուսը՝ Հերակլի գահակալության տարիներով։

Ս. Մնացականյանը գտնում է, որ Բագարանի արձանագրության մեջ նկատի ունի Խոսրովի թագավորության շրջանը, որովհետև Շիրակն այն ժամանակ Խոսրովի տիրապետության տակ էր, իսկ երկրորդ թվականը հաշված է Հերակլի տարիներով, որովհետև Շիրակն արդեն անցել էր բյուզանդացիներին[42]։ Սակայն այլ է պատմական իրողությունը։ Դեռևս 623 թվականին Հերակլն արդեն նվաճել էր Հայաստանը[43], որը մնաց Բյուզանդիայի գերիշխանության տակ մինչև արաբների երևալը։ Անկարելի է մտածել, որ 624 թվականին, եկեղեցու հիմնադրման ժամանակ, արձանագրության հեղինակները չեն իմացել, որ արդեն մեկ տարի է, ինչ Բյուզանդիայի իշխանությունն է հաստատվել։ Վերջապես, արձանագրությունը շարադրվել է 631 թվականին, երբ Շիրակը վաղուց արդեն Բյուզանդիայի ձեռքին էր։ Ինչ վերաբերում է Դավիթ Սահառունուն, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրա նաև այլ բնութագրերին։ Արձանագրության մեջ նա հիշատակված է «Հայոց և Ասորւոց» սպարապետի պաշտոնով, որը 630-ական թվականներին ստանալ չէր կարող, քանզի վաղուց արդեն գոյություն չունեին այդ ռազմաբեմերը և նման անվանումներով սպարապետության պաշտոնավորումն անիրական էր ու զուրկ որևէ իմաստից։ Այդ պաշտոնը Սահառունին կարող էր ստանալ միայն մինչ իրանաբյուզանդական պատերազմի ավարտը, երբ զինաբաշխումների թատերաբեմը Հայաստանն ու Ասորիքն էին։ Անհրաժեշտ է նկատի առնել նաև, որ Սահառունին ավելի վաղ շրջանում՝ Փոկասի գահակալության տարիներին արդեն մարզպան եղել է մարզպան[44]։ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե մարզպան

[42] Տե՛ս Ս. Մնացականյան, Ե՞րբ է կառուցվել Մրենի տաճարը, ՊԲՀ, 1969, № 3, էջ 156։

[43] Տե՛ս Սեբեոս, էջ 93, Լեո, Հայոց պատմություն, 2, էջ 245—248, „История византии“, I, стр. 361, 365.

[44] Տե՛ս Ասողիկ, էջ 36։

Սահառունուն, որպիսին նա համարվում էր Հայաստանի իրանական հատ-
վածում, այլ կյուրապաղատ Սահառունուն, այսինքն այն ժամանակաշրջանին,
երբ իշխանապետության պաշտոնը նրան շնորհեց Հերակլ կայսրը։ Սակայն
մարզպանին «Հայոց և Ասորւոց» սպարապետի պաշտոններր շնորհելու
դեպքում կայսրը բնականաբար շնորհելու էր նաև կյուրապաղատությունը,
այսինքն՝ ինքն էլ իր հերթին էր ճանաչելու նրան որպես կառավարիչ,
մանավանդ, նկատի առնելով Սահառունու քաղաքական կողմնորոշումը
հօգուտ Բյուզանդիայի, իսկ այդ մասին մատծել են տալիս պատմական
տեղեկությունները։ Մամիկոնյանը գրում է. «զորս պարսիկ լեզուաւ գտաննին,
սատակ էին»[45]։ Հայաստանի նշանավոր իշխաններին իրենց շահերին
ծառայեցնելու նպատակով ճանաչում և պաշտոններ շնորհելը երկու այդ
պետությունների կողմից միաժամանակ հազվադեպ չի եղել։ Հայ իշխանների
քաղաքական կողմնորոշումը սովորաբար թելադրվել է այն պետության կողմը,
որն առավել արտոնություններ, տիտղոսներ ու պաշտոններ էր շնորհում,
հատկապես այդ խառը շրջանում, երբ Հայաստանը զրկված էր իր պետական
անկախությունից և ենթարկվում էր կրոնական հալածանքի՝ պարսիկների
կողմից։

Սահառունու քաղաքական կողմնորոշման տատանումները սերտորեն
կապված են եղել Փոկասի (602—610) գահակալության և, մասնավորապես,
Նրա կատարած հասարակական վերափոխությունների հետ։ Այդ վերափո-
խությունները հակամարտության տեղիք տվեցին խոշոր հողատեր նախա-
րարների շրջանում[46], որը գլխավորեց Աֆրիկայի փոխարքա Հերակլը։ Նրա
հաղթանակը 610 թվականին և Փոկասի բռնապետության թոթափումը,
հասկանալի է, որ գոհունակությամբ պետք է ընդունվեր նաև հայ նախարար-
ների կողմից։ Հերակլի հաղթական երթը քաղաքացիական կռիվներում մեծ
հույսեր էր ներշնչում, որ իրանա-բյուզանդական ռազմաբեմում ևս բեկում
կառաջանա։ Ակներևաբար այս հաղթանակի արձագանքն էր, որ Մրենի
տաճարի արձանագրության մեջ կայսրն անվանվել է «բարեհաղթող թագա-
վոր», չնայած նրա վիճակն այդ շրջանում այնքան էլ կայուն չէր։ Այստեղ
որևէ անաքրոնիզմ չկա, որովհետև խոսքը վերաբերում է Փոկասի դեմ
տարած հաղթանակին։ 638 թվականին նա «բարեյաղթող» չէր անվանվում։
Հաղթանակը կայացել էր տարիներ առաջ և այս շրջանի համար ավելի
բնութագրական էին «բարեպաշտ» և «աստուածապահ» մեծա[illegible]րը,
որոնք հանդիպում են Ալամանի 637, և Բագարանի 639 թվականների [illegible]լած
արձանագրություններում։

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տարիներ անց,
երբ Սահառունին մեղադրվում էր Աթալարիկոսի դավադրությանը մասնակ-
ցելու մեջ հավանաբար ձգտելով վերականգնել իր վաղեմի իրավունքները և
սպանում իրեն ձերբակալող բյուզանդական զորավար Մժեժ Գնունուն,
Հերակլը պատժելու փոխարեն, նրան նորից վերականգնում է իր պաշտոնում։

Բնական է, որ Սահառունու մարզպանությունը խոսրովը երկար չի
հանդուրժել, որովհետև կայսեր և մարզպանի մերձեցումը չէր կարող վրիպել
նրա տեսադաշտից կամ անուշադրության մատնվել։ Թեպետ Սահառունու
մարզպանության շրջանի վերաբերյալ ժամանակագրական ստույգ տվյալներ

45 Տե՛ս Մամիկոնեան, *Պատմութիւն Տարօնոյ*, Վենետիկ, 1832, էջ 227։
46 Տե՛ս „История Византии", I, стр. 359—360.

մեզ չեն հասել, սակայն հայտնի է, որ Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ՝
615—628 թվականներին, այսինքն իրանա-բյուզանդական պատերազմների
երկրորդ շրջանում, մարզպանի պաշտոնը Հայաստանում թափուր էր, իսկ
հետագայում՝ 628 թվականից երկրի մարզպանը Սմբատ Բագրատունու որդի
Վարազ Տիրոցն էր։

Ինչպես տեսնում ենք, պաշտոնների և տիտղոսների առկայությունը
տեղիք է տալիս ենթադրելու, որ Դավիթ Սահառունին իր մարզպանության
շրջանում վայելել է նաև կայսեր հովանավորությունը։ Պատմիչների վկայու-
թյունները ոչ միայն հաստատում են այս, այլև լրացուցիչ ստույգ և որոշակի
տեղեկություններ են տալիս նաև ժամանակի, անգամ թվականի վերաբերյալ։

Եթե արձանագրության վնասվածությունը և պատմական կցկտուր
տեղեկությունները հնարավորություն չեն տալիս ենթադրություններից ավելի
առաջ անցնել, ապա պատմիչների հաղորդած վկայությունները տաճարի
կառուցման վերաբերյալ շատ ավելի հավաստի են և մեծ հետաքրքրություն
են ներկայացնում։ Գանձակեցին Մրենի տաճարի կառուցման մասին
հաղորդում է. «Դաւիթ Սահառունի մարզպան լեալ ամս երեսուն։ Յա-
ւուր սորա ի ԿԲ (613) թուականին եղև շինուած կաթողիկէին Մրենոյ»[47]։

Մոտավորապես նույն ժամանակով է թվագրում եկեղեցին նաև Սամուէլ
Անեցին՝ «ՈԺԵ (615)։ Շինուած կաթուղիկէին Մրրենոյ»[48]։

Դրասխանակերտցին կառուցման տարեթիվը չի նշում, այլ միայն կրկնում
է Սեբեոսի տեղեկությունը. «Ի հրամանէ նորուն (Սահառունու Ա. Մ.) շինէր
իսկ եկեղեցին գեղեցկայարմար որ ի քաղաքագեղն Մրեն»[49]։

Ինչպես տեսնում ենք, Գանձակեցին ոչ միայն չի հիշատակում կյուրապա-
ղատության հանգամանքը, այլև շեշտում է, որ կառուցումը տեղի է ունեցել
մարզպանության շրջանում, նշելով կառուցման որոշակի թվականը՝ 613։
Ս. Մնացականյանը գրում է, որ Գանձակեցին մարզպան ասելով առհասարակ
կառավարիչ ի նկատի ունի. «Այսպես նրա մոտ մարզպան են և Թոդորոս
Ռշտունին, և Համազասպը և Գրիգոր Մամիկոնյանը»։ Պետք է ասել, որ
պատմիչը չի սխալվել, դրանք եղել են մարզպաններ, իսկ մարզպանները
եղել են կառավարիչ։ Եթե Ս. Մնացականյանը ցանկանում է ասել, թե Գան-
ձակեցին մարզպան բառի տակ կյուրապաղատ է հասկացել, այդ հնարավոր
է, միայն պետք է նկատի ունենալ, որ խոսքը վերաբերում է 613 թվականի
մարզպան-կյուրապաղատին։

Այս վկայությունն արձանագրության հիշատակած պատրիկ և կյուրապա-
ղատ տիտղոսների հետ համեմատելիս անխուսափելիորեն առաջանում է մի
անմիջական հետևություն՝ եթե Գանձակեցին վկայում է, որ 613 թվականին՝
Սահառունու մարզպան եղած ժամանակ է կառուցվել եկեղեցին, իսկ արձա-
նագրությունը հաղորդում է, որ նա կյուրապաղատ էր և «Հայոց ու Ասորւոց»
սպարապետ, ապա միանգամայն պարզ է դառնում, որ 613 թվականին՝
մարզպան եղած ժամանակ Սահառունին նշանակվել է Հայաստանում և
Ասորիքում գործող զորաբանակների սպարապետ և ստացել կյուրապաղատ
տիտղոսը Հերակլից։ Վերջապես, կարևորը թվականն է, իսկ այդ մասին
վկայում են երկու պատմիչ։

47 Գանձակեցի, էջ 53։
48 Ս. Անեցի, էջ 78։
49 Դրասխանակերտցի, էջ 80։

Դժվար է համաձայնել Հ. Օրբելու և Ս. Մնացականյանի այն տեսակետի
հետ, որ Գանձակեցու հաղորդած 613 թվականը իբր վերաբերում է եկեղեցու
հիմնադրմանը և ոչ ավարտին։ Վավերագրական պրակտիկայում դա կատա-
րելապես անիմաստ տեղեկություն է, եթե նա առանց ավարտի տարեթվի
տեղեկացնում է միայն հիմնադրման տարեթիվը։ Ամբողջ հայ մատենագրա-
կան և վիմագրական նյութի մեջ այդպիսի օրինակ չկա, որովհետև վավերա-
գիրը կազմվում է ավարտի և ոչ կառուցումը սկսելու ժամանակ։
Գանձակեցին ասում է. «եղեւ շինուած» և ոչ. «եդ հիմունս» կամ այլ
նույնիմաստ մի արտահայտություն։ Ի դեպ, Գանձակեցու վկայած թվականը
ճշտորեն տեղավորվում է արձանագրության պակասավոր հատվածի այն
շրջանակներում, ուր ամենահավանականն է նրա համար։
Ելնելով պատմական իրադարձությունների հավանական նախադրյալնե-
րից ու հիմք ընդունելով Գանձակեցու և Ս. Անեցու որոշակի վկայությունները,
արձանագրության թվականը կրող կորած քարի բովանդակությունը կարելի
է կարդալ. [ՅԱՄԻ ՆՐԲ]ՈՐԴԻ։
Այսպիսով, արձանագրության այն հատվածը, որ փորագրված է եղել
առաջին քարի վրա և ունեցել է միայն 6—8 տառ տեղադրելու տարածություն,
այժմ կարելի է վերականգնել առանց նրա սահմանները խախտելու։ Առաջին
տողը լրացվում է 7, երկրորդը՝ 7 և երրորդը՝ 6 տառով։ Ս. Մնացականյանը,
նկատի առնելով վերջին տողերի անավարտ լինելը, գտնում է, որ առաջին
տողը սկզբից և երրորդ տողը վերջից՝ երկարացված են եղել[50]։ Սակայն
վերջին տողը կարող էր երկարել անկախ գրչի կամքից, իսկ սկզբում նա
որևէ առիթ չէր կարող ունենալ սահմանը խախտելու համար։
Ամբողջացնելով արձանագրության մեջ հաղորդված պատմական անց-
քերի և անձանց վերլուծությունը, երկու խոսքով անդրադառնանք նաև
Ներսեհ Կամսարականին, որի տան բարեխոսության համար կառուցվել է
Մրենի հոյակապ եկեղեցին։ Ներսեհ Կամսարականը VII դարի առաջին կեսի
անձնավորություն է։ Այն հանգամանքը, որ նրա ինչպես և Կամսարական-
ների տան եպիսկոպոս Թեոփիլոսի անունները հիշատակված են նաև
Ալամանի 637 թվականի արձանագրության մեջ, մեր մեկնությանը բոլորո-
վին չի հակասում։ Ժամանակահատվածն այնքան էլ մեծ չէ։
Արձանագրության մեջ պարզ չէ, թե ով է շինության իսկական նա[...]տա-
վորողը։ Այն գրված է երրորդ դեմքով և այդ երրորդի անունը չի հ[...]ակ-
ված։ Դրասխանակերտցին հաղորդում է, որ եկեղեցին կառո[...] է
Սահառունու հրամանով[51]։ Նույնն է հավաստում նաև Վարդան Բարձրբերդ-
ցին[52], իսկ Գանձակեցին նշում է, որ եկեղեցին կառուցվել է Սահառունու
ժամանակ։ Ուշագրավ է որ արձանագրությունը ևս Սահառունուն, ինչպես
և Ներսես Կամսարականին հիշատակում է միայն ժամանակագրության
առումով։ Սակայն վերջինս ունի մի առավելություն՝ շինությունը կառուցված
է նախարարական տան բարեխոսության համար։ Ալիշանը ենթադրում է, որ
Մրենն այդ ժամանակաշրջանում Սահառունիների սեփականությունն է
եղել։ Սակայն այս դեպքում էլ անհասկանալի է դառնում, թե ինչո՞ւ պետք

50 Տե՛ս Ս. Մնացականյան, Ե՞րբ է կառուցվել Մրենի տաճարը, էջ 159, 160։
51 Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 80։
52 Բարձրբերդցի, էջ 87։

է Սահառունին իր սեփական տիրույթում Կամսարականների տան բարեխո-
սության համար եկեղեցի կանգնեցներ։ Տվյալ դեպքում կարևորն այն է, թե
ինչպես է կապվում Մրենը Սահառունու հետ, որպես նրա գործունեության
վայր։ Եկեղեցու մուտքի բարավորին պահպանված բարձրաքանդակները,
Ալիշանի կարծիքով, նվիրված են Դավիթ Սահառունուն[53]։ Գ. Հովսեփյանը
նկատի ունենալով քանդակների տարազը, ենթադրում է, որ պատկերվել են
Կամսարական իշխանները և եպիսկոպոսը[54]։ Առավել հիմնավոր է թվում Բ.
Առաքելյանի կարծիքը, որի համաձայն դրանք Դ. Սահառունու և Ներսեհ
Կամսարականի պատկերաքանդակներն են[55]։ Վճռորոշ նշանակությունը թերևս
այն է, որ եկեղեցին կառուցվել է Կամսարականների նախարարական տան
բարեխոսության համար։ Սահառունու հրամանի մասին պատմիչների
վկայությունն այստեղ պետք է հասկացվի որպես վարչական միջոցառում,
իսկ կառույցի նախաձեռնողն ու նպաստավորողը, անկասկած, Ներսեհ Կամ-
սարականն է։ Ահա այդ է պատճառը, որ Սահառունիների կալվածքում
կառուցված եկեղեցին նվիրված է նախ Կամսարականների տան և ապա՝
Մրենի և ամբողջ ազգի բարեխոսությանը։ Եվ քանի որ տվյալ դեպքում
աջակցության ու նպաստավորման պարագաները հնարավորություն չեն
տվել առանձնացնելու նրա շինողի անունը, ուստի այն գրվել է երրորդ դեմ-
քով, իսկ նրանք հիշատակվել են ժամանակագրության տեսանկյունով, որը
ոչ պակաս պատվաբեր է եղել։
Այսպիսով, պատմիչների վկայությունները և արձանագրության ուսում-
նասիրությունը բերում են այն եզրակացության, որ Մրենի կաթողիկեն
կառուցվել է 613 թվականին, Դավիթ Սահառունու հրամանով և Ներսեհ
Կամսարականի միջոցներով։
Բագավան.—Բագավանը գտնվում է պատմական Բագրևանդ գավառի
հարավ-արևելյան մասում, «Նպատ լեռան հյուսիս-արևելյան ստորոտին,
Արածանի գետի ձախ ափին»։ Մինչ քրիստոնեության տարածումը Բագա-
վանը Հայաստանի ամենանշանավոր հեթանոսական սրբավայրերից մեկն
էր[56]։ Այդտեղ եղած հեթանոսական տաճարների և նրանց տեղում կանգնեց-
ված առաջին եկեղեցիների մասին արդեն խոսվել է։ Եկեղեցին տեսնելու
հնարավորություն չունենալու պատճառով այժմ անհնար է դատողություն
անել տեղում հնագույն շենքի մնացորդների գոյության կամ բացակայության
մասին։ Սակայն շինության բազիլիկ հորինվածքը և գրականությունից մեզ
հասած տեղեկությունները թույլ են տալիս մտածելու, որ VII դարում այս
եկեղեցին վերակառուցվել է գմբեթավոր բազիլիկի։ Արտաքին հարդարանքը
զուսպ է։ Զևավորված են միայն մուտքերի կամարները և պատուհաններից
մի քանիսի պսակները։
Շինարարական արձանագրությունը փորագրված է մեկ տողով։ Սկիզբը
գտնվում է հարավային պատի արևելյան հատվածում, այնուհետև գոտե-

53 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 138, նաև S. Der Nersissian, Armenia and Byzantine
empire, S. 89.
54 Տե՛ս Գ. Հովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Ա, Վա-
ղարշապատ, 1928, էջ 222։
55 Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դդ., էջ 61, նաև
Մ. Սարգսյան, Մրենի տաճարի հիմնադիրների պատկերաքանդակները, ՊԲՀ, 1966, № 4,
էջ 241—250։
56 Տե՛ս Խորենացի, էջ 186, 201, 216։

վորելով արևելյան պատն ամբողջությամբ՝ ավարտվում է հյուսիսային խորանի հյուսիսային նիստի վրա։ Լավագույն հրատարակությունը Հ. Օրբելունն է[57]։ Օրբելուց առաջ նկատելի անճշտություններով այն հրատարակել են Շահխաթունյանցը, Ալիշանը և Բրոսեն[58]։

Արձանագրությունն ավանդում է, որ եկեղեցու շինությունն սկսվել է Հերակլ կայսեր թագավորության 21-րդ տարում՝ 631 թվականի հրոտից ամսվա 30-ին (հունիսի 15) և ավարտվել 29-րդ տարում՝ 639 թվականի նավասարդի 20-ին (օգոստոսի 30-ին), ուրբաթ օրը։

Հ. Օրբելին արձանագրությունը հրատարակել է հետևյալ վերծանությամբ՝

Ա. ՔՍԱՆ ԵՒ ՄԻ ԱՄԻՈՅՆ ԱԾԱՊԱՀ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐ[Ո]ՏԻՑ [ԱՄՍՈՅՆ
ՈՐ Ա]ՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԷՐ ԵՍ [ՏԷՐ ԵԶՐԱՍ Հ]ԱՅՈ[Ց ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՄԲ
ՎԱ]ՆԱՅ ԵՐԷՑ ՀԱՃՈՅԻՒՔՆ ԱՅ
Բ. ՀԻՄՆ ԱՐԿԻ ՍՐԲՈ—
Գ. Յ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ Ի ՔՍԱ—
Դ. [Ն ԵՒ ԻՆՆԵ]ՐՈՐԴ ԱՄԻ Ն-
Ե. ՈՅՆ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱ—
Զ. ԻՈՐԻ ՅԱՄՍԵԱՆ ՆԱՒԱՍԱՐԴԻ, ՈՐ ԱՒՐ ՔՍԱՆ ԷՐ ՅԱՒՈ—
Է. Ի ԻՐՆ ՈՒՐԲԱԹ ԵՂԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՆՈՅՆ ԳՈՐԾ—
Ը. ՈՅՍ ՏԵՂԻՈՅՍ ՎԶԵՆԱԿԱՒ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱՒՔ
Թ. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵ—
Ժ. ԱՄԲ ԻՍՐԱՅԷՂԻ ԳՈՌ—
ԺԱ. ԱՂՃԵՑԻՈՅ[59]

Արձանագրությունը վնասված լինելու պատճառով եկեղեցու պատվիրատուի անունը չի պահպանվել։ Հ. Օրբելին նկատի ունենալով ԱՅՈ տառերի առկայությունն, այդ հատվածը վերականգնում է ՀԱՅՈՑ և տարեթվի հիման վրա ենթադրում, որ այստեղ եղել են ԵԶՐԱՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ բառերը։ Պահպանված մասի համաձայն եկեղեցու կառուցողը եղել է վանքի երեցը։ Համարել է արդյոք Եզրն իրեն այս վանքի երեց, ինչպես Հ. Օրբելին է ասում, թե՞ խոսքը մեկ այլ անձնավորության մասին է։ Ս. Մնացականյանը մանրամասն ուսումնասիրելով սկզբնաղբյուրները, գտնում է, որ Եզրն իր մինչ կաթողիկոսական շրջանում կարող էր միայն Դվինի ս. Գրիգոր ե[illegible]ու փակակալը լինել և այդ իսկ պատճառով չէր կարող լինել Բա[illegible]նի ս. Գրիգոր եկեղեցու երեցը, ուստի և կառուցողը[60]։ Ս. Մնացակ[illegible]անի համար հիմք է ծառայել Մ. Այրիվանեցու հետևյալ տեղեկությունը. «Շինողն Ներսես շինէ զառապարի սուրբ Գրիգորն՝ զզարմացուցիչն տիեզերաց, որ քակեցաւ ի տաճկաց»[61]։ Այս տեղեկության հիման վրա Ս. Մնացականյանն

57 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 455—463, 371—387.

58 Տե՛ս Յ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն...*, Բ, էջ 350։ Տե՛ս Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 529։ Տե՛ս *Brosset*, Notice sur le plus ancienne inscriptions arménienne connue, BC HPH, 1887, XIV col. 118—125, 168 և MA, III, 1857, p. 1—11, նաև *I. Bartolomaei*, Lettres numismatique et archeologique, SPB, 1859, p. 85—88.

59 *И. А. Орбели*, Избр. труды, стр. 386.

60 Տե՛ս Ս. Մնացականյան, *Բագավանի տաճարի շինարարական արձանագրության վերծանման շուրջը*, ՊԲՀ, 1964, № 2, էջ 218—220։

61 Մ. Այրիվանեցի, *Պատմութիւն հայոց*, Մոսկվա, 1860, էջ 50։

առաջարկել է նոր վարկած։ Նրա կարծիքով արձանագրության վնասված մասում եղել է Ներսես Գ-ի անունը և, որ եկեղեցին նա կառուցել է մինչև կաթողիկոս դառնալը։ Այս հատվածը Ս. Մնացականյանն այսպես է կարդում.
ԵՍ [ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՏՅԱՅՈ[Ց ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՄԲ ՎԱ]ՆԱՅ ԵՐԵՑ։
Եթե Եզրի մասին Սեբեոսը վկայում է, որ նա եղել է ս. Գրիգորի փակակալ (չնշելով ո՞ր ս. Գրիգորի), ապա Ներսեսի վերաբերյալ նման որևէ ակնարկ անգամ չկա։ Այս տեսակետը գլխավորապես հիմնավորված է այն կարծիքի վրա, որ VII դարից հայտնի էին երկու ս. Գրիգոր՝ Դվինի և Բագավանի և, որովհետև ժամանակով ավելի համապատասխան է Բագավանի եկեղեցու շինությունը, ուստի Դվինի ս. Գրիգորը բացառվում է, մանավանդ, որ հայտնի է նրա կառուցողը։ Սակայն Մ. Այրիվանեցու տեղեկությունը նույնպես հիմք ծառայել չի կարող, քանզի խոսքը բոլորովին այլ շինության մասին է, որը քանդել են արաբները։ Այդ շինությունը Զվարթնոցն է։ Համոզվելու համար առաջարկում ենք ուշադրություն դարձնել նաև Վարդան Բարձրբերդցու տեղեկության վրա, որտեղ նույնը կրկնելով ավելացված է Ներսեսի շինարարական գործունեության նկարագիրը։ Եզրի մահից հետո Ներսեսը «Թաղէր, և ի նմին տեղւոջ շինեա զհրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի (Դվինում—Ս. Մ.)։ Շինէ տաճար սրբութեան և ի վերայ Վիրապին և արկանէ հիմն տաճարի մեծի յանուն սրբոյն Գրիգորի յառապարի, և դնէ ի ներքոյ սեանցն չորից զնասարակ նշխարս սրբոյն Գրիգորի»[62]։
Բագարանի եկեղեցին ունեցել է մի քանի անուն։ Համաձայն Ագաթանգեղոսի և Բուզանդի այն նվիրված էր ս. Հովհաննեսին և Աթանագինեսին[63] և քանի որ կառուցվել է Լուսավորչի կողմից, ըստ Փարպեցու, կոչվել է ս. Գրիգոր[64]։ Ինչ վերաբերում է վերոհիշյալ պատմիչների հիշատակած ս. Գրիգորին, ապա այդ եկեղեցին այդպես է կոչվել Լուսավորչի նշխարներն շինության չորս սյուների տակ դնելու պատճառով, իսկ այդ կառույցը անվիճելիորեն եղել է Զվարթնոցը։
Հ. Օրբելու համոզմամբ արձանագրության պակասող հատվածը միտումնավոր է ոչնչացվել՝ Եզրի դավանափոխության պատճառով[65]։ Արձանագրությունը պատճենավորելիս նույն տպավորությունն է ստացել նաև Բարտոլոմեն[66]։ Մեր կարծիքով ավելի հավանական է, որ Եզրն է եղել այս եկեղեցու փակակալը և կառուցողը։
Բագավանի եկեղեցու արձանագրության մեջ հիշատակվել է ճարտարապետի՝ Իսրայել Գոռաղճեցու անունը։ Ինչպես պարզաբանել են Հ. Օրբելին և Ս. Բարխուդարյանը «վարդապետութեամբ» բառը արձանագրության մեջ պետք է «վարդպետությամբ» հասկանալ և ըմբռնել վարպետ-ճարտարապետ իմաստով[67]։ Այս արձանագրությունը ճարտարապետի անունը ավանդող ամենահին վավերագրերից մեկն է։ Իսրայել Գոռաղճեցու վերաբերյալ ուրիշ վկայություններ չկան։

62 Բարձրբերդցի, էջ 93, 94։

63 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 435, Բուզանդ, էջ 250—252։

64 Տե՛ս Փարպեցի, էջ 139, 141։

65 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 379.

66 Տե՛ս *I. Bartolomaei*, Lettres numismatique et archeologique, 1859, p. 85.

67 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 387. Ս. Բարխուդարյան, *Միջնադարյան* էջ 18, 26, 27։
հայ ճարտարապետներ...

VII դարում եկեղեցու վերաբերյալ փորագրվել է ևս մի արձանագրություն, որը, սակայն, եղծված լինելու պատճառով մնացել է անընթեռնելի[68]։

Հ. Օրբելու վկայությամբ եկեղեցին բազմիցս նորոգվել է։ Գմբեթը քանդվել է 1912 թվականին և վերաշինվել ցածրադիր թմբուկով[69]։

Գայանե.—Գմբեթավոր բազիլիկների նորատիպ օրինակներից հնագույնը Գայանեի եկեղեցին է էջմիածնում։ Այստեղ առաջին անգամ բազիլիկ հորինվածքը համատեղվեց հավասարակողմ համաչափությունների հետ, ստեղծելով նոր, ինքնատիպ ճարտարապետական կերպար։

Նկատի ունենալով այդ տիպի գմբեթավոր բազիլիկները Ն. Տոկարսկին գտնում է, որ բազիլիկի վերափոխումը գմբեթակիր շինության մեկ անգամ ևս ապացուցում է, որ կենտրոնագմբեթ եկեղեցիները Հայաստանում կազմավորվել են տեղական ավանդույթների հիման վրա և, ամենակարևորը, «Հայաստանում խաչաձև հատակագծով գմբեթակիր տիպի ձևավորման ընթացքն ավարտվել էր այն ժամանակ, երբ Բյուզանդիայում նոր էին կառուցվում մեզ հայտնի «բարդ խաչի» տիպի առաջին եկեղեցիները»[70]։ Բազիլիկի գմբեթավորման հետևանքով առաջացած ճարտարապետական ձևերը նոր հորինվածքների կազմավորման գործում նշանակալի դեր խաղացին և հայ ճարտարապետության ստեղծանական զարգացման մեջ նրա կարևոր մասը հանդիսացան։

Եկեղեցու կառուցման մասին Դրասխանակերտցին հաղորդում է. «Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ՝ քակեալ զայն, ևս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց՝ կոփածոյ քարամբք և կրով ձուլելով. և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտաւն սատուածային խորանին»[71]։ Հետաքրքիր է «արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց» արտահայտությունը, որով պատմիչն, անկասկած, նկատի ունի միաբանության բնակելի տները։ Այստեղից երևում է, որ Գայանեի եկեղեցու կառուցմամբ տեղում վանք է հիմնադրվել։ Պարզվում է նաև, որ եկեղեցու կառուցումից առաջ տեղում եղել է մեկ այլ շինություն։ Նախնական այդ շինության վերաբերյալ բավականին ընդարձակ նկարագրություն ունի Ագաթանգեղոսը[72]։

Ագաթանգեղոսի տեղեկությունները թեև շատ մանրամասն են, սակայն վերաբերում են միայն շինարարական աշխատանքներին և բոլորովին չեն բնութագրում շենքի ճարտարապետությունը։ Հայտնի է միայն, որ [illegible] եղել է դամբարան-մատուռ, ըստ երևույթին՝ կիսագետնափոր՝ ներկայիս եկեղեցուց բոլորովին տարբեր տիպի շինություն։ Եզրը նրա տեղում կառուցել է նոր եկեղեցի, չօգտագործելով հին շենքի մնացորդները։ Դրասխանակերտցին կրկնելով Սեբեոսի նկարագրությունը Հռիփսիմեի վկայարանի մասին նույնը վերագրում է նաև Գայանեի նախնական դամբարանին, համարելով այն մատուռ «զոր երբեմն խրթին և մթին էր»։

68 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 387—390.

69 Տե՛ս նույն տեղում, էջ 456։

70 *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 99.

71 Դրասխանակերտցի, էջ 80։

72 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 385։

XVII դարում եկեղեցին նորոգվել է։ Թե ինչ վիճակում է եղել շենքը մինչ այդ նորոգումը նկարագրում է Դավրիժեցին[73]։

Օձուն.—Հին և համեմատաբար նոր ձևերի անաղարտ վիճակով գմբեթավոր այս բազիլիկը տարբերվում է մյուսներից։ Պահպանվել է արտաքին սրահը։ Հինը հատկանշող առանձնահատկություններից են ներսում պահպանված ոչ միայն ենթագմբեթային չորս, այլև արևմտյան զույգ մույթերը։ Խիստ հնաձև այս առանձնահատկություններին զուգընթաց Օձունի եկեղեցին ունի նաև VII դարին առավել բնորոշ մի շարք մանրամասներ, որոնց մեջ ամենացայտունը ութանիստ գմբեթն է՝ իր ավարտուն կառուցողական ձևերով։ Ահա հենց սա է պատճառը, որ ուսումնասիրողները եկեղեցու թվագրման հարցում որոշակի համոզման չեն հանգել։ Ելնելով արտաքին սրահի առկայությունից Թ. Թորամանյանը եկեղեցին նախ թվագրել է V դարով, իսկ հետագայում փոխել այդ կարծիքը[74]։ Ն. Տոկարսկին գրում է. «Ճարտարապետական ձևերը և հարդարանքի բնույթը հնարավորություն են տալիս միանգամայն վստահ կերպով այս հուշարձանը վերագրել VII դարի առաջին կեսին, թերևս՝ և ավելի վաղ ժամանակների»[75]։ Բոլոր դեպքերում պարզ է, որ եթե շինության մեջ առկա է հինը, ապա նորը, բնականաբար, պետք է դիտվի որպես հետագա վերաշինության հետևանք։

Եկեղեցու շինության մասին հիշատակություն է թողել միայն Գանձակեցին համառոտ. «(Յոհան Օձնեցի) Շինէ և եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձուն, որ հուպ է առ քաղաքն Լոռէ, և իւր ընտրեալ տեղի կեցին և այն էլ չափազանց բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ անդ դադարէր»[76]։ Տեղեկությունը թվագրված է՝ 718, Հովհան Օձնեցու (717—728) մահվանից 10 տարի առաջ։ Գանձակեցու թողած այս հաղորդումն ուսումնասիրողների կողմից (VIII դար) վստահության չի արժանացել, մասնավորապես իր թվագրության պատճառով։ Բոլոր դեպքերում Գանձակեցու տեղեկությունը կարող է վերաբերել եկեղեցու վերակառուցմանը և ոչ մի դեպքում հիմքից շինելուն։

Նկատի ունենալով ճարտարապետական ձևերը, անհնար է հուշարձանն ամբողջությամբ ոչ միայն VIII, այլև VII դարով թվագրելը, որովհետև, ինչպես տեսանք Դվինի ս. Գրիգորի և էջմիածնի Մայր տաճարի օրինակներում, արտաքին սրահի այս տիպը V դարից ավելի ուշ կառուցված լինել չի կարող։

Վերջերս ուսումնասիրվեցին նաև եկեղեցու վիմագրական նյութերը[77]։ Ուսումնասիրողների մոտ բավականին մեծ է հետաքրքրությունը արևելյան պատի խոսքը վերաբերում է հարավային մուտքի ճակատի և արևելյան պատի արձանագրություններին, որոնք իրենց տառաձևերով, անկասկած, վաղ միջնադարյան են։ Մեր կարծիքով այս արձանագրության նկատմամբ։

73 Տե՛ս Դավրիժեցի, էջ 250—252։

74 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 232, 210, 244։

75 *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 100.

76 Գանձակեցի, էջ 70։

77 Գ. Շախկյան, Օձունի եկեղեցու վաղ շրջանի արձանագրությունները, «Լրաբեր» 1972, № 9, էջ 90—101, Պ. Մուրադյան, Դիտողություններ Օձունի արձանագրությունների ժամանակի մասին, ՊԲՀ, 1974, № 4, էջ 123—127։ Ա. Շահինյան, Օձունի տաճարի կառուցման ժամանակի մասին, «Լրաբեր», 1973, № 6, էջ 69—81։

գրությունը շինարարական չէ և, առհասարակ, լրիվ չի փորագրվել։ Բացակայող հատվածներում ուշադիր զննելով քարի մակերեսը, մենք համոզվեցինք, որ այն հողմնահարված չէ և այնտեղ արձանագրություն առհասարակ չի փորագրվել։ Այդ են ապացուցում նաև ՈՂՈՐՄԵՍ. բառի վերջին երեք տառերը, որոնք միայն գծագրել են և այդպես էլ թողել չփորագրված։

Եկեղեցու շինարարական վավերագիրն իրականում բոլորովին այլ արձանագրություն է, փորագրված հարավային մուտքի բարավորի վրա.

ԹՈՎՄԱՍ

ՋԱՅՍ ԲԱՐՈԽՈՐ
ԵՍ ԹՈՎՄԱՍ ԲԵՐԻ

Թովմասը մուտքի բարավորը բերող, քարերը մշակող, խաչաքանդակը պատրաստող և տեղում ագուցող վարպետն է։ «Բերի» այստեղ պետք է հասկանալ ինքը քարը պատրաստելու, բերելու և տեղում կառուցելու իմաստով։ Թովմաս անվան մեծատառերով և մեկուսի տեղադրումը վկայում է, որ այդ բարավորը պատրաստողը ինքն էլ եղել է շենքի ճարտարապետը։ Դա այն անձնավորությունն է, որը Հովհան Օձնեցու պատվերով հնավուրց բազիլիկ եկեղեցին վերակառուցել և դարձրել է գմբեթավոր, իսկ հարավային մուտքի բարավորն էլ պատրաստել անձամբ։

Ակոռի.—Ակոռի գյուղն ընկած է Արարատ լեռան լանջին։ Գյուղի մեջ և շրջակայքում կան երկու եկեղեցիներ ս. Անդրեաս և ս. Հակոբ։ Ցավոք, այս եկեղեցիների վերաբերյալ մանրամասն նկարագրությունները քիչ են։ Հայտնի է, որ երկուսն էլ գմբեթավոր շինություններ են։ Դրանցից մեկի՝ ս. Անդրեասի հատակագիծը հրատարակել են Ալիշանը[78] և Ստրժիգովսկին[79]։ Եկեղեցին գմբեթավոր բազիլիկ է. պահպանվել են միայն արևմտյան կողմի զույգ մույթերը։ Կրճատված են արևելյան մույթերը և նրանց ու խորանի միջև եղած տարածությունը։ Նմանօրինակ կրճատումը VII դարում կարևոր երևույթ էր հայ ճարտարապետության մեջ։ Այդ կրճատման շնորհիվ միացվել են գլխավոր խորանն ու ենթագմբեթային կենտրոնը։ Ուշագրավ է նաև արևելյան պատի մշակվածությունը։ Պատի արտաքին մակերեսը զարդարված է եռանկյունաձև երկու որմնախորշերով, որոնք տեղադրված են խորանի և ավանդատների արանքներում։ Միաժամանակ, ինչպես և Բագավանում, հյուսիսային և հարավային ավանդատների արտաքին պատերի անկյունները, որմնախորշերի սկզբունքով, թեքությամբ կտրված են։

Եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ տեղեկություններ գտնում Դրասխանակերտցու մոտ։ Այն կառուցել է Անաստաս կաթողի (661—667)։ Պատմիչը գրում է. «...Անաստաս շինէ զպայծառապաճոյճ եկեղեցին ի հայրենի բնակութեան իւրում ի վանս դաստակերտին Ակոռոյ՝ կացորդ զնա յարդարեալ քահանայական ուխտի միակրօնից և այլոց եւ կղերց եկեղեցւոյ»[80]։ Իսկ Բարձրբերդցին հաղորդում է. «(Անաստաս շինէ զեկղերց եկեղեցւոյ»... Այս տեղեկեղեցին Ակոռւոյ, եղբայրանոց զնա յօրինեալ և հիւանդանոց»[81]։ Այս տեղեկություններից երևում է, որ Անաստասն իր հայրենի գյուղում կառուցել է ոչ միայն այս եկեղեցին, այլ միաբանության այլ շենքեր և հիվանդանոց։

78 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 473։

79 Տե՛ս J. Strzigowski, Die Baukunst..., 1, S. 178—179.

80 Դրասխանակերտցի, էջ 91։

81 Բարձրբերդցի, էջ 97։

* * *

VI—VII դարերում ամենաէականն անկասկած, նոր հորինվածքներն
էին։ Նոր շինություններում (կապված չլինելով հների վերակառուցման
առանձնահատկությունների հետ) շատ ավելի ազատ էին լուծվում թե՛ ներսի,
թե՛ դրսի և թե՛ գմբեթի կառուցման ճարտարապետական ձևերը։ Խաչաձև
հատակագիծն այստեղ ուներ ավելի կատարյալ լուծում, քանզի այն իրա-
գործվում էր որպես ազատ մտահղացում և կապված չէր նախկին հորին-
վածքներին հարմարեցնելու հետ։
Եթե Մաստարայի և Արթիկի եկեղեցիների հատակագծերն իրենց ընդհա-
նուր ուրվագծերով մոտ են էջմիածնի տաճարին, ապա VI դարի երկրորդ
կեսի եկեղեցիներն արդեն հիմնականապես տարբերվում են և կառուցողական
ձևերով, և համաչափություններով, և, ամենակարևորը, հորինվածքային
կերպարով։ VI դարի շինություններից են արտաքուստ քառակուսի, ներքուստ
քառախորան հատակագծով եկեղեցիները, որոնց խորաններն իրար հետ
հաղորդակցվում են երեք քառորդ որմնախորշերով։ Այս տիպի շինություն-
ներից ամենահնագույնը Արամուսի և Ավանի եկեղեցիներն են։
Արամուս.—Եկեղեցին գտնվում է գյուղի մեջ։ Ավերակ վիճակում է։
Պահպանվել են հյուսիսային և արևելյան պատերի առանձին հատվածները
1—2 մետր բարձրությամբ։ Եկեղեցու մասին տեղեկություններ կան Դրաս-
խանակերտցու, Սամուէլ Անեցու և Կիրակոս Գանձակեցու մոտ։ Սակայն
նրանց տեղեկությունները վերաբերում են Դավիթ կաթողիկոսի 728—741
թվականներին կառուցած շինություններին (եկեղեցի և կաթողիկոսական
ապարանք)։ Դրասխանակերտցին գրում է, որ Դավիթ կաթողիկոսը չդիմա-
նալով արաբների կամայականություններին, կաթողիկոսարանը Դվինից
տեղափոխում է Արամուս, «ապա տագնապեալ և արտաքս ի միջոյ նոցա՝
ըստ գրեցելումն եւեալ, շինէ եկեղեցի ի գեօղն Արամոնս գեղեցկայարմար
յարդարմամբ. և զնե շուրջանակի նորա տուն բնակութեան վայելուչ իմն
յարմարեալ»[82]։
Ս. Անեցին տալիս է կառուցման թվականը՝ «Ջիթ (729) Տէր Դաւիթ՝
ամս ԺԳ։ Տէր Դաւիթ յԱրամունեաց ի Կոտայիցն որում շինեալ եկեղեցի՝ տուն
բնակութեան հայրապետական, փոխելով ի նմա զաթոռն ի Դունայ զի
նեղեցաւ անդ ի զաւրագործ ազգէն Մահմետայ»[83]։ Գրեթե նույն բառերով
տեղեկությունը կրկնել է Գանձակեցին. «Սա (Դաւիթ) փոխեաց զաթոռն ի
Դունայ յԱրամոնս շինեալ եկեղեցի և տուն բնակութեան հայրապետական,
զի նեղեցաւ նա յաճրագործ ազգէն Մահմետի»[84]։
Այս երեքից բոլորովին տարբեր է Ստ. Օրբելյանի տեղեկությունը, որը
վերաբերում է VI դարի անցքերին. «...և կամէին Յոյնք հակառակաթոռ
նստուցանել զոր և արարին յետ սակաւուց. զի Մովսէս նստաւ յաթոռ սրբոյն
Գրիգորի ի Դվին, և Յովհան ումն ի Թէոդուպօլիս սղե կաթողիկոս. և եկեալ
եդ աթոռ ի Կոտայսն յԱրամօնս գիւղ»[85]։ Պարզվում է, որ կաթողիկոսական
նստավայրը Ավանում հաստատվելուց առաջ նախապես հիմնվել էր Արա-
մուսում։

82 Դրասխանակերտցի, էջ 105։

83 Ս. Անեցի, էջ 87։

84 Գանձակեցի, էջ 70։

85 Ստ. Օրբելեան, էջ 90—91։

Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ Հովհան Սյունականն Ավանի եկեղեցին կառուցել է մինչև իր հակաթոռ կաթողիկոս դառնալը՝ ամենաուշը 590 թվականին և կաթողիկոս դառնալով՝ հաստատվել Ավանում[86]։ Սակայն, ինչպես նախօրոք հայտնի էր, և այդ նույնը շեշտել է ինքը՝ Կ. Ղաֆադարյանը, կաթողիկոսարանի կառուցման տեղը որոշվել է Թեոդոպոլսում հակաթոռին ընտրելուց հետո։ Կ. Ղաֆադարյանը Ստ. Օրբելյանի տեղեկությունը համարում է շփոթմունք, որն առաջ է եկել Արամուս և Ավան գյուղերը մոտ գտնվելու հետևանքով։ Նմանօրինակ պատճառաբանությունը որևէ հիմք չունի և բացառված է Ստ. Օրբելյանի մոտ։

Ավելի հավանական է, որ Հովհանն հակաթոռը 590 թվականին Ավանի եկեղեցին և կաթողիկոսարանը շինելու նպատակով, սկզբում հաստատված լիներ Արամուսում, այնտեղ նախապես եկեղեցու առկայության պատճառով։ Թերևս հենց դրանով էլ կարելի է բացատրել երկու եկեղեցիների տիպային նույնությունը։ Եթե 590 թվականին Ավանն ընտրվել է որպես կաթողիկոսի նստավայր, ապա Արամուսում ժամանակավորապես հաստատվելը միանգամայն բնական պետք է համարել՝ մոտիկության նկատառումով, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակ շրջապատում ավելի մոտիկ եկեղեցի չկար, ուր հակաթոռ կաթողիկոսը կարողանար հանգրվանել և Ավանում կատարվող շինարարական աշխատանքներին հետևել։

Արամուսի եկեղեցու կառուցման տարեթիվը ճշտել հնարավոր չէ։ Հա-
Սակայն ճարտարապետական ձևերը հաստատում են նրա հնությունը[87]։
վանական է, որ այն կառուցված լինի VI դարի կեսին։ Դավիթ կաթողիկոսն իր նստավայրը տեղափոխելով Արամուս կառուցել է ապարանքը և, ակներևաբար, նորոգել եկեղեցին[88]։

Ավան.—Գտնվում է Երևանի նույնանուն թաղամասի կենտրոնում։ Այս տիպի առավել ուշագրավ եկեղեցիներից մեկն է։ Ճարտարապետական ձևերում կան մասնակի տարբերություններ։ Ավանդատները հատակագծով կլոր են, ունի երեք մուտք, բացված հյուսիսային, արևմտյան և հարավային կողմերից։ Արևմտյան մուտքը զարդարված է սյուներով և եռանկյունաձև ճակատով։ Հյուսիս-արևմտյան կողմում գտնվում են կաթողիկոսական ապարանքի ավերակները։ Ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ այն կառուցել է Հովհան Սյունականը[89]։ Այդ մասին վկայություն են թողել Սեբեոսը և Դրասխանակերտցին։ Ինչպես արդեն տեսանք, սկզբնական շրջանում հակաթոռ կաթողիկոսը նստել է Կարինում, այնուհետև տեղափոխվել Արամուս ... ջում՝ Ավան։ Սեբեոսը նշում է, որ Հովհանին թաղեցին Ավանու ... ի կառուցած եկեղեցու մեջ. «Եւ անդէն վախճանեալ բերաւ մարմին նորա ի գեւղն Աւան, յեկեղեցին, զոր ինքն շինեաց»[90]։ Այս իրադարձությունների

---

86 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Երևան. Միջնադարյան հուշարձաններ, Երևան, 1975, էջ 65։

87 Տե՛ս А. Б. Еремян, Храм Рипсимэ, стр. 93--100.

88 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 123.

89 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 245, Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 121. Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, стр. 59, А. Б. Еремян, Храм Рипсимэ, стр. 6, 91, А Л. Якобсон, Очерк..., стр. 19, ВИА, 3, стр. 216, «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 146, Տ. Մարությաև, Ավանի տաճարը, Երևան, 1976, էջ 44։

90 Սեբեոս, էջ 78։

մասին Դրասխանակերտցին գրում է. «Յետ այսորիկ ըստ հրամանի կայսերն Մօրկայ պՅոհան ոմն ի գաւառէ Կողայ ի Բագարան գեղջէ կացուցանեն կաթողիկոս Յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա ի քաղաքագիւղն Աւան, որ և շինեցան իսկ ինքնին Յոհան զպայծառակերտ բաւարանն սուրբ և կայանի իւրոյ»[91]։ Դրասխանակերտ-
ցու այս վկայությունից պարզվում է, որ Հովհանը եկեղեցուց բացի կառուցել է նաև կաթողիկոսական ապարանքը։ Սակայն պատմիչը տալիս է սխալ թվագրում՝ այս անցքերը ներկայացնելով որպես վրաց կաթողիկոս Կյուրոնի շուրջանակի նորա յարդարեալ պատակտիչ գործունեությանը (609 թ.) հաջորդող իրադարձություն։ Մինչդեռ հայտնի է, որ 609 թվականին Մորիկն (582—602)[92] արդեն մահացել էր։

Ա. Երեմյանը VII դարի սկզբների քաղաքական իրադարձությունների քննության հիման վրա գտնում է, որ Ավանի շինությունները կառուցվել են 588 (590—595) 597 թվականների ընթացքում[93]։

Սկզբնաղբյուրների համեմատական քննությունից բացի, Արամուսի և Ավանի եկեղեցիների թվագրման համար կարևոր են նաև նրանց ճարտարա-պետական հին ձևերը. պայտաձև կամարները, մուտքի եռանկյունաձև ճակատը, որոնց ակունքները կապված են V դարի շինությունների մուտքերի ձևավորման հետ[94]։

Թ. Թորամանյանը ասում է, որ Գ. Հովսեփյանի մի լուսանկարում երևում է հարավ-արևմտյան ավանդատան վրա եղած գմբեթի ստորին շարքը։ Հիմք ընդունելով այդ փաստը նա համոզված է, որ եկեղեցին պսակված է եղել մեկ կենտրոնական և չորս ավանդատների գմբեթներով[95]։

Տաճարի սահմաններում հայտնաբերված բազմաթիվ մշակված քարերի չափագրությունը ցույց տվեց, որ չնայած եկեղեցու զարդաքանդակների հետ ունեցած ոճական ընդհանրությանը, այդ քարերը (խոյակներ, խարիսխներ) եկեղեցունը լինել չեն կարող։ Ոճական նմանությունը և չափերի տարբերությունը վկայում են, որ տեղում, եկեղեցուց բացի, գոյություն է ունեցել ևս մի մոնումենտալ շինություն, որի կանգնեցնողները պահպանել են կառուցվող շենքերի ոճական ընդհանրությունը։ Մշակված քարերի այդ բեկորները պատկանել են տեղի կաթողիկոսական ապարանքին, որի մնացորդները մասամբ բացվել են 1968 թվականի պեղումների ժամանակ։

Հռիփսիմե.—Արամուս-Ավան տիպին պատկանող շինությունների մեջ ամենահանրածանոթը Հռիփսիմեի տաճարն է էջմիածնում։ Տաճարի տեղում IV դարում կառուցված է եղել աշտարակաձև մի մատուռ, ակներևաբար կատակոմբային տիպի դամբարանի վրա, որովհետև Ագաթանգեղոսն այն բնութագրում է «կարճ, ցածր» բառերով։ Այդ մատուռի պատկերը, ինչպես

---

91 Դրասխանակերտցի, էջ 72։

92 Տե՛ս „История Византии", I, стр. 355.

93 Տե՛ս А. Б. Еремян, К вопросу о датировке кафедральной церкви в Аване, «Լրաբեր» հաս. գիտ., 1969, № 3, էջ 53—55։

94 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 87, Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 122, 154. 175, Р. Я. Агабабян, Реконструкция Авана, նախնական հաղորդում, Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի աշխատանքներ, 1948, № 3, էջ 282։

95 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 7։ Տե՛ս նաև Տ. Մարությաև, Ավանի տաճարը, էջ 5—37։

համողիչ կերպով մեկնաբանել են Բ. Առաքելյանն ու Ս. Մնացականյանը, քանդակված է Օձունի կոթողի վրա[96]:

Մատուռը եղել է երկհարկանի: Վերնամասում ունեցել է աստմնաշարով զարդարված եռանկյունաձև ճակատ:

Քննության առնելով քանդակված պատկերի մեջ դրսևորված ճարտարապետական ձևերը և առանձին տարրերը, Ս. Մնացականյանը որոշ զուգահեռներ է գտնում Ասորիքի դամբարանային ճարտարապետության հետ և մատնանշում առանձնամասերի հնության նշանները: Մատուռը, ինչպես այդ մասին հիշատակում է Ագաթանգեղոսը[97], կառուցվել է Հայաստանում քրիստոնեության ընդունման առաջին տարիներին: Այնուհետև, Եզնակի վկայությամբ, նորոգվել է Սահակ Պարթևի օրոք (387—438)՝ վերականգնվելով նախնական ձևով: Թե ինչ վիճակում է հասել այն մինչև VII դարի սկիզբը, ներկայումս հնարավոր չէ պարզել: Մաքրման աշխատանքների ժամանակ Հ. Հակոբյանը եկեղեցու սալահատակի տակ հայտնաբերեց հեթանոսական շենքի զարդաքանդակ բեկորներ:

Հռիփսիմեի ներկա եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ գոյություն ունեն և վիմագրական և մատենագրական ստույգ վկայություններ: Մատենագիրներից Սեբեոսը և Եզնակը VII դարի հեղինակներ են: Եզնակը տեղեկացնում է, որ եկեղեցին կառուցող Կոմիտաս կաթողիկոսը, մինչև հայրապետական աթոռին նստելը, եղել է ս. Հռիփսիմեի եկեղեցու սպասավոր: Կաթողիկոս դառնալով «...շինեաց արտաքոյ վիմօք յաւուրս Յոհաննկան սրբոյն կաթուղիկէի վանուց երիցու և Կամուելի նորուն սրբոյ Հռիփսիմէի՝ վանաց երիցու ի Վաղարշապատ քաղաքի, քանեսիններորդ ամի խոսրովայ արքայից արքայի որդւոյ Որմըզդի»[98]: Եզնակի տեղեկությունը հավաստում է նաև Սեբեոսը. «Եւ եղեւ յամի ԻԸ-երորդի (28) թագաւորութեանն Ապրուէզ խոսրովու քակեաց կաթուղիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթուղիկոսի, որդւոյ սրբոյն Ներսեսի»:

Նախ պարզվում է, որ նախկին աշտարակաձև վկայարանը կառուցել է Սահակ կաթողիկոսը (IV—V դդ) և, երկրորդ, այս վկայությունից պետք է ենթադրել, որ աշտարակաձև մատուռը փլված էր և մնացել էր միայն գետնափոր դամբարանը: Սեբեոսն այնուհետև շարունակում է. «...Շինեաց զեկեղեցին, և զերանելին եթող ի բացեայ վասն գիջութեան որմոցն, մինչև ց... բել կրոյն: Ապա ամփոփեցաւ ի կայեանս իւր:

Վերացոյց և զփայտայարկս սրբոյ կաթուղիկէին. նորոգեաց և զխա... ո որմոյն. շինեաց զքարայարկսն: Այս եղև յամս Յովհաննկան վանաց երիցու սրբոյ կաթուղիկէին»[99]:

Օձունի կոթողի վրա քանդակված պատկերից երևում է, որ աշտարակաձև դամբարանը եղել է քարակերտ: Սեբեոսը տեղեկացնում է փայտաշեն տանիքի

[96] Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները, IV—VIIդդ., Երևան, 1946, էջ 45—46, *С. Х. Мнацаканян*, Об одном неизвестном типе сооружений древнеармянской архитектуры, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, № 7, էջ 95—106:

[97] Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 305:

[98] Ս. Անեցի, էջ 268: «Նշանագիր կարգաց բանից»: Հրատարակել է Արշակ Տեր-Միքայելյանը Սամուել Անեցու ժառանգությունների, էջ 268:

[99] Սեբեոս, էջ 89:

մասին, որ Կոմիտասը քանդում և քարից է շինում: Արդյոք սա չի՞ նշանակում, որ Սահակ Պարթևը նորոգել է միայն ստորին հարկի ծածկը:

Պատմիչներից բացի Հռիփսիմեի շինության մասին ավանդում են վիմական երկու հիշատակարաններ: Դրանցից մեկը փորագրված է եկեղեցու արևմտյան պատին, արտաքուստ, պատուհանի վերևը.

ԵՍ ԿՈՄԻՏԱՍ ԵԿԵՂԵՑԱՊԱՆ ՍՐ—
ԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԷԻ ԿՈՉԵՑԱՅ ՅԱ—
ԹՌՌ ՍՐԲՈՅՆ ԳՐԷԳՈՐԻ ՇԻՆԵՑԻ
ՋՏԱՃԱՐ ՍՐԲՈՅ ՎԿԱՅԻՑՍ ՔՐԻՍՏՈՍԻ:

Երկրորդ արձանագրությունը գտնվում է արևելյան խորանի պատին, ներսից, և ունի հետևյալ բովանդակությունը:

ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՅԻՇԵԱ ԶԿՈՄԻՏԱՍ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇԻՆ—
ՈՂ ՍՐԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԵԻ:

Կոմիտաս կաթողիկոսը հայրապետական աթոռին գահակալել է 615—628 թվականներին: Առաջին հայացքից շատ պարզ թվացող այս հարցը ժամանակին լուրջ տարակուսանքներ է հարուցել: Մինչև կաթողիկոս դառնալը Կոմիտասը եղել է Տարոնի Գլակա վանքի վանահայրը, այնուհետև հիշատակվում է որպես կրոնական աչքի ընկնող գործիչ[100]: Մինչդեռ արձանագրության մեջ նա անվանված է «եկեղեցապան սրբոյ Հռիփսիմեի»: Այս հանգամանքը կասկածելի է թվացել Հ. Օրբելուն և այդ առիթով նա գրում է. «Իր կառուցվածքով արձանագրությունը թողնում է լրիվ անտեղյակ հեղինակի կողմից հորինված տեքստի տպավորություն, որը նպատակ ուներ առանց ճշտության հավակնության, մանրամասնություններով հավերժացնել երրորդ անձի՝ Կոմիտասի դերը եկեղեցու շինության գործում»[101]: Հ. Օրբելին չի վստահում նաև հապավումների առկայությանն արձանագրության մեջ: Սակայն, ինչպես երևում է Եզնակի վկայությունից, Կոմիտասն իր կյանքի ինչ-որ շրջանում իսկապես եղել է «սրբոյ Հռիփսիմեաց սպասաւոր»: Եզնակի տեղեկությունից կարելի է հետևցնել նաև, որ Կամուելը Հռիփսիմեի վանահայրն էր Կոմիտասի արդեն կաթողիկոս եղած ժամանակ: Այսպիսով, Կոմիտասի ս. Հռիփսիմեի սպասավոր անվանումը միայն անվանական բնույթ չի կրել[102]: Արձանագրության բնագիր լինելն են հավաստում նաև տառաձևերը, որոնք աչքի են ընկնում VII դարին հատուկ գեղեցիկ համաչափություններով և հնագրական առանձնահատկություններով:

Ուշագրավ է արձանագրության տեղադրությունն արևմտյան ճակատի պատուհանի մոտ՝ կենտրոնում: Շինարարական արձանագրությունները, ինչպես տեսանք Մրենի տաճարի օրինակով և ինչպես կտեսնենք ստորև ևս, այդպես տեղադրվել են VII դարի առաջին քառորդում և տարբերվել VII դարի 30—40-ական թվականներին բնորոշ միատող՝ գոտևորող արձանագրությունների տեղադրությունից:

Երկրորդ արձանագրությունն ունի ոչ թե շինարարական, այլ հայցելու բովանդակություն և, ըստ երևույթին, փորագրվել է Կոմիտասի մահվան՝

[100] Տե՛ս Սեբեոս, էջ 78—79, 83—86:

[101] *И. А. Орбели*, Избр. труды, стр. 407—408.

[102] Տե՛ս *А. Б. Еремян*, Храм Рипсимэ, стр. 27.

628 թվականին։ Նրա տեղագրությունը եկեղեցու ներսում որևէ տարակուսանք չպետք է առաջացնի։

Գառնահովիտ — *Արամուս-Ավանատիպ չորրորդ հուշարձանը կառուցվել է Գառնահովտում։ Գ. Հովսեփյանը հուշարձանի կառուցումը թվագրում է VI դարով[103]։ Ն. Տոկարսկին՝ հիմք ընդունելով կառուցողական ժամանակագրական տարբեր տարրերը, եկեղեցին թվագրում է VII դարի առաջին և VII դարի երկրորդ կեսերով[104]։ Նույն կարծիքին է նաև Թ. Թորամանյանը[105]։*

Տարակարծությունների պատճառն այն է, որ եկեղեցին ունի կառուցողական հին և համեմատաբար նոր հատկանիշներ։ Հինը՝ առագաստների կիրառումն է տրոմպների փոխարեն, որը առկա է նաև Ավանի եկեղեցում։ Հետաքրքրական է գմբեթի կառուցվածքն իր որմնախորշերով, որը նմանվում է Մաստարայի եկեղեցու գմբեթին։ Ն. Տոկարսկուն կասկածի տեղիք է տվել որմնասյուների առկայությունն արևմտյան խորշի ներսում, որոնք համարում է Եղվարդի Զորավորի և Թալինի մեծ եկեղեցիների ժամանակների հարդարման եղանակ։

Գառնահովտի եկեղեցու հարավային պատին պահպանված են մի քանի կարճառոտ արձանագրություններ, որոնք իրենց հնագրական առանձնահատկություններով բոլորովին չեն տարբերվում VII դարի արձանագրություններից։ Դրանցից երկուսը հիշատակում են միայն մեկ անուն՝ ՎԱՐԴԷՍ, որը եկեղեցու ճարտարապետն է[106]։

Հարավային պատուհանի պսակի ատամնաշարերի մեջ փորագրված է ՄՈՎՍԷՍ։ Տ. Մարությանի կարծիքով դա Մովսես Եղվարդցու անունն է[107]։ Սակայն կաթողիկոսի անվան փորագրությունը որևէ կերպ պատճառաբանել հնարավոր չէ։ Բնականաբար, հարց է առաջանում. իսկ ո՞վ է այդ դեպքում Գրիգորը, որի անունը կաթողիկոսի պատշաճությամբ փորագրվել է արևմտյան պատուհանի պսակի ատամնաշարի արանքներում։ Այս կապակցությամբ հրապարակած մի հոդվածում մենք առաջարկել էինք կարդալ ԳՐԻԳՈՐ ԳՐԻՉ [108]։ Թերևս ավելի իրավացի է Տ. Մարությանը, երբ առաջարկում է տառերի տեղափոխմամբ կարդալ ԳՐԻԳՈՐ։ Սակայն կարծում ենք, որ Մովսեսը և Գրիգորը պատուհանի պսակը քանդակող վարպետները լինեն։

Սիսիան — *Եկեղեցին գտնվում է գյուղի արևմտյան կողմում, պատմագրության մեջ հայտնի է Սյունի վանք անունով։ Ըստ Ն. Տոկարսկու կառուցվել է երկու փուլով (VII դարի առաջին կես և VII դարի երկրորդ կե*

Ս. Մնացականյանը նույնպես գտնում է, որ եկեղեցին կառուց երկու փուլով, սակայն նրա թվագրումը տարբերվում է մյուսներից։ ք ունենալով եկեղեցու պատերին եղած պատվիրատուների քանդակները և արձանագրությունները, նա եկել է այն համոզման, որ եկեղեցին կառուցվել

---

103 *Տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, Գ, Նյու-Յորք, 1944, էջ 23։*

104 *Տե՛ս Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 127, նույնի, Арх. древ. Армении, стр. 89.

105 *Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 246, 248։*

106 *Տե՛ս Ա. Մանուչարյան, Արձանագրման մի ավանդական ձևի մասին, «Լրաբեր» հաս. գիտ., 1970, № 6, էջ 73։*

107 *Տե՛ս Տ. Մարության, Ավանի տաճարը, էջ 63։*

108 *Տե՛ս Ա. Մանուչարյան, նշված հոդվածը, «Լրաբեր» հաս. գիտ. 1970, 6, էջ 73։*

109 *Տե՛ս Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 127.

Սևան. սբ. Առաքելոց եկեղեցին արևելքից

... Կոթավանքի սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևելքից



Գնդեվանքի եկեղեցին հարավից



Յաղաց քարի արևելյան խմբի եկեղեցին արևելքից

է Սյունյաց եպիսկոպոսներ Հովսեփ Ա.-ի (670—689 թվականներ) և նրա հաջորդ Յովհան Ա.-ի (689—711 թվականներ) կողմից[110]։

Արձանագրությունները տեղադրված են քանդակների գլխավերևում, կամարաձև և ավանդում են քանդակված անձանց անունները՝ 1) ԿՈՀԱԶԱՏ ՍԻՒՆԵԱՑ ՏՐ, 2) ՏՐ ՅՈՎՍԷՓ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ, 3) ԹՈԴՈՐՈՍ ՍԻՈՆԻ ՎԱՆԱԿԱՆ, ՅՈՎՀԱՆԷՍ ԵԿԵՂԵՑՊԱՆ։ Վերջին քանդակն անհամեմատ փոքր է և գտնվում է արձանագրության ձախ կողմում։

Ս. Մնացականյանը Կոհազատին համարում է Սյունյաց իշխան, տեր Յովսեփին՝ Սյունյաց եպիսկոպոս, իսկ Թոդորոս վանականին՝ Կոմիտաս կաթողիկոսի եղբորորդին։ Առաջինի համար հիմք է ծառայել Հովհաննես եկեղեցպանի հիշատակությունը արձանագրության մեջ։ Սակայն կարծում ենք պարտադիր չէ, որ եկեղեցպանը վանքի առաջնորդ դառնար և, որովհետև Յովսեփ Ա.-ին հաջորդում է Յովհաննես եպիսկոպոսը, մտածել, որ վերջինս նախկին եկեղեցպանն էր և դրա հիման վրա էլ Յովսեփը՝ Յովսեփ Ա.-ն։ Հարցը պարզաբանելու համար անհրաժեշտ է ուշադրությամբ վերլուծել Ս. Օրբելյանի կազմած Սյունյաց եպիսկոպոսների ցուցակի թվական տվյալները։ Ս. Մնացականյանը որպես հիմք ընդունում է Ստեփանոս եպիսկոպոսի մահվան թվականը՝ 735 և նրա եպիսկոպոսական աթոռին մեկ տարի նստելու իրողությունը։ Սակայն թվագրում է ոչ ճիշտ՝ 735—736 թվականներով։ Եթե նա մահացել է 735 թվականին, ապա, բնականաբար, եպիսկոպոս է եղել դրանից առաջ։ Սակայն կարևորն այստեղ մեկ այլ հարց է։ Ստ. Օրբելյանն ասում է, որ «ըստ այլոց» նա եպիսկոպոսական աթոռին նստել է ոչ թե մեկ, այլ 8 տարի[111], այսինքն՝ 727—735 թվականներին։ Այս դեպքում կփոխվեն նաև մյուս եպիսկոպոսների, այդ թվում և Յովսեփի տարեթվերը՝ հետևյալ ձևով.

Յովսեփ	—	663—682	Անանիա	—	711—718
Յովհաննես	—	682—704	Յոհան	—	718—727
Մովսես	—	704—711	Ստեփանոս	—	727—735

Թվագրության այս եղանակը կարծում ենք ավելի ճիշտ է այն պատճառով, որ Անանիային Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրել Եղիա կաթողիկոսը[112], որն առաջնորդությունը վարել է 703—717 թվականներին։

Ս. Մնացականյանի հաշվումներով հիշյալ Անանիայի եպիսկոպոսության տարիները 718—725 թվականներն են, որն անհնար է, քանզի Եղիա կաթողիկոսն այդ ժամանակ արդեն չկար։

Ինչ վերաբերում է Հովհան եկեղեցպանին, ապա որևէ հիմք չկա նրան Հովհաննես եպիսկոպոսի հետ նույնացնելու համար։ Ս. Մնացականյանն այդ անում է Հովսեփ Ա.-ին Հովսեփ Բ.-ի համեմատությամբ նախընտրելի տեսնելու նպատակով։

Այսպիսով, եկեղեցու կառուցման ժամանակը պետք է թվագրել 663—682 թվականներով։ Եկեղեցու կառուցողը եղել է միայն Կոհազատ իշխանը։ Հովսեփ Ա.-ն որպես նահանգի հոգևոր պետ հանդես է գալիս հոգևոր հաս-

---

[110] Տե՛ս Ս. Մնացականյան, Սիսվանի պատկերաքանդակները և տաճարի կառուցման ժամանակը, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1961, № 10, էջ 71—73, նույնի, Սիսվանի տաճարը, ՊԲՀ, 1965, № 4, էջ 221—230։

[111] Տե՛ս Ստ. Օրբելյան, էջ 139։

[112] Տե՛ս Ստ. Օրբելյան, էջ 134, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 150։

տատությունը հովանավորող, Թևոդորոս վանականը՝ վանքի առաջնորդ էր: Նրան աջակցել է Հովհաննես եկեղեցպանը:

Հարկ է անդրադառնալ Ստ. Օրբելյանի մի տեղեկությանը ևս, որի համաձայն Սյունի վանքը կառուցվել է հայոց թվականից առաջ: Պատմիչն իր սկզբնաղբյուրը չի նշում, սակայն տալիս է այդ ժամանակվա եկեղեցու նկարագիրը. «Սիսնի վանք որոյ եկեղեցին չքնաղ և նորակերտ ձևով կանգնեալ գմբէթայարկ խորան երկնանման, ի մեծ բարեպաշտութեան Վարազդրխտոյ՝ Սիսնեաց տիկնոջն, յառաջ քան զհայ թուականն, յանուն սրբոյ Լուսաւորչին»[113]:

Այստեղից երևում է որ եկեղեցին կառուցվել է VI դարի առաջին կեսին, եղել է գմբեթակիր, սակայն ունեցե՞լ է արդյոք ներկա հորինվածքը դժվար է ասել: Բոլոր դեպքերում նկարագիրը չի բացառում:

Ուշագրավ է, որ Ստ. Օրբելյանի մոտ չի արձանագրված վիմագրերում հիշված անձանց շինարարական գործունեությունը: Պատճառը թերևս այն է, որ հիշյալ շինարարական աշխատանքը եղել է նորոգում և որպես ոչ մեծ իրադարձություն չի արձանագրվել մատենագրության մեջ ու նույնիսկ վրիպել է այնպիսի մանրակրկիտ պատմիչի տեսադաշտից, ինչպիսին Ստ. Օրբելյանն է:

* * *

Հայաստանի VI—VII դարերի հուշարձանների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ներքին և արտաքին խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիները: Ա. Յակոբսոնը գտնում է, որ այդ փոքրիկ եկեղեցիները հիմնականում եղել են ազնվականների դամբանական շինություններ և իրենց ձևով կրկնել են գետնահարկ դամբարանների ճարտարապետությունը[114]:

Եկեղեցիների այս հորինվածքը հանդիպում է հիմնականում երեք տարբերակներով: Առաջին տարբերակում թևերը՝ բեմական խորանից բացի, ներքուստ և արտաքուստ ուղղանկյունի են: Այսպիսի շինություններ Հայաստանում կառուցվել են Զախմախ (Ամասիայի շրջան), Ջրափի (Անիի շրջան), Արթիկ (Լմբատ), Մայիսյան (Ախուրյանի շրջան), Կճղուտ (Լենինյին Ղարաբաղ), Նալբանդ, Ղուրսալի (Սպիտակի շրջան), Նոր կյանք (Անիի շրջան) Աշտարակ (Կարմրավոր), Բջնի (ս. Սարգիս) և Բուժական (Ապարանի շրջան) գյուղերում:

Աշտարակ —խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ շինություն մեջ ում իր ներդաշնակ համաչափություններով առանձնապես աչքի է Աշտարակի Կարմրավորը: Այս հուշարձանը հասել է մինչև մեր օրերը՝ առանց վերակառուցումների: Պահպանվել է նույնիսկ կղմինդրե ծածկը:

Եկեղեցին ունի շինարարական արձանագրություն, որն առաջին անգամ հրատարակել է Շահխաթունյանցը[115], սակայն առանց խիստ հողմնահարված և դժվար ընթեռնելի վերջնամասի: Այնուհետև, որոշ շտկումներով, հրատարակել է Ալիշանը[116]:

113 Ստ. Օրբելեան, էջ 338:
114 Տե՛ս А. Л. Якобсон, Очерк..., стр. 37:
115 Տե՛ս Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 87—88:
116 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 186:

Արձանագրության սկիզբը գտնվում է արևմտյան թևի հարավային պատին և դառնալով եկեղեցին ամբողջությամբ հասնում է մինչև հյուսիսային թևի հյուսիսային պատը:

Եկեղեցու վրա արձանագրությունը տեղադրված է այսպես.

Ա պատ ԵՍ ԴԱՒԻԹ ՄԵՂԱՒՈՐ... ՅԱՃ...
Բ պատ .... ԳԵՒՂԱՔԱՂԱՔԷՍ
Գ պատ ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ ԳՐԵԳՈՐԻ ՔԱՀԱ—
Պատուհանի մյուս կողմը
ՆԱՅԻ ԵՒ ՄԱՆԱՍԵԻ ՈՐԴԻՔ ՏՈ—
Դ պատ ՒԱՔ ՇԻՆԵԼ ՁԷԿԻՍ
Ե պատ ԱՃԱՃԻՆՍ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՄԵ—
Զ պատ ՆԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ—
Պատուհանի պսակի վրա
Ս ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՃ—
Պատուհանից ձախ
ՏԱՐԱԿԻ ԵՎ ՊՏՂԱԲԵ—
Է պատ ՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԻԴ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈ
Ը պատ ՄԵՐՈՅ, ԱԶԳԻ ՄԵՐՈՅ, ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ
Թ պատ ՄԵՌԵԼՈՅ: ԱՄԱ ՓԱՓԱԳԵՑԱՔ ՍՈՒՐԲ ԼՈՒՍՈՅՍ
ՍՄԱ ԿՈՋԵՑԱՔ ՈՐԴԻ ՎՇՏԱՑ ԱՆԱՐԺԱՆՈ:

Ա և Բ պատերի միջև արձանագրությունը խիստ վնասված է և դժվար է վերծանել:

ԵՍ ԴԱՎԻԹ ՄԵՂԱՒՈՐ բառերից հետո նշմարվում են երեք տառեր: Առաջին տառը կարծես Դ-է: Պահպանվել է վերին կամարաձև մասը և աջակողմյան ուղղահայաց գիծը: Երկրորդ տառը կարդացվում է Ի: Առավել վնասվածը երրորդ տառն է, որից մնացել է մի ուղղահայաց գիծ և ստորին մասի աջ կողմի գոգավոր հատվածը: Այն հավանաբար Ն-է: Այնուհետև հաջորդում են համեմատաբար լավ երևացող Ա և Ճ տառերը: որոնք կարող են ՅԱՃՏԱՐԱԿ բառի սկզբնամասը լինել[117]: Ա պատի վերջնամասում արձանագրությունն ամբողջությամբ տաշված է: Նույն վիճակում է նաև Բ պատի սկիզբը, որի երկրորդ քարից մինչև վերջին Թ պատն արձանագրությունը դյուրընթեռնելի է: Թ պատը վնասված և ուժեղ հողմնահարված է:

Արձանագրության ամենաանհասկանալի մասը շինությանն առնչված անձանց թվարկումն է: Սկզբում հիշատակված է մի անձնավորության՝ Դավթի անունը: Ուղղական հոլովով գրված՝ ԵՍ ԴԱՒԻԹ ՄԵՂԱՒՈՐ-ից հետո հաջորդում է վնասված հատվածը, որտեղ պետք է որոնել ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ և ԳՐԵԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԻ բառերի սեռական հոլովով գրված լինելու պատճառը: Եթե ենթադրենք, որ այս հատվածում եղել է հիշյալ անձանց մասնակցության վերաբերյալ մի տեղեկություն, ապա դրան խանգարում է վնասված մասի և հիշատակված անունների միջև եղած ԳԵՒՂԱՔԱՂԱՔԷՍ բառը, որովհետև ԵՍ ԴԱՒԻԹ ՄԵՂԱՒՈՐ... ՅԱՃՏԱՐԱԿ՝ ենթադրենք որևէ առնչությամբ ԳԵՒՂԱՔԱՂԱՔԷՍ ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ ԵՒ ՄԱՆԱՍԵԻ ՈՐԴԻՔ ՏՈՒԱՔ ՇԻՆԵԼ... անհնար է

117 Ա պատի վրա Պ. Մուրադյանը կարդացել է ԵՍ ԴԱՒԻԹ ՄԵՂԱՒ ՈՐԴԻ ԵՆԱՆՈՍԱՅ ... Ի: Սակայն չի բացատրել, թե ինչ հիման վրա: Տե՛ս Պալեոգրաֆիկ ուսումնասիրության արդյունքներ, «Երևանի համալսարան», 1976, № 1, (24), Երևան, էջ 47:

պատկերացնել։ Նման դեպքերում ավելի տրամաբանական է նախադասության հակառակ կառուցվածքը՝ ԵՍ ԴԱՒԻԹ ՄԵՂԱՒՈՐ... ԵՒ ՄԱՆԱՍԵՒ ՈՐԴԻՔ որևէ առնչությամբ ԳՐԵԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ԵՐԻՑՈՒՆԵԱՑ ՅԱՇՏԱՐԱԿ ԳԵՒՂԱՔԱ-ՂԱՔԷՍ ՇԻՆԵԼ ՏՈՒԱՔ... և այլն։ Գյուղաքաղաքի հիշատակումը պետք է ոչ թե նախորդեր, այլ հաջորդեր սեռական հոլովով գրված անձանց անուններին։ Առեղծվածայինն այն է, որ սեռական հոլովը միայն առնչություն կարող է արտահայտել, մինչդեռ նման դեպքում տարօրինակ է «ԵՒ» շաղկապի բացակայությունը ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ-ի և ԳՐԻԳՈՐԻ միջև, մանավանդ, եթե ՅԵՐԻՑՈՒ-ՆԵԱՑ բառը կապակցենք ԳԵՒՂԱՔԱՂԱՔԷՍ բառի հետ։ Եթե ենթադրենք, որ ԳԵՒՂԱՔԱՂԱՔԷՍ բառն առնչվում է ԴԱՒԻԹ-ի հետ՝ ԵՍ ԴԱՒԻԹ ՄԵՂԱՒՈՐ ՅԱՇՏԱՐԱԿ ԳԵՒՂԱՔԱՂԱՔԷՍ, ապա ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ ԳՐԵԳՈՐԻ հատվածը լրիվ մեկուսանում է։ Մնում է ենթադրել, որ այն կապված է ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ ԳՐԵԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԻ հետ։

Անհասկանալի է նաև շարունակությունը։ Գ պատի վերջին քարի ՈՐԴԻՔ ՏՈ... հատվածը շարունակվում է նույն քարի արևելյան կողմին, որտեղ ...ԻՍՔ ՇԻՆԵԼ ՋԷԿԻՍ հատվածը տառերի և հապավման ձևերով ակնհայտորեն ուշ ժամանակների է։

Դ պատից սկսած արձանագրության բովանդակությունը որևէ տարակուսանք չի առաջացնում, բացառությամբ ԱԾԱԾԻՆՍ բառի հապավումից, որը, սակայն, բովանդակության կապակցվածության և տառաձևերի համոզիչ հնագրական ձևերի պարագայում միանգամայն հանդուրժելի պետք է համարել, մանավանդ, եթե նկատի առնենք այդ բառի հապավման տարածված լինելը։

Ելնելով պահպանված բառերից, նրանց հոլովման ձևերից, ինչպես և մնացած հատվածներում նշմարվող առանձին տառերից կարելի է ենթադրաբար, հավանականության սահմաններում, վերականգնել արձանագրության սկզբի մոտավոր բովանդակությունը։

Ա պատի վերջում փորագրված է ՅԱՇ, որից հետո 6—7 տառերի տեղ կա։ Այս մասը կարելի է վերականգնել ՅԱՇՏԱՐԱԿ տեղանունով և կապել ԳԵՒՂԱՔԱՂԱՔԷՍ բառի հետ, ինչպես երբեմն անվանվել է Աշտարակը։

Ա պատին ՄԵՂԱՒՈՐ և ՅԱՇՏԱՐԱԿ բառերի միջև, ինչպես տեսանք, պահպանվել են ԴԻՆ տառերը։ Հնարավոր է, որ այստեղ եղել է ՈՐԴԻՆ բառը, որի առաջին երկու տառերը կրկնելով նախորդ՝ ՄԵՂԱՒՈՐ բառի վերջին [illegible]կու տառերը ենթարկված լինեին հապավման, ինչպես այդ հաճախ հանդ[illegible] է արձանագրություններում։ Քանի որ հաջորդ բառի հետքն անգամ չ[illegible]հ-պանվել, չենք կարող պնդել այս ենթադրությունը։ Սակայն պահպ[illegible]ված տառերի բեկորներն ակամա այն միտքն են հարուցում, որ արձանագրության սկիզբը պետք է լինի՝ ԵՍ ԴԱՒԻԹ ՄԵՂԱՒՈՐ, ՈՐԴԻՆ ՅԱՇՏԱՐԱԿԱՑ ԳԵՒՂԱ-ՔԱՂԱՔԷՍ ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ ԳՐԵԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԻ..., որտեղ Դավիթը հանդես է գալիս որպես Աշտարակ գյուղաքաղաքի երեցներից մեկի՝ Գրեգորի որդին։ Ալիշանը ենթադրում է, որ ՅԵՐԻՑՈՒՆԵԱՑ-ը կարող է անձնանուն լինել՝ Գրեգորի հոր անունը[118]։ Սակայն դրան խանգարում է Յ սկզբնատառը, որը բառին տալիս է բացառական հոլովի իմաստ, այսինքն՝ երեցներից մեկի։

Արձանագրության մեջ հիշատակված անձանց վերաբերյալ մատենագրական կամ վիմագրական աղբյուրները որևէ տեղեկություն չեն հաղորդում։

118 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 186։

Այդ պատճառով այժմ անհնար է որոշել եկեղեցու կառուցման հանգամանքները և հիմնականում՝ կառուցման թվականը։ Ելնելով շինության հորինվածքային և կառուցողական առանձնահատկություններից, ինչպես նաև արձանագրության տեղադրությունից, կարելի է միանգամայն հիմնավոր համարել հուշարձանը VII դարի 30—40-ական թվականներին վերագրելը։

Կենտրոնագմբեթ եկեղեցիների երկրորդ տարբերակը նախորդի համեմատ ունի ավելի բարդ կառուցվածք։ Այստեղ հյուսիսային և հարավային թևերը ևս ներքուստ կիսակլոր են։ Թևերի կիսակլորությունն առաջացրել է գմբեթարդատակ ծածկ։

Հորինվածքային այս տարբերակով են կառուցված Զորագյուղի, Աստղաձորի (Մարտունու շրջան), Զագավանքի, Ջրվեժի (Աբովյանի շրջան), Լուսագյուղի (Ապարանի շրջան), Ն. Թալինի ս. Քրիստափոր, Ալամանի, Նախճավանի (Արևմտյան Շիրակ), Սասնաշենի, Վ. Թալինի, Ալափարսի, Քարաշամբի (Հրազդանի շրջան), Ջրառատի (Ախուրյանի շրջան) եկեղեցիները։

Ջրվեժ —Ջրվեժի եկեղեցու թմբուկի անկյունաքարերից մեկի վրա հայտնաբերվել են Յոհան անվան առաջին երեք տառերը։ Արձանագրության տառաձևերը VII դարի են։ Հնագրության առումով առանձնապես բնորոշ է 3 տառը՝ իրար վրա դրված հավասարաչափ կիսաբոլորներով, առանց պարուրվող փոքր ելուստների, միջին հորիզոնական գծի երկարավունությամբ և համաչափությունների ընդլայնական շեշտով։ Տառաձևերը չափազանց նման են Ավանի եկեղեցու պատին փորագրված ՅՈՀԱՆ անվան տառաձևերին։ Նկատի ունենալով այս երկու արձանագրությունների հնագրական ընդհանրությունը, ինչպես նաև ՅՈՀԱՆ անվան կրկնությունը Ն. Տոկարսկին հնարավոր է համարում շինությունը թվագրել Յոհան Սյունական հակաթոռ կաթողիկոսի ժամանակներով՝ 590—611 թվականներով[119]։

Միայն մեկ անձնանուն պարունակող արձանագրություններ հանդիպում են Հայաստանի մի շարք հուշարձաններում։ Փորագրված են բավականին խոշոր ու գեղեցիկ տառերով և ըստ այնմ ունեցել են ավանդական որոշակի կարևորություն։ Այնքանով, որ արձանագրություններին վերագրված են նպաստավորողի անվան իմաստ, և եթե նկատի առնենք նրանց ոչ եզակի դեպքերը, ուստի պետք է ենթադրենք, որ նպաստավորողի անվան այդօրինակ արձանագրումն ունեցել է սովորույթի բնույթ։ Սակայն համեմատական քննությունն այս հարցում թույլ է տալիս կատարել մի այլ՝ էապես տարբեր մեկնություն։ Այն շինությունների վրա, որոնք կառուցվել են տեղական համայնքների կամ եկեղեցու միջոցներով և որոշակի անձնավորության նախաձեռնություն չեն եղել՝ վաղ միջնադարում շինարարական արձանագրություն չի փորագրվել։ Իսկ եթե շինարարական աշխատանքները նախաձեռնվել են մեկ կամ մի խումբ մարդկանց միջոցներով, եկեղեցու պատին այս մասին փորագրվել է ընդարձակ կամ չափավոր արձանագրություն։

Արձանագրությունները փորագրվել են տարբեր առիթներով և որոշակի բովանդակությամբ. շինարարական, նվիրատվական և այլն։ Արձանագրության թողնելն ունեցել է միանգամայն նպատակային-ավանդական սկզբունք և դրա իրավունքը վերապահվել է միայն եկեղեցուն ինչ որ ձևով նպաստ կամ բարեգործություն կատարողներին։ Արձանագրությունն էլ իր հերթին առաջնային

119 Տե՛ս Н. М. Токарский, Джрвеж, I, (Результаты раскопок, 1957г.), Ереван, 1959, стр. 15.

նպատակն է ունեցել՝ այդ անձանց հասարակական մեծարումը: Եվ հազիվ թե որևէ կառուցող, մանավանդ բարձրաստիճան իր մեծածախ աշխատանքների դիմաց համաձայնվեր իր անվան այդպիսի անորոշ ու մեկուսի հիշատակումը:

Նկատի առնելով արձանագրման գործնական պահանջներն ու սկզբունքները այս տիպի արձանագրությունները պատվիրատուների անուն համարել չի կարելի: Այդ արձանագրությունները վկայում են, որ գոյություն է ունեցել արձանագրման մի այլ սովորույթ ևս՝ միանգամայն տարբեր նպատակով: Դրանք պատահական մարդկանց անուններ չեն, որովհետև նախ՝ հուշարձանի վրա մեկ-երկուսից ավելի չեն լինում, և երկրորդ՝ աչքի են ընկնում խոշոր և գեղեցիկ տառերով: Դրանք եկեղեցու ծառայողների անուններ էլ չեն, որովհետև առանց կատարած գործերի մասին տեղեկությունների այդ արձանագրություններն անիմաստ են:

Հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համեմատական նյութի վրա, աշխատելով գտնել արձանագրման այդ եղանակի պատճառները և նույնատիպ օրինակների վրա տալ բացատրություն:

Շինությունները կանգնեցվել են ինչ որ մեկի միջոցներով, և, արձանագրության մեջ «շինեցի», ինչպես պարզաբանվել է ուսումնասիրողների կողմից, պետք է ըմբռնել նպաստավորեցի իմաստով[120]: Այդ արձանագրություններում նպաստավորողը հիշատակվող ամենագլխավոր անձն է: Ինչ վերաբերում է իսկական «շինողին»՝ ճարտարապետին և շինարար վարպետներին, ապա նրանք արձանագրություններում հիշատակվում են խիստ հազվադեպ և այն էլ վերջում: Երբեմն նրանց թույլատրվել է շինության որևէ մասում կարճառոտ մի հիշատակություն թողնել[121]: Այդպիսի արձանագրություն կա Հառիճավանքի արևելյան պատի քիվի վրա: Ըստ էության նույնպիսի իմաստ ունեն նաև վարպետների նշանները, թեև պատճառը այլ է[122]: Սակայն բոլոր դեպքերում, ինչպես և վարպետների նշանները, սրանք կրում են ստորագրման բնույթ: Այդպես են փորագրվել նաև բազմաթիվ գրիչների անունները, որոնք, սակայն, անմիջականորեն կապված լինելով արձանագրության հետ, ուղեկցվել են նաև գրիչ բառով: Այս ամենի մեջ պարզ է այն, որ հիշատակությունն արվել է կատարված գործի համար: Ո՞րն է եղել հիշատակված անձանց գործը: Ինչպես ցույց են տալիս մի քանի պարզաբանված օրինակներ, դրանք կարող էին միայն ճարտարապետներ լինել, որոնց անունները նշվել են տառակցման կամ անվան առաջին տառով՝ ի[illegible]պես վարպետներինը: Այդպես է հիշատակված Թոդոսակի անունը Ջվ[illegible]մ: Սակայն հանդիպում են նաև ամբողջական ձևով, ինչպես Ջվարթ[illegible]մ: Այդպիսի բացատրություն է տվել Գ. Հովսեփյանը նույն ձևով հիշա[illegible]ած Սահակ անվանը Պտղնիի եկեղեցու վրա[123]: Այդպես պետք է հասկանալ նաև Գառնահովտի եկեղեցու պատին ՎԱՐԴԵՍ և Օձունի եկեղեցու հարավային մուտքի ճակատին փորագրված ԹՈՎՄԱՍ անունները: Ելնելով այս տվյալներից, կարծում ենք կարելի է ՎԱՐԴԵՍԻՆ համարել Գառնահովտի, իսկ

120 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 477—481:

121 Ս. Բարխուդարյան, *Դիվան հայ վիմագրության*, պր. 3, էջ 121:

122 Տե՛ս Ս. Մնացականյան, *Միջնադարյան Հայաստանի շինարարական գործերի կազմակերպման մի քանի հարցերը և քարգործ վարպետների նշանները*, ՊԲՀ, 1958, № 3, էջ 84—105:

123 Տե՛ս Գ. Հովսեփյան, *Նյութեր...*, Գ, էջ 27:

Յոհանին Ավանի ու Ջրվեժի եկեղեցիների ճարտարապետ կամ ճարտարապետներ, որովհետև նրանք կարող են նույն անունը կրող տարբեր անձնավորություններ լինել:

Եթե նկատի առնենք քարգործ վարպետների նշանների ավանդական սկզբունքը՝ ճարտարապետի անվան ամբողջական գրառման նախապատվությունը միանգամայն բնական պետք է համարել: Գեղեցիկ տառերով գրված և արձանագրության հետ չաղերսվող այս հիշատակություններն այլ բացատրություն ունենալ չեն կարող[124]:

Այսպիսով, վիմագրական հիշատակարաններից հայտնի է դառնում ևս մի քանի հուշարձանների ճարտարապետների անունները, որոնք համալրելով եղածները կարևոր նյութ են «թե հուշարձանների կատարյալ և ամբողջական ուսումնասիրության և թե միջնադարյան կուլտուրայի կերտողներին ընդհանրապես ճանաչելու տեսակետից»[125]:

Այս տիպի հուշարձաններից Վ. Թալինի ս. Աստվածածին, Ալամանի ս. Անանիայի և Շիրակի Նախճավանի եկեղեցիներն ունեն շինարարական արձանագրություն:

Թալին.—Ներսես Կամսարականի շինարարական գործունեության հոյակապ արգասիքներից մեկը Թալինի ս. Աստվածածին եկեղեցին է: Կամսարականների թողած վիմագիր հիշատակարանների շարքում Թալինի ս. Աստվածածին եկեղեցու շինության արձանագրությունը միակն է, ուր Շիրակի և Արշարունյաց տերը բարեխոսություն է հայցում միայն իր ընտանիքի անդամների համար: Այս տեսակետից հիշատակարանը կարևոր է Կամսարականների տոհմական պատմության ժամանակագրության համար: Մրենի, Ալամանի, Բագարանի և Նախճավանի հուշարձանների հետ մեկտեղ Թալինի հուշարձանը և նրա արձանագրությունը պատմականորեն մի ամբողջություն են կազմում VII դարի Շիրակի ճարտարապետական արվեստի զարգացման և Ներսեհ Կամսարականի շինարարական գործունեության պատմությունն ուսումնասիրելու համար:

Արձանագրությունը թվական չունի և այդ պատճառով ուսումնասիրողները ժամանակին միշտ տարաձայնություններ են ունեցել կառուցման ժամանակը որոշելու հարցում: Առաջին անգամ արձանագրությունը հրատարակել է Շահխաթունյանցը[126], այնուհետև Ալիշանը[127]: Հրատարակել է նաև Տեր-Մովսիսյանը[128] և թվագրել VII դարի վերջին քառորդով: Գ. Հովսեփյանը գտնում է, որ կարելի է թվագրել VII դարի 30-ական թվականներով[129]: Արձանագրությունը մանրազնին ուսումնասիրել է Հ. Օրբելին[130] և նույնպես եկել այն համոզման, որ փորագրված է VII դարի 30-ական թվականներին: Արձանագրությունը գտնվում է արևմտյան պատին պատուհանի երկու կողմերում՝

ԵՍ ՆԵՐՍԵՀ ԱՊՈՀԻՒՊԱՏ ՊԱՏՐԻԿ ՇԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՇԱՐՈՒՆԵԱՑ ՏԵՐ ՇԻ—
ՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԱԾԱԾՆԻՆ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒ—

124 Տե՛ս Ս. Բարխուդարյան, *Միջնադարյան հայ ճարտարապետներ...*, էջ 22:

125 *Նույն տեղում*, էջ 14:

126 Տե՛ս Յ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն...*, 2, էջ 50:

127 Տե՛ս Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 137:

128 Տե՛ս Տեր Մովսեսեան, *Սոկրատայ սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն*, Վաղարշապատ, 1897, էջ ՂԳ:

129 Տե՛ս Գ. Հովսեփեան, *Քարտեզ...*, էջ 173:

130 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 430—433.

ԹԻԻՆ ԻՆՁ ԵՒ ՇՈՒՇԱՆԱՅ, ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ԵՒ
ՀՐԱՀԱՏԱՅ ՈՐԴՒՈՅ ՄԵՐՈՅ

Արձանագրության փորագրման ժամանակը պարզաբանելու հնարավորություն են տալիս միայն հիշատակված անձիք։ Որոշելով նրանց ապրած ժամանակահատվածը և համեմատելով թվագրված այլ արձանագրությունների տվյալների հետ, հնարավոր է որոշել արձանագրության փորագրման և եկեղեցու կառուցման ժամանակը։ Արձանագրության մեջ հիշատակված են երեք անձ՝ Ներսեհ Կամսարականը, կինը՝ Շուշանը և որդին՝ Հրահատը։ Ներսեհ Կամսարականի անունը հանդիպում ենք Մրենի, Ալամանի և Նախճավանի վկայարանի արձանագրություններում։ Այդ արձանագրություններից առաջինը թվագրված է 613, Ալամանինը՝ 639 թվականներով։ Նախճավանի արձանագրության թվականն անհայտ է։ Շուշանի անունը հիշատակված է միայն Նախճավանի արձանագրության մեջ, իսկ Հրահատի անունը՝ այս և Արտավազդ Կամսարականի դամբարանի արձանագրություններում։ Ներսեհ Կամսարականի անունը կրող վերջին արձանագրությունը փորագրվել է 639 թվականին։ Նախճավանի վկայարանի վիմագիր հիշատակարանի թվականը թեև հայտնի չէ, սակայն նրա բովանդակությունից երևում է, որ կառուցվել է VII դարի 30-ական թվականներից հետո։

Հրահատին հիշատակող Թալինի ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունը նրան անվանում է «որդի» առանց որևէ տիտղոսի, իսկ Նախճավանի արձանագրության մեջ Հրահատը հանդես է գալիս որպես «Տէր Շիրակայ և Արշարունեաց»։ Այստեղից պարզ է, որ Արտավազդ Կամսարականի դամբարանը շինելիս Ներսեհ Կամսարականն արդեն գոյություն չուներ և տանուտերի տիտղոսը ժառանգել էր նրա որդին՝ Հրահատը։ Միանգամայն հասկանալի է, որ Հրահատը Շիրակի և Արշարունեաց տիրոջ տիտղոսը կարող էր ժառանգել առնվազն 639 թվականից հետո, քանի որ մինչ այդ սատույգ հայտնի է Ներսեհի կենդանի լինելը։

«Տէր Շիրակայ և Արշարունեաց»-ից բացի արձանագրություններում հանդիպում ենք նաև «պատրիկ» և «ապահիպատ» տիտղոսներին։ Այդպես է հիշատակված Արտավազդ Կամսարականը Նախճավանի տապանագրում[131]։ Սակայն այդ տիտղոսը չունի Հրահատը, երբ հիշատակվել է Թալինի եկեղեցում։ Մեր կարծիքով, այստեղ պատճառը պետք է որոնել տարիքային առանձնահատկություններում։ «Ապահիպատ» կամ [illegible] էլ միասին, տիտղոսները նախարարական տան արու զավակները կա[illegible]ին ձեռք բերել պատանեկության հասակից, իսկ ՈՐԴՒՈՅ ՄԵՐՈՅ պարզ [illegible] հայտությունը, առանց որևէ մեծարման, հնարավոր է միայն [illegible]ակի նկատմամբ։ Այս ենթադրությանը որոշ չափով օժանդակում են նաև Ներսեհ Կամսարականի ապրած ժամանակի վերաբերյալ կատարած ճշտումները։ Ներսեհ Կամսարականի անունը հիշատակվում է 613 թվականի արձանագրության մեջ Հերակլ կայսեր և Դավիթ Սահառունու հետ. այստեղից պետք է հետևցնել, որ VII դարի սկզբներին Ներսեհ Կամսարականը՝ Շիրակի և Արշարունիքի տիրոջ տիտղոսը կրելիս հասուն տարիքում է եղել, իսկ 640-ական թվականներին արդեն մահացել էր։ VII դարի 30-ական թվականներին հաճախ հանդիպող նրա անունը 40-ական թվականներին արդեն

131 Տապանագրում հիշատակված է ՏԵՐ ԱՐՏԱՒԱԶԴ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԻՒՊԱՏ ՊԱՏՐԻԿ ԵՒ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ (Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 432)։

բոլորովին չի հանդիպում։ Այսպիսով, ստացվում է որոշ կողմնորոշում Ներսեհ Կամսարականի կյանքի մոտավոր ժամանակաշրջանի մասին։ Նա ծնված պետք է լիներ VI դարի վերջին քառորդի սկզբներին և մահացած՝ VII դարի 40-ական թվականներին։ Այստեղից էլ հետևում է, որ նրա որդի Հրահատը ծնված կարող էր լինել VII դարի առաջին տասնամյակի վերջին կամ երկրորդ տասնամյակի սկզբին։ Բոլոր դեպքերում Թալինի եկեղեցու արձանագրության մեջ նա հիշատակված լինելով դեռևս սոսկ որպես որդի, հանդես է գալիս առնվազն մինչև պատանեկան հասակը։ Եթե VII դարի առաջին տասնամյակն ընդունենք Հրահատի ծննդյան հավանական տարիներ, ապա Թալինի ս. Աստվածածին եկեղեցու շինության արձանագրությունը կարող էր փորագրվել 613—615 թվականներից ոչ ուշ։

Որպես Մրենի տաճարի ժամանակակից, այս եկեղեցու շինության արձանագրությունը մերձենում է նրան նաև իր տառաձևերով ու տեղադրությամբ՝ եկեղեցու արևմտյան պատի վերին մասում՝ պատուհանի երկու կողմերում։ Այսպես է տեղադրված նաև Հռիփսիմեի շինարարական արձանագրությունը։ Դատելով Տեկորի արձանագրության օրինակով արևմտյան պատին տեղադրելը հին ավանդույթ է։

Ալաման.—Ալամանի եկեղեցու շինարարական արձանագրությունը մեկ տողով զոտևորում է եկեղեցին։ Սկիզբը գտնվում է արևմտյան թևի հարավային պատին։ Անցնելով հարավային թևն ամբողջությամբ, ավարտվում է արևելյան խորանի հյուսիս-արևելյան նիստի վրա։

Անխոցելի վերծանությամբ այս արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Օրբելին[132]։ Հ. Օրբելուց առաջ Ջալալյանցի[133] և Ալիշանի[134] հրատարակությունները ունեն անճշտություններ։

Արձանագրությունը փորագրված է գեղեցիկ ու խոշոր տառերով հետևյալ դասավորությամբ.

Ա պատ ՔՍԱՆ ԵՒ ԵՒԹՆԵՄԻՈՅ ՀԵՐԱԿՂԻ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՒՈՐԻ ՆԵՍԵՀԻ Շ—
Բ պատ ԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՇԱՐՈՒՆԵ—
Գ պատ ԱՅ ՏԵԱՌՆ ԵՒ ԹԵ—
Դ պատ ՈՓ
Ե պատ ԻՂՈՍ ԱՇԱՐՈՒՆ—
Զ պատ ԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ. ԵՍ ԳՐԻԳՈ—
Է պատ Ր ԵՂՈՒՍՏՐ ԵՒ ՄԱՐԻԱՄ ԻՄ
Ը պատ ԿԻՆ ՇԻՆԵՑԱՔ ԶՍՈ—
Թ պատ ԻՐԲ ԵԿԵՂԵՑԻ—
Ժ պատ Ս ՎԱՍՆ ՄԵՐ ՀՈԳՒՈՅ։

Արձանագրության մեջ հղմնահարված են միայն «Աշարունեաց» բառի առաջին երկու տառերը և երկրորդ Ա տառը փորագրված է թույլ երևացող Շ տառի վրա։

Բովանդակությունից տեղեկանում ենք, որ եկեղեցին 637 թվականին կառուցել է Գրիգոր Եղուստրը իր կնոջ՝ Մարիամի հետ միասին հոգու բարեխոսության համար։ Այս համառոտակի հաղորդման և դարձվածքային առանձնահատկությունների որոշ նշաններից ելնելով Հ. Օրբելին գտնում է,

132 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 394, 395, 397.
133 Տե՛ս Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան*, 2, էջ 52։
134 Տե՛ս Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 125։

որ սկզբում պետք է նախատեսված լիներ ընդարձակ բնագիր, սակայն համառոտվել է։ Արձանագրությունն իրոք չափազանց հակիրճ է և կառուցող անձանց մասին որևէ տեղեկություն չի հաղորդում։

Գրիգորի բարձրաստիճան բյուզանդական տիտղոսը վկայում է նրա ազնվական ծագումը։ Չի բացառվում նաև Գրիգորի Կամսարական տան ճյուղին պատկանելը, որով հիմնավորվում է եկեղեցին Կամսարականների տիրույթներում կառուցված լինելու իրողությունը։

Նախճավան —Շինարարական մյուս արձանագրությունը փորագրված է Նախճավանի եկեղեցու պատերին։ Նախճավանը գտնվում է Շիրակում, Ախուրյան գետի աջ ափին։ Այս արձանագրությունը դեռևս չի հաջողվել լրիվ ընթերցել, որովհետև նրա մեծ մասը ծածկված էր նորակառույց մի շինությամբ, եկեղեցին էլ բավականին ավերված է։

Ինչպես նախորդ արձանագրությունը, այս ևս ժամանակին զոհաբերել է եկեղեցին։ Հ. Օրբելու տեղեկության համաձայն, պահպանվել է միայն հյուսիսային պատի հատվածը և մի քանի տառ՝ արևմտյան պատի վրա։

Տեղագրությամբ ընդհանրություն ունի VII դարի 30-ական թվականներին փորագրված արձանագրությունների հետ։ Տառաձևերով ավելի մոտ է Բագավանի արձանագրությանը, սակայն տառերն ավելի խոշոր են և աչքի են ընկնում գրչագրության վարպետությամբ։ Արձանագրությունը թվագրված չէ, առանձնանում է մյուսներից իր ոճական առանձնահատկություններով՝ գրված է չափազանց գեղեցիկ, աղերսական լեզվով։ Շարագրված է երրորդ դեմքով և ունի բավականին առեղծվածային շարադրանք։ Ահա բովանդակությունը.

...ՍՏՈՐԵԱՅՅՍ ՈՎ ՍՏԵՓԱՆՈՍ ՅԱՌԱՋԱՌԱՔԵԱԼ ԵՒ ՆԱԽԱՄԱՐՏԻՐՈՍՆ, ՈՐՈՅ ՁԱՅՍ ՎԿԱՅԱՐԱՆ ՅԱՐԴԱՐԵԱՑ ՔԵԶ ԳՐԻԳՈՐԻ ԾՆԱՒԴ ՆԵՍԵՀԻ ՊԱՏՐԿԻ ՇԻՐԱԿԱՅ ԵՎ ԱՇԱՐՈՒՆԵԱՑ ՏԵԱՌՆ...

Հիշատակված են երկու անուն՝ Ներսեհ Կամսարականի և ոմն Գրիգորի։ Ըստ այդմ պարզվում է, որ եկեղեցին կառուցվել է Ներսեհի կենդանության ժամանակ՝ հետևաբար 639—640-ական թվականներից ոչ ուշ։ Գրիգորի հիշատակությունից իմանում ենք, որ եկեղեցին կառուցողը նրա ծնողն է։ Ո՞վ վերջինիս անունը պետք է լիներ արձանագրության չիրևացող մասում։ Ո՞վ է եղել Գրիգորը և ունեցե՞լ է արդյոք որևէ առնչություն Կամսարականների տոհմի հետ։ Այս հարցը կարևոր է այն առումով, որ կարող է բացատրել Ներսեհի մասնակցությունը եկեղեցու շինությանը։ Արձանագրության մեջ Ներսեհ Կամսարականի անունը գրված է հայցական հոլովով, որը համ կ է որպես ՆԵՍԵՀԻ ՊԱՏՐԿԻ ՇԻՐԱԿԱՅ ԵՎ ԱՇԱՐՈՒՆԵԱՑ ՏԵԱՌՆ ՈՐԴԻ Հ Տ մեկնությամբ[135], որտեղ Գրիգորը դառնում է Ներսեհի թոռը՝ Արտա ի եղբայրը։ Սակայն հայցական հոլովը դեռևս վճռական եզրակացության համար հիմք տալ չի կարող։ Այն ենթադրությունը, որ Գրիգորը եղել է Հրահատի որդի Արտավազդ Կամսարականի ավագ եղբայրը, բացառվում է առնվազն այն պատճառով, որ Գրիգորի անունն արձանագրության մեջ հիշատակված է առանց որևէ իշխանական տիտղոսի։ Կամսարական տան որդին, որի անունը վկայակոչում են նրա ծնողին ներկայացնելու համար, բնավ չի կարող հիշատակվել առանց իշխանական՝ պատրիկ, ապահյուպատ կամ այլ տիտ-

135 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 431—434.

ղոսների։ Այստեղից հետևում է, որ անկախ Գրիգորի ծնողի անունը պարզելուց, միևնույն է նա Կամսարական չէ։ Ներսեհի անվան առկայությունն այստեղ կարող է մի բացատրություն ունենալ՝ եկեղեցին կառուցվել է նրա տիրույթներում։ Նույնը տեսնում ենք նաև Ալամանի եկեղեցու արձանագրության մեջ։ Միաժամանակ Ներսեհ Կամսարականի անունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ եկեղեցին կառուցվել է Արտավազդ Կամսարականի դամբարանից առաջ, քանզի վերջինիս տապանագրի մեջ տանուտերի դերում արդեն հանդես է գալիս Հրահատը։ Արձանագրության կցկտուր տեղեկություններից պարզվում է, ա) եկեղեցին կառուցվել է VII դարի 30-ական թվականներին։ Այդ երևում է տեղագրությունից և Ներսեհ Կամսարականի անվան առկայությունից. բ) կառուցողը եղել է ոմն Գրիգորի ծնողը, որը չի պատկանել Կամսարականների կամ որևէ այլ ազնվական տոհմի. գ) շինությունը նվիրաբերվել է ս. Ստեփանոսին, հավանաբար, Գրիգորի և նրա ծնողի բարեխոսության համար։

Ալափարս —Գտնվում է Հրազդանի շրջանում։ Բազմիցս նորոգվել է։ Նախնական շինությունից մնացել են միայն հյուսիսային և արևելյան թևերի հանդիպակաց պատերը։ Թևի երկու պատերը միացված են 135° թեքությամբ դրված պատի միջոցով։ Գմբեթակիր քառանկյունի հիմքն այդ անկյունապատերի միջոցով վերածվել է ութանկյունու, որով միաժամանակ լայնացվել է գմբեթի տրամագիծը։ Պահպանված այդ հին հատվածում արձանագրության մի բեկոր կա՝ բաղկացած երկու տողից. «ՅՈՐԺԱՄ ԵՂԵՒ ԹՈՒԱԿԱՆԻՍ ԹՈՐ-

ԳՈՄԵԱՆ ՅԾ (901) ԿԱՄԱՒՔՆ ԱՅ ԽՈՐ ... [ԱՆՍ ԳՐԻԳՈՐ ԻՇԽԱՆ]...

ԻՄՈՒՄ ԱՅՆՊԻՍԻՔՆ ՄԱՍՆԸՆ ՍԱԼԵՑԻՆ ԸՆԴ ՍՈՂԵԿԱՆ Ք...

Առաջին տողի վերջավորությունն ավելացրել է Ե. Լալայանցը[136]. տեղում այն գոյություն չունի, իսկ երկրորդ տողը Ե. Լալայանցի մոտ բացակայում է։ Այն ավանդում է (ակներևաբար Մինչդեռ այդ հատվածն ամենակարևորն է։ Այն ավանդում է (ակներևաբար հատակի) սալապատման մասին, որից էլ հետևում է նրա նորոգման հարցին վերաբերելը։

Բոլոր դեպքերում Գրիգոր իշխանի անունը բացակայում է։ Եկեղեցու հին հատվածի վերին մասում պահպանվել է քիվի մի բեկոր, զվարթնոցատիպ հյուսվածքաձև զարդաքանդակներով։ Կառուցվածքային և հարդարանքի հնաձևության հիման վրա կարծում ենք, որ Ալափարսի եկեղեցին կարելի է թվագրել VII դարի սահմաններով։

Այս տիպի կենտրոնագմբեթ եկեղեցիների երրորդ տարբերակում բոլոր չորս թևերն էլ ներքուստ կիսաբոլոր են։ Հատակագծային այս լուծումը, բնականաբար առաջ է բերել նաև պատերի և տանիքի կառուցվածքի նոր լուծում, քանզի գմբեթի հիմքը չորս կողմերում հենվում է ոչ թե գլանաձև, այլ գմբեթարդի կամարների վրա։

Հայաստանում այս տարբերակը ներկայացված է Սառնաղբյուր, Պեմզաշեն (Անիի շրջան), Ծովիք (Իջևանի շրջան), Արզնի (Աբովյանի շրջան), Ագարակ (Արևմտյան Շիրակ), Փարպի (Աշտարակի շրջան) և Օշական (ս. Սիոն) գյուղերի եկեղեցիներով։

136 Տե՛ս «Ազգագրական հանդես», XX, էջ 47։

Չնայած կառուցվածքային ընդհանրություններին, եկեղեցիները իրենց մանրամասներում ունեն նաև տարբերություններ՝ Արգինա եկեղեցին արտաքին պատերի ութանիստ կառուցվածքի շնորհիվ ունի կլորավուն հորինվածք, Փարպիի, Պեմզաշենի և Օշականի եկեղեցիների թևերն արտաքուստ ուղղանկյուն են, Ծովքի եկեղեցու թևերը՝ կիսակլոր, Ագարակի եկեղեցին ունի նաև ավանդատներ։ Այս եկեղեցիների կառուցման մասին սկզբնաղբյուրներում տեղեկություններ չկան։ Ծովքի եկեղեցու պատերին կան XIII դարի նորոգման երեք արձանագրություններ[137]։

Զվարթնոցի —կիսաբոլոր չորս թևերի հորինվածքն օգտագործվել է նաև շատ ավելի բարդ շինությունների հիմքում։ Նմանօրինակ ատաղձով, սակայն գեղարվեստական բոլորովին այլ մոտեցմամբ և ընդհանուր կերպարի միանգամայն այլ ըմբռնումով է կառուցված վաղ միջնադարյան ճարտարապետության բարձրարվեստ հուշարձաններից մեկը՝ Զվարթնոցը։ Կիսակլոր, խաչաձև դասավորված թևերը Զվարթնոցում առնված են բոլորաձև պատերի մեջ, որի շնորհիվ ներքուստ բաղկացած է երկու հիմնական հատվածներից՝ խաչաձև ենթագմբեթային կենտրոնական մասից և կլորավուն շրջապատող սրահից։ Հաղորդման համար կենտրոնական մասի կիսակլոր թևերն, արևելյանից բացի, կառուցված են սյուների ձևով։ Ներկայումս եկեղեցին ավերակ է և չնայած այդ ավերակների բազմակողմանի ուսումնասիրմանը վերակառուցման հարցը դեռևս մնում է առեղծվածային, իսկ առաջարկված վարկածները՝ վիճելի[138]։ Եկեղեցու առաջին վերակազմությունը կատարել է Թ. Թորամանյանը[139]։ Այդ վերակազմությամբ Զվարթնոցը կոնաձև գմբեթով պսակված եռահարկ շինություն է։ Վերակազմության հիմնական տարաձայնությունները վերաբերում են երկրորդ հարկին, որը, Թ. Թորամանյանի կարծիքով, եղել է բոլորաձև և ունեցել է սրահ։ Սակայն որպես չլուծված առեղծված մնաց դեպի երկրորդ հարկի սրահը տանող աստիճանների հարցը։ Աստիճանների տեղը չպարզվեց նաև հետագա ուսումնասիրողների կողմից։ Ճարտարապետ Տ. Մարությանը գտնում է, որ աստիճանները եղել են արևելակողմի քառանկյունի սենյակում՝ փայտից[140]։ Սակայն նման մոնումենտալ շենքի համար փայտաշեն աստիճաններն անհավանական են։

Ելնելով հայ ճարտարապետությանը բնորոշ կենտրոնագմբեթ հորինվածքների առավել տարածված տեսակներից Ս. Մնացականյանը գտնում է, որ երկրորդ հարկը պետք է պահպաներ քառաթև հատակագիծը, քանի որ նրա հիմքը կազմում է Զվարթնոցի հենց այդ խաչաձև միջուկը և որպ[illegible]յդ կառուցվածքի աստիճանական զարգացման օղակներ բերում է Ո[illegible]ր, Հառիճ, Ագարակ, Բագարան, Մաստարա, Գառնի, Զվարթնոց տարբեր[illegible]րը։ Այդ տարբերակների մեջ Զվարթնոցը դիտված է որպես մի շինություն, որ արդեն գոյություն ունեցող ավարտուն հորինվածքը դրված է հսկայական

137 Տե՛ս Ս. Ավագյան, Մորո Ձորո վանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին», 1967, Բ, էջ 57—58, Գ, էջ 59։

138 Տե՛ս Ս. Մնացականյան, Զվարթնոցի վերակազմության նոր նախագիծ, «Տեղեկագիր», հաս. գիտ., Երևան, 1959, № 4, 9, նույնի Звартноц, М., 1971, Տ. Մարության, Զվարթնոց, Երևան, 1963, *А. В Кузнецов*, Тектоника и конструкция центрических зданий, I, М., 1951. Գ. Լևոնյան, Նոր կարծիք Զվարթնոցի մասին, «Տեղեկագիր» գրակ. և արվեստի ինստիտուտի, № 1, Երևան, 1926։

139 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 247—270։

140 Տե՛ս Տ. Մարության, Զվարթնոց, էջ 35։

բոլորակի վրա։ Հորինվածքային ձևերի նման ծանրաբեռնվածությունը բնորոշ չէ հայ ճարտարապետությանը, մանավանդ, եթե նկատի առնենք այդ տիպերի առաջացման տրամադրությունը։ Հիշյալ տիպերից նման ենթադրության համար առավել համապատասխան կարող է լինել Գառնիի քառախորան եկեղեցին։ Սակայն այս եկեղեցու և թվագրությունն է սխալ (659), և վերակազմությունը։ Գառնիի եկեղեցու հատակագծով Հայաստանում հայտնի է երեք շինություն։ Դրանցից մեկը՝ Խծկոնքը, ամբողջովին կանգուն է։ Եկեղեցին բաղկացած է կլորավուն առաջին հարկից և գմբեթից։ Չորս ավանդատների առկայությունն ապացույց է, որ ինչպես այդ, այնպես էլ Բանա եկեղեցին պատկանում են IX—XI դարերին։ Այդ մասին հեղինակն իր նույն աշխատության մեջ հիշատակում է որպես ժամանակը բնորոշող հանգամանք[141]։ Զվարթնոցի ճարտարապետական ձևերի ակունքները կարելի է տեսնել Արգինի[142] և Արագածի եկեղեցիներում։ Արգինում առաջին անգամ փորձ է արված քառաթև ներքին տարածությունն ամփոփել արտաքուստ բոլորաձևին ձգտող շրջանագծով։

Զվարթնոցը հայ ճարտարապետության ամենանշանավոր ու հանրածանոթ շինություններից մեկն է և նրա մասին ժամանակակիցները թողել են բազմապիսի տեղեկություններ։

Աղբյուրներից հնագույնը Սեբեոսն է. «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորում, ասեն, ընդ առաջ եղև թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի։ Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն։ Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատւոյն, որում նուիրեացն։ Ած ջուր և եբեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառատունկս։ և շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկագիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ»[143]։

Սեբեոսի տեղեկություններից հայտնի է դառնում նաև, որ Ներսես կաթողիկոսը, նախաձեռնելով այս շինությունը, հետագայում իր քաղքեդոնական հայացքների պատճառով դիմադրության է հանդիպում և ստիպված հեռանում է իր ծննդավայր Իշխան գյուղը (Տայքում)[144]։ Շինարարությունը շարունակում և ավարտում է հաջորդը՝ Անաստաս կաթողիկոսը, տակավին մինչ կաթողիկոս դառնալը[145]։

Ելնելով Կաղանկատվացու այն տեղեկությունից, որ Կոնստանդին կայսրը գալով Հայաստան տեսել և հիացել է Զվարթնոցով, Թ. Թորամանյանը հետևցնում է, որ նրա Հայաստան գալու տարին՝ 652 թվականին Զվարթնոցն արդեն կանգուն էր և Անաստասը, հավանաբար, շարունակել և ավարտել է պալատական շենքի կառուցումը[146]։ Այս մասին վկայում է Դրասխանակերտ-

141 Տե՛ս *С. Х. Мнацаканян*, Звартноц, стр. 85.

142 Տե՛ս Վ. Գրիգորյան, Արգինի քառախորան եկեղեցին, «Լրաբեր» հաս. գիտ., 1971, № 7, էջ 76—82։

143 Սեբեոս, էջ 120։

144 Տե՛ս նույն տեղում, էջ 146։

145 Տե՛ս Բարձրբերդցի, էջ 97։

146 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 231։

ցին, երբ նկարագրում է 659 թվականից հետո Ներսեսի կատարած աշխատանքները[147]։

Սեբեոսը նկարագրելով այդ ժամանակաշրջանի իրադարձությունները նշում է, որ եկեղեցու հիմնադրումը կատարվել է Կոնստանդին կայսեր գահակալության երկրորդ տարում՝ 643 թվականին[148]։ Այս ամենից հետևում է, որ Զվարթնոցը կառուցվել է ինը տարում՝ 643—652 թվականներին։

Զվարթնոցի արտաքին պատի դեկորատիվ կամարաշեղների միջև քանդակված են շինարարական գործիքներ բռնած մարդկային կերպարանքներ։ Մասնագետներն այն կարծիքն են հայտնել, որ այստեղ պատկերված են եկեղեցին կառուցող վարպետները[149]։

Այդ քանդակներից բացի, վարպետները թողել են նաև իրենց նշանները քարերի վրա, որոնք չափազանց ուշագրավ պատկեր են բացում նույն ժամանակաշրջանի այլ հուշարձաններում հայտնաբերված նույնատիպ նշանների հետ համեմատելիս[150]։

Կառուցողների մասին եղած վիմական այս սկզբնաղբյուրների մեջ իր կարևորությամբ առանձնանում է քանդակներից մեկը, որի տակ փորագրված է վարպետի անունը՝ ՅՈՀԱՆ։ Ուսումնասիրողները գտնում են, որ Յոհանը Զվարթնոցի ճարտարապետն է[151], այն մեծագործ շինարարը, որին Կոնստանդ կայսրը կամեցել էր իր հետ տանել Կոնստանդնուպոլիս՝ իր մայրաքաղաքը ևս նմանօրինակ շինությամբ զարդարելու նպատակով, սակայն վարպետը ճանապարհին մահացել էր[152]։

Զվարթնոցի մոտ եղել է կաթողիկոսական ապարանք։ Ս. Մնացականյանի կարծիքով Ներսես կաթողիկոսի ապարանքը և գահանիստ դահլիճը եղել են կամարածածկ, կառուցվել են համեմատաբար ուշ, բայց, ըստ երևույթին, դեռևս Ներսեսի օրոք։ Ելնելով սյունազարդ դահլիճի տեղադրությունից՝ կոմունալ շինությունների կողքին Ս. Մնացականյանն այն համարում է սեղանատուն[153]։

Զվարթնոցը քանդել են արաբները, որի մասին ուղղակի վկայում է Մխիթար Այրիվանեցին[154]։ Դատելով ավերակների զանգվածային բեկորներից արաբները լրիվ չեն ավերել։ Այն աստիճանաբար ավերվել է ժամանակի ընթացքում։

Ուսումնասիրողների համոզմամբ, այս տիպին է պատկանել նաև Իշխանի եկեղեցին։ Գեորգի Մերչուլին հաղորդում է, որ երբ կուրապաղատ Բագրատը երանելի հայրեր Գրիգորի և Սաբայի հետ գալիս է Իշխան, շատ է հ   ում այս վայրը և Ներսեսի կառուցած կաթողիկե եկեղեցում Սաբան   ում է եպիսկոպոս[155]։ Ն. Տոկարսկին գտնում է, որ Իշխանի եկեղեցին կ   ցվել

147 Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 88։

148 Տե՛ս Սեբեոս, էջ 119։

149 Տե՛ս Գ. Լևոնյան, Նոր կարծիք Զվարթնոցի մասին, «Տեղեկագիր» գրակ. և արվեստի ինստիտուտի, 1926, № 1, էջ 206—208, Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 73—77։

150 Տե՛ս В. М. Арутюнян, По поводу датировки храма в Аруче, Ереван, 1946, стр. 29.

151 Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 73—77, Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետները..., էջ 28—29։

152 Տե՛ս Կաղանկատուացի, էջ 53։

153 Տե՛ս С. Х. Мнацаканян, Звартноц, стр. 37, 38.

154 Տե՛ս Այրիվանեցի, էջ 50։

155 Տե՛ս „Житие св. Григория Хандзтийского“, СПб., 1911, стр. 101.

է մինչև Ներսեսի կաթողիկոս դառնալը, երբ նա դեռ իր հայրենի Իշխան գյուղի եպիսկոպոսն էր[156]։

Քանի որ մատենագիրները չեն հաղորդում, թե ո՞րն է եղել Տայքի եպիսկոպոսության կենտրոնը՝ Ս. Մնացականյանը եզրակացնում է, որ դա Իշխանը չէ (!) և գալիս է այն համոզման, որ Իշխանի եկեղեցին կառուցվել է քաղկեդոնության շրջանում, որովհետև միայն այդ ժամանակ էր հնարավոր Ներսեսի այնտեղ գտնվելը[157]։ Սակայն, նկատի ունենալով, որ Իշխանը եղել է Ներսեսի հայրենիքը, հավանական է, որ այն էլ նա դարձրել էր եպիսկոպոսական կենտրոն։ Դեռ ավելին, քաղկեդոնություն ընդունած ժամանակ, մինչև Թեոդորոս Ռշտունու մահը (658 թ.), հազիվ թե Ներսեսը դիմեր քաղկեդոնական ակտիվ գործունեության և տաճար կառուցելով հակադրվեր հայ եկեղեցուն, մանավանդ, որ նա քաղկեդոնությունը ընդունել էր հարկադրաբար։

Իշխանի շինությունից պահպանվել են միայն բեմի խորանի սյուները։

Ներսեսին է վերագրվում նաև Վաղարշակերտի, Դվինի ս. Սարգիս և Խոր Վիրապի եկեղեցիների կառուցումը։

Դվինի ս. Սարգիս —ժամանակին պեղել է Խ. Վրդ. Դադյանը։ Ներկայումս նրա տեղը հայտնի չէ։ Պահպանվել են մի քանի բեկորներ Դվինում։

Սամուէլ Անեցու վկայությամբ շինությունը կառուցվել է 654 թվականին[158], իսկ վրաց անանուն ժամանակագիրը կառուցումը վերագրում է ումն Սարուլի որդի Սարգսին և եկեղեցին էլ համարում մենաստան[159]։

Դրասխանակերտցին գրում է, որ արաբների կատարած կոտորածից հետո Ներսեսը «Վերստին շինէր զհրգեհեալ զվկայարան մեծի նահատակի Սերգեայ»[160], «Վերստին շինէր» արտահայտությունից երևում է, որ այն գոյություն է ունեցել նախքան VII դարի ավերումը։

Նշելով Ներսեսի շինարարական գործունեության հաջորդականությունը Վարդան Բարձրբերդցին առաջինը հիշատակում է այս եկեղեցին։ Եզրի մահից հետո Ներսեսը «Թաղէր, և ի նմին տեղւոջ շինէր զհրգեհեալ վկայարան սրբոյ Սարգսի»[161]։ Այս տեղեկությունից պարզվում է, որ եկեղեցին կառուցվել է անմիջապես Եզրի մահից հետո՝ 641-ին մոտ տարիներին և ավերվել է հրդեհի հետևանքով։

Մ. Օրմանյանը ելնելով Դրասխանակերտցու վկայությունից գտնում է, որ եկեղեցին Ներսես կաթողիկոսը նվիրել է Դվինում արաբների կոտորածի ժամանակ զոհվածների հիշատակին[162]։

Պեղումների ժամանակ հայտնաբերված բեկորների մեջ առանձնապես ուշագրավ են խոյակները, որոնք բաղդատելի շատ տարրեր ունեն Զվարթնոցի զամբյուղաձև խոյակների հետ[163]։

156 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 130.

157 Տե՛ս С. Х. Мнацаканян, Звартноц, стр. 60, 61.

158 Տե՛ս Ս. Անեցի, էջ 83։

159 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1934, 1, էջ 114—116։

160 Դրասխանակերտցի, էջ 83։

161 Բարձրբերդցի, էջ 93։

162 Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, մասն Ա, էջ 708։

163 Տե՛ս Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, էջ 86—90։

Առանձին քարերի վրա գտնվել են նաև ճարտարապետների նույնատիպ նշաններ, որոնք հանդիպում են Զվարթնոցի, Պտղնիի, Արուճի, Զվարիի և Յրոմիի եկեղեցիներում[164]։

Խորվիրապ — Հերթականությամբ երկրորդը Վ. Բարձրբերդցին հիշատակում է Խոր Վիրապի եկեղեցու շինությունը, անվանելով այն «տաճար սրբութեան ի վերայ Վիրապին...»[165]։

Հիմնվելով արաբ պատմիչ Ալ Մուկադասիի նկարագրության վրա, Ս. Մնացականյանը փորձել է տալ Ներսեսի կառուցած Խորվիրապի եկեղեցու վերակազմությունը[166]։ Ըստ պատմիչի եկեղեցին ունեցել է գմբեթանման վրանի ձև, հենված ութ սյուների վրա[167]։ Պատմիչը թեև չի տալիս այդ սյուների արտաքին ու ներքին դասավորության մանրամասնը, սակայն Ս. Մնացականյանի վերակազմությունը մեծապես հավանական է։

Խորվիրապի եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ տեղեկություն կարելի է քաղել Սամուէլ Անեցու հետևյալ վկայությունից. «Հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր, զզարմացուցիչն տեսողաց, բայց յառաջ շինէ զվկայարան սրբոյն Սարգսի ի Դուին, և զոր ի վերայ Վիրապի սրբոյն Գրիգորի»[168]։

Այստեղից հետևում է, որ Խորվիրապի եկեղեցին կառուցվել է ս. Սարգսի եկեղեցու հետ միասին, Զվարթնոցից առաջ, մինչև 642 թվականը։

* * *

VI—VII դարերի բազմազան հորինվածքների մեջ առանձնահատուկ տեղ ունեին բազմախորան շինությունները, որոնք թեև իրենց ծագումով կապված են հռոմեական ու բյուզանդական ճարտարապետության հետ, սակայն կերպարի մարմնավորման առումով էապես տարբեր են։ Բյուզանդական բազմախորան շենքերին բնորոշ է արտաքին ուրվագծի միասնական պատկերը, մինչդեռ Հայաստանի բազմախորան հորինվածքներում գմբեթի տրամագիծը նկատելի փոքր է ստորին բոլորաձև զանգվածից, որի հետևանքով արտաքին ուրվագիծը բաժանվում է երկու հարկերով։ Նույն կերպարն ունի նաև ս. Վիտալիի եկեղեցին (547) Ռավեննայում[169], սակայն բաժանումն այստեղ իրագործված է ոչ թե ենթագմբեթային կենտրոնի մեծացման, այլ ենթագմբեթային տարածքը օղակաձև սրահի մեջ առնելու շնորհիվ։

Բազմախորան եկեղեցիների հայկական տարբերակը բխում է ազգային ճարտարապետական մտքի հետևողական զարգացման տրամաբանու[illegible]նից, որը ձգտում էր ծավալատարածական հորինվածքների առավել կեն[illegible]ցմանն ու ամբողջականացմանը[170]։ Այդ հետևանքով ուղղահայաց համ[illegible]ությունների շեշտման անհրաժեշտությունն առաջ բերեց արտաքին ուրվագծի

---

[164] Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 74։

[165] Բարձրբերդցի, էջ 93—94։

[166] Տե՛ս *С. Х. Мнацаканян*, Звартноц, стр. 41—42.

[167] Տե՛ս *Н. А. Караулов*, Сведения арабских географов IX—X вв. о Кавказе, Армении и Азербайджане, СМОМПК, вып. XVIII, Тифлис, 1908, стр. 16.

[168] Ս. Անեցի, էջ 83։

[169] Տե՛ս ВИА, *III*, стр. 73—74.

[170] Տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 165, նաև *А. Л. Якобсон*. Очерк..., стр. 21.

Որոտնավանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից

Տաթևի վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից



Հոռոմոս. սբ. Հովհաննես եկեղեցին և գավիթը

մասնատում, որով նախ շեշտվում է այդ համաչափությունը և, երկրորդ՝ գմբեթը ձևոք է բերում կենտրոնն ընդգծող առանցքի իմաստավորում։

Ներկայումս Հայաստանում հայտնի են բազմախորան վաղ միջնադարյան երեք եկեղեցիներ, որից մեկը վեցախորան է (Արագած, Թալինի շրջան), իսկ երկուսը՝ ութախորան (Իրինդ, Թալինի շրջան և Եղվարդ, Նաիրիի շրջան)։

Արագած —Եկեղեցին գտնվում է Ախուրյան գետի արևելյան ափին, Արագած գյուղից մոտ 5 կմ արևմուտք։ Կառուցման վերաբերյալ գրավոր տեղեկություններ չկան։ Եկեղեցու թվագրման համար հիմք են ծառայում լոկ ճարտարապետական ձևերն ու կառուցողական առանձնահատկությունները։ Ժամանակագրական բնութագիր բովանդակող առանձնահատկությունների մեջ ուշադրություն է գրավում բազմաստիճան պատվանդանը, որը հանդիպում է բացառապես վաղ միջնադարում և մեծ մասամբ մինչև VII դարը[71] (Քասաղ՝ IV դ., Կասնուտ՝ IV դ., Երերույք՝ IV—V դդ., Տեկոր՝ V դ., Զովունի՝ V դ.)։

Ժամանակագրական ընդհանուր բնութագիր ունի մուտքի ձևավորման հորինվածքը՝ ուղանկյունի ճակտոնով և որմնասյուներով, որի միայն հետքերն են մնացել։ Նման հորինվածք ունեցել են Քասաղի, Երերույքի, Տեկորի, Մաստարայի (VI դ.), Ավանի (VI դ.), Հռիփսիմեի (618 թ.), Արուճի (668 թ.) եկեղեցիները։

Բնութագրական մանրամասներից են պատուհանները, որոնք նկատելիորեն լայն են և տեղադրված են բավականին բարձր։ Այս հանգամանքը, որպես V—VI դարերի ճարտարապետությանը բնորոշ հատկանիշ, ընդգծել է Թ. Թորամանյանը[172]։ Նման պատուհաններ ունեն IV—VII դարերի մի շարք եկեղեցիներ՝ Քասաղ, Երերույք, Ավան, Բագավան (639 թ.), Արուճ և այլն։

Ուշադրություն են գրավում պատուհանների պսակները։ Դրանք բավականին լայն են և ունեն միայն գծային ձևավորում։ VII դարի եկեղեցիների շքեղ զարդապատումների համեմատ այսօրինակ ձևավորումը Ն. Տոկարսկին համարում է VII դարին նախորդող առանձնահատկություն[173]։

Կառուցվածքային առանձնահատկությունների մեջ միակ, համեմատաբար անաքրոնիկ տարրը որմնախորշերի առկայությունն է, որոնք սովորաբար թվագրվում են VII դարի սկզբով[174]։ Սակայն, եթե նկատի առնենք հորինվածքի բազմախորան բնույթը և պատերի արտակարգ հաստությունը (1 մետրից ավելի), ապա ժամանակագրության համար դա վճռական նշանակություն ունենալ չի կարող։ Առավել կարևորը թերևս խորանների և կամարների պայտաձևությունն է, որը բնորոշ է IV—V դարերի հուշարձաններին[175]։

Հետաքրքիր է երկհարկանի գմբեթարդով խորանը ծածկելու հնարանքը։ Առաջին հարկը ծածկում է խորանի ներսի հատվածը, իսկ երկրորդը նստած է որմնամույթերի և առաջին գմբեթարդի վերին կամարի վրա։ Այսօրինակ կառուցվածքը բացառիկ երևույթ է և այլ զուգահեռներ չունի։

---

171 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 150—151.

172 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր...., 1, էջ 105, նաև «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 96։

173 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 154.

174 Նույն տեղում, էջ 151։

175 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 105, նաև Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 147, 149, А. Л. Якобсон, Очерк..., стр. 12.

7—892

Կառուցվածքային տարրերի ժամանակագրական հատկությունների մեջ առավել կարևոր, թերևս վճռորոշ տեղ ունի գմբեթը: Թմբուկի վեց նիստերը հենվում են վերին գմբեթարդի կամարների վրա առանց տրոմպա-առագաստային կամ ենթաթմբուկի քիվի միջնորդության: Մի ամբողջական քարից կերտված տրոմպները երկու շարքով տեղադրվել են սֆերիկ ծածկի տակ: Գմբեթի թմբուկի նմանօրինակ կառուցվածքը և կապը կիսասֆերիկ ծածկի հետ մեծապես աղերսվում է Տեկորի գմբեթի կառուցվածքային եղանակի հետ, որը մասնագետները ընդգծում են որպես գմբեթների կազմավորման նախնականության հատկանիշ[176]:

Անհրաժեշտ է նշել, որ գմբեթը միաժամանակ եկեղեցու միակ մասն է, ուր պահպանվել է քիվը: Ընդհանուր առմամբ հարդարանքի տեսակետից եկեղեցին չափազանց զուսպ է և գրավում է առավելապես ճարտարապետական ձևերի մոնումենտալ ներդաշնակությամբ: Սակայն այս ընդգծված զսպվածության մեջ բավականին տարօրինակ է գմբեթի քիվի ծանրաբեռնվածությունը դեկորատիվ տարրերով: Թեև գմբեթը, որպես ճարտարապետական կերպարը առավել իմաստավորող առանձնամաս, պետք է ընդգծված լինի, սակայն դատելով շենքի գեղագիտական տրամաբանությունից՝ ծանրաբեռնվածությունն այստեղ սկզբունքորեն բացառված է: Քիվը բաղկացած է երկու զանգվածից, ըստ որում վերինը նկատելիորեն բարձրացնում է թմբուկի պատերը կիսասֆերիկ ծածկ մակարդակից և դրանով իսկ վկայում իր հավելված լինելը, մինչդեռ ներքևի զանգվածը համապատասխանում է անհրաժեշտ և սովորաբար տարածված մակարդակին: Միաժամանակ վերին քիվը տարբերվում է քարի մուգ գույնով և ժամանակագրական բնութագիր ունեցող հարդարանքով: Ճակատային մասում տեղադրված է պայտաձև կամարներով ատամնաշարը, որոնց վրա, կամարներին զուգահեռ, գծային փորվածք է արված: Այդ ատամնաշարի տակից հաջորդում է երկրորդ շարքը, ավելի փոքր չափի և սեղանաձև: Ամբողջ զանգվածը ներքևից եզրափակում է ելունդավոր գոտին: Այս ամենը կերտվել է մեկ քարից և դրվել արդեն գոյություն ունեցող հին քիվի վրա: Վերջինս շատ ավելի միաձույլ տեսք ունի թմբուկի պատերի հետ հատկապես իր դրվածքով և քարի գույնով: Բաղկացած է ճակատային քառակուսի մասից, որը գոգավորվելով դեպի ներքև՝ ձուլվում է պատի հետ: Դատելով վերոհիշյալ առանձնահատկություններից, վերին քիվը հավելված է: Համեմատական քննությունը ցույց է [illegible]ալիս, որ վերին քիվի ձևավորման եղանակը տարածված է եղել VI—V[illegible]արերում (Մաստարա, Մրեն, Գառնահովիտ, Ալաման և այլն)[177]: Այսպ[illegible]հետևում է, որ եկեղեցին նորոգվել է VI դարի վերջերին կամ VII դարի առաջին կեսին, իսկ ավելի հավանաբար և կառուցված կարող է լինել VI դարից ոչ ուշ, նախկան է՝ VI դարի սկզբին:

Պատերի ուշադիր զննության շնորհիվ գտնվեց մի բավականին հոդմնահարված արձանագրություն, որը թեև կառուցման ժամանակը որոշելուն չի օգնում, սակայն մեծապես կարևոր է: Գմբեթի թմբուկի հյուսիսային պատուհանի պսակի վրա խոշոր տառերով փորագրված է ԳՐ—ԳՈՐ (Գրիգոր): Ինչպես արդեն տեսանք, հայ վիմագրերում խոշոր, գեղեցիկ տառերով և մեկուսի հիշատակվել է միայն ճարտարապետի անունը[178]: Այս արձանագրությունը ճարտարապետի անունը հիշատակող հնագույն վավերագիրն է:

Եկեղեցին առանձնակի կարևորություն ունի հայ ճարտարապետության պատմության մեջ: Այն Եղվարդի և Իրինդի հուշարձաններից ավելի հին է և իր ճարտարապետությամբ Արդնիի քառախորանի հետ միասին ստեղծել է այն ավանդական հողը, որի վրա մշակվել են բոլորակ հորինվածքների հետագա տարբերակները:

Եղվարդ, Իրինդ —Երկու եկեղեցիների հարավային կեսը կործանված է: Ութխորան շինություններ են: Ժամանակին ութ խորանները խմբված են եղել ենթագմբեթային դահլիճի շուրջը՝ արտաքուստ շեղտված որմնախորշերով: Խորանների բոլորշի հիմքի վրա քիվի միջնորդությամբ նստած է գմբեթի թմբուկը: Մույթերը մշակված են կիսասյուներով: Չնայած ընդհանուր նմանությանը, եկեղեցիներն ունեն նաև տարբերություններ: Եղվարդի եկեղեցու բեմի խորանը նկատելիորեն մեծ է և արտաքուստ հնգանիստ: Արտաքին որմնախորշերի մեջ տեղադրված են կիսակլոր որմնասյուներ:

Իրինդի եկեղեցում բոլոր խորանները հավասարաչափ են: Շեղտված է միայն արևմտյան մուտքը, որտեղ խորանին փոխարինում է ուղղանկյուն միջանցքը:

Իրինդի եկեղեցին տարբերվում է Եղվարդի եկեղեցուց նաև ավանդատների առկայությամբ, որոնք արևելյան պատի հատվածում ուղիղ գծով խախտում են արտաքին բազմանիստ պարագիծը:

Մատենագրական տեղեկությունները վերաբերում են համեմատաբար ուշ ժամանակներին: Վարդան Բարձրբերդցին հաղորդում է, որ Անաստաս կաթողիկոսի օրով «շինեաց Գրիգոր Մամիկոնեան Արճոյ և զվանքն Եղվարդայ»[179]:

Ելնելով հորինվածքային ու կառուցողական ձևերի համեմատական քննությունից, ուսումնասիրողներն Իրինդի եկեղեցին ևս թվագրում են նույն ժամանակով[180]:

* * *

Կառուցողական հնարքների աստիճանական կատարելագործումը հնարավորություն տվեց հայ ճարտարապետներին առանց անջատ մույթերի կիրառման մեծապես ընդարձակել եկեղեցիների ներքին տարածությունը: Դրա առավել արտահայտիչ տիպը, թերևս, ընդարձակ սրահների կառուցումն էր, որի հնագույն օրինակը Ջովունի գյուղի եկեղեցին է (V դ.)[181], իսկ VII դարում կառուցվեցին Պտղնիի և Արուճի եկեղեցիները:

Պտղնի —Եկեղեցին գտնվում է գյուղի մեջ: Պատերը զարդարված են հարուստ հարթաքանդակներով, որոնց մեջ ուշագրավ է հարավային պատին

---

176 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 205—206, նաև «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 112:

177 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 152.

178 Տե՛ս Գ. Հովսեփեան, Նիւթեր..., Գ, էջ 27, Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 22, Ա. Մանուչարյան, Արձանագրման մի ավանդական ձևի մասին, «Լրաբեր» հաս. գիտ., Երևան, 1970, № 6, էջ 71—74:

179 Բարձրբերդցի, էջ 97.

180 Տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 165, 167:

181 Տե՛ս Ս. Սահինյան, Ջովունիի ճարտարապետական խումբը, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1968, № 1, էջ 101—120:

քանդակված որսի տեսարանը։ Շքեղ ձևավորում ունի նաև հյուսիսային կողմի մուտքը, որն իր եռանկյունաձև ճակատով կարող է դիտվել որպես ժամանակագրական հատկանիշ։ Ժամանակագրական հատկանիշ է նաև եռաստիճան պատվանդանը։ Եկեղեցին կիսավեր վիճակում է։

Հուշարձանի թվագրման կապակցությամբ արտահայտվել են մի շարք կարծիքներ։ Հիմք ընդունելով մատենագրական այն տեղեկությունը, որ VI—VII դարերում Պտղնին եղել է եպիսկոպոսական աթոռատեղի, Ն. Տոկարսկին հնարավոր է համարում եկեղեցին թվագրել VI—VII դարերի սահմաններով[182], Գ. Հովսեփյանը թվագրում է VI դարի երկրորդ քառորդով[183]։ Հովսեփյանը նկատի է առել եկեղեցու հարավային պատի լուսամուտի պսակի ՄԱՆՈՒԵՂ ԱՄԱՏՈՒՆԵԱՑ ՏԷՐ արձանագրությունը և մատենագրական տեղեկությունների քննությամբ պարզել, որ Մանուել Ամատունին ապրել է 510—590 թվականներին։ Այս թվագրման հետ համաձայն չէ Ս. Մնացականյանը, որի կարծիքով եկեղեցին կառուցվել է VII դարի առաջին տասնամյակներից ոչ ավելի վաղ։ Ս. Մնացականյանը միաժամանակ չի բացառում, որ մինչև ներկայիս հայտնի եկեղեցին, VI դարում գոյություն է ունեցել ավելի հինը[184], որի մասին հիշատակություն կա Գիրք թղթոցում։

Եկեղեցու հյուսիսային մուտքի վերևի մասում խոշոր և գեղեցիկ տառերով փորագրված է ՍԱՀԱԿ։ Արձանագրությունը տեղադրված է մեկուսի և որևէ բացատրություն չկա հիշատակված անձնավորության մասին։ Ինչպես տեսանք Գառնահովտի, Ավանի, Ջրվեժի, Արագածի և Զվարթնոցի օրինակներում այս կարող է միայն ճարտարապետի անունը լինել։ Այդպես է մեկնաբանում նաև Գ. Հովսեփյանը[185]։

Արուճ —Այս տիպի հորինվածքների մեջ առավել հանրածանոթն Արուճի եկեղեցին է։ Այն կառուցել են Գրիգոր Մամիկոնյանը և նրա կինը՝ Հեղինեն։ Արևելյան պատին պահպանված արձանագրությունը հաղորդում է՝

Ի ԵԻ Թ ԱՄԻ ԿՈՍՏԱՆՏՆԻ ՄԱՐԵ—
ՐԻ ԱՄՍՈՅ ՈՐ ԱԻՐ Ժ ԵԻ Ե ՀԻՄՆ
ԱՐԿԵՑԱԻ ՍՈԻՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ
Ի ՁԵՌՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ
ՀԱՅԻՈՑ ԻՇԽԱՆԻ ԵԻ ՀԵՂԻՆԷ—
Ի ՆՈՐԻՆ ԶՈՒԳԱԿՑԻ
Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻՒՆ ՇԻՆԱԻ—
ՂԱՑ ԶՍԱ։

Հուշարձանի կառուցման մասին տեղեկություն են թողել նաև պատմիչները։ Ղևոնդը հավաստիացնում է, որ եկեղեցին կառուցվել է Գրիգոր Մամիկոնյանի կողմից. «(Գրիգոր Մամիկոնյան) շինեաց տուն աղօթից ի գաւառն Արագածոտն ի յաւանն Արուճ տաճար փառաց անուան տեառն, գեղեցիկ վայելչութեամբ, զարդարեալ ի յիշատակ անուան իւրոյ»[186]։

Եկեղեցու շինարարական արձանագրության գիտական քննության առաջին փորձը կատարել է Հ. Օրբելին։ Անձամբ տեսած չլինելով արձանագրու-

182 Տե՛ս *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 105—106.

183 Տե՛ս Գ. Հովսեփեան, Նիւթեր..., Գ, էջ 30։

184 Տե՛ս Ս. Մնացականյան, Պտղնիի տաճարը, ՊԲՀ, 1961, № 3—4, էջ 237։

185 Տե՛ս Գ. Հովսեփեան, Նիւթեր..., Գ, էջ 27։

186 Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, ՍՊԲ, 1887, էջ 15։

թյունը և ձեռքի տակ չունենալով օժանդակ հնարավորություններ, միայն Մ. Տեր-Մովսեսյանի և Մ. Տեր-Մկրտչյանի սխալաշատ վերծանությունների հիման վրա նա չի կարողացել ճիշտ կողմնորոշվել։

Չնայած նյութերի առատությանը, Արուճի արձանագրությունն ուսումնասիրողների մոտ վեճերի տեղիք է տվել։ Տարակարծության միակ պատճառը թվագրությունն է։ Արձանագրությունում նշված է, որ եկեղեցին կառուցվել է Կոստանդին կայսեր թագավորության 29-րդ տարում, այսինքն՝ 670 թվականին, մինչդեռ հայտնի է, որ հիշյալ կայսրը 29 տարի չի թագավորել և 670 թվականին բյուզանդական գահի վրա նստած էր Կոստանդին Չորրորդը։ Ելնելով այս սխալից Հ. Օրբելին ենթադրում է, որ արձանագրությունը բնագիր չէ և այդ սխալը կարող էր առաջանալ հետագա արտագրության ժամանակ[187]։ Այս վավերագիրը գրավել է նաև Ն. Մառի ուշադրությունը։ Նրա կարծիքով Հայաստանում կարող էին այն ժամանակ չիմանալ, որ բյուզանդական գահի վրա երեք տարի արդեն այլ թագավոր էր նստած[188]։ Այդ կարծիքը հավանական է համարում նաև Վ. Հարությունյանը[189], պատճառը տեսնելով Կոստանդ և Կոստանդին (IV) անունների նմանության մեջ։

Պետք է ասել, որ տարակուսանքի առիթներն առաջ գալով արձանագրության թվականի անճշտությունից, ամենևին չի կարելի շփոթել շինության հետ, որովհետև, անգամ եթե արձանագրությունը չլիներ, պատմիչների տեղեկությունները բավական էին, որպեսզի եկեղեցու կառուցումը կապվեր Հայաստանում 661—682 թվականների կառավարիչ՝ Գրիգոր Մամիկոնյանի անվան հետ[190]։ Ե՛վ պատմիչները, և՛ արձանագրությունը վկայում են, որ եկեղեցին կառուցվել է Գրիգոր Մամիկոնյանի կողմից։ Տարաձայնությունը վերաբերում է միայն թվականին։ Ի դեպ, սկզբնաղբյուրներում թվականի վերաբերյալ այլ տեղեկություններ ևս կան։ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ եկեղեցին կառուցվել է Անաստաս կաթողիկոսի հայրապետության հինգերորդ տարում. «Ի հինգերորդ ամի Անաստասայ եղեւ շինուած կաթողիկէին՝ որ յաւանն Արուճ, զոր շինեաց Գրիգոր Պատրիկն»[191]։ Այստեղից ստացվում է, որ եկեղեցին կառուցվել է 666 թվականին։

Թվականի ստուգման համար անհրաժեշտ է նկատի առնել մի կարևոր հանգամանք, կապված Կոստանդին կայսեր թագավորության հետ։ Պաշտոնական ժամանակագրության տվյալներով Կոստանդինը հաջորդել է Հերակլ կայսրին 641 թվականին։ Կոստանդինը եղել է Կոստանդի հայրը և գահակալել է ընդամենը երեք ամիս։ Սակայն պարզվում է, որ Հերակլի վերջին տարիներին Կոստանդինն իր ձեռքն էր առել երկրի կառավարումը։ Այդ մասին Կոստանդը սենատի առջև արտասանած ճառում ասում է. «Իմ հայրը՝ Կոստանդինը, երկար ժամանակ թագավորել է իր հոր՝ իմ պապի՝ Հերակլի հետ միասին»[192]։ Ուշագրավ է նաև այն, որ 638 թվականին «Եկթեզիսը»

187 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 404.

188 Տե՛ս *Н. Я. Марр*, Армянская церковь в Аруче, „Изв. Археолог. Комиссии", 1904, вып. 12, стр. 61—67.

189 Տե՛ս *В. М. Арутюнян*, По поводу датировки храма в Аруче, стр. 9.

190 Տե՛ս *Б. Н. Аракелян, В. М. Арутюнян, С. Х. Мнацаканян*, О некоторых вопросах истории армянской архитектуры, Ереван, 1969, стр. 31—34.

191 Տե՛ս Գանձակեցի, էջ 62։

192 Տե՛ս *Theophanis*, Chronographiae, ed. c. de Boor, Lipsiae, p. 342.

նորագրվել է Հերակլ կայսեր կողմից, իսկ 639 թվականին Հովհանն պապը
«Եկթեզիսի» հարցով դիմում է արդեն ոչ թե Հերակլին, այլ նրա որդի
Կոստանդինին[193], որն, ինչպես ցույց է տալիս այս փաստը, 639 թվականից
հանդես է գալիս կայսեր լիազորություններով: Չափազանց կարևոր է նաև
Կաղանկատվացու տեղեկությունը, որի համաձայն Կոստանդինը թագավորել
է Հերակլից հետո՝ երեք տարի[194]:

Արձանագրության մեջ հիշատակված է ոչ թե Կոստանդ, այլ Կոստանդին,
որը շփոթմունք է: Արձանագրության հեղինակը նկատի է ունեցել միայն
Կոստանդ կայսրին, որը թագավորել է 641—668 թվականներին: Միանգամայն
իրավացի է Հ. Օրբելին, երբ անհավանական է համարում Կոստանդ և Կոս-
տանդին Չորրորդ կայսրերի շփոթումը: Սակայն, ինչպես տեսնում ենք,
գոյություն ունի շփոթման մեկ այլ հնարավորություն: Այդ անունների
մերձավորության հետևանքով շփոթվել են նաև դեպքերին ժամանակակից
պատմիչները: Ինչպես և արձանագրության մեջ, Կոստանդի փոխարեն
Սեբեոսը բազմիցս գրում է. «Եւ եղեւ յամին երկրորդին Կոստանդնի»[195];
«Իսկ արքայ Կոստանդին...»[196] և այլն:

Ի դեպ, VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին ասում է, որ
Կոստանդը գահակալել է ոչ թե 27, այլ 29 տարի[197]: Այստեղ նա կատարում է
նույն սխալը, չնայած նրան հայտնի էր Կոստանդինի թագավորելը Կոստան-
դից առաջ:

Նմանօրինակ թյուրիմացությունը, մանավանդ արձանագրության մեջ,
միանգամայն հնարավոր է, եթե նկատի առնենք անունների նույնությունը և
Կոստանդինի ոչ պաշտոնական գահակալությունը: Հաշվելով 638 թվականից,
երբ Կոստանդինը իրական կայսրն էր, եկեղեցին պետք է կառուցված լինի
667 թվականին: Սարժիգովսկին ևս համոզված է, որ սխալը Կոստանդի
գահակալության առաջին տարվա թվականն է, սակայն պատճառը նա տես-
նում է հայկական ու բյուզանդական թվականների տարբերության մեջ[198]:

Ուշագրավ է աձանագրության վրա Ա. Շահինյանի կատարած հետազո-
տությունը: Հեղինակը նկատել է, որ Ի ԵԻ Թ ԱՄԻ թվագրությունում Թ-ն
առնված է փակագծերի մեջ: Ա. Շահինյանի մոտ բաց է մնում այն հարցը,
թե ինչու է արձանագրությունը փորագրող գրիչն իր սխալն ուղղել միայն
փակագծով: Չէ՞ որ եթե նկատել է իր սխալը, ապա ոչ միայն պետք է
փակագիծ դներ, այլև ավելացներ սխալ գրված թվականի միավորը, ինչպես
այդ արված է հեղինակի վկայած 987 թվականի արձանագրության մեջ:
Հակառակ դեպքում փակագիծը կարող է նշանակել միավորի առհասարակ
գոյություն չունենալը և թվականը ընթերցվեր Ի ԱՄԻ ԿՈՍՏԱՆՏԻ: Դրան
հակառակ Ա. Շահինյանը հիմք է ընդունում Գանձակեցու վկայությունը և
հուշարձանը թվագրում Անաստաս կաթողիկոսի հայրապետության հինգերորդ
տարով[199]:

193 Տե՛ս *Ф. Успенский*, История Византийской империи, стр, 713, 714.

194 Տե՛ս Կաղանկատուացի, էջ 255:

195 Սեբեոս, էջ 119:

196 Նույն տեղում, էջ 116:

197 Կաղանկատուացի, էջ 255:

198 Տե՛ս *J. Strzigowski*, Die Baukunst..., 1, S. 50.

199 Տե՛ս Ա. Շահինյան, Արուճի տաճարի շինարարական արձանագրությունը, «Լրաբեր»
հաս. գիտ., 1971, № 1, էջ 78—84:

Պետք է ասել, որ այդքան կարճ ժամանակաշրջանում՝ 661—666 թվա-
կաններին Արուճի եկեղեցու նման վիթխարի շինության կառուցումը հավա-
նական չէ, եթե նկատի առնենք, որ եկեղեցուն զուգընթաց կառուցվել է նաև
պալատական շենքը: Դրասխանակերտցին գրում է. «...Գրիգոր Մամիկոնեան
աստուածային այցելութեամբ հիմնադրեալ պչքնաղագեղ եկեղեցին, որ ի
գաստակերտին Արուճ՝ շինէ գնա սռխպով, երկնային խմն ճեմարան յարգա-
բեալ ի վերայ երկրի: Եւ ի հարաւոյ կողմանէ գնէ զարքունիս իւր յեղը քարա-
ժայռ ձորակին»[200]:

Արձանագրությունն ամենայն հավանականությամբ փորագրվել է տեղի
բոլոր շինությունների ավարտից հետո, որի հետևանքով էլ շարադրվել է
երրորդ դեմքով, անցյալ կատարյալ ժամանակով, և, որ կարևոր է, ըստ
էության, 667 թվականով, եթե հաշվենք Կոստանդ կայսեր գահակալությունը
638 թվականից: Շինարարական աշխատանքները շարունակվել են նաև
Գրիգոր Մամիկոնյանից հետո: Թերևս այդ է պատճառը, որ հետագա պատ-
միչները հիմնականում երկու տարբեր թվականներ են տալիս[201]: Դրասխա-
նակերտցու տեղեկությունից երևում է, որ սկզբում կառուցվել է եկեղեցին,
որի ավարտը կարելի է թվագրել 666, իսկ պալատինը՝ 667 թվականներով:
Այս վերջին թվականին էլ՝ շրջանակավորված առանձին քարի վրա փորա-
գրվել և պատի մեջ է ագուցվել Արուճի եկեղեցու շինարարական արձանա-
գրությունը:

Շենքերի դասավորության համաձայն եկեղեցու արևելյան կողմում
հրապարակ է եղել: Հավանաբար այդ է պատճառը, որ արձանագրությունը
տեղադրել են եկեղեցու արևելյան պատին: Բոլոր դեպքերում արձանագրու-
թյան VII դարին պատկանելը որևէ կասկած չի հարուցում: Դրա լավագույն
ապացույցը թվագրության եղանակի մեջ է: Թեև 551 թվականին Հայաստա-
նում արդեն ընդունվել է թվագրության ազգային համակարգը, սակայն մինչև
VII դարը ներառյալ շարունակում էին թվագրել թագավորների գահակալու-
թյան տարիներով: Այս ձևը VII դարից հետո այլևս չի հանդիպում:

Տառաձևերի առումով ևս արձանագրությունն ունի վառ արտահայտված
հնագրական հատկանիշներ: Ինչպես արաձնագրությունը, այնպես էլ հուշար-
ձանը պատկանում են VII դարին: Այդ են հավաստում նաև պատերին եղած
այլ արձանագրությունները: Դրանցից մեկը թվագրված է 867 թվականով[202] և
վկայում է հուշարձանը այդ թվականից առաջ գոյություն ունենալու մասին:
Այս առումով կարևոր է և հյուսիսային պատի նորոգման արձանագրությունը՝

ՆԻԲ (973) ԹՈՒԻ
ԵՍ ԳՈՐՈՍ ՆՈՐՈԳԵՑԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵՍ[203]:

Միանգամայն հասկանալի է, որ 867 թվականի արձանագրություն
ունեցող հուշարձանը X դարում կառուցված լինել չէր կարող[204]: Ինչպես
նշված է երկրորդ արձանագրությունում, X դարում եկեղեցին ոչ թե կառուց-

200 Դրասխանակերտցի, էջ 90, 91:

201 Սամուէլ Անեցու համաձայն Մամիկոնյանն իր շինությունը կատարել է 672 թվականին:
Տե՛ս էջ 84:

202 Տե՛ս Գ. Հովսեփեան, Քարտեզ..., էջ 177:

203 Տե՛ս *Б. Н. Аракелян, В. М. Арутюнян, С. Х. Мнацаканян*, О некоторых
вопросах истории армянской архитектуры, стр. 32—34.

204 Տե՛ս *Г. Н. Чубинашвили*, Разыскания по армянской архитектуре, Тбилиси,
1967, стр. 116.

վել, այլ նորոգվել է, իսկ այդ անհրաժեշտությունը, բնականաբար, կարող էր առաջանալ մի քանի դար արդեն գոյատևած շենքի համար։ Սակայն, ինչպես երևում է առաջին արձանագրությունից, մինչև 867 թվականը եկեղեցին ծաղկուն շրջան է ապրել։

Այս տիպի շինություններից VII դարի կառույց կարելի է համարել Սևանի շրջանի Դդմաշեն գյուղի եկեղեցին[205]։

* * *

VI—VII դարերից մեզ հասել են նաև դամբարանական շինություններ։ Դրանցից մեկը գտնվում է Նախճավանում (Արևմտյան Շիրակ)։

Նախճավան.—Այս դամբարանը պատկանում է Արտավազդ Կամսարականին։ Հ. Օրբելու տեղեկության համաձայն, երկու թաղածածկ սենյակներից բաղկացած ստորգետնյա շինություն է[206]։ Շինարարական արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը՝

ԱՍՏՈՒԱԾ ՀՐԱՄԱՆ ԵԼԻՒՔ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ ՀՐԱԺԱՐ(ՄԱՆ)—
ՄԱՄԲ Ի ՍՄԱ Է ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԸՆԴ ՀԱՐՍ ԻՒՐ
ԵՐԱՆԵԼԻ ՏՐ ԱՐՏԱՒԱԶԴ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԻՒՊԱՏ
ՊԱՏՐԻԿ ԵՒ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ ՈՐԴԻ ՀՐԱՀԱՏԱ
ՊԱՏՐԿԻ ՇԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՇԱՐՈՒՆԵԱՑՆ ՏՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ
ՇՈՒՇԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ[207]։

Դամբարանի կառուցման ժամանակը որոշելուն օգնում են այդտեղ հիշատակված անձանց անունները։ Հրահատի տանուտիրական տիտղոսները ցույց են տալիս, որ տապանագիրը 640 թվականից վաղ լինել չի կարող, իսկ Շուշան Մամիկոնյանի անվան առկայությունը՝ որ Արտավազդը մահացել է հասուն տարիքում։ Ինչպես արդեն տեսանք վերը, Հրահատը ծնված պետք է լինի VII դարի առաջին տասնամյակի վերջին կամ երկրորդ տասնամյակի սկզբներին։ Այստեղից էլ նրա որդու՝ Արտավազդ Կամսարականի տարիքի մոտավոր կողմնորոշումը։ Նա ծնված կարող է լինել VII դարի 30-ական և ամուսնացած՝ 50-ական թվականներին։ Պարզ է նաև, որ նրա մահը տեղի է ունեցել տակավին Հրահատի ժամանակ։ Սկզբնաղբյուրների սակավության պատճառով թեև հնարավոր չէ ժամանակի վերաբերյալ ստույգ պատկերացում կազմել, սակայն VII դարի 50—60-ական թվականները մեր կարծիքով ամենահավանականն են։

Օձուն.—Դամբարանական կոթողը բաղկացած է աստիճանավոր պատվանդանից և երեք որմնատիպ հաստահեղույս սյուներից, որոնք միմյանց միանում են կամարներով։ Սյուների միջև, կամարների տակ, տեղադրված են բարձրարվեստ քանդակներով քառակող կոթողներ։ Քանդակներում առանձին դրվագներով պատկերված է Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմությունը[208]։

Կոթողի կառուցման ժամանակը և պարագաները պարզելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նախ նրա տեղադրության վրա։ Մահարձանը գտնվում է Օձունի գմբեթավոր բազիլիկի բակում։ Գմբեթավոր

---

205 Տե՛ս Մ. Հասրաթյան, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 1, էջ 264—269։

206 Տե՛ս И. А. Орбели, Избр. труды, стр. 410.

207 Նույն տեղում, էջ 411—412։

208 Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 45, 46, Ս. Մնացականյան, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1957, № 7, էջ 95—106։

բազիլիկի կառուցումը Հովհան Օձնեցուն վերագրելուց հետո Գանձակեցին գրում է. «...և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ անդ դադարէր»։ Մեր կարծիքով այս տեղեկությունը մահարձանի առկայության դեպքում պետք է դիտել որպես Գանձակեցու տեղեկությունների ճշտությունը հավաստող փաստ։ Հարուստ պատկերաքանդակներով, մասնավորապես հայ եկեղեցու պատմության դրվագներով ձևավորված մահարձանը, նախ ավելի ընդգծում է հոգևոր և, երկրորդ՝ բարձր աստիճանավոր անձի պատկանելը։ Իսկ պատմիչի վկայությունը, որ Հովհան Օձնեցին մահացել է այդտեղ, բնականաբար, ենթադրել է տալիս, որ նրա մարմինն ամփոփվել է իր կառուցած եկեղեցու մոտ։ Նկատի ունենալով Հովհան Օձնեցու մահվան տարեթիվը՝ 728, կարծում ենք, որ 728—730 թվականներով էլ կարելի է թվագրել մահարձանի շինությունը։

* * *

VII դարի պատմական իրադարձությունները ողբերգական ավարտ ունեցան հայ ժողովրդի համար։ Հաստատվելով Հայաստանում արաբական իշխանությունը, վերջնականապես փոխեց իր նախկին մեղմ քաղաքականությունը, որը վարում էր Բյուզանդիայի ազդեցությունը հաղթահարելու նպատակով։ VIII դարի սկզբից ծայր առան ազատագրական շարժումներ, որոնք, կարճատև ընդմիջումներով, շարունակվեցին մինչև դարի վերջը։

Արաբական տիրապետությունն առանձնապես մեծ հարված հասցրեց երկրի տնտեսությանը։ Ծանր հարկերը, երկարատև պատերազմները, բռնակալությունը, կեղեքումը, գերևարությունը և հալածանքը ծայր աստիճան քայքայեցին և աղքատացրին երկիրը, որի հետևանքով VIII դարում Հայաստանը նկատելի տնտեսական քայքայում ապրեց։ VIII դարի փոթորկալից անցքերի հողմը սրբում էր մշակութային արժեքներ, բնակչության զանգվածներ, ինչպես նաև աչքի ընկնող նախարարական տներ։ Ասպարեզից վերացան Մամիկոնյաններն ու Կամսարականները, որոնք մինչ այդ երկրի քաղաքական ու հասարակական կյանքի ամենաազդեցիկ ֆեոդալական տներից էին և գրեթե միշտ գլխավորում էին ազատագրական շարժումները։

Սկզբնաղբյուրներից VIII դարի վերաբերյալ մեզ հասել են միայն նորոգման բնույթի տեղեկություններ։ Այդ շրջանի մոնումենտալ շինարարական աշխատանքներն են Օձունի եկեղեցու վերակառուցումը և Արամուսի կաթողիկոսարանի կառուցումը՝ Դավիթ կաթողիկոսի կողմից։ Թանահատում Ստ. Օրբելյանի վկայությամբ VIII դարում կառուցվել է մի մատուռ։ Այդ մասին պատմիչը գրում է. «Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի. զոր յետոյ յ728 թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբէթայարկ գեղեցիկ յօրինուածովք. և եդին զտապան սրբոյն ի հիմն նորա։

Եւ էր կատարումն սրբոյն Ստեփաննոսի և թուականութեանն հայոց 184 (735) ի հրոտից ի 15 և յուլիսի 21»[209]։

Ներկայումս 728 թվականի մատուռի և 735 թվականի գմբեթավոր եկեղեցու հետքն անգամ չի մնացել։

Ըստ Այրիվանեցու 696—704 թվականներին ումն «Աշոտ զԴարօնից ս. Փրկիչն շինեաց»[210]։

---

209 Ստ. Օրբելյան, էջ 143։

210 Այրիվանցի, էջ 51։

VIII դարի վերջերին մասնակի շինարարական աշխատանք են տարել նաև արաբները՝ վերականգնել են պատերազմներից ավերված Դվինը, մասնավորապես պարսպապատերը: Այդ մասին Ղևոնդը հաղորդում է. «Շինէր վերստին, քաղաքն Դուին՝ հզօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան առաջինն, և ամրացուցանէր դրամբ և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր ապաստան ամրոցին»[211]:

Վիմագիր միակ հիշատակարանը, թվագրված 783-ով փորագրվել է Թալինի կաթողիկե եկեղեցու մույթին և ավանդում է առու անցկացնելու մասին[212]:

Պետք է ենթադրել, որ այն, ինչ արժանացել է պատմիչների հիշատակությանը հեռու է սպառիչ լինելուց, սակայն եղածից երևում է, որ VIII դարի տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններում նշանավոր որևէ շինություն չի կանգնեցվել:

---

211 Ղևոնդ, էջ 36:

212 Գ. Հովսեփեան, Քարտեզ..., էջ 217:

IX—XI ԴԱՐԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ

VIII դարի աղետալի իրադարձություններից հետո IX դարում դրությունը նկատելիորեն փոխվեց: Արաբների ստեղծած հսկայական պետությունը IX դարում կանգնած էր կազմալուծման վտանգի առջև: Խալիֆայությունը ցնցում էին մեկը մյուսին հաջորդող հուժկու ապստամբությունները, որոնք ստիպեցին արաբներին վերանայելու նվաճած երկրների նկատմամբ դաժան ու կեղեքիչ քաղաքականությունը:

Վիճակը բարվոք չէր նաև Բյուզանդիայում, որը բավականին թուլացել էր արաբների առաջխաղացման հետևանքով: IX դարում միաժամանակ հզորացել էին աղանդավորական շարժումները, և դարի վերջում կայսրությունը կանգնած էր կործանման առջև[1]:

Արաբական լուծը թոթափելու համար հայ ժողովրդի մղած պայքարն ավարտվեց հաջողությամբ: Երկրի քաղաքական անկախության պայքարը IX դարի երկրորդ կեսին գլխավորում էին Բագրատունիները: 887 թվականին Աշոտ Ա.-ը Գևորգ կաթողիկոսի և նախարարների միացյալ ջանքերով հռչակվեց հայոց թագավոր և ճանաչվեց արաբական խալիֆայության ու Բյուզանդիայի կողմից: «Եվ այսպես,—գրում է Լեոն,—Արշակունյաց անկումից (428 թ.) չորս ու կես դար անցած՝ Հայոց աշխարհը մնում էր սեփական թագավորությամբ կառավարվելու իրականության մեջ»: «Բայց նորահաստատ թագավորությամբ տարբերվում էր հնից իր իրավասության թագավորությունը հիմնավորապես տարբերվում էր հնից իր իրավասության բնույթով: Մինչդեռ հինը համազգային իշխանություն էր, որ հնար եղածին չափ միացնում էր ամբողջ երկիրը, Աշոտի թագավորությունը սաղմնավորվում էր անձուկ տեղայնության ձևի մեջ»[2]:

IX դարի սկզբից Հայաստանում երևան եկան նախարարական երեք տներ, որոնք երկիրը բաժանեցին իրար միջև՝[3] Բագրատունիները, Վասպուրականի Արծրունիները և Սյունաց նախարարները:

Վերականգնելով անկախությունը Հայաստանն ընդգրկվեց ընդլայնվող միջազգային առևտրի ոլորտի մեջ: Առևտրական աչքի ընկնող ճանապարհների վրա եղած նախկին գյուղերում ու ավաններում վերելք ապրեցին արհեստները: Փոխվեց հասարակական դասերի քաղաքական ու տնտեսական փոխհարաբերությունն հօգուտ քաղաքի բնակչության, որն այդ պատճառով զգալի աճեց՝ ստեղծելով քաղաքային կյանքի ձևավորման համար անհրաժեշտ հիմք[4]:

---

1 Տե՛ս „История Византии", II, стр. 175.

2 Լեո, Հայոց պատմություն, 2, Երևան, 1967, էջ 506:

3 Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., 1, էջ 37:

4 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., Բ, Բ մասի նյութեր, էջ 359:

IX դարից սկսած արձանագրությունները, մասնավորապես շինարարական բովանդակությամբ, հանդիպում են անհամեմատ ավելի շատ: Դրա պատճառը ազատ դասի իրավական պայմանների և տնտեսական հնարավորությունների աճն էր: Եթե նախկինում շինարարական գործունեությունը նախաձեռնում էին միայն նախարարական տները, ապա IX դարից սկսած հանդիպում են հասարակության տարբեր խավերի մարդկանց անունները:

Մեզ հասած վիմական վավերագրերից առավել մեծաքանակը նվիրատըվական արձանագրություններն են, որոնք վաղ միջնադարում իսպառ բացակայում են:

Քաղաքական ու հասարակական փոփոխությունների մեջ ամենաէականը ֆեոդալական մասնատվածության խորացումն էր, որն իր կնիքը դրեց երկրի մշակույթի ձևավորման վրա, առաջ բերելով տեղական ձևերի բնորոշ դրսևորումներ:

Սյունյաց թագավորությունը Բագրատունիների և Արծրունիների համեմատությամբ ամենաերկարակյացն էր: Նա իր գոյությունը պահպանեց մինչև 1170 թվականը:

Սկիզբը խոստումնալից էր նաև Վասպուրականի թագավորության համար, որը, սակայն, գոյատևեց ընդամենը մեկ դար: Վանը, Ոստանը և Աղթամարն այդպես էլ չմեծացան և համահայկական նշանակության չհասան: Իրավական տեսակետից թեև դրանք քաղաքներ էին, սակայն չափազանց փոքր նշանակությամբ: Արծրունիների անկումից հետո Աղթամարը վերածվեց խոշոր միաբանության, իսկ Ոստանն ու Վանը ավերվեցին ու դարձան գյուղատիպ ավաններ:

Նոր շրջանի ճարտարապետական արվեստի ձևավորման մեջ այս երեք նահանգներն անփոխարինելի և կարևոր տեղ ունեցան համազգային մշակույթի մեջ: Եթե Այրարատի և Վասպուրականի ճարտարապետության մեջ կարևոր էր քաղաքաշինությունը, որը պայմանավորեց աշխարհիկ ճարտարապետության զարգացումը, ապա Սյունիքում մշակված եկեղեցական շենքերի հորինվածքները կարևոր դեր խաղացին պաշտամունքային շինության նոր տիպերի ձևավորման գործում:

Չնայած ընդհանրություններին, երեք նախարարական տիրույթներում առաջացած շինարարական արվեստն ուներ նաև բավականին ինքնատիպ դրսևորումներ, որը նկատի առնելով IX—XI դարերի հայ ճարտարապետական հուշարձանների կառուցման պատմությունը բաժանում ենք երեք ճյուղերի՝ որպես նոր վերծանության շրջանում առաջացած առանձին դպրոցներ:

ՍՅՈՒՆԻՔ

Սյունիքը պատմական Հայաստանի հարավ-արևելյան նահանգներից մեկն է: Նրան սահմանակից են արևելքից՝ Արցախը, հյուսիսից և արևմուտքից՝ Այրարատը, հարավ-արևմուտքից՝ Վասպուրականը, իսկ հարավից Պարսկահայքը:

Սյունիքի հարավում ընկած են Սիսականի լեռները, միջին մասում Վայոց ձորն է, հյուսիսում՝ Սևանի ավազանը: Նահանգն ունի 12 գավառ: Ընդհանուր տարածությունը 15237 քառ. կմ է[5]:

IX—XI դարերում Սյունյաց նախարարական տունն այլևս չուներ այն միասնականությունը, ինչ որ վաղ միջնադարում: IX դարի սկզբից Սյունիքը բաժանված էր առանձին իշխանների միջև: Ժամանակի ընթացքում այդ բաժանումն ավելի խորացավ և վերածվեց նախարարական առանձին տիրույթների[6], որոնք միշտ չէ, որ խաղաղ էին հարևանում միմյանց հետ[7]: Սիսականն ուներ իր գահանիստ կենտրոնը Կապանում: Վայոց ձորի կենտրոնն էր Սիսվանը (այնուհետև Եղեգիսը): Կոթը միավորում էր Սևանի ավազանը:

Սևանի ավազանում թերևս քաղաքատիպ ավան է եղել Բերդկունքը՝ Հայրավանքի մոտ, որի ավերակները Շահխաթունյանցը տեսել էր ավելի քան 100 տարի առաջ: Նկատի ունենալով վայրի ընդարձակությունը, նա գտնում է, որ այն եղել է մեծ քաղաք[8]: Մ. Սմբատյանցի ժամանակ ավերակները դեռևս նշմարվում էին[9]:

Գեղարքունիքում շինարարական գործունեությամբ աչքի են ընկել Մարիամ իշխանուհին և նրա որդի Սուփանը, որոնք IX դարի վերջին և X դարի սկզբին կառուցեցին Սևանա կղզու միաբանության շինությունները, Կոթավանքը և Մաքենոցաց վանքը:

Վայոց ձորում ևս շինարարական գործին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել կանայք: Դրանցից մեկը իշխանուհի Սոփիան էր, մյուսը՝ Աղվանից Սևադա իշխանի դուստր Շահանդուխտն իր ամուսին Սմբատ Ա-ի հետ, որը և 970 թվականին հիմնեց Սյունյաց թագավորությունը:

Իշխանուհի Սոփիայի լավագույն շինություններից է Գնդեվանքը:

Շահանդուխտ թագուհին և Սմբատ Ա-ը կառուցել են Որոտնավանքն ու Ահերմոնի վանքը: Վերջինս այժմ գոյություն չունի, նրա տեղում պահպան-

5 *Տե՛ս* Ս. Երեմյան, *Հայաստանն ըստ «Աշխարհացույցի»*, Երևան, 1963, էջ 117, *տե՛ս նաև* Ստ. Օրբելյան, էջ 12:
Լեո, *Հայոց պատմություն*, 1, էջ 159—160, էջ 176, 177, 197:
6 *Տե՛ս* Ստ. Օրբելյան, էջ 168, 169:
7 *Տե՛ս* Դրասխանակերտցի, էջ 118, Ստ. Օրբելյան, էջ 242:
8 *Տե՛ս* Յ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն...*, Բ, էջ 242:
9 *Տե՛ս* Մ. Սմբատեանց, *Տեղագիր...*, էջ 433:

վել է XVI—XVII դարերում կառուցված մի թաղածածկ շինություն։ Կիսավեր վիճակում է նաև Որոտնավանքը։

Սյունիքի հարավում շինարարական մեծ աշխատանք կատարեց Ջագիկ իշխանի որդի Վահանը։ Ողջի գետի ափին, անտառապատ մի տեղում նա հիմնադրեց Սյունիքի ճարտարապետության լավագույն հուշարձանախմբերից մեկը, որն ավանդաբար կոչվեց Վահանավանք։

IX—XI դարերում Սյունյաց ճարտարապետության մեջ, մասնավորապես սկզբնական շրջանում, լայնորեն օգտագործվել են վաղ միջնադարում մշակված ավանդական ձևերը։ Մեծ տարածում գտան գմբեթասրահները, չորս ավանդատներով և երեք քառորդ որմնախորշերով եռախորան տարբերակը և արտաքին ու ներքին խաչաձևությամբ կենտրոնագմբեթ եկեղեցիները։ Ինչպես կտեսնենք ստորև, դրանց շուրջը մշակվեցին նոր հորինվածքային կերպարներ։

Խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ շինություններից են Սևանա կղզու Առաքելոց և Աստվածածին, Մարտունու շրջանի Բաղադյուղ, Կամոյի շրջանի Հացառատ, Ծաղկաշեն և Լանջաղբյուր գյուղերի եկեղեցիները։

Սևան.—Կղզու հարթակի վրա կառուցված Առաքելոց եկեղեցու հորինվածքին բնորոշ է երկայնակի ձգվածությունը։ Հարավ-արևելյան մասում կա մի ավանդատուն։

Առաքելոց եկեղեցու գմբեթն ութանիստ է, փոխանցումը՝ տրոմպներով։ Եկեղեցին կառուցել է Մարիամ իշխանուհին իր հանգուցյալ ամուսին Վասակ Գաբուռի հիշատակին, ամենայն հավանականությամբ որպես մատուռ։ Կառուցման մասին կան մատենագրական և վիմագրական վկայություններ։ Շինարարական արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը՝

ԿԱՄԱՒՆ ԱՅ ՍԻՒՆԵԱՑ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՇՈՏՈՅ ԵՒ ՏՎԱՔ ՎԱԽՄ ՍԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԶՎԱՐՍԵՐՆ ԶԳՈՄԱԶՈՐ, ՅԱՄԱՔԱԲԵՐԴ, ԲԵՐԴՔ ՈՒՌԵ—

ԱՅ ՏԱՓ, ՈՐՍՆ ՎԿՌԱԿԾՆԿԻՆ, ԱՅԳԻ Ի ԳԱՌՆԻ ԵՒ ՅԵՐԵՎԱՆ ԵՒ ԹԱՆԿԱԳԻՆ ՆՇԱՆ ԱԾԸՆԿԱԼ ՍԲ ՆՇԱՆԱՅ ՏԱՄ Ի ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԶԿՏԱԿԵԼՈՅ... ԿՈՐԱՏԵՂ։ ՈՎ ԽԱՓԱՆԵ, ՅԺԸ։ ԻՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ։ ԹՎԻՆ ՅԻԳ (874)[10]։

Ստ. Օրբելյանն էլ հիմք է ընդունել այս վավերագիրը[11]։

Արձանագրության մեջ **միաբանել** բառը արտահայտել է առաջին հերթին շինությանը մասնակից լինելու, ապա նվիրատվության իմաստ, որի ցանկը բերված է արձանագրության մեջ և Ստ. Օրբելյանի մոտ։ Ըստ արձանագրության եկեղեցին Մարիամը կառուցել է Աշոտի հետ միասին, որի ով լինելու մասին հավելյալ միակ տեղեկությունը տալիս է Ստ. Օրբելյանը, անվանելով նրան իշխանաց իշխան։ Այս տիտղոսը թույլ է տալիս մտածել, որ նա եղել է Բագրատունի։ Դա Մարիամ տիկնոջ հայրն է՝ Աշոտ Ա-ը, որը իշխանաց իշխան տիտղոսն էր կրում։* Այդ մասին Ստ. Օրբելյանը նշում է նախորդ էջում։

Ս. Աստվածածին.—Եկեղեցին գտնվում է նախորդի հարավ-արևելյան կողմում, նույնատիպ՝ քառաթև, եռախորան, կենտրոնագմբեթ շինություն է։

[10] *Л. М Меликсет-Бек*, Новооткрытая надпись на Севане от 874г. „Памяти академика Н. Я. Марра,. М.—Л., стр. 413.

[11] *Տե՛ս* **Ստ. Օրբելյան**, *էջ 173, 174։*

*Ոչ, Պատմագրական աղբյուրը՝ Մովսես Կաղանկատվացու Պատմությունը (գիրք ՀԱ, 2014) վկայում է Սևանում Աշոտ Հայկազունի իշխանին,

Ունի կառուցվածքային որոշ տարբերություններ։ Խորանների անկյունապատերը և կամարները մշակված են, իսկ փոխանցումը դեպի գմբեթի ութանիստ թմբուկը իրագործված է առագաստների միջոցով։

Արևելյան խորանի երկու կողմերում էլ սենյակներ կան։ Հյուսիսայինը չունի խորանաձև որմնախորշ և մուտքն էլ դրսից է։ Ս. Մնացականյանը գտնում է, որ այդ սենյակը հավելված է[12], իսկ ըստ Ն. Տոկարսկու հավելված են երկու սենյակները[13]։

Ստ. Օրբելյանն իր հիշյալ վկայության մեջ նշում է, որ Մարիամ իշխանուհին կառուցել է նաև այս եկեղեցին՝ «...շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ առաքելոց, և զմիւսն, յանուն, տիրուհւոյ Աստուածածնին»[14]։ Այսպիսով պարզվում է, որ երկու եկեղեցիները կառուցվել են միաժամանակ՝ 874 թվականին։ Պատմիչը հայտնում է, որ միաբանությունը հիմնադրել է Մաշտոց վանականը[15] (897 թվականից՝ կաթողիկոս), որն իր կրթությունը ստացել է Մաքենոցաց վանքում[16]։ Մահացել է 898 թվականին և թաղվել Գառնիում[17]։

Եկեղեցին նորոգվել է 1664, 1740, 1832 և 1836 թվականներին[18]։

Եկեղեցին նորոգվել է 1664, 1740, 1832 և 1836 թվականներին[18]։ Ավանդության համաձայն Սևանա կղզում հեթանոսական տաճար է եղել, որի տեղը, ըստ եկեղեցում պահվող մի կոնդակի, 305 թվականին Գրիգոր Լուսավորիչը կառուցել է եկեղեցի և կոչել «Այս է վան»։ Այնուհետև Սևան[19]։ Ներկայումս ոչ մի հետք չի մնացել այդ հնագույն շինություններից, բացի մի խիստ ավերակ եկեղեցու հիմնապատերից, որի հորինվածքի ժամանակագրական առանձնահատկությունները պարզված չեն[20]։ հոլովվելով և աղավաղվելով դարձել է

Հացառատ.—Հորինվածքային նույն տիպը կարելի է տեսնել նաև Հացառատ գյուղի եկեղեցում։ Սակայն եկեղեցին նկատելի տարբերություն ունի նույնատիպ կառույցներից։ Նրա թևերի արտաքին պատերը կցված են 90 աստիճանից ավելի մեծ անկյան թեքությամբ։ Դրա պատճառը պատերի ավելորդ հաստությունից խուսափելն է. բացառություն է կազմում միայն արևմտյան թևը, որովհետև ներքուստ այն ուղղանկյուն է։

Փոխանցումը դեպի գմբեթի թմբուկը իրագործված է տրոմպների միջոցով։

Եկեղեցու արևելյան պատին պահպանվել է շինարարական նորոգված արձանագրություն.

ԵՍ ՇԱՂՈՒԲԱԹ ԻՇԽԱՆ ԱՌՆԵՂԱՅԻ
ԿԱՌՈՒՑԵՑԻ ԱՅՍ ՍԲ. ԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՍ
Ի ՀԻՄԱՆԷ ԹՎ. ՓՐԿՉԱԿԱՆ ՊՂԸ (898)

[12] *Տե՛ս* **Ս. Մնացականյան**, *Հայկական ճարտարապետության, Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 35։*

[13] *Տե՛ս Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 228.

[14] **Ստ. Օրբելյան**, *էջ 173 174։*

[15] *Տե՛ս* **Ասողիկ**, *էջ 160։*

[16] *Տե՛ս* **Դրասխանակերտցի**, *էջ 182։*

[17] *Տե՛ս* **Գանձակեցի**, *էջ 81, 82։*

[18] *Տե՛ս* **Մ. Սմբատեանց**, *Տեղագիր..., էջ 115—117։*

[19] *Տե՛ս* **Յ. Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն..., II, էջ 209։*

[20] *Տե՛ս Н. М. Токарский*, Предварительный отчет о поездке в Армению осенью 1923 г., РАИМК, 1924, стр. 337, **Ս. Մնացականյան**, *Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 36, 37, 96, 97։*

ԵՒ Ի ԹՎ. ՀԱՅ. ՅԽԸ (348)
ԻՍԿԱԿԱՆԻՑ ԱՐՏԱԳՐԵՑԻ 1893 Թ.

Արձանագրության հեղինակը, ինչպես և նշված է արձանագրության վերջում վերաշարադրել է հին վավերագրի բովանդակությունը 1893 թվականին։ Այժմ դժվար է ասել, թե ինչ սկզբնաղբյուրից է նա օգտվել։ 1842 թվականին Հ. Շահխաթունյանցը տեղում որևէ արձանագրություն չի գտել[21]։ Բոլոր դեպքերում արձանագրության վավերագրական կողմը կասկածի տեղիք տալ չի կարող։ Իշխան Շաղուբաթի ով լինելը անհնար է որոշել։ Ըստ արձանագրության նա տեղացի է, որովհետև Հացառատը հնում կոչվել է Անեղ[22]։

Գյուղի տարածքում Հ. Շահխաթունյանցը գտել է մի քար հետևյալ մակագրությամբ. «Կամաւն աստուծոյ Տառլուղանոգու Պարոն Դաւիթն կենակից Փիրհամաղայ ալին, որ նորոգեցի շրջապատ ս. Գրիգորիս հիշատակ հոգւոյ իմոյ. ՋՂԸ (1549)»։ «Շրջապատ» բառից երևում է, որ XVI դարում այստեղ եղել են միաբանության շենքեր և «շրջապատ» բառով նկարագրողը նկատի է ունեցել շրջապատող պարիսպը։ Այնքանով, որ տեղում եկեղեցական այլ շենքեր չկան, պետք է ենթադրել, որ ս. Գրիգորն այս եկեղեցին է։

Թազագյուղ.—Շինարարական տեխնիկայով այս եկեղեցին ևս բավականին մոտ է նախորդներին և, կարծում ենք, կարող է նույնպես թվագրվել IX դարի վերջով։ Սկզբնաղբյուրներում որևէ տեղեկություն չի պահպանվել, բացի արևելյան թևի ստորին անկյունում 1286 թվականին փորագրված նորոգման մի արձանագրությունից[23]։

Հայրավանք.—Խաչաձև հորինվածքով կենտրոնագմբեթների շարքում իր յուրատիպությամբ առանձնանում է Հայրավանքը, որը կառուցված է Սևանա լճի ափին։ Ի տարբերություն նշված օրինակների, եկեղեցին քառախորան է, չորս խորանների կիսակլոր կառուցվածքը կրկնվում է նաև արտաքուստ։ Փոխանցումը գմբեթի թմբուկին իրագործված է տրոմպների միջոցով։ Հարավ-արևմտյան անկյունում ընդարձակ մի ավանդատուն կա։ Գավիթը կառուցվել է XII դարում։

Եկեղեցու շինության վերաբերյալ գրավոր վկայություններ չկան։ Նկատի առնելով նրա կառուցվածքային առանձնահատկությունները, ուսումնասիրողները գտնում են, որ կարելի է թվագրել IX դարի վերջով կամ X դարի սկզբով[24]։

Հայրավանքն ունի նորոգման արձանագրություններ, որոնցից մեկը թվագրված է 1211-ով[25]։ Այդ արձանագրության մեջ շինարարական գործը նորոգում է կոչված։ Այստեղ «շինեցաք» պետք է հասկանալ եկեղեցու և, ակներևաբար, գավթի նորոգումը։ Այստեղից էլ կարելի է հետևցնել գավթի կառուցման ժամանակը՝ XIII դարից ավելի վաղ։

Եկեղեցու հարավային մուտքի ճակատակալ քարին ներքուստ փորագրված է.

---

[21] Տե՛ս Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 240։

[22] Տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր..., էջ 499։

[23] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», IV, էջ 198, «Ազգագրական հանդես», XVIII, էջ 142, Մ. Սմբատեանց, Տեղագիր..., էջ 520։

[24] Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 16—22։

[25] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», IV, էջ 69, 71, 72։



Բագնայր վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից

Բյուրական. Արտավազիկի սբ. Աստվածածին եկեղեցու զանգակատունը

Ծաղկաձոր. Կեչառիսի վանքի ընդհանուր տեսքը արևմուտքից

Տառաձևերով այս արձանագրությունը նման է նորոգման արձանագրությանը և այդ պատճառով էլ կարելի է թվագրել նույն ժամանակով։ Արձանագրության մեջ նշված է, որ կառուցել են երկու խորան, սակայն նշված չէ, թե ո՞ր խորանները։ Դրանք եկեղեցու ավանդատունը կամ ավագ խորանը լինել չեն կարող, որովհետև սրանք մեկական են։ Երկու խորան կարող էին կոչվել միայն գավթի արևելակողմի երկու սենյակները։ Այստեղից ստացվում է, որ այդ սենյակները կառուցվել են ոչ թե գավթի հետ միասին, այլ XIII դարի սկզբին, երբ գավիթը նորոգվել է։ Ս. Մնացականյանն այն դասում է երկսյուն գավիթների շարքին[26], իսկ Մ. Սմբատյանցը համեմատում է նույնիսկ Սաղմոսավանքի գավթի հետ[27]։ Սակայն եթե ավանդատները հավելված են, ապա գավթի նախնական հորինվածքը կարող էր լինել քառասյուն։

* * *

Խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիներից հետո վաղ միջնադարյան հորինվածքներից Գեղարքունյաց գավառում տարածում գտան նաև գմբեթասրահները։ Այդ տիպի եկեղեցիներ կառուցվել են Կամոյի շրջանի Նորատուս և Բատիկյան գյուղերում։

Նորատուս.—Նորատուսի ս. Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում։ Տանիքը և գմբեթն ավերված են։ Համաչափություններում նկատելի է VII դարին բնորոշ ձգվածությունից խուսափելու հակում։ Նման փոփոխությունը բնորոշ է հայ ճարտարապետության զարգացման օրինաչափություններին և ճարտարապետական ձևերի քննության մեջ Ս. Մնացականյանն իրավամբ տեսնում է ժամանակագրական երևույթ[28]։

Եկեղեցու կառուցման մասին Ստ. Օրբելյանը տալիս է հետևյալ տեղեկությունը. «Իսկ եղբայր Գրիգորի Սահակ շինէ զպանծալի յարկն մեծածախ յօրինուածովք ի Նորատուս գիւղ. և կարգէ ի նմա բազմութիւն քահանայից. յորոյ դրան և ինքն հանգուցեալ կայ ի տապանի»[29]։ Պատմիչը որոշակի թվական չի հաղորդում։ Ըստ նրա տվյալների եկեղեցին կառուցվել է 851—901 թվականների անցքերից հետո։ Հիշատակած Սահակը Գրիգոր Սուփանի եղբայրն է, Մարիամ իշխանուհու որդին, որի մահը Ալիշանը նշում է 915 թ.[30]։ 909 թ., երբ սկսվեց Յուսուփի արշավանքը, Սահակը Սևանա լճի մոտ ճակատամարտելուց հետո գնաց Գարդման, այնուհետև՝ Արցախ և վերադարձավ միայն 914 թվականին, Յուսուփի հեռանալուց հետո։ Այսպիսով, եկեղեցու կառուցումը կարող էր տեղի ունենալ մինչ Յուսուփի արշավանքը՝ 901—908 թվականներին։

Բատիկյան.—Եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնական մասում։ Գմբեթն ավերված է, իսկ տանիքը նորոգված։ Բնորոշ է երկայնական չափի առավել կրճատվածությունը, որի հիման վրա էլ թվագրվում է Նորատուսի եկեղեցուց համեմատաբար ուշ, սակայն բոլոր դեպքերում՝ X դարի սահմաններում։ Շահխաթունյանցը նկատի ունենալով հորինվածքի ընդհանրությունը,

---

26 Տե՛ս *С. Х. Мнацаканян*, Архитектура армянских притворов, стр. 40.

27 Տե՛ս Մ. Սմբատեանց, *Տեղագիր...*, էջ 434։

28 Տե՛ս Ս. Մնացականյան, *Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը*, էջ 91—95։

29 Ստ. Օրբելեան, էջ 181։

30 Տե՛ս Ղ. Ալիշան, *Սիսական*, էջ 46։

8—892

դանում է, որ Բաղիկյանի և Նորատուսի եկեղեցիները միևնույն ճարտարապետի գործերն են[31]։

* * *

Սյունյաց ճարտարապետությունն իր առաջին քայլերը սկսելով VI—VII դարերում մշակված հորինվածքային տիպերի կրկնություններով հետագա զարգացման մեջ ընթացավ հիմնականում երկու տիպերի կատարելագործման ուղղությամբ։ Դրանք նախորդ կենտրոնագմբեթներն էին և գմբեթասրահները։ Այս տիպերի վերափոխումը կապված է ավանդատների ավելացման և այդ միջոցով եկեղեցու արտաքին կերպարի ամբողջականացման հետ։ IX—XI դարերում նկատելիորեն ընդարձակվեց ավանդատների գործառնական նշանակությունը։ Ավանդատների տեղադրությունը շինության չորս անկյուններում մի կողմից ընդգծում էր ներքին խաչաձևությունը, մյուս կողմից ամբողջացնում արտաքին ծավալը հարթ մակերեսի ուղիղ գծով։

Ավանդատների տեղադրումը խաչաձև հատակագծով եկեղեցիների թևերի արանքում՝ այդ հատվածների օգտագործման առավել նպատակային միջոցն էր և, թեև այդ հորինվածքի մտահղացումը հայտնի էր տակավին VI դարի Արամուս-Ավան տիպից, սակայն նրա կիրառումը քառաթև կենտրոնագմբեթ եկեղեցիների մեջ կատարելապես նոր երևույթ էր և բնորոշ գերազանցապես Սյունյաց ճարտարապետության դպրոցին։ Վերոհիշյալ տիպը, որպես հայ ճարտարապետության նոր արգասիք, տարածվեց միայն Սյունիքում։ Բոլորովին այլ էր վերափոխված գմբեթասրահների ճակատագիրը։ Գմբեթասրահը ներքուստ բաղկացած է երկու գործառնական հատվածներից՝ բեմից և դահլիճից, ընդ որում դահլիճը որմնամույթերի միջոցով իր հերթին բաժանվում էր երեք մասի՝ ա) արևելյան, բ) ենթագմբեթային և գ) արևմտյան։

Արևմտյան հատվածում որմնամույթերն առաջացնում են կողմնային անկյունամասերի մեկուսացում։ Այդ պատճառով ուշ շրջանի մի շարք եկեղեցիներում, որտեղ արևմտյան ավանդատների կարիքը չի եղել (Հաղբատ, Արենի) որմնամույթերի ստորին մասում արվել է կամարաձև բացվածք։ IX—X դարերում այս հատվածները, ծեսի ճոխացման հետևանքով, հաճախ վեր էին ածվում ավանդատների։ Նմանօրինակ վերափոխմամբ թեև նկատելիորեն փոքրանում էր եկեղեցու ներսի ծավալը, այնուհանդերձ այդ մեկուսացված հատվածներն, ըստ էության, ավելի նպատակային լուծում էին ստանում. դրանով շեշտվում էր սրահի ենթագմբեթային կենտրոնը։ Սակայն չպետք է մտածել, որ պաշտամունքային շինությունների ներքին ծավալի մեծացման խնդիրը չէր մտահոգում հայ եկեղեցուն։ Ն. Տոկարսկին այս փոփոխությունը բացատրում է որպես ծայրամասերին բնորոշ երևույթ, որտեղ մեծածավալ եկեղեցիների կարիքը չի եղել[32]։ Այս տեսակետն այնքան էլ ընդունելի չէ, որովհետև ներքին ծավալի կրճատման եղանակով առաջացած նոր տիպը մեծ տարածում գտավ Հայաստանի բոլոր վայրերում։ Ինչ վերաբերում է եկեղեցիների տարողությանը, ապա IX—XIII դարերում հայ ճարտարապետության մեջ այդ խնդիրը լուծվեց գավիթների տարածումով։ IX—XIII դարերում միաժամանակ նկատելիորեն մեծանում է ենթագմբեթային տարածությունը[33]։

Գմբեթասրահների նոր տիպերի մեջ վերանայվեց արևելյան որմնա-

[31] Տե՛ս Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 241։

[32] Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении.... стр. 225—226.

[33] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 186, 187։

մույթերի և բեմական խորանի միջև եղած տարածության գործնական կարևորությունը, որն իբրև ժողովատեղի նպատակահարմար չէր, իսկ ծիսական արարողության համար՝ ավելորդ։ Այդ նպատակի համար ավելի հարմար էր ենթագմբեթային կենտրոնը։ Այստեղից էլ բխում է խորանի և ենթագմբեթային հատվածի միացման պահանջը։ Հակասեյսմիկ նշանակություն ունեցող երկայնական և ընդլայնական համաչափությունների հավասարակշռման անհրաժեշտության հետևանքով եկեղեցու ձգվածությունը հիմնականում կրճատվեց այս տարածության վերացման հաշվին[34]։ Արևելյան որմնամույթերի դերն այստեղ կատարեցին խորանի համապատասխանաբար մշակված անկյունապատերը։ Հարցի լուսաբանման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տիպի առաջացման հետ կապված մի շարք մանրամասների վրա, որոնք ցույց են տալիս նրա աստիճանական ձևավորումը։ Տակավին VI—VII դարերի տիպով կառուցված IX—X դարերի գմբեթասրահներում արևելյան որմնամույթերի և խորանի միջև եղած տարածությունը նկատելիորեն փոքրացված է (Նորատուս, Բաղիկյան, Մարմաշեն, Հոռոմոս և այլն)։ Այս երևույթը Թ. Թորամանյանը նշում է որպես IX—X դարերի ժամանակագրական հատկանիշ[35]։ Ինչ վերաբերում է վերափոխված գմբեթասրահներին, ապա նրանց ձևավորման ընթացքն իր մեջ ամփոփեց աստիճանական վերափոխման երեք հիմնական տարբերակ։ Առաջին տարբերակում կրճատված են միայն արևելյան որմնամույթերի և խորանի միջև եղած տարածությունը, իսկ արևմտյան որմնամույթերը պահպանվում են։ Այս տարբերակը բավականին երկար հարատևեց հայ ճարտարապետության մեջ՝ առավել ավարտուն օրինակներին զուգընթաց (Գանձավանք, Տաթևի երկհարկ դամբարան, Բջնի, Հավուց Թառ, Արենի և այլն), որովհետև այստեղ լուծված են ծիսական պահանջները, իսկ արևմտյան ավանդատների անհրաժեշտությունը դեռ չէր զգացվում։

Երկրորդ տարբերակում արևմտյան որմնամույթերի հատվածը վերաշինվել էր ավանդատան, իսկ արևելյան կողմում կրճատում չի կատարվել (Տաթև)։ Այս տարբերակը հայտնի է մեկ հուշարձանով, որովհետև չի բավարարել ծիսական պահանջները։

Երրորդ տարբերակը կազմում են արդեն կատարելապես ավարտված չորս ավանդատնով ներքուստ խաչաձև գմբեթասրահները (Քարկոփ, Վահանավանք և այլն)։

Հիշյալ տարբերակների հնագույն օրինակներում որմնամույթերին փոխարինած խորանի անկյունապատերը նկատելիորեն առաջ են բերված կողմնային պատերից, կարծես նախկին որմնամույթերի մշակված վերջնամասերը կցված լինեն խորանին։ Այս երևույթի հիանալի օրինակ է Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցին, որի արևելյան որմնամույթերը պահպանված են, սակայն ծառայում են որպես ավանդատների արևմտյան պատ։ Նույն կառուցվածքն ունեն նաև Վահանավանքի, Հաղբատի, Կեչառիսի և այլն եկեղեցիները[36]։ Այս երևույթը պատահական չէ, որովհետև այդ անկյունապատերն իրենց վրա կրում են մինչ այդ առանձին կանգնած գմբեթակիր կամարները։

Նախորդ եկեղեցիներում անկյունապատերի մշակվածությունը շատ

[34] Տե՛ս В. М. Арутюнян, По поводу датировки храма в Аруче, стр. 19.

[35] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 187։

[36] Տե՛ս Ն. Տոկարսկի, Ճարտարապետական եզակի հուշարձան 1911 թ. պեղումներից, «Հայկական արվեստ», Երևան, 1974, էջ 10։

ավելի զուսպ է, որովհետև այդտեղ նմանօրինակ «վիրահատում» չի կատարվել: Բոլոր դեպքերում այս երկու տիպերը հանդես են գալիս որպես տարբեր հորինվածքներ և նրանց առաջացման ակունքներն էլ, ինչպես ցույց են տալիս հիշյալ տարբերակները, ունեցել են տարբեր հիմք:

Չորս ավանդատներով այս երկու տիպերից հնագույնները եռախորաններն են: Սևանի ավազանում դրանք ներկայացված են Շողուագավանքի, Մաքենոցաց վանքի, Մասրուց անապատի, Կոթավանքի եկեղեցիներով, իսկ Վայոց ձորում՝ Գնդեվանք, Որոտնավանք և Եղեգիս:

Շողուագավանք.—Այս եկեղեցին գտնվում է Զորագյուղի արևմտյան կողմում: Եկեղեցուց միայն հյուսիսային պատն է մնացել: Ավերման պատճառը քայքայվող հիմքն է: Քննվող տիպի առանձնամասերի համաչափ ներդաշնակության սկզբունքն առաջին անգամ լիարժեք կերպով իրականացվել է այս հուշարձանում: Եկեղեցու աչքի ընկնող կառուցվածքային յուրահատկություններից մեկը թևերի արանքներում ավանդատների տեղադրությունն է: Կողմնային չափերով սրանք մի փոքր զիջում են եկեղեցու թևերի երկարությանը, որի հետևանքով արտաքուստ մասնակիորեն ընդգծված է շինության խաչաձևությունը: Ավանդատների նմանօրինակ համաչափությունները պետք է դիտել որպես չորս ավանդատների տեղադրության նախնական փուլ, երբ արտաքին ծավալի ամբողջական կերպարը տակավին մշակված չէր:

Ժամանակին եկեղեցին ունեցել է շինարարական արձանագրություն, որը գոտևորել է նրա պատերը մեկ տողով: Ավերման պատճառով արձանագրությունից պահպանվել է միայն մի փոքր հատված՝ արևելյան և հյուսիսային պատերին:

Արևելյան պատի հյուսիսային անկյունում.

...Ք ՅԱՆՈՒՆ ԳԼԽ

Պատից ընկած և տապանաքար շինած մի քարի վրա՝

ԱՒՈՐԻՆ ՊՈՂՈ

Հյուսիսային պատին՝

ՍԻ ՎԱՄՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ...

Պակասում է մեկ քար: Շարունակությունը գտնվում է հյուսիսային թևի արևելյան հատվածում՝

ԵՑԻ ՋԳԻԻՂՆ...

Սկզբնամասում Ս. Բարխուդարյանը վերծանել է՝ «Ի թագաւորութեան... կանգնեցի զեկեղեցիս յանուն գլխաւոր...»:

Ս. Բարխուդարյանի կարծիքով այս արձանագրության բեկորներն են Մասրուց անապատում գտնված արձանագիր երեք քարերը[37]: Սակայն դրանց մեջ հիշված ՄՍՐԻՍ անունը հիմք է տալիս մտածելու, որ բեկորները պատկանել են Մասրուց անապատին: Արձանագրության պահպանված հատվածը կառուցման վերաբերյալ տեղեկություն չունի: Այդ պատճառով կառուցման պատմությունը քաղում ենք Ստ. Օրբելյանից: Եկեղեցու շինության մասին պատմիչը հիշատակում է երկու անգամ: Առաջինը՝ Սևանի եկեղեցիների շինության մասին տված տեղեկությունից անմիջապես հետո. «Դարձեալ՝ սոյն Մարիամ շինէ զմեծապայծառ եկեղեցին ի Շողուագայ յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի. և կարգէ ի նմա կրօնաւորանոց, դասս բազմահոյլ քահանայից վասն հոգեաց տեառն իւրոյ Վասակայ՝ իշխանի Սիւնեաց»: Այնուհետև թվարկված են նվիրատվությունները: Տեղեկությունն ավարտվում

37 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», IV, էջ 241—242:

է եկեղեցու վրա արձանագրություն թողնելու մասին վկայությամբ, որտեղ հիշատակվել են Գևորգ կաթողիկոսը, Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսը, Սյունյաց տեր Գագիկը, Վասակի եղբայր Հրահատը և Արտավազդ Շաղատ-նեցին[38]:

Երկրորդ հիշատակության մեջ պարզապես ասված է, որ սկզբից «շինէ

Մարիամ զՍեանայ եկեղեցիսն. և յետո զՇողուագային»[39]:

Այս տեղեկություններից նախ պարզվում է, որ եկեղեցին կառուցվել է

874 թվականից հետո, իսկ Գևորգ կաթողիկոսի անվան հիշատակումը հնա-

րավոր է դարձնում շինության ժամանակը որոնել 877 թվականից հետո:

Նկատի առնելով այս թվականը Ս. Մնացականյանը գտնում է, որ եկեղեցին

կառուցվել է 877—886 թվականների ժամանակահատվածում[40]: Այս թվագրու-

թյան մեջ կարելի է մասնակի ճշտում կատարել: Եկեղեցու կառուցման

տեղեկությունը Ստ. Օրբելյանը տալիս է Աշոտ Բագրատունու թագադրությու-

նից առաջ և այդ երկու իրադարձությունների ժամանակը բնութագրում՝

«Իսկ ապա յայնմ ժամանակի» բառերով:

Կառուցման ժամանակը ճշտելուն մեծապես օգնում են հիշատակված

անձինք: Սյունյաց եպիսկոպոս Հովհաննեսը կարող է միայն Հովհաննես Ե-ն

լինել, որը եպիսկոպոս է օծվել 882[41] թվականին Գևորգ կաթողիկոսի կողմից:

Քանի որ Ստեփանոս Օրբելյանի մոտ Հովհաննեսը հիշատակված է եպիսկո-

պոսական կոչումով, ուրեմն եկեղեցին կարող էր կառուցվել 882 թվականից

հետո՝ 885 թվականին՝ Աշոտ թագավորի օծման տարին: Սյունյաց տեր

Գագիկը Վասակ Գաբուռի և իշխանուհի Մարիամի ավագ որդին էր: Հոր

մահից հետո ժառանգել էր տանուտիրոջ իրավունքները: Հրահատը Վասակ

Գաբուռի եղբայրն էր: Առաջին անգամ նա հիշատակվում է IX դարի կեսին:

Շողուագավանքի շինության ժամանակ նա պետք է ծերության հասակում

լիներ: Արտավազդ Շաղատնեցու վերաբերյալ այս տեղեկությունից բացի

ուրիշը չկա:

Եկեղեցու արևմտյան կողմում մի փոքրիկ, թաղածածկ ավերակ մատուռ

կա: Ե. Լալայանցի կարծիքով դա կարող է Մարիամ իշխանուհու դամբա-

րանը լինել[42]: Այս ենթադրության համար, հավանաբար նա նկատի է

ունեցել Հ. Դրասխանակերտցու այն տեղեկությունը, որ Մարիամի հանգստա-

րանը գտնվում է Շողուագա եկեղեցու կողքին[43]: Շինությունն արտաքուստ

տեղադրված խորանով միանավ թաղածածկ սրահ է: Հորինվածքային այս

կերպարը բնորոշ էր գերազանցապես վաղ քրիստոնեական ժամանակներին:

Եկեղեցու Շողուագավանք անունը Ասողիկը բացատրում է «Շող»՝

լույսի շիթ բառով, մեկնաբանելով՝ «լոյս Աստուածոյ»[44]:

Մասրուց անապատ.—Այս հուշարձանը ևս գտնվում է Զորագյուղում,

հարավային ծայրում: Եկեղեցու մասին գրավոր տեղեկություն չի պահպան-

վել: Նկատի ունենալով ճարտարապետական ձևերի կազմավորման նոր

38 Ստ. Օրբելեան, էջ 174—175:

39 Նույն տեղում, էջ 177:

40 Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 43:

41 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 20:

42 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXIV, էջ 57:

43 Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 230:

44 Տե՛ս Ասողիկ, էջ 259:

դարաշրջանի սկզբունքային առանձնահատկությունները, եկեղեցին կարելի է համարել այդ տիպի հնագույններից մեկը[45]:

Նախնականության հատկանիշներին զուգընթաց եկեղեցին ունի նաև համեմատաբար նոր առանձնահատկություններ: Հարավ-արևմտյան ավանդատներից բացի, մյուսները տեղադրությամբ համաչափորեն ամփոփված են արտաքին պատերի մեջ: Նկատի ունենալով այս հատկանիշները կարծում ենք, որ եկեղեցին կարելի է թվագրել IX դարի վերջին տասնամյակով, Շողուագավանքից հետո:

Հարավ-արևմտյան ավանդատունը նախապես գոյություն չի ունեցել: Հավելման ժամանակ այն մի փոքր մեծ է կառուցվել և հարավային կողմից խախտում է պատի ուղիղ գիծը: Արևմտյան ավանդատներում չկան խորանաձև որմնախորշեր: Ըստ երևույթին նրանց դերը տարբերվել է արևելյանից: Հարավ-արևմտյան ավանդատան մուտքը ժամանակին եղել է դրսից: Հետագայում փակել են այն և նոր մուտք բացել ներսի կողմից: Գմբեթի փոխանցումը առագաստային է:

Եկեղեցին ունեցել է շինարարական արձանագրություն, որը, հավանաբար, XVII դարի նորոգման զոհ է դարձել: Արևմտյան պատին կա արձանագրության մի բեկոր. ԵՍ ՄՍՐԻՍ...: Երկու քար էլ գտնվում են եկեղեցու տանիքին. ԱՌԱՋԻՆ... ԻՄՈՅ Ի ՄՈՒ...: Մսրի Հ. Աճառյանի մոտ իգական անուն է, առաջացած Եգիպտոս անունից[46]: Եկեղեցու անունը Ս. Բարխուդարյանը կապում է Զորագյուղ և Ծակքար գյուղերի արանքում ժամանակին գոյություն ունեցած Մասրիս անունով գյուղի հետ, ուր և գտնվել է եկեղեցին: Զորագյուղի սահմանն, ըստ հեղինակի, այդ ժամանակ մինչև վանքը չի տարածվել[47]: Սակայն նա իր ենթադրությունը չի հիմնավորում որևէ փաստարկով, մինչդեռ անվան ծագումը, որը տվյալ պարագայում կարևոր է եկեղեցու կառուցման պատմության համար, հայտնի է միայն արձանագրության հիշյալ պատառիկից: Ցավոք, արձանագրության աղճատվածությունը հնարավորություն չի ընձեռում հարցին հանգամանորեն անդրադառնալու և պարզաբանելու համար: Թվարկելով Շողուագավանքին հատկացված նվիրատվությունները Ստ. Օրբելյանը ի միջի այլոց նշում է. «Եւ գնեալ ի հագարացի մարդկանէ զդէօղն Շողուագայ...»[48]: Ստացվում է, որ վանքի կառուցման ժամանակ գյուղը պատկանել է արաբներին և կոչվել է Շողուագա, այսինքն, ոչ թե վանքի անունն է անցել գյուղին, այլ՝ ընդհակառակը: Գյուղը արաբներին պատկանելը և Մսր անվան առկայությունը հավանական են դարձնում այն տեսակետը, որ եկեղեցին կառուցվել է նույն Շողուագավանքի կառուցմանը մոտ ժամանակներում, երբ գյուղը դեռևս գնված չէր:

Ունի XVII դարի նորոգման արձանագրություններ[49]:

Կոթավանք.—Կոթավանքի եկեղեցին գտնվում է Ն. Գետաշեն գյուղի արևմտյան կողմում, բարձրադիր հարթության վրա: Վերնամասով ամբողջապես ավերված է: Հյուսիսային խորանի գմբեթարդն ունեցել է ավելի մեծ տրամագիծ և շարված է խորանի պատից մոտ 20 սմ ավելի խոր: Ավանդատներն ունեն երկրորդ հարկը կազմող թաքստոցներ:

45 Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 77—78:

46 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 474:

47 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», IV, էջ 241:

48 Ստ. Օրբելյան, էջ 174:

49 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», IV, էջ 249, 250:

Եկեղեցու արևմտյան կողմում եղել է գավիթ, որի հիմնապատերն առանձնապես նկատելի են հյուսիս արևմտյան մասում:

Այս հուշարձանում չորս ավանդատուն եկեղեցիների նոր տիպը՝ նախորդների համեմատությամբ ավելի ավարտված լուծում ունի: Չորս ավանդատներն էլ արտաքուստ ամփոփված են ուղիղ պատերի մեջ: Նրանց գոյությունն արտաքուստ ընդգծված է միայն արևելյան որմնախորշերով: Ներքին տարածության ծավալային հորինվածքը նախորդի նմանությամբ խաչաձև հատակագծով նախորդն է:

Եկեղեցուց բացի այստեղ կառուցվել են նաև շրջապարիսպ և, հավանաբար, այլ շինություններ, որոնց մնացորդները երևում են շրջապատում:

Կառուցման վերաբերյալ հիմնական տեղեկությունը տալիս է Ստ. Օրբելյանը, միաժամանակ մեջ բերելով երբեմնի գոյություն ունեցած շինարարական արձանագրությունը:

Այդ տեղեկության համաձայն եկեղեցին և պարիսպը կառուցել է Մարիամի որդի Գրիգոր Սուփանը. «Շինէ և Սուփան զզարմանակերտ փարախն բանաւոր հօտի ի գիւղաքաղաքին Կոթայ յանուն սուրբ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կարգէ ի նմա դասս պաշտօնէից և պարսպէ մեծամեծ վիմօք»[50]: Այնուհետև Ստ. Օրբելյանը տալիս է եկեղեցու շինարարական արձանագրությունը. «Ինձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգւոյ ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոթայ՝ ի կացուածի իմոց նախնեացն, զոր նախքան զայս պարսպափակ շրջապատեալ էին ի բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ: Յետ այսր ապա իմոց նախնեացն խորհրդակցեալ կամօքն Աստուծոյ շինեցի տուն Տեառն և յարկ Աստուծոյ Յակոբայ անուանակոչութեամբ Սրբուհւոյ Տիրամօր Աստուածածնին, վիմատաշ, կոփածոյ քարամբք. և ի սմա սենեակս 8 ի վերոյ և ի ներքոյ. և ապա ի սմին սուրբ քաւարանիս կարգեցի քահանայս և զարդարեցի. զԱստուածածնի քահանայքն նախնեաց իմոց և այլ սպասաւորս բազումս ազատ արարի յարքունական ծանրութենէ և ի բեկարէ. և սահմանեցի հողս և ջուրս. և նուէ միոյ միոյ քահանայի 50 դրամ ի տարւոջն. որ լինի հնգեցիկս. և սահմանեցի չորից քառասունս և սաղմոս ընթերցեալ կանոնն և զառաւօտուն սաղմոսն, զի որչափ ես եմ ի մարմնի, յաղագս կենացս յաջողման լիցի, և յետ վախճանի կենացս մեղուցեալ հոգւոյս իմոյ կատարեն: Եւ յամենայն ամի իւրաքանչիւր ոք ի քահանայիցս չորիցս քառասունս առնիցեն վասն իմ: Եւ արդ՝ եթէ ոք ի քահանայիցս զիմ հոգեցատուր հողդ և զայլ ընծայսդ ձեռնարկէ յայս և յափշտակել ջանայ, և զքահանայս ի չար ընկեննու զոր ազատեցի ես յամե- ի քահանայիցդ. [illegible] նոյն ուրեք, կամ ի զարմից իմոց կամ ի ժառանգաւորաց կամ յայլ ազգաց զկնի մեր, այնպիսւոյն բարձցի անունն յերկրէ և յիշատակն, և դատապարտեալ և ամօթալից եղիցի յահեղ հրապարակին Քրիստոսի, և մեղաց իմոց համարս տայցեն յաւուրն դատաստանի. և ժառանգեսցեն զհուրն անշէջ և կտանջանսն յաւիտենական: Եւ եթէ քահանայքդ երբէք ստունգանիցէք և մոռացումն առնիցէք կարգեալ շարադրութեանցդ և կամ ծուլանայք յերգել քառասնիւրոյդ, Տէր Աստուած դատապարտեսցէ զձեզ զաւակօք և զարմիւք. և բաժին ձեր ընդ տիրասպան քահանայիցն լիցի»[51]:

Մ. Սմբատյանցի ժամանակ տակավին գոյություն են ունեցել այս արձանագրության առանձին հատվածները: Նա վկայում է որ՝ «Հին եկեղեցւոյ

50 Ստ. Օրբելյան, էջ 177:

51 Նույն տեղում, էջ 177—179:

շինուածոց արձանագրութեան քարերը ցիր ու ցան էին եղած եկեղեցւոյ պարսպի մէջ, մի տեղ հավաքելով՝ տասն հատ՝ մի քանի բառ հազիւ կարողացանք կարդալ զոր. «Ի քաղաքագիւղս Կոթայ. Գանձուց, տուն Տեառն Աստուածածին շինեցի, սեննակս Ը. զարմից, զԱտենքահանայ յարքունական, քառասունս, երկրէ յարկն աշխատութեան, յիշատակ, Սաղմոս»[52]: Այս անհասկանալի պատառիկների մեջ 8 սենյակների մասին հիշատակությունը, անկասկած, շինարարական արձանագրության հատվածն է: Ներկայումս այդ էլ չկա:

Ստ. Օրբելյանի բերված վավերագրից պարզվում է, որ նախքան Գրիգոր Սուփանի շինարարական աշխատանքների ձեռնարկումը, տեղում գոյություն են ունեցել այլ շինություններ՝ մասնավորապես պարիսպը, որը կառուցել էին նրա նախնիները: Այդ մասին արձանագրության հեղինակն ասում է, որ կառուցվել էին «Բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ»: Խոսելով Կոթ գյուղաքաղաքի մասին Գրիգոր Սուփանն այն ևս անվանում է իր նախնիների հաստատություն: Ամենայն հավանականությամբ խոսքն այստեղ վերաբերում է IX դարի առաջին կեսի ժամանակներին, թերևս իր անմիջական նախնիին՝ Վասակ Գաբուռին:

Արձանագրության մեջ հիշատակված եկեղեցու (ի սմա) ութ սենյակների տակ Ս. Մնացականյանի իրավացի կարծիքով պետք է հասկանալ ավանդատները, մանավանդ, որ պատմիչը շեշտում է նրանց տեղադրությունը ներքևի և վերևի բառերով:

Արձանագրությունից պարզվում է, որ Կոթում կառուցվել են նաև այլ եկեղեցիներ: Մ. Սմբատյանցը վկայում է, որ Գետաշենում եղել են յոթ եկեղեցիների ավերակներ[53]: Ներկայումս պահպանվում են միայն քննվող տիպը ներկայացնող հիշյալ եկեղեցին և XIII դարի մի քանի շինությունների ավերակներ: Ինչպես արձանագրությունը, նույնպես և Ստ. Օրբելյանը կառուցման ժամանակը չեն տալիս: Հարցի լուծմանը մեծապես օգնում է Մաքենոցաց վանքի մասին եղած տեղեկությունը, ուր հիշատակված է նաև Կոթավանքը:

Մաքենոցաց վանք.—Հայաստանի առավել հռչակված մշակութային օջախներից մեկն էր: Նրա պատմությունը բաժանվում է երկու շրջանի՝ մինչ VIII դար և IX—XIII դարեր[54]: Այստեղ են սովորել մի շարք նշանավոր մտածողներ, որոնց թվում և Դրասխանակերտցին[55]: Հուշարձանն իր ներկա վիճակով բաղկացած է մի եռախորան եկեղեցուց, շրջապատի այլ շենքերի մնացորդներից, հարավ-արևելյան կողմի ևս երկու միանավ եկեղեցիներից և միաբանության պարսպապատերից: Հիշյալ շինությունների մեջ ամբողջապես պահպանվել է գլխավոր եկեղեցին: Գավթի միայն հիմնապատերն են առկա, իսկ նրա հարավակողմին կից միանավ եկեղեցուց մնացել են խորանի գմբեթարդը և պատերի բարձրության կեսը: Առանձին հատվածներում լավ են պահպանված նաև շրջապարիսպները:

Գավիթը եղել է թաղածածկ: Ունեցել է չորս մուտք՝ տեղադրված չորս կողմերում: Միանավ եկեղեցու մուտքը գտնվում է հյուսիսային կողմում, որով և հաղորդվում է գավթի հետ:

52 Մ. Սմբատեանց, Տեղագիր..., էջ 533—534:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 530:

54 Տե՛ս Հ. Զարբհանալեան, Պատմութիւն հայ հին դպրութեան, Վենետիկ, 1897, էջ 506:

55 Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 183:

Եռախորան շինությունների մեջ Մաքենոցաց վանքի գլխավոր եկեղեցին ունի մի շարք ուշագրավ առանձնահատկություններ, որոնք տիպային ընդհանուր ձևերին զուգընթաց կարող են դիտվել որպես ժամանակագրական բնորոշ երևույթներ: Արևելյան պատը զարդարված է եռանկյունաձև զույգ որմնախորշերով: Եկեղեցին չունի հարավ- արևմտյան ավանդատուն: Կառուցման թվականը հայտնի չէ, սակայն մոտավոր տարիները կարելի է որոշել ամենայն հավաստիությամբ: Ժամանակին գոյություն է ունեցել շինարարական արձանագրություն, որը դեռևս XIII դարում նկատելիորեն վնասված էր: Ներկայումս միայն առանձին բեկորներ են մնացել: Արձանագրության բովանդակության և առհասարակ եկեղեցու կառուցման մասին Ստ. Օրբելյանը գրում է, որ Գրիգոր Սուփանը «Դարձեալ շինէ և զերկնաճեմ խմբարանն ի հրաշազան մենարանին, ի փառաբնակ ուխտն Մաքենոցաց, զգմբէթայարկ եկեղեցին յանուն սրբոյ Աստուածածնին, և պարսպէ վիմօք. և այլ բազում շինուածս յօրինեալ զարդարէ զնա անխնայ գանձիւք և փարթամացուցանէ բազում ընչիւք. նա և գեղօք և ագարակօք և այգեստանօք ի Գառնի և յԵրեւան և յայլ տեղիս: Եւ կարգէ ի նմա արձան յիշատակի հարստայոյս արդեանցն իւրոց, որ ունի օրինակ զայս «Կամաւն Աստուծոյ ես Սուփան՝ Սիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և աստուածային կտակարանօք. և ետու զսեփական տեղն մեր ի սա որ բառ անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, իւր ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, և ետու որս ձկանց զԲողաշէն սեղանոյն, և 700 դրամ ի Դեղձանագետոյ զապալէն, 200 դրամ ի Կաթկայ, 350 յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ. ետու և 5 կուղպակս ի յԱնի և 5 այգի յԵրեւան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յԵղեգիս, և զամենայն պէտս սուրբ եղբայրութեանս լցի առատապէս և փարթամացուցի ներքոյ և արտաքոյ. ետու և ջոլիրս եզանց և ջոկս զուարակաց և անդեայս և հօտս ոչխարաց: Եւ արդ՝ մաղթեմք զամենայն աստուածացելոյ սուրբ ուխտիդ պաշտօնեայսդ, որում Աստուած է միջնորդ, կատարել վասն մեղուցեալ հոգւոյս զերկու քառասունս տէրունի պատարագ ինձ. և անխափան երգել զերեկորին սաղմոսն՝ զնեղութեան կանոնն և զառաւօտուն սաղմոսն զոր կարգեալ եմ յամենայն եկեղեցիք: Եւ Տէր Յովհաննէս՝ Հայոց կաթողիկոսն, ի տանէս մի իշխեսցէ դառ կամ փայքար հանել, և մի յիմ որդեաց կամ ի ժառանգաւորաց. այլ որ ընծայիս հակառակէ կամ հանել ջանայ և որ հակառակ անուանեսցի՝ նզովս չարաչար ընկալցի յԱստուծոյ և յամենայն աթոռակալաց սրբոյն Գրիգորի, և մասն ընդ Յուդայի մատնչին եղիցի: Եւ դարձեալ խօսիմ ընդ ձեզ Առաջնորդք և կրօնաւորք վանացս՝ հաստատուն կալ մինչ ի գալուստն Քրիստոսի, և վարդապետելն և սաղմոսելն վասն իմ անխափան եղիցի. և եթէ ոք ծուլասցի ի քառասնեակ աւուրդ ամ յամէ կատարել զմեղսաքաւիչ սուրբ խորհուրդն յետ ելից իմոց ի կենցաղոյս, ի Քրիստոսէ որոշեալ եղիցի, և մասն ընդ Սիմոնի կախարդի ընկալցի. և ի սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի: Շինեցի և զեկեղեցին ի գիւղաքաղաքին Կոթայ. և ի նմա՝ 8 սեննակ. և արարի պատիւ ի տան Տեառն, զոր շինեցաք. և զԱստուածածնին քահանայքն ազատ արարաք յամենայն արքունի չարէ. ընդ նոսին և զայլ պաշտօնեայս եկեղեցւոյ որք ի քահանայական կարգէ»[56]:

Այս արձանագրությունը թվագրված չէ և եկեղեցու կառուցման ժամա-

56 Ստ. Օրբելեան, էջ 179—181:

նակը կարելի է որոշել Գրիգոր Սուփանի ապրած ժամանակով։ Նկատի ունենալով Կոթավանքի հիշատակության փաստը (որից հետևում է, որ այն գոյություն ուներ սրանից առաջ), պետք է կողմնորոշվել Գրիգոր Սուփանի շինարարական գործունեության վերջին շրջանով։ Ժամանակի ճշտման երկրորդ հնարավորությունը Հովհաննես Կաթողիկոսի անվան առկայությունն է։

Գրիգոր Սուփանը Գեղարքունիքի իշխան է ճանաչվել իր հոր՝ Վասակ Գաբուռի մահվանից հետո՝ 887 թվականին։ 908 թվականին Յուսուֆի ասպատակություններից Գեղարքունիքը փրկելու նպատակով հանձնվեց նրան, իսկ 911 թվականին սպանվեց։

Հովհաննես կաթողիկոսը գլխավորել է հայոց եկեղեցին 898—929 թվականներին։ Այսպիսով, մնում են 898—908 թվականները, որոնցից ավելի հավանականը առաջին տարիներն են, որովհետև դրան հաջորդած Յուսուֆի արշավանքների հետևանքով ստեղծված տագնապալի ժամանակներում հազիվ թե պայմաններ ստեղծվեին շինարարական աշխատանքների համար։

Եկեղեցին 1666 թվականին ենթարկվել է նորոգման։ Այդ մասին տեղեկացնում է հարավային պատի արձանագրությունը։ Արձանագրության առաջին տողում հիշատակված է, որ եկեղեցին կառուցել է Գրիգոր Սուփանը։ Նշված է նաև կառուցման թվականը՝ ԿԱՄԱՒՆ ԱՅ ՈՐ ՍԻՒՆԵԱՅ ՍՈՒՓԱՆ ԻՇԽԱՆ ՇԻՆԵՑ ՄԱՔԵՆՈՒՑ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ԳՃ (851) ԹՎԻՆ։ Այս թվականն ակնհայտորեն սխալ է։ 851 թվականին Գրիգոր Սուփանը հավանաբար ծնված անգամ չի եղել։ Արձանագրության հեղինակի համար հիմք է ծառայել Ստ. Օրբելյանի տված պատմական տեղեկությունների՝ այդ թվում և եկեղեցու կառուցման ընդհանուր թվագրությունը՝ 851—901։ Ստ. Օրբելյանի հիշյալ ընդհանուր թվագրման և Հովհաննես կաթողիկոսի անվան առկայությունը հնարավոր են դարձնում եկեղեցու կառուցման տարիները դնել 898—901 թվականների շրջանում։ Մ. Սմբատյանցը նախընտրում է 900 թվականը[57]։

Մաքենոցաց վանքի կառուցման ժամանակը ընդունելով շուրջ 898—901 թվականները, սրան նախորդած Կոթավանքի շինությունը կարելի է փնտրել 887—898 թվականների միջև։

Վանքի Մաքենոցաց անվանումը Ղ. Ալիշանը բացատրում է «մաքենի» բառով, ենթադրելով, որ տեղի կուսակրոն վանականները կրել են այծի մորթուց զգեստ[58]։ Ե. Լալայանցը բացատրում է հնում այստեղ խաշնարածների բնակության և մաքիներ (այծեր) պահելու իրողությամբ[59]։

Մաքենոցաց վանքի մեջ մտնող թաղածածկ եկեղեցիները տեղի հնագույն շինություններն են[60]։ Միաբանության գոյությունը (բայց ոչ հիմնադրումը) Ստ. Օրբելյանը հիշատակում է VII դարի վերջին և VIII դարի առաջին կեսին։ VIII դարում վանքը բավականին հռչակված էր, մանավորապես իր դպրոցով[61]։ Վանքը պատմիչն անվանում է «ղհռչակելի ուխտն Մաքենոցաց»[62]։ Կաղանկատվացին ասում է, որ դա Հայաստանի պարծանքն է եղել[63]։

57 Տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր..., էջ 574։

58 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 66, տե՛ս նաև Չամչեան, Պատմութիւն հայոց, էջ 426։

59 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXIV, էջ 54։

60 Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 134։

61 Տե՛ս Վ. Հացունի, Դաստիարակութիւն հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 192, Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի, Կահիրե, 1947, էջ 259։

62 Ստ. Օրբելեան, էջ 99, 101, 159։

63 Տե՛ս Կաղանկատուացի, էջ 52, տե՛ս նաև Մ. Սմբատեանց, Տեղագիր..., էջ 571—574։

Պատմիչների հիշյալ բնութագրերից երևում է, որ վանքը գոյություն է ունեցել VII դարից շատ առաջ և ավերվել է IX դարում[64]։

Վանեվան.—Այս հուշարձանը գտնվում է Մարտունու շրջանի Արծվանիստ գյուղի արևելյան կողմում։ Իրենից ներկայացնում է երեք շինություններից բաղկացած հուշարձանախումբ՝ քառախորան գմբեթակիր եկեղեցի, գավիթ և թաղածածկ եկեղեցի։

Քառախորան եկեղեցում բացակայում է հյուսիս-արևմտյան ավանդատունը, գմբեթի փոխանցումը կատարված է տրոմպների միջոցով։ Արևմտյան կողմում կառուցված է արտաքին սրահը։ Գավթի տանիքը նոր է։ Մինչև 1895 թվականն այն գոյություն չի ունեցել[65]։ Արևելյան կողմում առանձնացված են երեք ուղղանկյուն սենյակներ, որոնցից միջինը համեմատաբար մեծ է և ունի բեմ, իսկ կողմնայիններն ավանդատան տեսք ունեն։ Ս. Ջալալյանցի կարծիքով բացառված չէ, որ դրանք շինարարական արձանագրության մեջ հիշատակված Սողոմի, Աթանասի և Սմբատ Բագրատունու դամբարաններ լինեն[66]։ Եկեղեցու կառուցման մասին հիմնականում տեղեկություն է տալիս գմբեթի թմբուկի հարավային և հարավ-արևելյան նիստերին փորագրված շինարարական արձանագրությունը։

1. ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏ, ՏԷՐԱՆՑ
2. ՏՐ; ՈՐԴԻ ԱՇՈՏԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ
ՄԵ—
3. ԾԻ ՍԸՆՊԱՏԱՅ ՀԱՐԱՋԱՏ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ ԵՒ ՎԵՐԱԴԻՏՈՂԻ ՀԱՅՈՑ
4. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆ ՅԵՒԱՆԻՍԻ ԻՄԱՑԱՅ ԵՒ ԾԱՆԵԱՅ ԹԷ ԱՄԵՆԱՅՆ ՓԱՌՔ ԵՒ
ՄԵԾՈ[Ւ]—
5. ԹԻՒՆ ԸՍՊԱՌԵԼՈՑ ԵՆ ԵՒ ՎԱՂԻՒ ԿՈՐԸՆՉԵԼՈՑ. ԵՒ ՄԵԾԱՓԱՓԱԳ ՏԵՆՉԱ-
ՆՈՎՔ
6. ՎԵՐԱԿԱՑՈՒ ԵՒ ՏԵՍՈՒՉ ԱՌՆԵԼՈՎ ՋՔՈՅՐ ԻՄ ՄԱՐԻԱՄ ՍԻՒՆԵԱՅ ՏԻԿԻՆ
ՅԻՒՐ—
7. ՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԱՆԵՎԱՆԻ ՎԱՆՍ ՏՈՒՆ ԱՅ ԿԱՆԳՆԵԼ ՎԻՄԱՇԱՏՍ
8. ԿՈՓԱԾՈՎՔ ՇԱՏԱԾԱԽ ԳԱՆՁԻՒՔ ԵՒ ՄԵԾԱՋԱՆ ՎԱՍՏԱԿՈՎՔ ԿԱՏԱՐԵԼ,
9. ԹԵՐԵՒՍ ԼԻՑԻ ԻՆՁ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՅԱՅՆՄ ԱՒՈՒՐՆ՝ ՅՈՐԺԱՄ ԲԱՆՔՆ
ՍՊԱՌ—
10. ԻՆ ԵՒ ԳՈՐԾՔ ԹԱԳԱՒՈՐԵՆ։ ԵՒ ՏՈՒԱՔ Ի ՔԵԶ ՎԱՆԱՎԱՆՈՒ ՎԱՆԱԿԱՆ
ՀԱ—
11. ՅՐ ԱԲՐԱՀԱՄ ԱՂԱՒԹԵԼ ԵՒ ՎԱՅԵԼԵԼ, ԵՒ ՈՐ ԱՅԼ ՅԵՏ ՔՈ ԱՅԼ ՅԱՋՈՐԴԻՆ
12. ԵՒ ՊԱՇՏԱՒՆԵԱՅՔ ԽՈՐԱՆԻԴ ՅՈՐԺԱՄ ԺՈՂՈՎԻՔ ՄԻԱԲԱՆ ՅԱՂԱՒԹՍ՝
13. ԵՒ ԿԵՐԱԿՐԻՔ ԱՆՄԱՀԱԿԱՆ ԿԵՐԱԿՐՈՅՆ՝ ՅԻՇԵՍՋԻՔ ԶԻՍ ԵՒ ԶԻՄՍՆ,
14. ԶԻ ԱՐԱՍՑԷ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՈՂՈՐՄԱԾՆ ԱԾ Դ ԳԵՂՈ ՍԱՀՄԱՆ՝
15. ԿՈԹԱՔԱՐ, ՇԱՒԱՌՆԱՀՈԼՆ, ԳԵՏԱՄԷՋՆ, ԿԹԱՆՈՑ ԳԵՏԱՎԱՆԱՅ ԾՈՎՆ
։ՄԿ։
16. ԴՐԱՄ, Ի ԿՈԹԱՔԱՐ ։ՇԼ։ Ի ԲՈՏԵԼԵՑՆ ։ՌԿ։ ՅԱՂԻԲՈՂԱՆԱՅ ։ՋՂ։ Ի
ԿԱՐԲԻՆ ԳԵ—
17. ՏՐԷՆ ԵՒ ՆԱՒԵՐԷՆ։ ՏՐ ՍՈՂՈՄ, ՏՐ ԱԹԱՆԱՍ ՍՄՊԱՏ ԹԱԳ. ԱՍՏ.
18. ԱՎ ԲԵՐԱՒ ՋՈՒՐՍ ՅՈՆՃՈՒ... ԵՆ Ի ԹՈՒԻՍ ՀԱ[Յ]ՈՑ ։ՅԾԲ։ (903)

64 Տե՛ս Այրիվանեցի, էջ 51, Ստ. Օրբելեան, էջ 159։

65 Տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր..., էջ 567։

66 Տե՛ս Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն..., Բ, 120։

19. ԱՅ ԴԹԻ ՋԵՌԱՒՔ ԵՒ ՄԻԱԲԱՆՍԱՒ—

20. Ք ՋՈՐ ՅԱՌԱՋ ԲԵՐԱԾ ԷՐ ԱԾ ՈՂՈՐՄԻ[67]։

Կասկածելի է արձանագրության վերջնամասը։ 17-րդ տողում Սողոմի և Աթանասի անուններին հաջորդում է «Սմպատ Թագ աստ» և 18 տողում «Ավ» հապավված բառերը, որոնք Սմբատյանցն ու Ջալալյանցը վերծանել են «Սմպատ Թագաւորեաց Աստուծով բերաւ ջուրս»[68]։ Ստ. Օրբելյանը բերելով արձանագրությունն[69] ամբողջությամբ այս հատվածը բաց է թողել և ջուր բերելու մասին չի հիշատակում։ Հիմք ընդունելով պատմիչին Ղ. Ալիշանը նախատում է Ս. Ջալալյանցին անճշտության համար[70]։ Սակայն արձանագրության այս հատվածում հիշյալ հապավումները գոյություն ունեն, միայն թե հարկավոր է կարդալ այսպես ՏՐ ՍՈՂՈՄ, ՏՐ ԱԹԱՆԱՍ։ Սրանք արձանագրության հեղինակներն են և իրենց գրածն ավարտում են իրենց անունների ստորագրությամբ։ Այնուհետև հաջորդում է. ՍՄՊԱՏ ԹԱԳԱՒՈՐ ԱՍՏ ԱՍՏՈՒԾՈՎ ԲԵՐԱՒ ՋՈՒՐՍ..., ինչպես այն արել է Շահխաթունյանցը[71]։ Բոլոր դեպքերում հապավման ձևերը չափազանց անսովոր են։

Արձանագրության վերջնամասից երևում է, որ նախկինում այստեղ ջուրը եղել է և Սմբատ թագավորը միայն վերականգնել է այն։

Ստ. Օրբելյանն իր տեղեկություններին ավելացնում է նաև, որ Գագիկ Ա (990—1020 թթ.) նորոգել է Վանեվանի կաթողիկեն և պարսպել այն։ «Դարձեալ և յետ ամաց ինչ նորոգէ Գագիկ՝ որդի Աշոտոյ շահանշահի, զհրաշակերտ եկեղեցին Վանէվանայ՝ զսուրբ կաթողիկէն, և տայ զԴեղձանագեւո ի նա. և պարսպէ շուրջ զեկեղեցեաւն. և գրէ արձան անիծից ոչ յափշտակել զայն ի սուրբ եկեղեցւոյն»[72]։ Պարիսպը չի պահպանվել։

Գնդեվանք.—Հուշարձանը գտնվում է Արփա գետի ձախ ափին, Վայոց ձորի Գնդեվազ գյուղից հարավ-արևմուտք։

Եկեղեցին չունի արևմտյան կողմի ավանդատները։ Նրանց բացակայության հետևանքով թեև հորինվածքը հեռանում է սկբունքորեն մշակված կերպարից սակայն, ըստ էության, տիպի բնութագիրը չի փոխվում։ Արևմըտյան կողմում թաղածածկ գավիթն է։

Ժամանակին Գնդեվանքում եղել է խոշոր միաբանություն։ Վանական շենքերից մնացել են նաև բերդապարիսպներն ու վանականների խցերը։

Եկեղեցին ունեցել է հարուստ որմնանկարներ։ Պահպանված առանձին հատվածները վկայում են նրանց կատարողական արտակարգ բարձր վարպետության և գեղարվեստական արժանիքների մասին։

Ստ. Օրբելյանի վկայությամբ եկեղեցին կառուցել է Սյունյաց Սոփիա իշխանուհին, բերելով այստեղ արհեստավորներ, քարգործ վարպետներ և նկարիչ Եղիշային[73]։ «Կանգնէ զտունն Աստուծոյ և նկարակերտ յօրինուածօք զարդարեն զաւաստաղս և զորմունս նորա» «Եւ շինէ զգիւղն ի վերոյ վանիցն ի գլուխ քարին»։ «Եւ այս լինէր ի թուականին Հայոց 385 (936)»[74]։

---

67 «Դիվան հայ վիմագրության», 4, էջ 121—122։
68 Տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր..., էջ 568։
69 Տե՛ս Ստ. Օրբելեան, էջ 181—182։
70 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 60—61։
71 Տե՛ս Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., էջ 251։
72 Ստ. Օրբելեան, էջ 183։
73 Տե՛ս նույն տեղում, էջ 260։
74 Նույն տեղում, էջ 261։

Շինարարական արձանագրությունը գտնվում է եկեղեցու արևմտյան պատի հարավային անկյունում.

ԵՍ ՍՈՓԻ ՍԻՆԵԱՅ ՏԻ—
ԿԻՆ ԴԵՐԱՆԿԻՆ (Կ) ԴՈՒՍ—
ՏՐ, ԿԻՆ ՍՄՊԱՏԱ, ՈՐԴԻ
ԱՇՈՏԻ ՍԻՆԵՑ ԻՇԽԱՆ—
Ի ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ...[75]։

Ստ. Օրբելյանն արձանագրությունը բերում է հետևյալ շարադրությամբ. «Ես Սոփիա տիկին՝ կին Սմբատայ աստուածապահ տեառն Սիւնեաց, և դուստր Գրիգոր Դերենկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և զարեւշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդեկաց մերոց, և զարյարեւշատութիւն... և ետու զերկու գիւղս ի ժառանգութիւն զարեգի զսա մեծամեծ սպասիւք. և ետու զերկու գիւղս ի ժառանգութիւն տարեցի. ապա թէ սմա, զոր մի ոք իշխեսցէ խափանել կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս, ապա թէ ոչ՝ անլուծանելի նզովիւք անիծեալ լիցի յԱստուծոյ և յաստուածադսմար սրբոցս. մատանի էր անակն վայոց ձոր, շինեցի զսա ի եդի ակն ի վերայ»[76]։

Հայտնաբերվել է նախադասության այս վերջին բառերի վիմագիրը, փորագրված արևմտյան պատին։ Նույն բովանդակությամբ մի կիսաեղծ արձանագրություն էլ կա ընկած քարերից մեկի վրա.

Արևմտյան պատին՝ գավթի վերևում.

ՄԱՏԱՆԻ
ԷՐ ԱՆԱԿՆ Ե—
ԴԻՐ ՍՈՓԻ ՍԻ—
[Ի] ՆԵԱՅ ՏԻԿԻ[Ն]

և երեսապատման ընկած քարերից մեկի վրա.

...ԱՆԱԿՆ
...ԱԿՆ ԷԴԻ [Ր ՍՈՓԻ ԱԻ]—
ԻՆԵԱՅ ՏԻ[ԿԻՆ...] /ԱԻՈՐԵ[77]։

Արձանագրությունն ըստ եղածի և ըստ Օրբելյանի թվական չի ունեցել։ Թվականի մասին տեղեկությունը պատմիչը հավանաբար քաղել է այլ սկզբնաղբյուրից, որը, պետք է ասել, այնքան էլ ճիշտ չէ։

Եկեղեցու հարավային պատին արտաքուստ պահպանվել է Եղիշա նկարչի արձանագրությունը, թվագրված 931։

Գնդեվանքի արձանագրությունները հրատարակել են Քաջբերունին, Ալիշանը, Սիսոևը և Ս. Բարխուդարյանը։ Քաջբերունին և Ս. Բարխուդարյանը թվագրմանը չեն անդրադարձել[78]։ Սիսոևը վկայակոչելով Ստ. Օրբելյանին, գտնում է, որ 931 թվականի արձանագրության և պատմիչի տեղեկությունները գրեթե համապատասխանում են[79]։ Սիսոևը պարզապես հանում է տարբերության խնդիրը։ Ալիշանը, նկատի առնելով Ջալալյանցի և Քաջբերունու վկայությունը այն մասին, որ 931 թվականի արձանագրությունը տեղադրված է եղել զանգակատան պատին, համոզված է, որ այն պատկանել է ավելի վաղ շինություններից մեկին՝ զանգակատանը[80]։ Սակայն դա

---

75 «Դիվան հայ վիմագրության» III, էջ 13։
76 Ստ. Օրբելեան, էջ 261—262։
77 «Դիվան հայ վիմագրության», III, էջ 13։ «Փորձ», 1877/78, էջ 354—355։
78 Տե՛ս Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողութիւնք, «Փորձ», 1877/78, էջ 354—355։ III Մ, 1916, էջ 149, 152։
79 Տե՛ս МАК, (материалы по археологии Кавказа), III Մ, 1916, էջ 149, 152։
80 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 106։

եղել է արձանագրությունը կրող պատի վերևում կանգնեցված ուշ ժամանակներին բնորոշ փոքրիկ զանգակատուն: Ջալալյանցը տեսել է այն, իսկ Քաջբերունու ժամանակ գմբեթն ավերված էր: Ինչ վերաբերում է այստեղ հին շինությունների լինելուն, ապա այդ կարծիքը բխում է Ստ. Օրբելյանի մի տեղեկությունից, որի համաձայն Սոփիա իշխանուհին նախապես այս վայրն այցելելիս տեղում տեսել է ճգնավորների: Մի ավանդության համաձայն Գնդեվանքի տեղում եղել է ս. Նախավկայի անունը կրող ճգնատեղի: Ճգնավորներից մեկն այնքան ծեր է եղել, որ չի կարողացել կանգնել և աղոթել է նստած: Այդ պատճառով էլ նրան կոչել են Գունդ Օվանէս: Այստեղից էլ ծագել է վանքի անունը[81]: Սակայն այդ ժամանակ շինություններ չեն եղել: Ճգնավորների գոյությունն ինքնին մի վկայություն է, որ տեղում ոչ թե միաբանություն է եղել, այլ ճգնատեղի: Ամենակարևորն այն է, որ 931 թվականի արձանագրության հեղինակ Եղիշան, ըստ պատմիչի, մասնակցել է եկեղեցու կառուցմանը:

Վերոհիշյալ և ժամանակակից հեղինակները ժամանակագրության համար հիմք են ընդունել Ստ. Օրբելյանի նշած 936 թվականը[82]: Արձանագրության տեղադրումը պատի վերին եզրին մտածել է տալիս, որ 931 թվականին ավարտված են եղել եկեղեցու տանիքը թերևս և որմնանկարները:

Գավթի շինության մասին Ստ. Օրբելյանը հաղորդում է. «Դարձեալ յետ ամաց ինչ, ի 448 (999) թուականին Հայոց սուրբ հայրն Քրիստափոր շինէ զգաւիթսն եկեղեցւոյն»[83]:

Գնդեանքում կա մի խաչքար, չափազանց հետաքրքիր արձանագրությամբ. ՀԱՅՐ ՍՈԻՓԱՆ ԿԱՆԳՆՈ/Ղ ՍՈԻՐԲ ՆՇ/ԱՆԻՍ Յ/ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ ՔՍ ՅՍ այնուհետև մնացել է ՇԻՆԵՑԱԻ բառը, որն ըստ հին հրատարակողների, եղել է «ՆԺԶ (967) թուին շինեցաւ սրահս»: Ս. Բարխուդարյանը ենթադրում է, որ նախկինում գավթի տեղը եղել է սրահ և թվականն էլ ուղղում է՝ ՅՁԶ (937)[84]:

Գավթի մեջ հյուսիսային կողմում կան երկու սենյակներ, որոնք Ս. Մնացականյանը համարում է գրատներ[85]:

Եղեգիս.—Այս հուշարձանախումբը հայտնի է Ցաղաց քար անունով: Գտնվում է Եղեգնաձորի շրջանի Եղեգիս գյուղի հյուսիս-արևելյան կողմում, մի բարձրադիր լեռան հարթակի վրա: Այստեղ կառուցված են երկու իրար մոտ գտնվող համալիրներ:

Արևմտյան համալիրը բաղկացած է քննվող տիպը ներկայացնող չորս ավանդատնով եկեղեցուց, գավթից, հարավկողմյան սրահից, ավելի հարավ տեղադրված երկու ավանդատնով միանավ եկեղեցուց, միանավ շինության մնացորդներից, բերդապարիսպներից և մի շարք այլ շինությունների ավերակներից, որոնք վկայում են երբեմն խոշոր միաբանության գոյության մասին: Այս շինությունների մեջ համեմատաբար լավ է պահպանված քառախորան գլխավոր եկեղեցին: Կիսավեր վիճակում է գավիթը, որից մնացել են

81 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXVI, էջ 9:

82 Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկ. ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 50, *В. М. Арутюнян, С. А. Сафарян*, Памятники армянского зодчества, стр. 50, *О. С. Егиазарян*, Памятники культуры Азизбековского района, 1955, стр. 95, «Ազգագրական հանդես», XXVI, էջ 8:

83 Ստ. Օրբելյան, էջ 262:

84 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», III, էջ 15:

85 Տե՛ս *С. Х. Мнацаканян*, Архитектура армянских притворов, стр. 26.

հյուսիսային պատը և կամարաձև տանիքի քարերի ստորին երեք շարքերը: Հյուսիսային պատը զարդարված է հինգ կամարածածկ խորշերով: Պահպանված մնացորդներից երևում է, որ գավիթը եղել է նեղ, երկարավուն սրահ: Եկեղեցու հարավային կողմի սրահը զարդարված է մեկ զույգ սյուներով: Սրահի արևելյան կողմն ավարտվում է ոչ մեծ ուղղանկյուն սենյակով: Սրահի առաջացման պատճառների մասին սկզբնաղբյուրները տեղեկություն չեն թողել: Թվում է, որ դրանք ծառայել են ապաշխարհության համար: Տվյալ դեպքում այս հուշարձանի համար այդ կարծիքը կարելի է հիմնավորել սրահի արևելյան կողմում մի սենյակի առկայությամբ, որը կարող էր միայն աղոթատեղի լինել:

Այս սրահի և երկու ավանդատնով միանավ եկեղեցու արանքում առաջացած տարածությունը վեր է ածվել միջանցքի: Միջանցքը և վերոհիշյալ գավիթը կառուցվել են սրբատաշ քարերով: Այդ հատվածում էլ հիմնականում գտնվում են արձանագրությունները: Մնացած շինությունները կառուցված են կիսամշակ քարերով:

Միանավ եկեղեցու արևելյան պատին կա թվական կրող մի արձանագրություն ՆԼԸ (989)[86]: Սակայն այս եկեղեցին շատ ավելի հին շինություն է և կառուցողական տեսակետից նկատելիորեն տարբերվում է քառախորանից: Արձանագրությունը եկեղեցու պատին հավանաբար տեղադրվել է նորոգման պատճառով, որին, թերևս ենթարկվել է քառախորան եկեղեցու կառուցման ժամանակ՝ 989 թվականին:

Որ տեղում գոյություն են ունեցել հին շինություններ, որոնք X դարի կեսին հիմք են ծառայել միաբանություն ստեղծելու համար, վկայում է Ասողիկը[87], շեշտելով, որ այդ միաբանությունը հաստատել է Ստեփանոսը: Ալիշանի կարծիքով այդ Ստեփանոսը մյուս՝ արևելյան կողմի միաբանության հիմնադիրն է[88]: Սակայն այդ կարծիքն անընդունելի է, որովհետև հայտնի է, որ արևելակողմի եկեղեցիների կառուցողը Վարդիկն է, որը և եղել է առաջին վանահայրը:

Թեև գավթի կառուցման վերաբերյալ գրավոր տեղեկություն չի պահպանվել, սակայն նրա կամարածածկ կառուցվածքը բնորոշ է X—XI դարերին: Պահպանվել է քառախորան եկեղեցու նորոգման արձանագրությունը՝ միջանցքի մուտքի վերին մասում, թվագրված՝ 1222[89]:

Որոտնավանք.—Հայ ճարտարապետության մեջ այս տիպի վերջին շինությունը Որոտնավանքն է: Վանական շինությունների խումբը բաղկացած է՝ եռախորան եկեղեցուց, նրա արևմտյան կողմում կառուցված սրահից, հյուսիս-արևմտյան կողմի թաղածածկ եկեղեցուց, վերջինիս հարավային կողմի սրահից, արևմտյան կողմի սրահից, գավթից, հարավային կողմի փոքրածավալ մի եկեղեցուց և այլ, հավանաբար կոմունալ բնույթի, շինություններից:

Գմբեթակիր եկեղեցին այժմ խիստ ավերված է և գմբեթի քարերն էլ թափված են: Ալիշանի հրատարակած պատկերի համաձայն գմբեթը եղել է բոլորաձև: Տակավին այն ժամանակ արտաքին սրահը կիսավեր էր[90]: Շինությունների մեծ մասը կառուցվել է XI դարում: Ստ. Օրբելյանն

86 «Դիվան հայ վիմագրության», III, էջ 141:

87 Տե՛ս Ասողիկ, էջ 176:

88 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 156:

89 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», III, էջ 143:

90 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 218:

այդ մասին գրում է. «Ապա սա (Շահանդուխտ Սյունյաց իշխանուհին) շարժեալ աստուածային խնն ակնարկմամբ շինէ զգեղեցկայարմար և զվանկչադիտակ վանսն Վաղատնոյ որ էր ի վաղուց հետէ տեղի ուխտական արանց. զի եկեղեցի մի էր անդ ի հին ժամանակաց յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր և կարծեմք նորին հիմնարկեալ, եւ յետոյ շինեալ ի Ստեփաննոսէ հօրէ և ի սուրբ ճգնաւորէ»[91]։ Ստ. Օրբելյանը տալիս է նաև կառուցման թվականը. «Վասն որոյ շինեալ մեծ բարեպաշտուհւոյն Շահանդխտոյ կոփածոյ քարամբք եկեղեցի յանուն սրբոյ Նախավկային Ստեփաննոսի ի 449 (1000) թուականին հայոց»։ Ինչպես պարզվում է այս տեղեկություններից Շահանդուխտի կառույցներից առաջ տեղում եղել է Գրիգոր Լուսավորչի ձեռքով հիմնած և նրա անունը կրող հին եկեղեցի։

Շինությունների մեջ առավել հնագույնը հավանաբար թաղածածկ եկեղեցու հարավ-արևմտյան կողմի միանավ սրահն է։ Շահանդուխտն այստեղ կառուցում է մի եկեղեցի ևս և հիմնում միաբանություն՝ ամն Ստեփանոսի առաջնորդությամբ։ Միաբանության հաստատման համար Շահանդուխտը կառուցում է նաև այլ շենքեր։ Այդ մասին Ստ. Օրբելյանը հաղորդում է. «Եւ կարգէ ի նմա տուն կրօնաւորաց և բազմամբոխ պաշտօնէից։ Շինէ եւ տուն աղօթից կրաշաղախ վիմօք ի դրան եկեղեցւոյն, և համբարանոցս և գործատունս. և շուրջ պարսպէ զվանքն. և որոշէ նմա անդաստանս ի Վաղատնոյ և տայ զԳոմեր ագարակ ի վանսն. և պայծառապէս զարդարէ զեկեղեցին զանազան զարդուք։ Եւ ինքն վախճանեալ դնի ի դրան այնր սրբարանի։ Ապա յետ ամաց ինչ ի 455 (1006) թուականին Սեւադայ՝ որդի նորին Շահանդխտոյ՝ եղբայր Վասակայ թագաւորի, շինէ և մեծածախ աշխատութեամբ եկեղեցի մի յոյժ պայծառ և գեղեցկայարմար, զմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զաւիթ ի դրան նորին. որք և կան հանգուցեալ ի դրան նորին.»[92]։ Ուշադրությամբ հետևելով այս տեղեկություններին տեսնում ենք, որ շինարարական աշխատանքներն այստեղ կատարվել են երեք հիմնական փուլերով՝ ա) Հնագույն՝ IV դարի լուսավորչաշեն եկեղեցի, բ) Շահանդուխտ իշխանուհու շինությունները և գ) Սևադայի եկեղեցին, որի մասին Ստ. Օրբելյանը նկարագրում է մեծ հիացմունքով, ընդգծելով նրա գմբեթակիր լինելը և արևմտյան կողմի սրահ-գավթի առկայությունը։

Սևադայի կառուցած շինությունը կարող է լինել միայն գմբեթակիր եռախորանը, իսկ Շահանդուխտի կառուցածը՝ հյուսիս-արևմտյան կողմի թաղածածկ եկեղեցին՝ իր ընդարձակ արտաքին սրահով, որը Ստ. Օրբելյանը անվանում է «տուն աղոթից», ընդգծելով սրահի գործնական նշանակությունը։ Շահանդուխտն է կառուցել նաև արևմտյան հատվածի մնացած կոմունալ շինություններն ու պարիսպը, որից քիչ բան է մնացել։ Այս շինությունները կառուցված են կոփածո քարով և կրաշաղախով։ Եկեղեցու ներսը երեսապատված է քիչ մշակված քարով և կրաշաղախով։

Գտնվել են Ստեփանոս վանահոր և Շահանդուխտի արձանագրությունները.

ԵՍ ՍՏԵՓԱՆՈՍ ՀԻ—
[Մ]Ն ԱՐԿԵՑԻ ։ՆԻ Ե[Ի] Է։ (998)
ՁԵԿԵՂԵՑԻ.....
....
ՈՎ ՍՈՒՐԲ

ՇԻՆԵՑԱՒ ՀՐԱՄԱՆՈՎ
ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՆՊԱՏԱ Ի ՁԵ—
ՐՈՆ ՇԱՀԱՆԴԽՏ—
Ո ԲԱՐԵՊԱՇՏ

[91] Ստ. Օրբելեան, էջ 301։
[92] Նույն տեղում, էջ 302։



Կարս. սբ. Առաքելոց եկեղեցին հարավից



Օձունլու. Կաթողիկե եկեղեցին հարավից

Արգինա կաթողիկոսական եկեղեցու ավերակները



Խծկոնք վանքի ընդհանուր տեսքը

ԹԱԳՈՒՀՈՅ[93]

Ե. Լալայանցի մոտ Շահանդուխտի արձանագրության առաջին տողից վերև եղել է նաև ՎԱՍԱԿ ՈՐԴԻ ՍՄԲԱՏԱՅ[94], որը հիմա չկա։

Ըստ Ստ. Օրբելյանի Ստեփանոսը նորոգել է Լուսավորչի շինած եկեղեցին, որի մասին է վկայում նաև այս արձանագրությունը։ XIII—XIV դարերում եկեղեցիները նորոգվել են։ Այդ մասին ավանդող երեք արձանագրություններից մեկում նշված է նաև 1326 թվականին հյուրանոց կառուցելու մասին[95]։

* * *

Բոլորովին այլ ճակատագիր ունեցավ Սյունիքի ճարտարապետական դպրոցում մշակված գմբեթասրահների նոր տիպը, որը, շնորհիվ իր կառուցվածքային պարզության և գեղարվեստական ձևերի արտահայտչականության, բազմաթիվ տարատեսակներով գոյատևեց մինչև XIV դարը և բավականին տարածվեց Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում։

Տաթև.—Տաթևի հուշարձանախմբի մեջ մտնում են՝ Պողոս-Պետրոս, Աստվածածին և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, Պողոս-Պետրոս եկեղեցու հարավ-արևմտյան սրահը, ավերակ գավիթը, երկու զանգակատները, շարժվող սյուն-գավազանը, ձիթահանքը, կոմունալ և բնակելի այլ շենքեր։

Ստ. Օրբելյանը տեղեկացնում է, որ Տաթևի վանքում Սյունյաց եպիսկոպոսության նստատեղին հաստատել է Գրիգոր Սուփանը[96]։

Պատմագիրների մոտ Տաթևը հիշատակվում է տակավին վաղ միջնադարից։ Սակայն Տաթևի միաբանությունը, որպես տնտեսական ու մշակութային նշանավոր հաստատություն, հայտնի դարձավ VIII դարի վերջերից։

Գրիգոր Լուսավորիչ.—Տաթևի հուշարձանախմբի հնագույն շինությունը Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է։ Եկեղեցին թաղածածկ է, հարավային և հյուսիսային պատերին կան մեկական որմնամույթ։ Ավերվել է 1931 թվականի երկրաշարժի ժամանակ։ Ըստ էության եկեղեցին չի ունեցել հյուսիսային պատ։ Որպես այդպիսին օգտագործվել է Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային պատը։ Թե ինչպես է ավելի ուշ կառուցված Պողոս-Պետրոս եկեղեցու պատը օգտագործվել այս եկեղեցում, իմանում ենք Ստ. Օրբելյանի թողած տեղեկություններից։ Պատմիչը գրում է. «Բայց երանելի և փառաւոր իշխանն Փիլիպպէ շինէ եկեղեցի մի գեղեցկաշէն մեծ հին եկեղեցւոյն ի հարաւոյ կողմանէ, յանուն սուրբ Լուսաւորչին Գրիգորի. և ինքն վախճանեալ ի դպրութեան կենաց։ Եւ այս լինէր յ297 (848) թուականին Հայոց»[97]։ Եւ անունն գրեալ դնի անդէն ի դրան. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի.

Ստացվում է, որ 848 թվականին Պողոս-Պետրոս եկեղեցու տեղում եղել է մի հին եկեղեցի։ Սրան կից կառուցվել է Գրիգոր Լուսավորիչը, որը շուտով ավերվել է։ Այս կապակցությամբ Ստ. Օրբելյանը գրում է. «Ապա սկիզբն արարեալ մեր շինութեան սուրբ եկեղեցւոյն ի Տաթև որ յանուն սրբոյն Գրիգոր Լուսաւորչին, զի փլեալ էր և քակտեալ մինչև յատակն։ Եւ այս երրորդ անգամ էր շինութիւն սորա զի զառաջինն շինեցաւ ի Փիլիպպէ իշխա-

93 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 99, 100։
94 Տե՛ս «Ազգագրական հանդես», III, էջ 153։
95 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», II, էջ 100—103։
96 Տե՛ս Ստ. Օրբելեան, էջ 162։
97 Նույն տեղում, էջ 211։

9—892

նէն ի ժամանակս Տեառն Դաւթի՝ եպիսկոպոսի Սիւնեաց. և երկրորդն շինեցաւ ի Տէր Յովհաննիսէ հրամանաւ Սմբատայ Թագաւորի, և երրորդս այս զոր մեք սկսաք, զոր և շնորհօքն Աստուծոյ հաստահեղոյս քարամբք և գեղեցկատեսիլ ձևով յարմարեցաք պշինուած նորա»[98]:

848 թվականից հետո եկեղեցին վերաշինվել է երկու անգամ, ընդ որում վերջին վերաշինությունը՝ հիմքից:

Երկրորդ վերաշինության վերաբերյալ կան Ստ. Օրբելյանի վկայությունը և շինարարական արձանագրությունը: Արձանագրության սկզբնամասը չի պահպանվել և հնարավոր է վերականգնել միայն Ստ. Օրբելյանի թողած տեղեկությամբ: Այն գտնվում է արևմտյան պատին.

[ՅԱՄԻՆ ՅՈՐՈՒՄ ՀԱՅ]ՈՑ ԹՈՒԱԿԱՆՍ
[:ՅԽԴ: (895) ԷՐ ԵՒ ԶԱՏԻԿՆ Ի ՆԱ]ՒԱՍԱՐԴԻ :Դ:
[ԵՍ ՏՐ Յ]ՈՎՀԱՆԷՍ Ի ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍ—
[ԿՈՊՈՍ] ՈՐ ԶԿՆԻ ՍՈՂՈՄՈՆԻ Կ—
[Ա]Ր[ԳԵՑԱ] ՍԿԻԶԲՆ ԱՐԱՐԱՔ ՇԻՆԱՑ—
ՈՅՍ[99]:

Ստ. Օրբելյանը, պահպանելով արձանագրության բովանդակությունն, այն շարադրել է յուրովի և այդ պատճառով վերջին տողը արձանագրության պահպանված հատվածների հետ հնարավոր չեղավ համաձայնեցնել: Պատմիչը գրել է. «Յամին յորում Թուականն Հայոց 344 էր, և զատիկն ի նաւասարդի ի 4, ես Տէր Յովհաննէս որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս Սիւնեաց զկնի Տեառն Սողոմոնի, արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս»[100]: Այստեղ կարևորը թվականն է, որն, ըստ Ստեփանոս Օրբելյանի, 895 թվականի նավասարդի 4-ն է (օգոստոսի 15): Այսինքն՝ նորոգումը կատարվել է կառուցումից 47 տարի անց՝ Հովհաննես եպիսկոպոսի կողմից: Հովհաննեսը Տաթևի վանքի փակակալն էր, հայտնի է որպես Յոհաննես Ե (877—897):

Երրորդ վերաշինությունը կատարել է ինքը՝ պատմիչը 1295 թվականին և եկեղեցու ճակատակալ քարին թողել է հետևյալ արձանագրությունը.

Ի ԹՎ ՉԽԴ (1295)
ԶՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԵ—
ՏՐԱՊԱՒԼԻՏ ՍԻՒՆԵԱՑ ՈՐ Է ՊՌԱԻ—
ՏԱՒՓՐԱՒՆՏԷՍ ՀԱՅՅՈՑ ՄԵԾԱՑ ՈՐ—
ԴԻ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱՒՃԻՆ Շ—
ԻՆՈՂ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ[101]:

Իր ներկա վիճակում եկեղեցին XIII դարի վերջին վերաշինության կերպարն ունի և հյուսիսային պատի տեղում այլևս հին պատը չէ, այլ Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային պատը, որին կցել են եկեղեցու խորանը և մի որմնամույթ:

Պողոս-Պետրոս.—Ստ. Օրբելյանի հիշյալ տեղեկությունները նույնքան կարևոր են նաև Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման պարագաները պարզելու համար: Խոսելով 848 թվականին Լուսավորչի շինության մասին նա նշում է, որ այն կառուցվել է հին եկեղեցու հարավային կողմում: Այստե-

98 Նույն տեղում, էջ 483:
99 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 13:
100 Ստ. Օրբելեան, էջ 224:
101 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 25:

ղից հետևում է, որ Պողոս-Պետրոս եկեղեցու տեղում մինչև հիշյալ թվականը գոյություն է ունեցել մի հին եկեղեցի: Այս երևույթը կարևոր է հատկապես այն պատճառով, որ Պողոս-Պետրոս եկեղեցին հին և նոր ճարտարապետական ձևերի ինքնատիպ հյուսվածք է: Հորինվածքի հիմքում ընկած է եռանավ բազիլիկի հատակագիծը: Սակայն արևմտյան անկյունամասերը վեր են ածվել ավանդատների, որով էլ պայմանավորվել է եկեղեցու նոր կերպարը: Միաժամանակ, ինչպես և վաղ միջնադարյան սրահներում, այստեղ պահպանվել են ներթագմբեթային կենտրոնի և խորանի միջև եղած տարածությունը, այն էլ գմբեթակիր մույթերի առկայությամբ: Մույթերը հին շինության հիմնապատերից թելադրվող երևույթ չեն: Ստ. Օրբելյանն ընդգծում է, որ դրանք կառուցվել են հիմքից: Այսպիսով, նորաստեղծ եկեղեցու մեջ նախատեսվել է նաև խորանի և մույթերի միջև եղած տարածության պահպանումը: Ճարտարապետական տարրերի նմանօրինակ համատեղությունից հետևում է, որ ճարտարապետը չի կամեցել հետևել հորինվածքային այն կերպարին, որի հիմքում ընկած է գմբեթի առանցքով ներքին տարածության կենտրոնացման սկզբունքը:

Եկեղեցու կառուցման վերաբերյալ Ստ. Օրբելյանը տալիս է բավականին ընդարձակ և մանրամասն տեղեկություններ. Սյունյաց իշխանները, մեծ իշխան Աշոտի և Սյունյաց եպիսկոպոս տեր Հովհաննեսի գլխավորությամբ, «սկիզբն առնեն շինուածոյն, և արկանեն հիմն յ344 (895) Թուականին Հայոց»[102]:

«Եւ այսպէս կատարեալ զեկեղեցին կամար երկնանման գմբէթայարկ, ճեմարան իմն հրեշտակաց և քաւարան մարդկան, ի տաշածոյ վիմաց և ի քիրածոյ քարանց, գաղատոսաշէն իմն յարմարեալ ակնախտիղ տեսողաց ի 100 կանգնոյ բարձրութիւն նորա և ի 48 կանգնոյ երկայնութիւն նորա և ի 24 կանգնոյ լայնութիւն նորա. ունելով յինքեան չորս խորանս բաց յաւագ խորանէն: Եւ ըստ Սաղոմոնեան յարկին և կամ Զօրաբաբէլեանին կառուցեալ ի մէջ տանն երկուս սիւնս հրաշակերտս՝ զբոյոս և զյաքում, որք հաստահեղոյս խարսխօք և գեղեցկագիր և բարձրաբերձ թակաղաղօք պարաբարձեալ ունին զահագին թանձրութիւն երկնաձեղուն քարակարկառ յարկին. և այս ի խորհուրդ երկուց գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յորոց նշխարացս եդան ի ներքոյ սեանցս, և բազմութիւնք սրբոց նշխարաց անդ գումարելոց առաքելոց, հայրապետաց, մարտիրոսաց եդան ի հիմունս և յանկիւնս եկեղեցւոյն: Ահա զայս իսկ աւարտեալ զամս մետասան՝ կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութեանն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ. պարսպէ և զեկեղեցին սրբաքարով. և այլ զվանսն՝ կոփածոյ քարամբք. և զի էր նիստ տեղւոյն անյարմար՝ հարթէ զթանձրութիւն գետնոյն, և զխորութեան վայրսն բարձրացուցանէ կրաշաղախ որմովք. շինէ և գաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երկրաւ՝ բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն. և հարթեալ հաւասարեալ զվայրն՝ շինէ և սրբաշէն տրապէզս և զործատունս, համբարանոցս և սրբատունս և դրատունս. և ի դրան եկեղեցւոյն տուն աղօթից և տեղի դամբարանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց»[103]:

Այս տեղեկություններից պարզվում է, որ 895 թվականին կառուցվել է

102 Ստ. Օրբելեան, էջ 224:
103 Նույն տեղում, էջ 224—225:

Լուսավորիչ եկեղեցին, հին եկեղեցու տեղում հիմքից շինվել է Պողոս-Պետրոս եկեղեցին, մուտքի մոտի սրահը, սեղանատունը, գրատունը, միաբանության պարիսպները, արհեստանոցները և կոմունալ այլ շինությունները։

Եկեղեցու և միաբանության այլ շինությունների նորոգման ու վերաշինման աշխատանքները սկսվել են 895 թվականին և ավարտվել 906 թվականին։ Կարելի է ենթադրել, որ աշխատանքները սկսվել են նորոգումներից։ 895 թվականին ավարտվել է Լուսավորիչ եկեղեցու նորոգումը և արձանագրությունն էլ փորագրվել է այդ թվականին։

Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման վերաբերյալ մի վիմագիր հիշատակարան է փորագրվել, հավանաբար, շինարարական աշխատանքներն ավարտվելուց հետո՝ հատուկ պատրաստված խաչքարի վրա, որտեղ նշվում է, որ կառուցողը Հովհաննես եպիսկոպոսն է.

ՁՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ՇԻՆՈՂ
ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑԵԱՅՍ,
ՏՐ ՅԻՇԵԱ[104]։

Խաչքարն ագուցված է մուտքի վերին մասում։ 885—906 թվականներին եկեղեցու հարավային մուտքի մոտ կառուցված խորանավոր փոքրիկ սենյակը պատմիչն անվանում է տուն աղօթից։ Այս սենյակի արևելյան պատը համընկնում է Լուսավորիչ եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային կեսի հետ, որի մեջ շրջափակված է նաև մի T-աձև որմնամույթ։ Այս ամենից երևում է, որ հիշյալ պատը ևս հետագա վերաշինությունների արդյունք է։

Պողոս-Պետրոս եկեղեցին մի քանի անգամ կործանվել և վերաշինվել է։ Առաջին անգամ այն ավերել են սելջուկները XI դարի կեսերին։ Երկրորդ ավերման պատճառը 1138 թվականի երկրաշարժն էր[105]։ Եկեղեցին և գավիթը նորոգվել են 1187, 1253, 1605, 1646, 1862 և 1865 թվականներին[106]։

Սյուն գավազան.—Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման տարում Հովհաննես եպիսկոպոսը կանգնեցրել է Տաթևի հռչակավոր Սյուն գավազանը։ Այդ մասին ՅԽԴ (895) թվականի արձանագրության կողքին փորագրվել է ևս մի վիմագիր հիշատակարան՝ հետևյալ բովանդակությամբ.

1. ՀՐԱՄԱՆԻ ԱԾԱՊԱՀ
2. ՏԵՐԱՆՑ ԵՒ ՅԱՒԺԱՐՈՒ—
3. ԹԵԱՆԲ ԻՄՈՅ ԿՐԱՒՆ—
4. ԱՒՈՐԱՑ ԵՒ Ի ՆՈՅՆ ՏԱ—
5. ՐՒՈՋ Ի ՅԵՒԹՆԵՐՈՐԴ
6. ԱՄՍՈՅՍ ՅԱՐԱՑ ԿԱ—
7. ՆԿՆԵՑԱՒ ԱՐՁԱՆՍ[107]

«Ի նոյն տարւոջ» Ս. Բարխուդարյանը իրավամբ համարում է 895 թվականը, նկատի առնելով արձանագրության տեղադրությունը հիշյալ թվականը կրող արձանագրության կողքին։ Կարելի է ավելացնել նաև ամսաթիվը։ Արձնագրության մեջ նշված է արաց ամսի 7-ը՝ հունիսի 11։

Սրահ.—Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային կողմի սրահը թեև ամբողջապես ավերված է, սակայն արևմտյան մույթին պահպանվել է նրա շինարարական արձանագրությունը։

104 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 14։
105 Տե՛ս Ստ. Օրբելյան, էջ 313, 340։
106 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 18, 29, 35, 36, 38։
107 Նույն տեղում, էջ 13։

1. ՅԱՄԻ ՅՈՐՈՒ—
2. Մ ԼՐ Թ[ՈՎՆ] ։ՆՂԲ։ (1043) Ի Թ—
3. ԱԳԱՒՈՐՈՒԹԵ—
4. ԱՆՍ ՍՄՊԱՏԱ Ո—
5. ՐԴՈ ԱՇՈՏՈ
6. ԵՍ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ
7. ՇԻՆԵՑԻ ՁՍ—
8. ՐԱՀՍ, ԱՒԳՆԱ—
9. ԿԱՆՈՒԹԵԱՄ[Բ]
10. ՍՄՊԱՏԱ. ՈՐՔ[Ա]—
11. ՂԱՒԹԷՔ ՅԻՇԵ—
12. ՅԷՔ Ի ՔՍ[108]։

Այս Հովհաննեսը Սյունյաց աչքի ընկնող եպիսկոպոսներից էր։ Նրա օրոք նորից բարգավաճեց Սյունյաց մետրոպոլիան, մասնավորապես Տաթևի միաբանությունը։

Ս. Աստվածածին.—Տաթևի հուշարձանախմբի երրորդ նշանավոր շինությունը ս. Աստվածածին երկհարկ դամբարան-եկեղեցին է։ Իր ճարտարապետական տիպով միանավ գմբեթասրահ է։ Նկատի ունենալով նրա տարածվածությունը, գմբեթասրահի այս տիպը ևս կարելի է առանձնացնել որպես մի տարբերակ։ Այս տարբերակը մշակվեց Այրարատում. հնագույն շինությունը Անիի շրջանի Հայկաձոր գյուղի 985 թվականի եկեղեցին է։ Գմբեթասրահներում որմնամույթերի միջոցով դահլիճը բաժանվում է երկու հիմնական մասերի՝ ենթագմբեթային և արևմտյան։ Սակայն շինության փոքր չափերի և որմնամույթերի նկատելի զույգ դրվածքի հետևանքով ներքին տարածությունն առանձնապես չի մասնատվում։ Քանի որ շինությունը դամբարանական բնույթ ունի այդտեղ ավանդատներ չեն կառուցվել։

Հյուսիսային, արևելյան և հարավային պատերին արտաքուստ կան խորը որմնախորշեր։

Ստորին հարկում գտնվում են երկու թաղածածկ սենյակներ։

Շինության կառուցման մասին պահպանվել են Ստ. Օրբելյանի և վիմագիր տեղեկություններ։ Պատմիչը վկայում է, որ կառուցողը Հովհաննես եպիսկոպոսին փոխարինած Գրիգոր եպիսկոպոսն է։ «Սա արարեալ զարմանալի շինուածս յեպիսկոպոսարանին Տաթեւ, զի կանգնեաց կամարս ի վերայ դրան վանացն որ հայէր ընդ յարեւելս. և մերձ նմին տուն սրբաշէն. և ի վերայ սոցա եկեղեցի մի գմբէթաւոր գեղեցկայարմար յանուն սրբուհւոյ Աստուածածնին։ Եւ էր նա իբր դիտանոց բարձր որ հայէր ի վերայ վանացն. և ի չորեսին կողմանցն յօրինեաց գաւիթս. բայց յառաջի կողմն բարձրաբերձ սեամբք շինէր սրահս վայելուչս իբր քաղցր հովանոց. և գրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն»[109]։

Արձանագրությունը գտնվում է հարավային պատին և ունի հետևյալ բովանդակությունը.

«Ի ՇՐՋԱԳԱ[Յ]ՈՒԹԵԱՆ ՏՈՄԱՐԻ / ՀԱՅԿԱԿԱՆ ։Ժ։ ԻՑ ՅՈԲԵՂԻՆԱՑ ԵՒ/ ։Լ։ ԵՒ ։Զ։ ԹՎՈՅ. ԵՍ ԳՐԻԳՈՐ ԱՄԵՆԱՆՎԱ/ՍՏ ԾԱՌԱ ՔԻ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ

108 Նույն տեղում, էջ 19։
109 Ստ. Օրբելյան, էջ 321—322։

ՆՈՐԻՆ Ե/ՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԿԱՆԳՆԵՑԻ ԿԱՄԱՐՔՍ/ ԵՒ Ի ՎԵՐԱ ՋԵԿԵՂԵ-ՑԻՍ ԵՒ ԶՈՐ ԱՅԼ ՇԻՆՈՒԹԻՒՆ/Ս Է ԵՒ ՈՐ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ Է ԻՄ ՏԱՆՍ ԵՒ ԱՐԴ/ԻՒՆՔ ՎԿԱ ԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ՅՈՐԺԱՄ ՅԱԻԱՐՏՈՒՄՆ/ ԵԿՆ ԱՄԵ-ՆԱՅՆՍ ԿԱՄԵՑԱՆ ԷՂԲԱՐՔ ԵՒ ԿԱՐԳԱ[Ւ]/ՈՐՔ ՏԱՆՍ ՎԱՐՉԱՀԱՏՈՅՑ ԼԻՆԵԼ ԻՆՉ ԵՒ Խ/ՆԴՐԱԻՔ ԻՄԱԻՔ ԿԱՐԳԵՑԻՆ ՔԱՌԱՍՈՒՆՔ/ ՄԻՆ ՈՐ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՐՈՋ ԿԱՏԱՐԵՆ Վ/ԱՄՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՏԱՌԱՊԵԱԼ ՀՈԳՈՅՍ Ի/ՄՈ ՈՐՈ ՉԱՓ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՔԴ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹ/ԵԱՆ ԵՆ։ ԱՐԴ ՈՐ ՍԿՆԻ ՄԵՐ ՅԱՋՈՐԴԻՔ Ի ՍԲ/ԱԹՈՌԴ ՀԱՅՐԱՊԵՏՔ ԵՒ ԿԱՐԳԱԻՈՐ ՏԱՆՍ ՊԱ/ՐՏԱԿԱՆ ԵՆ ԱՅԴ ՔԱՌԱՍ-ՆՈՅԴ ՈՐ ԱՆԽԱՓԱ/Ն ԿԱՏԱՐԵՆ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՐՈՋ ՈՐ ԽԱՓԱՆ/ՄԱՆ ՊԱՏ-ՃԱՌՔ ԼԻՆԻ ԵԴԵԱԼ ԺԱՄՈՅԴ/ [Ի]ՆՉ ԵՒ ԻՑԷ, ՊԱՏՃԱՌԱՆԻՒՔ ԵՒ ՈՉ ԿԱՏԱՐ/ Է ԵՒ ԶՐԿԷ ԶՀՈԳԻՍ ԻՄ ԷԹԷ Ի ՀԱՅՐԱՊԵՏԱՑ/ ԷԹԷ Ի ԿԱՐԳԱԻՈՐԱՑ ԶՐԿԵԱԼ ԾԻ ՈՐՈՇԵԱԼ ԼԻ/ՆԻ Ի ՓԱՌԱՑ ՈՐԴՈՅՆ ԱՅ ԱՅԺՄ ԵՒ Ի ՀԱՆԴԵՐՁ/ԵԼՈՒՄՆ ԵՒ ԱՆԷԾՍ ԿՐԵՑԷ Ի ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵՆԷՆ ԵՒ ՄԻ Գ[Տ]ՑԷ ԹՈՂՈՒԹԻՒՆ Ի ՔԷ ԱՅ/ԻՍԿ ՀԱՍՏԱՏԻՉՔ ԳՐՈՅՍ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՆ ՅԱՅ[110]։

Թվականը, որ հաշված է հոբելյաններով, ճիշտ վերծանել է Ս. Բարխուդարյանը/ Ժ—10 հոբելյան—500+30+6+551=1087 թվական/։

Ստ. Օրբելյանի վկայությամբ նախքան եկեղեցու շինությունը Գրիգոր եպիսկոպոսն այստեղ կառուցել է մի կամար։ Ընկնելով եկեղեցուն անմիջապես մոտ շինությունների մնացորդներից թվում է, խոսքը բերդապարսպի հյուսիսային մուտքին կից կամարածածկ միջանցքի մասին է։ Այնուհետև Ստ. Օրբելյանը նշում է, որ եկեղեցու չորս կողմը կառուցվել են գավիթներ և մի սրահ՝ «բարձրաբերձ» սյուներով։ Եկեղեցուց հարավ ներկայումս կան երկու թաղածածկ շինությունների մնացորդներ, որոնցից մեկի միայն խիստ ընդգծված որմնամույթերն են մնացել և վկայում են նրա երբեմնի մոնումենտալ կերտվածքի մասին, իսկ սյունազարդ գավթի հետքն անգամ չկա։ Արևմտյան կողմում, եկեղեցու և մուտքի կամարակապ միջանցքի միջև, գտնվում է մի թաղածածկ սենյակ՝ ուղղանկյուն հատակագծով։

Շինարարական այլ վավերագրեր.—Տաթևում եղել է մի խաչքար, որը կանգնեցվել է ոմն Երիցակի հիշատակին։ Արձանագրությունն ավանդում է, որ Երիցակը եկեղեցի է կառուցել, սակայն չի նշված թե որը։

ՋԵՐԻՑԱԿ, ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆԱԿԱՆ՝ ՇԻՆՈՂ ՏԱՃԱՐԻՍ ՅԻՇԵԱ ՔՍ Նխ (991)[111]։

Երիցակ անունը Ա. Շահինյանի կարծիքով պետք է վերաբերի Արծվանիկի գերեզմանոցի միանավ եկեղեցու կառուցմանը[112]։ Նա գտնում է, որ Ս. Բարխուդարյանը սխալվում է, համարելով խաչքարը Տաթևից բերված։ Սակայն խաչքարը Տաթևին վերագրելու համար Ս. Բարխուդարյանը ունեցել է որոշակի հիմք, այդ մասին վկայել է ինքը՝ բերողը։ Իսկ ինչ վերաբերում է Երիցակ անվանը, ապա Արծվանիկում նրա անունով կոչվում է ոչ թե այս, այլ արևելակողմի հուշարձանը, և ոչ թե այս, այլ VI դարի Երիցակի անունով։ X դարում ապրած Երիցակին անվան պատճառով այդ եկեղեցու կառուցողը համարել, իսկ առավել ևս այդ հիման վրա երկու հուշարձանն էլ Երիցավանք կոչել չի կարելի։ Գերեզմանոցի այդ եկեղեցին իր ճարտարապե-

110 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 28։

111 Նույն տեղում, էջ 32։

112 Տե՛ս Ա. Սրահամյան, Ա. Շահինյան, Արծվանիկի ծածկագիրը և նրա վերծանությունը, ՊԲՀ, 1975, № 3, էջ 117, 118։

տությամբ կարող է միայն վաղ քրիստոնեական միանավ սրահների թվին դասվել։ Նրա վերաբերյալ պահպանվել է միայն նորոգման տեղեկություն, թվագրված 1032-ով[113]։

Սրահի որմնամույթերից մեկի վրա պահպանվել է արձանագրություն՝ ջրաղաց կառուցելու մասին.

1. ՅԱՆՈՒՆ ԱՅ
2. ԵՍ ՎԱՐԴԱՆ Կ—
3. ՐԱԻՆԱԻՈՐ ՇԻՆ—
4. [ԵՑԻ] ՔԱՐԱՀ—
5. [ԱՏԻ]Ն ՋԱՂԱՑ
6. [ԵՒ ԵՏՈՒ] ՍԲ ԱՌԱՔԵԼՈ—
7. ՅՍ. ԵՏՈՒՆ ԻՆՉ Տ—
8. [ԱՐԻ]Ն ԱԻՐ ԵՒ ՏՐ Յ—
9. [Ո]ՎԱՆ...[114]

* * *

Խաչիկ.—XI դարի սկզբին հին Արասատամուխ (ներկայիս Խաչիկ) գյուղի
մոտ, Սյունյաց իշխան Աշոտի կինը՝ Շուշանը կանգնեցրեց առավել տարած-
ված նոր տիպի շինություններից հնագույնը, որը հայտնի է Քարակոփի կամ
Խոտակերաց վանք անուններով։
Եկեղեցու արևելյան մույթերն այլևս չկան, իսկ արևմտյան կողմում
դրանք կցված են ավանդատների արևելյան պատերին։ Գմբեթի փոխանցումը
արված է առագաստների միջոցով։
Եկեղեցու շինության պատմությունը մանրամասնորեն տալիս է Ստ.
Օրբելյանը. դեռևս IX դարի վերջերին այստեղ եղել են հին շինություններ,
կառուցված տեղական ճգնավորների կողմից։ Այնուհետև Սյունյաց իշխան
Աշոտը նույն տեղում, մի բլրակի վրա, կառուցում է եկեղեցի և ճգնավոր-
ներին հավաքում այնտեղ։ Աշոտի կառուցածն էլ երկար կյանք չի
ունենում։ Նրա մահից հետո ուժեղ երկրաշարժը տապալում է եկեղեցին և
մյուս շինությունները ու դրանից հետո՝ 910 թվականին Աշոտի կինը՝
Շուշան իշխանուհին վերստին կառուցում է եկեղեցին և թողնում կառուցման
պատմությունն ավետող մի վավերագիր։ Ահա Ստ. Օրբելյանի վկայությունը.
«Յառաջ քան զայս՝ ի բազում ժամանակաց բնակեալ էին խոտաճարակ
և խարազանազգեստ մարդիկ յառորատ վայոց ձորոյ, ի սահմանին Հրասե-
կայ բերդոյ մերձ յԱրասատամուխ գեօղ, որ իբր դիտանոց բարձր հայէր ի
վերայ դաշտին Շաղոյ»։ «Ոմանք շինէին մատուռն ի նեղ ձորակի մի առ
քաղցրահամ աղբերն և անդ բնակէին»։ «Ոմանք ի միւս արձակ ձորին
շինեցին խորան, և անդ բնակէին, զոր հին վանքն կոչեն», «և բուն տունն
իւրեանց և եկեղեցին էր մերձ յԱրասատամուխ գեօղ, ի պատշաճաւոր տեղի
յորում բնակեցուցեալ էին զահարկու և զաստուածահրաշ սուրբ նշանն որ
Խոտակերաց խաչ կոչեն»։ «Եւ տեղին աւերակ և անբնակ մնաց մինչև
յաւուրս տեառն Աշոտոյ՝ Սիւնեաց իշխանի։ Սպա զգացուցանէ նմա զերն
մեծ եպիսկոպոսն Սիւնեաց Տէր Յովհաննէս. և նա հրամայէ վերստին շինել
զեկեղեցին և զվանքն և ժողովել զկրօնաւորսն»։ Այնուհետև պատմիչն
ասում է, որ եկեղեցին ավերվել է երկրաշարժի հետևանքով «և վերստին

113 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», II, էջ 134, ՊԲՀ, 1975, № 3, էջ 116։

114 Նույն տեղում, էջ 20։

ծանուցանէ եպիսկոպոսն հրանելի տիկնոջն Շուշանայ. և նա առաւել աստուածասէր գոլով և բարեպաշտօն՝ հայցէ յեպիսկոպոսէն փութապէս ձեռն ի գործ ածել և շինել զեկեղեցին և զտեղին պայծառ քան զառաջինն, զի մի կորիցէ, ասէ, յիշատակ տեառն իմոյ Աշոտոյ»[114]:

Շինարարական արձանագրությունը գտնվում է հարավային պատին։ Մեզ է հասել զգալի վնասվածքներով։ Արձանագրության վերջին հրատարակությունը Ս. Բարխուդարյանինն է, որը վնասված հատվածները վերականգնել է Ստ. Օրբելյանի տված տեղեկությունների հիման վրա։

1. ՆԱԽ ԻՍԿ ԵՒ ԱՌԱՋԻՆ [ԼԵԱԼ ԷՐ ՎԱՆՔ]Ս ՎԱՍՆ ՋԻ ԱՒԵ[ՐԵ]ԱԼ ԵՒ [ԽԱԽՏԵ]ԱԼ ԷՐ ԿՐԱՒՆԱՒՈՐԱՆ[ՈՑ ՈՒԽՏՍ ԵՒ ՔԱՒԱՐԱՆՍ ՈՐ Ի ՍՄ]Ա Ի ՎԱՂԸՆՋՈՒՑ ՀԵՏԷ, ԱՅՍՈՒՆՔՆ ՎԱՆՔՍ ԽՈՏԱԿԵՐԱՑ. ԻՍԿ ԱՊԱ ՏԷՐՆ ԻՄ ԵՐԱՆԵԼԻՆ

2. ԱՇՈՏ ՍՒՒՆԵԱՑ... [ՄԵԾԱԾ]ԱԽ ԱՇԽԱՏՈՒԹ[ԵԱՄԲ ՎԵՐՍՏ]ԻՆ ՇԻՆԵԱԼ ԶՍՈՒՐԲ ԶԵԿԵՂԷ[ՑԻՔՆ *միանգամայն իսկ նորոգապէս*] ԶԱՐԴԱՐԵԱԼ ԶԱՄԵՆԱՅՆ ՇԻՆՈՒԱԾ(Ա)Ս ԿՐԱՒՆԱՒՈՐԱԿԱՆ ԴԱՍԻՒՔ. ԻՍԿ ԵՒ ԻՍԿ ԵՂԵՒ ՏՆ ԻՄՈ ԱՇ[ՈՏԻ ԵԼԱ]—

3. ՆԵԼ Ի ՄԱՐՄՆՈ ԱՍՏԻ [ՓՈԽԵԼՈՎ] ԱՌ ՀԱՐՍ ԻՒՐ Զ... [ՇՆՈՐ]ՀԵՑԻՆ ՈՐԴԵԱԿՔ ՄԵՐ [*զգեւսղս Արասստամուխ ի սուրբ ուխտ*]Ս [ԻՒՐ] ՍԱՀՄԱՆՈՎՔ ԶՈՐ ԻՒՐԵԱՆՑ ՀԱՐՔՆ ԿԵՐԵԱ[Լ] ԷԻՆ, ՎԱՍՆ ԵՐԱՆԵԼԻ ԻՇԽԱՆԻՆ ԵՒ ԻՄ՝ ՇՈՒՇԱՆԻ [*սփնեաց տիկնոջ*

4. *Հոգեաց* ԱՐ]ՋԱՆ ԵՒ ԱՆԶՆՋԵԼԻ ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ ՅԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՂՄԱՆԷ ԵՒ [*որդկեաց մերոց։ Եւ եղեւ զի հիմնաշարժ լինելով աւերեցան* ՍՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑԻՔՆ ՏՆ ԻՄՈ ԱՇՈՏԻ, ԵՒ...

5. [*փոխելոյն առ*] ՔՍ ՏՆ ԻՄՈ ԱՇՈՏԻՆ ԵՒ ՀԱՂՈՐԴ ԿԱՄԵԼՈՎ ՆՈՐՈԳԵԼ ԶՅԻՇԱՏԱԿ[ԱՐ]ԱՆ ՏՆ ԻՄՈ ՓՈԽ[ԵԼՈՅՆ *առ*...]ՅՍ ՇԻՆՈՒԱԾՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԵՒ ՄԻՇՏ ԿՈՒՍԻ ՄԱՐԻ[ԱՄՈՒ *աստուածածնին եւ վ*]ԱՍՆ [*փրկութեան*]

6. [ՏԵԱՌՆ Ի]ՄՈ ԱՇՈՏԻ ՍՒՒՆԵԱ[Յ] ԻՇԽԱՆԻ ԵՒ ԻՄՈՅ ՄԵՂՈՒՑԵԱԼ ՀՈԳՈՅՍ ԵՒ... ՈՐԴ[ԻՈՑ *մերոց Սմբատա եւ այլոց զնոյն* ԳԵ]ԱՒՂՆ ԶԱՐԱՍՏԱՄՈՂ ԱՄԵՆԱՅՆ ՍԱՀՄ[ԱՆ]ԱՒՔՆ [ԶՈՐ ՄԻՆ]ՋԵՒ ՅԱ[ՅՍԱՒՐ *ժամանակի կերեալ էին ի ձեռն*]

7. [ԱՌԱՋ]ՆՈՐԴԻՍ, ՀԱՍՏԱՏԵՑԻ ԱՆԽԱԽՈՒՏ ՊԱՅՄԱՆՈՎ Ի ՍՈՒՐԲ ԱԾ[ԱԾԻՆՍ *ի վանս խոտակերաց մինչև յաւիտեանս ժամանակ*]ԱՑ ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՈՐԴԵԿԱՑ ԻՄՈ[Ց ԵՒ ԶԱՅՍ ՊԱ]ՅՄԱՆ [*հաստատեցի*

8. Ի ՍՈՒՐԲ ԿՐԱ]ՒՆԱՒՈՐԱՆՈՑԻ ԱՍՏ ՁԻ Ի ՀԻ[Ն]Գ ԵԿԵՂԵՑԻՍԴ ՅԱՅԴ ԶՈՐ ԵՍ ՇԻՆ[ԵՑԻ *մին եկեղեցիդ որ է Աստուածածինդ*՝ Տ]Ն ԻՄՈՅ ԱՇՈՏԻ ԵՒ ՅԻՄ ԱՆՈՒՆ ԼԻՑԻ ՈՐ... ՈՐ ԱՅԴ ՏԱ[ՐԻՆ ԵՐԵՔ Ք]ԱՌԱ[ՍՈՒՆՔ *կատարին*]

9. [ՎԱՍՆ Մ]ԵՐՈՑ ՄԵՂՈՒՑԵԱԼ ՀՈԳԵԱՅՍ. ԹԵՐԵՒՍ ԳՏՑՈՒՔ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՅԱ[ՀԵՂ *ատենին Քրիստոսի. այլ եւ* Ի ՉՈՐԵ]Ք ԵԿԵՂԵՑԻՔԴ ԵՂԻՑԻՆ ՈՐԴԵԿԱՑ ԻՄՈՅ ՅԱՐԵՒՇԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԵԱ[ՑՆ ՓՐ]ԿՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ՀՈԳ...

10. ...ՔԱՌԱՍՈՒ[Ն]Ս ԵՒ ԱՐԴ ՄԻ ՈՔ ԻՇԽԵՑԷ ԱՅ[ՍՄ *անսուտ վճիռս և պայմանիս* Ը]ՆԴԻՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՓԱՆՈՒՄՆ ԱՌՆԵԼ, ԱՊԱ ԵԹԵ ՈՉ Ա Յ[Ն]Պ[Ի]ՍԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱՒ [*մատնիչին*...]

11. ...ԼԻՑԻ ԵՒ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ ՀԱՄԱՐ ՏԱՑԷ ՅԱՒՈՒՐ ԱՀԵՂ ԱՏ[ԵՆԻՆ

[114] Ստ. Օրբելեան, *էջ 234—236*։

Քրիստոսի և մեք Տէր Յովհաննէս ՀԱ]ՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԿԱ ԵՄՔ ԱՅՍՄ ԳՐՈ ԵՒ ՎՃՌԻ ԵՒ ՈՐ ՈՔ ԱՅՍՄ ՎՃՌԻՆ [ԶԱՆ]Ա ԽԱՓԱ[ՆՈՒ]—

12. ՄՆ ԱՌՆԵԼ ԱՅՆՊԻՍԻՆ ՆԶ[Ո]ՎՍ ԶԱՐԱԶԱՐ ԸՆԿԱԼՑԻ Ի ՍՐԲՈ ԼՈՒ[ՍԱՒՈՐԻՉԷՆ *Գրիգորի*.. Ա]ՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ։ ԳՐԵՑԱՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԿՏԱԿ[ԻՍ ԱՅՍ ։ՅԾԹ։ (910) *թուակա*]ՆՈՒ[ԹԵ]ԱՆՍ ՀԱՅՈՑ Ի ԿԱՄՍ ԱՅ[115]։

Արձանագրության մեջ ուշադրություն է գրավում հիշատակությունը հինգ եկեղեցի կառուցելու մասին։ 8-րդ տողում ս. Աստվածածինը ընդգծված է որպես Աշոտ իշխանի հիշատակին նվիրված գլխավոր եկեղեցի։ Երկրորդ տողի բովանդակությունից պարզվում է, որ կառուցվել են մի քանի եկեղեցիներ։ Արձանագրության այդ հատվածի ճշտությունը վավերացնում է Ստ. Օրբելյանը. (Աշոտ) «շինեալ էր զսուրբ եկեղեցիքն»[116]։ *Շրջապատում նկատելի են մի շարք փոքր շինությունների մնացորդներ, որոնք վկայում են տեղում այլ եկեղեցիների, թերևս մատուռների գոյության մասին։*

Ս. Աստվածածին եկեղեցին ունեցել է նաև գավիթ։ Ներկայումս այն ավերված է։ Ելնելով հատակագծից Ս. Մնացականյանը գտնում է, որ գավիթը եղել է թաղածածկ։

Վանքի անունը Ստ. Օրբելյանը կապում է տեղի առաջին եկեղեցիները կառուցող խոտաճարակ և խարազանազգեստ ճգնավորների հետ, իսկ Քարակոփ անունը Ս. Բարխուդարյանը բացատրում է եկեղեցին կոփածո քարով կառուցված լինելով[117]։

Ս. Ջալալյանցը նկատի ունենալով, որ Ստ. Օրբելյանը որպես խոտաճարակ ճգնավորների եկեղեցու առաջին վանահայր հիշատակում է Ահերմոն անունով մի ծերունու[118], *գտնում է, որ սա է Ահերմոնի վանքը*[119]։ *Սակայն, ինչպես ցույց է տվել Ս. Բարխուդարյանը, Ահերմոնի վանքը բոլորովին այլ է*[120]։

Վահանավանք.—*Այս տիպին պատկանող առավել կատարյալ երկրորդ հուշարձանը Վահանավանքի կաթողիկե եկեղեցին է, կառուցված 911 թվականին։ Մաքրման աշխատանքներ կատարելուց հետո պարզվեց, որ արևմտյան հատվածում գմբեթակիր կամարները կրող մույթերն իրականում արևմտյան ավանդատների արևելյան պատերն են*[121]։

Եկեղեցու արևմտյան կողմում եղել է ընդարձակ գավիթ, իսկ գավթի և եկեղեցու հարավային կողմի ամբողջ երկայնքով՝ սյունազարդ, երկարավուն սրահ, ինչպես Եղեգիսում, Որոտնավանքում և Տաթևում։ Առանձնապես ավերված է արևմտյան հատվածը։ Գավթի տանիքից մնացել են միայն երկու կամարները։

Եկեղեցին կիսակործան վիճակում է։ Բոլոր շենքերը կառուցված են սրբատաշ բազալտից։ Սրահից հարավ նշմարվում են ևս մի շինության մնացորդներ որոնք վերագրվում են սեղանատանը։ Կործանվել է նաև հարավային կողմի սրահի ծածկը։

Այս խմբից հարավ, մի քանի մետր հեռավորությամբ, տեղանքի թեքությունում...

[115] *«Դիվան հայ վիմագրության», III, էջ 206 (ներդիր)*։

[116] Ստ. Օրբելեան, *էջ 236*։

[117] *Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», III, էջ 206*։

[118] *Տե՛ս* Ստ. Օրբելեան, *էջ 259, 260*։

[119] *Տե՛ս* Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն..., Բ, էջ 166*։

[120] *Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», III, էջ 131, 132*։

[121] *Տե՛ս* Գ. Գրիգորյան, *Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966—1970), «Լրաբեր» հաս. գիտ., 1970, № 10, էջ 85*։

թյան վրա եղել է թաղածածկ մատուռ: Նրա արևելյան պանդվածը լանջի թեքության պատճառով կրկնահարկ է: Մատուռի տանիքը չի պահպանվել:

Վանական շենքերի կառուցման պատմությանն ամբողջ գլուխ է (խե) նվիրել Ստ. Օրբելյանը: Պատմիչը տեղեկացնում է, որ Ջագիկ իշխանի որդի Վահանը իր եղբայր Ջևանշերի հետ միասին «...Սկիզբն առնէ շինուածոյ եկեղեցւոյն և կանգնէ տուն փառացն Աստուծոյ՝ յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբէթայարկ և եռախորան հաստահեղոյս և տաշածոյ վիմօք. և կարգէ գնա տուն կրօնաւորաց»[122]: Այստեղից պարզվում են երկու կարևոր հարցեր: Խորան բառի տակ պետք է հասկանալ բեմական հարթակը և կողմնային խաչաձև թևերը միայն, որովհետև արևմտյան թևը միջանցքի դեր է կատարում և խորան՝ սրբատեղի[123] հասկացողություն բովանդակել չի կարող: Այստեղ խոսքն ավանդատներին ևս վերաբերել չի կարող, որովհետև դրանք բոլոր դեպքերում երեքը չեն և ավանդատների համար Ստ. Օրբելյանը միշտ սենյակ բառն է օգտագործում: Պարզ է նաև, որ որմնամույթերի առկայության դեպքում եկեղեցին եռախորան բառով բնորոշվել չէր կարող, որովհետև արևմտյան հատվածի կողմնային մասերն էլ կմտնեն խորան հասկացողության մեջ: Մնում է համոզվել, որ Վահանի կառուցածը եղել է ներքին խաչաձևությամբ չորս ավանդատնով գմբեթասրահ:

Այս վկայությունից պարզվում է նաև, որ եկեղեցուց բացի, Վահանը կառուցել է տներ՝ միաբանության անդամների համար: Ներկայումս դրանք չեն պահպանվել և հայտնի չէ, թե ինչպիսի տարածք է զբաղեցրել վանքը:

Շինարարական տեղեկություններից հետո պատմիչը բերում է նվիրատվությունների ցանկը, նկարագրում վանքի բարգավաճ վիճակը և Վահանի անունով այն կոչելու պատմությունը:

Եկեղեցու շինության թվականի մասին Ստ. Օրբելյանը գրում է. «Եղև շինութիւն սուրբ ուխտին յ360 (911) թվականին հայոց»[124]:

Վահանը հաստատելով միաբանությունն ինքն էլ դառնում է կրոնավոր՝ վանահայր և մահանում ու թաղվում է Վահանավանքում: Պատմիչի այս տեղեկությունները հաստատվեցին նաև վիմագիր մի հիշատակարանով, որը վերջին ժամանակներս հայտնաբերեց, և հրատարակեց Գ. Գրիգորյանը՝ «ՏԷՐ ՎԱՀԱՆ ՆԱԽԱՇԻՆՈՂ ՏԵՂԱՅՍ»[125]:

Շինարարական աշխատանքները շարունակեց Ջևանշիրի որդի Վահանը, որն իր կրթությունը ստացել էր այս վանքում և հորեղբոր՝ Վահանի մահվանից անմիջապես հետո դարձել էր միաբանության առաջնորդ: «Սա յաւել բաղում շինութիւնս և զարդարեաց զվանսն հանդիսական կարգօք, շինէ զմեծ աղօթարանն ի դրան եկեղեցւոյն վիմարդեան մահարձանօք, յորում հանգուցեալ կան ի շիրմի բաղում թագաւորք և թագուհիք Աղվանից և Բաղաց, և բաղում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս: Շինէ և գեղեցիկ յօրինուածով զգաւիթ եկեղեցւոյն մեծամեծ քերածոյ վիմօք 30 կանգնոց չափ, կանգնէ կամար ի դրան վանիցն և ի վերայ՝ երկու խորան յանուն Պետրոսի և Պօղոսի

---

122 Ստ. Օրբելեան, էջ 238—239:

123 Տե՛ս «Բառգիրք հայկազեան լեզուի», էջ 391—392:

124 Ստ. Օրբելեան, էջ 240:

125 Գ. Գրիգորյան, նշված հոդվածը, «Լրաբեր» հաս. գիտ., 1970, № 10, էջ 89:

սուրբն առաքելոցն: Շինէ և ի ձուլեալ կրաշաղախ քարանց տապէզ մի մեծ,
և բերէ փողովք պչուրն ի դուռն նորա»[126]:
Պատմիչի տված այս կարևոր տեղեկությունը մեծապես օգնում է
պարզաբանելու ոչ միայն մյուս շինությունների կառուցման ժամանակը,
այլև մի շարք հարցեր՝ կապված ճարտարապետական տերմինների հետ:
Ջևանշիրի որդի Վահանն, ըստ պատմիչի, կառուցել է մեծ աղոթարան, որտեղ
գտնվում են բաղում թագավորների և թագուհիների շիրիմներ, գավիթը
վանքի մուտքի մոտ, երկու խորանով կամար՝ նվիրված Պողոս և Պետրոս
առաքյալներին, սեղանատունը և խողովակներով ջուր է բերել վանք:
«Մեծ աղոթարան» պետք է հասկանալ հարավակողմի սյունասրահը,
որովհետև տապանաքարերը հիմնականում այստեղ հայտնաբերվեցին:
Միաժամանակ սրահի տեղադրությունը հարավային կողմում, մուտքին կից,
նույնպես համապատասխանում է պատմիչի տված տեղեկությանը: վերջա-
պես, հիշատակված մյուս շինությունների որոշակիությունն ավելորդ անգամ
հավաստում են, որ աղոթարան բառի տակ Ստ. Օրբելյանը նկատի է ունեցել
հատկապես արտաքին սրահը: Այստեղ առավել կարևոր է սրահի աղոթարան
անվանումը, որովհետև այդ բառով, ըստ էության բացահայտվում է սրահի
գործնական իմաստը: Աղոթասրահ բառը ցույց է տալիս, որ IV—V դարերի
արտաքին սյունասրահների նման սրանք ևս կառուցվել են որպես աղոթա-
տեղի, տեղադրված եկեղեցու դահլիճից դուրս:
Վահան երկրորդի կառուցած երկրորդ մեծակերտ շինությունը թաղածածկ
գավիթն է:
Առանձնապես հետաքրքիր է կամարը, նվիրված Պողոս-Պետրոս առաք-
յալներին: Ստ. Օրբելյանն ասում է, որ այդ կամարը գտնվել է «ի դրան
վանիցն», այսինքն վանքի, և ոչ թե որևէ եկեղեցու մուտքի մոտ: Ներկայումս
չկան ոչ կամարը, ոչ էլ միաբանության մուտքը և այդ պատճառով էլ դժվար
է որոշել նրա տեղը: Հիմք ընդունելով Ստ. Օրբելյանի նկարագիրը, կարելի
է մոտավոր պատկերացում կազմել կամարի կառուցվածքային ձևերի մասին:
Պատմիչը նշում է, որ կամարի վրա եղել են երկու խորաններ, ուրեմն շինու-
թյունը եղել է երկհարկ: Միաժամանակ կամար բառից երևում է, որ դա
եկեղեցական շենք չի եղել: Ամենայն հավանականությամբ սա Հռոմոսի
մատի Ղոշերի տիպի կոթողային շինություն էր, վրան երկու մատուռաձև
աշտարակներով, որոնց Ստ. Օրբելյանը խորան է անվանում:
Չորրորդ շինությունը, որ կառուցել է Վահան երկրորդը, այժմ հիմնովին
ավերված սեղանատունն է, իսկ աղբյուրը գտնվում է եկեղեցական շենքից
հարավ: Գ. Գրիգորյանի վկայությամբ «աղբյուրի ջուրը բերված է կավե
թրծած խողովակներով» (պատմիչն օգտագործում է «փողովք» բառը):
Վահան երկրորդի շինարարական այս աշխատանքների թվականը Ստ.
Օրբելյանը չի հաղորդում: Հայտնի է, որ վանքի առաջնորդությունը Վահանը
ստանձնեց իր հորեղբոր՝ Վահան առաջինի մահից հետո: Հայտնի չէ նաև
Վահան առաջինի մահվան տարեթիվը: Պատմիչը տեղեկացնում է միայն, որ
նա մահացել է եկեղեցու կառուցումից «յետ բաղում ճգանց և աշխատու-
թեանց», որտեղից պետք է ենթադրել նրա երկար տարիների առաջնորդու-
թյունը 911 թվականից հետո:

---

126 Ստ. Օրբելեան, էջ 240:

Վահան երկրորդը միաբանությունը գլխավորել է մինչև 958 թվականը: Անանիա Մոկացուց հետո՝ 958 թվականին Վահանը ձեռնադրվեց կաթողիկոս: Ելնելով այս տվյալներից, նրա կառուցած շինությունները հնարավոր ենք գտնում թվագրել X դարի 30—40-ական թվականներով:

1968 թվականին Գ. Գրիգորյանը հայտնաբերեց շինարարական բովանդակությամբ մի կարևոր արձանագրություն ևս.

ԹՎ ՆՂԵ (1046)

ՈՂՈՐՄԵԱ ՔՍ ԱԾ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ
ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈ ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ ԵԿ—
ԵՂԵՑՈՅՍ, ՍՐԱՀԻՍ ԵՒ ԺԱՄԱՏԱՆՆ ՈՐՔ ՄՏ—
ԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՁՍՈՅԱ ՅԱՂԱՒԹՍ ՅԻ—
ՇԵՑԷՔ[127]:

Քանի որ կան Ստ. Օրբելյանի վկայությունը և վիմական վավերագիրը Վահան առաջին նախաշինողի վերաբերյալ, այս, անկասկած, նորոգման արձանագրությունն է:

Արձանագրության մեջ ուշադրության են արժանի սրահ և ժամատուն բառերը, որոնցով XI դարում արդեն փոխարինվել էին աղոթարան և գավիթ տերմինները:

Այս արձանագրությունը մի կիսակլոր քարի վրա է, որը, հավանաբար գավթի հարավային մուտքի ճակատակալն է եղել:

Վահանավանքի վերջին շինությունը երկհարկանի եկեղեցին է: Ստ. Օրբելյանը գրում է. «Բայց յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց, ի Շահանդխտոյ թագուհւոյն և ի Կայտայէ և ի Սեննեքերիմայ թագաւորէ բազում և գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, և ի վերայ՝ եկեղեցիս և սրահս բազմասինս բարձրաբերձ, հովանի և խրախարան իշխանացն. յորոց աւուրս և եկն երջանիկ կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփաննոս և անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ ի տեղւոջ, և եդաւ ի նմին սրբարանի»[128]:

Մոտավորապես նույնն է հաղորդում եկեղեցու հարավային պատի ներսի շինարարական արձանագրությունը.

Ի ։ՇԼԵ։ (1086) ԹՎԱԿԱՆԻՍ ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴ—
ԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒ—
ՈՐԻ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ, ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱ—
ՆԳ [Ը]ՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՒ ՔՈՅՐՍ ԻՄ ԿԱՏԱՅՍ ՇԻՆԵՑԱՔ ՁՍԲ
ԱԾԱԾԻՆՍ ՓՈԽԱՐԵՆ ԳԹՈՅ ՆՈՐԱ, ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ
ՆՄԱ ԿԱՏԱՐԵՆ ՁՍԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՒ ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ՁՄԵՋ
Կ[Ց]ՈՐԴ ԱՐԱՍՑԵՆ ԱՆՄԱՀ ՁԵՆՄԱՆՆ ՔԻ[129],

Այս արձանագրությունից բացի եկեղեցու շինության մասին հետաքրքիր հիշատակություն է փորագրված երեսապատման քարերից մեկի վրա[130]:

Արձանագրություններից երևում է, որ Շահանդուխտը և Կատան հաստատվել էին Վահանավանքում, ավելացնելով միաբանությունը նոր շինություններով և, ինչը կարևոր է սկզբնաղբյուրները ճիշտ հասկանալու համար, նորոգել էին հները:

127 Գ. Գրիգորյան, նշված հոդվածը, «Լրաբեր», հաս. գիտ., 1970, № 10, էջ 87:
128 Ստ. Օրբելյան, էջ 241:
129 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 138:
130 Տե՛ս նույն տեղում, էջ 138:

Ստ. Օրբելյանի թողած տեղեկությունն այս եկեղեցու մասին նույնպես ունի նկարագրական բնույթ: Եկեղեցին թաղածածկ է. պատմիչը գործածում է «կամարս մեծամեծս» արտահայտությունը, իսկ սրահը բնութագրում է «բազմասինս» բառով: Այս սրահի վերակազմությունը ներկայացրել է Ս. Մնացականյանը[131]: Ուշագրավ է Ստեփանոս կաթողիկոսի արձանագրությունը, որտեղ սրահն անվանված է գավիթ: Սրահի տեղադրությունն արևմտյան կողմում, որը ավանդական է գավթի համար, բնականաբար, ընկալվել է որպես գավիթ:

Վահանավանքի վերաբերյալ գրավոր վերջին տեղեկությունը վերաբերում է XIV դարի վերջերին:

Նղեգիս.—Ցաղաց քարի հուշարձանների երկրորդ խումբը գտնվում է առաջինի արևելակողմում: Բաղկացած է մի եկեղեցուց (ս. Կարապետ) և երկհարկանի մատուռ-դամբարանից: Սուրբ Կարապետ եկեղեցու ներսի չորս անկյուններում տեղադրված են երկարավուն ավանդատներ: Եկեղեցու արևելյան և հարավային պատերին կան որմնախորշեր, որոնք ունեն դեկորատիվ նշանակություն: Եկեղեցին զարդարված է ճոխ զարդաքանդակներով և պատկերաքանդակներով: Վերջիններս Ս. Բարխուդարյանը դիտում է որպես իշխանական զինանշաններ և կապում մոտակա Սմբատաբերդի տեր Սյունյաց Վասակյան իշխանների հետ[132]:

Եկեղեցու կառուցման մասին տեղեկություն են հաղորդում շինարարական արձանագրությունը և Ստ. Օրբելյանը: Պատմիչը գրում է. «Ցաղաց քար՝ բարձրահոչակ և սուրբ առաքինարան յորում ի 490 (1041) թուականին ի թագաւորութեանն Գագկայ, հայր ումն վանիցն Վարդիկ անուն շինէ պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին գմբեթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմիւսն սագաշէն, հրաշալի յօրինուածովք»[133]:

Այստեղից պարզվում է նախ կառուցման թվականը՝ 1041, այնուհետև, որ կառուցողը եղել է Ցաղաց քարի միաբանության առաջնորդ Վարդիկը և, ամենակարևորը, նկարագրված են երկու շինություններն էլ ըստ կառուցվածքային ձևերի՝ «գմբեթայարկ, գմբեթածածկ»: Այս բառով բնորոշված է ս. Կարապետ եկեղեցին: Մատուռ-դամբարանի համար պատմիչն օգտագործում է սագաշէն բառը՝ նկատի ունենալով նրա կամարածածկ լինելը:

Ստ. Օրբելյանի վկայությունը հաստատում են երկու արձանագրություններ: Դրանցից մեկը գտնվում է մատուռ-դամբարանի ճակատակալ քարին.

ԵՍ ՀԱՅՐ ՎԱՐԴԻԿ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՑԱՂԱՑ ՔԱՐԻ ՇԻՆԵՑԻ ՁՍԲ
ԿԱԹՈՂԻԿԷՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ՁՆՇԱՆ ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ ՎԱ/ՍՆ ԻՄ ՀՈԳՒՈՅՍ
ՓՐԿՈՒԹԵԱՆ, ԹԵ[Ե]ՐԵՒՍ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԳՏԻՑ Ի ՅԱՊԱԳԱՅՆ Ի Տ[Ի]ԵԶԵՐԱ-
ԿԱԼ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ, ՈՒՐ ԲԱՆՔՆ ԸՍՊԱ/ՌԻՆ ԵՒ ԳՈՐԾՔՆ ԹԱԳԱՒՈՐԵՆ: ԱՐԴ
ՈՎ ՍՐԲԱԶԱՐԴ ՔԱՀԱՆԱՅՔ, ՈՐՔ ՁՍԲ ՊԱՏԱՐԱԳՆ ՀԱՄԱՐՁԱԿ ՄԱՏՈՒՑԱ-
ՆԵՔ. ՁԻՍ/ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ ԱՌԱ[Ջ]ՋԻ ՁԵՆԼՈՅՆ ՔՍԻ, ԵՒ ՔԱՆԻ Ի ՔՍԻ
ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ Է ԱՄԷՆ ՇԱԲԱԹՆ ԱՒՐ ՋԺԱՄՆ ԻՆՁ ԱՌՆԷ Ա/ՅՆ ՔԱՀԱՆԱՅՆ,
ՈՐ Ի ՍՄԱ ՊԱՏԱՐԱԳՆ ՄԱՏՈՒՑԱՆԷ[134]:

Թեև այս արձանագրության մեջ հիշատակված է երկու շինությունների

131 Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 187:
132 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», III, էջ 141:
133 Ստ. Օրբելյան, էջ 340:
134 «Դիվան հայ վիմագրության», III, էջ 151:

կառուցման մասին, սակայն մի ընդարձակ շինարարական արձանագրություն էլ փորագրվել է եկեղեցու ներսում՝ հյուսիս-արևմտյան ավանդատան հարավային պատին[135]։ Այս արձանագրությունը խիստ հողմահարված է և չի վերծանվում։

Եկեղեցու կառուցմանն ըստ երևույթին մասնակցել են նաև աշխարհիկ անձինք։ Հիշյալ արձանագրության երրորդ տողն սկսվում է... ԻՍ ՀԱՅՈՑ ԵՍ ՀԱՐԲՈՆ ԳԱԲ... բառերով, որից երևում է Հարբի անմիջական մասնակցությունն այս եկեղեցու շինությանը։ Կառուցմանը մոտ ժամանակաշրջանում Հարբը հիշատակված է Մրենի արձանագրություններից մեկում որպես «առաջնորդ» և «Հայոց տանուտէր»[136]։

Չորրորդ տողում ԿԱՆԳՆԵՑԻ բառը վկայում է արձանագրության շինարարական բովանդակությունը։ Հինգերորդ տողում հիշատակված է Վարդիկի անունը, ակներևաբար, որպես Ցաղաց քարի առաջնորդ և եկեղեցու կառուցող։

Ցաղաց քարի երկու իրար մոտ գտնվող հուշարձանախմբերը պատկանել են մեկ վանքի։ Այդ մասին է վկայում ս. Կարապետ եկեղեցու ներսի արձանագրություններից մեկը, որտեղ Վարդիկը պատվիրել է իր համար պատարագել հինգ եկեղեցիներում[137]։ Այստեղ կա ընդամենը մի եկեղեցի և մի մատուռ։ Ղ. Ալիշանի իրավացի կարծիքով Վարդիկը նկատի է ունեցել նաև մյուս՝ ավելի հին վանախումբը[138]։ Նման պատվեր նա կարող էր տալ միայն երկու վանքերի վանահայրը լինելու դեպքում։

* * *

X դարի Սյունյաց ճարտարապետության մեջ հանդիպում են նաև վերակառուցումների հետևանքով առաջացած հորինվածքներ։ Այդպիսիններից են Տաթևի մոտ գտնվող Ցաքուտի և Բարձրավանի եկեղեցիները։

Ցաքուտ.—Այս եկեղեցին արտաքնապես տեղադրված պայտաձև խորանով հնագույն միանավ բազիլիկներից է եղել։ Ժամանակին պահպանվում էին խորանի հիմնապատերը[139]։ 932 թվականին եկեղեցին վերակառուցվել է Սյունյաց եպիսկոպոս Հակոբի կողմից։ Վերակառուցման ժամանակ խորանը կրճատվել է և արևելյան կողմում կառուցվել նոր խորան, սահմանափակելով ընդհանուր երկայնական չափը։ Միաժամանակ մեծացվել են որմնամույթերը։

Ստ. Օրբելյանը նկարագրելով Հակոբի շինարարական աշխատանքը նշում է, որ նա գնելով Ջաղեձորի Վարարակ ջուրը, ջրանցք է կառուցում և լեռների վրայով հասցնում մինչև Ցաքուտ, «Եւ ապա տեսեալ բլուր մի գեղեցիկ ի մէջ դարաստանաց, և հարթեալ զգլուխ նորա՝ արար պարսպափակ և ելից զմէջն հող քաղցր դիտանոց որ հայէր ի վերայ ամենայն այգեստանոյն. և շինէ ի վերայ նորա գմբեթյարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և զորմ և զձեղուն նորա եւ զարդարել նկարչաց ղանազան երանգօք, նկարել զամենայն տնօրինական և տէրունական պատկերս և զառաքելոց և զհայրապետաց, և բոլոր շուրջ զեկեղեցեաւն սրահակս զուգեալ...»[140]։

135 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», III, էջ 147։

136 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 139։

137 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», III, էջ 146։

138 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 157։

139 Տե՛ս Հնությունների պահպանության կոմիտեի արխիվ, թղթ. № 11, չափագրություն Բ. Արզումանյանի։

140 Ստ. Օրբելեան, էջ 254։

Հակոբը բավականին մեծ շինարարական աշխատանք է կատարել։ Նա հարթել է բլրի վերնամասը, պարսպել, այնուհետև կառուցել եկեղեցին։ Պատմիչը որևէ ակնարկ չի անում նախապես գոյություն ունեցած եկեղեցու մասին, սակայն հին եկեղեցու խորանի հիմնապատերը տեղում բավականին պարզորոշ են։ Ստ. Օրբելյանի լռությունն այդ մասին կարելի է բացատրել նախկին եկեղեցու հիմնովին ավերված լինելու պարագայով։ Նոր եկեղեցու համար օգտագործվել են միայն հիմնապատերը։

X դարում կառուցված այս եկեղեցին Ստ. Օրբելյանը անվանում է «գմբեթյարկ խորան»։ Խորան բառը շատ լայն հասկացողություն է[141]։ Սկզբնաղբյուրներում խորան են անվանվել եկեղեցական շինության այն հատվածները, որոնք ամփոփել են սրբացված առանձնամասը։ Խորան կարող են լինել եկեղեցու բեմը (գլխավոր խորան), ավանդատները և նույնիսկ խաչաձև հատակագիծ ունեցող ներսի կողմնային թևերը։ Տվյալ դեպքում ընդհանրացված է ամբողջ եկեղեցին՝ որպես սրբատեղի։

Ստ. Օրբելյանը տեղեկացնում է նաև, որ Հակոբն իր կատարած շինարարական աշխատանքների, մասնավորապես ջուրն անցկացնելու վերաբերյալ թողել է մի ընդարձակ արձանագրություն[142]։ Այդ արձանագրությունը չի պահպանվել։ Թեև պատմիչը եկեղեցու շինության մասին չի խոսում, սակայն կարևորն այդտեղ բերված թվականն է (932), որը կարելի է վերագրել նաև եկեղեցուն։

Բարձրավան.—Բարձրավանի հուշարձանախումբը հայտնի է Բղենո-Նորավանք անունով։ Գտնվում է Գորիսի շրջանի Բարձրավան գյուղից 3—4 կմ արևելք։ Եկեղեցին ունի չափազանց ինքնատիպ կառուցվածք։ Հյուսիսային, արևմտյան և հարավային կողմերից այն շրջափակված է ոչ մեծ սրահներով, որոնք իրենց մեջ են առել փոքրիկ եկեղեցին, ներքին տարածությունը բաժանելով մի շարք առանձնամասերի։ Ամբողջ շինությունը ծածկված է եռաթռիչք կամարներով։

Հարավային սրահն ավերված է, հյուսիսայինը ենթարկվել է արմատական վերակառուցման։ Սրահի արևելյան հատվածը լայնացվել է, որի հետևանքով դուրս է եկել իր արտաքին սահմաններից։ Ներսում լայնացված հատվածի տեղում ստեղծվել են երկու ոչ մեծ ուղղանկյուն առանձնամասեր, միմյանցից բաժանված բավականին հաստ պատով։ Սրահի արևելյան կողմում եղել է փոքրիկ խորան, որպիսին, հավանաբար, գոյություն է ունեցել նաև հարավային սրահում։ Եկեղեցու կենտրոնական մասը կողմնային սրահների հետ հաղորդվում է հյուսիսային կողմից բացված երկու և արևմտյան կողմից՝ մեկ մուտքերով։ Ընդհանուր կառուցվածքի հիշյալ առանձնահատկությունները, ինչպես և միջուկի հորինվածքի ավարտուն ձևերը վկայում են, որ եկեղեցու կողմնային հատվածները կառուցվել են թերևս արտաքին սրահի նկատառումով։ Այդ ցույց է տալիս նաև սրահի արևմտյան մուտքի արտակարգ մեծությունը։ Սակայն կառուցվածքային տեսակետից նկատելի է ճարտարապետի ձգտումը՝ հասնել առանձնամասերի ամբողջականության, որը

141 «Վրան, տաղաւար, կամարքն երկնից, իսկ երբեմն առանց փոխանակ եկեղեցւոյ կամ տաճարի։ Եւ մերթ փոխանակ սրբոյ սեղանոյն»։ (Տե՛ս «Բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1749 էջ 391—392)։

142 Տե՛ս Ստ. Օրբելեան, էջ 255։

իրականացված է ինչպես երկթեք. տանիքի համընդհանուր միակողմանի բնույթով, նույնպես և արևելակողմի արտաքին որմնախորշերով։

Եկեղեցու կառուցման ժամանակը հայտնի է դառնում շինարարական արձանագրությամբ։ Ժամանակին այն գտնվել է արևմտյան պատին և փորագրվել երեք քարի վրա։ Քարերից հայտնաբերվել է միայն մեկը, որը կրում է հիմնական բովանդակությունը։ Ս. Բարխուդարյանը արձանագրությունը հրատարակել է հետևյալ վերծանությամբ.

Ի ԹՎ ՀԱ[ՅՈՑ] Ի ։ՇԺԱ։ (1062) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒ[ԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱՊՍ]/ԱԿԵԱԼ ԱՐՔԱՅԻՆ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ՀԱՅՐ[ԱՊԵՏՈՒԹԵԱՆ]/ՏՆ ՅՈՎԱՆՆՈՒ ՍՒՒՆԵԱՅ ԵՊԻՍԿԱՊՈՍԻ ԵՒ .../ՄԲ ՈՒԽՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ ԵՒ ՋՏՆ.../ ԱՇԽԱՏՈՒԹԲ ՀԻՄՆԱՐԿԵԱԼ ԵԿԵՂԵ[ՑԻՍ ՎԱՍՆ] /ՓՈԽՄԱՆ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԹԵՐԱԿԱՏԱՐ Մ[ՆԱՑԵԱԼ ԷՐ ԵՍ] /ՀԱՅՐ ԳԻՈՐԳ ՀՐԱՄԱՆՈՎ Ք[Ր]Ի[ՍՏՈՍ]ԱՊՍԱԿԵԱԼ Թ[ԱԳԱՒՈՐԻՆ ԿԱՏ]/ԱՐԵՑԻ ՇԻՆՈՒԹԲ ԵՒ ԱՒՀՐՆԵՑԻ ՅԱՒԳՆ[ԱԿԱՆՈՒԹԲ ՔՐԻՍՏՈՍԱ] /ՊՍԱԿԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ԱՐԴ ՈՎ Ս[ՈՒՐ]Բ ՀԱՐ[Ք ԵՒ ԵՂ] /ԲԱՐՔ ՈՐՔ ԱՂԱՒԹԷՔ ՀԱՆԱ.../ Ի ԱԾԸՆԿԱԼ ՍՐԲՈ ՍԵՂԱՆՈ[ՅՍ...] /ԵԱՆՍ ՅԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ...[143]։

Պարզվում է, որ եկեղեցու կառուցումը կատարվել է երկու փուլով։ Առաջին անգամ կառուցումը մնացել է անավարտ, այնուհետև այն ավարտել է Գիորգը, 1062 թվականին, որով և պետք է բացատրել կառուցվածքային անսովոր ձևերը։ Ամենայն հավանականությամբ առաջին շրջանում եկեղեցին ունեցել է այլ հատակագիծ, և իր վերջնական կերպարը ձեռք է բերել երկրորդ հատակագծի հետ համակերպելու հետևանքով։ Ստ. Օրբելյանի վկայությամբ առաջին եկեղեցին կառուցվել է 936 թվականին Ստեփանոս քահանայի կողմից. «Գնացեալ ապա ի Թիկանց կուսէ Կատարոյ վանից. և գտեալ տեղի մի յոյժ գեղեցիկ և վայելուչ՝ ի մէջ երկու ձորոց ի վերայ հարթ ստորոյ միոյ, սկսանի շինել եկեղեցի օժանդակութեամբ Հրահատայ իշխանի. և կատարէ զնա, և այլ ևս գաւիթս և սրահս եկեղեցւոյն և բնակութիւն կրօնաւորաց»։ «...և կարգաւք զվանսն յ385 (936) թուականին հայոց»[144]։ Այստեղից կարելի է հետևցնել, որ իր նախնական մտահղացմամբ եկեղեցու հիշյալ առանձնամասերը նախագծվել են որպես գավիթ և սրահ. սակայն, ինչպես երևում է արձանագրությունից, այդ մտահղացումը մնացել է անավարտ և 1062 թվականին ավարտող ճարտարապետը, բացելով հյուսիսակողմի պատը և կառուցելով տանիքի միասնական ծածկը, հիշյալ գավիթը և սրահն ամբողջացրել ու միավորել է եկեղեցու մեջ։

Առաջին շինության վերաբերյալ ժամանակին եղել է նաև վիմագրական հիշատակություն՝ փորագրված խոյակի վրա։ Այդ արձանագրությունից մնացել է մի փոքրիկ հատված միայն՝ ...ՆՈՐԱՒԱՆԻՑ ՁԵՌՆ ՏՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ։ /ՅՁԴ (935) ...ՄԻԱԿՐԱՒՆՔ...[145]։ Համեմատելով Ստ. Օրբելյանի տեղեկության հետ 936 և 935 թվականների տարբերությունն ըստ էության սխալ համարել չի կարելի։ Դա կարող էր տեղի ունենալ ամիսների հաշվումների հետևանքով։

Հիշյալ Ստեփանոսի մասին Ստ. Օրբելյանն ասում է, որ եղել է իշխանական տոհմից, եկեղեցին կառուցելուց հետո դարձել է հիմնած հոգևոր

143 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 45։
144 Ստ. Օրբելեան, էջ 245—246։
145 «Դիվան հայ վիմագրության», II, էջ 44։



Բագարան. վեցախորան եկեղեցին (լուսանկար Պ. Կուննոյի)

Մարմաշենի վանախումբը հյուսիս-արևմուտքից

ԱՅՐԱՐԱՏ

Այրարատը Հայաստանի կենտրոնական նահանգն է։ Տերիտորիան 40105 քառ. կմ է[1]։ Հյուսիսից նրան սահմանակից է Գուգարքը, արևելքից՝ Սյունիքը, հարավից՝ Վասպուրականը, հարավ-արևմուտքից՝ Տուրուբերանը և հյուսիս-արևմուտքից՝ Բարձր Հայքն ու Տայքը։ Այրարատ նահանգի մեջ են մտնում 22 գավառ։

Իր ողջ պատմության ընթացքում Այրարատը եղել է արքունական ոստան, իսկ առանձին գավառներում տիրել են երկրի ամենանշանավոր նախարարական տները։ Վաղ միջնադարում Այրարատը պատկանում էր Արշակունիներին։ Նրանց անկումից հետո նահանգի աչքի ընկնող նախարարական տներից էին Կամսարականները և Գնթունիները։ Առաջինների սեփականությունն էին Շիրակն ու Արշարունիքը, իսկ Գնթունիների նախարարական տունը իշխում էր Նիգ գավառում։ Նահանգի հարավային գավառներից մեկի՝ Կոգովիտի տերը դարձան Բագրատունիները։ Ն. Ադոնցի կարծիքով նրանց տոհմի ավանդական տիրույթը Բագրևանդն է եղել[2]։ Վաղ միջնադարի տարբեր շրջաններում Այրարատ նահանգի առանձին գավառներում տիրել են նաև Սահառունի, Գնունի, Վարաժնունի, Առավեղեան նախարարական տները։ Այրարատ նահանգի քաղաքական պատմության մեջ չափազանց մեծ էր Բագրատունիների դերը։ Բագրատունիների ձեռակերտն էր համարվում Բագարանը։ Ալիշանը համոզված է, որ նրանք են հիմնել նաև Դարյունք ամրոց-դղյակը[3], որտեղից Աշոտ Մսակերը IX դարի սկզբին իր նստոցը փոխեց Արշարունիք։ Սակայն այս ամրոցը հիշատակվում է տակավին Արշակունյաց շրջանում, որպես արքունական գանձարան[4]։ Դարույնքը և, առհասարակ, Կոգովիտը Բագրատունիներին է անցել V դարում։ Այստեղ է գտնվել նրանց տոհմական դամբարանը։ Ղևոնդի հաղորդման համաձայն Աշոտ Պատրիկը 685 թվականին Դարյունքում շինում է մի եկեղեցի՝ Ամենափրկիչ անունով[5]։ Բագրատունիների տոհմական տիրույթների կազմում էին նաև Բարձր Հայքի Սպեր գավառը, մասամբ էլ Տարոնը։ Սակայն երկրի արևմտյան այս գավառներում ճարտարապետական հուշարձանները մեծ մասամբ ավերվել են, իսկ եղածների վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրություններ գրեթե չկան։

Արշակունիների օրոք Բագրատունյաց իշխանները միշտ հիշատակվում են երկրի ամենազորեղ նախարարական տների շարքում։ Իրենց ազդեցու-

---

1 Տե՛ս Ս. Երեմյան, *Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի»*, էջ 118։

2 Տե՛ս *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, стр. 307.

3 Տե՛ս Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 496։

4 Տե՛ս Բուզանդ, էջ 191։

5 Տե՛ս Ղևոնդ, էջ 37։

թյունը նրանք չկորցրին նաև Արշակունիների անկումից հետո։ 481 թվականին Հայաստանի մարզպան նշանակվեց Սահակ Բագրատունին[6]։ Իր քաղաքական ինչպես և հասարակական գործունեությամբ VI—VII դարերի սահմանագլխին առանձնապես մեծ եղավ Սմբատ Բագրատունու դերը, որի նախաձեռնությամբ վերակառուցվեց Դվինի մեծ եկեղեցին։ Արաբական տիրապետության աղետալի շրջանում Բագրատունիները ոչ միայն պահպանեցին իրենց տնտեսական ու քաղաքական հզորությունը, այլև նկատելիորեն առաջադիմեցին։ IX դարի երկրորդ քառորդում արաբական խալիֆայությունն «իշխանաց-իշխանի» տիտղոս շնորհեց Բագրատ Բագրատունուն, որով ընդգծվեց Բագրատունիների դիրքն ու նախապատվությունը երկրի ավագանու շրջանում։ 862 թվականին այդ տիտղոսին արժանացավ Բագրատի թոռը՝ Աշոտը։ 869 թվականին Աշոտը նախարարների կողմից ընտրվեց հայոց թագավոր։ Այս շրջանից սկսած Այրարատն ամբողջապես անցավ Բագրատունիներին։ Աշոտը թագավորական նստավայր դարձրեց Շիրակավանը։ Այստեղ թագավորեց նաև Սմբատ Ա-ը։ Սակայն Շիրակավանը պաշտպանության բնական հարմարություններ չունենալու պատճառով մայրաքաղաքը սկզբում տեղափոխեց Կարս, իսկ այնուհետև՝ 961 թվականին՝ Անի։

Նույն ժամանակ էլ Վասպուրականից Արգինա տեղափոխվեց կաթողիկոսական աթոռը։ Աշոտի օրոք Այրարատի Շիրակ գավառը Հայաստանի քաղաքական ու հոգևոր կենտրոնն էր։

Բագրատունիներից բացի Այրարատում առանձնապես աչքի ընկան Պահլավունիները, որոնք բազմիցս հիշատակվում են պատմական սկզբնաղբյուրներում և, մանավանդ, վիմական արձանագրություններում։

Ի տարբերություն մյուս նահանգների, Այրարատն առավելապես հարուստ էր վաղ միջնադարյան, հատկապես IV—VII դարերի շինարարական ավանդույթներով, որոնք արգասավոր հող նախապատրաստեցին ճարտարապետական ձևերի առաջացման համար։ Եթե Սյունիքում և Վասպուրականում զարգացումն ընթանում էր հիմնականում գմբեթասրահների ու եռախորան, քառախորան տիպերի վերամշակման ուղղությամբ, ապա Այրարատում դրանց հետ մեկտեղ երևան են գալիս բոլորաձև և արտաքուստ խաչաձև տիպերի նոր տարբերակները։ Այրարատի ճարտարապետներն անտարբեր չմնացին նաև Ավանի տիպի երկու ավանդատնով տարբերակի նկատմամբ (Սարակապ), որն առանձնապես տարածում էր գտել Վասպուրականի ճարտարապետության մեջ (Ձորադիր, Ախթամար)։

Այրարատում պահպանվել են նաև IX—XI դարերում կառուցված բազմաթիվ աշխարհիկ շինություններ (բերդեր, կամուրջներ)։

Այրարատ նահանգի IX—XI դարերի ճարտարապետության մեջ միաժամանակ հիանալի վերարտադրված են գմբեթասրահների աստիճանական փոփոխությունները՝ իրենց վաղ միջնադարյան կրկնություններից մինչև չորս ավանդատնով կենտրոնագմբեթ եկեղեցիների տիպը։ Գմբեթասրահների հորինվածքն այստեղ ձեռք բերեց ճարտարապետական ձևերով հարուստ և հետաքրքիր տարբերակներ։ Վաղ միջնադարյան գմբեթասրահներին առավել մոտ առաջին տարբերակները Շիրակավանի, Օձունի, Բագնայրի, Հոռոմոսի (ս. Հովհաննես և ս. Մինաս) եկեղեցիներն են։

---

6 Տե՛ս Փարպեցի, էջ 267։

* * *

Շիրակավան.—Շիրակավանը (նախկինում Երազգավորս) գտնվում է Արևմտյան Շիրակում։ Ներկայումս գոյություն չունի։ Ամբողջապես ավերված է նաև եկեղեցին։ Եկեղեցու ճարտարապետական ձևերի մասնագիտական քննության համար միակ հիմքը Թ. Թորամանյանի հետազոտություններն են։ Բնութագրելով հուշարձանը Թ. Թորամանյանը գրում է. «Ճարտարապետական տեսակետով այդ եկեղեցին ուշագրավ մի կազմություն ունի, որը ցույց է տալիս երրորդ վերածնության (X գ.) նախօրյակի խարխափումը և, որը ոչ VII դարու վերջին վերածնությունն է հիշեցնում և ոչ էլ նոր կազմվելիք X դարի երրորդ վերածնության է նման, այլ մի նոր խառնուրդ հին ու նոր ոճերով, փոխառություններով»[7]։

Եկեղեցու արևելյան, հյուսիսային և հարավային պատերի եռանկյունաձև որմնախորշերի վերին մասը զարդարված է ճոխ զարդաքանդակներով։

Կառուցման մասին տեղեկացնում են Դրասխանակերտցին, Ասողիկը և Գանձակեցին։ Դրասխանակերտցին տալիս է պատմության տեսակետից կարևոր մի հիշատակություն. «Զայսու ժամանակաւ ի քաղաքագիւղն մեծ Երազգաւորս եկեղեցին, որ նախ յարքայէն Սմբատայ հիմնադրեալ եղեւ մերձ ի թագաւորական նորա ապարանսն՝ բովանդակեալ շինութեամբ ի գլուխ ելեալ ատտանօր. և ըստ օրինակի կարգաց սատուածայանոց պնորայն նաւակատիս պատուեալ բարձրացուցանէին ի պաշտօն ցնծութեան»[8]։ Գանձակեցին գրում է. «Իսկ յետ այրելոյ գիշխանսն հայոց ի Նախճաւանի, յետ յիսուն և չորս ամի Հայոց մարզպան եղև Աշոտ Բագրատունի ամս եօթն և տասն. և յետ նորա Սմբատ ամս քսան և երկու. և յետ նորա Աշոտ Մսակերն ամս քսան. և ապա Սմբատ՝ որդի Աշոտայ, որ Աբլաբասն կոչէր, ամս երեսուն և հինգ։ Սա շինէ զսուրբ քաւարանն մեծապայծառ զարդու յԵրազգաւորս, որ արդ Շիրակաւանն կոչի»[9]։ Այս երկու տեղեկությունների մեջ կա որոշակի հակասություն։ Ըստ Դրասխանակերտցու եկեղեցին կառուցվել է Սմբատ Ա-ի (890—914) կողմից։ Նույնն է ասում նաև Ասողիկը[10]։ Իսկ Գանձակեցին այն վերագրում է Սմբատ Մարզպանին (824—854)։ Ընդ որում Գանձակեցու բերած թվականի հաշվումները այնքան էլ ճիշտ չեն։ Հայ իշխաններին Նախճրվանի եկեղեցում այրել են 706 թվականին, որին ավելացնելով նշված 113 տարիները ստացվում է 819 թ.։ Պատմիչը Սմբատի մարզպանության շրջանն սկսում է այս թվականից, որը ճիշտ չէ։ Սմբատ Աբլաբասը 822 թվականին ազատ արձակվեց պատանդությունից և Բաղդադից վերադարձավ Հայաստան։ 824 թվականին ստանձնեց սպարապետի պաշտոնը, իսկ 854 թվականին նորից գերության տարվեց Բաղդադ, որտեղ և մահացավ[11]։

Գանձակեցու սկզբնաղբյուրը հայտնի չէ։ Ամենայն հավանականությամբ նրան շփոթել է երկու Սմբատների Աշոտի որդի լինելը։ Այս տեսակետով ավելի վստահելի է թվում Դրասխանակերտցու վկայությունը՝ որպես շինության ժամանակակից։

---

7 Թ. Թորամանյան, Նյութեր..., հ. 1, էջ 315։
8 Դրասխանակերտցի, էջ 183—184։
9 Գանձակեցի, էջ 76—77։
10 Տե՛ս Ասողիկ, էջ 161։
11 Տե՛ս նույն տեղում, էջ 93, 94։

Դրասխանակերտցու մոտ հիշատակված է նաև արքունական ապարանքը, որը կարևոր է եկեղեցու տեղը որոշելու համար։ Բնականաբար, եկեղեցին կառուցվել է արքունական ապարանքից հետո, այսինքն՝ Շիրակավանը Աշոտ Ա-ի օրոք մայրաքաղաք դառնալուց հետո։ Սակայն, սկզբնական շրջանում Աշոտի մայրաքաղաքը գտնվում էր Բագարանում, որից հետևում է, որ արքունական ապարանքը կառուցված կարող էր լինել միայն IX դարի 80-ական թվականների վերջին։ Ն. Սարգիսյանը եկեղեցու կառուցումը վերագրում է Սմբատ Ա-ին՝ նախապատվությունը տալով Դրասխանակերտցու վկայությանը և թվագրում 897[12]։

Այս եկեղեցուց բացի XX դարի սկզբին Շիրակավանում եղել են նաև այլ շինությունների մնացորդներ։ Թ. Թորամանյանի կարծիքով դրանցից մեկը պատկանում է արքունական ապարանքին[13]։ Եկեղեցու արևելակողմում եղել է ևս մի եկեղեցի ս. Աստվածածին անունով, որից XIX դարի կեսին մնացել էր խորանը միայն[14]։ Ն. Սարգիսյանը տեղեկացնում է, որ հնավայրի հյուսիսային կողմում, մի բարձրադիր քարափի գլխին, պահպանվել են մատուռի ավերակները։ Ականատես ուսումնասիրողները, ցավոք, այդ ավերակների ճարտարապետական ձևերը չեն նկարագրել։ Չի չափագրել նաև Թ. Թորամանյանը։ Այժմ դրանք այլևս չկան։ Ամենայն հավանականությամբ Բագրատունիների անկման շրջանում եկեղեցին ավերվել է, որի մասին վկայություն է տալիս հարավային պատին փորագրված նորոգման արձանագրությունը.

...ԵՍ ԳՆԵԼ ՇԻՆԵՑԻ ԶԹԱԳԱՒՈՐԱԲՆ[ԱԿ ԵԿԵՂԵ]ՑԻՍ ԶՈՐ Ի ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ ՔԱԿԵԼ ԱՒԵՐԵՑ... ԱՅ ԻՍԿ ԵՍ ՏԵՍԻ ԶՊԱՆԴՈՒԽՏՈՒԹԻՒՆ ՏԵՂՈՅՍ ... ԳՈՐԾՈՅՍ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ... ԻՒ[Ր] ՀՈԳՈՅ ՊԱՀՈՒՍՏ ԷՐ ՄԵԾԱՒ ՅՈՒՍՈՎ ՏՈՒԽ... ԳՈՐԾՈՅՍ ՄԻՋՆՈՐ- ԴՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԲԱՐՍՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՅԱՒԱԳՈՒԹԵԱՆՍ ԱՆՈՅ ՊԱՏՃԱՌ ՇԻՐԱԿԱՒԱՆԵՑԻՔ ԵՂԵՆ ՔԱՀԱՆԱՅՔ ՍՈՒԼՏԱՆԻՆ. ԵՒ ԱՅՍ ԳՈՐԾՈՅՍ ... ԵՒ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԵՒ ՏԱՆՈՒՏԷՐՔ... ԱՐԴ ԱՒԱԳՆ ՈՔ ԱՐԵԱՄԲ ՋԱՆՔ ԵԴԻՆ ԵՒ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԶՍԱ[15]։

ժամանակը որոշելուն օգնում են հիշատակված անձինք։ Ալիշանը գտնում է, որ Բարսեղը եղել է Անիի ավագը[16], որը 1081 թվականին դարձավ կաթողիկոս։ Արձանագրության մեջ նա հիշատակված է որպես եպիսկոպոս, իսկ եպիսկոպոս ձեռնադրվել է 1072 թվականին։ Այսպիսով, նորոգումը կարող էր տեղի ունենալ 1072—1081 թվականների ժամանակամիջոցում։ Գնելի մասին հիշատակություն կա միայն այս արձանագրությունում։ Ալիշանը նրան Կամսարական է համարում։ Սակայն դրա համար հավաստի վկայություններ չկան։ Այս շրջանում Անին Մանուչեի սեփականությունն էր։ Իսկ ԱՆԻՈՅ ՍՈՒԼՏԱՆԸ, անկասկած, Մանուչեն է, որ Անիի տերը դարձավ 1072 թվականին։

Օղուզլու.—Օղուզլուն գտնվում է Արևմտյան Շիրակի կենտրոնում։ Իր ճարտարապետական ձևերով նման է Շիրակավանի եկեղեցուն։ Այդ պատճառով Ն. Մառը դրանք համարում է նույն ճարտարապետի գործ[17]։ Այստեղ ևս ավանդատները կրկնահարկ են։ Եթե Սյունիքում ավանդատների երկրորդ

---

12 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 169։
13 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 312։
14 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 171։
15 Նույն տեղում, էջ 170։
16 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 10։
17 Տե՛ս Архив Н. Я. Марра, А; 2618, стр. 183.

հարկը կառուցվում էր խիստ ցածրադիր և ծառայում իբրև թաքստոց, ապա Օղուզլուում դրանք ունեն ավանդատների լիարժեք իմաստ և Շիրակավանի եկեղեցու հետ միասին հանդիսանում են այդ տիպի ամենահնագույնը։

Գմբեթի թմբուկը բոլորաձև է, արտաքուստ զարդարված դեկորատիվ որմնասյուներով և կամարներով, հարավային, հյուսիսային և արևելյան պատերին կան որմնախորշեր, որոնց կամարակապ վերնամասը պսակված է նրբագեղ զարդաքանդակներով։

Եկեղեցին ունի շինարարական արձանագրություն, որը VII դարի ավանդական ձևով գոտևորում է հուշարձանի պատերը մեկ տողով։ Այս արձանագրությունը մեզ է հասել Ն. Սարգիսյանի ընդօրինակությամբ.

ԵՍ ՀԱՍԱՆ ՈՐԴԻ ԽԱԿԱՆԱՅ ԳՆԹՈՒՆՈ ՅԱՒԵՐԺԱԲԱՐ ԸՂՁԱՑԵԱԼ ՓԱՓԱՔՄԱՄԲ ՅԱՒՐԻՆԵԼ ՏԵՂԻ ԱՊԱՒԻՆԻ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼՍՆ ՎԱՍՆ ՅԱՒԳՆԱՀԱՄԲԱՐ ՈՒ ԲԱԶՄԱՄԵՂ ԱՆՁԻՆ ԻՄՈ ՅԱՒԺԱՐՈՒԹԵԱՄԲ ՍՐՏԻ ԻՄՈՅ ԽՈՐՀԵՑԱ ՇԻՆԵԼ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԶԱՅՍ ՆԱԽԱՒՐԻՆԱԿ ՎԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ[18]։

Արձանագրության լուսանկարը կամ գծագրական պատճենը գոյություն չունի։ Ալիշանը գտնում է, որ այն փորագրվել է IX դարի վերջերին[19]։ Կոստանյանցն այն թվագրել է 895[20]։ Ժամանակի ճշտման միակ հնարավորությունը Հասան Գնթունու անձի որոշումն է։ Նրա վերաբերյալ մի տեղեկություն կա Դրասխանակերտցու մոտ[21], որի համաձայն Հասանն ապրել և գործել է IX դարի երկրորդ կեսին, IX դարի 90-ական թվականներին նշանակվել է Կարինի բերդապահ զորքերի հրամանատար, 896 թվականին երկարատև ու համառ մարտերից հետո հանձնել է բերդը Աֆշինին, որը գերևարել և Դվին է տարել նրան՝ թագավորական ընտանիքի հետ միասին։ Այսպիսով, 895 թվականը խիստ մոտավոր է, իսկ Հասանի հետագա ճակատագիրն անհայտ։ Դրասխանակերտցին հաղորդում է միայն, որ գերությունից ազատվելուց հետո նա գնացել է թագավորի մոտ։ Եկեղեցու շինությունը 896 թվականից հետո դժվար է ենթադրել, որովհետև Շիրակի սահմաններում տեղի ունեցող անընդհատ զինաբախումները նման գործի համար նպաստավոր պայմաններ ընձեռել չէին կարող։ Ավելի հավանական է մինչև 895 թվականը։ Իսկ դրանից ուշ, բայց մոտ ժամանակներում, հնարավոր է, որ այն արդեն ավերված լիներ։ Ինչպես ցույց է տալիս հուշարձանի պատին փորագրված մի այլ արձանագրություն, համեմատաբար ոչ այնքան էլ հեռու ժամանակներում եկեղեցին ենթարկվել է վերանորոգման.

ԵՍ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ՈՐԴԻ ԳԷՈՐ[ԳԱՅ...] ԱՌՆ ՔԱՋԻ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄՈՂԻ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՂԵԱԼ ՏԱՆՍ ՀԱՅՈՑ ԱՌԻ ԲԱՐՁ ԵՒ ՊԱՏԻՎ Ի ԱՇՈՏՈՅ ՇԱՀՆՇԱՀԷ ԵՒ Ի ՅՈՐԴՈՅ ԻՒՐՈՅ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԳԱԳԿԱ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ ՏԵՍԻ ԶՄԱՅՐ ՔԱՂԱՔԻՍ ԵՒ[...ՏԱ]ԾԱՐԻ ԱՅ ԶԱՊԱԿԱՆՈՒԻՄՆ՝ ՆՈՐՈԳԵՑԻ ։ՆԾ։ (1001) ԱՄԻ ՊԱՐԹԵՒԻՍ Ի ԳԱԼ ՄԻՒՍ ԱՄԻ ԵՀԱՍ ԻՆՁ ՀՐԱՒԷՐ Ի ՎԵՐԻՆ ԱՐՔՈՒՆԻ ԿԱ ՄԵՂՍ ԻՆՁ ԽԱՉ[22]։

Արձանագրության բովանդակությունից երևում է, որ այն փորագրվել է նորոգողի՝ Աշոտի մահից հետո։

---

[18] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 174։

[19] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 15։

[20] Տե՛ս Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, էջ 4։

[21] Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 179—180։

[22] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 15։

Աշոտը եղել է զորավար։ Աճառյանը նրան համարում է «մարզպան» զորավար[23]։

ՆԾ (1001) և դրան հաջորդող Ի ԳԱԼ ՄԻՒՍ ԱՄԻ արտահայտությունը ցույց են տալիս, որ ածանագրությունը փորագրվել է 1002 թվականին։

Դպրեվանք.—Հայաստանի վանական նշանավոր հաստատություններից մեկն էր։ Գտնվում է Անիից հյուսիս՝ Պայրախտար գյուղի մոտ, Օղուզլու և Մորիկ գետերի խառնարանի հարավային կողմում։ Հայտնի է նաև Կարմիր կամ Բարսեղ Ծոնի վանք անուններով։ Դպրեվանքի մասին առաջին անգամ հիշատակվում է VII դարում, կապված հիշյալ Բարսեղ Ծոնի անվան հետ, որը VII դարի կեսին Դպրեվանքի վանահայրն էր[24]։

Թե երբ է հիմնադրվել այս վանքը և իր սկզբնական շրջանում ինչպիսի ճարտարապետություն է ունեցել, դժվար է ասել։ Եկեղեցու ավանդատան պատին, խաթարված մի արձանագրության մեջ ուսումնասիրողները կարդացել են Սարգիս Ծոնի անունը[25]։ Եթե այդ անունը կարող էր միայն VII դարում գրվել, ապա շինության այն հատվածը, ուր գտնվում է արձանագրությունը կրող քարը պետք է վաղ միջնադարից պահպանված լինի։ XX դարի տեղեկությունների համաձայն եկեղեցին եղել է ներքուստ խաչաձև, չորս ավանդատնով գմբեթահարկ շինություն[26]։ Արևմտակողմի ավանդատներից մեկը XIII դարում նորոգվել է։ Այդպես մտածելու համար հիմք է տալիս նաև մի եղծված արձանագրություն, փորագրված արևմտյան ավանդատներից մեկի մուտքի վերևում. ՈՀԷ (1228) ՇՆՈՐՀԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՍ ՏԱԼԻԹԱ ՁԵՌՆ ԵՏՈՒ ՄԱՏՌԱՆՍ. ԸՍՊԱՍԱՒՈՐՔ...[27]։

Դպրեվանքի ծաղկուն շրջանը X դարն էր, երբ այստեղ հաստատվեցին Բյուզանդիայում հալածված հայ վանականները և ստեղծեցին խոշոր միաբանություն։ Արդյոք ա՞յս ժամանակներից վանքը կոչվեց Դպրեվանք, թե դպրության օջախ այն եղել է տակավին VII դարից, դժվար է ասել։ Բոլոր դեպքերում այն փաստը, որ Ներսես Գ կաթողիկոսը շարականի կանոնավորումը հանձնարարում է Դպրեվանքի վանահայր Բարսեղ Ծոնին[28], նշանակում է, որ VII դարում Դպրեանքն իր դպրությամբ և առհասարակ որպես մշակութային օջախ ունեցել է առաջնակարգ դիրք։ X դարի անցքերի վերաբերյալ Գանձակեցին գրում է, որ հալածյալ վանականները «...եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ, որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս՝ զԿամրջաձոր, և զԿապուտաքարն ի գաւառին Արշարունեաց, և զՀոռչականունն Հոռոմոսին կոչեցեալ վանք, և զԴպրէվանք ի Շիրակ գաւառին»[29]։ Սամուել Անեցին վանքի շինությունը թվագրում է 931՝ «Առ սովաւ (Աբաս թագավորի) հաստատեցան ուխտք սրբութեան՝ Կամրջաձոր և Կապուտ-քար ի գաւառին Աշարունեաց և Հոռչականունն Հոռոմոսին կոչեցեալ վանք՝ և Դպրէվանք՝ ի Շիրակ գաւառի»[30]։

---

[23] Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 189—190։

[24] Տե՛ս Բարձրբերդցի, էջ 96։

[25] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 16։

[26] Տե՛ս նույն տեղում։

[27] Նույն տեղում, էջ 15։

[28] Տե՛ս Բարձրբերդցի, էջ 120։

[29] Գանձակեցի, էջ 84։

[30] Ս. Անեցի, էջ 99։

Դպրեվանքի հետագա պատմության մասին պատմիչները տեղեկություն չեն թողել: Վանքի ճարտարապետության վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրություն չի կատարվել: Անհայտ է նաև Կապուտաքարի և Կամրջաձորի վանքերի ստույգ վայրը, ճարտարապետությունը և ներկա վիճակը:

Հոռոմոս.—Բագրատունյաց Շիրակի ամենանշանավոր հուշարձաններից մեկը Հոռոմոսի հուշարձանախումբն է: Այստեղ կան իրենց գավիթներով երկու գմբեթասրահներ, մի առանձին կանգնած եկեղեցի, բազմախորան վկայարան, երեք նշխարատուն, երկու մատուռ և հյուրատուն:

Հոռոմոսի վանական համալիրը Հայաստանի հնագույն համալիրային շինություններից է և աչքի է ընկնում ճարտարապետական ձևերի ու ընդհանուր ծավալների ներդաշնակությամբ:

Հոռոմոսի վանքի ամենածաղկուն շրջանը X—XI դարերն էին: Վանքն ուներ դպրոց, ուր ավանդում էին պատմություն, փիլիսոփայություն և այլ գիտություններ: Այստեղ կառուցվել են բազմաթիվ շինություններ՝ ամենատարբեր նպատակների համար:

Վանքի հիմնադրման սկզբից ևեթ դիտվել է որպես խոշոր հասարակական իրադարձություն: Վանական շենքերին զուգընթաց կառուցվեցին շքեղ հյուրատուն և կամուրջ՝ վանքից ոչ հեռու, Ախուրյան գետի վրա: Հյուրատունը մեծ գովեստով է բնութագրել Լեոն. «Ամենահետաքրքրական շինություններից մեկն էր, շինված էր խնամքով, նույնիսկ ընտիր ճաշակով»[31]: Դժբախտաբար որևէ մասնագետ շենքի ճարտարապետության նկարագիրը չի թողել:

Հյուրատան կառուցման վերաբերյալ կարևոր տեղեկություն ունի Ասողիկը. «և անցաւորաց և ճանապարհորդաց հանգստատուն պատրաստէր ղտեղին՝ մինչև հանգչել իբր իւրեանց տան ամենայն օտարաց»[32]: Հյուրատունը տեղադրված է եղել վանքի պարսպապատ տարածության մեջ[33]:

Վանական համալիրին մեծ կարևորություն են տվել նաև Բագրատունիները: Այստեղ է հաստատվել նրանց տոհմական հանգստարանը[34]: Ասողիկն իր տեղեկությունը թվագրում է X դ. 30—40-ական թվականներով: Այս թվագրմամբ Հոռոմոսի հյուրատունն այդ տիպի առ այսօր պահպանված հնագույն շենքն է: Հոռոմոսի միաբանության հիմնադիրն է Հովհաննես վանականը, որը հալածանքի ենթարկվելով Բյուզանդիայում, X դարի կեսերին գալիս է Հայաստան և Ախուրյանի աջ ափին կառուցում ապագա միաբանության առաջին եկեղեցին: Ասողիկն այդ մասին գրում է. «Իսկ ի գաւառին Շիրակայ՝ Հոռոմոսին կոչեցեալ վանք շինեցաւ ի ձեռն Յովհաննիսի»[35]:

Ս. Մինաս.—Հոռոմոսի երեք խոշոր եկեղեցիներից մեկն է: Զորս ավանդատնով գմբեթասրահ է: Արևելյան որմնամույթերի և խորանի միջև եղած տարածությունն իր մեծությամբ զիջում է արևմտյան հատվածին: Նկատելիորեն կրճատված է երկայնական ձգվածությունը: Արտաքուստ արևելյան, հյուսիսային և հարավային պատերին կան որմնախորշեր: Գմբեթի փոխան-

31 Լեո, Անի, Երևան, 1946, էջ 105:

32 Ասողիկ, էջ 174:

33 Տե՛ս О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении, М., 1971, стр. 195.

34 Տե՛ս Գ. Ալիշան, Շիրակ, էջ 15, 41, 113.

35 Ասողիկ, էջ 174:

ցումն առագաստային է: Ավանդատները խորան չունեն: Թ. Թորամանյանն այս եկեղեցին համարում է վանքի ամենահին շինությունը հետևյալ պատճառաբանությամբ[36]. հայտնի է, որ ս. Հովհաննես եկեղեցին կառուցվել է 1036 թվականին, իսկ ս. Գէորգը՝ Գագիկ Ա-ի (990—1021) գահակալության շրջանում: Եթե համաձայն Ասողիկի Հոռոմոսի վանքը կառուցվել է Աբաս Բագավորի օրոք (մինչև 953 թվական), ապա այն 40 տարով ավելի հին է ս. Գէորգից և մոտ 80 տարով՝ ս. Հովհաննեսից: «Այստեղից,—շարունակում է Թ. Թորամանյանը,—մնում է կարծեցյալ ս. Մինաս եկեղեցին, որուն շինության ճիշտ թվականը հայտնի չէ որևէ արձանագրությունով, սակայն, նախ՝ ճարտարապետական ոճի տեսակետով անկարելի է անոր շինությունը X դարեն այս կողմ բերել... երկրորդ՝ իր վրա եղած 986 թվականի նվիրատվական մի արձանագրությունն կերևի, որ նախքան այդ թվականը կանգնած էր ս. Մինաս եկեղեցին: Ուստի կմնա միակ եկեղեցին Հոռոմոսի վանից մեջ այս ս. Մինաս անվանվածը համարել իբրև նախնական Հոռոմոսի վանք, X դարու կեսին Հովհաննես վարդապետի ձեռքով կանգնած»[37]:

Ս. Գեորգ.—Հոռոմոսի վանքի շինարարական հնագույն արձանագրությունը փորագրված է վանքի երկրորդ շինության՝ ս. Գեորգ վկայարանի արևելյան պատին: Ճարտարապետական ձևերի մասին հիշատակություն չկա: Կոստանյանցի կարծիքով արձանագրությունը փորագրվել է 1001 թվականին[38]; Ն. Սարգիսյանն առհասարակ հրաժարվել է թվագրելուց[39]: Ալիշանը ևս պարզ չի արտահայտվում այդ առթիվ: Նա հենվում է միայն այն տեղեկության վրա, որ եկեղեցին կառուցվել է Գագիկ Բագավորի ժամանակ[40]: Այս հարցում բացառություն է կազմում Թ. Թորամանյանը: Նա գտնում է, որ արձանագրությունը փորագրվել է 1013 թվականից հետո: Այդ կապակցությամբ վկայակոչում է հիշյալ թվականի մի արձանագրություն, ուր եկեղեցի բառը եզակի է գործածված: Այստեղից նա հետևցնում է, որ ս. Մինասից բացի 1013 թվականին այստեղ ուրիշ եկեղեցի չի եղել: Հետևաբար՝ քանի որ ս. Գեորգը կառուցվել է Գագիկ Ա-ի օրոք, ապա չի կարող 1013 թվականից վաղ լինել: Այս հարցի լուծման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել արձանագրության բովանդակության վրա: Այն մի հայց է ուղղված ս. Գեորգին՝ Գագիկ Ա-ի բարեխոսության համար: Ինչպես հայտնի է բարեխոսության նպատակով վկայարանը կարող էր կանգնեցվել միայն պատվիրատուի մահվանից հետո: Ուրեմն, ս. Գեորգ վկայարանը կառուցված և արձանագրված պետք է լինի Գագիկ Ա-ի մահվանից՝ 1021 թվականից հետո: Ավելին, այս թվականը պետք է ենթադրվի որպես շինության հիմնադրման տարեթիվ: «ՇԻՆՈՂԻ» արտահայտությունը միայն միջոցներ տրամադրողի իմաստ է բովանդակում, այսինքն, որ այս վկայարանը կառուցվել է արքունական միջոցներով: Ուշագրավ է նաև այն, որ արձանագրության բնագիրը կազմված է ոչ թե Գագիկի, այլ կողմնակի անձի անունից: Նա հիշեցնում է ս. Գեորգին, որ վկայարանի կառուցողը Գագիկն է: Այս ամենը վկայում են, որ արձա-

36 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 299:

37 Նույն տեղում, էջ 300:

38 Տե՛ս Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, էջ 26:

39 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 165:

40 Տե՛ս Գ. Ալիշան, Շիրակ, էջ 30, Այս եկեղեցին Գ. Ալիշանը հրատարակել է Անիի Կուսանաց վանքի հատակագծով, որը ճիշտ չէ: Հմմտ. Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 303:

նագրությունը գրվել է Գագիկի մահից հետո, թերևս 1022—1024 թվականներին, երբ արդեն ավարտվել էր շինությունը: Արձանագրությունը շարադըրված է վերամբարձ ոճով: Առաջին տողը, ինչպես և երկրորդի սկիզբը գրվել է երկու անգամ:

1. ՈՎ ՀՌՉԱԿԱՒՈՐ ԴՈՒ ԵՒ ՄԵԾԱՆՈՒՆԴ Ի ՎԿ—
2. ԱՅՍ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԻՈՍ ԱՒԳՆԵԱ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵԱ—
3. ՄԲ ԳԱԳԿԱ ՇԱՀԱՅՆՇԱՀԻ, ՇԻՆՈՂԻ ՁՎԿԱՅԱՐԱՆՍ
4. ՁԱՅՍ ՔՈՅՈՎ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՄԲ Ի ՔՈՅԴ ՅՈՒՍԱԿՆԵԱԼ
5. ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ. ԶԻ ԸՆԿԱԼՅԻ ԶՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ Ի ՔԻ ԱՅ ՅԱՆՎԱԽ—
6. ՃԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆՆ ԸՆԴ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԴԱՐԵՅԵԱԼՍ ԱՊԱՇԱՒԱՆԱՒՔ
7. ՀԱՍԱՆԵԼ ԼՈՒՍՈՅ ՓԱՌԱՑ ՈՐԴԻՈՅՆ ԱՅ, Ի ՎԵՐՋՆՈՒՄ ԳԻՇԵՐԻՆ
8. Ի ԾԱԳԵԼ ՄԵԾԻ ԵՒ ԱՆԵՐԵԿ ԱՐԱՒԱՒՏԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԳՏԱՆԵԼ
9. ԱՌԱՋԻ ԱՀԱՒՈՐ ԲԵՄԻՆ ԵՒ ԱՆԱՉԱՌ ԴԱՏԱՒՈՐԻՆ. ԱՂԱՉԵՄՔ[41]:

Այս եկեղեցուց հյուսիս-արևելք եղել է Կուսանաց վանքի տիպի մի մատուռ:

Ս. Հովհաննես.—Հոռոմոսի ամենախոշոր շինությունը ս. Հովհաննես եկեղեցին է: Գմբեթատահի այս տարբերակում արևելյան որմնամույթերի և խորանի միջև եղած տարածությունն արդեն վերացել է և որմնամույթերը ձուլվել են խորանի հետ: Եկեղեցու հյուսիսային, արևելյան և հարավային պատերին կան եռանկյունաձև որմնախորշեր, որոնց կամարաձև վերնամասը զարդաքանդակված է: Արևմտյան կողմից եկեղեցուն կից կառուցվել է սյունազարդ, շքեղ ու վիթխարածավալ գավիթը: Շինության արձանագրությունը փորագրված է արևմտյան մուտքի բարավորին: Մինչև Թ. Թորամանյանի ուսումնասիրությունը ս. Հովհաննես եկեղեցին համարվել է Հոռոմոսի հնագույն շինությունը: Սակայն, նախ՝ թվականը 1038, երկրորդ՝ Շահնշահի հեղինակ լինելը և երրորդ՝ «ՇԻՆԵՑԻ Ի ՎԱՆՍՍ ՀՈՌՈՄՈՍԻ» արտահայտությունը վկայում են, որ այս շինությունը կառուցվել է ս. Գէորգից հետո և նրա շինության ժամանակ Հոռոմոսում արդեն եղել են մեկից ավելի եկեղեցիներ:

Նախորդի համեմատ այս արձանագրությունը շարադրանքով շատ ավելի համեստ ոճով է գրված.

Ի ՆՁԷ (1038) ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅ—
ՈՑ ԵՏՈՒ ԵՍ ՅՈՎԱՆՆԷՍ
ՇԱՀՆՇԱՀ ՈՐԴԻ ԳԱԳԿԱ
ՇԱՀՆՇԱՀԻ ՁԻՄ ԱՅԳԻՆ,
ՈՐ Ի ԿՈՂԲ ՅԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ Ի
ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁՈՐ ՇԻՆԵՑԻ
Ի ՎԱՆՍՍ ՀՈՌՈՄՈՍԻ ՀԱՆ—
ԴԵՐՁ ԺԱՄԱՏԱՄԲՍ ԵՒ ՀԱՐԻՒՐ
ԲԵՌՆ ԱՂ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ
ԱՁԱՏ ՅԱՄԵՆԱՅՆ ՉԱՐԷ Ի ՀԱՅՐԱ—
ՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ ՊԵՏՐՈՍԻ
ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՈՒԽՏԻՍ
ՀԱՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ . . . . .
. . . .

[41] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 165:

Մեր կարծիքով ճիշտ չէ տեղադրված ՀԱՐԻՒՐ ԲԵՌՆ ԱՂ հատվածը: Այն պետք է հետևեր ԵՏՈՒ բային ԱՅԳԻՆ-ից առաջ կամ հետո, մինչև ՅԻՄ ՅԵԿԵՂԵՑԻՍ բառը՝ հետևյալ շարադրանքով. Ի ՆՁԷ ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ ԵՍ ՅՈՎԱՆՆԵՍ ՇԱՀՆՇԱՀ, ՈՐԴԻ ԳԱԳԿԱ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՏՈՒ ՀԱՐԻՒՐ ԲԵՌՆ ԱՂ, ՁԻՄ ԱՅԳԻՆ, ՈՐ Ի ԿՈՂԲ ՅԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՍՈՒՐԲ ՅՈՎԱՆՆԷՍ ՁՈՐ ՇԻՆԵՑԻ Ի ՎԱՆՍՍ ՀՈՌՈՄՈՍԻ ՀԱՆԴԵՐՁ ԺԱՄԱՏԱՄԲՍ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՈՒԽՏԻՍ ՀԱՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ ԱՁԱՏ ՅԱՄԵՆԱՅՆ ՉԱՐԷ...

Այս ամենը կասկածի տեղիք է տալիս արձանագրության փորագրման ժամանակի վերաբերյալ: Հնարավոր է, որ արձանագրությունը նորոգված լինի հետագայում: Ինչ վերաբերում է տառաձևերին, ապա նրանց մեջ աչքի է ընկնում ժամանակագրական տարբերությունը՝ Ա տառը այլևս չունի երրորդ ոտեղը, որը շատ բնութագրական էր X և, նույնիսկ, առաձին դեպքերում, XIII դարերին: Վ-ն, ընդհակառակը, գրված է հավասար ոտեղներով:

Բոլոր դեպքերում արձանագրությունը որպես վավերագիր պատկանում է ՆՁԷ (1038) թվականին: ՏՆ Պետրոսը հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձն է, հայր Հովհաննեսը՝ Հոռոմոսի վանահայրը, շահնշահ Հովհաննեսը՝ Գագիկի ավագ որդին, որը թագավորել է 1021—1042 թվականներին և Գագիկի ավագ որդին, որը թագավորել է 1021—1042 թվականներին և հայտնի է Հովհաննես Սմբատ անունով: Արձանագրությունը կարևոր է նրանով, որ այստեղ հիշատակվել է և՛ եկեղեցու և՛ ժամատուն-գավթի կառուցման մասին: Առաջին անգամ եկեղեցին նորոգվել է XIII դարում[42]:

Հոռոմոսի գավիթը հայ ճարտարապետության մեջ առաջինն է, որի հորինվածքում օգտագործվել ժողովրդական ճարտարապետության մեջ տարածված չորս սյուներով երդիկավոր բնակելի տան կառուցվածքը, որով և սկիզբ առավ գավթի տիպային կերպարի հաստատումը[43]:

Ճարտարապետական ձևերի պարզության, զանգվածայնության ու մոնումենտալության հետ մեկտեղ գավիթը հարդարված է ճոխ զարդարանքներով: Ուշագրավ են առաստաղի վարդյակները, որոնք այնուհետև մեծ տարածում ստացան:

Հոռոմոսը Հայաստանի ամենաերկարակյաց վանական հաստատություններից մեկն է: Եղած շինություններին XII—XIII դարերում ավելացրել են մի մատուռ և երեք նշխարատուն, որոնց մասին պահպանվել են վիմագրական տեղեկություններ:

Բագրատունիների անկումից հետո շինարարական առաջին տեղեկությունը 1198 թվականին Հոռոմոսում ջուր անցկացնելու մասին է: Արձանագրությունը տեղեկացնում է, որ նման աշխատանքներ կատարվել են տակավին «հին թագաւորաց» այսինքն՝ Բագրատունիների կողմից, սակայն չեն ավարտվել.

Ի ՈԽԷ (1198) ԹՒԻՍ ԵՍ ՀԱՅՐ ՄԽԻԹԱՐ ՍԱՏԱՐՈՒԹԵԱՄԲՆ ՍԱՐԳՍԻ ԿՐԱՒՆԱՒՈՐԻ ԵՒ ԿԱՄԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ՍԲ ՄԻԱԲԱՆԱՅՍ ՁԱԿԱՆՑ ՋՈՒՐՆ ՁՈՐ ՄԵՐ ՀԻՆ ԹԱԳԱՒՈՐԱՅՆ ԿԱՐԻ ՅՈՅԺ ՋԱՆԱՑԵԱԼ ԵՒ ՈՉ ԺԱՄԱՆԵՑԻՆ

[42] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 25:
Մնացականյանի կարծիքով գավթի զանգակակիր գմբեթը կառուցվել է 1296 թ. նո-
[43] Ս. Մնացականյանի կարծիքով գավթի զանգակակիր գմբեթը կառուցվել է 1296 թ. նո- Տե՛ս նաև М. րոգման ժամանակ: Տե՛ս „Архитектура армянских притворов", стр. 30, Տե՛ս նաև М. Ильина, Древнейшие типы жилищ Закавказья, „Сообщения Института истории и теории архитектуры Академии архитектуры СССР", вып. 5, М., 1946, стр. 35.

ԲԵՐԵԼ Ա̅Յ̅ ԿԱՄԱՒՔՆ ՄԵԾ ԾԱԽԻՔ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԱԾԱՔ ՋՋՈՒՐՍ Ի ՀՌՌՈՄՈՍԻ ՎԱՆՔՍ ԵՒ...[44]

Տեղում կատարած ուսումնասիրություններից հետո Թ. Թորամանյանը եկել է այն համոզման, որ դա եղել է բավականին բարդ շինարարական աշխատանք: «Ջրանցքի մնացորդների ուղղությունը կարծել կուտա, որ Քեռեկ լեռի վտակը բերել են վանքը: Ջրի ճանապարհը առնվազն 25—30 կիլոմետր շինելեն հետո, Ղոշեքի մոտ խոր փոսի մը վրայեն ջուրը անցնելու համար մի երկար կամուրջ ալ շիներ են, որուն մնացորդները կերևա հիմա ալ»[45]:

Ջրանցքի նորոգման վերաբերյալ պահպանվել են 1251 թվականի երկու արձանագրություն: Նորոգման պատճառը, ինչպես տեղեկացնում են արձանագրությունները, թաթարների ավերածություններն էին[46]:

Մատուռ.—Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցու հարավային և հյուսիսային կողմերում կան երկու քառանկյունի գմբեթակիր մատուռներ: Հարավային մատուռն ունի շինարարական արձանագրություն: Այն հրատարակել է Ն. Սարգիսյանը.

...Ի ՀԱՅԵԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ̅Ր̅ ՍԱՐԳՍԻ ԵՒ Ի ՏԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՆԱՅՍ ԳՐԻԳՈՐՈՅ, ՍՄԲԱՏԱ, ՎԱՀՐԱՄԱ... ԵՂԲԱՐՑ ԻՒՐԵԱՆՑ ԵՍ ԽՈՒԹԼՈՒ ԽԱԹՈՒՆՍ ԴՈՒՍՏՐ ՌՈՒԶՈՒՔԱՆԱ ՇԻՆԵՑԻ ԶԻՄ ՆԱԽՆԵԱՑ ՏԱՊԱՆԱՏՈՒՆՍ[47]:

Արձանագրությունը փորագրված է Խութլու խաթունի անունից, որն իրեն Ռուզուքանի դուստր է անվանում: Ռուզուքանն, ինչպես հայտնի է, Կյուրիկե Գ թագավորի դուստրն էր: Իրականացրել է մի շարք շինարարական ձեռնարկներ Շիրակում և այլուր: Թաղված է Հաղբատում: Ուշագրավ է ՇԻՆԵՑԻ ԶԻՄ ՆԱԽՆԵԱՑ ՏԱՊԱՆԱՏՈՒՆՍ արտահայտությունը, որով ընդգծվել է Կյուրիկյան տոհմի Բագրատունի լինելը: Այսպիսով պարզվում է, որ արձանագրության մեջ հիշատակված անձինք ապրել են XII դարի վերջին և XIII դարի սկզբին: Ռուզուքանից հետո, նրա դստեր գործունեությունը կարող էր միայն այդ ժամանակներին վերաբերել: Ժամանակաշրջանը ճշտվում է նաև արձանագրության մեջ հիշատակված տեր Սարգիսի անվամբ: Այստեղ, անկասկած, հիշատակված է Ապիրատ Պահլավունու որդի, Անիի աթոռակալ Սարգիս եպիսկոպոսը, որի մասին հիշատակություններ են պահպանվել 1209—1211 թվականների արձանագրություններում[48]: Այս երկու անձանց համեմատությունը միանգամայն բավարար հիմք է տալիս արձանագրությունը մոտավորապես XIII դարի առաջին տասնամյակով թվագրելու համար:

Առաջին նշխարատուն.—Հոռոմոսի վանքի համալիրի մեջ են մտնում միմյանց կից կառուցված երեք ուղղանկյուն նշխարատներ: Առաջին երկուսը տեղադրված են հյուսիսից-հարավ ուղղությամբ, երրորդը գտնվում է երկրորդի արևելակողմում: Նշխարատների առավել աչքի ընկնող առանձնահատկությունը արտակարգ շքեղ դեկորատիվ հարդարանքն է: Առաջին (փոքր) սենյակի պատերը ներքուստ զարդարված են եռափունջ գեղեցիկ որմնասյուներով և կամարներով: Հարդարանքի մեջ առանձնակի տեղ ունեն ստալակտիտային զարդաքանդակները, որոնք ժամանակին ծածկել են ամբողջ

44 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 149:
45 Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 305:
46 Տե՛ս Դ. Ալիշան, Շիրակ, էջ 25—26:
47 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 159—160:
48 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 96, 117, 120:

առաստաղը: XX դարի սկզբին պահպանվել էին նրանց միայն առաջին շարքերը՝ քիվի վերնամասում: Երրորդ սենյակը եղել է սյունազարդ: Ն. Սարգիսյանը տեղեկացնում է, որ սյուները կրել են տանիքի կամարները, ինչպես ժամատներում և գմբեթ չեն ունեցել[49]:

Սենյակներից մեկը Հ. Խալփախչյանի կարծիքով եղել է լսարան, մյուսը՝ մատենադարան, երրորդը՝ եկեղեցական սպասքի պահոց[50]: Ն. Սարգիսյանը վկայում է, որ համաձայն մի զրույցի առաջին սենյակը թագավորական խորհրդարանն է եղել, երկրորդը՝ վճռի տեղը, երրորդը՝ երդման: Մի այլ վարկածով սենյակներից մեկը ծառայել է որպես սեղանատուն, մյուսը՝ խոհանոց: Ս. Բարխուդարյանի կարծիքով սրանք, հնարավոր է, որ գրադարան-դպրոցներ լինեին[51]:

Շենքի կառուցման վերաբերյալ կան շինարարական արձանագրություններ, որոնցից հնագույնը թվագրված է 1229 և ըստ Ն. Սարգիսյանի ունի հետևյալ բովանդակությունը.

ՈՀԸ (1229) ՇՆՈՐՀԻՒՆ Ք̅Ի̅ ԵՍ ՎԱՉԷ ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՄԱ ԽԱԹՈՒՆ ԴՈՒՍՏՐ ԱՊՈՒՍԵՐՀԻՆ ՇԻՆԵՑԱՔ ԶՆՇԽԱՐԱՏՈՒՆՍ Ի ՎԱՆՔՍ ՀՌՌՈՄՈՍԻ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ̅Ն̅ ԲԱՐՍՂԻ, ՈՐԴՈ ԱՄԻՐ ԵՐԿԱԹԱՅ ԵՒ ՏՎԱՔ ԸՆՁԱ ԳՐԱՏԱ... ԶՄԵՐ ԳԱՆՁԱԳԻՆ ԱՅԳԻՆ Ի ՅԱՒՇԱԿԱՆ ԺԱՄՈ ՀԱՄԱՐ ԿԻ ՆՇԽԱՐԻ ԵՒ Ա̅Յ̅... ՏՈՒԱՔ ԵԿԵՂԵՑՈՅՍ [ՍՊ]ԱՍՔ ԵՒ ԵՐԿՈՒ ՔՇՈՅ ԱՐԾԱԹԻ. ԵՒ ՓՈԽԱՐԷՆ ՀԱՏՈՒՑԻՆ ՄԵԶ ՄԻԱԲԱՆՔՍ ՅԱՄԷՆ ԱՄԻ ՅԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ Ի ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷԻՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ̅Ք̅Ս. ԶԱՅԳԻՆ ՓԱԿԱԿԱ[Լ]Ն ՀՈԳԱ ԵՒ ԳԻՆՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՈՐ Ի ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԻ ՅԱՒՐՆ ՀԱՍԱ-ՌԱԿԱՑ ՍԷՐ ԱՌՆԷ. ԱՐԴ ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐԻՍ Ա[ՒՐ]ՀՆԻՆ Ի Ք̅Է̅. ԻՍԿ ԵԹԷ Ի ՄԵՐՈՅ ԿԱՄ ՅԱՒՏԱՐ[ԱՑ ՈՔ Զ]ԿՏԱԿՍ ՄԵՐ ԽԱՓԱՆԷ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ ԱՌԱՋԻ Ա̅Յ̅[52]:

Արձանագրության մեջ սենյակը բնորոշված է նշխարատուն՝ սրբացված իրերը, ինչպես և առհասարակ եկեղեցական սպասքը պահելու տեղ: Այդ ենթադրության համար հիմք է տալիս ԳՐԱՏԱ... կիսատ բառը: Ամենայն հավանականությամբ հենց այդ հիման վրա էլ Թ. Թորամանյանը գտնում է, որ այստեղ մատենադարան է եղել[53]: Հ. Խալփախչյանի կարծիքով ձեռագրերի ուսումնասիրությունից բացի այստեղ զբաղվել են նաև ուսուցմամբ:

Արձանագրությունից պարզվում է, որ 1229 թվականին կառուցվել է միայն մեկ սենյակը: Նշխարատուն այստեղ գործածված է եզակի թվով: Նշխարատան կառուցողը՝ Վաչեն, Վաչուտյանների տոհմից է: Հայտնի է իր արգասավոր շինարարական գործունեությամբ: Նրա գերեզմանը գտնվում է Հովհաննավանքում:

Երկրորդ նշխարատան կառուցման մասին տեղեկություն չկա:

Երրորդ նշխարատուն.—Հոռոմոսի XIII դարի վերջին քառորդի մյուս նշանավոր շինությունը երրորդ նշխարատունն է: Այդ մասին ավանդող շինարարական արձանագրության մեջ մենք նորից հանդիպում ենք Առյուծ Հոգևորյանցին, որը 26 տարի առաջ այստեղ նորոգել էր ջրմուղը.

49 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 160—161:
50 Տե՛ս О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении, стр. 121.
51 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ. ճարտարապետներ..., էջ 77:
52 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 162:
53 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 2, էջ 278:

ԹՎ ՉԻԶ (1277) ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԱՌԻԻԾ ՀՈԳԵԻ[ՈՐԵԱՆՑ] ՍԱՐԳՍԻ ՈՐԴԻՍ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ՍԷԴԱ ՇԻՆԵՑԱՔ Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԶՆՇԽԱ[ՐԱ]ՏՈՒՆՍ Ի ՄԵՐ ԺԱՄԱՏԱՆ ԴՈՒՌՍ ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ Ս... ՋՈՐ Ի ԿՍ... ԱՅ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ՎԱՐՊԵՏ ՑՐԵՐՍ ԿԱՐՆՈՑ ՔԱՂԱՔԱՑԻ[54]:

Այս սենյակը ևս արձանագրության մեջ անվանված է նշխարատուն: Ամենևին չբացառելով վերջինիս նաև լսարան, թերևս, խորհրդարան լինելու հնարավորությունը, կարծում ենք, որ սենյակների առաջնային նպատակը նշխարատունն է եղել: Երրորդ նշխարատունը նախորդների համեմատությամբ նկատելի ընդարձակ է և, ըստ ամենայնի, կարող է ծառայել որպես խորհրդարան կամ լսարան:

Արձանագրության մեջ հիշատակված է կառուցող ճարտարապետի անունը՝ «Վարպետ Ցրերս Կարնոյ քաղաքացի»:

Կան նաև մի շարք նորոգման արձանագրություններ, որոնք վերաբերում են XIV—XVII դարերին: Դժբախտաբար այդ նորոգումների ճարտարապետական պատկերի մասին տեղեկություններն խիստ բացակայում են:

Հաղթակամար.—Հոռոմոսի վանքից հարավ, Անի տանող ճանապարհին, կա մի հոյակապ և ինքնատիպ շինության՝ հաղթակամարի ավերակներ: Հաղթակամարի երկու կողմերից բարձրացված են գմբեթակիր փոքրածավալ մատուռներ: Հարավային և հյուսիսային կողմերում բացված մուտքերից ներսի աստիճանները տանում են հաղթակամարի վերին հարթակը: Ուսումնասիրողների կարծիքով այս շինությունը խորհրդանշել է Անիի դարպասը[55]: Ն. Տոկարսկին ենթադրում է, որ հաղթակամարը կառուցվել է որևէ նշանավոր իրադարձության կապակցությամբ[56]: Հարցի անորոշության պատճառը մատենագրության մեջ այս շինության վերաբերյալ տեղեկությունների բացակայությունն է: Ն. Տոկարսկին գտնում է, որ կամարի ճակատային մասում եղել է կանգնեցման առիթը բացատրող արձանագրություն: Եթե հուշարձանի նպատակային իմաստը տակավին մնում է անորոշ, ապա կառուցման ժամանակը պարզելուն, կարծում ենք, որ կարող է օգնել հյուսիսային պատին փորագրված հետևյալ համառոտ արձանագրությունը.

ՇԺԱ (1102) ԵՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԳՐԵՑԻ[57]

Սա գրչի անվան հիշատակություն չէ, որովհետև այդպիսիները փորագրվում էին հատուկ պատվերով արձանագրությունների տակ, որպես այդ արձանագրությունը փորագրող: Արձանագրության նպատակը թվականի և անձի հիշատակումն է, որոնք պետք է ընդունել կառուցող ճարտարապետի անունը և կառուցման թվականը:

Բագնայր.—Բագնայրն ընկած է Անիից 8—10 կիլոմետր արևմուտք: Հուշարձանախումբը բաղկացած է գմբեթարդ եկեղեցուց, գավթից, սեղանատնից, հարավակողմյան սրահից, երկու ուղղանկյուն գմբեթակիր մատուռներից: Այս խմբից հեռու, գյուղի հյուսիս-արևմտյան կողմում կանգնած է ևս մի եկեղեցի:

Թ. Թորամանյանը տեղեկացնում է, որ եկեղեցին ունի երկհարկանի ավանդատներ[58]: Գավիթն իր կառուցվածքային մանրամասներով շատ նման է Հոռոմոսի գավթին և թվագրվում է XI դարով: Այստեղ ևս չորս սյուներով ներքին տարածությունը բաժանված է ինը առանձնամասերի: Առաստաղը ձևավորված է զարդաքանդակներով և բազմերանգ քարերից պատրաստված զարդաձևերով: Կենտրոնական մասն ունի ստալակտիտային գմբեթ:

Եկեղեցու կառուցման մասին տեղեկություններ կան Ասողիկի, Ս. Անեցու, Կ. Գանձակեցու մոտ:

Ասողիկը Բագնայրի եկեղեցու կառուցման փաստն արձանագրում է Մարմաշենի հետ միասին: Նկարագրելով ՆԽԷ (998) թվականի անցքերը նա նշում է, որ այդ թվականին «ԶՄարմաշէն և զԲգներն շինեաց»[59]:

Ասողիկին հակառակ Անեցին գրում է. «ՌԺԲ (1012) Սմբատ Մագիստրոսն շինեաց զՀրեշտակաբնակ և զփափագատենչ վանքն ու Բագնայր յորջորջիւր ժողովեալ աստուածային արանց»[60]:

Գանձակեցին որոշակի թվական չի հաղորդում, սակայն նրա վկայությունը հաջորդում է Անիի կաթողիկեի ավարտման մասին տեղեկությանը, որն ավելի մոտ է Ս. Անեցու նշած թվականին[61]:

Հ. Աճառյանը Բագնայրի եկեղեցու շինությունը վերագրել է Սմբատ Թոռնեցի մագիստրոսին, որը ծագումով Բագրատունի էր[62]: Սակայն Ասողիկի համաձայն այս Սմբատ Մագիստրոսը Պահլավունի էր՝ նշանավոր սպարապետ Վահրամ Պահլավունու որդին: Թ. Թորամանյանը Բագնայրը համարում է Պահլավունիների ձեռակերտ[63]: Եկեղեցին շինարարական արձանագրություն չունի, այդ պատճառով անհնար է վերջնականապես պարզել տեղեկությունների մեջ եղած տարաձայնությունը: Բոլոր դեպքերում ավելի վստահելի է թվում Ասողիկի վկայությունը՝ որպես ժամանակակցի: Արձանագրություններից հնագույնը նվիրատվական է և թվագրված է 1042:

Պահպանվել են մատուռների շինարարական արձանագրությունները: Դրանցից մեկն ունի հետևյալ բովանդակությունը.

ԵՍ ԽԱՉԵՂԲԱՅՐ ՈՐԴԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՍԻՍՄԱՄ ՇԻՆԵՑԱՔ ԶԳԵՐԵԶՄԱՆԱՑ ՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՏՈՒԱՔ ԶՄԵՐ ՏԱՃԱՐՆ ԵՒ ԶՍԱՐԱԽՈՅԹՆ ԵՒ Ի ՆԵՐՔԵՒՆ ՏՈՒՆ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՍ ԵՒ ՀԱՅՐ ՍԻՄԷՈՆ ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՅՐՔՍ ՓՈԽԱՐԷՆ ՀԱՍՏՈՒՑԻՆ ՅԱՄԷՆ ԱՄԻՆ :Զ: ԱՒՐ ԺԱՄ :Գ: ԱՒՐ ԽԱՉԵՂԲԱՒՐՆ :Գ: ՍԻՍՄԱՄԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐԻՍ ԱՒՐՀՆԵՍՑԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ[64]:

Շինության ժամանակը որոշելու միակ հնարավորությունը հիշատակված անձանց անուններն են: Խաչեղբայրի անունը հանդիպում է Հոռոմոսի և Բագնայրի մի քանի արձանագրություններում: Դրանցից մեկը թվագրված է 1201: Հիմնվելով այդ թվականի վրա արձանագրությունը ևս հնարավոր ենք համարում թվագրել 1201-ին մոտ տարիներով:

Երկրորդ մատուռը ունի շինարարական երկու վավերագիր: Մեկը փորագրված է մուտքի բարավորին.

Ի ՇՂԴ (1145) ԹՎ. ԵՍ ԱԶԻԶՍ ՄԵՂՈՒՑԵԱԼ ԱՂԱԽԻՆ ՔԻ ԱՒՐՀՆԵՑԻ ԶԵԿԵ-

54 Ն. Սարգիսեան, *Տեղագրութիւնք...*, էջ 183:
55 *Տե՛ս* Լեո, *Անի*, էջ 129, 130, Վ. Հարությունյան, *Անի քաղաքը*, էջ 22, 23:
56 *Տե՛ս Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 279.
57 Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 18:
58 *Տե՛ս* Թ. Թորամանյան, *Նյութեր...*, 2, էջ 195:

59 Ասողիկ, էջ 270:
60 Ս. Անեցի, էջ 105:
61 *Տե՛ս* Գանձակեցի, էջ 89:
62 *Տե՛ս* Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Դ, էջ 549—550:
63 *Տե՛ս* Թ. Թորամանյան, *Նյութեր...*, 1, էջ 263, 308, 309:
64 Ն. Սարգիսեան, *Տեղագրութիւնք...*, էջ 183:

ՂԵՑԻՍ ՋՍԲ ԳՐԻԳՈՐ Ի ՅԻՇԱՏԱԿ ՈՐԴԻՈ ԻՄՈ ԳՐԻԳՈՐՈ Ի ՁԵՌՆ ՀԱԻՐ... ՄԱԻՐ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ...[65]։

«Սուրհնեցի» արտահայտության տակ, անկասկած, շինարարական բովանդակություն է թաքնված, որովհետև եկեղեցին (մատուռը) կարող է օրհնվել միայն հիմնադրման դեպքում[66]։

Երկրորդ արձանագրությունը փորագրվել է եկեղեցու հարավային պատին.

ՈՀՀ (կամ ՈՀԲ) [Թ]ՈՒ[ԱԿԱՆ]ՈՒԹ[ԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՍ] ԽԱԹՈՒՆ[Ս ԱՄՈՒՍԻՆ] ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻՆ ԽԱՒՌԱԺԻՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ Ի ՄՈԳՈՒԱՑ ՈՐ Է Ի ՀՆՑԷ... ՋԱՏԵԱԼ ԵՒ ԲԱԺԱՆԵԱԼ ՍԱՀՄԱՆԱՒՔՆ ԵՒ ԱՅԼ... ՀՐԵՇՏԱԿԱԲՆԱԿ ՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ Ի ԲԱԳՆԱՅՐՍ ՅԱՂԱԳՍ ՅԻՇԱՏԱ[Կ]ԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՄԵՐՈ ՍԱՄՆԱՅԻՆ ՈՐ ԿԻՍԱՒՐԵԱ ՓՈԽԵՑ[ԱՒ] ԵՒ ՍՈՒԳ ՄԵԾ ԵԹՈՂ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ ՅՈՐՈՑ ՅԻՇԱՏԱԿ ՇԻՆԵՑԻ Ի ՎԵՐԱՅ ՏԱՊԱՆԱՏԱՆՍ։ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՍ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ՀԱՅՐ ՍԻՄԵՈՆ ԵՒ ԱՅԼ ՍՈՒՐԲ ԵՂԲԱՐՔՍ ՅԱՆՁՆ ԱՌԻՆ ՅԱՄԷՆ ԱՄԻ ։Խ։ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳԵԼ ՔՐԻՍՏՈՍ ։Ի։ ԱՒՐ ԽԱԹՈՒՆԻՆ ։Ժ։ ԽԱՒՌԱՍԻՆ ։Ժ։ ՍԱՄՆԱՒՆ ԱՆԽԱՓԱՆ ՄԻՆՉԵՒ Ի ԾԱԳՈՒՄՆ ՈՐԴՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ. ԵԹԷ Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈՔՈՒՆՑ ՁՄԵՐ ԸՆՁԱՅՔՍ ՀԱՆԷ Ի ՍՈՒՐԲ ՈՒԽՏԷՍ... ԿԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՁՄԵՐ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ ԱՌԱՋԻ ԱՍՏՈՒԾՈՅ. ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐԻՍ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ[67]։

«Տապանատունս» բառից երևում է, որ խոսքը մատուռներից մեկի մասին է։ Մեր ձեռքի տակ եղած լուսանկարի մեջ ուշադրություն է գրավում մի կարևոր հանգամանք. Ագիգի արձանագրությունից վերև այդ մատուռի պատը նկատելիորեն տարբերվում է ստորինից իր թարմությամբ և ակնհայտորեն տարբեր ժամանակի շարվածք է։ Նկատի ունենալով այս իրողությունը, ինչպես և Խաթունի արձանագրության մեջ գործածված «ի վերայ տապանատունս» արտահայտությունը, կարծում ենք, որ Խաթունն իր շինությունը կանգնեցրել է նախապես գոյություն ունեցող Ագիգի դամբարանի վրա։

Արձանագրությունից պարզվում է, որ կառուցողը Խաթունն է, նրա ամուսին Խավռասը Զաքարեի և Իվանեի մերձավորներից էր և ծառայությունների համար նրանցից կալվածքներ էր ստացել[68]։ Այդ կալվածքներն էլ իր որդու վաղաժամ մահից հետո կտակել էր Բագնայրի եկեղեցուն։

Սեղանատան վերաբերյալ նկարագրական տեղեկություններ մասնագիտական գրականության մեջ չի պահպանվել։ Անհայտ է նաև նրա կառուցման ժամանակը։

Ութանկյուն եկեղեցին Թ. Թորամանյանի կարծիքով կարելի է թվագրել XIII դարով[69]։

Մարմաշեն.—Պահլավունիների կառուցած ամենափառահեղ շինությունը Ախուրյանի ձախ ափին գտնվող Մարմաշենի վանական շենքերի խումբն է։ Գեղարվեստական ու շինարարական առանձնահատկություններով Մարմաշենի կառույցները միջնադարյան հայ ճարտարապետության հրաշագեղ հուշար-

---

[65] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 114—115։

[66] Տե՛ս Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 114—122։

[67] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 179։

[68] Տե՛ս Գ. Հովսեփեան, Նիւթեր..., Ա., էջ 18։

[69] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 309։



Անի. Սմբատի պարսպապատերը



Անի. Մայր տաճար

ձաններից մեկն են։ Եկեղեցիները տարբեր են իրենց հորինվածքային տիպերով։ Կենտրոնական մեծ և փոքր եկեղեցիները գմբեթասրահ են, ճոխ մշակված կառուցվածքային մանրամասներով։ Հարավային եկեղեցին չորս ավանդատնով կենտրոնագմբեթ շինություն է, իսկ արևմտյան կողմում կառուցված է կլոր հատակագծով մի եկեղեցի։ Հիմնական խմբից մոտ 200 մետր դեպի հյուսիս կանգնած է գերեզմանոցի մատուռը, որը քառաթև կենտրոնագմբեթ շինություն է։ Մասնագիտական գրականության մեջ այս մատուռը, իբրև քառաթև կենտրոնագմբեթ կառուցվածք, թվագրվում է VII դարով[70]։ Սակայն գմբեթից պահպանված մի հատվածը ցույց է տալիս նրա կլոր թմբուկը, որը VII դարի լինել չի կարող։ Ինչպես երևում է ամբողջ շինության կառուցվածքային միասնությունից, գմբեթը հետագայի վերակառուցում ևս չէ։ Նկատի առնելով այս հանգամանքը, կարծում ենք, որ մատուռը կառուցված կարող է լինել X—XI դարերում։

Հետաքրքիր է կլոր եկեղեցին։ Այն կլոր շրջանակող պատերի մեջ առնված քառախորան մի շինություն է, որի չորս անկյուններում ավանդատներ են տեղադրված։ Այս տիպի ևս երկու շինություն կա Այրարատում. մեկը՝ Գառնիի հեթանոսական տաճարի մոտ, մյուսը՝ Խծկոնքում։ Երեքից թվագրված են Գառնիի և Խծկոնքի եկեղեցիները։

Կառուցվածքային առումով առանձնակի ուշադրության է արժանի գմբեթասրահ մեծ եկեղեցին։ Արևմտյան հատվածի որմնամույթերը պահպանվել են, իսկ արևելյան կողմում՝ ընդհուպ մոտեցվել խորանի անկյունապատերին։ Լավ է վերարտադրված խորանի և արևելյան որմնամույթերի միջև եղած տարածության աստիճանական վերացման հետևողականությունը։ Ժամանակագրությամբ սրան հաջորդող Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցում, ինչպես արդեն տեսանք, այս երևույթի հետևողական ընթացքը հանգեցրեց որմնամույթերի լրիվ ձուլմանը խորանի կողմնային պատերի հետ։ Եթե զարգացման այդ ընթացքը Սյունիքում իր վերջնական պտուղները տվեց տակավին X դարի սկզբին (Քարակոպ), ապա Այրարատի նահանգում X—XI դարերը աստիճանական խմորման շրջան էին և չորս ավանդատներով գմբեթասրահների առաջին օրինակները երևան եկան միայն XI դարում։

Մարմաշենի եկեղեցիներից մեծ կաթողիկեն է, որ ունի շինության արձանագրություն։ Այն փորագրված է հարավային պատի միջին մասում, պատուհանի տակ, բավականին գեղեցիկ և համաչափ տառերով։ Տեղեկություններ են պահպանվել նաև մատենագիրների մոտ։ Սամուել Անեցին գրում է, որ «Սկիզբն շինուածոյ մեծանուն և վայելչաշէն զարմանակերտ և հոյակապ ուխտին Մարմաշինոյ՝ ի քրիստոսասէր իշխանանց իշխանէն Վահրամայ. սկսեալ ի ՆԼԵ (986) թուին և աւարտեալ ի ՆԽԳ (994) ին»[71]։ Շինության սկզբի թվականը միանգամայն համընկնում է արձանագրության մեջ հիշատակված թվականին, բայց ավարտման տարեթիվն արձանագրության մեջ նշված է ՆՀԸ (1029)։ Ստացվում է 35 տարվա տարբերություն։ Արձանագրության թվականն ակներևաբար նկատի ունի բոլոր եկեղեցիների ավարտման տարեթիվը։ Սամուել Անեցու նկարագրածը, հավանաբար, վերաբերում է միայն մեծ եկեղեցուն, որի կառուցմամբ հիմք է դրվել տեղի միաբանությանը։ Իսկ արձանագրությունը փորագրվել է բոլոր եկեղեցիների

[70] Տե՛ս նույն տեղում, էջ 246, 317։

[71] Ս. Անեցի, էջ 103։

շինությունից հետո, որոնք, ի դեպ, ճարտարապետությամբ, տեղադրությամբ և ձևավորմամբ կառուցվել են համալիրային ամբողջականության ակնկալումով, որը առանձնապես շեշտված է արևելյան կողմում, ուր ընդգծվել են երեք եկեղեցիների ներդաշնակ համաչափությունները: Իսկ այս երեքի մեջ երկուսն ունեն նաև պատերի նույնատիպ ձևավորում: Բոլոր դեպքերում արձանագրությունը տեղեկացնում է ոչ թե եկեղեցու, այլ վանքի հիմնադրման մասին:

Արձանագրության համաձայն եկեղեցիները կառուցվել են Վահրամ Պահլավունու կողմից, որին օգնել են նրա մայրը՝ Շուշիկը և Վասակ, Աբլղարիբ ու Համզե եղբայրները: Նշված է նաև, որ մինչև Մարմաշենի շինությունների ավարտելը Պահլավունիները կառուցել են նաև բազմաթիվ այլ շինություններ: Ինչպես հայտնի է, Անիում կանգնեցրած նրանց եկեղեցիները մի փոքր ավելի ուշ են թվագրված, հետևապես պետք է ենթադրել, որ խոսքը վերաբերում է այլ շինություններին: Տեղում եղած մյուս կառույցները ևս չեն կարող համարվել, որովհետև արձանագրության մեջ տեղականը միանգամայն պարզորոշ ձևով է հիշատակված և առանձնացված այլ տեղի շինություններից: Չի բացառվում, որ դրանք կարող է Ամբերդի, Բջնիի (բերդի) և Պեմզաշենի շինությունները լինել: Բոլոր դեպքերում այս վկայությունն արժեքավոր է նրանով, որ վկայում է Պահլավունիների մշակութային լայն գործունեության մասին:

Արձանագրությունը միաժամանակ նաև նվիրատվական է: Եկեղեցիները կառուցելուց հետո Պահլավունիները մեծ նվիրատվություններ են արել հիմնադրված վանքին, որն, ինչպես երևում է ԶՏԵՂԻ ՀԱՆԳՍՏԵԱՆՍ ՄԵՐՈՑ արտահայտությունից, եղել է նրանց տոհմական կալվածքն ու հանգստարանը:

Ահա արձանագրությունը.

1. ՇՆՈՐՀԻՒՆ Ա̅Յ̅ ԵՍ ՎԱՀՐԱՄ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ԵՒ ԱՆԹԻՊԱՏ ՊԱՏՐԻԿ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻ ԻՇԽԱՆԻ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ Ի ՑԵՂԷ
2. ՊԱՀԼԱՒՈՒՆԻ ԵՒ Ի ԶԱՐՄԻՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՈՐ ՅԱՂԱԳՍ Ի Ք̅Ս̅ ՅՈՒՍՈՅՆ ՀԻՄՆԱԴՐԵՑԻ ԶՍՈՒՐԲ ԵՒ Զ—
3. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՈՒԽՏՍ ՄԱՐՄԱՇԷՆ ՍԿՍԵԱԼ Ի ՆԼԷ (988) ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱ— ՅՈՑ ՅԱՒՈՒՐՍ ՍՄԲԱՏԱ ՈՐԴՒՈՅ ԱՇՈՏՈՅ ՀԱՅՈՑ
4. ԹԱԳԱՒՈՐԻ ՄԻՆՉԵՎ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՈՐԴՒՈՅ ԳԱԳԿԱ ՀԱՅՈՑ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱՌՆ ԻՄԱՍՏՆՈՅ ՇԻՆՈՂ ԵՒ ԽԱՂԱ—
5. ՂԱՐԱՐԻ ԵՒ Ի ԹՈՒԱԿԱՆՍ ՀԱՅՈՑ ՆՀԸ (1029) ԵՒ ԿԱՏԱՐԵՑԱՔ ՄԵԾ ՋԱՆԻՒ ԲԱԶՈՒՄ ԾԱԽԻՒՔ․ ԵՍ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ՇՈՒՇԻԿ ՀԱՅՈՑ
6. ՏԻԿՆԱՑ ՏԻԿԻՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՄ ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆ ՈՐ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՒ Ի ԹՈՒՐՔԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՒ ԱԲԼԽԱՐԻԲ
7. ՀԱՅՈՑ ՄԱՐԶՊԱՆ ԵՒ ՄԱՆՈՒԿՆ ՀԱՄԶԷ, ՈՐՔ ԷԱՔ ԱՄԵՆԱՅՆ ՏԱՄԲ ԵՒ ՏՈՀՄԻՒ ՀԱՒԱՏԱՐԻՄՔ ՏԵՐԱՑՆ ՄԵՐՈՑ ԵՒ ՆԱ—
8. ՀԱՏԱԿԵԱԼ Ի ՎԵՐԱ ՏԱՆՍ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՐԵԱՄԲ ՄԵՐ ԵՒ ՈՐԴՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԳԱՆՁՈՒՑ ԱՌԱՏՈՒ—
9. ԹԵԱՄԲ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀՆԱՐԻՒՔ ԽՆԴՐԵԱՔ ԶԽԱՂԱՂՈՒԹ̅Ն̅ ԱՇԽԱՐՀԻՍ ԵՒ ԶՀԱՍՏԱՏՈ̅Ւ̅ԹՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ․ ՇԻՆԵՑԱՔ ԵՒ ԱՅԼ

10. ԲԱԶՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՎԱՆՈՐԱՅՍ ԲԱՅՑ ԶՏԵՂԻ ՀԱՆԳՍՏԵԱՆՍ ՄԵՐՈՑ ԱՌԱՒԵԼ ՊԱՏՈՒՈՎ ՄԵԾԱՑՈՒՑԱՔ ԵՒ ԼՒԱՑՈՒՑԱՔ
11. ԱՄԵՆԱՅՆ ԳՈՅԻՒՔ ԼԵՐԱՄԲՔ ԵՒ ԴԱՇՏԱՒՔ. ԱՒԱՆԴԵՑԱՔ Ի ՍԱ ԳԵՂՍ ԵՒ ԱԳԱՐԱԿՍ ԳԱՆՁԱԳԻՆՍ ԶԲԱԳԱՐԱՆԻ ԳԵՂ ԵՒ ԶԻՒՐ ԱԳԱՐ—
12. ԱԿՆ ԶԳՈԳԻՍՆ ԵՒ ԶՊԱՏԱՐԱԳՆ ԶԱՐԱԳԵԾ ԵՒ ԶԱԶԱՏԱ ԶԱՍՄԱՆԷՄՆ ԵՒ ԶԵԶՆԿԱՅՆ. Ի ՅԱՒՇԱԿԱՆԻ ԱՅԳԻՔ ԵՒ :Գ: ՋԱՂԱՑ ԵՒ :Բ: ՋԱՂԱՑ
13. Ի ԴՈՂՍ Ի ՅԱՇՏԱՐԱԿԻ ԱՅԳԻ Ի ԿԱՐԲՈՑ ԴԱՇՏԻ ԱՅԳԻ Ի ՍԵՐԿԵՒԼԷԻ ԱՅԳԻ Ի ՎԺԱՆ ԱՅԳԻ Ի ՄՐԵՆԻ ԱՅԳԻՔ Ի ՅԱՆԻ ՏՆԵՐ ԵՒ ԿՂՊԱԿԱ—
14. ՆԻ. ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԱՔ ԶՍԱ ԱՄԵՆԱՅՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՄԲ Ի ՅԻՇԱՏԱԿ ՅԱՒԻ- ՏԵՆԻՑ ՄԵԶ ԵՒ ՈՐԴՒՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԿԱՐԳԵՑԱՔ Ի ՁԵՌՆ ՍՈՒՐԲ ՀԱՒՐ
15. ԵՐԵՄԻԱՒ ԵՒ ՈՐ ԶԿՆԻ ՅԱՋՈՐԴԵՑԱՒ ՍՈՍԹԵՆԷՍ ՆՈՐԻՆ ՈՐԴԻԵԱՑԵԱԼ ԵՒ ՓՈԽԱՐԷՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԿԱԼԵԱԼ ՄԵՐ Ի ԺԱՌԱՆԳԱՒՈ—
16. ՐԱՑ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ՏԱՐԻՆ :Զ: ՔԱՌԱՍՈՒՆՔ՝ ԱՆԽԱՓԱՆ ՄԻՆՉԵՒ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ․ ԱՐԴ ԵԹԵ ՈՔ Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ ԱՒԱԳ ՈՐ ԶՄԵՐ ԶՏՈՒՐՍ Ի ՍՈՒՐԲ
17. ՈՒԽՏԷՍ ՊԱԿԱՍԵՑԱՆԷ ԿԱՄ ՀԱՅՐ ՈՐ ԶՄԵՐ ԺԱՄՍ ԽԱՓԱՆԷ ԻՆՔՆ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻ Ի ՔՐԻՍՏՈՍԷ ԵՒ ԴԱՏՈՂ ՆՈՐԱ ՍԱՏԱՆԱ ԼԻՑԻ ԵՒ ՄԻ ՏԵՍՑԷ ՆԱ ԶՓԱՌՍ Ա̅Յ̅ ԻՍԿ ՈՐՔ
18. ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵՆ ԶԱՒԱՆԴՍ ՄԵՐ ԱՒՐՀՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ[72]

Մեծ եկեղեցու արևմտյան կողմում ժամանակին եղել է ուղղանկյուն գավիթ, որի միայն հյուսիսային և արևմտյան պատերի ստորին մասերն են պահպանվել: Սելջուկյան տիրապետության շրջանում հուշարձանը ավերվել է և 1225 թվականին նորոգվել[73]:

Զաքարյանների տիրապետության հաստատման շրջանում մի շարք հին նախարարական տներ որոշ չափով կարողացան վերականգնել իրենց տերիտորիալ և հասարակական իրավունքները: Այդ նախարարական տներից էին Պահլավունիները, որոնք վերահաստատվեցին Մարմաշենում և, հավանաբար, Շիրակի այլ՝ իրենց վաղեմի կալվածքներում: Այդ է վկայում Մարմաշենի մեծ եկեղեցու հյուսիսային պատին փորագրված նորոգման արձանագրությունը[74], որից տեղեկանում ենք նրանց կատարած մեծածախ շինարարական աշխատանքների և վանքի նորոգման մասին:

* * *

Գմբեթասրահներն իրենց տարատեսակ հորինվածքային ձևերով Այրարատում բավականին երկար կյանք ունեցան, թեև նրանց կառուցվածքային մանրամասները, արտահայտված ընդհանուր համաչափություններում՝ մույթերի, նրանց վրա դրված կամարների և, վերջապես, տանիքի ու գմբեթի ձևերում, տարբեր են: Տիպային ընդհանրությունը չորս որմնամույթերն են, որոնք որպես V—VII դարերի կառուցողական հնարանք՝ օգտագործվել են ներքին ծավալի մեծությունն ապահովելու համար:

---

[72] *И. А. Орбели*, Надписи Мармашена, СПб., стр. 1.
[73] *Տե՛ս նույն տեղում, էջ 2:*
[74] *Տե՛ս И. А. Орбели*, Избр. труды, стр. 443.

Գմբեթասրահների ատիճանական վերափոխման ճանապարհին ամենաէական օղակն այն տարբերակներն էին, որոնց մեջ ի հայտ եկան նրանց կառուցվածքային նոր ձևերը։ Այդ տարբերակում արևելյան զույգ որմնամույթերը ձուլվեցին խորանի անկյունապատերի հետ և կրճատվեց տարածությունը խորանի և որմնամույթերի միջև։ Արևմտյան կողմում մույթերը պահպանվեցին։ Քանի որ այս տարբերակն առաջ եկավ հատկապես Այրարատում և ունեցավ այնպիսի ինքնատիպ օրինակներ ինչպես Հոռոմոսի ս. Հովհաննես, Կեչառիսի ս. Գրիգոր, Մաքրավանքի, Բջնիի և Պեմզաշենի եկեղեցիները, ուստի այն պետք է համարել Այրարատի ճարտարապետական դպրոցի արգասիք։

IX—XI դարերում Այրարատի ճարտարապետության մեջ ևս երևաց Սյունիքում մշակված չորս ավանդատնով, առանց որմնամույթերի առավել կատարյալ տարբերակը (Ամբերդ, Մարմաշենի փոքր եկեղեցի), որը, սակայն, այստեղ մեծ տարածում չունեցավ, գուցե այն պատճառով, որ Այրարատում առավելապես տարածում գտան հորինվածքային այլ տիպերը, այդ թվում ամենաինքնատիպ՝ բոլորաձև հատակագծով եկեղեցիները։

Այրարատի ճարտարապետական դպրոցի արգասիք էր նաև փոքրածավալ միանավ գմբեթասրահների տարբերակը։ Այս եկեղեցիներում սկզբունքորեն պահպանված են բոլոր չորս որմնամույթերը, սակայն, ընդհանուր ծավալի փոքր չափերի հետևանքով նրանք ևս փոքր են և ներքին տարածությունը չեն մասնատում։ Այստեղ պահպանվել է միայն որմնամույթերի կառուցվածքային իմաստը՝ նրանք իրենց վրա կրում են գմբեթակիր կամարները։ Այրարատում այս տիպի կառույցներ են Անիի շրջանի Հայկաձոր գյուղի և որոշ չափով նաև Արգինայի եկեղեցիները։

Ինչպես արդեն ասացինք, գմբեթասրահների երկրորդ տարբերակը կազմում են այն եկեղեցիները, որոնց արևելյան որմնամույթերը ձուլված են խորանի անկյունապատերին, բայց արևմտյան զույգը պահպանվում է։ Այս տարբերակն Այրարատում մեծ տարածում գտավ թերևս այն պատճառով, որ արևելյան հատվածի կրճատմամբ, ըստ էության, լուծվեց գմբեթասրահը կենտրոնագմբեթ դարձնելու ամենակարևոր խնդիրը։ Այս տարբերակի կառույցներ են Պեմզաշեն գյուղի Մակարավանք[75] և Կարմիր վանք, Բջնիի, Կեչառիսի, Մաքրավանքի ու Սոլակի եկեղեցիները։

Մակարավանք.—Գտնվում է Պեմզաշեն գյուղից մոտ 1—2 կիլոմետր դեպի հարավ, ձորի մոտ։ Եկեղեցու գմբեթն այժմ խոնարհված է, սակայն Թ. Թորամանյանի հրատարակած մի լուսանկարից երևում է, որ այն ունեցել է կլոր թմբուկ[76]։ Արևմտյան պատին կից պահպանվել է կամարածածկ շինության մնացորդ։ Եկեղեցու պատի վրա պահպանված հետքը ցույց է տալիս, որ այն բավականին մեծ է եղել և ծառայել է որպես գավիթ։

Արձանագրության մեջ (որը գտնվում է հարավային ավանդատան արևմտյան պատին) շինությունները հիշատակված են հոգնակի թվով, սակայն մոտակայքում այլ շինությունների հետքեր չեն նշմարվում։ Եկեղե-

---

[75] Շինարարական արձանագրության մեջ եկեղեցին անվանված է ս. Գևորգ։ Ինչպես ցույց են տալիս ուշ շրջանի արձանագրությունները եկեղեցին Մակարավանք է կոչվել հետագայում։

[76] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 2, էջ 139, նկ. 107։

ցուց արևմտուք, մի քանի քայլի վրա, ձորի մեջ կա թաղածածկ քառանկյունի ուշ շրջանի մի կառույց։ Արձանագրության մեջ հիշատակված «զվանքս» և «եկեղեցիքս» բառերը կարող են վերաբերել միայն տեղի եկեղեցիներին, որոնցից միայն մեկն է պահպանվել։ Հավանաբար այստեղ ժամանակին խոշոր վանք է եղել։

Արձանագրությունը խիստ վնասված է և անավարտ։ Առաջին վեց տողերից բացակայում են վերջավորությունները։ Հրատարակելով արձանագրության միայն առաջին հինգ տողերը, Ալիշանը և մյուս հրատարակողները[77] չեն իմացել անգամ, որ դա շինարարական արձանագրություն է։ Ավելի շատ վնասված է 6-րդ տողը։ Նախ, կասկածելի է 5-րդ տողի վերջում ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՍ։ 6-րդ տողի սկզբում նշմարվում է ...ՏՈՆԻՍ՝ անվան վերջավորությունը, որը ոչ մի կերպ չի կապվում ՀԱՅՐԱՊԵՏՍ բառի հետ։ Վերականգնումը դժվարանում է նաև նրանով, որ 6-րդ տողը սկսվում է ...ԵՐՈՐԴԻՍ բառով, որը կարգային թվականի վերջածանց լինել չի կարող, քանզի գրված է մեկ Ր-ով։ Այս բառը մեր կարծիքով [ՔՎ]ԵՐՈՐԴԻՍ բառի կրկնությունն է և փորագրվել է այն պատճառով, որ վեցերորդ տողը տեղադրվելով երկու քարերի հանդիպման եզրին՝ փորագրելիս կոտրատվել է։ Ճիշտ կարդալու համար այդ կրկնությունը պետք է բաց թողնել։

Ուշադրություն է գրավում նաև այն, որ արձանագրությունը լրիվ ավարտվում է 10-րդ տողում։ Շարունակությունն ակներևաբար փորագրվել է որոշ ժամանակ անց։ Այդ հատվածում հիշատակված է Դավիթը՝ Անտոնի քրոջ որդին, որի վաղաժամ (ԿԻՍԱԻՐԵԱ) մահը պատճառ է դարձել շարունակելու արձանագրությունը՝ բարեխոսություն մաղթելու համար, այս անգամ ողբագին, խոր ցավակցական երանգով։ Արձանագրության վերջում նշմարվում է անավարտ բացատրություն՝ ՈՐ ԳՐԵՑԻ ՁՅԻՇԱՏԱԿ ԵԻ...

Արձանագրությունը վերականգնելու վերաբերյալ մեր դիտողություններն ի մի բերելով առաջարկում ենք հետևյալ վերծանությունը.

1. Ի ՆԺ (1001) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵ[ԱՆ ՀԱՅ]—
2. ՈՅ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹ[ԵԱՆ Ս]—
3. ԱՐԳՍԻ ՀԱՅՈՑ ԿԱ[ԹՈՂԻԿՈՍԻ]
4. ԵԻ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ[ԱՆ ԳԱԳԿԱ]
5. ՇԱՀԱՆՇԱՀԻ ԵՍ ՍԱՀԱԿ [ԵՒ ՀԱՅՐ ԱՆ]—
6. ՏՈՆԻՍ ՔՎԵՐՈՐԴԻՍ [ԴԱՒԻԹ]
7. (ՔՎԵՐՈՐԴԻՍ) ՇԻՆԵՑԱՔ ԶՎԱՆՔՄ ՄԲ
8. ԳԵՈՐԳՈՅ ԵՒ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ՆԻ ԱՄ—
9. ԵՆ ԱՂԱԳԱՒՔ ՇԵՆ. Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵԱՆ
10. ՄԵԶ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ
11. ԵՒ ԿԻՍԱՒՐԵԱ Ի ՔՍ ՓՈԽԵՑԱՒ
12. ԱՆԲԱԽՏ ԴԱՒԻԹ ՈՐ ԶԳՐԵՑԻ ԶՅԻ—
13. ՇԱՏԱԿ ԵԻ...

Ալիշանի մոտ կա «Յորմն արևելյան արտաքուստ գրեալ է սակաւ մի խանգարեալ անթուական արձանս»[78], որը ներկայումս չի պահպանվել։ Ինչպես երևում է Ալիշանի բերած բնագրից, այն նույնպես շինարարական արձանագրություն է նորոգման բովանդակությամբ։

---

[77] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 166, Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, էջ 12 և այլն։

[78] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 166։

Արձանագրության բովանդակությունից պարզվում է, որ կառուցվել են առնվազն երեք, թերևս ավելի եկեղեցի, եթե հաշվի առնենք, որ հիշատակվել են «զվանքս և զեկեղեցիս» հոգնակի թվով, իսկ ս. Գևորգն էլ նշված է առանձին։ Սահակը, Դավիթը և Անտոնը, մատենագրական աղբյուրներում չեն հիշատակված։

Մատենագրությունից հայտնի է Անտոն անունով վանական, որին Մ. Ուռհայեցին հիշատակում է այդ ժամանակների երևելի անձանց իր բերած ցուցակում[79]։ Սակայն նրա կապը այս վանքի հետ չի հաստատվում։

Այսպիսով, ս. Գևորգ եկեղեցին, ինչպես և վանական մյուս շենքերը, որոնք ներկայումս չեն պահպանվել, կառուցվել են երկու անձանց միջոցներով՝ 1001 թվականին։ Ըստ որում, Դավիթը մահացել է մինչև կառուցումն ավարտվելը։ Թեև այդ շինությունները չեն պահպանվել, սակայն դատելով արձանագրությունից, այստեղ եղել է բավականին մեծ հուշարձանախումբ։

Բջնի.—Բջնիի վերաբերյալ տեղեկություններ կան դեռևս V դարից[80]։ IX դարից սկսած Բջնին արդեն հայտնի էր որպես Պահլավունյաց նախարարական տան կարևոր ոստաններից մեկը։ Պահլավունիներից առաջինը, որ Բջնիում շինարարական աշխատանքներ կատարեց, Գրիգոր Մագիստրոսի հայրն էր՝ Հոլոմ Վասակը[81]։ Վերջինս կառուցել է բերդը, որը Ամբերդի հետ միասին Պահլավունյաց տան ամրոցն էր։ Ալիշանի կարծիքով բերդը ես այստեղ գոյություն է ունեցել V դարում, որը Պահլավունիները վերաշինեցին և դարձրին քաղաք կամ բերդաքաղաք[82], ինչպես այդ մասին վկայում են պատմագիրները[83]։ Ներկայումս ամրոցն ավերակ է և նրա ճարտարապետական ձևերի ժամանակագրական առանձնահատկություններն ուսումնասիրելն անհնարին է։

Ամրոցից բացի Բջնիի ամենանշանավոր հուշարձանը ս. Ստեփանոս եկեղեցին է։ Ժամանակին Բջնին եղել է եպիսկոպոսանիստ և աչքի ընկնող դեր է խաղացել երկրի հոգևոր կյանքում։ Եկեղեցուն կից գործում էր նաև հոգևոր դպրոցը, որտեղ դասավանդել է Գրիգոր Մագիստրոսը։ Սակայն ներկայումս այստեղ միայն մի եկեղեցի է՝ շրջափակված ուշ շրջանում կառուցված պարսպապատերով։

Հ. Շահխաթունյանցը գրում է, որ բերդի սահմաններում գոյություն ունեին այլ շինությունների մնացորդներ, որոնք կարող էին եկեղեցական շենքերին պատկանել[84]։

Ս. Աստվածածին եկեղեցին այն տիպի գմբեթասրահներից է, որի արևելյան մույթերը կցված են խորանի անկյունապատերին։ Արևմտյան կողմում ավանդատներ չեն կառուցվել։ Բջնի գյուղի եկեղեցիների մեջ առավել հուշակվածն այս եկեղեցին է և միակն է, որն ունի շինարարական վավերագիր, փորագրված հարավային պատին.

Թ ՆՁ (1031) ՇՆՈՐԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅՍ ՀՐԱՄԱՆՔ Է ԻՄ ՏՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՍՄԲԱՏԱՅ ՇԱՀՆՇԱՀԻ, ՈՐ ՀԱՍ[ՏԱՏԵԱՑ ԶԵ-ՊԻՍԿՈ]ՊՈՍԱՐԱՆ Ի ԲՋՆԻ ՔԱՂԱ—

79 Տե՛ս Ուռհայեցի, էջ 179։
80 Տե՛ս Փարպեցի, էջ 264։
81 Տե՛ս Այրիվանեցի, էջ 58—59։
82 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, 270—271։
83 Տե՛ս Բարձրբերդցի, էջ 143, Գանձակեցի, էջ 95, 163։
84 Տե՛ս Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 180։

ՔԻ ԶՍԲ ԱԾԱԾԻՆՍ՝ ՀԻՄՆԱՐԿԵԱԼ ԿԱՏԱՐԵԱՑ ԳՐԻԳՈՐ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ,
ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱՅ ԵՒ ՏՎԱՒ ՎԻՃԱԿ Ի ՍԲ ԱԾԱԾԻՆՍ Ի ՓՈՇԷՀԱՆԻՑ ՄԻՆ-ՉԵՒ Ի ՆԻԳ ԵՒ ԴԻ[ՒԱՏՈՒՆ...] ԵՒ ՅԱՂՍԵՒ, ԵՒ ՏՎԱՔ
ԶԱՒԱԶԱՆ ԵՒ ՍԲ ՆՇԱՆ ԵՒ ԱԹՈՌ։ ԱՐԴ ԵԹԷ ՈՔ ԽԱՓԱՆԵԼ ԶԱՆԱՑ ԶԱԹՈՌՍ [ԿԱՄ ՅԱՅԼ ՏԵՂԻՍ ՓՈԽԵԼ ԿԱՄ ԶՀՈՂՆ] ՅԱՓՇՏԱԿԵԼ, ԿԱՄ ԶԱՒԱՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԳՈՂԱՆԱԼ, ԹԷ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ
ԿԱՄ ՅԻՇԽԱՆԱՑ ՈՎ ՈՐ ՀԱԿԱՌԱԿԻ ՆԶՈՎԵՍՑԻ ՅԱՅ ԵՒ Ի ՄԷՆ[Ջ, ԵՒ ՅԺԸ] ՀԱՅՐԱ[ՊԵՏԱՑ, ԵՒ ԱՐՄ]ԱՏԱԿԻ ՋՆՋԵՍՑԻ ՅԻՇԱՏԱԿ ՆՈՐԱ ՅԵՐԿԷ ԱՆԼՈՅԾ ԿԱՊԵՍՑԻ։ ԵՎ ԱՐԴ ԱՅՍ Է ԲՆԱԿԱՆ

ԵՒ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱՀԱՍ ՎԻՃԱԿ [ԵՒ ԶԱԹՈՌ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶՈՐ] ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՎ ԵՒ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԱՒ ԶՍԱՀՄԱՆԱՀԱՍ ՎԻՃԱԿԻ ՍՈՐԱ, ՈՐ Է ՅԱՐԵՒԵԼԻՑ Ի ԾԱՐ ԳԵՏՈ
ՄԻՆՉԵՒ ԳԵՏՆ ԱԽՈՒՐԵԱՆ ՅԱՆԻՈՅ, ԵՒ Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆՍ [ՅԱՂՍԵՒ...] ԵՒ ՈՐ ՀԱՏԱՆԵԼ ԶԱՆԱՑ ՅԱՅՍՄԱՆԷ Ի ՄԻՋՈՅ ԿԱՄ ԵՋԵՐԱՑ ԿԱՄ ԱՒԵԼԻ ԿԱՄ ՄԱՍՆ ԻՆՉ ԶՎԵՐԱՍԱՑԵԱԼ ԶԱՆԵԾՍ ԵՒ ԶՊԱՏԻԺՍ ԿՐԵՍՑԷ ԱՍՏ ԵՒ Ի ՀԱՆԴԵՐՁԵԼՈՒՄՆ։ ԱՄԷՆ։

Վասակի որդի իշխանաց-իշխանը Գրիգոր Մագիստրոս Պահլավունին է։ Արձանագրությունից պարզվում է, որ այս եկեղեցու կառուցմամբ Բջնին նա դարձրել է եպիսկոպոսանիստ։ Ինչպես նշված է արձանագրության մեջ, այդ թեմը Հայաստանի կենտրոնում ընդգրկել է բավականին ընդարձակ տարածություն։ Նրա հյուսիսային սահմանները սկսվել են Աղստև գետից, հարավում հասել մինչև Բջնի, արևելքում նրա սահմանը եղել է Ծար գետը[85], իսկ արևմուտքում՝ Ախուրյանը։ Թեմի հաստատումը սեփական ոստանում անկասկած մեծացնում է այդ ոստանի քաղաքական նշանակությունը, մանավանդ, եթե նկատի առնենք նրա ընդարձակ սահմանները։ Սակայն Բագրատունիների անկումից հետո, 1045 թվականին Գրիգոր Մագիստրոսն իր կալվածքները՝ Բջնի կենտրոնով հանձնեց Կոստանդին Մոնոմախին, որի դիմաց ստացավ մի փոքրիկ կալվածք Տարոնում[86]։

1065 թվականին Բջնիում կաթողիկոս է օծվում Գրիգոր Մագիստրոսի որդին[87] (1065—1105)։

Բջնիի եպիսկոպոսարանի դերը պահպանվեց մինչև XII դարի առաջին քառորդը։ Հետաքրքիր տեղեկություն է պահպանվել հարավային մուտքի վերին մասում փորագրված նորոգման մի արձանագրության մեջ։ Արձանագրության հեղինակը նշում է, որ սալաքարերով երեսապատել է եկեղեցին։

ԹՎ ՈԾԷ (1208) ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՔԱՋԱՑ ԵՒ ՅԱՂԹՈՂԱՑ ՄԵԾ ՇԱՀՆՇԱՀԱՑ ԶԱՔԱՐԷԻ ԵՒ ԻՒԱՆԷԻ ՈՐԴԻՈՑ ՍԱՐԳՍԻ, ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՎՐԹԱՆԷՍԻ, ԵՍ ՄԵՂՈՒՑԵԱԼ ԾԱՌԱՅ ԱՅ ՎԱՀԱՆՍ... ՇԻՆԵՑԻ ԶԻՇԽԱՆԱՒԱՆԻՑ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ ՅԱՆՈՒՆ ՍԲ ԱԾԱԾՆԻՆ ԵՒ ԶԱՅՍ ԱԾԱԾԻՆՍ ՆՈՐՈԳԵՑԻ ՍԱԼՈՎ ՈՐ Ի ԲՆԷ ՉԷՐ ՍԱԼԱԾ, ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Ե: ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ԾՆՆԴԵԱՆ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳՒՈՑ ԻՄՈՑ, ՈՎ ԽԱՓԱՆԷ ԶՊԱՏԱՐԱԳՆ՝ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ՔԻ։

85 Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», էջ 82։
86 Տե՛ս Լաստիվերտցի, էջ 62, Բարձրբերդցի, էջ 133։
87 Տե՛ս Ուռհայեցի, էջ 155։

Ուշադրություն է գրավում «որ ի բնէ չէր սալած» արտահայտությունը: Գրիգոր Մագիստրոսի եպիսկոպոսանիստ եկեղեցին չէր կարող սալապատված չլինել: Այդ երևում է պահպանված շինարարական արձանագրության հատվածից: Հավանական է, որ սալապատումը վերաբերում է հատակին: Եկեղեցին XIII դարի սկզբներին խիստ ավերված է եղել: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ արձանագրության հեղինակը նախ հիշատակում է շինելու, այսինքն՝ վերանորոգելու, այնուհետև՝ նորոգման մասին:

Եկեղեցին և բերդը մի անգամ ևս նորոգվել են ավերածություններից հետո՝ 1358 թվականին: Այդ մասին ընդարձակ արձանագրություն է փորագրված եկեղեցու հարավային պատին՝ ներսում:

Վերջին անգամ եկեղեցին և վանքի մյուս շենքերը վերաշինվել են XVII դարում՝ Փիլիպպոս և Մովսես կաթողիկոսների կողմից: Փիլիպպոսի թողած մի հիշատակարանում, որը հրատարակել է Ալիշանը[88], 1631 թվականին եկեղեցին խիստ խարխլված էր, հատկապես քանդված էր տանիքը: Շարդենի այցելության ժամանակ (XVII դ. վերջ) եղել է բարվոք վիճակում: Ֆրանսիացի ճանապարհորդը տեղեկացնում է նաև բերդի, անգամ ավերակ դղյակի մնացորդների մասին:

Կեչառիս.—Եկեղեցական շինությունների այս համալիրը գտնվում է Ծաղկաձոր ավանում, բաղկացած է ս. Գրիգոր, ս. Նշան և ս. Կաթողիկե եկեղեցիներից, ս. Գրիգորի գավթից և ս. Գրիգոր ու ս. Նշան եկեղեցիների միջև տեղադրված երկու մատուռներից: Այս խմբից բացի կա ս. Հարություն անունով մի եկեղեցի՝ իր գավթով արևմտյան կողմում, հին գերեզմանատան մոտ:

Վանական շինություններն այստեղ իրագործվել են հիմնականում երկու փուլով՝ XI և XIII դարերում: XI դարում Կեչառիսը պատկանել է Պահլավունիներին և առաջին շինություններն էլ կառուցվել են նրանց կողմից:

Հնագույն շինությունը ս. Գրիգոր եկեղեցին է: Իր հորինվածքային տիպով մեկ զույգ արևմտակողմի որմնամույթերով գմբեթասրահ է: Արևելյան զույգ որմնամույթերն, ըստ էության, ոչ թե բացակայում են, այլ ձուլվել են խորանի անկյունապատերին: Այս հուշարձանում մենք ունենք մի օրինակ, որտեղ կրճատվել է միայն խորանի և ենթագմբեթային կենտրոնի միջև եղած տարածությունը: Եկեղեցին ունի կրկնահարկ ավանդատներ միայն արևելյան կողմում:

Կառուցման վերաբերյալ պահպանվել են երեք հակասական և որոշ առումով կասկածելի տեղեկություններ: Հարավային մուտքի ճակատակալ քարին փորագրված է հետևյալ շինարարական արձանագրությունը.

1. ՆՁԲ (1033) ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ—
2. ԱՆ ԳԱԳԿԱՅ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ
3. ՍԱՐԳՍԻ ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆ—
4. Ա ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԵՒ Ի—
5. Մ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՅՔ Զ—
6. ԻՍ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԱՂԱՉԵՄ

1033 թվականին Հայաստանում թագավորում էր ոչ թե Գագիկը, այլ Հովհաննես-Սմբատը (1020—1043), իսկ հայրապետական աթոռին Սարգիս

[88] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 275:

Ս. Սևանցուն վաղուց արդեն փոխարինել էր Պետրոս Գետադարձը (1019—1058):

Գագիկն Աշոտ Ողորմածի որդին էր, հաջորդել էր իր եղբորը՝ Սմբատ Բ-ին և թագավորել 990—1020 թվականներին:

Սարգիս կաթողիկոսը հայրապետական աթոռին նստել է 992—1019 թվականներին: Գ. Հովսեփյանը ՆՁԲ-ն առաջարկում է ուղղել ՆԾԲ և արձանագրությունը թվագրել 1003, իսկ Սիմեոն կաթողիկոսի նշած 925 թվականն ընդունել որպես հիմնադրման տարեթիվ[89]:

Սակայն արձանագրության առեղծվածը միայն թվականով չի սահմանափակվում: Ավելի կարևորը Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսն է: XI դարում Կեչառիսը Պահլավունիների սեփականությունն էր, իսկ Գրիգոր Մագիստրոսը Պահլավունյաց տոհմի մեծահռչակ ներկայացուցիչը: Այս առումով, բնականաբար, պետք է մտածել, որ եկեղեցին կառուցողը եղել է միջնադարի այդ մեծանուն մտածողը, մանավանդ, եթե նկատի առնենք ևս մի կարևոր վավերագիր, որը հրատարակել է Սեն Մարտենը[90] իտալերեն թարգմանությամբ, և որից այնուհետև թարգմանել և հայերեն հրատարակել է Ալիշանը. «Ի Շ (1051 թ.) թուականիս ի ժամանակս Կոստանդեայ Մոնոմախի թագաւորի Յունաց Հայոց դուքս Վասպուրականի (և տէր) գաւառիս Ծաղկնոց, ես Գրիգոր Մագիստրոս, որդի Վասակայ հրովարտակաւ և հրամանաւ վերոասացեալ թագաւորիս՝ հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս որ կոչի Կեչառուս, ի նախասացեալ գաւառի Ծաղկոնց հանդերձ մատրամբս և նուիրեցի զտաճարս և զեկեղեցիս յանուն սրբոյն Գրիգոր Լուսաւորչի մերոյ և զարդարեցի զսա սպասուք արծաթեղինօք և ոսկեղինօք, գրովք և այլովք պիտոյիւք, որպէս վայել էր տաճարիս: Դարձեալ ետու եկեղեցւոյս գեօղս երկուս և այգի մի: (Եւ) մեք շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոսունքս Բջնոյ վանական և համաւար, սահմանեցաք և հաստատեցաք ի թեմ և կալուած վերոգրեալ եկեղեցւոյս՝ գեօղ քսան և հինգ և քաղաք մի, որք են Բուժան, Շոկաթն և այլն: Եւ հաստատեցաք զվճիռս մերով ձեռագրովս և կնքովս: Արդ եթէ ոք յետ մեր կամ յեկեղեցականց կամ յաշխարհականց իշխեսցէ հակառակ կալ վճռոյս մերոյ, նզովս առցէ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ և :ՅԺԸ: հայրապետացն Նիկիոյ ժողովոյն, և մասն և բաժին նորա ընդ Յուդայի մատնչի և ընդ խաչահանուացն Քրիստոսի եղիցի, իսկ որ հաստատուն պահէ՝ օրհնեալ եղիցի ի Տեառնէ Աստուծոյ»[91]:

Այս տեղեկությունն իր շարադրանքով շատ նման է վիմական բնագրին, մանավորապես հարավային պատի 1054 թվականի արձանագրությանը: Վավերագրերից պարզվում է, որ շինությունը կատարել է 1051 թվականին, կառուցողն է Վասակի որդի Գրիգոր Մագիստրոս Պահլավունին և, վերջապես, նա կառուցել է միայն ս. Գրիգոր եկեղեցին և մոտի մատուռները:

Մխիթար Այրիվանցու վկայությամբ տեղի առաջին եկեղեցին կառուցել է Ապիրատ մեծ իշխանը 1033 թվականին: Գլխավոր եկեղեցու կառուցումը նա վերագրում է Գրիգոր Մագիստրոսին և հիշատակում է այդ մասին Գագիկի

[89] Տե՛ս Գ. Հովսեփեան, Խաղբակեանք..., Բ, էջ 6: Տե՛ս նաև «Քարտեզ հայ հնագրութեան», էջ 179, Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 283:

[90] Տե՛ս Saint Martens, Memoires historique et geographique sur l'Armenie, II, p. 287:

[91] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 260:

թագավորությունից հետո. «Իսկ Մանուչահին՝ որ կալաւ զԴագիկ թագաւորին, եւ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի, որ շինեաց զեկեղեցին Կեչառուաց, սա է որդի Հոլում Վասակայ շինողին Բջնոյ և Կայենոյ և Կայծոնոյ զոր յանդերս սպանին ի Սերկևլե»[92]:

Վստահելով այս վկայություններին, բնականաբար պետք է վերանայել շինարարական արձանագրության թվականը և ճշտել Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի ով լինելը: Ինչպես հայտնի է Գրիգոր Մագիստրոսը Վասակի որդին էր: Հարավային պատի արձանագրության մեջ հիշատակված Հասանի վերաբերյալ Գ. Հովսեփյանը գրում է. «Մեզ համար պարզ չէ միայն, թե ո՞վ Հասան է, որին մատենագիր Գրիգոր Մագիստրոսը իր արձանագրութեան մէջ կամենում է, որ հիշեն քանի ինքը կենդանի է»[93]:

Ե. Լալայանցը գտնում է, որ Հասանը Վասակի կրկնանունն է[94]: Այս վարկածին չի առարկում նաև Գ. Հովսեփյանը: Դա հավանական է, որովհետև 1051 թվականի վավերագրին շարադրանքով նմանվող հարավային պատի արձանագրության մեջ Գրիգոր Մագիստրոսն իր հայրանունի փոխարեն հիշատակում է Հասանի անունը և ցանկանում, որ այդ անունը հիշատակվի քանի դեռ ինքը կենդանի է:

Սակայն, Ղ. Ալիշանը և Գ. Հովսեփյանը տարբերում են միմյանցից այս երկու Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսներին[95]: Դա բնական է այն առումով, որ մուտքի շինարարական արձանագրության մեջ ասված է, որ հիշյալ Գրիգոր Մագիստրոսը եկեղեցին կառուցել է իր պատրոնի համար: Գրիգոր Մագիստրոսը պատրոն ունենալ չէր կարող, և, ընդհանրապես, պատրոն տերմինը բնորոշ է XIII դարին: Այստեղ կարևոր է Բարձրբերդցու վկայությունը, որի համաձայն Պահլավունի Հասանի որդի Ապիրատ իշխանը «Շինեաց զսուրբ ուխտս Կեչառու...»[96], ուր պատմիչը հիշյալ Ապիրատի շինարարական աշխատանքը թվագրում է XII դարի սկզբով:

Մ. Այրիվանեցու նշած 1033 թվականը, հավանաբար, արձանագրությունից օգտվելու հետևանք է, որովհետև պատմագրության մեջ XI դարի սկզբներին ապրած Հասանի որդի Ապիրատ Գրիգոր Մագիստրոս հայտնի չէ: Մեր կարծիքով XII դարի սկզբներին այս եկեղեցին նորոգվել է: Այդ նորոգման ժամանակ վավերագիր է թողնվել Ապիրատ Գրիգոր Մագիստրոսի անունից, որը վեր է ածվել արձանագրության, իսկ արձանագրողը ՇՁԲ (1133) փոխարեն սխալմամբ գրել է ՆՁԲ (1033):

Հարավային պատի արձանագրության մեջ Գրիգոր Մագիստրոսը հիշատակված է կիտոնտ և դուքս տիտղոսներով, իսկ շինարարական արձանագրության մեջ՝ մագիստրոս կոչումով: Այս կոչումն ու տիտղոսները Գրիգոր Մագիստրոսը ստացել է 1045 թվականից հետո, իսկ մինչ այդ նա կոչվում էր Գրիգոր Բջնեցի: Այսպիսով, սխալ են արձանագրության ոչ միայն 1033, այլև 1003 թվականները: Այս ամենից հետևում է, որ մուտքի շինարարական արձանագրության մեջ ոչ միայն թվականն է սխալ, այլև Գագիկ թագավորի և Սարգիս կաթողիկոսի անունները: Մեր կարծիքով եկեղեցին կառուցվել է

---

92 Այրիվանեցի, էջ 58, 59:

93 Գ. Հովսեփեան, Խաղբակեանք..., Բ, էջ 9:

94 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXII, էջ 102:

95 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 259, Գ. Հովսեփեան, Խաղբակեանք..., Բ, էջ 7:

96 Բարձրբերդցի, էջ 97:

1051 թվականին: Արձանագրությունն ու վավերագիրը շարադրվել են այն ժամանակ, երբ ավարտված են եղել եկեղեցին ու մատուռները:

Ս. Գրիգոր եկեղեցին նորոգվել է XIII դարում՝ տեղի միաբանների կողմից, որի վերաբերյալ հարավային պատին նրանք թողել են անթվական արձանագրություն և, ամենակարևորը, գրել են՝ «վերստին նորոգեցաք», ակնարկելով, որ եկեղեցին նախկինում ևս նորոգվել է:

XIII դարում այստեղ հաստատվում է Խաղբակյանների տոհմը, որի անվան հետ է կապված Կեչառիսի ծաղկման երկրորդ շրջանը: Կեչառիսը և Բջնին որպես սեփականություն Խաղբակի որդի Վասակը ստացավ 1201 թվականին Զաքարեից, նրա վարած պատերազմներում կատարած քաջագործությունների համար: Այս տարիներին շինարարական մեծ աշխատանքներ են կատարվել ինչպես հին եկեղեցիների նորոգման, նույնպես և նորերի կառուցման ուղղությամբ: XIII դարի սկզբին կառուցվել են ս. Գրիգոր եկեղեցու գավիթը, ս. Կաթողիկե և ս. Հարություն եկեղեցիները:

Գավիթ.—Ս. Գրիգորի գավիթը գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում: Ներքուստ բաժանված է չորս մոնումենտալ սյուներով, որոնց վրա հենվում են վրանաձև տանիքը կրող կամարները: Արևելյան կողմում տեղադրված են երկհարկանի ավանդատներ: Գավթի կառուցման վերաբերյալ շինարարական որևէ գրավոր տեղեկություն չի պահպանվել: Մասնագետների կարծիքով այն կառուցված պետք է լինի XII դարի վերջին[97]: Այդ են հաստատում նաև գավթի վրայի հնագույն արձանագրությունը՝ թվագրված 1206 և 1248 թվականին այս շինության նորոգման փաստը: Այդ մասին ավանդող արձանագրությունը գտնվում է գավթի հարավային կամարի վրա, իսկ հյուսիսային մուտքի ճակատակալ քարին փորագրված է շինարարական մի արձանագրություն.

ՍԲ ԴԱՒԻԹ ԴԱՒԹԻ Է ԿԻՐԱԿՈՍԻ ԱՒՐԴՈ ՋՈՒՂԱ—
ՆՑԻ ՅԻՒՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵՆՑ ՇԻՆԱԾ, ՅԱՄԷՆ ՏԱՐԻ ։Ե։ ԱՒՐ Ժ—
ԱՄ ԱՌՆԵՆ ՆՄԱ Ի ՍԲ ԳՐԻԳՈՐԻՆ ՊԱՄՆ ԱՆԽԱՓԱՆ ԵՒ Ե—
ԹԵ ՈՔ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ Ի ՏԷ ԱՅ ՄԵՐՈ ԱՍՏ ԵՒ Ի ՀԱՆԴԵՐ—
ՁԵԼՈՒՄՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԵԼ ԼԻՑԻՆ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ[98]:

Գ. Հովսեփյանի կարծիքով այս արձանագրությունը տեղեկացնում է ավանդատան երկրորդ հարկի կառուցման մասին: Հովսեփյանը, որ այս արձանագրության առաջին հրատարակողն է, չի թվագրել այն: Եթե այս արձանագրությունն ընդունենք որպես գավթի կառուցմանը ժամանակակից, ապա այն պետք է համարել գավթի հիշյալ հատվածի կառուցումը նպաստավորողների վավերագիր: Իսկ եթե ժամանակակից չէ գավթին, ապա կարող է միայն նորոգման իմաստով հասկացվել, որովհետև գավթի բոլոր առանձնամասերն իրենց ճարտարապետական ձևերով այնպիսի միասնություն են կազմում, որ անհնար է ենթադրել ավանդատան երկրորդ հարկի հավելված լինելը:

Ս. Կաթողիկե.—Հուշարձանախմբի հարավային կողմում XIII դարում կառուցվեց ևս մի եկեղեցի, որը եզրափակեց վերջինիս հարավային սահմանը: Այս եկեղեցին արձանագրություններից հայտնի է ս. Կաթողիկե անունով:

---

97 Տե՛ս *С. Х. Мнацаканян*, Архитектура армянских притворов, стр. 4.

98 Գ. Հովսեփեան, Խաղբակեանք..., Գ, էջ 34:

Ի տարբերություն Այրարատում IX—XI դարերում կառուցված եկեղեցական շենքերի, XIII դարին բնորոշ էր գմբեթասրահի չորս ավանդատնով առավել ավարտված տիպը: Այս առումով Կեչառիսի վանական շինությունների համալիրը հայ ճարտարապետության այն յուրատիպ հուշարձաններից է, որտեղ ամենայն պատկերավորությամբ վերարտադրվել է գմբեթասրահների աստիճանական կատարելագործումը ժամանակագրական տարատեսակների ամբողջությամբ:

Ս. Կաթողիկե եկեղեցու կառուցման վերաբերյալ տեղեկություն է տալիս մուտքի ճակատակալ քարի արձանագրությունը.

1. ԵՍ ՎԱՍԱԿ ՈՐԴԻ ԽԱՂԲԱԿԱ ՇԻՆԵՑԻ ՋՍԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ ՅԱԻԱԳՆՈՒԹԻՒՆ ԵՒ
2. ՅԵՐԿԱՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՑ ԻՄ ՊԱՏՐՈՆԱՑՆ ԻՒԱՆԷ ԱԹԱԲԱԿԻ ԵՒ ԱՐԵԱՆ
3. ՀԱՐԱԶԱՏԻ ԻՒՐՈՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԵՒ ԱԻԱԳԻՆ ԵՒ ԻՒՐ ՄԱԻՐՆ
6. ՊԱՏՐՈՆ ԽՈՇԱՔԻՆ ԵՒ ԻՄ ԵՂԲԱՅՐԱՅՆ ԵՒ ՈՐԴԵԱՅՆ ՅԱՐԵԻ—
8. ՇԱՏՈՒԹԻՒՆ, ԻՆՋ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈ ՄԱՄԱՅԻՆ ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԻՒՆ: ՈՐՔ
10. ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՔՍ ԱՂԱՉԵՄ. ԳՐԻՍ ԸՆԾԱՅ :Ա: ԼԱԻ ՇԻՆԱԿԱՆԱՆ :Ա: ՏՈՒՆ Ի ՆՈՐԱՇԷՆՔՆ ԵՐԵՏ ԵՒ :Ա: Ի ԿԱՐԵՆԻՍՆ[99]:

Արձանագրությունը թվական չունի, սակայն ժամանակը հեշտությամբ որոշվում է հիշատակված անձանց և 1214 թվականի մի արձանագրության միջոցով, որտեղ հիշյալ անձիք նվիրատվություն են կատարել եկեղեցին կառուցելու կապակցությամբ: Ս. Բարխուդարյանի կարծիքով եկեղեցին կառուցվել է 1214 թվականից մի երկու տարի առաջ[100]:

Ս. Կաթողիկեի կողքին կա մի գեղեցիկ խաչքար-հուշարձան կանգնեցված, ինչպես արձանագրությունն է հիշատակում, Վեցիկ վարդպետի հիշատակին: Արձանագրությունում նշված է, որ Վեցիկը եղել է քարգործ-ճարտարապետ և տեղի եկեղեցիներից մեկի կառուցողը:

Խաչքարի պատվանդանին գրված է.

ՋՎԵՑԻԿ ՎԱՐԴ—
ՊԵՏ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍ—
ՋԻՔ Ի ՔՍ. ԱՂԱՉԵՄՔ
Թիկունքին՝
ՅԻՇԵՍՋԻՔ ՅԱՂԱԻԹՍ
ՋԾԱՌԱՅՆ ԱՅ ՋՎԵՑԻԿ
ՔԱՐԳՈՐԾ ՈՐ ՇԻՆԵԱՅ ՋՆ—
ՈՐ ԵԿԵՂԵՑԻՍ, ԵՒ Ի ԿԱՏԱՐՄԱՆ
ՍՈՐԻՆ ԻՆՔՆ ԿԱՏԱՐԵԱՅ ՋԿԵՆ—
ՑԱՂՍ ԵՒ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՔՍ
ԿԻՍԱԻՐԵԱՅ ԱԻՈՒՐԲՔ. ԵՒ ԵՍ
ՅՈՎԱՆՆԷՍ ԵՒ ԵՂԲԱՐՔՍ ԻՄ՝
ՀԱՐԱԶԱՏ ՍՈՐԻՆ, ԿԱՆԿՆԵ—
ՑԱՔ ՋՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ՔԻ Ի Վ—
ԵՐԱ ՋԱՆԿՍՏԱՐԱՆԻ ՍՈՐԻՆ, ԱՌ

99 Գ. Հովսեփեան, Խաղբակեանք..., Գ, էջ 8:
100 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան ճարտարապետներ..., էջ 50:

Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻՒՆ ՍՄԱ ԵՒ Մ—
ԵՂ ԱՄԵՆԱՅՆ ՀԱԻԱՏԱ—
ՑԵԼՈՑ ԵՒ ՅԻՇՈՂԱՅՆ Ջ—
ՍԱ.

Նկատի ունենալով, որ խաչքարը կանգնեցված է ս. Կաթողիկեի մոտ, ինչպես նաև խաչքարի և եկեղեցու հարդարանքների ոճական նմանությունը, Ս. Բարխուդարյանը գտնում է, որ արձանագրության մեջ հիշատակված նոր եկեղեցին (որ կառուցել է Վեցիկը) ս. Կաթողիկեն է: Արձանագրությունից պարզվում է, որ Վեցիկը մահացել է եկեղեցին կառուցելուց անմիջապես հետո, ուստի նրա մահը ևս հնարավոր է թվագրել 1214-ին մոտ տարիներով:

Ս. Հարություն.—Այս եկեղեցին ունի չորս ավանդատուն: Արևմտյան կողմին կից կառուցված է ինքնատիպ թաղածածկ գավիթ, մուտքի միջին մասում տեղադրված է մի սյուն, որի վրա հենվում են ճակատային մասի երկու կամարները:

Եկեղեցու կառուցման վերաբերյալ արևմտյան մուտքի ճակատակալ քարին փորագրված է հետևյալ շինարարական արձանագրությունը:

1. ԹՒԻ ՈԿԹ (1220) ՇԻՆԵ—
2. ՑԱԻ ՍԲ ՅԱՐՈՒԹՈՒԻՆՍ ԱՌ
3. Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՄԱԻՐԷՆ ՆՆՋ—
4. ԵՑԵԼՈՑ Ի ՔՍ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈ—
5. Ց ՀԱՍԱՆԱՅ ՌՈՒՋՈՒՔԱՆԱՅ ԵՒ ՋԱԻԱԿԱՑ
6. ...ԵԼ ԵՒ
7. ԱՐՋԱՆՍ ԱԻՐՀՆՈՒԹԵԱՆ ՍԻՐՈՅՆ ԱՌ ԱԾ ԵՒ ԱՌ ՍԲՍ ՆՈՐԱ ԱՄԷՆ:

Արձանագրության մեջ չկա կառուցողի անունը: Հիշատակված են միայն ծնողները՝ Հասանը և Ռուզուքանը: Գ. Հովսեփյանի կարծիքով Հասանը Գեղարդի արձանագրության մեջ հիշատակված Սմբատ թագավորի թոռն է, մանավանդ որ այս արձանագրության մեջ հիշատակված Վախտանգի որդին, Գ. Հովսեփյանը սրանց համարում է նաև Ռուզուքանը՝ որպես նրա կողակից: Գ. Հովսեփյանը սրանց համարում է խաչենի իշխաններ[101]:

Տեղի եկեղեցիների նորոգման մասին ավանդում է գավթի մուտքի վերևում փորագրված ՈՂԷ (1248) թվականի արձանագրությունը: Նորոգողներն են Վախտանգի որդի Հասան Ջալալը և նրա կին Մամքանը, որը Բաղաց թագավորի դուստրն էր:

Ամբերդ.—Չորս ավանդատներով գմբեթասրահների կենտրոնագմբեթ տարբերակները Այրարատում առաջին անգամ երևացին Սյունյաց Քարակոփից ավելի քան մեկ դար հետո՝ XI դարում: Այս տիպին պատկանող Այրարատի հուշարձաններից միայն Ամբերդի եկեղեցին ունի շինարարական արձանագրություն: Այն փորագրված է մուտքի ճակատակալ քարին՝ ներսի կողմից.

1. ԱՄԻՆ ՆՀԵ (1026)
2. ԵՍ ԻՇԽԱՆՍ ՎԱՀՐԱՄ ՇԻ—
3. ՆԵՑԻ ՋԿԱԹՈՂԻԿԵՍ ԱԹՈՌ
4. ՀԱ[Յ]ՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆ—
5. ԵՑԻ ՊՏՈՒՂ ՆԻԳԻ ՏՈՒՆՆ :Բ: ԿԱՊԻԾ—
6. ՅՐ ՅԱՐԱԳԱԾՈՏՆԵ ՅԵԳԻՆ :Բ: ՓՈՍԳԻՆ

101 Տե՛ս Գ. Հովսեփեան, Խաղբակեանք..., Բ, էջ 21:

7. Ի ՔԱՂՔՈԴԱՇՏԻՆ ԲԱԲԱԿՆ :Ժ: ԵՒ ԵՐԵՑՆ
8. ՏԱ :Դ: ՅԻԻՐՈ ԵՒ ԿՆՈՋԷ ԺՈՂՈՎ—
9. ՈՒՐԴ ՈՐ ՈՉ ԿԱՏԱՐԷ ՊԱՏԺԵՍՅԻ ՅԱՅ
10. ԻՇԽԱՆ ՈՐ ՏԻՐԷ ՀԱԿԱՌ ԿԱ ԴԱՏԻ ՅԱՅ[102]:

Արձանագրության թվականից երևում է, որ Վահրամ Պահլավունին միա-
ժամանակ շինարարական գործունեություն էր ծավալել Ամբերդում և Մար-
մաշենում: Թեև արտաքին հորինվածքով այս երկու եկեղեցիները բավակա-
նին մերձենում են, սակայն մանրամասներում ունեն տարբերություններ:
Ամբերդն ունի չորս ավանդատուն, որոնք սկզբունքորեն փոխում են տիպի
կերպարը: Առավել հետաքրքրական են արևելյան և արևմտյան կրկնահարկ
ավանդատները, որոնք այս տիպի մեջ հնագույնն են:

Եկեղեցու արտաքին հարդարանքի, խոյակների, որմնասյուների, քիվի,
ինչպես և գմբեթի ծածկի կառուցվածքային նմանությունը Մարմաշենի մեծ
եկեղեցու հետ Ն. Տոկարսկուն հիմք են տվել ենթադրելու, որ այս եկեղեցի-
ները կառուցել է միևնույն ճարտարապետը[103]:

Արձանագրության «շինեցի զկաթողիկես՝ աթոռ հայրապետական» ար-
տահայտությունից երևում է, որ Վահրամ Պահլավունին իր գղյակի և Բերդա-
վանի եկեղեցին կառուցել է հայրապետական, այսինքն եպիսկոպոսական
նստատեղի դարձնելու նպատակով: Սակայն, ինչպես տեսանք, եպիսկոպո-
սական նստատեղի դարձավ Բջնիի եկեղեցին:

Հայկաձոր.—Այրարատի ճարտարապետական դպրոցում կաղմավորված
գմբեթասրահների տարբերակների մեջ որոշակի տեղ ունեն փոքրածավալ
գմբեթասրահները: Չնայած չորս որմնամույթերի առկայությանը, այստեղ
ներքին ծավալի կենտրոնացման խնդիրը հիմնականում լուծված է մույթերի
թույլ արտահայտության միջոցով: Այս տարբերակի հնագույն հուշարձանը
Անիի շրջանի Հայկաձոր գյուղի արևմտյան ծայրին կառուցված եկեղեցին է:
Շինարարական արձանագրության մեջ եկեղեցին կոչվում է ս. Գրիգոր,
սակայն, գրականության մեջ, ինչպես և տեղացիների մոտ հայտնի է նաև
Կարմիր վանք անունով (կառուցված է կարմիր տուֆից): Եկեղեցին ունի
միայն արևելյան զույգ ավանդատներ: Հյուսիսային, արևելյան և արևմտյան
պատերին կան եռանկյունաձև որմնախորշեր: Հարավային պատին, ուր
գտնվում է շինարարական արձանագրությունը, քանդակված է Բագրատունի-
յաց զինանշանը՝ առյուծի պատկեր: Շինարարական արձանագրությունն առա-
ջին անգամ հրատարակել է Ս. Ջալալյանցը[104]: Նրա վերծանությունը զգալի-
որեն շեղվում է բնագրից: Օգտագործելով Ս. Ջալալյանցի հրատարակու-
թյունն ու Կեստների ընդօրինակությունը, այս արձանագրությունը հրատա-
րակել է նաև Ալիշանը[105]: Համեմատելով Կեստների ու Ջալալյանցի տվյալ-
ները, Ալիշանը գրում է. «Այնքան այլալութիւն է յերկոսին ընթերծուածոց՝
զի մարթ և համարել երկիցս արձանագրեալ յայն և այլ կողմանս տաճարին»:
Նյութերի անբավարարության հետևանքով Ալիշանին չի հաջողվել արձանա-

102 *Н. М. Токарский*, По страницам истории армянской архитектуры, Ереван 1973, стр. 43 *(Ըստ Ս. Բարխուդարյանի)*.
103 *Տե՛ս Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 222.
104 *Տե՛ս* Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն...*, Ա, *էջ 222—223:*
105 *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Շիրակ, էջ 169:*

գրությունը վերականգնել և վերծանել: Վերծանման խոչընդոտներից մեկն
արձանագրության պակասավորությունն է: Եկեղեցին հնում ենթարկվել է
նորոգման, որի պատճառով առանձին տեղերում փոխվել են նրա երեսա-
պատման քարերը և արձանագրությունից անհետացել են որոշ հատվածներ:
Առաջին տողից պակասում են երկու քար, ուր կարող էր տեղավորվել միջին
հաշվով 20 տառ (հաշվի առնելով միանգամայն համաչափ գրված տառերի
մեծությունը): Վնասվել են 5—9-րդ տողերի վերջավորությունները: Այժմ
այդ մասում անարձանագիր սրբատաշ քարեր են ագուցված: Համեմատաբար
ավելի է տուժել 9-րդ տողը, որի նախավերջին քարը ևս կոտրված ու նորոգ-
ված է: 6—8-րդ տողերից միջին հաշվով պակասում է 10 տառ, իսկ 9-րդ
տողից՝ գրեթե կրկնակին: Բացի հիշյալ հատվածներից արձանագրությունն
առանձին տեղերում ունի նաև մի շարք մանր եղծումներ, որոնցից յուրա-
քանչյուրն ընդգրկում է մեկ կամ երկու տառ: 6—9-րդ տողերի միջին մասում
փորագրված է մի շրջանակ: Արձանագրության առաջին տողը պակաս լինելու
մասին Ջալալյանցի մոտ որևէ նշում չկա: Այդ պատճառով Ալիշանը ևս,
հավանաբար, չընդունելով Ջալալյանցի վերականգնած ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒ-
ԹԵԱՆ բառը և չիմանալով բացակայող հատվածի ծավալի մասին, պահպան-
ված ԱԾԱՊ բառասկիզբը վերականգնել է միայն ԱՍՏՈՒԾՈՅ բառով: 3-րդ
տողում Ալիշանը բաց է թողել ՎԵՄՍ բառը, իսկ Ջալալյանցը Գրիգորի
անվանն ավելացրել է ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ, որը բնագրում չկա: Ալիշանն անտեսել
է նա և Գրիգոր անունը: Նույն տողի վերջում Ջալալյանցը բաց է թողել ՀԱՅՐ
բառը: Տեսադաշտից վրիպել է նաև Սողոմոն անվանը հաջորդող 5-րդ տողի
ՀԱՅՐ բառը, իսկ Ալիշանը բաց է թողել չափազանց կարևոր 4-րդ տողն
ամբողջությամբ և լրիվ փոխել է 6-րդ տողի շարադրանքը: 6—7-րդ տողե-
րից Ջալալյանցը բաց է թողել մեծ հատվածներ՝ տողի երկրորդ կեսը, սկսած
ՅՄՋՁ թվականից, Ալիշանի մոտ բացակայում է 7, 8, 9-րդ տողերի երկրորդ
կեսը, իսկ որպես 7-րդ տողի շարունակություն ենթադրել է ՓԱՌՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱՍՏՈՒԾՈՅ, որը պետք է նախորդ տողի վերջավորությունը լիներ: 6—9-րդ
տողերի պակասավոր վերջավորություններն Ալիշանը չի փորձել վերականգ-
նել:

Միանգամայն համոզիչ է Ջալալյանցի վերականգնած 7-րդ տողի վերջա-
վորությունը ԽՈՍՏՈՎԱՆԱԻՂՔ բառով: 7-րդ տողից սկսած Ջալալյանցի
վերծանությունը զգալիորեն շեղվում է բնագրից: ԴՐՈՒՆՍ ՍՈՐԱ նա փոխա-
րինել է ԴՐՈՒՆՍ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ: Բաց է թողնված ՔՍ-ը ԶԻՍ-ից առաջ,
իսկ տողի վերջավորությունը պատկերել է ԵՒ ԾՆԱԻՂ ԻՄ ՋՀԱՅՐ ՍԱՐԳԻՍ,
որը իր շարադրանքով տարբերվում է բնագրից: 9-րդ տողից բացակայում է
տողի ամբողջ երկրորդ կեսը, 10-րդ տողի վերջում չի նկատել ԶԻՍ բառը և,
վերջապես, հիշատակություն չկա արձանագրված կլոր շրջանակի մասին:

Այս ամենի հետևանքով արձանագրությունը ժամանակին ճիշտ պատ-
կերացում և տեղեկություն չի տվել նյութի՝ անձանց, թվագրության ձևերի
և մի շարք հարցերի վերաբերյալ, որոնք կարող են ներկայումս հետա-
քրքրություն հարուցել:

Հենվելով արձանագրության բովանդակության վրա, համապատասխան
տեղերում արձանագրության պակասավոր հատվածները հնարավոր ենք
գտնում լրացնել հետևյալ ձևով՝ առաջին տողից բացակայում է, ինչպես
ասացինք, մոտ 20 տառ, որոնք պետք է տեղադրված լինեին երկու քարերի

վրա։ 1-ին քարի վերջում պահպանվել են ԱՇԱՊԱ... բառասկիզբը, որի շարունակությունը ենթադրվում է 2-րդ քարի վրա։ 4-րդ քարի սկզբին նշմարվող Ա տառը (որը կարող է առնչվել միայն նախորդ բառի հետ), ինչպես նաև 2-րդ և 3-րդ քարերի միջև եղած ընդարձակ տարածությունը վկայում են, որ այստեղ եղել է ևս մի անձնավորության անուն, որի կյանքի և Սմբատ Բ թագավորի ժամանակաշրջանով բնութագրվել է եկեղեցու շինության ժամանակը։ Ի դեպ, այն անձը, որի անունը գրված է թագավորի անունից առաջ, կարող էր լինել հոգևոր դասի բարձր պաշտոնյա։ Տվյալ դեպքում ենթադրվում է Խաչիկ Ա կաթողիկոսի անվան հիշատակությունը, որը հայոց եկեղեցին գլխավորել է 973—992 թվականներին։ Ելնելով այս ժամանակաշրջանի արձանագրություններում արդեն բանաձև դարձած շարադրության ձևերից, նկատի առնելով տեղադրվող տառերի քանակը՝ 2-րդ և 3-րդ բացակայող քարերի հատվածը վերականգնում ենք. ԱՇԱՊԱ[ՏԻՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏՆ ԽԱՉԿ]Ա։

Ունենալով նույն հիմքը և ելնելով արձանագրության բովանդակությունից ու պահպանված հատվածներից, արձանագրության 6-րդ տողի վերջավորությունը հնարավոր ենք գտնում վերականգնել Ե[Ի Ի ԱՌԱՋԻՆ]։ Այն միանգամայն համապատասխանում է բովանդակությանը և տառերի քանակով լրիվ տեղադրվում բացակայող հատվածում։

Ինչ վերաբերում է նույն քարի հաջորդ երկու տողերին, ապա, ինչպես նշեցինք այն վերականգնել է Ջալալյանցը։ Յոթերորդ տողում այդ թելադրում է ԽՈՍՏ[ՈՎԱՆԱԻԴՔ] բառի պահպանված սկիզբը, իսկ ութերորդ տողում խոսվում է այն անձնավորության մասին, որին արձանագրության հեղինակը 5-րդ և 7-րդ տողում հայր և ծնող է անվանում։ Տարակարծիք լինել չի կարող. այս հատվածը պետք է կարդացվի. ԾՆՈՂՆ ԻՄ[ՈՅ ՍԱՐԳԻՍ]։

Համեմատաբար բարդ է 9-րդ տողի վերականգնումը, որի բացակայող հատվածը շատ ավելի մեծ է։ Շարունակելով արձանագրության բովանդակությունը, մեր կարծիքով, այստեղ փորագրված պետք է լիներ եկեղեցու անունը, որն արդեն հայտնի է երրորդ տողից։ Ուստի ելնելով պահպանված հատվածի շարադրանքից, վերականգնում ենք՝ ՍՈ[ՒՐԲ ՈՒԽՏՍ ԳՐԻԳՈՐԻ Ի]։

Ի մի բերելով այս ամենը, արձանագրությունն առաջարկում ենք հետևյալ վերծանությամբ.

1. ՅԱՄՍ ԱՇԱՊԱ[ՏԻՒ ԵՒ ՀՈԳԻՈՐ ՏՆ ԽԱՉԿ]Ա ԵՒ Ի ԹԱԳԱՒ—
2. ՈՐՈՒԹԵԱՆ ՍՄԲԱՏԱ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՅ ՇԱՀԱՆՇԱՀԱՒ ԿԱՆԳՆԵՑԱՒ
3. ՎԷՄՍ ԱՅՍ ԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻ, ԶՈՐ ՀԻՄՆԱԴՐԵԱՑ ԱՅՐՆ ԱՅ ՀԱՅՐ
4. ՍԱՐԳԻՍ ՀՌՌՈՄՈ[ՍԻ] ՎԱՆԱՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԻՍԿ ՅԵՏ ԱՄԻ ։Ա։ ՓՈԽԻ ՅԱ[Շ]ԽԱՐՀԵ ՆԱԽՔԱՆ ԶԱԻԱՐՏՈՒՄՆ
5. ՍՈՐԱ, ԻՍԿ ՅԵՏ ԵԼԻՑ ՆՈՐ[Ա Ե]Ս ՀԱՅՐ ՍՈՂՈՄՈՆ, ՀԱՅՐ ՆՈՐԻՆ ՀԱՐԱԶԱՏ ԵՒ ԺԱՌԱՆԳ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ԱԻԱՐՏԵՑԻ
6. ՇՆՈՐՀԻՒՆ ԱԾ ԶԿՆԻ ։Ե։ ԱՄԻ ՓՈԽՄԱՆ ԾՆՈՂԻ ԻՄՈՅ Ի ՅՄՋՁ (6286) Ա[Մ]Ի Լ[ԻՆ]ԵԼ[ԻՈ]ՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ Ե[Ի Ի ԱՌԱՋԻՆ]
7. ԳԱԼՍՏԵԱՆՆ ՔԻ, ՈՋԴ (985) ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ, ՆԼԴ (985) ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՓԱՌՍ ՔԻ ԱՅ ԽՈՍՏ[ՈՎԱՆԱԻԴՔ]


Անի. Պահլավունյաց սր. Գրիգոր եկեղեցին


Անի. սր. Փրկիչ եկեղեցին



Վարագավանք. Հոգյաց վանք



Վարագավանք. Աստվածածնի ս. Նշան եկեղեցին

8. ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ՝ ՈՐՔ ՄՏԱՆԵՔ ԸՆԴ ԴՐՈՒՆՍ ՍՈՐԱ. ՅԻՇԵՍ—

ՑԵՆ Ի ՔՍ ԶԻՍ ԵՒ ԾՆՈՂՆ ԻՄ[ՈՑ ՍԱՐԳԻՍ]

9. ԵՒ ԶԱՇԽԱՏՈՂՍ ՍՈՐԱ. ԵՒ ՏՐ ՔՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՈՂՈՐՄԵՑԻՆ, ԱՒՐՀՆԵՑ[ԻՆ]

ԶՍ[ՈՒՐԲ ՈՒԽՏՍ ԳՐԻԳՈՐԻ Ի]

10. ՁԵՌՆ ՍԱՄԵՀԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԱԲԵՂԱՒ ՅԻՇԵՍՋԻՔ ԶԻՍ

11. Ի ՏՆ ՄԵՐ ՅՍ ՔԻ ՈՐՈՒՄՆ ՓԱՌՔ ՅԱՒԻՏԵԱՆ. ԱՄԵՆ. ՅԻՇԵՑԵՔ:

Կլոր շրջանակի վրա փորագրված է արևի ժամացույց:

Ինչպես ավանդում է արձանագրությունը, եկեղեցու կառուցումը նախաձեռնել է Հոռոմոսի վանքի առաջնորդ Սարգիսը, որը հիմնադրումից մեկ տարի անց մահացել է և այն շարունակել ու ավարտել է նույն վանքի միաբան Սողոմոնը, հինգ տարի հետո: Այսպիսով, եկեղեցու շինությունը տևել է վեց տարի և ավարտվել ՆԼԴ (985) թվականին:

Արձանագրությունը թվագրված է երեք եղանակով՝ արարչության. Ի ՅՄՋԶ՝ ԼԻՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ (6286), ՆԼԴ հայկական մեծ տոմարով և ՈՋԴ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ: Խոսքը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելու տարեթվի մասին է, որը վերածվել է տոմարական կարգի թվականի՝ 301—684 (ՈՋԴ)—985:

ՅՄՋԶ-ն արարչության թվականն է: Այդ է վկայում բնորոշող «Լինելիութեան աշխարհի» արտահայտությունը, սակայն այն չի համապատասխանում արարչության կայսերական (5508), Յոթանասնից (5198), Ալեքսանդրյան (5425), Շիրակացու (5281) կամ սակավադեպ հանդիպող տոմարական այլ թվականներին[106]: 6286 թվականից 985 թվականը ստացվում է, եթե արարչության թիվն ընդունենք 5301-ը: Ինչպես հայտնի է, արարչության թվականների հաշվումները միշտ չէ, որ ճշտությամբ համապատասխանում են ներկայիս հաշվումներով որոշվող թվականներին: Սակայն այդ տարբերությունները սովորաբար մեկ տարուց ավելի չեն լինում, իսկ տվյալ դեպքում ամենամոտ հաշվումը Շիրակացու թվականն է և տալիս է շուրջ 20 տարվա տարբերություն 6286—5281—1005 թվական: Այսպիսով, արարչության թվականների նույնիսկ ամենահավանական օրինակը որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս:

Արձանագրության թվականի վերաբերյալ կասկածներ լինել չեն կարող: Թվագրումները հավաստում են, որ արձանագրությունը փորագրվել է 985 թվականին: Մնում է ենթադրել, որ կամ գրիչը սխալ հաշվում է կատարել արարչության թվականը որոշելիս և ՅՄԿԸ-ի փոխարեն (6268) փորագրել է ՅՄՋԶ (6286), կամ գոյություն է ունեցել արարչության ևս մի թվական՝ 5301: Կարծում ենք ավելի հավանական է առաջին ենթադրությունը:

Արձանագրության փորագրման ժամանակը ճշտվում է նաև հիշատակված անձանց պատմական ժամանակագրությամբ՝ կաթողիկոս Խաչիկը՝ Խաչիկ Ա Արշարունին է: Նրա անունը կարող էր հիշատակվել միայն 973—992 թվականներին, երբ նա գլխավորում էր հայոց եկեղեցին: Սմբատ Բագրատունին թագավորել է 977—990 թվականներին:

---

[106] Այս թվականները հանդիպում են միջնադարյան ձեռագիր հիշատակարաններում: Տե՛ս Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 294:

Արձանագրությունն ավանդում է նաև Հոռոմոսի վանահայր Սարգսի մասին, որն, ըստ Ասողիկի, եղել է Հոռոմոսի միաբանության առաջնորդը։ Պատմիչը տեղեկացնում է, որ նա մասնակցել է Անիում կայացած 969 թվականի եկեղեցական ժողովին[107]։ Սարգիսը պատմիչի մոտ հիշված է մի շարք բարձր աստիճանավոր եկեղեցականների ցուցակում, որոնց թվում է նաև խաչիկ Արշարունյացը՝ հետագա կաթողիկոսը։ Արձանագրության տվյալների համաձայն Սարգիսը մահացել է 980 թվականին։

Ինչ վերաբերում է Սողոմոնին, որն արձանագրության հեղինակն է, նրա մասին հիմնական տեղեկությունը քաղում ենք այս արձանագրությունից[108]։ 5-րդ տողում նա իրեն անվանում է ՀԱՅՐ ՆՈՐԻՆ։ Թվում է, որ «Նորին» դերանվան տակ պետք է հասկացվի հայր Սարգիսը։ Սակայն նման հետևությունն անհնարին է, որովհետև 6—7-րդ տողերում Սարգսին նա անվանում է ծնող։ Առաջին հայացքից թվացող հակասությունը լուծվում է հետևյալ կերպ՝ ՀԱՅՐ ՆՈՐԻՆ ՀԱՐԱԶԱՏ ԵՒ ԺԱՌԱՆԳ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ արտահայտությունը պետք է հասկացվի որպես Հոռոմոսի վանքին հարազատ հոգևոր հայր, որ սուրբ ուխտի առաջնորդությունը ժառանգել է Սարգսից։

Հիշատակված ամենահետաքրքիր դեմքը ճարտարապետ Սամեհանն է։ Նրա վերաբերյալ ևս օժանդակ աղբյուրներ մեզ չեն հասել։ Արձանագրությունը տեղեկացնում է, որ Սամեհանը եղել է աբեղա։ Չի բացառվում նրա Հոռոմոսի վանքի միաբան լինելու հնարավորությունը։ Հայկաձորի ս. Գրիգոր եկեղեցին, անշուշտ, նրա միակ ստեղծագործությունը չի։ Որ Սամեհան աբեղան հեղինակավոր ստեղծագործող էր, վկայում է նրա «ճարտարապետ» մեծարումը։ «Ամբողջ արձանագրական նյութի մեջ,—գրում է Ս. Բարխուդարյանը,—սա միակ դեպքն է, որտեղ գործ է ածված ճարտարապետ բառը»[109]։ Սամեհանի ճարտարապետական արվեստի ամենապերճախոս վկայությունն ինքը հուշարձանն է, որն աչքի է ընկնում կառուցողական բարձր արվեստով և նուրբ ճաշակով։

Եկեղեցին ունի նորոգման շատ հետքեր, հատկապես երեսապատման քարերը՝ հարավային կողմից։ Նորոգված հատվածներում քարերը տարբերվում են հներից իրենց փոքրությամբ։ Նորոգման հետևանքով եկեղեցու մուտքը մասամբ տեղափոխվել է, առանձնապես աչքի է ընկնում կամարաքարը՝ ոլորաձև զարդագծերով։

Եկեղեցու ներսում կան քանդակազարդ քարեր և առանձին բեկորներ։

Արգինա.—Գտնվում է Արևմտյան Շիրակում, Լենինականից հարավարևմուտք։ Ժամանակին այստեղ եղել է բերդ, որը Սեբեոսը հիշատակում է 605 թվականի իրանա-բյուզանդական պատերազմների առիթով։

Արգինայի քաղաքական ու մշակութային վերելքը կապված է Բագրատունիների հետ, երբ 965 թվականին Արգինա տեղափոխվեց կաթողիկոսական աթոռը։ Այստեղ են նստել Վահան Սյունեցին (968—969), Ստեփանոս Սևանցին (969—971) և Խաչիկ Արշարունին (972—992)։ Շինարարական հիմնական աշխատանքները ծավալվեցին Խաչիկ կաթողիկոսի կողմից։ Գրականությունից և տեղում պահպանված արձանագրությունների մնացորդներից հայտնի են Արգինայում կառուցված երեք շինություն՝ բերդը, կաթողիկոսարանը և մի եկեղեցի։ Մնացել են բերդի հետքերը միայն։ Կաթողիկոսարանը լրիվ ավերված է։ Վերջին ժամանակներս նույն վիճակին է հասել նաև եկեղեցին։

Եկեղեցու ներսում հարուստ մշակված են որմնամույթերն ու խորանի կամարները։ Կ. Հովհաննիսյանը գտնում է, որ մույթերի մշակման փնջային այդ եղանակը, որը կատարելության է հասցված Անիի Մայր տաճարում, Տրդատ ճարտարապետը նախապես իրագործել է այստեղ[110]։

Եկեղեցու, ինչպես և կաթողիկոսարանի կառուցման վերաբերյալ տեղեկություն է տալիս Ասողիկը. «Եւ նորոգեաց (Խաչիկ կաթողիկոս) զտուն կաթողիկոսարանին Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ, յեզերս Ախուրեան գետոյ... Եւ ի նմին գեղ շինեաց զսուրբ կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանօք գմբեթարդ խորան երկնանման, հանդերձ երիւք եկեղեցեօք նոյնաձև, հրեշտակատեսակ, չքնաղագեղ յօրինուածովք»[111]։

Անիի Մայր տաճարի կառուցման կապակցությամբ Ասողիկը վկայում է, որ այս երկու եկեղեցիներն էլ կառուցել է Տրդատ ճարտարապետը. «Արկանէ հիմն և մեծաշեն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայ»[112]։

Կաթողիկոսարանը կառուցված կարող էր լինել Վահան Սյունեցու և Ստեփանոս Սևանցու կողմից։ Քանի որ այս երկուսի հովվապետության շրջանը չափազանց կարճ էր (968—971) դժվար թե նրանք կարողանային կաթողիկոսին արժանավայել նստոց կառուցել, ուստի Խաչիկ կաթողիկոսի կատարածը պարզապես պետք է հասկանալ սկսված շինարարական աշխատանքների ավարտում և, թերևս, հին կաթողիկոսարանի վերակառուցում։

* * *

Այրարատի IX—XI դարերի ճարտարապետության մեջ կարևոր տեղ ունեն նաև խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ հորինվածքները, որոնք հայտնի են չորս հիմնական տարբերակներով։

Առաջին տարբերակի հիմքը V—VII դարերում մշակված էջմիածին-Մաստարա տիպն է։ Հորինվածքի հիմքը քառակուսի ենթագմբեթային կենտրոնն է, որի չորս կողմերում տեղադրված են կիսակլոր թևերը։ Այս տարբերակը IX—XI դարերի հուշարձանների մեջ ներկայացված է Զարնջայի և Կարսի երեք եկեղեցիներով։

Խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթների երկրորդ տարբերակը, ուր խաչաձև թևերը միմյանց միանում են անմիջականորեն, նույնպես վերարտադրում է VI—VII դարերի հուշարձանների տիպը։ Այդ հորինվածքներից են Բյուրականի, Մարմաշենի գերեզմանոցի և Խծկոնքի եկեղեցիները։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն տարբերակները, որտեղ խաչաձև հատակագիծը զուգակցված է եռանավ բազիլիկի հետ (Մաբալիկ, Ջիթհանքով, Ոսկեհասկ)։ Այս տարբերակի ակունքները ևս տանում են վաղ միջնադար (Դվին՝ ս. Գրիգոր, Թալին՝ Կաթողիկե)։ Սակայն IX—XI

[107] Տե՛ս Ասողիկ, էջ 181։

[108] Հոռոմոսի ս. Մինաս եկեղեցու 986 թ. արձանագրությունը, որում հիշատակվել է Սողոմոնի անունը, էական լրացում չի անում։

[109] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 34։

[110] Տե՛ս К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951, стр. 44.

[111] Ասողիկ, էջ 185։

[112] Նույն տեղում, էջ 187։

դարերի տարբերակներում կողմնային թևերն ուղղանկյուն են: Որպես հորինվածքային մտահղացում այն մշակվեց Այրարատում, հանդիսանալով ճարտարապետական դպրոցի ինքնատիպ դրսևորումներից մեկը: Հետագայում այս տարբերակը մեծ տարածում գտավ նաև Տայք նահանգում և Վրաստանում[113]:

Բյուրական.—*Բյուրականում կան երկու ճարտարապետական հուշարձաններ. ս. Հովհաննես և Արտավասիկ (վայրի անունով) եկեղեցիները: Առաջինը գտնվում է գյուղի մեջ, երկրորդը՝ արևելյան ծայրում:*

Ս. Հովհաննես եկեղեցին ուղղանկյուն խորանով միանավ սրահ է: Նրա կառուցումն ավանդաբար վերագրվում է Հովհաննես Դրասխանակերտցուն: Սակայն անգմբեթ բազիլիկի կառուցումը X դարում՝ կաթողիկոսի կողմից, այն էլ ուղղանկյուն խորանով, խիստ անհավանական է: Եկեղեցին ունի ժամանակագրական առումով խայտաբղետ նորոգումների հետքեր, որոնց մեջ կարելի է նշմարել մի շարք վաղ միջնադարյան հատկանիշներ[114]: Եթե նույնիսկ նկատի չունենանք եկեղեցու ուղղանկյուն խորանը, որտեղ, ի դեպ առկա է նաև քրիստոնեական տաճարի համար մի անսովոր որմնախորշ՝ արևելյան պատի կենտրոնում, ապա զարդաքանդակները բավականին պերճախոս վկայում են VII դարում եկեղեցու վերակառուցման մասին: Զարդաքանդակների մեծ մասը գտնվում է ներսում և իրենից ներկայացնում է ժամանակագրական հետաքրքիր պատկեր: Սյուների վրա դրված են վաղ միջնադարյան տարատեսակ գալարազարդ խոյակներ: Մասնավորապես ուշադրություն են գրավում որմնասյուների գալարազարդի տակ դրված Զվարթնոցի, Իշխանի, Դվինի և ներսեսաշեն այլ եկեղեցիներից հայտնի զամբյուղաձև բարձիկները:

Արևելյան պատի արտաքին ձևավորումը, ճակտոնի ստորին ծայրերը միացնող քիվը և դեկորատիվ կամարները հիշեցնում են Տեկորի տաճարի ձևերը: Ներսում, արևելյան պատի մեջ փորված որմնախորշի կամարապսակը հիշեցնում է Երերույքի մուտքի կամարը:

Հարավային պատին երեք պատուհան կա, որոնցից միջինը զարդաքանդակ չունի: Դատելով պատուհանը շրջապատող քարերից, նրա պսակը ևս նորոգված է: Մյուս երկուսի զարդաքանդակներն առնվազն VII դարի են:

Ավանդատներն իրենց T-աձև դասավորությամբ հավելված են: Այդ պարզ նկատելի է արևելյան պատի վրա երևացող կարերից, ըստ որում, ստորին մասում այդ կարն անհետանում է. կարելի է մտածել, որ հավելումը կատարված է առաջին վերաշինության ժամանակ, սակայն բոլոր դեպքերում՝ մինչև VII դարը, քանզի արևելյան պատի ստորին մասը ընդգծված ձևով տարբերվում է վերնամասից, չնայած ուշ միջնադարյան նորոգումների բազմաթիվ հետքերին: Հնից մնացած հատվածներն առավելապես երևում են եկեղեցու ներսում, հարավային պատի ստորին կեսում (մոտ 4 մետր բարձրությամբ) և արևելյան պատի վրա: Հյուսիսային և արևմտյան պատերն արտաքուստ լրիվ նորոգված են: Արևմտյանը նույնիսկ վերաշինված է և հարավային պատի վրա երևում է կից պատի կոպիտ կարը:

[113] Նկատի ունենալով տարբերակի ինքնատիպությունը Ն. Տոկարսկին Տայքի ճարտարապետության մեջ այն դիտում է որպես դպրոցի երևույթ: Տե՛ս *Н. М. Токарский*, Архитектура древней Армении, стр. 200—214.

[114] *А. А. Якобсон*, Из истории армянского средневекового зодчества, ՊԲՀ, 1971, № 2, էջ 120—123:

Վերջապես, կարևոր են եկեղեցու հնից պահպանված քարերի վրա վաղ միջնադարում մեծապես տարածված և այնուհետև բոլորովին չհանդիպող վարպետների բազմաթիվ նշանները: Այս փաստերը ցույց են տալիս, որ ս. Հովհաննես եկեղեցին Դրասխանակերտցու կառուցածը չէ: Դա Հայաստանի հնագույն եկեղեցիներից մեկն է, վերաշինվել է VII դարում և բազմիցս նորոգվել հետագայում: Սակայն ո՞րն է Դրասխանակերտցու կառուցածը: Ինքը պատմիչը այդ մասին գրում է. «Եւ դարձեալ չու յուղի անկեալ չոգաք մինչև ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ գանձի գնոյ, ուր և շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք պերճապաճոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով՝ և վանս կուսակրօն միաբանացելոց զնա հաստատեալ»[115]: Այս նկարագրությունից պարզվում է, որ Դրասխանակերտցին կառուցել է ընդամենը մեկ եկեղեցի և հիմնել վանք, մինչդեռ 1428 թվականի մի ձեռագրում հիշված են Բյուրականի վանքը կազմող երեք եկեղեցիներ՝ Հովհաննու ս. Աստվածածին, ս. Նշան և ս. Հովհաննես[116]: Հովհաննու ս. Աստվածածին անունն ինքնին մի վկայություն է, որ այդ է Դրասխանակերտցու կառուցածը: Եկեղեցիների ավերումից հետո ս. Հովհաննեսն անվան պատճառով ավանդաբար վերագրվել է պատմիչին: Այսպիսով Դրասխանակերտցու կառուցածը կոչվել է ս. Աստվածածին և ս. Հովհաննես անվան հետ որևէ կապ չունի: Պատմիչի նկարագրության համաձայն եկեղեցին գտնվել է ամրոցի մեջ, շինվել է կոփածո քարով և տեղում հիմնվել է վանական միաբանություն: Այս նկարագիրը լիովին համապատասխանում է Բյուրականի արևելյան մասում Արտավասիկ ձորի անունը կրող եկեղեցուն: Բերդում եղել են մոնումենտալ շենքեր և նույնիսկ թատրոն[117]: Եկեղեցին կառուցված է կոփածո քարերով (մինչդեռ վերոհիշյալ ս. Հովհաննեսը սրբատաշ քարերով է շինված), և, դատելով շրջապատում եղած շինությունների մնացորդներից, այստեղ վանք է եղել: Տեղում կան զանազան խոյակներ, խարիսխներ, զարդաքանդակ քարեր, քիվեր, որոնք տվյալ շենքին պատկանել չեն կարող: Այս եկեղեցին ունի խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ հորինվածք, որի պատճառով գրականության մեջ թվագրվել է VII դարով[117]: Սակայն, ի տարբերություն VII դարի նույնատիպ եկեղեցիների, այս շինությունը կառուցված է, ինչպես արդեն նշեցինք, կոփածո քարերով, որը նախ բացառված է VII դարի համար և երկրորդ՝ հաճախ հանդիպում է IX—X դարերում (Սևան, Թաղագյուղ և այլն): Բացառություն է կազմում արևմտյան թևը, որը՝ վրան զանգակատուն կառուցելու պատճառով վերաշինվել է սրբատաշ քարերով: Զանգակատունը չորս սյուներով գմբեթարդ փոքրիկ հավելված է՝ տեղադրված մուտքի վերնամասում:

Թ. Թորամանյանը գրում է, որ այս եկեղեցու պատերին և ընկած երկու քարերի վրա ևս կան վարպետների նշաններ[118]: Այդ քարերն իրենց համաչափություններով և մեծությամբ տարբերվում են մյուսներից և ակնհայտորեն պատկանել են ս. Հովհաննես եկեղեցուն:

[115] Դրասխանակերտցի, *էջ 336:*

[116] *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Այրարատ, էջ 157: Տե՛ս նաև «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1967, էջ 1450:*

[117] *Տե՛ս* Դրասխանակերտցի, *էջ 353:*

[118] *Տե՛ս* Թ. Թորամանյան, *Նյութեր..., 1, էջ 269, 2, էջ 125:*

Կարս.—Կարսի ամենաաչքիընկնող հուշարձանները Առաքելոց եկեղեցին և բերդն են։ Առաքելոց եկեղեցին գտնվում է քաղաքի կենտրոնում։ Ներկայումս վեր է ածվել մզկիթի։ Եկեղեցին քառախորան է։ Խորանները տեղադրված են ենթագմբեթային քառակուսի դահլիճի կողմերում։ Արտաքուստ խորանները հնգանիստ են, ներքուստ՝ կիսաբոլոր։ Գմբեթը զարդարված է երկուական որմնասյուներով և նրանց վրա նստած որմնակամարներով, որոնց վրա կան զարդաքանդակներ։ Դեկորատիվ այս սյուները միաժամանակ ընդգծում են գմբեթի՝ 12 առաքյալները խորհրդանշող նիստերը։ Հիշյալ կամարների հանդիպման անկյուններում տեղադրված են առաքյալների քանդակները։

Եկեղեցու կառուցման մասին տեղեկություններ են թողել Ասողիկը, Ս. Անեցին, Վ. Բարձրբերդցին և Մ. Այրիվանեցին։ Ասողիկը գրում է. «Զի էր շինեալ թագաւորն զկաթողիկէն սուրբ ի քաղաքին Կարուց վիմարդեան արձանօք, որձաքար, պողովատաշ վիմօք, բոլորակեա գմբեթաւորեալ, պայծառ զարդուք երկնանման խորան»[119]։ Ասողիկը թվական չի հաղորդում։ Խոսքը վերաբերում է Սմբատ Ա-ի որդի Աբաս Ա թագավորին, որը գահակալել է 930—954 թվականներին։ Սրա օրոք Կարսը հռչակվեց մայրաքաղաք։

Այրիվանեցին ևս թվականը չի հաղորդում[120], իսկ Բարձրբերդցին այն հիշատակում է Հոռոմոսի, Կամրջաձորի և Դպրեվանքի կառուցման հետ միաժամանակ[121]։ Ս. Անեցին տալիս է հետևյալ տեղեկությունը՝ «ՋԼԱ (931) Աբաս, որդի Սմբատայ. շինէ զաստուածաբնակ տաճարն զկաթուղիկէ ի Կարս՝ հրաշազան յօրինուածովք»[122]։ Թվականը վերաբերում է Աբասի գահակալությանը։ Եկեղեցու կառուցման ժամանակը կապված է պատմական երկու կարևոր անցքերի հետ։ Աբաս թագավորը մայրաքաղաքը Երազգավորսից տեղափոխեց Կարս, և, հավանաբար, այդ ժամանակ էլ սկսեց եկեղեցու շինարարությունը՝ 930—931 թվականներին։ Եկեղեցու ավարտի ժամանակն Ասողիկը կապում է աբխազական Բեր թագավորի արշավանքի հետ։ Պատմիչը տեղեկացնում է, որ հիշյալ արշավանքը Բեր թագավորը նախաձեռնել է ոչ միայն ավազակային կողոպուտի, այլև Աբասի նորակառույց եկեղեցին քաղկեդոնական ծեսով օծելու նպատակով։ Արշավանքն ավարտվում է աբխազական թագավորի պարտությամբ և եկեղեցին օծվում է լուսավորչական ձևով։ Այսպիսով, եկեղեցու կառուցումն ավարտվել է այդ արշավանքի տարին։ Սակայն պատմիչները, տարաբախտաբար, որոշակի տարեթիվը չեն հաղորդում։

Տիրիմ.—Աբաս թագավորի մյուս ձեռակերտը գտնվում է Գաբեղեանց գավառում, Արշարունիք և Վանանդ գավառների սահմանի մոտ։ Տիրիմ գյուղում նա կառուցում է մի վանք, որի գոյության և ճարտարապետության մասին տեղեկություն չունենք։ Ասողիկը գրում է. «(Աբաս թագավորը կամեցավ) շինել ի փրկունս անձին իւրոյ՝ ի յիշատակ հոգւոյ յաւիտենական, և ընտրեաց տեղի ընտրանաւ ի գլուխս Արշարունեաց գաւառին որում Տիրիմն կոչիւր» «ընդարձակագոյն պարսպեալ որձաքար վիմօք չորեքկուսի ձևով,

[119] Ասողիկ, էջ 172։
[120] Տե՛ս Այրիվանեցի, էջ 56, Բարձրբերդցի, էջ 120։
[121] Տե՛ս Բարձրբերդցի, էջ 88։
[122] Ս. Անեցի, էջ 99։

յիւրոց գանձուց մեծածախ աշխատութեամբ յարդարեալ զամենայն շինուածըսն պիտոյից, բնակութիւն կրօնաւորաց»[123]։

Կարսից Էրզրում տանող ճանապարհին Առաքելոցատիպ ևս մի եկեղեցի կա։ Գմբեթն ավերված է։ Տրոմպների վրա քանդակված են ավետարանիչների պատկերները[124]։

Կարսի հյուսիսային կողմում գտնվում է այս տիպին պատկանող երրորդ եկեղեցին։ Հայտնի է Ջիբինի անունով[125]։

* * *

IX—XI դարերի հայ ճարտարապետության մեջ արտաքին ուրվագծերի կատարելությամբ և հորինվածքային հարուստ հնարամտությամբ առանձնահատուկ տեղ ունեն բոլորաձև հատակագծով եկեղեցիները։ Դրանց առաջացման հիմքում ևս ընկած են VII դարից եկող ավանդույթները, որոնք, X—XI դարերում զանազան տարբերակներ ունեցան Շիրակում և, հատկապես, Անիում։

Կլորավուն շինությունների հորինվածքային կերպարը Հայաստանում ինչպես հնագույն, նույնպես և հետագայի օրինակներում բաղկացած է երկու զանգվածային հատվածներից՝ ստորին բոլորակ և գմբեթ։ Բացառություն են կազմում Զվարթնոցի և Հովվի եկեղեցին Անիում։ Նրանց կառուցվածքում առկա է նաև միջին բոլորակը, որը շինությանը եռահարկ տեսք է տալիս։ VII դարի բոլորաձև շինությունները եղել են կամ բազմախորան (Արագած, Եղվարդ, Իրինդ), կամ քառախորան (Արդնի, Զվարթնոց, Իշխան)։ Վերջին երկուսի կառուցվածքային տրամաբանությունը կապված է եռանավ սկզբունքի հետ։

IX—XI դարերում բոլորաձև հորինվածքների շուրջը մշակվեցին հատկապես այն տիպերի տարբերակները, որոնք կապված էին միանավ սկզբունքի հետ։ Այս տիպը հիմնականում հանդես է գալիս երեք տարբերակով՝ քառախորան (Խծկոնք, Մարմաշեն, Գառնի), վեցախորան (Բագարան, Անի) և ութախորան (Անի)։ Քառախորան բոլորաձև հատակագծով եկեղեցիներն ըստ էության բոլորովին նոր երևույթ են միջնադարյան հայ ճարտարապետության մեջ։ Այս եկեղեցիների չորս խորանների միջև տեղադրված են չորս ավանդատներ, որոնք խորանների հետ միասին ամփոփված են բոլորաձև պատերի շրջանակի մեջ։

Հիշյալ երեք շինություններից գրավոր սկզբնաղբյուրներում թվագրված են Գառնիի և Խծկոնքի ս. Սարգիս եկեղեցիները։

Գառնի.—Գառնիի եկեղեցին գտնվում է հեթանոսական տաճարի մոտ, արևմտյան կողմում։ Ներկայումս խիստ ավերված է։ Եկեղեցուց հյուսիս կա մի տապանաքար վրան արձանագրված ՄԱՇՏՈՑ։ Պատմիչների վկայությամբ այդտեղ է եղել Մաշտոց Ա-ի շիրիմը։

Գառնին Մաշտոցին էր նվիրել իշխանաց իշխան Աշոտը[126], որն իր հոր՝ Շապուհի մահից հետո դարձավ սպարապետ։ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ եդաւ մարմին նորա (Մաշտոցի) ի գերեզմանի ի Գառնի հուպ առ

[123] Ասողիկ, էջ 172։
[124] Տե՛ս „Architettura medievale Armena", p. 116.
[125] Տե՛ս նույն տեղում, էջ 92։
[126] Տե՛ս Ստ. Օրբելեան, էջ 174։

պարմանալի Թախտն Տրդատայ. և շինեցին ի վերայ նորա եկեղեցի վայելուչ»[127]: Պետք է ուշադրություն դարձնել եկեղեցի վայելուչ բառերին, որոնք բացառում են այդ նկարագիրը վերագրել գերեզմանական անշուք տապանին: Գանձակեցին ընդգծում է, որ մարմինը դրել են գերեզմանոցում և այնուհետև կառուցել վայելուչ եկեղեցի. «Եւ ի վերայ» բառերը բառացի հասկանալ չի կարելի: Մենք ունենք այլ օրինակներ, երբ հանգուցյալի հիշատակին տապանի հետ կառուցվում է նաև եկեղեցի: Այդպես է տեղադրված Աշոտ Ողորմածի գերեզմանը Հոռոմոսի բոլորաձև եկեղեցու մոտ, որ կառուցվել է նրա հիշատակին[128], Շուշան Պահլավունու դամբարանի մոտ՝ ս. Հակոբ եկեղեցին Անիում և այլն[129]: Կլոր եկեղեցու ավերակներն, այսպիսով, Մաշտոց Ա.-ի վկայարանի մնացորդներն են: Մաշտոց Ա.-ը մահացել է 898 թվականին: Այդ թվականով էլ, կարծում ենք, կարելի է թվագրել վկայարանը:

Ինչպես արդեն նշեցինք, Գառնիից բացի այս տիպի եկեղեցիներ կառուցվել են նաև Մարմաշենում և Խծկոնքում: Այս երեքից միայն վերջինն է պահպանվել, որի հիման վրա կարելի է պատկերացում կազմել մյուս երկուսի հորինվածքային կերպարի մասին:

Խծկոնք.—Խծկոնքի հուշարձանախումբը գտնվում է Արևմտյան Շիրակում՝ Տեկորից մոտ 2—3 կիլոմետր արևմուտք: Համալիրի մեջ մտնող յոթ եկեղեցիներից միայն մեկն է պահպանվել, այն էլ անմխիթար վիճակում:

Եկեղեցիներից չորսը խմբված են եղել իրար մոտ, երկուսը՝ որոշ հեռավորության վրա, մեկը՝ մոտ 1 կմ հեռու: Շինություններից միայն ս. Սարգիս եկեղեցու հատակագիծն է հայտնի, մյուսները չեն չափագրվել:

Խծկոնքի շինությունների մասին տեղեկություն է պահպանվել Սամուէլ Անեցու մոտ. «ՌԻԹ (1029) Կոստանդին ամս Գ: Մեծապատիւ վեստն Սարգիս՝ զկնի բազում շինուածոց՝ բերդից և եկեղեցեաց՝ զհրաշալի վանս զԽծկօնս շինեաց. պայծառ պսակաւ զարդարեալ զսուրբ քաւարանն՝ որ ճանաչի անուն սուրբ Սարգիս: Նաև զՇառաքար վանքն՝ բերդ արարեալ պարսպեալ հաստահեղույս կրով՝ բրգունս ձուլածոյս: Յորում և ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գէորգայ՝ շինէ երկուս այլ յարակիցս գմբեթաւորս՝ զսուրբ Յոհաննէս և զսուրբ Սեքենոս»[130]:

Վանական շինություններից չորսը՝ ս. Սարգիսը, ս. Գևորգը, ս. Հովհաննեսը և ս. Սեքենոսը կառուցվել են Վեստ Սարգիս իշխանի կողմից: Վեստ Սարգսի ձեռակերտն են նաև ընդհանուր խմբից որոշ հեռավորության վրա գտնվող երկու եկեղեցիները: Բացի այդ նա կառուցել է ամրոց, որի մնացորդները պահպանվել են մինչև հիմա: Ս. Անեցուց իմանում ենք, որ Խծկոնքի եկեղեցիներից առաջ Վեստ Սարգիսը կառուցել է բազում այլ շինություններ: Խծկոնքի ս. Ստեփանոս եկեղեցու մասին Ս. Անեցու մոտ տեղեկություն չկա: Այստեղից երևում է, որ եկեղեցին Վեստ Նարգսի կառուցածը չէ: Թ. Թորամանյանը գտնում է, որ ս. Ստեփանոսը կառուցվել է մինչև X դարը[131]: Ըստ Թ. Թորամանյանի ս. Աստվածածին եկեղեցին հատակագծով նման է Էջմիածնի Հռիփսիմեին և կառուցված կարող է լինել X դարից ոչ ուշ[132]:

[127] Գանձակեցի, էջ 81:
[128] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 30:
[129] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 157:
[130] Ս. Անեցի, էջ 106:
[131] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., էջ 310:
[132] Տե՛ս նույն տեղում, էջ 71:

Խծկոնքի հուշարձանախմբից միայն երկուսն են պահպանել շինարարական բնույթի վիմագիր հիշատակարան: Մեկը թվագրված է 1153, մյուսը՝ 1213[133]:

Բագարան.—VII դարի հանրահայտ եկեղեցուց բացի Բագարանում գրականության մեջ հիշատակված են չորս եկեղեցի և մի բերդ: Եկեղեցիներից ս. Գէորգը գտնվել է բերդի մոտ, երկրորդը՝ դեպի բերդ տանող ճանապարհին, երրորդը՝ կառուցված է եղել բերդի հարավային կողմում, չորրորդը՝ գետի ձախ ափին: Այս հուշարձանները մասնագիտական հետազոտության չեն ենթարկվել: Այժմ բացի չորրորդից մյուսներն այլևս գոյություն չունեն: Չորրորդ եկեղեցին տեղադրված է մի հսկայական քառաժայռի գագաթին: Տեղացիները կոչում են ս. Շուշանիկ: Կլորավուն հատակագծով վեցախորան փոքրիկ եկեղեցի է: Խորանների արանքում արտաքուստ եռանկյունաձև որմնախորշեր կան: Գմբեթը ծածկված է կղմինդրով, արևմտյան կողմից թմբուկը մասամբ ավերվել է: Եկեղեցին ունի երկու մուտք, բացված արևմտյան և հարավ-արևմտյան խորաններից: Սկզբում եղել է միայն արևմտյան կողմինը: Արտաքուստ այն ձևավորված է եղել որմնասյուներով: Հետագայում այս մուտքը փակվել է և փոխարենը բացվել հարավ-արևմտյան կողմից: Վերջինս արտաքին ձևավորում չունի, որից էլ հետևում է նրա հետագա փորված լինելը: Մուտքի տեղափոխման պատճառը հարավային կողմում կառուցված եկեղեցին է, որի հետ հաղորդվելու նպատակով այդ մուտքը միջանցքով միացվել է նրա հյուսիսային խորանին: Ներկայումս հարավային եկեղեցին գրեթե ամբողջությամբ ավերված է: Պահպանվել են հյուսիսային և արևմտյան խորանների կեսերը, որոնց մեծ մասը վերաշինվել է կիսամշակ քարերով: Դատելով մնացորդներից այդ եղել է խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ շինություն, խորանների արտաքին պատերի հնգանիստ կառուցվածքով: Այս եկեղեցուն հյուսիս-արևելյան կողմից կցված է եղել ևս մի շինություն, որից մնացել են միայն գմբեթարդի հյուսիսային կեսը և մուտքի մոտ դեպի վեր տանող հինգ աստիճանները: Ըստ տեղադրության այդ աստիճանները գտնվել են եկեղեցու մեջ: Պահպանված կեսից երևում է, որ կից այդ շինությունը ունեցել է հավասարակողմ համաչափություններ, փոքրիկ, թերևս ավանդատուն կամ զանգակատուն և աստիճաններն էլ տարել են դեպի վերին հարկը: Դատելով խորանի պահպանված կեսից, այն եղել է պայտաձև: Դրանով էլ մեծապես նույնանում է վեցախորան եկեղեցու հետ:

Խաչաձև հատակագծով եկեղեցին ժայռագագաթի նեղ սահմաններում տեղադրելու համար աստիճանների պատը թեքությամբ կտրվել է[134]: Այս հանգամանքը մեծապես կարևոր է երեք շինությունների ժամանակագրական հաջորդականությունը պարզելու համար: Սկզբում կառուցվել է վեցախորան եկեղեցին և կից զանգակատունը: Ընդ որում հարավ-արևմտյան խորանի արտաքին պատը ծառայել է զանգակատանը որպես հյուսիսային պատ: Այս երկու շենքերի միաժամանակյա լինելը երևում է նրանից, որ համատեղ ամրության համար վեցախորան եկեղեցու հարավ-արևելյան որմնախորշը չի արվել: Տարբեր ժամանակ կառուցվելու դեպքում այդ որմնախորշը կփակվեր, սակայն կարերի բացակայությունից երևում է, որ այն ի սկզբանե գոյություն չի ունեցել: Իսկ աստիճանների պատի թեք կտրվածքը, ինչպես նաև

[133] Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 183:
[134] Տե՛ս А. Манучарян, Два новооткрытых памятника многоапсидной композиций, ՊԲՀ, 1976, № 3, էջ 264—267.

քառախորան եկեղեցու տեղադրությունը զանգակատան հարավ-արևմտյան պատի վրա թույլ են տալիս ենթադրելու, որ քառախորան եկեղեցին վերջին կառույցն է։

Այս խմբի մեջ առավել լավ պահպանված ու ճարտարապետական ձևերով նշանավորը վեցախորան եկեղեցին էր։ Չնայած վաղ միջնադարյան որոշ տարրերի առկայությանը և, հատկապես, մոտ 25 կմ հեռավորության վրա ընկած Արագածի եկեղեցու հետ ունեցած նմանությանը, այստեղ կան նաև ուշ ժամանակների բացահայտ հատկանիշներ, որոնցից ամենաէականը գմբեթի թմբուկի կլորավուն կառուցվածքն է։ Հիմքից թմբուկն անջատված է քիվի գոտիով, որի տակ, կամարների արանքներում, տեղադրված են առագաստները։

Բագարանում եկեղեցի կառուցելու մասին տեղեկություն է տալիս Դրասխանակերտցին. «Իսկ նա (Աշոտ) ի սկզբան սպարապետական պայազատութեանն խորհուրդ բարեաց զանձամբ արկեալ՝ շինէ ապա զպճնապայծառ եկեղեցին Բագարանու, որ ի վերայ Ախուրյան գետոյ»[135]։

Ալիշանի կարծիքով պատմիչը նկատի ունի ժայռի գագաթի եկեղեցին[136]։ Թեև մեծավաստակ գիտնականը անտեղյակ է եղել եկեղեցու ճարտարապետությանը, սակայն նրա կռահումը արդ կարող է ապացուցվել ճարտարապետական ձևերի ժամանակագրական առանձնահատկություններով։

Եկեղեցին կառուցող Աշոտը Սմբատի եղբոր՝ Շապուհի որդին էր, հոր մահից հետո, 914 թվականին նշանակվեց սպարապետ։ Եկեղեցին կառուցել է սպարապետ դառնալուց անմիջապես հետո։ Այդ հատկապես նշում է Դրասխանակերտցին։ Այսպիսով, կառուցման ժամանակը կարելի է համարել 914—918 թվականները։

Կողբ.—Բագարանի եկեղեցուց հետո Շապուհի որդի Աշոտ Բագրատունին կառուցել է ևս մի եկեղեցի՝ Ճակատք գավառի Կողբ գյուղում։ Դրասխանակերտցին գրում է. «Զկնի ապա (Աշոտ) հիմնադրէ եկեղեցի ի քաղաքագեօղն Կողբ բազմածախ փարթամութեամբ»[137]։ Եկեղեցու ճարտարապետության և գոյության մասին տեղեկություն չունենք։

* * *

Քաղաքացիական շինություններ.—IX—XI դարերի աշխարհիկ, և մասնավորապես քաղաքացիական շինությունների մի ամբողջ շարք է պահպանվել Այրարատ նահանգում։ Դրանց մեջ առանձնահատուկ տեղ ունի Ամբերդը։

Ամբերդը Հայաստանի նշանավոր հնավայրերից մեկն է։ Այստեղ կառուցվել են աշխարհիկ և քաղաքացիական բազմատեսակ շինություններ։ Հնավայրի գլխավոր հուշարձանը ամրոցն է, կառուցված լեռնոտ մի հրվանդանի վրա, երկու կողմից շրջապատված խոր ձորերով և Ամբերդ ու Արխաշան գետակներով։ Պահպանված ավերակները ցույց են տալիս գոյատևման երեք շրջաններ՝ ա) IX—XI դարեր, բ) XII—XIII դարեր և գ) Ուշ միջնադար[138]։

Ամբերդի հուշարձանը բաղկացած է բերդապարիսպներից, իշխանական

[135] Դրասխանակերտցի, էջ 194։
[136] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 66—67։
[137] Դրասխանակերտցի, էջ 194։
[138] Տե՛ս Ս. Հարությունյան, Ամբերդի պաշտպանական սիստեմը, ՊԲՀ, 1967, № 1, էջ 138։

դղյակից, կոմունալ շինություններից և 1026 թվականին կառուցված եկեղեցուց[139]։

Բագրատունյաց շրջանում Ամբերդը Պահլավունիների սեփականությունն էր և, հավանաբար, նրանք էլ կառուցել են բերդամիջի դղյակը։ Եկեղեցուց բացի տեղի շինությունների կառուցման վերաբերյալ որևէ գրավոր տեղեկություն մեզ չի հասել։ Սակայն եկեղեցու կառուցումն ինքնին մի հիմք է ենթադրելու համար, որ նրա կարիքը զգացվել է XI դարի առաջին քառորդին, այսինքն՝ բերդը, դղյակը, տեղի կայազորը, գուցե և ռազմավանը Պահլավունները հիմնադրած պետք է լինեն X դարի վերջին քառորդին. Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները[140], XI դարում բերդը համեմատաբար փոքր տարածություն է ընդգրկել. Երկրորդ շրջանում այն իր մեջ է առել ամբողջ հրվանդանը[141]։

Դղյակը ընկած է բերդի հյուսիս-արևելյան անկյունում։ Ժամանակին եղել է եռահարկ։ Այժմ կան առաջին երկու հարկերը և առանձին տեղերում՝ երրորդ հարկի մնացորդներն ու դեպի վերին հարկերը տանող շքեղ աստիճանները։ Յուրաքանչյուր հարկում եղել են հնգական սենյակներ։

Դղյակն ունեցել է նաև պաշտպանական նշանակություն։ Հյուսիսային պատն ամբողջապես ամրացվել է աշտարակներով և կազմել բերդի ամենահզոր պաշտպանական համակարգը։

Բաղնիքի շենքը բաղկացած է թաղածածկ՝ մի փոքր և գմբեթածածկ մեծ սենյակներից։ Մեծ սենյակն ուղղանկյուն երկարավուն համաչափություններ ունի, միջին մասում որմնամույթերի միջոցով բաժանվել է երկու մասի։ Ջուրը մատակարարվել է կավե խողովակների բարդ ցանցով, որը ճյուղավորվել է մայրուղուց։ Պատերի մեջ հայտնաբերվել են նաև մետաղյա խողովակներ և ծորակ[142]։ Հ. Խալփախչյանի կարծիքով ջուրը մատակարարվել է ջրամբարից[143]։

Ջրամատակարարման բավականին բարդ շինարարական աշխատանք է կատարված։ Ջրատար խողովակների ամբողջ ցանցը չի պահպանվել։ Ն. Տոկարսկին այդ ուղու հետքերը գտել է մոտ 4 կմ հեռու[144]։ Բերդի մեջ եղել են երեք ջրամբարներ և մի գետնուղի, որը տարել է դեպի Ամբերդաձորի գետը։

Ամբերդի շինություններն ըստ էության լրացնում են Շիրակի հարավային սահմանները ապահովող պաշտպանական գիծը, որն իրականացված է Ամբերդ-Կոշ-Արուճ-Աշնակ ուղղությամբ։ Արևելյան կողմում պաշտպանական հենակետերն էին Գառնին և Բջնին։ Բերդերի մի ամբողջ շարք կա հյուսիսային և դեպի Անի տանող ուղղություններով[145]։ Դրանց մեջ առաջնակարգ դիրք ունեին Մարմաշենը և Տիգնիսը՝ հյուսիսում և Մաղասաբերդը՝ Անիի հարավում։

[139] Տե՛ս A. A. Novello, La fortezza di Amberd sul monte Aragadzr, 1969, *Н. М.* *Токарский*, По страницам истории армянской архитектуры, стр. 23—49.
[140] 1936 թ. Ամբերդում պեղումներ սկսեց Հ. Օրբելին, այնուհետև այն շարունակեց Ն. Տոկարսկին։ Վերջին ժամանակներս բերդի պեղման և ուսումնասիրման ուղղությամբ մեծ աշխատանք է տարել Ս. Հարությունյանը։
[141] Տե՛ս *Н. М. Токарский*, По страницам..., стр. 31.
[142] Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 318.
[143] Տե՛ս *О. Х. Халпахчьян*, Гражданское зодчество Армении, стр. 214.
[144] Տե՛ս *Н. М. Токарский*, По страницам..., стр. 37.
[145] Տե՛ս Ս. Հարությունյան, նշված հոդվածը, ՊԲՀ, 1967, № 1, էջ 130։

Մարմաշենի բերդը լրիվ կործանված է։ Ներկայումս անմխիթար վիճակում է նաև Տիգնիսը։ Սակայն հին ճարտարապետների և ուսումնասիրողների նկարագրությունների, հատակագծերի և լուսանկարների շնորհիվ հայտնի է [146], որ բերդը զբաղեցրել է ուղղանկյուն երկարավուն մեծ տարածություն մի բարձրադիր վայրում՝ Շիրակավանի մոտ։ Պարսպապատերի անկյուններում և նրանց միջև ունեցել է կիսաբոլոր բուրգեր։ Ներսում եղել են երկհարկանի կամարակապ շինություններ։ Բերդին կից կան նաև այլ բուրգեր և պարիսպը շրջապատող պարսպապատի ևս մի շերտ։ Կառուցվածքային այս երկշերտ ձևով Տիգնիսը հիշեցնում է Մաղասբերդը։ Վերջինիս հիմնադրումն ավանդաբար կապում են VI դարի հետ[147]։

Բերդատիպ շինությունների մեջ իր հորինվածքով հետաքրքիր է Գուսանագյուղի դղյակ-ամրոցը. կառուցված է եռանկյունաձև հատակագծով, անկյուններում եղել են բոլորաձև բուրգեր, եռանկյան հարավային ծայրին, ներսից նշմարվում են աստիճանների մնացորդներ, որոնք, հավանաբար, տարել են դեպի պարսպապատի վերին հարթակը։

* * *

Այրարատ նահանգն առավելապես աչքի ընկավ միանգամայն ինքնատիպ ճարտարապետական արվեստով, որով և բնութագրվեց նրա դպրոցի կարևորությունը հայ ճարտարապետության մեջ։ Այդ տեսակետից կարևոր տեղ ունեն չորս ավանդատնով բոլորաձև եկեղեցիները, ներքին տարածության յուրատեսակ մշակումը, արտաքին ձևավորման բոլորաձև կառուցվածքը, համաչափությունների, հարդարանքի տեսակները և այլ մանրամասներ։ Այստեղ ևս ամենակարևոր սկզբունքն արտահայտված է խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածքի գաղափարի մեջ։ Այրարատի ճարտարապետական դպրոցն աչքի ընկավ նաև բոլորաձև հատակագծերի այլ տարբերակներով, որոնց մեջ իրագործվեցին VII դարում մշակված վեցախորան և ութախորան հորինվածքները։

Որպես դպրոցի արգասիք պետք է դիտել նաև գմբեթավորված փոքրածավալ սրահի ստեղծումը։ Առաջ գալով Այրարատում դրանք մեծ տարածում ստացան XIII դարի դամբարանական շինություններում։

Այրարատի ճարտարապետական դպրոցում էական տեղ ուներ ուղղանկյուն ենթագմբեթային դահլիճով քառաթև կենտրոնագմբեթ եկեղեցիների վերահաստատումը։

Ի տարբերություն Հայաստանի մյուս նահանգների, Այրարատը լինելով երկրի վարչական, քաղաքական ու հոգևոր կյանքի կենտրոնը, առավել ուշադրության է արժանացել պատմիչների կողմից։ Եթե Սյունյաց հուշարձանների կառուցման վերաբերյալ հաղորդած նյութի առատությամբ և կարևորությամբ առանձնանում է Ստ. Օրբելյանը, ապա Այրարատ նահանգի վերաբերյալ պատմիչներից որևէ մեկին առավելություն տալ չի կարելի։

Այրարատի շինարարական արձանագրությունները չափազանց հարուստ են տարատեսակ այլ տեղեկություններով ևս։ Այստեղ հանդիպում են վկայություններ ինչպես կառուցող անձանց, կառուցման պարագաների պատմական, տնտեսական, իրավական (Մարմաշեն, Կեչառիս, Բջնի), տոհմական և այլ

146 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 305, 312։

147 Տե՛ս «Պատմութիւն Տայհոյ Բագրատունւոյ», Էջմիածին, 1921, էջ 4։

տեղեկություններ։ Շինարարական աղբյուրների առավել կարևոր նշանակությունը կայանում է նրանում, որ այս բնագրերի մեջ արտացոլվում է հուշարձանի կառուցման պատմությունը և ժամանակագրությունն առհասարակ, այսինքն՝ երկրի ճարտարապետական արվեստի զարգացման ընթացքը։

Այրարատն իբրև կենտրոնական նահանգ տեղական արվեստի զարգացման գործում ուներ այն կարևորությունը, որ նրա կապերը երկրի ծայրամասերի մշակույթի հետ ավելի լայն և ինտենսիվ բնույթ ունեին, քան առանձին ծայրամասերի կապերը միմյանց հետ։ Թերևս հենց սա է պատճառը, որ Այրարատ նահանգն աչքի է ընկնում ճարտարապետական տիպերի առավել բազմազանությամբ։

Ա Ն Ի

Անին գտնվում է Այրարատ նահանգի Շիրակ գավառի կենտրոնում, Ախուրյան և Անի գետերի խառնարանից առաջացած եռանկյունաձև տարածքի վրա։ Երեք կողմերից շրջապատված է անդնդախոր կիրճերով, որոնք կարևոր դեր են խաղացել քաղաքի պաշտպանության համար։ Հյուսիս-արևմտյան կիրճը հայտնի է Ծաղկոցաձոր, նրա հյուսիսային ծայրերից դեպի արևելք, մինչև Սմբատի պարիսպների ծայրը՝ Իգաձոր, պարիսպների արևելյան վերջավորությունից մինչև Ախուրյան գետի հատվածը՝ Գայլեձոր անուններով։ Հարավային կողմում, եռանկյունու ծայրի փոքրիկ բլրակը կոչվում է Աղջկաբերդ։ Քաղաքին այն միանում է նեղ պարանոցով, որից հյուսիս տարածքը կտրուկ բարձրանում է և գերիշխող դիրք բռնում քաղաքի նկատմամբ։ Այդ պատճառով, ինչպես Կամսարականները, այնպես էլ Բագրատունիներն ապարանքի տեղադրման համար նախընտրել են այս վայրը։ Քաղաքի հիմնական տարածքն ընդարձակ հարթավայր է և նրա զգալի մասն ընդգրկվել է պարսպապատերի մեջ։

Անին որպես քաղաք և մշակութային կենտրոն կազմավորվեց Բագրատունյաց տիրապետության շրջանում։ Սակայն, չնայած այդ վճռական շրջադարձին, որ նա ապրեց X դարից սկսած, պատմիչների վկայություններից և պեղումներից պարզվում է, որ որպես ավան, իսկ առավել ևս՝ որպես բերդ գոյություն է ունեցել դեռևս Բագրատունիների գերիշխանությունից շատ դարեր առաջ[1]։ Անիի մասին առաջին գրավոր տեղեկությունները վերաբերում են V դարի կեսերին[2], երբ այն տակավին Կամսարականների սեփականությունն էր։ Այս շրջանում Ախուրյանի ափին կանգնած է եղել բերդ-ամրոցը, որը միաժամանակ Կամսարականների ապարանքն էր։ Այսպիսի վիճակում Անին մնացել է արաբների տիրապետության ամբողջ ընթացքում։

Միջնադարյան քաղաքների օրինակով IX—XIII դարերում քաղաքը բաժանված է եղել երեք մասի՝ ա) միջնաբերդ՝ թագավորական պալատով, բ) պարսպապատ քաղաք՝ Շահաստան, գ) պարիսպներից դուրս գտնվող արվարձաններ։ Անիի միջին մասում տեղավորված էին կարավանատները. հրապարակներն ու շուկաները[3]։ X դարի սկզբներին Անին արդեն բազմամարդ քաղաք էր[4], որը կառուցապատելու գործում մեծ աշխատանք են տարել ինչպես Բագրատունիները, այնպես էլ աչքի ընկնող նախարարները։ Դատելով բազմաթիվ վիմական արձանագրություններից, քաղաքի կառուցմանն ակտիվ

---

[1] Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները..., 1, էջ 75։
[2] Տե՛ս Եղիշե, էջ 15, Ղազար Փարպեցի, էջ 265։
[3] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., Բ, Բ մասի նյութեր, էջ 364—366։
[4] Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները..., 1, էջ 75—76։

մասնակցել է նաև բնակչությունը[5], հատկապես միջին դասը։ Անիում են
ապրել և գործել աչքի ընկնող ճարտարապետներ, քանդակագործներ, նկարիչ-
ներ և բազմաթիվ այլ արհեստավորներ։ Սակայն հաշվի չէին վայելում նաև
վիմագիր գրիչները, որոնց փորագրած արձանագրությունները երբեմն այն-
պիսի նրբագեղ և նույնիսկ զարդաքանդակ տառաձևեր ունեն, որ իրենց
վարպետությամբ կարող են բարձրարվեստ ստեղծագործությունների շարքը
դասվել։ Խաղաղ զարգացման պայմանները, սակայն, երկարատև չեղան։
1040 թվականին Հովհաննես-Սմբատ թագավորը, Բյուզանդիայի քաղաքական
ճնշման տակ, ինչպես և արդեն ծայր առած սելջուկների արշավանքների
վտանգն աչքի առաջ ունենալով, Անին և Շիրակը կտակեց Բյուզանդիային[6]։
Սակայն Բյուզանդիան դիվանագիտական, ինչպես և զենքի ուժով Անին
տիրել չկարողացավ և միայն 5 տարի անց՝ 1045 թվականին խաբեությամբ
իր մոտ հրավիրելով Բագրատունյաց վերջին արքա Գագիկ Բ-ին ուխտադրուժ
կերպով ձերբակալեց նրան և երկարատև պաշարումից հետո գրավեց քաղաքը։
1064 թվականին Անին ընկավ սելջուկների ձեռքը և չնայած ենթարկվեց
մեծ ավերածությունների, կողոպուտի և գերևարության, այնուհանդերձ չկոր-
ցրեց իր քաղաքական դերը։ Շեդադյանների շրջանում նա տակավին խոշոր
քաղաք էր և երկրի վարչական կենտրոնը։ Սակայն 1045 թվականից հետո
նկատելիորեն նվազեց քաղաքի մշակութային կյանքի զարգացումը։ Ինչպես
արաբական շրջանում (VIII—IX դդ.), սելջուկների օրոք ևս մոտ մեկուկես
դար քաղաքակիրթ կյանքը Հայաստանում խաթարվեց։ Թուրք-սելջուկյան
խավարամիտ հորդաների ավազակաբարո կենցաղին խորթ էր քաղաքակրթու-
թյունն առհասարակ։ Աննշան փոփոխություններով այդ իրավիճակը պահ-
պանվեց մինչև XII դարի վերջը, երբ Զաքարյանների գլխավորությամբ և
վրացական զորքերի աջակցությամբ Անին ու Հայաստանի զգալի մասը
ազատագրվեց։

Զաքարյանների օրոք Անին իր վերջին վերածնունդն ապրեց։ Այդ շրջա-
նում մեծ աշխատանքներ տարվեցին հատկապես բերդապարիսպների նորոգ-
ման և ամրացման ուղղությամբ, կառուցվեցին նոր եկեղեցիներ, կարավանա-
տներ, կամուրջներ և այլն։ Սակայն Զաքարյանների գերիշխանությունը և
Անիի ապահով զարգացումը ևս երկար չտևեց։ XIII դարի քսանական թվա-
կաններին սկսվեցին միջինասիական ցեղերի արշավանքները, իսկ 30-ական
թվականներին Անին ընկավ մոնղոլների ձեռքը։ Վերջին հարվածն Անին
ստացավ XIV դարի սկզբին՝ ահեղ երկրաշարժից, որից հետո սկսեց ամայա-
նալ։ XVI դարում Անին արդեն անմարդաբնակ էր։

Անիի հնագիտական ուսումնասիրության սկիզբը դրեց Ն. Յա. Մառը
1892 թվականին և շուրջ քսան տարվա աշխատանքի արդյունքները ամփո-
փեց իր «Անի» մենագրության մեջ[7]։ Ն. Յա. Մառի նախաձեռնած հետազոտա-
կան այդ աշխատանքներին մասնակցեցին բազմաթիվ մասնագետներ, որոնց
հրատարակած նյութերն ու մեկնությունները ներկայումս միակ հիմքն
են Անիի ճարտարապետության, վիմագրության, հնագիտության, պատմու-

---

[5] Տե՛ս Ս. Գ. Բարխուդարյան, Ժողովրդի դերը մեր պատմական հուշարձանների կերտման գործում, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1958, № 8, էջ 48։
[6] Տե՛ս Լաստիվերտցի, էջ 32, Ուռհայեցի, էջ 49, Բարձրբերդցի, էջ 93։
[7] Տե՛ս Н. Я. Марр, Ани, Книжная история города и раскопки на месте городища, Л.—М , 1934.

թյան և այլ հարցերի ուսումնասիրության համար։ Անիի մշակույթի մեջ կարևոր տեղ ունի ճարտարապետությունը, որն աչքի է ընկնում մի բնորոշ առանձնահատկությամբ։ Քաղաքի տարածքի նեղ սահմաններում տիպային երևույթը կարող էր որպես կրկնություն դիտվել։ Այդ պատճառով ոճական և հորինվածքային ձևերի յուրաքանչյուր տեսակ դիտվում էր որպես առանձին ստեղծագործություն և բոլորովին անընդունելի էր երկրորդ՝ նմանի առկայությունը, մանավանդ, որ կրկնությունից խուսափելու համար առատ հիմք էին տալիս վաղ միջնադարյան, նույնպես և նոր դարաշրջանի առանձին դպրոցներում ստեղծված բազմատեսակ ճարտարապետական ձևերը։ Դեռ ավելին, Անին, որպես երկրի քաղաքական ու մշակութային կենտրոն, իր մեջ միավորում ու յուրովի վերարտադրում էր երկրում ստեղծված ամեն մի արժեքավոր մտահղացում։ Բազմազանության ձգտումը, իսկ առավել ևս այդ միավորելու, ամփոփելու հանգամանքն ամենևին չէր նշանակում, որ Անիում ինքնատիպ և նոր ձևեր չստեղծվեցին։ Թերևս մենք սովոր ենք տիպին իրավասություն տալ այն դեպքում, երբ նա իր քանակական վերլուծությամբ դառնում է բնորոշ երևույթ։ Այս դեպքում Անին չունի այդ երևույթը։ Մինչդեռ դրան հակառակ Անիի յուրաքանչյուր, եզակի բնույթ ունեցող շինություն, ըստ էության, նոր երևույթ էր իր տիպային ըմբռնողությամբ և ձևերի գեղարվեստական արժեքների մեկնաբանությամբ։ Այստեղ կարելի է գտնել և բարձրարվեստ պատճեններ (Գագկաշեն ս. Գրիգոր) և հին ու նոր ճարտարապետական ձևերից հյուսված մոնումենտալ կերտվածքներ (Մայր տաճար), և այդ հյուսվածքների ու ինքնատիպ մտահղացումների խառնուրդով համեմված շքեղ հորինվածքներ (Առաքելոց), և հին ավանդույթների կատարելագործման եղանակով ստեղծված վայելչագեղ այնպիսի եկեղեցիներ, որոնք իրավամբ կարելի է անիական անվանել (միջնաբերդի բազմախորան եկեղեցիներ, Ապուղամրենց ս. Գրիգոր, ս. Փրկիչ, Կուսանաց վանք)։ Ձևերի բազմազանությունն առավելապես լրացված է նաև աշխարհիկ ճարտարապետությամբ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում իրենց տարատեսակ բնույթով և հորինվածքային զանազանությամբ։ Նկատի ունենալով այս իրողությունը, Անիի հուշարձանների քննությունն անհնար ենք համարում բաժանել ըստ տիպային նկարագրի։ Մինչև այժմ բաժանումը կատարվել է ըստ աշխարհիկ և հոգևոր շենքերի, որին և մենք հետևում ենք։

Նկատի ունենալով, որ հնագույն տեղեկությունները վերաբերում են աշխարհիկ շենքերին, Անիի հուշարձանների և նրանց վերաբերյալ եղած գրավոր սկզբնաղբյուրների քննությունը սկսում ենք քաղաքի պաշտպանական շինություններից։

Աշոտի պարիսպներ.—Բագրատունյաց շրջանի Անիում շինարարական աշխատանքներ կատարելու մասին հնագույն տեղեկությունները տալիս են պատմիչները։ Այդ տեղեկությունները վերաբերում են պարիսպների շինությանը։

Առաջին անգամ քաղաքի պաշտպանության նպատակներով պարիսպներ կառուցեց Աշոտ Ողորմածը։ Հ. Օրբելու նկարագրության համաձայն այդ պարիսպները գտնվում են այն հատվածում, որտեղ Ախուրյան և Անի գետերն իրար են մոտենում[8]։ Պարսպի մի ծայրը կանգնած է մաքսատան շենքի մոտ և ձգվում է մինչև Ծաղկոցաձոր։ Այս պարիսպներն, ըստ էության,

[8] Տե՛ս И. А. Орбели, Избр. труды, стр. 106.



Վասպուրական. Ձորահան վանքը հյուսիս-արևելքից



Վասպուրական. Վարագավանքը հարավ-արևելքից



Վասպուրական. Կարմրակ վանքը հարավ-արևելքից



Վասպուրական. Նարեկավանքը հարավ-արևելքից

պաշտպանում էին միայն միջնաբերդը: Թ. Թորամանյանը գտնում է, որ պարիսպներից դուրս բնակություն է եղել տակավին հեթանոսական ժամանակներում և հարատևել է մինչև Անիի մայրաքաղաք դառնալը[9]: Սակայն, չնայած դրան, Աշոտի պարիսպներով բաժանված քաղաքի հարավային մասը պայմանականորեն կոչվել էին Հին քաղաք: Պարիսպներն ունեցել են 120 մ երկարություն՝ յոթ կիսաբոլոր աշտարակներով: Արևմտյան և արևելյան ծայրի աշտարակների մեջ ներշինվել են մատուռներ: Ինչպես ստորև կտեսնենք այդ մասին հիշատակում է նաև Վարդան Բարձրբերդցին: Գլխավոր դարպասը գտնվել է արևելյան կողմում: Կառուցվածքային առումով մեծ հետաքրքրություն ունի պարսպապատերի շարվածքի եղանակը: Երկարավուն բրգաձև քարերն իրենց հիմքով ուղղված են դեպի պատի արտաքին կողմը[10]:

Պարիսպների կառուցման մասին Վ. Բարձրբերդցին հաղորդում է. «Սա (Աշոտ Ողորմած) զփոքր պարիսպ քաղաքին Անւոյ շինեաց և զամենայն բրգունս եկեղեցիս յարինեաց ի չորս հարիւր երեքտասան (964) թուին»[11]:

Բարձրբերդցու վկայությամբ Աշոտ Ողորմածը գահ է բարձրացել 951 թվականին, իսկ պարիսպների կառուցումը ավարտել է 964 թվականին: Թեև Աշոտի պարիսպը համեմատաբար փոքր տարածք էր ընդգրկում, սակայն մայրաքաղաքը հիմնելու առումով նրա նշանակությունը չափազանց մեծ էր:

Սմբատի պարիսպները.—*Ձգվում են Անի և Ախուրյան գետերի միջև: Սկսվելով Իգաձորի կիրճից հատում են քաղաքի հյուսիսային եզրը, շարունակվում Գայլեձորի առափնյա թեքությամբ և ավարտվում բարձր քարափի ծայրին: Սմբատի պարիսպները նկատելիորեն ընդարձակեցին քաղաքի պաշտպանված տարածքի սահմանները, որը տնտեսական ու քաղաքական կարևոր նշանակություն ուներ[12]: Թ. Թորամանյանի վկայությամբ Սմբատի պարիսպների երկարությունը մոտ 2,5 կմ է[13]: Պարիսպները երկշարք են, իսկ դարպասների մոտ ամրացված են հզոր աշտարակներով: Պաշտպանական նկատառումներով առաջին և երկրորդ շարքերի դարպասները տեղավորված են միմյանցից հեռու:*

Սմբատի պարիսպներն ունեն երեք տիպի աշտարակներ, որոնց մեջ առավել մեծաքանակը կիսաբոլոր բուրգերն են: Ուղղանկյուն աշտարակները, Հ. Օրբելու կարծիքով, կատարել են որմնահեցի դեր[14]: Առավել հետաքրքիր է այս երկու տիպերի զուգակցումը, որի հետևանքով առաջ է եկել աշտարակների մի նոր տիպ: Այս տիպը ևս կիսաբոլոր է, սակայն այդ կիսաբոլորը պարսպապատի հետ միացված է ոչ մեծ պատի միջնորդությամբ, որի շնորհիվ այն նկատելիորեն առաջ է կանգնած պարսպապատերից:

Սմբատի պարիսպները քաղաքի պաշտպանության ամենակարևոր կառույցն էին և ժամանակի ընթացքում բազմիցս նորոգվել և վերաշինվել են: Հ. Օրբելին տեղեկացնում է, որ պարիսպները ժամանակի ընթացքում բավականին հաստացվել են, հատկապես երեսապատման քարերի նորանոր շերտերով[15]:

[9] *Տե՛ս* **Թ. Թորամանյան,** *Նյութեր..., 1, էջ 324:*

[10] *Տե՛ս И. А. Орбели,* Избр. труды, стр. 107.

[11] **Բարձրբերդցի,** *էջ 121:*

[12] *Տե՛ս* **Վ. Հարությունյան,** *Անի քաղաքը, էջ 41:*

[13] *Տե՛ս* **Թ. Թորամանյան,** *Նյութեր..., 1, էջ 334:*

[14] *Տե՛ս И. А. Орбели,* Избр. труды, стр. 114.

[15] *Տե՛ս նույն տեղում:*

Պարսպապատերին, ինչպես և աշտարակները զարդարվել են գունավոր պատկերաքանդակներով և զարդաձևերով, որոնցից մեկը՝ վագրի պատկերը Հ. Օրբելու կարծիքով ներկայացրել է քաղաքի գերբը:

Պարիսպների մասին առաջին տեղեկությունը հաղորդում է Ասողիկը. «Զայսու ժամանակաւ մեռաւ թագաւորն հայոց աւրհնեալն Աշոտ ի :ՆԻԶ: թուականին, և ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ որդի նորա ամս: ԺԳ: Սա լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպ Անւոյ, յԱխուրեան գետոյ մինչ ըզձորն Ծաղկոցաց, կրով և վիմով մածուցեալ մահարձանաւք և աշտարակաւք բրգանց բարձրաբերձ պարսպեալ բարձրագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բևեռապինդ ամրացուցեալ»[16]:

Սմբատի կառուցած այս պարիսպները, ինչպես ցույց են տալիս վիմագիր հիշատակարանները, բազմիցս վերաշինվել ու նորոգվել են հատկապես Զաքարյանների օրոք: Ի դեպ, պետք է ասել, որ Անիի պարիսպների շինության վերաբերյալ Բագրատունյաց շրջանից մեզ որևէ արձանագրություն չի հասել:

Անիի պարիսպները նորոգվել են տակավին XI դարի կեսերին, հավանաբար, տուժելով բյուզանդական հարձակումներից: Այդ մասին է վկայում Անիի Մայր եկեղեցու հարավային պատին պահպանված Արոն Մագիստրոսի արձանագրությունը: Արոնը Բյուզանդիայի արևելյան թեմի առաջնորդն էր: Նրա նստատեղին էր Անին: Արձանագրության մեջ նա տեղեկացնում է, որ կառուցել է Անիի պարիսպները և սեփական միջոցներով ջուր անցկացրել ամրոց: Արձանագրությունը թվագրված չէ: Արոն Մագիստրոսն անցյալ կատարյալ ժամանակով տեղեկացնում է, որ հիշյալ կառույցները կատարել է Ի ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ, այսինքն երիտասարդության տարիներին, երբ, հավանաբար, գործուղվել էր Անի Հովհաննես Սմբատի կտակի հարցով բանակցելու համար: Տեսնելով, որ զենքի ուժով Անին գրավել չեն կարող, Զոյե կայսրուհին հավանաբար չի ցանկացել սրել հարաբերությունները և փոխադարձ համաձայնությամբ նորոգվել են առաջին հարձակումներից տուժած պարսպապատերը: Արոն Մագիստրոսը Ի ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ասելով նկատի է ունեցել իր պատվիրակության առաջին տարիները, գուցե հենց 1045 թվականը, որով և առաջարկում ենք թվագրել պարիսպների նորոգումը:

Ահա արձանագրությունը.

1. ԿԱՄԱՒՔ [ՒՒ] ՈՂՈՐՄՈՒԹԵԱՅԲ ԲԱՐԵՐԱՐԻՆ Ա̅Յ̅ ԵՍ ԱՌԱՒՆՍ ՄԱԳԻՍՏՐՈՍՍ
ՄԵԾԱՐԵԱԼ Ի ՄԵԾԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑՆ
2. Ի ԳԵՂ ԶԱՐԴՈՒ ԵՒ Ի ՏԻՍ ՄԱՆԳՈՒԹԵԱՆ ԻՄՈ ԵԿԻ ՅԱՐԵՒԵԼՍ Ի ԳԵՂԵՑԿԱ-
ՇԷՆ ԲԵՐԴՍ ՅԱՆԻ, ԲԱՐՁՐԱՑՈՒՑԻ ԲԱԽԱՆԴԱԿ ԶՊԱՐԻ—
3. ՍՊ ՍՈՐԻՆ ԿԱՌԿԱՌԱԿՈՅՏ ԱՐՁԱՆԱՒՔ ԵՒ ՀԱՍՏԱՀԵՂՈՅՍ ԱՄՐՈՒԹԵԱՄԲ,
ԵՒ Ի ՅԻՄՈՅ ՄԵԾԱԾԱԽ ԳԱՆՁՈՒՑ ԱԾԻ
4. ԶԱՆԻԻ ՋՈՒՐ ՅՈՐԴԱԲՈՒԽ Ի ՄԵՋ ԱՄՐՈՑԻՍ ՅՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ԶՈՎԱ—
ՑՈՒՄՆ ԾԱՐԱՒԵԱՅ: ԲԵՐԻ ՈՍԿԻ ՄԱՍԱՆԵԱՒ
5. ԳԻՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՔՆԱԿԱԼ ԾԻՐԱՆԵԾԻՆ ԹԱԳՈՒՀՈՅՆ ՎԱՍՆ ՊԱԽՏԻՑ
ՏԱՆՑ ՔԱՂԱՔԻՍ ԵՒ ԹԱՍՏԱԿԻՆ ԶՈՐ ՏԱԻՆ
6. ԱՄ ՅԱՄԷ ԶԱՓ ՈՒԹԻՑ ԼՏԵՐՑ [ԱՅ]Լ ԵՒ Ի ԽՆԴՐՈ ԻՇԽԱՆԱՒՈՐԱՑՍ
ԽԱՓԱՆԵՑԻ ԵՒ ԶԳԻՒՏ ԵՐԿՈՒՑ ԼՏԵՐՑ, ԶՈՐ ՏԱՅՐ ՄՈՒԹԱ—

[16] Ասողիկ, էջ 282:

7. ՍԻՐՆ, ԶԱՅՍ ԱՄԷՆ...[17]:

Ժամանակաշրջանի պատմական անցքերը ցույց են տալիս, որ Հայաստանը գրավելուց հետո Բյուզանդիան երկրի կառավարումը սովորաբար հանձնում էր հույն պաշտոնյաներին: Առաջին իսկ տարիներից նրանք ցուցաբերեցին ոչ հանդուրժողական և, առհասարակ, բռնի քաղաքականություն նոր գրաված, բայց դեռևս չընկճված քաղաքի նկատմամբ, որին այնուհետև ավելացան նաև կրոնական հալածանքները: Սակայն սելջուկյան արշավանքների սպառնալիքի հետևանքով Բյուզանդիան շուտով ստիպված եղավ փոխել իր վերաբերմունքը Հայաստանի և հայերի նկատմամբ, հասկանալով, որ սելջուկներին դիմադրելու համար ավելի նպաստավոր էր դաշնակցել հայերի հետ: Հենց այս ժամանակ էլ նորից Հայաստան է ուղարկվում Արոն Մագիստրոսը: 1058 թվականին նա նշանակվում է կառավարիչ և, երբ սպառնում են սելջուկյան նոր արշավանքները, նա հայերին հիշեցնելով ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ պատգամավորությունը և կատարած շինարարական աշխատանքները, հավանաբար ձգտում էր շահել ժողովրդի և ազդեցիկ շրջանների համակրանքը:

ԼՈՒՍՈՏԻ ԱՇՏԱՐԱԿ.—Երկրորդ արձանագրությունը թվագրված է 1151:

ԹՈՒԻՍ Ո (1151)

ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ԵՍ ԼՈՒՍՈՏՍ Ո—
ՐԴԻ ԳՐԻԳՈՐՈ ՇԻՆԵՑԻ ԶԱՐՁԱՆՍ
ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈ—
Ց ԵՒ ՅԱՐԵՒՇԱՏՈՒԹԻՒՆ ՇԱՀՆ—
ՇԱՀԻ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԵՒ ՅԱՄԻՐԱՈ—
ՒԹԵԱՆ ՎԱՀՐԱՄԱ ԿԱՏԱՐԵՑԱՒ ԲՈՒՐՋՍ:
Տ̅Ր̅ Ա̅Ծ̅ ՈՂՈՐՄԵԱ ԼՈՒՍՈՏԻՆ. ԱՄԷՆ[18]

Թեև թվականի հատվածում արձանագրությունը խաթարված է, սակայն հենվելով պահպանված հետքերի և Լուսոտի անունը կրող մի այլ արձանագրության[19] վրա 1151 թվականը համարում ենք ճիշտ:

ԱԲՐԱՀԱՄԻ ԲՈՒՐԳԸ.—Երրորդ արձանագրությունը կրում է 1160 թվականը.

Ի ՈԹ (1160) Թ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՓԱՏԼՆՈՅ, Ի
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՏԷՐ ԲԱՐՍՂԻ, ԵՍ ԱԲՐԱՀԱՄ ՇԻՆԵՑԻ
ԶԲՈՒՐՋՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ՝ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ
ԻՄՈՑ: ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ԶԻՍ ԵՒ ԾՆՈՂՍ ԻՄ.
ԵՒ ԶԱՌԱՔԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ[20]

Ժամանակին այն գտնվել է արևելյան մուտքի մոտ, աշտարակի ստորին մասում: Աշտարակը չի պահպանվել, հայտնի է Սարգիսյանի հրատարակությունից: Արձանագրությունն ունեցել է բավականին պարզ բովանդակություն. 1160 թվականին Փատլունի իշխանության և Բարսեղի հայրապետության շրջանում ոմն Աբրահամ կառուցել է աշտարակ (բուրջը) իր հալալ վաստակով, ի հիշատակ իր և իր ծնողների: Փատլունը եղել է Մանուչեի թոռը, Շեդադի որդին: Ըստ Վարդան Բարձրբերդցու Փատլունն ապրել է վրաց

[17] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 38:
[18] Նույն տեղում, էջ 6:
[19] Տե՛ս նույն տեղում, էջ 69:
[20] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 111:

Գեորգի Թագավորի (1155—1184) գահակալության տարիներին[21]: Արձանագրության թվականի հաջորդ տարին՝ 1161 թվականին վրացական զորքերից պարտվելով, նա կորցրեց իր իշխանությունը Անիում և Շիրակում[22]: Բարսեղն Անի քաղաքի եպիսկոպոսն էր[23]:

Ս. Բարխուդարյանի կարծիքով արձանագրության մեջ հիշատակված Առաքելը պետք է համարել ճարտարապետ[24]:

Վիմագիր հիշատակարաններում պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ ժողովրդի ամենալայն խավերի կողմից այս կամ այն շինարարական ու նորոգման աշխատանքների մասին:

Ուսումնասիրելով Անիի պարիսպների վիմագիր արձանագրությունները, Հ. Օրբելին հանգեց այն հետևության, որ պարիսպները կառուցվում կամ նորոգվում էին նախապես մշակած հատակագծով: Սակայն կառուցելուց հետո, ցանկացողներին հնարավորություն էր տրվում համապատասխան ծախսերն իրենց վրա վերցնելով ձեռք բերել աշտարակի կամ պարսպի առանձին հատվածները կառուցողի հեղինակություն[25]: Հ. Օրբելու այս դիտողությունը վերաբերում է Զաքարյանների շրջանին:

Ջունդիկի դարպաս.—Այդպիսի արձանագրություններից հնագույնը հայտնի է Ջունդիկի անունով և կրում է 1206 թվականը: Արձանագրությունը փորագրվել է շրջանակավորված մի քարի վրա, որը ժամանակին ընկել էր պարիսպներից: Այն հայտնաբերել է Աբիխը և 1869 թվականին տեղափոխել Պետերբուրգ: Արձանագրությունն ունի հետևյալ շարադրանքը.

Ի ԹՎԻՆ ՈԾԵ (1206) ՇՆՈՐՀԻՒ Ո—
ՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՅ ՇԻՆԵՑ—
ԱՒ ԴՈՒՌՆՍ ԵՒ ԲՐՋՆԵՐՍ
ՅԱՆՈՒՆ ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽ—
ՈՒՑԷՍ ՇԱՀԱՆՇԱՀ ԶԱՔ—
ԱՐԷԻ: [Ի] ՁԵՌՆ ՋՈՒՆԴԿԱՆՍ ԵՂԵՒ[26]:

Ի ՁԵՌՆ ՋՈՒՆԴԿԱՆՍ ԵՂԵՒ արտահայտությունից երևում է, որ հիշյալ Ջունդիկը դարպասի և աշտարակի շինության ոչ թե նպաստավորողը, այլ ճարտարապետն է եղել[27]:

Զաքարեի աշտարակ.—Զաքարեի անունով կառուցված հնագույն շինությունն Անիի պարիսպներում թվագրված է 1208-ով: Վավերագիրը փորագրվել է աշտարակի ստորին մասում, արտաքուստ, շրջանակավորված քարի վրա: Այն շարադրված է Զաքարեի անունից և նվիրաբերված իր և իր ծնողների և, հավանաբար, եղբոր հիշատակին.

Ի ՈԾԷ (1208) Թ[ՒՆ] ՇՆՈՐՀԻՒՆ
ՔՒ ԵՍ ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽ—
ՈՒՑԷՍ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ
ՇԱՀՆՇԱՀ ԶԱՔԱՐԻԱ Շ—

[21] Տե՛ս Բարձրբերդցի, էջ 126:
[22] Տե՛ս Ս. Անեցի, էջ 37:
[23] Տե՛ս Ալիշան, Շիրակ, էջ 96:
[24] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 22:
[25] Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 43.
[26] «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 7:
[27] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 46:

ԻՆԵՑԻ ԶԱՐՁԱՆՍ ԵՒ ԶՊ—
ԱՐԻՍՊՍ ՎԱՍՆ ՅԻՇԱՏ—
ՏԱԿԻ ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ[28]:

Այս արձանագրությունը նախորդի նման երկու շինություն է հիշատակում՝ պարիսպ և արձան, այսինքն՝ աշտարակ:

Սարգսի աշտարակ.—1208 թվականին Անիի պարիսպների վրա փորագրվել է ևս մի շինարարական արձանագրություն՝ Գեորգի որդի Սարգսի անունից.

Ի ԹՒԻՆ ՈԾԷ (1208) ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, Ի ՏԷ—
ՐՈՒ[ԹԵԱՆ]Ս ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽՈՒՑ—
ԷՍ [ԱՄԻՐՍ]ՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱ—
Հ [ԶԱՔ]ԱՐԻԱ. ԵՍ ՍԱՐ[ԳԻՍ ՈՐԴԻ ԳԷՈ]—
ՐԳԱ, ԾԱՌԱ ՔԻ ՇԻ[ՆԵՑԻ ԶԱՐՁ]—
ԱՆՍ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ Հ[ԱՒՐՆ ԻՄՈ]:
Ը[ՆԴ] ՆՄԻՆ ԵՒ ԶԱՇԽԱ[ՏՈՂ]ՔՍ [ՅԻՇԵՑԷՔ][29]

Արձանագրությունը աշտարակի արտաքին պատին է, շրջանակավորված քարի վրա: Խիստ վնասված է:

Հետաքրքրական է նրանով, որ հեղինակը հիշատակում է նաև աշտարակը կառուցող վարպետներին:

Զաքարեի 2-րդ աշտարակ.—1212 թվականին Զաքարե ամիրսպասալարը Անիում շինեց ևս մի աշտարակ և նվիրաբերեց իրեն և իր որդիներին: Ներկայումս աշտարակը չի պահպանվել, իսկ արձանագրության բովանդակությունը հայտնի է միայն Սարգիսյանի ընդօրինակությունից, որը վերծանված է. «Ի ՈԿԱ (1212) Թուին զաւրութեամբն Քի. Ես մանդատորթախուցէս ամիրսպասալար շահնշահի Զաքարիա շինեցի զարձանս վասն արեւշատութեան մեզ եւ որդւոց իմոց»[30]:

Մխիթարիչի աշտարակ.—Գտնվում է Ծաղկոցաձորի կողմում: Արձանագրությունը փորագրված է պարսպի մեջ ագուցված խաչքարի վրա:

Ի Թ[ՈՒԱԿԱՆՈՒԹ]Ե[ԱՆՆ] ՈԿԴ (1215) ՇՆՈՐՀԻՒՆ ՔԻ Ի ՏԵՐՈՒԹԵ[ԱՆՍ]
ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽ—
ՈՒՑԷՍ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱՀ ՍԱՐԳՍԻ, ԵՍ ՄԽԻԹ—
ԱՐԻՉՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ԾԱՌԱ ՔԻ Ի ՅԱՐԴԱՐ ՎԱՍՏԱ—
ԿՈՑ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ ՇԻՆԵՑԻ ԶԱՐՁԱՆՍ ՎԱ—
ՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳՒՈ ՆՈՐԱ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ
ՄԵՐՈՑ: ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՅԻՇԵՑԷՔ ԶԱԲՐԱՀԱՄ Ի ՔՍ ՅՍ[31]:

Ինչպես ժամանակին պարզաբանել է Հ. Օրբելին, ԱՐՁԱՆ բառը, անգամ խաչքարի վրա փորագրված լինելով, Անիի պարիսպներում ամենևին նկատի չունի այդ խաչքարը: Արձան բառը նա համարում է բուրգ-աշտարակ բառերի հոմանիշը[32]: Արձանագրությունը թվագրված է 1215: Կառուցողը ոմն Մխիթարիչն է:

[28] «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 6:
[29] Նույն տեղում, էջ 5:
[30] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 11:
[31] «Դիվան հայ վիմագրության», I, էջ 1, 2:
[32] Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 477—478.

Սամուելի որդի Սարգսի աշտարակ.—*Սարգսի անունը կրող այս արձանագրությունը փորագրված է Անիի պարիսպների արևելյան դարպասի մոտ։ Ունի հետևյալ բովանդակությունը.*

ԹՎԻՍ ՈԿԴ (1215) ԿԱՄԱՒՔ ՈՂՈՐՄԱԾԻՆ ՔԻ, Ի ՊԵ—
ՏՈՒԹԵԱՆ ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽՈՒՑԷՍ ԱՄԻՐՍՊԱ—
ՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱՀ ԶԱՔԱՐԻԱՅԻ ՈՐԴԻՈՅՆ ՇԱՀ—
ՆՇԱՀ ՍԱՐԳՍԻ, ԵՍ ՍԱՐԳԻՍ ՈՐԴԻ ՍԱՄՈՒԷԼԻ
ԾԱՌԱՅ ՔԻ Ի ՀԱԼԱԼ ՎԱՍՏԱԿՈՅ ԻՄՈՅ ՇԻՆԵՑԻ Զ—
ԱՐՋԱՆՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԵՒ ԶԱՎԱԿ—
ԱՑ ՄԵՐՈՑ։ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՅԻՇԵՑԵՔ ԶՄԵԶ Ի ՔՍ[33]։

Ըստ Ն. Սարգիսյանի աշտարակի վերևը՝ փլված մասում, ագուցված է եղել խաչքար, վերին և ստորին մասերին փորագրված.

ԶՍԱՐԳԻՍ ՅԻՇԵՑԷՔ։
ՍԲ ՍԱՐԳԻՍ ԱՒԳՆԷ ՍԱՐԳՍԻ ԳԷՈՐԳԱ. ԱՄԷՆ[34]։

Ամենայն հավանականությամբ, այստեղ հիշատակված է 1208 թվականի արձանագրությունից հայտնի Գևորգի որդի Սարգիսը։ Տվյալ արձանագրության հետ նրա ունեցած առնչության մասին տեղեկություն չունենք։ Սակայն բովանդակությունից անկախ, հիշատակված անունը ենթադրել է տալիս, որ նա աշտարակաշինության աշխատավոր և մասնավորապես քարգործ վարպետ է եղել[35]։

Սիմեոնի աշտարակ.—*Պարիսպների շինությանը նվիրված 1261 թվականի մի արձանագրության մեջ կառուցողի անունը եղծվածության հետևանքով չի պահպանվել։ Պահպանված միակ անունը ՍԻՄԵՈՆ-ն է՝ որով էլ աշտարակը պայմանականորեն կոչվում է Սիմեոնի աշտարակ։*

Արձանագրության 4—6-րդ տողերը խիստ վնասված են։ Վերականգնելով առանձին տեղերը Հ. Օրբելին տվել է հետևյալ վերծանությունը.

1. Ի ԹՈՒԻՍ ՈԿԵ (1216) ՇՆՈՐՀԻ—
2. ԻՆ ՔԻ Ի ՏԵՐՈՒԹԵ[ԱՆ]Ս ՄԱՆԴ—
3. ԱՏՈՐԹԱԽՈՒՑԷՍ ԱՄԻՐ—
4. ՍՊ[ԱՍԱԼ]ԱՐ ՇԱՀՆՇԱՀ
5. [ՍԱՐԳՍԻ ԵՍ...]
6. ...Յ]ԱՐԴ—
7. ԱՐ ՎԱՍՏԱԿՈ[Յ] ԻՄ ՇԻՆ
8. ԵՑԻ ԶԱՐՁԱՆՍ ՅԻՇ—
9. ԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆԱՒՂԱՑ
10. ԻՄՈՅ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՄ—
11. ՈՅ [Ո]ՐՔ ԿԱՐԴԱՅՔ
12. ԱՂԱՉԵՄՔ ԶՄԵԶ ՅԻՇԵ—
13. ՅԷՔ Ի ՔՍ ՅՍ Ի ՏՐ ՄԵՐ։ ՍԻՄԷՈՆ[36]։

Արձանագրության միտքը լրիվ ավարտվում է մինչև Սիմեոնի անունը, որն այդ պատճառով դառնում է ստորագրություն։ Արձանագրության նման եղանակով Սիմեոնը շինողի դերում հանդես գալ չի կարող։ Ավելի հնարավոր

[33] «Դիվան հայ վիմագրության», I, էջ 2։
[34] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 110։
[35] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 46։
[36] «Դիվան հայ վիմագրության», I, էջ 4։

է, որ նա գրիչ լինի։ Հ. Աճառյանը նույնպես այդ Սիմեոնին փորագրող գրիչ է համարում[37]։

Շանուշի և Մամխաթունի աշտարակները.—*Պարիսպների արձանագրությունից մասնավորապես հետաքրքրական են երկուսը՝ գրված կանանց անունից։ Ուշագրավն այն է, որ որպես կառուցողներ հանդես են գալիս մայր և դուստր։ Արձանագրություններից մեկը շարադրված է խաչերեսի կողակից Շանուշի, երկրորդը՝ խաչերեսի դստեր՝ Մամխաթունի անունից։ Արձանագրությունը 1219 թվականի է։ Սակայն, ինչպես երևում է երկրորդ արձանագրության բովանդակությունից, նրա փորագրման ժամանակ Մամխաթունը մահացած է եղել և պետք է ենթադրել, որ փորագրության պատվիրատուն նրա մայրն է։*

Այս, ինչպես և ՈԾԸ (1209) թվականի մի արձանագրությունից[38], տեղեկանում ենք, որ խաչերեսը եղել է լոռեցի, մեծ նվիրատվություններ է արել Բագնայրի վանքին.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ
ՇԱՆՈՒՇՍ ԿԵՆԱ—
ԿԻՑ ԽԷՉԷՐԵՍԻ Ա[ՆԴԱՐՁ]—
ԱՒ ԽԷՉԵՐԵՍԻՆ Շ—
ԻՆԵՑԻ ԶԲ[ՈՒՐ]ՋՆԵ—
ՐՍ ՅԻ[ՇԱ]ՏԱԿ ՄԵԶ[39]։

Ի ՈԿԸ (1219) ԹԻ[ՒՆ] ՇՆՈՐՀԻՒՆ ՔԻ. ԵՍ ՄԱՄԽԱԹՈՒՆՍ ԴՈՒՍՏՐ ԽԱՉ/ԵՐԵ—
ՍԻՆ ԼԱՒՌԵՑՈ, ԱՆԺԱՄ Ի ՔՍ ԳՆԱՑԻ. ՅԻՄ ՀԱՒՐՆ Ի ՀԱԼԱԼ ԴՐ/ԱՄԷՆ ՈՐ ԻՆՁ
ՏՈՒԵԱԼ ԷՐ, ԱՆՅԻՇԱՏԱԿ ԷԻ, ՇԻՆԵՑԻ ԶԲՈՒՐՁ/ՆՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԱՌ ՔՍ։ ԱՐԴ
ԱՂԱՉԵՄ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՄԵԶ ԹՈՂ/ՈՒԹԻ[ՒՆ] ԽՆԴՐԵՑԷՔ Ի ՔԷ[40]։

Սարգիս Գերանցու և Եղբայրիկի աշտարակները.—*1222 թվականին արձանագրվել է երկու աշտարակի շինություն։ Դրանցից մեկը գրված է ումն Սարգիս Գերանցու անունից, իսկ մյուսը՝ Եղբայրիկի։ Սարգսի մասին այլ աղբյուրներում տեղեկություն չկա։*

Եղբայրիկն իրեն անվանում է ԾԱՌԱՅ ՏԻԳՐԱՆԱ։ Տիգրանն Անիի մեծահարուստ և ազդեցիկ պարոններից մեկն էր, որը 1215 թվականին մի շքեղ եկեղեցի կառուցեց Անիում։

Սարգիս Գերանցու աշտարակը գտնվում է քաղաքի հյուսիսային կողմում։ Արձանագրությունը փորագրված է շրջանակավորված քարի վրա.

ՈՀԱ (1222)
ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՍԱՐԳԻ—
Ս ԳԵՐԱՆՑԻՍ ՇԻՆԵՑԻ
ԶԲՈՒՐՋՆՍ Ի ՀԱԼԱԼ Վ—
ԱՍՏԱԿՈՅ ԻՄՈՅ. ՈՐ—
Ք ԿԱՐԴԱՔ ԶԻՍ ՅԱՂ—
ԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ[41]։

[37] Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, 4, էջ 499։
[38] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 117։
[39] «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 4։
[40] Նույն տեղում, էջ 3։
[41] Նույն տեղում, էջ 7։

Եղբայրիկի արձանագրությունը նույնպես փորագրված է շրջանակավոր-
ված քարի վրա։ Հայտնաբերել է Ս. Ն. Կալմիկովը 1892 թվականի պեղումների ժամանակ.

Ի ՈՀԱ (1222) ԹՎ[ԻՆ] ՇՆՈՐՀԻՒՆ ՔԻ Ի ՏԵՐՈ—
ՒԹԵ[ԱՆ]Ս ԱԾԱՍԷՐ ԱԹԱԲԱԿ ԻՒԱՆԷԻ
ԵՒ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՒ ԱՒԱԳԻՆ. ԵՍ ԷՂ—
ԲԱՅՐԻԿՍ ԾԱՌԱՅ ՏՆ ԻՄՈՅ ՏԻ—
ԳՐԱՆԱ, ՆՈՐԻՆ ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]ԲՆ ՇԻ—
ՆԵՑԻ ԶԱՐԶԱՆՍ, ՅԻՇԱՏԱԿ Մ[ԵԶ]
ԵՒ ԾՆՈՂԱՑ ԵՒ ԶԱՒԱԿ[ԱՑ ՄԵՐՈՑ][42]։

Մխիթարի աշտարակ.—Արձանագրությունն անթվակիր է։ Որպես ժամանակի որոշիչ հիշատակված Աթաբակ Իվանեի և շահնշահ Սարգսի անուններն են։ Ստ. Օրբելյանի տեղեկության համաձայն Իվանեն մահացել է 1227 թվականին[43]։ Զնայած մասնագետների տարաձայնությանն այս թվականն ավելի հավաստի է թվում[44]։ Արձանագրությունն այդ թվականից ուշ գրվել չէր կարող։

ՇՆՈՐՀԻՒՆ ՔԻ ԵՒ ՈՂ—
ՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՀԱՒ—
ՐՆ ԵՐԿՆԱՒՈՐԻ, Ի ՊԵՏ—
ՈՒԹԵ[ԱՆ]Ս ԱԹԱԲԱԿ ԻՒԱ—
ՆԷԻ ԵՒ ՇԱՀՆՇԱՀ ՍԱ—
ՐԳՍԻ, ԵՍ ՄԽԻԹԱՐ ԽԱՒ—
ԹԵՆՑ, ԾԱՌԱ ՔԻ ԵՒ ԶԻ—
ԻԳԱԿԻՑ ԻՄ ՄԱՄՇԱՀՍ ՇԻՆԵՑ—
ԱՔ ԶԱՐԶԱՆՍ Ի ՅԻՇԱՏԱԿ Ի—
ՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԵՂԲԱՅՐԿԱՆ
ԵՒ ՄԱՄԵՐՈՑՆ։ ԱՂԱՉԵՄՔ ՅԻՇԵԼ Ի ՔՍ[45]։

Շահնշահ Սարգիսն Իվանեի հորեղբայրն է՝ Վահրամի որդին և կրել է հոր շահնշահ տիտղոսը։ Արձանագրության մեջ հիշատակված գլխավոր դեմքը Մխիթարն է։ Իր մասին նա հաղորդում է, որ հայրը եղել է Եղբայրիկը, իսկ մայրը՝ Մամերը։ Սակայն Մխիթարը ոչ միայն իրեն չի անվանում ծառայ Տիգրանա, ինչպես այդ տեսանք վերը՝ Եղբայրիկի արձանագրության մեջ, այլև հիշատակում է իր սեփական ազգանունը՝ ԽԱՒԹԵՆՑ։ Այս հանգամանքը, մեր կարծիքով, վկայում է, որ այստեղ հիշատակված Եղբայրիկը վերոհիշյալ Եղբայրիկի հետ կապ չունի։

Արձանագրության մեջ մյուս անունը Մխիթարի զուգակից Մամշահինն է, որն, ինչպես ինքն է տեղեկացնում, մասնակցել է աշտարակի շինությանը։ Արձանագրությունը մի փոքր խաչքարի վերին մասում է։ Մոտավոր ժամանակը կարելի է համարել XIII դարի 20-ական թվականները։

Ուշագրավ է, որ պաշտամունքային շինությունների արձանագրություններում հանդիպող բանաձևերը գործածական են դառնում նաև աշխարհիկ-ռազմական շինությունների արձանագրություններում։ Բարեխոսություն էին

42 Նույն տեղում։
43 Տե՛ս Ստ. Օրբելեան, էջ 398։
44 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ, էջ 398—401։
45 «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 4։

խնդրում աստծուց նաև աշխարհիկ շինությունների տվյալ դեպքում՝ բերդ, աշտարակ կառուցելու համար։

Բագրատի դարպաս.—Անիի պարսպապատերին եղել է մի արձանագրություն՝ մուտքի շինության մասին, որը, սակայն, մեզ է հասել միայն Ալիշանի հրատարակությամբ։ Տեղը ստույգ հայտնի չէ։ Այդ հարցում մասնակի բացատրություն է տալիս բնագիրը. ԵՍ ԲԱԳՐԱՏ ՈՐԴԻ ԶԱՐՈՊԱՅ ԱՐԱԳԱԾՈՒ-
ՆԻ ՇԻՆԵՑԻ ԶԴՈՒՌՆՍ, ՈՐ ՏԱՆԻ Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ Ի ԹՈՒԻՆ...[46]։
Կ. Բասմաջյանի մոտ արագածունիի փոխարեն Արփայունի է[47]։

Արձանագրությունից պարզվում է, որ խոսքը վերաբերում է Տիգրան Հոնենցի կառուցած ս. Գրիգոր եկեղեցու կողմը տանող դարպասին։ Սակայն Ալիշանի կարծիքով դարպասը պետք է գտնվեր Ծաղկոցաձորի հյուսիսային կողմում։ Նա նույնիսկ նկարագրում է շինությունը՝ բազմանկյունի աշտարակ «մեծ կիսակործան»։ Արձանագրության բնագիրը ևս ճշտության հավակնություն ունենալ չի կարող։ Ալիշանը գրում է, որ նրա առաջին ընդօրինակողը եղել է Մուրավյովը, իսկ նրանից Ալիշանին է հասել միայն ռուսերեն թարգմանությամբ՝ գրաբարով հրատարակել է ինքը։

* * *

Պեղումների ժամանակ Անիում հայտնաբերվել են մեծ քանակությամբ
քաղաքացիական և տնտեսական նշանակության բազմատեսակ շինություն-
ներ։ Անիի հուշարձանների ցուցակում Հ. Օրբելին, Միջնաբերդի արքունական
պալատի շենքերից բացի, հիշատակում է 11 տարբեր տիպի, երբեմն մոնու-
մենտալ աշխարհիկ բնակելի տներ՝ 1 մաքսատուն, 6 բաղնիք, 2 հյուրատուն,
2 կամուրջ, 19 ձիթհան։ Սրանցից մի քանիսին կանդրադառնանք մասնակի
կարգով։ Աշխարհիկ շինությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն պալա-
տական կառույցները։

Քաղաքացիական շինություններից իրենց ճարտարապետական ձևերով
մեծ հետաքրքրություն են ներկայացնում մաքսատան շենքը, որը գրականու-
թյունից հայտնի է Մանուչեի մզկիթ անունով, հյուրատունը, բաղնիքը և
կամուրջները։

Միջնաբերդ.—Շինություններն ընկած են քաղաքի հարավային մասում,
բարձրադիր բլրակի տարածքի վրա։ պարիսպներով։
Միջնաբերդն ամբողջությամբ շրջապատված է եղել պարիսպներով։
Արևելյան և արևմտյան կողմերը պաշտպանվել են ժայռի բնական գահավեժ
թեքությամբ, և այդ հատվածում պատերը կառուցվել են ցածրադիր։ Հ. Օրբե-
լու կարծիքով դրանք օգտագործվել են որպես նետելու սարքերից պատսպար-
վելու միջոց[48]։ Հյուսիսային կողմի պարիսպը կառուցված է վիթխարածավալ
կոպիտ քարերից, որոնք իրար են միացվել երկաթյա պահանգներով[49]։
Ուսումնասիրողներն այդ պատը վերագրում են Կամսարականների ժամա-
նակին[50]։

46 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 58—59։
47 Տե՛ս Կ. Բասմաջեան, Հայերեն արձանագրութիւնք Անւոյ Բագնայրի և Մարմաշէնու, 1931, № 1121, տե՛ս նաև «Դիվան հայ վիմագրության» 1, էջ 8։
48 Տե՛ս И. А. Орбели, Избр. труды, стр. 10.
49 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 331։
50 Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 24։

Պալատական շենքերի համալիրը բաղկացած է ընդարձակ միջանցքով բաժանված երկու հիմնական զանգվածից։ Միջանցքը՝ կառուցված սրբատաշ քարերով տեղադրված է արևմուտքից-արևելք, որի արևելյան ծայրն ավարտվում է ժայռի մեջ փորված գետնանցքով։ Միջանցքից հյուսիս-արևմուտք մոնումենտալ և շքեղ շենքերից մեկը՝ հսկայական չափերի (21,0×10,55) մի դահլիճ է։ Պահպանվել է անկյունապատերից մեկը, կամարների մնացորդներով։ Ուսումնասիրողների կարծիքով կառուցվել է Բագրատունիների օրոք և ծառայել որպես հանդիսասրահ։ Իսկ Հ. Խալփախչյանի կարծիքով եղել է սեղանատուն[52]։

Սրանից մի քանի քայլ դեպի արևելք խաչաձև կոչված դահլիճն է։ Շինությունը հետաքրքիր է իր հորինվածքով։ Կենտրոնական սենյակի շուրջը խմբված են չորս ուղղանկյուն թևերը։ Վ. Հարությունյանի կարծիքով կենտրոնական մասը լուսավորվել է առաստաղից[53]։

Հյուսիսից խաչաձև դահլիճին կից բաղնիքի շենքն է՝ բաղկացած նախասրահից, երկու լողարանից՝ կանանց և տղամարդկանց համար, ջեռուցման երկու սենյակներից։ Տարբեր չափերի խողովակներով մատակարարվել են տաք և սառը ջուր։ Բաղնիքից արևելք համալիրը եզրափակվում է բազիլիկ դահլիճով։ Վ. Հարությունյանը, հիմք ընդունելով դեկորատիվ հարդարանքը, այս դահլիճը թվագրում է XII—XIII դարերով[54]։ Դահլիճն ունեցել է փայտյա սյուների վրա հենված ծածկ։ Հ. Օրբելու վկայությամբ ներսը զարդարված է եղել փայտի հարուստ փորագրություններով, նկարազարդմամբ և, նույնիսկ, ոսկեզօծ պատկերաքանդակներով[55]։ Դահլիճի տակ եղել է ստորգետնյա սենյակ։ Հարավային կողմում էլ կա մի ընդարձակ դահլիճ, որի տակ հայտնաբերվեց կամարածածկ աղյուսաշեն ջրամբար։ Հարավակողմի շինություններից շատերի նշանակությունն ավերվածության պատճառով տակավին պարզված չէ։

Միջնաբերդի եկեղեցիներից մեկն ունի շինարարական արձանագրություն։ Գրականության մեջ այն հայտնի է Պալատական եկեղեցի անունով։ Թաղածածկ միանավ սրահ է, կառուցված սրբատաշ քարերով։ Շինարարական արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Ն. Մառը[56] և թվագրել VII դարով։ Այնուհետև նույն մեկնությամբ հրատարակել է Գ. Հովսեփյանը[57]։ Մանրազնին ուսումնասիրությունից հետո բոլորովին այլ հետևության հանգեց Հ. Օրբելին[58]։ Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

ԵՍ ԱԲ[Ի]ՍՈՂ[Ո]Մ
ՎԱՐԴԱՊ[Ե]Տ ՇԻՆԷ—
ՑԻ ԶԵԿԵՂԷ[Ց]ԻՍ Ի ԹՈ—
ԻԱԿԱՆ[Ո]ԻԹԵԱՆ ՀԱ...

Վիճելին վերջին երկու տառերն են, որոնք կարող են թվական հասկացվել ՀԱ—71—551=622, կամ ՀԱՅՈՑ բառի սկիզբը, որին պետք է հաջորդեր

51 Տե՛ս նույն տեղում, էջ 26։
52 Տե՛ս *О. Х. Халпахчьян*, Гражданское зодчество Армении, стр.1 03.
53 Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 26։
54 Տե՛ս նույն տեղում։
55 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 111.
56 Տե՛ս *Н. Я. Марр*, Новые археологические данные типа ереруйской базилики, ЗВО, XIX, стр. 65.
57 Տե՛ս Գ. Հովսեփեան, Քարտեզ..., էջ 173։
58 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 413.

թվագրությունը, սակայն մնացել է անավարտ։ Հ. Օրբելին բացառում է VII դարով թվագրվելու հնարավորությունը։ Նրա համոզմունքը հենված է այն խրողության վրա, որի մինչև VIII դարը ժամանակի թվագրությունը շարադրվել է միայն թագավորների գահակալության տարիներով, իսկ տառաթվերի գործածությունը համեմատաբար ուշ է կիրառվել։

Հետաքրքրականն այն է, որ 1914 թվականի պեղումների ժամանակ հայտնաբերվեց գրեթե նույն բովանդակությունը կրող երկրորդ արձանագրությունը.

ԵՍ ԱԲԻՍՈՂՈՄ
ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՌԱ
ԱՅ ՈՐ ՇԻՆԷՑԻ ՍՈՒՐԲ
ԶԷԿԵՂԷՑԻՍ ԶԱՅ[Ս][59]։

Արձանագրության տառաձևերը համապատասխան չեն VII դարին։ Բացի իրենց ոճական անհամապատասխանությունից աչքի են ընկնում նաև գրությյան անվարժ ձևերով, անհամաչափությամբ, առանձին տառաձևերի աղավաղումներով։ Երրորդ տողում Ծ տառը շրջված է և փոխագրված Ջ-ի նմանությամբ, իսկ Տ-ն գրված է փոքրատառի ձևով։ Ընդհանուր առմամբ մնացած տառերը շատ ավելի հատկանշական են X—XI դարերի համար։ Հ. Օրբելին գտնում է, որ գրիչը սկզբում փորձել է գրել հին տառաձևերով, սակայն մինչև վերջ այդ նրան չի հաջողվել։

Ելնելով այն հանգամանքից, որ եկեղեցին իր տիպով չափազանց հին է (միանավ բազիլիկ), մասնագետներն այն համարում են Կամսարականների շրջանի շինություն[60]։ Ինչ վերաբերում է արձանագրությանը՝ մեր կարծիքով այն հաղորդում է հինը վերաշինելու մասին։ Եկեղեցու հյուսիսային կողմից կցված է մի թաղածածկ փոքրիկ մատուռ։

Միջնաբերդում կան նաև այլ եկեղեցիներ։ Դրանցից մեկը խաչաձև հատակագծով, քառախորան, գմբեթակիր շինություն է։ Արևելյան խորանի երկու կողմերում տեղադրված են ավանդատներ[61]։

Երկրորդ եկեղեցին հայտնի է միջնաբերդի անունով։ Չորս ավանդատնե-
րով շինություն է, մուտքի մոտ ունի ճոխ զարդաքանդակներ։ Գմբեթի թըմ-
բուկը կլոր է, կառուցման ժամանակը համարվում է X—XI դարերը[62]։

Այս եկեղեցուց հարավ գտնվում են բոլորաձև հատակագծերով երկու եկեղեցիներ, որոնք բազմախորան շինություններ են[63]։ Դրանցից մեկի, որ հայտնի է Միջնաբերդի վանք անունով, խորանների կամարների արանքներում մարդու կերպարանքով քանդակներ կան։ Հ. Օրբելու կարծիքով ժամանակին այստեղ եղել է ոչ մեծ վանք։

Երրորդ եկեղեցին կոչվել է Աղջկաբերդ։ Հատակագծով նման է նախորդին։ Ալիշանն ասում է, որ մի արձանագրության համաձայն սրա տեղում եղել է հեթանոսական՝ հավանաբար Անահիտի տաճարը և այնուհետև եկեղեցի

59 «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 8։
60 Տե՛ս *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 183.
61 Տե՛ս „Architettura medievale Armena“, p. 109.
62 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 113, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 58։
63 Տե՛ս „Architettura medievale Armena“, p. 109.

է հիմնվել Լուսավորչի կողմից[64]։ Հ. Օրբելու հրատարակած Անիի արձանագրությունների մեջ նման որևէ վավերագիր չկա։ Նրա կարծիքով եկեղեցին պետք է թվագրել XIII դարի սկզբով[65]։ Շրջապատում եղած մի շարք շինությունների ավերակներից երևում է, որ այստեղ վանք է եղել։

Հ. Օրբելու հրատարակած ցուցակի համաձայն հին քաղաքի տարածքում են գտնվում մաքսատան շենքը, երեք եկեղեցիների ավերակները, Խամբուշենց եկեղեցին, Ապլղարիբի փոքր մատուռը, Գայլի դամբարանը, կամուրջ, ձիթհան և զանազան բնակելի տներ[66]։ Այս տների մասին հետաքրքիր նկարագրություն է թողել Գրիգոր Մագիստրոսը. «Գերանք գերակատարք և երկայնաձիգ, որ վկայարան սրբոյն Յակոբայ. ամենայն կահք տաճարին գերակայ տախտակք և խոյակք և խարիսխ և թակաղաղք և զգրուես և զսեամս հանդերձ բարաւոբաւք և ներքոյ զատակս կազմեալ ի միոջ ծառէ յայնմանէ Գիոյն զոլ ասէն. զնա և զայլս սմանս ի նոյն աշխարհին ընդարձակագոյն սրահք և միջոցք այնմ տաճարի տեսեալ մեր, որ գէրէ այնպիսի ոչ այլ ուրեք բայց միայն ի Թագաւորեալ քաղաքին»[67]։

Աշխարհիկ հուշարձաններից նշանավորը մաքսատան շենքն է, կառուցված Աշոտի պարիսպների արևելյան ծայրին, Ախուրյան գետի ձորի վերնամասում։ Հ. Օրբելին շինության ստորին հարկը թվագրում է X դարով։ Հորինվածքով եռանավ սրահ է, մի փոքր ձգված հյուսիսից-հարավ ուղղությամբ, երեք զույգ հաստահեղույս սյուներով։ Հ. Օրբելու կարծիքով սկզբնական շրջանում եղել է մաքսատուն կամ պահակատուն։ Վ. Հարությունյանը գտնում է, որ առաջին հարկը կառուցվել է Աշոտի պարիսպների հետ միասին[68]։

Այս շենքի մոտ գտնվում է Անիի գլխավոր կամուրջը։ Ներկայումս նրա միայն երկու կողմերի խելերն են պահպանվել։

Աշխարհիկ ճարտարապետության հուշարձաններով ոչ պակաս հարուստ է նաև Անիի Նոր քաղաք կոչվող մասը։ Այստեղ իրենց ճարտարապետական ձևերով և հարդարանքի ճոխությամբ ուսումնասիրողների ուշադրությունն են գրավել Պարոնի պալատը, Սարգսի տունը, մույթերով շենքը և հյուրատունը։

Պարոնի պալատ.—Գտնվում է քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում։ Եռահարկ շինություն է, առաջինը՝ նկուղային։ Նկուղային հարկը եղել է կամարածածկ, իսկ երկուսը՝ հարթ, հենված փայտյա հեծանների վրա։ Ներքուստ շենքի տարածքը բաժանված է մի քանի դահլիճներով և մեծ ու փ սենյակներով։ Շինության առավել կարևոր, արվեստի տեսակետից ընկնող մասը շքամուտքն է, զարդարված հարուստ զարդաքանդակներ մեկը մյուսի հետ ագուցված վեց թևանի աստղաձև դրվագներով։ Զարդաքանդակները բավականին լայն շրջանակով իրենց մեջ են առել որմնասյուներով զարդարված կամարաձև մուտքը[69]։

Երրորդ հարկի մուտքը զարդարված է շախմատաձև՝ տարբեր գույնի սալաքարերով։ Մուտքի մոտ, ձախ կողմից, երկրորդ հարկի բարձրությամբ մի պատի մնացորդ կա, զարդարված ստալակտիտային զարդաքանդակով։ Վ. Հարությունյանի կարծիքով այստեղ գտնվել է վերին հարկը տանող

64 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 58։

65 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр. 113.

66 Տե՛ս նույն տեղում, էջ 129։

67 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 221։

68 Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 79։

69 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 100, 349, 360։

սանդուղքը[70]։ Ուշագրավ է շինության անհամաչափ կառուցվածքը, որը Վ. Հարությունյանը դիտում է իբրև տեղանքին հարմարեցնելու մտադրություն[71]։ Այս հուշարձանն ուսումնասիրողները թվագրում են XII—XIII դարերով[72]։ Ն. Տոկարսկու կարծիքով դա հասարակական բնույթի շենք է[73]։

Սարգսի պալատը.—Գտնվում է Գագկաշենի հյուսիս-արևմտյան կողմում։ Ավերակ վիճակում է։ Զարդաքանդակների պահպանված բեկորներից երևում է, որ Պարոնի պալատի նման ունեցել է ճոխ հարդարված շքամուտք։ Հնգաթև աստղաձև զարդաքանդակներից մեկի թևերի մեջ ելնդավոր տառերով տեղադրված են Սարգսի անունը կազմող տառերը։ Հ. Օրբելու կարծիքով այդ կամ քանդակագործ վարպետի, կամ տանտիրոջ անունն է։ Թ. Թորամանյանի վերակազմության համաձայն շենքը եղել է միհարկանի։ 1912 թվականի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին Ապլղարիբի և այլ անձանց մենատների ավերակները։

Բաղնիք.—Նոր քաղաքի սահմաններում կառուցված աշխարհիկ շինությունների մեջ ուսումնասիրողների ուշադրությունը բազմիցս գրավել է խաչաձև հատակագծով քաղաքային բաղնիքի շենքը։ Չորս անկյուններում տեղադրված են քառակուսի գմբեթավոր սենյակները՝ առագաստային փոխանցումներով։ Գմբեթավորված է նաև կենտրոնը։ Հանդերձարանն արևմտյան կողմում է։ Ուսումնասիրելով միջնադարյան բաղնիքների կառուցվածքային ձևերը Հ. Խալփախչյանը զանազանում է մի քանի տարատեսակներ, որոնց մեջ ամենագլխավորը հասարակական և անհատական բնույթի տարբերություններն են և այդ բնույթից էլ բխող կառուցվածքային ձևերը[74]։ Վերջինիս բնորոշ է առանցքային հորինվածքը։ Դրանք լողարանից, հանդերձարանից և ջեռուցման սենյակից բաղկացած պարզ շինություններ են։ Այն վայրերում, ուր բաղնիքները պետք է բավարարեին մեծաքանակ բազմության կարիքները՝ կառուցվում էին մի քանի սենյակներով և ունեին համեմատաբար բարդ կառուցվածք։ Այդ տիպի շինություն է եղել Անիի քաղաքային բաղնիքը։ Հ. Խալփախչյանն այն կարծիքին է, որ բաղնիքը կառուցված կարող էր լինել XII դարի վերջում կամ XIII դարի սկզբում[75]։ Կառուցման ժամանակը որոշելու համար կարևոր է Տիգրան Հոնենցի շինարարական արձանագրությունը, որտեղ նվիրատվական ցանկում հիշատակված է նաև այս բաղնիքը[76]։ Քանի որ արձանագրությունը թվագրված է 1215, ապա բաղնիքը կառուցված կարող էր լինել դրանից առաջ։ Այնուհետև նվիրատվական ցանկի վերջում Տիգրան Հոնենցն ընդգծում է, որ ցանկի մեջ նշված բոլոր պարագաներն ինքը կամ գնել է, կամ կառուցել։ Այդ պարագաները երեք կարգի են՝ դրամ, տեղավայր և շինություններ։ Վերջինի մեջ կարող են մտնել այդտեղ հիշատակված պանդոկը, բաղնիքը, կրպակը և այլն։ Հիմք ունենալով այս տեղեկությունը, կար-

70 Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 73։

71 Տե՛ս նույն տեղում։

72 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 100, տե՛ս նաև *И. А. Орбели*, Избр. Труды, стр. 22, 123, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 73։

73 Տե՛ս *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 252, 253, Տե՛ս նաև *О. Х. Халпахчьян*, Гражданское зодчество Армении, стр. 107.

74 Տե՛ս *О. Х. Халпахчьян*, Гражданское зодчество Армении, стр. 210—227.

75 Տե՛ս նույն տեղում, էջ 224։

76 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 62—63։

ծում ենք 1215 թվականի մոտ ժամանակով կարելի է թվագրել ինչպես բաղնիքը, այնպես էլ նրա հետ հիշատակված մյուս շենքերը։

Վաճառատուն-հյուրատուն.—Անիի քաղաքացիական ճարտարապետության մեջ կարևոր տեղ ունի նաև հյուրատունը։ Այս շենքը բաղկացած է երեք զանգվածներից, միմյանցից բաժանված երկու ընդարձակ բակերով։ Նրանց մեջ տեղավորված են փոքրիկ սենյակներ։ Այս սենյակներն ունեցել են երկրորդ հարկ։ Նկատի ունենալով ներքին տարածության նման բաժանումները Թ. Թորամանյանը գտնում է, որ դրանք կարող էին կրպակներ լինել և շինությունն էլ համարում է վաճառատուն[77]։ Ն. Մառի կարծիքով սրանք եղել են հյուրատներ[78]։

Ուսումնասիրողների ուշադրությունն առանձնապես գրավել է շքամուտքի ճոխ հարդարանքը, որի հորինվածքում նմանություն է նկատվում Պարոնի պալատի մուտքի ձևավորման հետ։ Այստեղ ևս ճակատային մասը բաժանված է երկհարկանի մուտքերի ձևով և այդ մուտքերն անվել են հյուսվածքաձև զարդապատկերների լայն շրջանակի մեջ։ Երկրորդ հարկում կիրառվել է տարբեր գույնի քարերի սալապատման շախմատաձև դասավորությունը[79]։

Ինչպես զարդապատման եղանակը, այնպես էլ ճարտարապետական ձևերն ուսումնասիրողների համար հիմք են հանդիսացել կառույցը XIII դարով թվագրելու համար[80]։

Անիում պեղումների ժամանակ հայտնաբերվել են աշխարհիկ և մասնավորապես տնտեսական բնույթի բազմաթիվ այլ շինություններ ևս, սակայն դրանց ոչ ճարտարապետական ձևերն են հայտնի, ոչ կառուցման ժամանակը։

* * *

Չնայած աշխարհիկ շենքերի առատությանը, Անիի ճարտարապետության մեջ առավել նշանակալի են պաշտամունքային շենքերը, որոնք, նախ քանակով ավելի շատ են, ճարտարապետական ձևերով բազմազան և, վերջապես, հարուստ են վիմագիր հիշատակարաններով։ Անիի հնագույն, մոնումենտալ և հանրահայտ եկեղեցիներից մեկն է Մայր տաճարը։

Մայր տաճարը.—Քաղաքի գլխավոր եկեղեցական շենքն էր։ Այն նախատեսված էր մարդաշատ արարողությունների համար[81]։ Հենց այդ նկատառումով էլ կառուցվել է եռանավ բազիլիկի սկզբունքով, որը հնարավորություն է ընձեռել մեծապես ընդարձակել ներքին ծավալը։ Ի տարբերություն V—VII դարերի գմբեթավոր բազիլիկների, այստեղ կառուցվածքային տարրերը և, մասնավորապես, մույթերը մշակված են մեծ ճոխությամբ և վերասլաց փնջերի ձևով շեշտում են ներքին համաչափությունների ուղղահայաց գծերի կենտրոնացնող հորինվածքը։ Կենտրոնական նավն իր մեծությամբ ունի բացարձակ առավելություն կողմնայինների նկատմամբ, որի շնորհիվ ներսի մասնատվածությունն առանձնապես չի նշմարվում։ Այս երևույթի մեջ Կ. Հովհաննիսյանը տեսնում է գոթական ճարտարապետության առանձնահատկություն[82]։

Գմբեթի փոխանցման համար կիրառվել են առագաստներ։ Գմբեթը չի պահպանվել, ավերվել է 1319 թվականի երկրաշարժի ժամանակ։ Ավանդատները կրկնահարկ են։ Երկրորդ հարկի մուտքերը տեղադրված են բեմի խորանի մեջ։ Եկեղեցին հարդարված է ճոխ զարդաքանդակներով։ Առանձնապես հարուստ ձևավորում ունի հարավային շքամուտքը և պատն ամբողջությամբ՝ արծվաքանդակներով և դեկորատիվ որմնակամարներով։ Տարբեր տիպի զարդաքանդակների նրբագեղ համադրությամբ են ձևավորված նաև որմնախորշերի վերնամասերը պսակող կամարները։

Եկեղեցու ներսում հարուստ է ձևավորված բեմի խորանը, որի պատերը զարդարված են ութ փոքրիկ որմնախորշերով։

Անիի մայր տաճարի կառուցման մասին տեղեկություն են տալիս ժամանակի գրեթե բոլոր պատմիչները։ Այն հիմնել է Սմբատ թագավորը, շարունակել ու վերջացրել է նրա եղբայր Գագիկի կին Կատրանիդե թագուհին։

Այդ մասին է ավանդում նաև շինարարական արձանագրությունը.

1. Ի։ Ն։ Ծ։ (1001) Թ[ՈՒԻՆ] ՀԱՅՈՑ ՄԺԹԹ ՀՈՌՈՄՈՑ 

—

2. Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԱԾԱՊԱՏԻՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏՆ ՍԱՐԳ—
3. ՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ Ի ՄԵԾԱՓԱՌ ԹԱԳԱՒ—
4. ՈՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ՇԱՀԱՆՇԱՀԻ
5. ԵՍ ԿԱՏՐԱՆԻԴԷ ՀԱՅՈՑ ԹԱԳՈՒՀԻ, ԴՈՒՍՏՐ ՎԱՍԱԿԱ
6. ՍԻՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՆ ԱՅ ԱՊԱՒ—
7. ԻՆԵՑԱ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ԱՌՆ ԻՄՈ ԳԱԳԿԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ
8. ՇԻՆԵՑԻ ՋՍԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ, ԶՈՐ ԷՐ ՀԻՄՆԱԴՐԵԱԼ
9. ՄԵԾԻՆ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԱՔ ՏՈՒՆ ԱՅ ՆՈՐՈԳ
10. ԵՒ ԿԵՆԴԱՆԻ ԾՆՈՒՆԴ ՀՈՅԳԵՒՈՐ ԵՒ ԱՐՔԱՆ ՄՇՏ—
11. ՆՋԵՆԱՒՈՐ. ԶԱՐԴԱՐԵՑԻ ԵՒ ԶԱՐԴԻՒՔ ՊԱՏՈՒԱԿ—
12. ԱՆԱՒՔ ՆՈՒԷՐՔ ԻՆՋ Ի ՔՍ ԵՒ ԶԱՐՄԻՑ ԻՄ ԵՒ ՈՐԴՈՑ
13. ՍՄԲԱՏԱ, ԱԲԱՍԱ ԵՒ ԱՇՈՏՈ. ՀՐԱՄԱՅԵԱԼ ԵՄ ԵՍ ՏՐ.
14. ՍԱՐԳԻՍ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ԵԿԵՂԷՑՈՅՍ, ՅԵՏ ԷԼԻՑ ԲԱ—
15. ՐԷՊԱՇՏ ԹԱԳՈՒՀՈՅՍ ԶՎԱՐԴԱՒԱՐԻՆ ՅԻՍ—
16. ՆԵԱԿԱՆ ՄԻՈՎ ՔԱՌԱՍՆԻՒ ԿԱՏԱՐԵԼ ԱՆԽԱՓԱՆ
17. ՄԻՆՋԵՒ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔԻ։ ԷԹԷ ՈՔ ԶԱՐՔԱՆԱԳՐ—
18. ԵԱԼԴ ԱՆՓՈՅԹ ԱՌՆԷ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ ԵՂԻՑԻ Ի ՔԷ։
19. Ի ՎԵՑ ։Ռ։ ։Ն։ ։Լ։ ԵՒ ։Գ։ (1008) ԱՄԱՑՆ ԱԴԱՄԱ Ի ։ՌԲ։ ԵՒ ։Բ։ ։Ժ։ (1014) ԱՄԻ ՄԱՐ—
20. ՄՆԱՆԱԼՈ ԱԾՆ ԲԱՆԻ ։ՉԸԺ։ (1019) ԱՄԻ ՀԱՒԱՏԱԼՈ Ի ՔՍ
21. ՀԱՅՈՑ։ ԳՐԵՑԱՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ Ի ՁԵՌՆ ԻՄ՝ ԲԵՆԷ[83]։

Արձանագրության մեջ Կատրանիդեն հիշատակված է որպես Սյունյաց Վասակ թագավորի դուստր, իսկ Ուռհայեցու մոտ՝ վրաց Գեորգի թագավորի դուստր[84]։ Մեր կարծիքով, ավելի վստահելի է վիմագիր արձանագրության

---

[77] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 350։

[78] Տե՛ս *Н. Я. Марр*, Ани, стр. 312.

[79] Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, ներդ. 53։

[80] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 350, տե՛ս նաև *О. Х. Халпахчьян*, Гражданское зодчество Армении, стр. 208—209, *Н. М. Токарский*, Арх. Армении..., стр. 262—263.

[81] Տե՛ս *К. Л. Оганесян*, Зодчий Трдат, стр. 42.

[82] Տե՛ս նույն տեղում, էջ 45։

[83] «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 35։

[84] Տե՛ս Ուռհայեցի, էջ 9։

հաղորդումը, որը և հաստատվում է Կատրանիդեի ժամանակակից Ասողիկի տվյալներով:

Սարգիս կաթողիկոսը գլխավորել է Հայոց եկեղեցին 992—1019 թվականներին, եղել է ժամանակի ամենալուսավորված մարդկանցից մեկը: Հայտնի է եղել նաև որպես մեկենաս՝ հովանավորել է Ասողիկին[85]: Կաթողիկոսությունից հրաժարվել է ծերության պատճառով: Մահացել է 1022 թվականին: Պատմիչների մոտ նա հայտնի է Սարգիս Սևանցի անունով:

Այս արձանագրության մեջ ամենաուշագրավն ու առեղծվածայինը թվագրություններն են:

Արձանագրությունը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը կրում է 1001 թվականը, երկրորդը շարադրված է Կատրանիդեի անունից և ավանդում է եկեղեցու շինության մասին: Երրորդ հատվածը գրված է Սարգիս կաթողիկոսի անունից: Վեճեր հարուցող թվականները փորագրվել են վերջում: Առաջին մասում գործածված է թվագրության Ալեքսանդրյան համակարգը /Ի ՎԵՑ Ռ Ն Լ ԵՒ Գ ԱՄԱՅՆ ԱԴԱՄԱ (6433—5425=1008): Հաջորդ՝ Ի ՌԲ ԵՒ Բ Ժ ԱՄԻ ՄԱՐՄՆԱՆԱԼՈ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՆԻ թվականը, որ գրված է բարդ տառակցումներով, կարելի է կարդալ մի քանի եղանակով՝ Ի Ռ ԵՒ Բ Ժ ԱՄԻ, այսինքն՝ 1000+20=1020 թ., գրչի սխալ համարելով ԵՒ-ի վերջում եղած Բ-ի գլխիկը: Կարելի է վերծանել նաև Ի ՌԲ ԵՒ ԲԺ ձևով և ստանալ 1002+20=1022: Ղ. Ալիշանն առաջարկում է ՌԺԲ (1012)[86]: Այնքանով, որ երկրորդ Բ տառն առկա է, մեր կարծիքով պետք է կարդալ ՌԲ ԵՒ ԲԺ՝ 1000+2+2+10=1014:

Ավելի մեծ շփոթություն է հարուցում երրորդ թվականը, բնութագրված Չ Ը Ժ ԱՄԻ ՀԱՒԱՏԱԼՈ Ի ՔՍ ՀԱՅՈՑ, որը պետք է վերծանել 708+10=
=718+301=1019: Եթե առաջինն արարչության թվականն է, ապա երկրորդի տակ Քրիստոսի ծնունդն է նկատի առնված որպես տոմարական հաշվում, իսկ երրորդի տակ՝ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ճանաչելու տարեթիվը: Խնդիրն այն է, որ դրանք իրար չեն համընկնում և 10—12 տարիների տարբերություն ունեն: Ալիշանն այն կարծիքն է հայտնել, որ արձանագրության սկզբում նշված թվականը (1001) նկատի ունի շինության ավարտի տարին, իսկ Սարգիս կաթողիկոսի թվականը (1012)՝ փորագր[illegible] ժամանակը: Թվականների առեղծվածի լուծման համար անհրաժեշտ է ու[illegible] րությու[illegible] դարձնել մի հետաքրքիր իրողության վրա՝ թվականների հերթա[illegible] նության մեջ գոյություն ունի հետևողական աճ: Առաջինը՝ 1008 թվականն է, երկրորդը՝ 1014 և երրորդը՝ 1019: Մեր կարծիքով ԲՆՆԷ գրիչն այս տարբեր տարեթվերով ընդգծել է արձանագրությունը երեք տարբեր տարիներին փորագրելը: Ըստ այդմ առաջին տողը փորագրել է 1008 թվականին և հիշատակել, որ եկեղեցին հիմնադրվել է 1001 թվականին: Տողի վերջում էլ կցագրերը պետք է կարդալ ԲՆՆԷ ԱՄԷՆ ԳՐԷ...[87]: Տողը մնացել է կիսատ: Հավանաբար այդ մասը հավելված է իր կողմից և տողի վերջում նեղ հատվածը հազիվ է

[85] Տե՛ս Ասողիկ, էջ 9:

[86] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 70:

[87] Բրոսեն այս կցագրերը վերծանել է «Ճրգանի ԱՄԵՆ ԴՐ (92)»: Տե՛ս „Quelques inscription remarcables point de vue chronologique", p. 89. Պետք է ասել, որ առաջին փակագիրն իր մեջ պարունակում է Ն, Բ և Ն տառերը, իսկ Ճ տառն առհասարակ գոյություն չունի:

այդքան հնարավորություն ընձեռել: Այնուհետև, 1014 թվականին գրել է Կատրանիդեի արձանագրությունը և 1019 թվականին՝ Սարգիս կաթողիկոսինը:

Գրեթե նույնն է հաղորդում նաև Գանձակեցին՝ «Եւ կատարեցաւ ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ի ՆԽԷ (998) թուականին հայոց: Եւ կին նորա Կատրամիդէ թագուհի աւարտեաց զկաթողիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Սմբատ թագաւորն»[88]: Ս. Անեցին գրում է. «ՌԺԱ: (1011) Կաթուղիկէն սխրատեսիլ՝ զոր հիմնադրեաց Սմբատ յիրում քաղաքին յԱնի. աստանօր գլխաւորեցաւ հրամանաւ: և արդեամբք Կատրամիդեայ թագուհւոյ, որ էր կին Գագկայ Շահնշահի՝ եղբօր Սմբատայ»[89]:

Դառնալով Սմբատ Բ-ի ժամանակ եղած շինարարությանը Ասողիկը գրում է. «Արկանէ հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ», այնուհետև «Կատրանիդէ թագուհի, բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր Վասակայ Սիւնեաց իշխանին, շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ, ամենապայծառ վայելչութեամբ. բարձրաբերձ կամարօք գմբեթաւորեալ, խորան երկնանման»[90]:

Պատմիչների տված թվականների մասնակի տարբերությունները եկեղեցու շինության և արձանագրության մեջ նշված նվիրատվությունների տարբեր տարեթվերի հետևանք կարող են լինել: Ըստ պատմիչների Սմբատ թագավորը վանքը հիմնադրել է 998 թվականին: Այդ նույն թվականին էլ նա մահացել է: Այսպիսով, արձանագրության 1001 թվականը Կատրանիդեի կողմից աշխատանքները վերսկսելու տարեթիվն է: Ավարտի տարեթիվն ըստ Սամուել Անեցու 1011-ն է: Եթե հիմք ընդունենք արձանագրության ընձեռած նախադրյալները, շինարարական աշխատանքների ավարտը պետք է թվագրել 1008: Մեր կարծիքով, 1011 թվականին կատարվել են բոլոր նվիրատվությունները, որով և արձանագրվել է եկեղեցու կառուցման ավարտի, թերևս նավակատիքի արարողությունը: 1008 թվականին սկսած և կիսատ թողնված արձանագրությունը վերստին փորագրվել է 1014 թվականին:

1213 թվականին նորոգվել են եկեղեցու ատրիճանները[91]:

Գագկաշեն ս. Գրիգոր.—Մոտավորապես նույն ժամանակ Անիում Գագիկ թագավորն ավարտեց մի շինություն, որն իր ճարտարապետական ձևերով Զվարթնոցի կրկնությունն էր: Այդ մասին վկայում են պատմիչները, ինչպես նաև շենքի պահպանված մոդելը, որը տաճարի մնացորդների հետ միասին բացվել է 1905—1906 թվականների պեղումների ժամանակ Ն. Մառի կողմից[92]: Եկեղեցու վերակազմությունն առաջին անգամ կատարել է Թ. Թորամանյանը[93]: Ներկայումս ամբողջովին ավերակ է: Շինության մասին տեղեկություն ունի Ասողիկը. «Յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութեամբ ամին Ռ (1000) մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ, ի Վասլի կայսեր յաւուրս, Գագիկ արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ՝ զմեծաշէն եկեղեցին, որ ի քաղաք ու դաշտի անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ և կործանեալ՝ կամեցաւ նույնաձև չափով և յօրինուածով յարդարեալ

[88] Գանձակեցի, էջ 88—89:

[89] Ս. Անեցի, էջ 104—105:

[90] Ասողիկ, էջ 87:

[91] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 34:

[92] Տե՛ս Н. Я. Марр, Ани, стр. 66.

[93] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 277—281:

ի քաղաքին Անւոյ, հիմնարկեալ ի կոյսէ Տաղկոցաձոր ձորոյն ի բարձրաւանդակ տեղւոջն, տարփատենչ տեսողացն, մեծատաշ վիմարդեան, կոփածոյ վիմօք մանուածոյ քանդակաւ յօրինեալ լուսնացոյց պատուհանօք երրակի դրանց դրանցեօք, սքանչատես տեսլեամբ գմբեթաւորեալ գունակ գերամբարձ և երկնանման դնդին»[94]:

Ասողիկի այս տողերն ուսումնասիրողները մեկնաբանել են որպես հիմնադրման, բայց ոչ ավարտի տեղեկություն, իսկ ավարտը թվագրել 1010 կամ 1020 թվականով[95]: *Սակայն դա ճիշտ չէ: Պատմիչի «կամեցաւ» արտահայտությունը միաժամանակ ուղեկցված է «հիմնարկեալ» բառով և, ամենակարևորը, եկեղեցու արտաքին կերպարի հիացական նկարագրով: «Կամեցաւ» բառը տվյալ դեպքում պարզապես դարձվածքային եղանակ է: 1000 թվականը պետք է ընդունել որպես եկեղեցու շինության ավարտի տարեթիվ, մանավանդ որ 1013 թվականին շենքն արդեն նորոգվել է: Բեմի խորանի հարավային սյան վրա կա մի արձանագրություն. «ՆԿԲ (1013) թվականին շրջակամարս կատարեցաւ»*[96]: *Այս տեղեկությունից պարզվում է, որ եկեղեցին կառուցումից հազիվ 13 տարի անց նորոգման կարիք է զգացել: Պեղումների ժամանակ բացվեց նաև արձանագրության մեջ հիշատակված շրջակամարը՝ հավելյալ մի շրջանակ՝ կառուցված արտաքին բոլորակից ներս, որն իր մեջ է առել կիսակլոր խորանների եզրերը: Շենքի ավերման վտանգը կանխելու նպատակով հյուսիս-արևմտյան միայնակ սյան տեղում, ինչպես և արևմտյան, հյուսիսային և արևելյան խորանների աղեղների միջանցում կառուցվել են հաստահեղույս սյուներ: Ասողիկի ձեռագրերից մեկում գտնվել է մի տեղեկություն ևս՝ «Յաղագս շինելոյ արքային Գագկայ ի քաղաքն Անւոյ զեկեղեցին անուամբ սրբոյն Գրիգորի. Տրդատ վարդապետ եկեղեցւոյն»*[97]: *Սակայն նկատի ունենալով եկեղեցու կառուցվածքային թերությունները Թ. Թորամանյանն իրավամբ գտնում է, որ հիշյալ Տրդատը մեծահռչակ ճարտարապետը չէ: Այստեղ ակներևաբար հիշատակվել է նույն անունը կրող այլ ճարտարապետի անուն:*

Ս. Գրիգոր.—*Անիի հնագույն եկեղեցական շենքերից է Պահլավունիների կառուցած ներքուստ վեցախորան ս. Գրիգոր եկեղեցին: Արտաքնապես խորաններն ընդգծված են եռանկյունի որմնախորշերով, բացառությամբ արևելյան խորանի, որի կողմերում տեղադրվել են փոքրիկ, երկարավուն ավանդատներ*[98]*: Հարդարանքով առանձնապես հարուստ է գմբեթը: Զարդարուն դեկորատիվ որմնասյուներով, որոնք առանց խոյակների միջնորդությամբ վերնամասում դառնում են կամարակապ: Հորինվածքի տեսակետից եկեղեցին հիշեցնում է Արագածի VI դարում կառուցված նախատիպը*[99]:

Եկեղեցու կառուցման մասին մատենագրական տեղեկություն չկա, սակայն արձանագրություններից երևում է, որ կառուցվել է X դարում:

---

94 Ասողիկ, *էջ 88—89:*

95 *Տե՛ս* Ս. Բարխուդարյան, *Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 95,* Վ. Հարությունյան, *Անի քաղաքը, էջ 59:*

96 *Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 42:*

97 *К. Л. Оганесян,* Зодчий Трдат, стр. 62—64.

98 *Տե՛ս* Թ. Թորամանյան, *Նյութեր..., 1, էջ 275, 276, տե՛ս նաև* Գ. Լևոնյան, *Ճարտարապետ Տրդատ Անեցին, «Էջմիածին», 1949, № 2, էջ 64—65:*

99 *Տե՛ս А. А. Манучарян.* Два новооткрытых памятника многоапсидной композиции, *ՊԲՀ, 1976,* № 3, стр. 261—264.

Դրանցից երկուսը Շուշան Պահլավունու անունով է, որից մեկը թվագրված է 994[100]: *Կա մի արձանագրություն ևս, որը թեև թվական չունի, սակայն գրված է Շուշանի ամուսնու Գրիգոր Պահլավունու անունից*[101]: *Նշանակում է, որ եկեղեցին կառուցվել է մինչև 982 թվականը: Թ. Թորամանյանը գտնում է, որ եկեղեցու կառուցողն ինքը Գրիգոր Պահլավունին է*[102]: *Դյուլորեն Գրիգոր Պահլավունու մահը թվագրում է 985*[103]:

Ս. Փրկիչ.—*Կլորավուն հատակագծով, ութախորան, չափազանց ինքնատիպ, զուտ անիական հորինվածքի մի շինություն է: Ի տարբերություն VII դարի օրինակների, արտաքնապես մասնատված չէ որմնախորշերով: Բոլորաձև պատի ամբողջ մակերեսը զարդարված է գեղեցիկ որմնասյուներով և կամարներով: Գմբեթի կլորավուն թմբուկը, որը կազմում է շինության երկրորդ հարկաբաժինը, ստորին հարկի ներդաշնակությամբ ունի նույնպիսի հորինվածքով դասավորված դեկորատիվ որմնասյուներ և քանդակազարդ կամարներ: Եկեղեցու արևելյան խորանը մյուսների համեմատ կրկնակի մեծ է, իսկ մյուս կողմերում տեղադրված են հնգակող ավանդատներ՝ խորանավոր որմնախորշերով:*

Ներքին պատերը զարդարված են բարձրարվեստ որմնանկարներով, որոնց հեղինակն է Սարգիս Փարչիկը[104]:

1957 թվականին ստորին հատվածները քայքայվելու պատճառով ավերվեց:

Եկեղեցին ունի շինարարական երկու արձանագրություն, որոնցից մեկը թվագրված է ՆՁԴ (1035) մյուսը՝ ՆՁԵ (1036): Փորագրված են մարզպան Աբլղարիպի անունից:

1036 թվականի արձանագրությունը ժամանակի ընթացքում բավականին խաթարվել է: 7-րդ տողից ներքև բացակայում է արձանագրության վերջը: Մեզ համար Այդ պատճառով հրատարակողներն այն լրիվ չեն ընթերցել: Մեզ համար հիմք է ծառայել Հայաստանի Պետական պատմական թանգարանում պահվող մի լուսանկար, որը, հավանաբար, վրիպել է «Դիվան հայ վիմագրության» առաջին պրակի հրատարակիչներ՝ Հ. Օրբելու և Ս. Բարխուդարյանի տեսադաշտից[105]:

Արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Մ. Բժշկյանցը[106]: *Մյուս հրատարակությունները հրատարակել է միայն առաջին տասնմեկ տողերը: Մյուս հրատարակումների համեմատ սա թերևս ամենակարևորն է, որովհետև այդ ժամանակ արձանագրությունն ամբողջական է եղել: Ս. Ջալալյանցը ստորին ձախ մասի ճշտաձախակողմյան քարն արդեն չի տեսել: Մ. Բժշկյանցի վերծանության ճշտությունը հաստատում են լուսանկարի վրա երևացող խաթարված տառերի մանրամասները: Ս. Ջալալյանցի մոտ ևս արձանագրությունը լրիվ չէ: Այն ընդհատվում է 16-րդ տողի կեսում*[107]:

---

100 *Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 31—32:*

101 *Տե՛ս նույն տեղում, էջ 31:*

102 *Տե՛ս* Թ. Թորամանյան, *Նյութեր..., 1, էջ 319: տե՛ս նաև* Կ. Կոստանեանց. *Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ ԺԴ—ԺԵ:*

103 *Տե՛ս Dulaurer,* Chronique d'Matth. d'Edesse, p. 547,

104 *Տե՛ս И. А. Орбели,* Избр. труды, стр. 127.

105 *Այդ լուսանկարը կատարված է Հ. Քյուրքչյանի կողմից 1880—1890-ական թվականներին: Թանգարանում պահվում է 1637 թվահամարի տակ:*

106 *Տե՛ս* Մ. Բժշկեանց, *Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և այլ կողմանս բնակեալս ի Հայկազեանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքն, Վենետիկ, 1830, էջ 73:*

107 *Տե՛ս* Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, էջ 8:*

Ն. Սարգիսյանը հրատարակել է մինչև 18-րդ տողը[108], սակայն բացակա-յող կամ վնասված հատվածները վերականգնելու փորձ չի կատարել: Հիմք ունենալով այս հրատարակությունները Ղ. Ալիշանը վերականգնել է 15-րդ և 17-րդ տողերի սկիզբը[109]: Ալիշանի մոտ արձանագրությունն ավարտվում է 18-րդ տողի կեսում: Մասնակի լրացումներով արձանագրությունը հրատարակել է Հ. Օրբելին[110], նույնպես մինչև 18-րդ տողի կեսը: Այժմ օգտվելով լուսանկարից և նկատի ունենալով Մ. Բժշկյանցի հրատարակությունը, ինչպես նաև Ղ. Ալիշանի ու Հ. Օրբելու վերականգնումները՝ փորձենք ամբողջացնել արձանագրությունը:

Բացակայող ձախակողմյան քարի հատվածում յուրաքանչյուր տող պարունակել է 6 տառ: 7-րդ տողի վերջում մնացել է ՁԻ բառասկիզբը: Ելնելով արձանագրության բովանդակությունից, շարունակությունը, այսինքն՝ 8-րդ տողի սկիզբը Հ. Օրբելին վերականգնել է ՁԻ[ԹՀԱՅ] բառով: Մ. Բժշկե-անցի մոտ գրված է ՁԻ[ԹՀԱՆՔ], որը ավելի հավաստի է: 9-րդ և 10-րդ տողերի սկզբում ըստ Բժշկյանցի եղել են [ՁԱՐԴԱ]ՐԵՑԻ և ՊԱՏ[ՈՒԱԿԱՆ]-ԱՒՔ: 10-րդ տողի վերջում մնացել են բառասկզբի երկու տառերը՝ ՆՈ, որոնք, ըստ Մ. Բժշկյանցի, 11-րդ տողում շարունակվել են ՆՈ[ՐՈԳԵՑԻ Հ]ԻՆ: Այստեղ էլ ավարտվում է Մ. Բժշկյանցի հրատարակածը: 12-րդ տողի սկզբում Հ. Օրբելին վերականգնել է [ՍՈՒՐԲ] բառը: 13-րդ տողի սկիզբը, ուր նույնպես պահանջվում է վեց տառ, նախորդ հրատարակողները վերականգնել են [Ի ՍՊ]ԱՍՈՒՑՍ, որը համոզիչ չէ: Շարադրանքն այստեղ այսպիսին է. «Արդ եթե ոք ի մեծաց կամ ի փոքունց... սպասուցս եւ կամ յայլ իրացս որ եսու...»: Ինչպես տեսնում ենք նախադասության մեջ պակասողը բայն է: Այդ պատճառով կարծում ենք, որ պետք է լրացվի [ԽԼԷ Ի ՍՊ]ԱՍՈՒՑՍ ԵՒ ԿԱՄ ՅԱՅԼ ԻՐԱՑՍ: «Ի սպասուցս» վարկածով չի լրացվում նաև տառերի պահանջվող քանակը: 13-րդ տողի վերջում փորագրված է ՅԱՓՇՏԱ..., 14-րդ տողի պահպանված հատվածում մնացել են ԻՍ տառերը: Ելնելով բովանդա-կությունից 14-րդ տողի սկիզբը կարելի է վերականգնել՝ ՅԱՓՇՏԱ[ԿԷ ՏԵ-Ղ]ԻՍ: 15-րդ տողի բացակայող հատվածն Ալիշանը վերականգնել է [ՅԵՏ ԵԼԻՑ], որը միանգամայն համոզիչ է: 16-րդ տողի սկզբում եղած բառից նախորդ տողում մնացել է Ե սկզբնատառը, և մեկուկես տառ էլ տողի պահ-պանված հատվածում: Լուսանկարից երևում է, որ այդ վերջնատառի մասը եղել է կորնթարդ, իսկ աջ կողմից ստեղին միացված է հորի-կան ելուստ: Տառաձևերի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ պետք է «Դ» կամ «Ռ» լինի, որի համաձայն այդ հատվածը կարելի է վերականգնել Ե[ԿԵՂԵՑՈՅ]Դ ԶՎԱՐԴԵՎԱՐԻՆ: Հ. Օրբելին վերականգնել է Ե[ԿԵՂԵՑԻՈՅՍ], որը վերջնատառի նշված մնացորդով չի հաստատվում: Ի դեպ ՎԱՐԴԵՎԱՐԻՆ բառը բոլոր հրատարակողների մոտ ՎԱՐԴԵՎԱՌԻՆ ձևով է: Հաջորդ 17-րդ տողի սկիզբը Ալիշանը վերականգնել է ՄԻՆ[ՁԵԻ Ի ԳԱԼՈՒՍ]ՏՆ ՔԻ, որը նույնպես առարկություն ունենալ չի կարող: Սակայն այս տողը մեծապես վնասված է նաև երկրորդ հատվածում: Այստեղ պահ-պանված առանձին մնացորդների հիման վրա վերականգնել հնարավոր չէ: 18-րդ տողի սկզբին, ըստ բովանդակության, պետք է լինի [ՅԱՆՈՒՆ ՈՐ]ԴԻՈ: Այս տողի վերջում ԱՐՈՅՆ բառից ներառյալ նախորդ հրատարա-

108 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 121—122:

109 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 82—83:

110 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 44—45:

կողները չունեն: Վերականգնվում է նաև 19-րդ տողը, որից պահպանվել է միայն վերին կեսը: Մանրազնին ուսումնասիրելուց հետո, այդ տողը վերա-կանգնում ենք այսպես՝ 18-րդ տողը ԱՐՈՅՆ և 19-րդ տողը՝ [ԵԹԵ ՈՔ Գ] ՐՈՒԱԾՍ ԻՄՈ ԶԱՌՆԷ ԵՐԻՍ ԱՆԻԾԻՑԴ ՊԱՐՏԱ—

Արձանագրության 19-րդ տողի բովանդակությունից երևում է, որ այն ավարտված չէ: Ելնելով տողի վերջում պահպանված անավարտ բառից և բանաձև դարձած արտահայտություններից 20-րդ տողն առաջարկում ենք՝ [ՊԱՐՏԱ/ԿԱՆ ԼԻՑԻ ԻՍԿ ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐԻՍ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ]: ԱՄԵՆ:

Ամբողջությամբ վերականգնված արձանագրությունը հետևյալ բովան-դակությունն ունի.

1. ՅԱՄՍ ԱԾԱՊԱՏԻ ԵՒ ՀՈԳԻՈՐ ՏՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅ-
2. ՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՄԲԱՏԱ
3. ՈՐԴԻՈ ԳԱԳԿԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ Ի ՆՁԵ (1036) ԹՈՒԱԿԱՆԻՍ ԵՍ ԱՊԼ-
4. ՂԱՐԻՊ ՄԱՐԶՊԱՆ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐՈ ԻՇԽԱՆԻ ԵՒ ԹՈՌՆ ԱՊՈՒ-
5. ՂԱՄՐԻ ԵՒ ԵՂԲԱՅՐ ՎԱՀՐԱՄԱ ԵՒ ՎԱՍԱԿԱ ՇԻՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ ՓՐԿԻ-
6. ՉՍ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ ՅԱՆԻ ՇԱՏ ՋԱՆԻՒ ԵՒ ՄԵԾԱԾԱԽ ԳԱՆ-
7. ՁԻՒ ԵՒ ԳՆԵՑԻ ՀԱԼԱԼ ԸՆՁԻՑ ԻՄՈՅ ԿՈՒՂՊԱԿԱՆԻ :Գ: ԵՒ ՁԻ—
8. [ԹՀԱՆՔ] ԵՒ ԱՅԳԻ ԵՒ ՀՈՂԵԱՐ ԵՒ ԵՏՈՒ Ի ՄԲ ՓՐԿՉԻՍ ԵՒ
9. [ՁԱՐԴԱ]ՐԵՑԻ ՈՍԿԻՈՎ ԵՒ ԱՐԾԱԹԻՈՎ ԵՒ ԱԿԱՄԲՔ ՊԱՏ-
10. [ՈՒԱԿԱՆ]ԱՒՔ ԵՒ ԵՏՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ ԵՒ ՏԱՒՆԱԿԱՆ ԵՒ ՆՈ-
11. [ՐՈԳԵՑԻ Հ]ԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՒՔ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ՄԻԼ ԱՌ
12. [ՍՈՒՐԲ Փ]ՐԿԻՉՍ. ԱՐԴ ԵԹԵ ՈՔ Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈՔՈՒՆՑ
13. [ԽԼԷ Ի ՍՊ]ԱՍՈՒՑՍ ԵՒ ԿԱՄ ՅԱՅԼ ԻՐԱՑՍ, ՈՐ ԵՏՈՒ ԵՒ ՅԱՓՇՏԱ-
14. [ԿԷ ՏԵՂ]ԻՍ / ԽԱՓԱՆ ԼԻՆԻ, :ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԼԻՑԻ:
15. [ՅԵՏ ԵԼԻ]Ց ԻՄՈՅ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԵԴԻ ԼՈՒԾ Ի ՎԵՐԱՅ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ Ե-
16. [ԿԵՂԵՑՈՅ]Դ ԶՎԱՐԴԵՎԱՐԻՆ :Խ: ՈՒՆՍՆ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵԼ ՄԻՆ-
17. [ՁԵՒ Ի ԳԱԼՈՒՍ]ՏՆ ՔԻ. ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ... ԱՐՈՅՆ:
18. [ՅԱՆՈՒՆ ՈՐ]ԴԻՈ ԳԱԳԿԱ ՍՄՊԱՏԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱՐՈՅՆ:
19. [ԵԹԷ ՈՔ Գ]ՐՈՒԱԾՍ ԻՄՈ ԶԱՌՆԷ ԵՐԻՍ ԱՆԻԾԻՑԴ ՊԱՐՏԱ-
20. [ԿԱՆ ԼԻՑԻ ԻՍԿ ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐԻՍ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ]: ԱՄԵՆ:

Ինչ վերաբերում է 1035 թվականի արձանագրությանը, ապա այն անհա-մեմատ ավելի լավ վիճակում էր մինչև 1957 թվականը, երբ ավերվեց եկե-ղեցու հյուսիսային կեսը: Ներկայումս գոյություն չունի:

Ահա այդ արձանագրության բովանդակությունը.

1. Ի ՆՁԴ (1035) ԹՈՒԱԿԱՆԻՍ ԵՍ ԱՊԼՂԱՐԻՊ ՄԱՐԶՊԱՆ ԵՂԷ
2. ՀՐՈՎԱՐՏԱԿ Ի ՍՄՊԱՏԱ ՇԱՀԱՆՇԱՀԷ ԱՌ ԿԱՅՍՐՆ
3. ՅՈՒՆԱՑ ՄԻԽԷԼԻ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻՍ ԵՒ ՇԱՏ ՋԱՆԻՒ ԵՒ
4. ՄԵԾԱԾԱԽ ԳԱՆՁԻՒ ԲԵՐԻ ՄԱՍՆ Ի ՍՐԲՈ ԽԱՉԷՆ ԵՒ ԵԿԵ-
5. ԱԼ ԿԱՏԱՐԵՑԻ ԶՏԱՃԱՐՍ ԶԱՅՍ ԵՒ ԶՆՇԱՆՆ ԼՈՒՍՈ ԿԱ-
6. ՆԳՆԵՑԻ Ի ՊՍԱԿ ՀԱՐՍԻՆՍ ՔԻ...

Արձանագրությունը բաղկացած է 15 տողից[111]:

Բացի շինարարական տեղեկություններից, այս արձանագրությունները հետաքրքիր տվյալներ են հաղորդում նաև հիշատակված անձանց և առանձնա-պես Ապլղարիպի մասին: Ըստ 1035 թվականի արձանագրության Ապլղարիպը,

111 Նույն տեղում, էջ 45:

հրովարտակ ստանալով Սմբատ Թագավորից, գնացել է Հունաց Միխել կայսեր մոտ ս. Խաչի մասունքները բերելու։ 1036 թվականի արձանագրությունն ավանդում է, որ Պետրոս կաթողիկոսի օրոք Գրիգորի որդի և Ապուղամրի թոռ Ապլղարիպը՝ Վահրամ և Վասակ Պահլավունիների եղբայրը մեծ ծախսերով կառուցեց ս. Փրկիչ եկեղեցին և բազմաթիվ նվիրատվություններ կատարեց։ Երկու արձանագրություններն էլ խոսում են եկեղեցու շինության մասին։ Բայց քանի որ դրանք թվագրված են տարբեր տարեթվերով, ուստի բնականորեն հարց է առաջանում, թե դրանցից ո՞րն է իսկականը։ Եթե եկեղեցին կառուցվել է 1036 թվականին, ապա ինչո՞վ բացատրել 1035 թվականի արձանագրության առկայությունը։ Մեր կարծիքով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ երկու արձանագրությունները ոչ միայն ունեն նույն բովանդակությունը, այլև լրացնում են մեկը մյուսին։ Մեկում խոսվում է Ապլղարիպի հոգևոր գործունեության և եկեղեցու շինության մասին, իսկ մյուսում՝ եկեղեցու շինության, նվիրատվությունների և ծագումով ով լինելու մասին։ Միանգամայն պարզ է, որ չավարտված եկեղեցու վրա շինության մասին չէին գրի, որ վանքին նվիրատվություններ անելու արարողությունը պետք է տեղի ունենար եկեղեցու շինությունից հետո, իսկ նվիրատվական ցանկը բերված է միայն երկրորդ արձանագրության մեջ։ Այստեղից հասկանալի է դառնում, որ եկեղեցին կառուցվել և արձանագրվել է 1035 թվականին, բայց նվիրատվություն չի կատարվել։ Հաջորդ տարին՝ 1036 թվականին Ապլղարիպի նվիրատվության առիթով շինության փաստը նշվել է երկրորդ անգամ։

Արձանագրություններից մեկում հիշատակված է Պետրոս կաթողիկոսը, որի կաթողիկոսության շրջանն ընդունված են 1019—1058 թվականները։

Սմբատ Թագավորը գահակալել է 1020—1042 թվականներին։

1035 թվականի արձանագրության վերջում պահպանվել է փորագրող գրչի անունը՝ ԳԷՈՐԳ ԳՐԻՉ ՅԻՇԵՍ. ՔՍ։

XIV դարում եկեղեցու գմբեթը նորոգվել է։ Այս կապակցությամբ փորագրվել է մի արձանագրություն, մուտքից դեպի արևմուտք՝ 3-րդ նիստին։ Թվագրված է 1342[112]։

Սելջուկյան տիրապետության սկզբնական շրջանում Անիի շինարարական աշխատանքները թեև նկատելի չափով նվազեցին, սակայն չդադարեցին։ Այս շրջանում կատարվել են մի շարք նորոգումներ, կառուցվել են առանձին կոթողներ և փոքր ծավալի շինություններ։ Ոչ մեծ չափերի կառույցներից է ս. Փրկչի ժամատունը, որի մասին հիշատակված է եկեղեցու անկյունապատերից մեկում պահպանված արձանագրության մեջ.

1. ՅԱՄՍ ԱԾԱՊԱՏԻԻ ԵՒ ՀՈԳԵԻՈՐ ՏՆ ԲԱՐՍՂԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂ-
2. ԻԿՈՍԻ ԵՒ ՅԱՄԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ԲԱՐԻԱՆՈՒՆ ՍՈՒԼԴԱՆԻ.
3. ՈՐԴԻ ԱՄԻՐ ՄԱՀՄՈՒՏԻ. ԹՈՌՆ ՄԱՆՈՒՉԷԻ. ՅԱՄԻ ։ՈԽԲ։ (1193) ԹՈՒ։
4. ԱՐԴ ԵՍ ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ. ՈՐԴԻ ՍՈՍԹԷՆԷՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԹՈՌՆ
5. ԳԷՈՐԳԱ. ԱԻԱԳ ԵՐԻՑՈ ԱՐՃՈՅ ԵՒ ՋՈՒԳԱԿԻՑ ԻՄ ԽՈՒՇՈՒՇ
6. ԱՂԱԽԻՆ ՔԻ ՅՈՒՍԱԼՈՎ ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՅ ՇԻՆԵՑԱՔ ՎԵՐԸՍՏԻՆ
7. ՋՄԵՐ ԳԱՆՁԱԳԻՆ ՀԱՅՐԵՆԻՔՍ, ՉՍԲ ՓՐԿԻՉՍ ՇԱՏ ԱՇԽԱՏ-
8. ՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԱՔ ՅԱՌԱՋԻՆ ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆՆ ՈՉ ՈՒՆԵԼՈՎ
9. ՋՈՔ ԱՒԳՆԱԿԱՆ ԱՅԴ ՄԻԱՅՆ ԶԲԱՐԱԿԱՆՆ ՅԱՄԵՆԱՅՆԻ,
10. ՈՐՈՎ ԿԱՐՈՂԱՑԱՔ ԵՒ ԿԱՏԱՐԵՑԱՔ ԱՅԴ ԵՒ ԸՆԾԱՅԱԲԵՐ ԵՂԱՔ
11. Ի ՍԱ. Ի ՍՈՐԻՆ ՇՆՈՐՀԷ ՇՆՈՐՀՍ ՁՆՈՐՍ ՀՆՈՎՆ ԱԾԱԳԻԾ ՊԱՏ-
12. ԳԱՄԱՒՔ ՆԱԵՒ ՁՁԱՐԴՍ ՍՊԱՍՈՒՑ Ի ՔԱՌԵՍԻՆ ԽՈՐԱՆՍՍ. ՈՐՔ
13. ԿԱՆԽԵՑԻՆ ՀԱՆԻՆ Ի ՍԵՂԱՆ ԶԱՐԴԱՐ ԵՒ ՈՒԽՏԵԱԼ ՋՀԱՃԵ-
14. ԼԻՆ ԿԱՄԱՑՆ ՀԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ։ ՇԻՆԵՑԱՔ ՍՄԱ ԺԱՄԱՏՈՒՆՍ
15. ԱՄԱՐԱՆՈ ԵՎ ՁՄԵՐԱՆՈ ԵՒ Ի ԿԵԱՆՍ ՄԵՐ ՊԱՇՏԵՑԱՔ Ի ԱՄԱ ՋԵԿԱՒՈՐՍ ՃԱ-
16. ՆԱՊԱՐՀԱՅ...[113]

Արձանագրությունը բաղկացած է 28 տողից. երկրորդ մասում բերված է
նվիրատվական ցանկը։ Բովանդակությունից պարզվում է, որ 1193 թվակա-
նին Սոսթենես քահանայի որդի Տրդատ քահանան, իր կին Խուշուշի հետ
միասին, Բարսեղ կաթողիկոսի օրոք նորոգել են ս. Փրկիչ եկեղեցին, շինել
ժամատուն և մեծ ընծաներ տվել եկեղեցուն։ Ուշագրավ է, որ 1193 թվակա-
նին և, առհասարակ, XII դարի երկրորդ կեսին Բարսեղ անունով կաթողիկոս
գոյություն չի ունեցել։ Պաշտոնական տարեգրությամբ այդ տարիներին
կաթողիկոսներ են եղել Գրիգոր Դ Տղան (1173—1193) և Գրիգոր Ե Քարավեժը
(1193—1194 թթ.)։ Հավանական է, որ դա Անիի եպիսկոպոս Բարսեղ Բ-ն է,
որին արևելահայերը հռչակեցին կաթողիկոս։ Եթե հաշվի առնենք, որ արձա-
նագրությունը փորագրվել է Գրիգոր Տղայի մահվան տարին, ապա հասկանա-
լի կլինի ս. Փրկչի պատին հոգևոր տիրոջ անվան տակ Բարսեղ եպիսկոպոսի
անվան փորագրումը։

Արձանագրության մեջ հիշատակված է մի անձնավորություն ևս, որի
գոյության ժամանակով կարելի է ստուգել արձանագրության թվականի ճըշ-
տությունը։ Դա Սուլտանն է, որի մասին համառոտ տեղեկություն է հաղոր-
դում Բարձրբերդցին, անվանելով նրան «Ծովի Սուլտան»[114]։ Բարձրբերդցու
նկարագրությունը թվագրված է 1161—1168 տարիներով։ Իսկ թե Սուլտանն
այնուհետև որքան է իշխել Անիում նա չի ասում։ Բարձրբերդցին տեղեկաց-
նում է, որ 1199 թվականին, վրաց թագուհի Թամարի օրոք, Իվանեն և
Զաքարեն երրորդ անգամ ազատագրեցին Անին։ Թե ով էր այդ ժամանակ
Անիի տերը, մեր կարծիքով այդ հարցի լուսաբանմանը մեծապես օժանդակում
է այս արձանագրությունը, որի մեջ Սուլտանը հիշատակվելով որպես Մահ-
մուտի որդի, Մանուչեի թոռ և, վերջապես՝ ամիրապետության տիրոջով,
Բարձրբերդցու Սուլտանի հետ միևնույն անձնավորությունը լինելու հիմքերն
ունի։

Ս. Փրկիչը նորոգող ու ժամատուն կառուցող Տրդատ քահանան տեղեկաց-
նում է, որ իր հայր Սոսթենես քահանան, պապը՝ Արջո Առիճի ավագ երեց
Գևորգը, կինը՝ Խուշուշը մասնակցել են նրա շինարարական ձեռնարկումնե-
րին։

Բարձրբերդցու մոտ մի տեղեկություն կա ոմն «Աչկայ (կույր) Գէորգի»
մասին, որն Առջո Առիճում հոգևորական է եղել, իսկ այնուհետև որպես
ժամանակի և բնակության վայ-
ճգնավոր բնակություն հաստատել Անիում[115]։

[112] Տե՛ս նույն տեղում, էջ 44։

[113] Նույն տեղում, էջ 47։

[114] Տե՛ս Բարձրբերդցի, էջ 67։

[115] Տե՛ս նույն տեղում, էջ 129, 168։

ների համապատասխանությունը որոշակի նախադրյալներ է ստեղծում այս Գևորգներին նույնացնելու համար: Բարձրբերդցին նրան հիշատակում է 1170-ական թվականներին, նշելով, որ «Աշկայ Գէորգը» երկար ճանապարհորդություն է կատարել դեպի Հռոմ, Հունգարիա: Այսպիսով, 1170-ական թվականները պետք է ընդունել նրա ծերության տարիները, որով հավաստի կդառնա ժամանակագրական հավանականությունը: Այս արձանագրությունը ժամատան կառուցման մասին եղած հնագույն տեղեկությունն է: Այժմ ժամատունն ամբողջապես ավերակ է:

Մխիթար Շերացու զանգակատունը.—*XIII դարի երկրորդ կեսին, այսինքն մոնղոլական տիրապետության շրջանում, երբ Զաքարյաններն արդեն կորցրել էին իրենց վաղեմի հզորությունն ու դիրքերը, Անիում և Շիրակում որևէ խոշոր և աչքի ընկնող շինություն չի կանգնեցվել: Արձանագրություններում սովորաբար հիշատակվում են զանգակատների, ծիթհանքերի և հավլադեպ գավիթների մասին: Այսպիսի մի արձանագրություն պահպանվել է ս. Փրկիչ եկեղեցու պատին, թվագրված 1271:*

Ի ԹՈՒԻՆ ։ՉԻ։ (1271) ԵՍ ՄԽԻԹԱՐ, ՈՐԴԻ ՇԵՐԱՍՑԻ, ՈՐԴԻ ՋՈՒՍԻՄԻ, ՍԱԼՈՒՔԵՆՑ ՍԲ ՆՇԱՆՍ ԵՒ ՍԲ... ԵՒ Ի ՓՐԿԻՉՍ ԵՒ ԲԵՐԻ ԶԱՆԳԱԿԱՆԻՍ ԵՒ ՇԻՆԵՑԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵ[Ա]ՆՑ ԻՄ-ՈՑ ՈՐՔ ԶՎԱՐՃԱՆԷՔ Ի ԶԱՑՆԻՑ ՍՈՐԱ. ԱՍԱՑԷՔ ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՄԽԻԹԱՐԱ ԵՒ ԾՆՈՂԱՑ Ի[Ի]ՐՈՑ։ ՍՊԱՍԱՒՈՐ ՍՈՐԱ... ՄԱՏՈՒՑԷ ՊԱՏԱՐԱԳ ։Ա։ ՍԲ ԳՐ[ԻԳՈՐ]ԻՆ[116]։

Մխիթարի մասին եղած միակ հիշատակությունն այս արձանագրությունն է: Այստեղ նշված է, որ նա եղել է Շերասցու որդին, Ջուսիմի թոռը: Շերասցու մասին ոչ միայն տեղեկություն չկա, առհասարակ կասկածելի է նրա անուն կամ մականուն լինելը: Աճառյանը գտնում է, որ այն կարող է նույնիսկ տիտղոս լինել[117]: Անհայտ է նաև Ջուսիմը:

Ս. Ստեփանոս և ս. Քրիստափոր մատուռները.—*Ապլղարիպի անունից գրված երրորդ արձանագրությունն Անիում կրում է 1040 թվականը: Ինչպես երևում է արձանագրության բովանդակությունից, խոսքը վերաբերում է երկու մատուռների կառուցմանը, որոնց շինարարական արձանագրությունն անհայտ պատճառներով փորագրվել է ոչ թե այդ մատուռներից մեկի, այլ Պահլավունյաց (Ապուղամրենց) ս. Գրիգոր եկեղեցու պատին:*

Արձանագրությունը պատմում է, որ Ապլղարիպը կառուցել է երկու սենյակ, այսինքն՝ մատուռ-հանգստարան: Մատուռները չեն պահպանվել: 1907 թվականին Թորամանյանի կատարած պեղումների շնորհիվ հայտնաբերվել է միայն նրանց տեղը և հանգուցյալների տապանաքարերը:

Մատուռների շինարարական արձանագրությունը փորագրված է գեղեցիկ ու խոշոր տառերով: Կոտրված են 3 և 4-րդ տողերի սկիզբը, իսկ հողմնահարված՝ վերջին տողի միջին մասը: Բովանդակության համաձայն և ինչպես նշմարվում է պահպանված տառամասերից 3-րդ տողի սկզբի ԻՄ բառին պետք է հաջորդի ՅԱՂԱԳՍ: ՅԱՂ և ԱԳՍ բառամասերի արանքում երևում են առանձին տառերի հետքեր, որոնք ենթադրել են տալիս, որ քարի այդ մասը վնասվածք է ունեցել դեռևս փորագրման ժամանակ և մեկ անգամ ՅԱՂԱԳՍ

116 «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 43:

117 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ, էջ 159:

փորագրելուց հետո, երբ քարը փշրվել է, բառի երկրորդ կեսը, երկու տառի տարածության հեռավորությամբ, փորագրվել է երկրորդ անգամ: 4-րդ տողից կոտրվածքը տարել է երկու տառ, որոնք հեշտությամբ վերականգնվում են՝ ՇԻՆԵՑ[Ի Զ]ԱՅՍ ձևով: 5-րդ տողից կորել են ՔԵՌ բառի առաջին երկու տառերը և դրանց առաջ՝ ԵՒ շաղկապը: 5-րդ տողի վերջավորությունից երևում է, որ 6-րդ տողի պակասավոր հատվածում պետք է լիներ ս. Քրիստափոր անունը: 7-րդ տողը, համաձայն 6-րդ տողի վերջում պահպանված ՍԸ սկզբնատառերի, Ալիշանն առաջարկում է վերականգնել ՍՏԵՓԱՆՈՍ[118], որը համապատասխանում է բովանդակությանը: Նույն ձևով է վերականգնել նաև Հ. Օրբելին:

Վերջին տողի հողմնահարված հատվածում եղել է ԻՍԿ ԿԱՏԱՐԻՉ: Վերականգնված արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

1. Ի ՆՋԹ (1040) ԹՈՒԱԿԱՆԻՍ. ԵՍ ԱՊԼՂԱՐԻՊ ՀԱՅՈՑ ՄԱՐԶՊԱՆ ՈՐԴԻ ԳՐԻ-ԳՈՐՈ ԵՒ
2. ԹՈՌՆ ԱՊՈՒՂԱՄՐԻ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆԱՑ, ԹԷՊԷՏ ԵՒ ԱՆՏԵՍ ԷԻ Ի ՀԱՒՐԷ
3. ԻՄԷ ՅԱՂԱԳՍ ԿՐՍԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԼ ՀԱՐԿԵՑԱ Ի ԾՆՈՂԱԿԱՆ ՍԻՐՈՅՆ ԵՒ
4. ՇԻՆԵՑ[Ի Զ]ԱՅՍ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ ՀԱՒՐ ԻՄՈ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ ՀԱՄ-
5. ԶԷ [ԵՒ ՔԵ]Ռ ԻՄՈ ՍԵԴԱՒ ԵՒ ՇԻՆԵՑԻ ՍԵՆԱԿ ։Բ։ ԶՍԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՒ ԶՍԲ
6. [ՔՐԻՍՏԱՓՈՐ Ե]Ի ՊԱՅՄԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՑԴ ԱՅՍ Է. ՈՐ ԶԱՄԷՆ ՈՒՐԲԱԹ Ի ՍԲ ՍԸ-
7. [ՏԵՓԱՆՈՍ] ԺԱՄՆ ԻՄ ՄԱՒՐՆ ՇՈՒՇԱՆԱ ԱՐԱՍՑԵՆ ԵՒ ԶՇԱԲԱԹՆ ԻՄ
8. ՀԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ Ի ՍԲ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԶԱՄԷՆ ՈՒՐԲԱԹ ԻՄ ՔԵՌՆ ՍԵԴԱՒ
9. ԵՒ ԶՇԱԲԱԹՆ ԻՄ ԵՂԲԱՒՐՆ ԱՐՆԷՆ ՀԱՄԶԷԻ ԵՒ ԱՌԱՋԱՒՈՐԱՑՆ ՈՒ-
10. ՐԲԱԹԻՆ ԵՒ ԱՂՅԱՑՆ ՈՒՐԲԱԹԱՆՈՑՆ ՓՈԽԱՆ ՅԱՐՋԱԿԱՒՈՐՔՆ Ա-
11. ՐԱՍՑԵՆ ։Ը։ ԱՒՐ։ ԱՐԴ ԵԹԷ ՈՔ Ի ՔԱՀԱՆԱՒՑ ԵԿԵՂԵՑԵԱՑԴ ԶԱՅԴ ԺԱՄԴ
12. ԽԱՓԱՆԷ ԵՒ ԿԱՄ ՊՂԵՐԳԱ ԵՒ ԱՒՐ ԱՆՑՆԷ ՆԶՈՎԵԱԼ ԼԻՑԻ Ի ՀԱՒՐԷ ԵՒ
13. ՅՈՐԴԻՈ ԵՒ Ի ՍԲ ՀՈԳԻՈՅՆ ԵՒ ։ՅԺԸ։ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ԵՒ ԲԱԺԻՆ ՆՈՐԱ ԸՆԴ
14. ՅՈՒԴԱՒ ՄԱՏՆՉԻՆ ԱՌՑԷ. ԻՍ[Կ ԿԱՏԱՐԻ]Չ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ ԳՐԻԳՈՐ[119]

Վերջում փորագրված է Գրիգոր փակագիրը, որը փորագրող գրչի անունն է:

Բովանդակությունից երևում է, որ Ապլղարիպն այս հանգստարանները շինել է իր հոր, եղբոր և քրոջ համար: Մայրը հիշատակված է միայն երկրորդ ցուցակում, որտեղ Ապլղարիպը պարտավորվում է իր մոր, հոր, եղբոր և քրոջ համար պատարագ մատուցել: Ինչպես երևում է 1037 թվականի արձանագրությունից, Շուշանը մահացել է այդ թվականին: Այն հանգամանքը, որ Ապլղարիպը մոր համար դամբարան չի շինել վկայում է, որ դամբարանների շինության ժամանակ Շուշանն արդեն մահացած է եղել և ունեցել է իր հանգստարանը: Երբ ավարտվել է դամբարանների շինությունը, Ապլղարիպը նրա համար միայն ժամերգության օրեր է սահմանել:

Արձանագրությունը նոր, հետաքրքրական տեղեկություններ է տալիս Ապլղարիպի և նրա տան անդամների մասին: Պարզվում է, որ հայրը՝ Գրիգոր

118 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 53:

119 «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 33:

Պահլավունին մահացել է դեռ Ապլղարիպի մանուկ հասակում։ Մարմաշենի արձանագրությունից հայտնի է, որ եղբայրներից ամենափոքրը Համզեն էր։ Ուստի նրանից մեծը պետք է լիներ Ապլղարիպը, որը այնքան փոքր էր, որ հորը չէր տեսել, բայց ունեցել է իրենից ավելի փոքր եղբայր։ Ամենայն հավանականությամբ նա հորից զրկվել է 2—3 տարեկան հասակում։ Ինչպես հայտնի է, Գրիգոր Պահլավունին մահացել է 982 թվականին, 40 տարեկան հասակում[120], ուրեմն Ապլղարիպը ծնվել է 984 կամ 985 թվականներին։

Հովվի եկեղեցին.—Գտնվում է պարիսպներից դուրս, Անիի ավազ դարպասից մոտ 1,5 կմ դեպի հյուսիս։ Անիում գրականությունից հայտնի են բոլորաձև հատակագծով յոթ եկեղեցիներ՝ Գագկաշեն, ս. Գրիգոր, Մինչաբերդի (2), Պահլավունյաց ս. Գրիգորը, ս. Փրկիչը, Կուսանաց վանքը և Հովվի եկեղեցին։ Վերջին երեքն իրենց ինքնատիպությամբ առանձնահատուկ տեղ ունեն ճարտարապետության մեջ և իրավամբ կարող են անիական անունը կրել։ Ճարտարապետական ձևերի յուրօրինակ հորինվածքով հայկական եկեղեցաշինության մեջ եզակի երևույթ է Հովվի եկեղեցին[121]։ Զվարթնոցի նման եռահարկ է, հորինվածքով պատկանում է վեցախորան տիպին։ Արտաքուստ եռանկյունաձև որմնախորշերի շնորհիվ հատակագիծն ունի բազմաթև աստղի ձև։ Թ. Թորամանյանն այս եկեղեցին անվանում է «ճարտարապետական չնաշխարհիկ մարգարիտ»։ Նրա կարծիքով կառուցողը եղել է միջին դասի անձնավորություն և կառուցել է որպես դամբանական շենք՝ X—XI դարերում[122]։

Շախմատային եկեղեցի.—Անիի Նոր քաղաք կոչվող մասում, ս. Փրկիչ եկեղեցուց ոչ հեռու, գտնվում են հետաքրքիր մի շինության մնացորդներ, որը երեսապատման քարերի շախմատաձև դասավորության պատճառով գրականության մեջ անվանվել է Շախմատային եկեղեցի։ Հարավային պատի լիցքի մեջ 1904 թվականին հայտնաբերվել են արձանագրված քարեր, որոնք պատկանել են ավելի հին ավերված եկեղեցու.

[ՅԱՄՍ ՏԵԱՌՆ... Հ]ԱՅՈՑ ԿԱԹ[ՈՂԻԿՈՍ]Ի ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹ[ԵԱՆ ՀԱՅՈՑ... ԵՍ... ԵԴԻ] |ՁՅՈՅՍ [Ի Ք]Ս ԱԾ ԻՄ ԵՒ Ի [ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐ] ԶՈՐ ՀԻՄՆԱՐԿԵՑԻ Ե[Ի ԲԵՐԻ... ՄԱՇՏՈ]|Յ ԸՆԹԵ[Ր]ՑՈՒԱԾ ԵՒ ԿՑՈ... ԵՒ ԵՏՈՒԻ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆ[Ա ԵՒ ՊԱՐՏԻՆ Ի ՏԱՐԻ] |ՈՋՆ ։Ժ։ [ԱՒՐ Ի ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐ] ՅԻՇԵԼ ԶԾՈՂՍ ԻՄ Ե[Ի...][123]։

Արձանագրության թվականը չի պահպանվել։ Չեն պահպանվել կաթողիկոսի, թագավորի և շինողի անունները։ Հիմնվելով առաջին տողում հիշատակված ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ արտահայտության վրա եկեղեցու շինության և արձանագրման ժամանակը պետք է վերագրել Բագրատունյաց ժամանակին։

Արձանագրության վնասված մասերը չափազանց շատ են։ Պակասում է մի ամբողջ քար, որի վրա գետեղված են եղել չորս տողերի վերջավորությունները։

[120] Տե՛ս Հ. Չամչյան, Պատմութիւն հայոց, Բ, էջ 892, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 542։

[121] Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 67։

[122] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 319, 327, 338։

[123] «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 57։

Շուշան Պահլավունու մատուռ.—Ինչպես վերը հիշատակեցինք, մատուռը, որպես Շուշան տիկնոջ դամբարան, կառուցված պետք է լինի 1037 թվականին։ Մուտքի բարավորի վրա պահպանվել է մի բավականին վնասված արձանագրություն, որը, մեր կարծիքով, ավանդում է շինության մասին։ Ստորին մասում կա ևս մի արձանագրություն, որն իր բովանդակությամբ սերտորեն կապված է վերևինի հետ։ Վերին արձանագրության մեջ հեղինակի անունը չի պահպանվել։ Այդ բացը կարելի է լրացնել ստորին արձանագրության միջոցով, որտեղ նշված է Ապլղարիպի անունը։ Հենվելով այդ տեղեկության վրա, վերին արձանագրության 3-րդ տողում «նորոգեցի» բառից առաջ առաջարկում ենք վնասված մասը վերականգնել ԵՍ ԱՊԼՂԱՐԻԲ ՄԱՐԶՊԱՆ ՀԱՅՈՑ։ Արձանագրությունից պարզվում է, որ մատուռը կոչվել է ս. Հակոբ՝ ելնելով բովանդակությունից չորրորդ տողի սկիզբը կարելի է վերականգնել՝ ՋՄՐ ՅԱԿՈՎԲԱ ԵԿԵՂԵՑԻՍ։ Մասամբ վերականգնված արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

1. ՆՁՁ (1037) ԹՈՒԻՆ
2. .... ԿՈՒՂՊԱԿ ...   .
3. [ԵՍ ԱՊԼՂԱՐԻԲ ՄԱՐԶՊԱՆ ՀԱՅՈՑ Ն]ՈՐՈԳԵՑԻ ՀԻ[ՄԱՆԷ]
4. [ՋՄՐ ՅԱԿՈՎԲԱ ԵԿԵՂԵՑԻՍ...] ՍԻՆ ՍՊԱՍԻ ԵՒ ՁԻՆ
5. [.... ՍՊԱՍ]ԻՒՔ ։Բ։ ՇՈՒՐՋԱՌ, ՍԿԻ ԵՒ ՄՐ ՆՇԱՆ...
6. [... ՀՐԱՄ]ԱՆԱՒ ՄՐ ԵՒ ԱՐԺԱ[Ն]ԱՒՈՐՆԷՐ ՀՐ...Ր ՔԱՋ...
7. Գ... ԱՍ ՏՆՈՎ ՎԱՐՁՈՒՈՐ, ՏՆՈՎ ԵՒ ՊԱՀԻՁՈՎ ԵՒ ԱՄԵՆԱ[ՅՆԻՒ...]
8. ՄԻ Ի ՏԱՐԻՆ ԱՆԽԱՓԱՆ ՇՈՒՇԱՆ ՏԻԿՆԱՅ ՏԻԿՆՈՋ։ԱՐԴ ԵԹԷ Ո[Ք Ի ՍՊ]Ա-
ՍՈՒՅՍ ԵՒ ԿԱՄ
9. Ի ԳՐԵՆՈՅՍ ՅԱՊՇՏԱԿԷ ՁԻՆՁ ԵՒ ԻՅԷ ՊԱՏՃԱՌԱՆԱՒ Կ[ԱՄ...]
10. ՈՉ ԾԱՌԱ ԵՒ ԿԱՄ Զ ։Խ։ ՈՒՆՔԴ ԽԱՓԱՆԷ ։ՅԺԸ։ ԻՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԼԻՑԻ։
ԵՒ ԵԿԵՂԵՑԵԱՑԴ
11. ԱՄԷՆ ՀՈԳՍԴ ԱՌ ԵԿԵՂԵՑՊԱՆԻՆ Է։ ԵՒ ՈՐ ԱՅՍՄ ԳՐՈՅՍ Հ[ԱԿԱՌ ԳԱ]
ՎԵՐԱԳԻՐ ԱՆԻԾԻՑԴ ՊԱ-
12. [ՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻ][124]

Ամենայն հավանականությամբ տեղում եղել է մի այլ եկեղեցի, որի պատճառով օգտագործվել է «նորոգեցի հիմանէ» արտահայտությունը։ Ինչպես վավերագիրն է ընդգծում, այս եկեղեցին Ապլղարիպը կառուցել է մոր՝ Շուշանի համար որպես դամբարան։

Առաքելոց եկեղեցի.—Առաքելոց եկեղեցու հիմքում ընկած է քառախորան կենտրոնագմբեթ եկեղեցու չորս ավանդատնով հորինվածքը, որն, ինչպես տեսանք, մշակվել էր Սյունիքում (Որոտնավանք և այլն)։ Սակայն, ինչպես ներսի ծավալատարածական կերպարը, նույնպես և ավանդատների հատակագծային ու հորինվածքային մտահղացումն այստեղ լուծված են բոլորովին նոր, իր նախատիպը չունեցող ճարտարապետական ձևերով։ Արևելյան ավանդատները բաղկացած են երեքական սենյակներից։ Եկեղեցու ընդհանուր կերպարում ամենաէականը նրա արտաքին հորինվածքն է։ Ավանդատները գմբեթավոր են։ Հինգ գմբեթների շնորհիվ եկեղեցին բազմագմբեթ հորինվածքի եզակի մի օրինակ է ամբողջ հայ ճարտարապետության մեջ[125]։ Ուսումնասիրողների

[124] Նույն տեղում, էջ 48—49։

[125] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 226—228։

կարծիքով այս եկեղեցին կառուցվել է X—XI դարերի սահմանագլխին, որպես Պահլավունիների հոգևոր աթոռանիստ[126]։

Եկեղեցին հարավային և հյուսիսային կողմից ունեցել է գավիթներ, որոնցից միայն հարավայինի մնացորդներն են պահպանվել։ Թ. Թորամանյանի նկարագրության համաձայն եկեղեցին եղել է շատ շքեղ շինություն, զարդարված ստալակտիտային զարդաքանդակներով և խայտաբղետ քարերի խճանկար զարդաձևերով։ Իսկ գավիթը Թ. Թորամանյանը թվագրում է XIII դարով[127]։ Ներկայումս եկեղեցին ավերակ է։ Առաքելոց եկեղեցու բեմի պատին բարձրաքանդակ տառերով քանդակված է շինարարական բնույթի հետևյալ արձանագրությունը.

Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹ[ԵԱ]Ն ՔԱՂԱՔԻՍ ԱՆՈ $\overline{\text{ՏՐ}}$ ՍԱՐ[ԳՍԻ Ե]Ս ԱՌԻԻԾՍ ՀՈԳԵԻՈՐԵԱՅ... ՍԱԼԵՅԻ ՁԺԱՄԱՏՈՒՆՍ... ՅԻՇԱՏ[ԱԿ]...[128]

Բեմի պատի այն մասը, ուր զետեղված է արձանագրությունը, կառուցված է եկեղեցու շինությունից ավելի ուշ։ Արձանագրությունը տեղեկացնում է, որ ոմն Առյուծ Հոգևորեանց շինարարական աշխատանք է կատարել Առաքելոց վանքի վրա։ Այստեղ ՍԱԼԵՅԻ արտահայտությունը կարելի է հատակի սալապատումը վերագրել։ Հիշյալ Առյուծը շինարարական հիշատակություն է թողել Հոռոմոսում, Թվագրված 1277։ Նրա անունը կրող արձանագրություններից հնագույնը 1251 թվականի է։ Առաքելոց վանքի արձանագրությունն ունի ժամանակագրական մի վկայություն՝ Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԻՍ ԱՆՈ $\overline{\text{ՏՐ}}$ ՍԱՐԳՍԻ։ Սարգսի առաջնորդության տարիներն են 1245—1276 թվականները։

Այս արձանագրությունը հայտնաբերվել է 1909 թվականի պեղումների ժամանակ։

Աստվածածին կարողիկե.—Այս եկեղեցու մասին տեղեկությունները չափազանց սուղ են։ Հ. Օրբելին գրում է, որ հայտնաբերվել է 1898 թվականին։ Փոքրիկ շինություն է, ոչ հարուստ հարդարանքով, ծառայել է որպես խամբուշենց տան դամբարան[129]։

Սարգիս սարկավագի եկեղեցի.—Եկեղեցու պատին կա նորոգման մի արձանագրություն սելջուկների տիրապետության շրջանից[130]։ Այն փորագրվել է մուտքի բարավորի քարին։ Եկեղեցին կառուցվել է Բագրատունյաց շրջանում, սակայն շինության արձանագրությունը չի պահպանվել, գուցե չի եղել։ Չկան նաև մատենագրական հիշատակություններ։ Ուսումնասիրողներն էլ չեն թողել տեղեկություն եկեղեցու ճարտարապետական ձևերի մասին։ Արձանագրության հեղինակը եկեղեցին բնութագրում է «ծերացյալ» բառով։ Ուշագրավ է նաև ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԻ արտահայտությունը։ Այն հիմք է տալիս ենթադրելու, որ նորոգվել է մի քանի անգամ։ Նորոգողի անունով եկեղեցին պայմանականորեն կոչվում է Սարկավագի ս. Սարգիս[131]։

Զաքարյանների տիրապետության առաջին իսկ տարիներից շինարարական աշխատանքները նոր թափ առան։ Մեծածավալ և մեծածախ շինություն-

126 Տե՛ս նույն տեղում, էջ 71, 165, 228, 325։
127 Տե՛ս նույն տեղում, էջ 156, 306, 349։
128 «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 20։
129 Տե՛ս И. А. Орбели, Избр. труды, стр. 109.
130 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 56։
131 Տե՛ս նույն տեղում, էջ 56։

ներ են կառուցվում ոչ միայն Անիում, այլև երկրի տարբեր վայրերում։ Այս
շրջանի հնագույն շինության արձանագրությունն Անիում թվագրված է ՈԾ
1201[132]։ Այն հայտնաբերվել է 1911 թվականի պեղումների ժամանակ ս. Հով-
հաննես եկեղեցու արևելյան պատին։

Ս. Հովհաննես եկեղեցի.—Եկեղեցու անունն իմացվում է 1151 թվականի
արձանագրությունից։ Սակայն պատին կա նաև մի հին արձանագրություն,
որից երևում է եկեղեցու ավելի հին կառուցված լինելը։ Իսկ այստեղից հետե-
վում է, որ 1201 թվականի հիշատակարանը, ուր խոսվում է շինության
մասին, արձանագրել է եկեղեցու միայն նորոգման փաստը։

Սիրի Պահլավունու եկեղեցի.—XIII դարում Պահլավունիների անունից
փորագրված հնագույն արձանագրությունն Անիում կրում է 1210 թվականը[133]։
Այդ արձանագրության հիման վրա եկեղեցին պայմանականորեն անվանված
է նրա հեղինակ Սիթի Պահլավունու անունով։ Արձանագրությունն ունի
նորոգման բովանդակություն, հավանական է, որ սա ևս կառուցվել է Բագրա-
տունիների ժամանակ։

Զաքարեի եկեղեցի.—Զաքարիա Երկայնաբազուկի եկեղեցու շինության
արձանագրությունը փորագրված է հարավային պատին՝ արտաքուստ։ Առաջին
տողը համեմատաբար խոշոր և փոքր-ինչ ձևավոր տառերով է։ Ունի բազմա-
թիվ վնասված հատվածներ։ Հատկապես վնասված է արձանագրության վերին
ձախ անկյունը, որը հմուտ կերպով վերականգնել է Հ. Օրբելին։

1. [Ի ԺԱՄԱՆԱ]ԿՍ $\overline{\text{ԱԾԱԻԾ}}$-
2. [ԵԱԼ ԵԻ ԲԱՐԵՊԱՇՏ] ԵԻ ԲԱԳՈՀԵԱՑ ԹԱ-
3. [ԳՈՀՈՅՆ ԹԱՄԱՐԻ, Ե]Ս ՀԱԻԱՏԱՐԻՄ ԾԱՌ-
4. [Ա ՆՈՐԻՆ, ՈՐԴԻ Մ]Ե[Ծ Ի]ՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՆ Ա-
5. [ՄԻՐՍՊ]ԱՍԱԼԱՐ ՄԽԱՐԳՐԾԷԼԻՆ ՍԱՐԳՍԻ, ՄԱՆԴԱ-
6. [ՏՈՐԹՈԻԽ]ՈՒՅԷՍ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱ-
7. [Հ ԶԱ]ՔԱՐԷ։ ԿԱՄԱՒՆ $\overline{\text{ԱՅ}}$ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԱՐՉԱ-
8. [ՆՍ ՎԻ]ՄԱՐԴԵԱՆ ԶՄԱՅՐՍ ԼՈՒՍՈ $\overline{\text{ԶՍՔ}}$ ԿԱԹՈՂ-
9. [ԻԿԷՆ...] Ի ՄԷՆԱՍՏԱՆԻՍ ՄԵՐՁ ԱՌ ԷԿԵՂԵՅԵ- /[Ի...][134]։
10. [ԱԻՆ] ՇԻՆԵԱԼ Ի ԼՈՒՍԱՎՈՐՉԷՆ ՄԵՐՄԷ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐ-

Արձանագրությունը բաղկացած է 33 տողից։ Զաքարեն մահացել է 1212
թվականին, ուստի արձանագրությունը 1212 թվականից ուշ փորագրվել չէր
կարող։ Տարեթվի փոխարեն, արձանագրության վերամբարձ ոճը պահպանելու
համար, ժամանակը բնութագրված է Թամար թագուհու թագավորության
տարիներով (1184—1213 թթ.)։ Փորագրվել է XIII դարի առաջին տարիներին։
Վիմագիր այս հիշատակարանում մանրամասն նկարագրված է եկեղեցու տեղը՝
ՄԵՐՁ ԱՌ ԵԿԵՂԵՑԵԱԻՆ (կաթողիկեին)՝ ՇԻՆԵԱԼ Ի ԼՈՒՍԱԻՈՐՉԷՆ ՄԵՐՄԷ
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ։ Այս տեղեկությունը կարևոր է պատմական առումով։
Պարզվում է, որ IV դարի սկզբներին Լուսավորիչն այստեղ եկեղեցի է հիմնել,
որը գտնվել է հետագայում շինված Զաքարեի եկեղեցու մոտերքում։

Ս. Գրիգոր (Տիգրան Հոնենցի) եկեղեցի.—Գմբեթասրահ հորինվածքի շի-
նություն է։ Ունի ուշագրավ մի մանրամաս՝ արևելյան զույգ որմնամույթերը
միացված են խորանին, որի հետևանքով նախ մեծացել է բեմահարթակը,

132 Տե՛ս նույն տեղում, էջ 10։
133 Տե՛ս նույն տեղում, էջ 55։
134 Նույն տեղում, էջ 58։

երկրորդ՝ նկատելիորեն երկարել են ավանդատները: Որմնամույթերը կատարում են ավանդատների արևմտյան պատերի դեր: Արտաքուստ և ներքուստ եկեղեցին ունեցել է հարուստ զարդաքանդակներ և որմնանկարներ:

Շրջապատում կան այլ շինությունների մնացորդներ: Դրանցից մեկը Հ. Օրբելու կարծիքով սեղանատուն է եղել: Պահպանվել են նաև ձիթհանքի պատերը: Գավթի հյուսիսային մասում նրան կցված է մի փոքրիկ մատուռ: Շինարարական արձանագրությունից երևում է, որ այս եկեղեցու կառուցումով Տիգրան Հոնենցը վանք է հիմնել: Արձանագրությունը գտնվում է հարավային պատին, որմնասյուների արանքում՝ երեք շարքով: Փորագրված է գեղեցիկ տառերով, տակը նշված է նաև գրչի անունը՝ ԻՂ ԳՉ—Իսրայել գրիչ: Արձանագրությունն ավանդում է, որ Տիգրան Հոնենցը եկեղեցին կառուցել է հնում Աստվածածին կոչված մատուռի տեղում: Եկեղեցուց բացի նա կառուցել է պարիսպ և եկեղեցին շրջափակել հարավային ու արևմտյան կողմերից: Պարիսպներից ներքև կառուցել է ընդարձակ բնակարաններ՝ վանականների համար: Նվիրատվական հարուստ ցանկում Տիգրան Հոնենցը հիշատակում է նաև իր կառուցած մի շարք կրպակների, ջրաղացի, ձիթհանների, ինչպես նաև Բեխենց վանքի նորոգման մասին: Հիշյալ շինությունների շարքում չի հիշատակված գավիթը: Թ. Թորամանյանի նկարագրությամբ գոյություն է ունեցել նաև հավելյալ նախագավիթ «զուտ հայկական ոճի ժամատուներեն բոլորովին տարբեր ձևերով շինված»[135]:

Համաձայնելով Հ. Օրբելու ենթադրության հետ, որ Տիգրան Հոնենցը քաղկեդոնական է եղել, Թ. Թորամանյանը գտնում է, որ այդ շինությունները կառուցվել են այն ժամանակ, երբ Տիգրան Հոնենցի հետնորդները դավանափոխվել են և հավելյալ կառույցները կանգնեցրել իրենց դավանանքի սկզբունքներից բխող ճարտարապետական ձևերով:

Պատահական չպետք է համարել, որ արձանագրությունը մանրամասն հիշատակելով Տիգրան Հոնենցի կառուցած և նորոգած բոլոր շինությունները, որևէ խոսք չի ասում գավթի մասին: Թ. Թորամանյանն աշխատելով բացատրություն տալ եկեղեցում տեղ գտած քաղկեդոնական տարրերին, միանգամայն իրավացիորեն կապում է Զաքարեի որդի Շահնշահի դավանափոխության հետ, որը տեղի է ունեցել եկեղեցու շինությունից շատ տարիներ անց[136]: Թ. Թորամանյանի կարծիքով գավիթը (ժամատունը) կառուցվել է եկեղեցու շինությունից 40—50 տարի հետո[137]:

Տիգրան Հոնենցի թողած շինարարական արձանագրությունը չափազանց հարուստ է այլ շինությունների կառուցման տեղեկություններով՝ բովանդակում է բազմաթիվ տերմիններ, տեղանուններ և շատ կարևոր տվյալներ՝ տնտեսական ամենաբազմազան հարցերի վերաբերյալ.

1. ԹՎԻՆ ։ՈԿԴ։ (1215) ՇՆՈՐՀԻՒՆ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱ]ՄԲ ԱՅ. ՅՈՐԺԱՄ ՏԻՐԵՑ ՔԱՂԱՔԻՍ ԱՆՈ ՀԶԱՒՐ ԵՒ ՏԻԵԶԵ-
2. ՐԱԿԱԼ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԵՒ ՄԱՆԴԱՏՈՒՐԹՈՒԽՈՒՑԷՍ ԶԱՔԱՐԻԱՅ ԵՒ ՈՐԴԻ ՆՈՐԱՅ ՇԱՀՆՇԱՀ. ԵՍ ՏԻԳՐԱՆ ԾԱՌ-
3. ԱՅ. ԱՅ. ՈՐԴԻ ՍՄԲԱՏԱՒՐԵՆՑ ՍՈՒԼԵՄԱ, ՅԱԶԳԷՆ ՀՈՆԵՆՑ. ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵ[ԱՆ] Տ[Է]ՐԱՆՑ ԻՄՈՑ ԵՒ ՈՐԴՈՑ ՆՈՑԱՅ ՇԻՆԵ-
4. ՑԻ ԶՎԱՆՔՍ ՍԲ ԳՐԻԳՈՐՈՅ, ՈՐ Ի ՀԻՆՆ ՄԱՏՌԱՆ ԱԾԱԾԻՆ ԿՈՉԻՒՐ, ՈՐ ԷՐ ՔԱՐԱՓՆ ԵՒ ՄԱՑԱՌ ՏԵՂԵԱՒ ԷՐ, ԶՈՐ ԻՄ ՀԱԼԱԼ ԳԱՆՁՈՎ ԳՆԵ-
5. ՑԻ Ի ՀԵՐԵՆԷ ՏԻՐԱՑ ԵՒ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵ[ԱՄ]Բ ԵՒ ԳԱՆՁՈՒՎ ՊԱՐՍՊԵՑԻ ՇՈՒՐՋԱՆԱԿԻ. ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԼՈՒ-
6. ՍԱՒՈՐԻՉԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻ ԲԱԶՈՒՄ ԶԱՐԴԻՒՔ, ՓՐ[ԿԱ]ԿԱՆ ՆՇԱՆԱՒՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՒՔ[Ն] ՈՍԿԻ[Ի]Ք ԵՒ ԱՐԾԱԹԻ[Ի]Ք ԵՒ ՊԱՏ- ԿԵՐԱԳՈՐԾ
7. ԽԱՏԵՐՈՎ՝ ԶԱՐԴԱՐԵ[Ա]Լ ՈՍԿՈՎ ԵՒ ԱՐԾԱԹՈՎ ԵՒ ԱԿԱՄԲՔ ԵՒ ՄԱՐԳԱՐ- ՏԱՒ ԵՒ ԿԱՆԹԵՂԱՒՔ ՈՍԿԻ ԵՒ ԱՐԾԱԹԻ ԵՒ ՆՇԽԱՐԱՒՔ ՍԲՈՑ ԱՌԱՔԵԼՈ-
8. Ց ՄԱՐՏԻՐՈՍԱՑ, ԵՒ ՄԱՍԱՄԲ ԱԾԸՆԿԱԼ ԵՒ Տ[Է]ՐՈՒՆԱԿԱՆ ԽԱՉԻՆ, ԵՒ՝ ԱՄԵՆԱՅՆ ՑԵՂ ՍՊԱՍՔ ՅՈՍԿՈ ԵՒ ԱՐԾԱԹՈ ԵՒ ԲԱԶՈՒՄ ԶԱՐԴԱՒՔ։ ՇԻՆԵՑԻ ԶԱՄԵՆԱՅՆ ՑԵՂ
9. ԶԲՆԱԿԱՐԱՆ ՎԱՆԱԿԱՆԱՑ ԵՒ ԻՇԽԱՆԱՑ[138]...

Արձանագրությունը բաղկացած է 25 տողից:

Կուսանաց անապատ.—Տիգրան Հոնենցի եկեղեցու մոտ, նրա հարավ-արևմտյան կողմում գտնվում է մի գողտրիկ եկեղեցի, շրջապատված այլ ավերակներով: Ժամանակին այստեղ եղել է վանք՝ Կուսանաց վանքը: Եկեղեցին բազմախորան հորինվածքի մի ինքնատիպ օրինակ է և իր յուրաձևությամբ լրացնում է Անիում նախասիրած կլորավուն հատակագծերով եկեղեցական շենքերի բազմազանությունը: Եկեղեցու ներսում ամփոփված են վեց կիսակլոր խորաններ և ի տարբերություն վեցախորան մյուս հորինվածքների, արտաքնապես այդ խորանները կցված են իրար նույնպիսի կիսակլոր պատերով: Եկեղեցու կառուցումը վերագրվում է Տիգրան Հոնենցին[139]:

Բեխենց վանք.—Եկեղեցին խիստ ավերակ է: Մասնագիտական գրականության մեջ նկարագրական տեղեկություններ չեն պահպանվել: Տիգրան Հոնենցի արձանագրության մեջ, 20-րդ տողում այս եկեղեցու մասին ասված է «ՇԻՆԵՑԻ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ»: Պետք է ենթադրել, որ 1215 թվականին եղել է այնպիսի ավերակ վիճակում, որ նորոգեցի բառը քիչ համարելով, Տիգրան Հոնենցն ավելացրել է նաև «շինեցի»: Չի բացառվում, որ նախնական շինությունը հիմնված լիներ Բագրատունյաց շրջանում:

Հոռոմի եկեղեցի.—Գտնվում է Աշոտի պարիսպների մոտ: Հ. Օրբելու տեղեկությամբ երկհարկ փոքրիկ շինություն է՝ ս. Աստվածածին անունով: Երկրորդ հարկն առաջինի հետ հաղորդվել է փայտաշեն աստիճաններով: Ստորին հարկը ծառայել է որպես պահեստ կամ ավանդատուն՝ մասունքները պահպանելու համար[140]: Ամենայն հավանականությամբ այս եկեղեցին ևս գոյություն է ունեցել Բագրատունյաց շրջանում: Նորոգվել է 1217 թվականին: Այդ մասին տեղեկացնում է մի արձանագրություն, որը ժամանակին փորագրվել է հյուսիսային պատին, հայտնաբերվել է պեղումների ժամանակ[141]:

135 Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 160:

136 Բարձրբերդցու հաղորդած տեղեկություններից երևում է, որ 1215 թ. եկեղեցին ավարտելուց հետո Տիգրան Հոնենցն այն նվիրաբերել է Զաքարեին և Շահնշահին: Վերջինս այդ թվականին եղել է 7 տարեկան: Դավանափոխվել է հետագայում, Իվանեի կնոջ՝ Խոշաքի ազդեցությամբ: Բարձրբերդցի, էջ 183—184:

137 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., 1, էջ 159:

138 «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 63:

139 Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 65:

140 Տե՛ս *И. А. Орбели*, Избр. труды, стр 107.

Ուբանի և Պայբանի զանգակատուն.—Շինարարական արձանագրությունը հայտնաբերվել է 1912 թվականի պեղումների ժամանակ, 101 բլրի տեղում, Քարիմադինի եկեղեցու արևմտյան պատի մոտ[142]։ Տեղադրված է 2 քարի վրա։ Կորել է առաջին քարը։ Բերում ենք միայն շինարարական տեղեկությունը բովանդակող առաջին երկու տողերն ըստ Հ. Օրբելու.

[ՇՆՈՐԻՒՆ ԱՅ. ԵՍ ՈՒՔԱՆ ՔԱ]ՐԻՄԱՏԻՆ ԵՒ ՊԱԳՔԱՆ ՎԱԽՐԱՏ[ԻՆ]
[ԵՒ ՀԱՐՄՆ ԻՄ ԴԱՊՏԱՅ ԽԱԹՈ]ԻՆ ՇԻՆԵՑԱՔ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆՍ...[143]

Արձանագրությունը թվական չունի։ Հավանաբար փորագրված է եղել վերին մասում՝ առաջին տողից վերև։

Ուքանի և Պայքանի արձանագրություններից մեկը թվագրված է 1251[144]։ Հիմք ունենալով այդ տարեթիվը զանգակատան կառուցման և արձանագրության փորագրման ժամանակաշրջանը պետք է թվագրել դրան մոտ ժամանակով։

Բախտագեկի ս. Գրիգոր.—Գտնվում է քաղաքի արևելյան կողմում։ Ճարտարապետական տիպով գմբեթարահ է։ Արևմտյան կողմից զարդարված է եռանկյունաձև որմնախորշերով, որոնք, ըստ Ն. Տոկարսկու, ունեցել են միայն դեկորատիվ նշանակություն[145]։ Պատերը հարդարված են զույգ որմնասյուներով և կամարներով։ Արտաքինով նման է Տիգրան Հոնենցի և Կուսանաց Անապատ եկեղեցիներին։ Վ. Հարությունյանը հավանական է գտնում, որ այս եկեղեցին կառուցել է նույն ճարտարապետը[146]։

Ունի շինարարական արձանագրություն որի հեղինակը՝ Շահերն ինքն էլ եղել է ճարտարապետ, սակայն արձանագրությունն ըստ էության նվիրատըվական է և վերաբերում է ս. Գրիգոր եկեղեցուն[147]։ Այստեղից էլ հետևում է, որ Շահերը կառուցել է ոչ թե ս. Գրիգոր եկեղեցին, այլ այն շենքը, որ նա նվիրաբերել է ս. Գրիգոր եկեղեցուն։ Բնագրի բովանդակությունն ավելի պարզ է դառնում, երբ վերականգնում ենք առաջին տողի վնասված վերջավորությունը։ Մեր կարծիքով երկրորդ տողի սկզբին պահպանված ԳՈՐ և առաջին տողի ԶԻՄ ՀԱՅՐԵՆԻ-ին թույլ են տալիս պակասող հատվածը վերականգնել ԳՐԻԳՈՐ անվամբ, սակայն ի՞նչ է կառուցել Շահերը։ Ահա արձանագրության բովանդակությունը.

Թվ. Չ. Ի (1271)

ԵՍ ՇԱՀԵՐ ՎԱ[Ր]ԴՊԵՏՍ ԵՏՈՒ Զ[ԻՄ] ՀԱՅՐԵ[ՆԻ ՍԲ ԳՐԻ]-
ԳՈՐ ՋԻԹԱԳԻՆ ԶՈՐ Ի Հ[Ի]ՄԱՆՑ Շ[ԻՆ]ԵՑԻ Ի ՍԲ ԳՐ[ԻԳՈՐ ԵՒ ՊԱՐՏԻՆ]
ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ Ի ՏԱՐՈՋ ։Բ։ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ՍԲ ԳՐԻԳ[ՈՐՈ ՏԱՒ]-
ՆԻՆ ԱՆԽԱՓԱՆ։ ՈՐՔ ՀԱԿԱՌԱԿԻՆ ՄԵ[Ր] ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱ[Ն ԵՆ ԱՌԱՋԻ
ԱՅ][148]։

[141] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 66։
[142] Տե՛ս И. А. Орбели, Избр. труды, стр. 475.
[143] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 65։
[144] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 170։
[145] Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 319.
[146] Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 65։
[147] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 75—76։
[148] «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 60։

Տարակույս լինել չի կարող, որ Շահերը տեղեկացնում է ս. Գրիգորին մի ձիթհան նվիրաբերելու մասին, որը նա շինել է Ի ՀԻՄԱՆՑ։ Այսպիսով Շահերի թողած արձանագրությունն ամենևին չի կարող վերաբերել եկեղեցու շինությանը։ Եկեղեցին կառուցվել է ավելի վաղ ժամանակներում։

* * *

Քարայրներ.—Անին յուրատիպ քաղաք էր նաև իր երկհարկ բնույթով, ժայռափոր շինություններով։ Ժայռափոր այդ կաստորգետնյա բազմաթիվ ժայռափոր շինություններով։ Ժայռափոր այդ կառույցները պարբերաբար կերտվել են տակավին վաղ միջնադարյան ժամանակ-
ներից և IX—XIII դարերում արդեն կազմել բավականին ստվար խումբ,
առանձին տեղերում շրջապատելով քաղաքը ձորերի ամբողջ երկայնքով։
Ն. Տոկարսկին գտնում է, որ Անիի քարանձավների կառուցման և բնակեցման առավել խնտենսիվ շրջանը Բագրատունյաց տիրապետության ժամանակ էր, կապված քաղաքի բնակչության արագ աճի հետ[149]։
Դ. Ղիփշիձեն այս այրերի մեջ զանազանում է՝ 1. բնակարաններ, մոտ 400, 2. եկեղեցիներ, մոտ 30, 3. դամբարաններ, 4. աղավնատներ, 5. վանքեր, 6. ստորգետնյա փողոցներ[150]։
Եկեղեցիների ամենատարածված տիպը երկարավուն, հատած բուրգի նման տանիքով միանավ սրահն է։ Հանդիպում են նաև խորանաձև կառուցվածքով եկեղեցիներ։ Դրանցից մեկի խորանը զարդարված է վեց կիսաբոլոր որմնախորշերով։ Ժայռափոր շինություններում ուշադրություն է գրավում ճարտարապետության մեջ տարածված կառուցողական տարրերի օգտագործումը հարդարանքի նպատակով։ Այստեղ կարելի է տեսնել մշակված մույթեր, խոյակներ, որմնախորշեր, կամարներ։
Դամբարաններն ունեցել են ընդարձակ ուղղանկյուն սենյակների կամ միջանցքների կիսաբոլոր որմնախորշերի ձև, փորված այլ սենյակների կամ միջանցքների մեջ։ Հանդիպում են նաև կլոր հատակագծով դամբարանական սենյակներ։
Առանձնապես հետաքրքիր են աղավնատները։ Դրանք ուղղանկյուն կամ կլորավուն հատակագծով ընդարձակ սենյակներ են, որոնց պատերն ամբողջապես պատած են քառակուսի փոքրիկ խորշերով։ Այդ շինությունների նշանակությունը վերջնականապես պարզված չէ։ Գրականության մեջ տիրապետող է այն կարծիքը, թե դրանք կառուցվել են աղավնատների համար։
Ժայռափոր շինություններից ուսումնասիրողների ուշադրությունն առանձնապես գրավել են երկու համալիրներ, որոնք վանքեր են ենթադրվել։ Մեկը գտնվում է Ծաղկոցաձոր և Բագնայր գետակների խառնարանում, եղել է հինգ հարկանի, բաղկացած տարբեր մեծության ուղղանկյուն սենյակներից, եկեղեցուց, խուցերից և ընդարձակ միջանցքներից։
Խոշոր համալիրների բնույթ ունեն նաև բնակելի տները՝ միմյանց հետ միացած երկարավուն միջանցք-փողոցներով, որոնք Հ. Օրբելին ընդհանրացրել է «ստորգետնյա Անի» անունով։
Ժայռափոր այս շինությունների վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել։ Նկատի առնելով օգտագործված ճարտարապետական և դեկորատիվ տարրերը, ուսումնասիրողների մեծ մասը թվագրում են X—XIII դարերով։
Այրերից միայն մեկի արտաքին պատին պահպանվել է խիստ եղծված

[149] Տե՛ս Д. И. Кипшидзе, Пещеры Ани, Ереван, 1972, стр 5.
[150] Տե՛ս նույն տեղում, էջ 17—18։

15—892

շինարարական արձանագրություն: Հ. Օրբելու վերծանությամբ ունեցել է հետևյալ բովանդակությունը.

ԿԱՄԱ[ԻՆ] $\overline{\text{ԱՅ}}$
ՊԱՐՈՆՈԻ-
Թ[ԵԱ]Ն ԱԹԱՊ-
ԱԿ ԱՄԻՐՍՊԱՍ-
ԱԼԱՐ ՇԱՀԻՆՇԱՀԻ.
ԵՍ ՔՈՐԳԻ ԿԵՆԱՅԿԻՑ
ԻՄ ՍԹԷԼՍ ԿԱՏԱ[Ր]
[Ե]ՑԱՔ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴ-
ԵԱՆ[Ց] ՁԵԿԵՂԵՑ[ԻՍ...]
ԱԽԵԼ ՔԱՂԱՔ-
[ԻՍ]... [ԹՈԻԻՆ] :Ձխ: (1291)
Ս[Ա]ՐԳ[ԻՍ][151]

Այս ժայռափորը գտնվում է Իգաձորի կիրճում: Փորվել է վերին, կարծր շերտում: Հատակագծով խաչաձև է: Հ. Օրբելին և Դ. Ղաֆադարյանն այս ժայռափորը համարել են եկեղեցի: Սակայն Ն. Տոկարսկին նմանություն է գտնում Աղցի դամբարանի հետ, հատակագծային և հորինվածքային ձևերի մեջ տեսնելով IV—V դարերի դամբարանական շինություններին բնորոշ հատկանիշներ և համարում է IV—V դարերի դամբարան[152]: Ինչ վերաբերում է արձանագրությանը, ապա Ն. Տոկարսկու իրավացի կարծիքով այն վերաբերում է այլ շինության, որ հիշյալ Քորգն իր կնոջ հետ կառուցել են՝ ինչպես իրենք են նշել Ախելքաղաքում: Ն. Տոկարսկու տեղեկությունից պարզվում է նաև, որ պատուհանի ձախ կողմում փորվել և շրջանակավորվել է ընդարձակ մի խորշ, հավանաբար արձանագրություն տեղադրելու համար, սակայն անհայտ պատճառով մնացել է պարապ[153]:

* * *

Անի քաղաքի ճարտարապետական կերպարը լիակատար ուրվագծելու համար այն, ինչ վիմական և մատենագրական հիշատակություններից պահպանվել է, շատ հեռու է լրիվ լինելուց: Անիի հուշարձանների մի մասը անհիպանվել ... մի մասը անհիշատակ է մնացել և դրա պատճառը առավելապես բարբարոս ավերածությունները են, որոնց պատճառով շատ հուշարձանների հիշատակարաններ անդառնալիորեն կորել, անհետացել են: Սակայն, մեզ հասած նյութերն հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու այն հսկայական աշխատանքների մասին, որոնք տարվել են Անիում: Ավելին՝ եղած նյութերի, ինչպես և՛ հնագիտական, և՛ ճարտարապետական ուսումնասիրությունների հիման վրա հնարավոր է հետևել նրա ժամանակագրական, մշակութային և քաղաքական զարգացման տարբեր փուլերին:

Անիի առանձին հուշարձանների շինության ու նորոգման վերաբերյալ տեղեկություններ են թողել 11 մատենագիր: Վիմագրական հիշատակարաններից մինչ այժմ հայտնի է 49 շինարարական արձանագրություն՝ 10-ը Բագրատունյաց, 7-ը՝ օտարների տիրապետության և 32-ը՝ Զաքարյանների ժամանակաշրջանից: Զաքարյանների թողած արձանագրությունների կեսն ավանդում են բերդապարիսպների շինության մասին: Ժամանակաշրջանների քանակական բաղդատությունը բացատրվում է նրանով, որ Բագրատունիների օրոք աշխարհիկ, տվյալ դեպքում՝ բերդապարիսպների շինությունները արձանագրելու սովորությունը տարածված չի եղել: Որքան էլ դա տարօրինակ է, պատմիչները, որոնք մանրամասն տեղեկություններ են տալիս Բագրատունիների շինարարական աշխատանքների վերաբերյալ, լուռ են մնացել Զաքարյանների շրջանի մասին: Բագրատունիների շրջանի Անիից հայտնի է միայն Տրդատ ճարտարապետը, իսկ Զաքարյանների ժամանակաշրջանից Անիի վիմագիր հիշատակարաններում պահպանվել են 6 ճարտարապետի և 7 քանդակագործ վարպետների անուններ[154]: Ընդհանուր առմամբ Անիի շինարարության մասին տեղեկացնում են 16 բերդապարիսպների, 25 եկեղեցիների (շինության և նորոգման), մեծ քանակությամբ խաչքարերի և այլ տիպի կոթողների արձանագրություններ: Վիմագրական առատ նյութի մեջ առանձնահատուկ կարևորություն ունեն շինությունը նախաձեռնող անձանց անունները, որոնց շարքում հանդիպում ենք ժողովրդի ամենալայն խավերի ներկայացուցիչների, ինչպես և կանանց: Արձանագրություններում արտացոլվել են ժամանակի վերելքն ու վայրէջքը, մշակույթի զարգացումն ու ստրճանական ձևավորումը: մշակույթի Անին արտացոլել է համահայկական ճարտարապետական իրենց լավագույն ավանդներն ու նվաճումները: Անիի կառույցներն հարդարանքի նուրբ վարպետությամբ, մոնումենտալությամբ, գեղագիտական ճաշակով, շինարարական արվեստի բարձր մակարդակով այժմ էլ հիացմունք ու պատկառանք են հարուցում հայ և օտար ուսումնասիրողների մոտ: Անիի դերը, որպես քաղաք և միջնադարյան մշակույթի օջախ, շատ նշանակալից է եղել ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Առաջավոր Արևելքում:

[151] «Դիվան հայ վիմագրության», 1, էջ 68:

[152] Տե՛ս Д. И. Кипшидзе, Пещеры Ани, стр. 178—179, Տե՛ս նաև Н. М. Токарский, Из истории пещерного строительства в Ани, ՊԲՀ, 1966, № 1, էջ 126:

[153] Տե՛ս ՊԲՀ 1966, № 1, էջ 128:

[154] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 35, 75, 139, 142:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Վասպուրականը պատմական Հայաստանի ամենախոշոր նահանգն էր։ Նրա տարածքը կազմում էր 40870 քկմ[1]։ Հյուսիսից սահմանակից էր Այրարատին, հյուսիս-արևելքից՝ Սյունիքին, արևելքից՝ Պարսկահայքին, Հարավից՝ Կորճայքին, հարավ-արևմուտքից՝ Մոկքին և հյուսիս-Արևմուտքից՝ Տուրուբերանին։ Ընդգրկում էր 35 գավառներ։ Ժամանակին Վասպուրականի կազմում էր նաև Նախճավանը, իսկ 908—1021 թվականներին՝ Նոր-Շիրականը, Ապահունիքը։

Վասպուրականի տոհմական տիրակալները Արծրունիներն էին։ Մ. Խորենացին այս տոհմին վերագրում է թագավորական ծագում՝ կապելով նրանց նախնիներին ասորական Սենեքերիմ թագավորի հետ[2]։

Արծրունիները որպես Հայաստանի նշանավոր նախարարական տուն պատմագրության մեջ հիշատակվում են Արշակունիների հաստատման ամենավաղ ժամանակներից։ Խորենացու համաձայն նախարարական իրավասություն նրանք ստացել են Վաղարշակ Ա թագավորից[3]։ Այնուհետև նրանց քաղաքական դերը հայ պատմության մեջ գնալով մեծացավ։

VIII—XI դարերում թեև Արծրունիների գերիշխանությունն անվիճելի էր, սակայն նախարարական այդ տունը գնալով մասնատվում էր հզորացած փոքր իշխանների միջև։ Միաժամանակ, երկրի ընդհանուր մասնատվածության հետևանքով թուլացավ քաղաքական միասնությունը խոշոր նախարարական տների միջև, և Հայաստանի անկախության վերականգնման առաջին իսկ տարիներից Վասպուրականը ձգտեց ինքնուրույնության։ 908 թվականին Արծրունի իշխաններն անջատվեցին Բագրատունիներից և հիմնեցին առանձին թագավորություն, որը գոյատևեց մինչև 1021 թվականը։ Ահա այս շրջանն էլ ամենաբեղմնավորն էր Վասպուրականի ճարտարապետության համար։ Սամուել Անեցին տեղեկացնում է, որ XI դարի սկզբներին Վասպուրականում եղել է 115 վանք (ըստ ոմանց՝ 900), 72 բերդ, 4000 գյուղ և 3 քաղաք[4]։ Այժմ դրանց գերակշիռ մասը գոյություն չունի։

Վասպուրականի ճարտարապետական հուշարձանները, տարաբախտաբար, քիչ են ուսումնասիրված մասնագետների կողմից։ Ներկա աշխատության համար հիմնական նյութը քաղել ենք առանձին հեղինակների կողմից հրա-

[1] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի», էջ 117, տե՛ս նաև Н. Адонц, Армения..., стр. 232.

[2] Տե՛ս Խորենացի, էջ 70—71։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 111։

[4] Տե՛ս Ս. Անեցի, էջ 104։

տարակված տարատեսակ նկարագրություններից[5], վիմագրական բնագրերից և մատենագրական վկայություններից։ Հիշյալ նկարագրությունները հրատարակողները լռում են ճարտարապետական ձևերի մասին։ Բնականաբար, պատմական սկզբնաղբյուրների և, առավելապես, ավանդույթների հիման վրա հուշարձանների թվագրումը ճշտության հավակնություն ունենալ չի կարող, քանզի նրանցից շատերը հետագա վերակառուցումների և վերաշինությունների հետևանքով իսպառ կորցրել են իրենց նախնական տեսքը։ Այս առումով շնորհակալ աշխատանք կատարեցին իտալացի ճարտարապետները, թեև նրանց հավաքած և հրատարակած նյութերը շատ հեռու են սպառիչ լինելուց։

Վասպուրականի հուշարձանների վերաբերյալ տեղեկություններ հրատարակող հեղինակներն անդրադարձել են գերազանցապես X դարի և ավելի ուշ ժամանակների այն հուշարձաններին, որոնք ընդհանուր առմամբ լավ են պահպանված։ Գրականության մեջ զանազան առիթներով հիշատակված թվով 300 հուշարձաններից ճարտարապետ մասնագետների ուշադրությանն են արժանացել Հայոց Ձոր գավառի ս. Խաչ (Աղթամար) եկեղեցին, Վարագի, Ձամբաշխի և Հոգոց վանքերը, Ռշտունիքի Կարմրակ, Նարեկ, Գանձակի ս. Թովմա վանքերը, Աղբակ գավառի Ձորադիր ավանի եկեղեցին, մի քանի վաղ միջնադարյան և ուշ շրջանի հուշարձաններ։ Նյութերի սակավության հետևանքով, թեև դժվար է ամբողջական պատկերացում կազմել Վասպուրականի ճարտարապետության վերաբերյալ, այնուհանդերձ եղածների մեջ էլ պարզորոշ վերարտադրված են մի շարք առանձնահատկություններ, որոնցով ի հայտ է գալիս նրանց ինքնատիպությունը, կապը վաղ միջնադարյան ավանդույթների հետ։ Հրատարակված նյութերը հնարավորություն են տալիս տարբերել հիմնականում հինգ տիպի եկեղեցական շենքեր։ Դրանցից երեքը կատարելապես նոր երևույթ էին ինչպես հորինվածքային, այնպես էլ կառուցվածքային առումով։ Այդ ինքնատիպ ստեղծագործությունների հիման վրա Վասպուրականի ճարտարապետությունը կարելի է դիտել իբրև առանձին ճարտարապետական դպրոց։

Հորինվածքային բոլոր տիպերն էլ իրենց ակունքներով սերտորեն կապված են վաղ միջնադարյան ճարտարապետության հետ։ Ավելի տարածված էին եռախորան-քառախորան հորինվածքները, որոնց հիմքի վրա ծնվեցին երկու նոր տիպեր։ Ավանատիպ՝ երկու ավանդատնով տարբերակը Վասպուրականի ճարտարապետության մեջ, իր ձևերի կատարելությամբ, հանդես եկավ որպես եկեղեցու նոր տիպ։ Ներկայումս մեզ հայտնի են այդ հորինվածքի երկու մեծահռչակ հուշարձաններ՝ Ձորադիր և Աղթամարի ս. Խաչ։

Եռախորան հորինվածքի երկրորդ տիպը գմբեթասրահի և խաչաձև հատակագծով տիպերի մի չափազանց հետաքրքիր զուգակցում է։ Գմբեթասրահի կենտրոնը՝ մույթերի մեջ գտնվող հյուսիսային և հարավային հատվածները վեր են ածվել կիսաբոլոր խորանների, միաժամանակ պահպանելով արևմտյան մասը, որպես նախասենյակ։ Նմանօրինակ զուգակցման հետևանքով արևմտյան որմնամույթերի արևելյան պատը ձեռք է բերել գոգավոր կառուցվածք, իսկ արևմտյան կողմում մնացել ուղիղ՝ ըստ էության ներսը բաժանելով երկու մասերի՝ ուղղանկյուն նախասրահի և եռախորան կենտրոնի։ Այս տիպի եկեղեցիներից՝ իրենց հատակագծերով և ճարտարապետական ձևերով

[5] Նմանօրինակ նկարագրական տեղեկություններ հրատարակվել են «Ազգագրական հանդես», «Բիւզանդիոն», «Հանդես ամսօրյա», «Արևելք», «Լումայ» և այլ պարբերականներում, ինչպես նաև առանձին մենագրություններում։

հայտնի են Վարագավանքի ս. Հովհաննես և Նարեկավանքի ս. Սանդուխտ եկեղեցիները։

IX—XI դարերի Վասպուրականի ճարտարապետությունը ևս հարուստ էր գմբեթասրահներով. տարածված էին. ա) գմբեթասրահներ մեկ զույգ միայն արևմտյան կողմի որմնամույթերով (Կարմրակ վանքի մեծ, Նարեկավանքի ս. Աստվածածին և Վարագավանքի ս. Նշան, ս. Սիոն և ս. Խաչ եկեղեցիները)։ բ) Չորս ավանդատնով ներքուստ խաչաձև գմբեթասրահներ են. մեկը՝ Վանից դեպի հարավ տանող ճանապարհին, երկու եկեղեցի Իլու վանքում և մեկն էլ Գանձակում (ս. Թովմայի եկեղեցին)։ Այս վերջինիս վերաբերյալ տեղեկությունները հակասական են։ գ) Գմբեթասրահների երրորդ տեսակը միանավ սրահի գմբեթավորման հետևանք է։ Այդպիսի մի եկեղեցի կա Հոգոց վանքում։ Այն աչքի է ընկնում երկարավուն համաչափություններով, թեև կրճատված են արևելյան զույգ որմնամույթերը և, բնականաբար, այդ մույթերի ու խորանի միջև եղած տարածությունը։

Վասպուրականի վանքերն ունեն մի կարևոր առանձնահատկություն. նրանց գերակշիռ մասը գոյատևել, բարգավաճել է բավականին երկար ժամանակ և բազմիցս համալրվել տարբեր ժամանակաշրջանի նոր շինություններով։

Վարագավանք.—Վասպուրականի հնագույն և մեծահամբավ վանքերից է։ Համալիրն ունի տեղական ճարտարապետական հորինվածքների կարևոր տարատեսակներ։ Հայտնի են երկու Վարագավանք՝ Վերին և Ներքին։ Առաջինը գտնվում է Վարագ լեռան հարավային կողմում, բաղկացած է երկու եկեղեցիներից՝ մեկը խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ շինություն է, մյուսը՝ երկու ավանդատնով միանավ սրահ։ Շրջապատում կան երկու կիսավեր մատուռներ։ Դրանցից մեկում, ավանդության համաձայն, ճգնել է Թոդիկ ճգնավորը, այնուհետև հիմնել մի եկեղեցի[6]։ Մյուս մատուռը (դարձյալ ավանդության համաձայն) եղել է Հռիփսիմեան կույսերի աղոթատեղի[7]։ IV դարի սկզբին Լուսավորիչը շինել է եկեղեցի, որը նորոգվել է VII դարում[8]։ Հետագայում այս կողմերում կառուցվել են ևս տասներկու եկեղեցիներ, որոնցից երեքն ըստ Ն. Սարգսյանի՝ Վերին Վարագավանքում, յոթը՝ Ներքին, երկուսն էլ սրանցից ոչ հեռու՝ Կարմրավորում[9]։

Հռիփսիմեան պատմությունն ավանդող մի հիշատակարանում պահպանվել է հետևյալ վկայությունը. «Իսկ սրբոցն ի Տոսբ գաւառ ելեալ զսուրբ նշանն թողուն հանդեպ Վանի ի հարաւակուսէ լերինն փոքրագոյն խրճիթ շինեալ վանաց եւ անդ եդին վասն կասկածի հալածանց ի վերա կացել Ու անդ ի լեառն Վարագ ամրացեալք գի լուան խնդիր լինել ինքեանց ցանցիր ի խորշ լեռին բնակեցան, աղաբեալ իւրանց գեանափոր դադարս»[10]։

Յայսմավուրքի մեջ վանքի հիմնարկությունը վերագրված է Գր. Լուսավորչին[11]։ Նույնն է պատմում ժողովրդական ավանդությունը[12]։ Թե որ Վարագավանքի մասին է խոսքը, պարզվում է վերոհիշյալ վկայությունից. որտեղ նշված

---

6 Տե՛ս Այրիվանեցի, էջ 65։

7 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 58, 67, 68։

8 Տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն..., էջ 191։

9 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 258։

10 Հ. Տաշեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 63, 77։

11 Տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն..., էջ 191։

12 Տե՛ս «Հայապատում», էջ 230։

է նրա տեղը՝ Վարագա լեռան հարավային կողմում, և մատենագրական երկու վավերագրերից, որոնք տեղեկացնում են IV դարում այստեղ եկեղեցի կառուցելու և VII դարում սրբավայր լինելու մասին։ Առաջին տեղեկությունը Թ. Արծրունու մոտ է. «Ի յարեւելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ, զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեւղջն Ահեականից, ի կատարածի լուսաւորութեանն Հայոց։ Քանզի էր ի տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեավահունի»[13]։ Ներքին Վարագավանքն ընկած է Վարագա լեռան հարավային կողմում։ Առաջին անգամ հիշատակված է նաև Վարդ Պատրիկի հետ կապված իրադարձությունների առթիվ։ «Իսկ նորա (Վարդ Պատրիկի) յաւուրքն յայտնեցաւ սուրբ խաչն, որ ի Վարագ լեառն»[14]։ Այս տեսիլքի վայրը մի հիշատակարանում նշված է. «Ի բուն կատար լերինն»[15]։ Վերին Վարագավանքն է գտնվում լեռան գագաթին։ Ճարտարապետական ձևերով ևս Վերին Վարագավանքի եկեղեցիները հնության նշաններ ունեն։ Լուսավորչի հիմնածը, թերևս միանավ բազիլիկը լինի, իսկ խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ հորինվածքն առանձնապես բնորոշ էր VI—VII դարերին։

Ներքին Վարագավանքը, որը գտնվում է սրանից մոտ 5 կմ արևմուտք, ավելի հանրահայտ է։ Եկեղեցական շինությունների այս համալիրը բաղկացած է հյուսիսից հարավ կողք-կողքի կանգնած չորս եկեղեցիներից, արևմտյան կողմի գավթից, գավթի հյուսիսային և հարավային կողմերում տեղադրված ևս երկու եկեղեցիներից։ Վանքը շրջապատված է եղել աղյուսաշեն պարիսպներով։ Եկեղեցիներից բացի այստեղ եղել են միաբանության սենյակներ, բաղնիք, դպրոցի սրահ, առաջնորդարան և այլ շինություններ։ Հյուսիսային կողմում գտնվում է փոքրածավալ, կողմնային համաչափությունների իրենց կերպարով բոլոր եկեղեցիները տարբերվում են միմյանցից։ Հյուսիսամոտավորապես հավասար հարաբերությամբ մեկ զույգ որմնամույթերով գմբեթասրահ ս. Նշան եկեղեցին։ Բեմի հարավային կողմում ունի մի քառակուսի ավանդատուն։ Միակ մուտքը բացված է ս. Աստվածածին եկեղեցու հյուսիս-արևմտյան կողմի ավանդատնից, որի հյուսիսային պատն այդ պատճառով հեռացվել է։ Այս հանգամանքը վկայում է, որ ս. Նշան եկեղեցին կառուցելու ժամանակ ս. Աստվածածինն արդեն կար։

Ս. Աստվածածին եկեղեցին հարավային կողմից կից է ս. Նշանին։ Ավանատիպ քառախորան շինություն է, այն տարբերությամբ, որ արևմտյան ավանդատները եկեղեցու հետ հաղորդվում են ոչ թե երեք քառորդ որմնախորշերով, այլ երկարավուն միջանցքներով, որոնք բացված են արևմտյան խորանի պատերի մեջ։ Արևմտյան երեք քառորդ որմնախորշերը փակ են։ Ե. Լալայանցի կարծիքով դրանք եղել են Արծրունյաց դահակալների և նրանց ամուսինների աղոթատեղի[16]։ Արևմտյան երեք քառորդ որմնախորշերի փակվածությունն ըստ էության նրանց գործառության և գեղարվեստական ձևի

---

13 Թ. Արծրունի, էջ 214։

14 Շ. Բագրատունի, էջ 107։

15 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 230։ տե՛ս նաև Հ. Ոսկեան, Վվվ. Ա, էջ 272։

16 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 60, տե՛ս նաև Տ. Մարության կարծիքով կառուցվել է VI—VII դարերի սահմա-Ս. Աստվածածին եկեղեցին Տ. Մարության կարծիքով կառուցվել է VI—VII դարերի սահմանագծում և այնուհետև վերաշինվել դրա հիմքի վրա։ Տե՛ս Տ. Մարության, Ավանի տաճարը, էջ 110։

նոր մեկնաբանություն էր: Ավանատիպ այս տարբերակում նրանք այլևս կապված չեն ավանդատների հետ և դիտվում են որպես ներքին առանձնամաս: Ս. Աստվածածին եկեղեցին կառուցված է կոփածո քարերով, ներքուստ պատված սպիտակ սվաղով:

Ս. Հովհաննես կամ Քառասուն աբեղայից եկեղեցին գտնվում է ս. Աստվածածնի հարավային կողմում: Այս երկու եկեղեցիների մեջ մի միջանցք կա, որը շրջանցում է ս. Հովհաննես եկեղեցին նաև արևմտյան կողմից: Սա նույնպես մեկ զույգ որմնամույթերով գմբեթասրահ է: Ի տարբերություն մինչ այս հայտնի գմբեթասրահների, այստեղ ենթագմբեթային կենտրոնների հյուսիսային և հարավային խորանները ոչ թե ուղղանկյուն, այլ կիսաբոլոր կառուցվածք ունեն, որոնց շնորհիվ ներսի արևելյան հատվածը դարձել է եռախորան, միաժամանակ պահպանելով արևմտյան մասի ուղղանկյուն ձևը՝ ինչպես գմբեթասրահներում: Ծավալատարածական ներքին զանգվածների այսօրինակ զուգակցումը տարածված էր միայն Վասպուրականի ճարտարապետության մեջ և նրա ինքնատիպությունը դրսևորող առավել նկատելի երևույթներից մեկն էր:

Արևելյան կողմում տեղադրված են բավականին երկարավուն երկու ավանդատներ: Գմբեթի թմբուկն ութանիստ է: Եկեղեցին կառուցված է սրբատաշ քարերով:

Ս. Սոփիան, եկեղեցիների այս խումբը եզրափակող հարավային կողմում ընկած վերջին շենքն է: Երկու զույգ որմնամույթերով երկարավուն գմբեթասրահ է, կառուցված կոփածո քարով: Գմբեթը, ինչպես և վերնամասն ավերված են:

Գետարգել ս. Խաչը գտնվում է ս. Նշանի արևմտյան կողմում: Ե. Լալայանցի հրատարակած հատակագծի համաձայն եղել է գմբեթասրահ, ունեցել է երկու ավանդատուն, կառուցված է սրբատաշ քարերով: XX դարի սկզբին ավերակ էր:

Գավիթը հայտնի է ս. Գևորգ անունով: Կենտրոնական մասում կանգնած չորս քառակող սյուների վրա հենված են գմբեթակիր կամարները: Գմբեթի թմբուկն ութանիստ է: Շինված է սրբատաշ քարերով: Ներսում եղել են որմնանկարներ: Հյուսիս-արևելյան անկյունում երկու տապանաքարեր կան: Մեկը վերագրվում է Պետրոս Գետադարձ կաթողիկոսին: Գավիթն ունի արտաքին սրահ, վրան զանգակատուն:

Ս. Սիոնը գավթի հարավային կողմում է: Ժամանակին եղել է գմբեթակիր եկեղեցի, ավերվելով վեր է ածվել ուղղանկյուն, երկարավուն, առանց խորանի սրահի: Եկեղեցու այս վերափոխման մասին Ե. Լալայանցը գրում է. «Սրա կաթողիկէն և պատերի մի մասը, քանդվելու պատճառով, տեղը 1849 թուին ս. Սոփիա եկեղեցու քարերով ցորենի թաղակապ շտեմարան են շինել»[17]:

Հատակագծով այս եկեղեցին նման է եղել ս. Նշանին[18], սակայն իր բացարձակ չափերով նրանից ավելի մեծ:

Շինարարական առաջին աշխատանքներն այստեղ կատարվել են Գագիկ Արծրունու օրոք, մասնավորապես նրա կնոջ՝ Մլքե թագուհու կողմից: Այս

17 «Ազգագրական հանդես», XXI, էջ 66:

18 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 256 (ներդիր):

մասին տեղեկություն է պահպանվել մի հիշատակարանում, որտեղ խոսքը վերաբերում է մասնավորապես ս. Աստվածածին եկեղեցուն. «Ես Մլքէ աղախին Քրիստոսի և Հայոց թագուհի ՅՀԱ (922) թուականիս եսու զաւետարանս ի Վարագի սուրբ Աստուածածինս, զոր իմ ձեռամբ եւ ծախեաւք եմ շինել յաւգնականութիւն ինձ և արքային իմոյ Գագկայ եւ զաւակաց իւրոց, ով որ կարդայ յաղաւթս յիշէք»[19]: Այս նվիրագրից նախ իմանում ենք, որ ս. Աստվածածին եկեղեցին կառուցել է Մլքեն, և որ այդ կառուցումը տեղի է ունեցել մինչև 922 թվականը: (Արձանագրված է ոչ թե եկեղեցու կառուցման, այլ ավետարանը նվիրելու փաստը):

Մլքեն ծագումով Բագրատունի էր՝ Սմբատ Ա թագավորի դուստրը: Գագիկը Մլքեի հետ ամուսնացած կարող էր լինել մինչև 908 թվականը, որովհետև 908 թվականին նա գժտվեց Սմբատ Ա-ի հետ և Վասպուրականն անջատելով Բագրատունիներից հիմնեց առանձին թագավորություն: Հավանական է, որ ամուսնությունը տեղի է ունեցել 895 թվականին, երբ Գագիկ Արծրունին այնքան մտերիմ էր Սմբատ Ա-ին, որ պատերազմեց նրան դավաճանած Գագիկ Արծրունի Ապումրվանի դեմ:

Ավետարանի մեջ թեև Գագիկը հիշատակված է արքայական տիտղոսով, սակայն դա որևէ կողմնորոշում տալ չի կարող, քանզի նվիրագիրը գրված է 922 թվականին: Մլքեն նշում է, որ եկեղեցին կառուցել է իր, Գագիկ արքայի և նրա, բայց ոչ իր որդիների համար: Ինչպես հայտնի է Մլքեն Գագիկի երկրորդ կինն էր և ստացվում է, որ եկեղեցին կառուցվել է այն ժամանակ երբ ինքը դեռևս երեխա չուներ: Այլապես նա չէր կարող իր կառուցած եկեղեցին նվիրաբերելիս անտեսել սեփական որդիներին և հատկապես շեշտեր իր ամուսնու որդիներին: Նկատի ունենալով Գագիկ Արծրունու որդիների մահվան տարեթվերը (958—968) հակված ենք մտածելու, որ դրանք Մլքեից ունեցած որդիներն են և ծնված կարող են լինել 898—900 թվականներին: Այս հիման վրա եկեղեցու կառուցումն էլ առաջարկում ենք թվագրել 895—898:

Վարագավանքի մասին շինարարական երկրորդ տեղեկությունը X դարի վերջին քառորդից է: Այդ ս. Սոփիա եկեղեցու շինարարական արձանագրությունն է, փորագրված արևմտյան պատին: Ե. Լալայանցի վերծանությամբ ունի հետևյալ բովանդակությունը. «Ըլ (981) թվին ես Խուշուշ Խաթունս դուստր Գագկա յազգեն Բագրատունեաց կենակից Սենեքերիմ ար[քայի շինեցի զ]սուրբ տաճարս յիշեցէք ի մաքուր...»[20]: Պակասող հատվածի լրացումը Ե. Լալայանցի հրատարակության հիման վրա կատարել ենք մենք, նկատի ունենալով արձանագրության ակնհայտ շինարարական բովանդակությունը: Արձանագրության այսօրինակ մեկնաբանության օգտին է վկայում Թ. Արծրունու հետևյալ վկայությունը. «Ի լեառն (Վարագա) ի հովիտ մի, ուր են աղբիւրք բարեհամք. եւ սուրբ թագաւորն Սենեքերիմ՝ շինեաց ի նոյն տեղւոջ եկեղեցիս մեծամեծս, եւ ի ստորոտ լերինն շինեաց զխոյակապ եւ զհռչակաւոր մայրաքաղաք մենաստանացն զՎարագն»[21]:

Երկու տեղեկությունները համեմատելիս պարզվում է, որ ս. Սոփիան կառուցել է Խուշուշ թագուհին: Սակայն այս շինարարությանը մեծ մասնակցություն է ունեցել նաև Սենեքերիմ թագավորը՝ կառուցել է, եթե ոչ

19 Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վիեննա, 1, 1914, էջ 385:

20 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 66:

21 Թ. Արծրունի, էջ 307:

մնացած բոլոր եկեղեցիները, ապա նրանց մեծ մասը։ Թ. Արծրունու տեղե-
կությունն, ըստ էության, ընդհանուր բնույթ է կրում և վերաբերում է միա-
բանության հաստատմանը, այն էլ բնորոշված «մեծածախ մայրաքաղաք
մենաստանացն» բառերով, որի տակ կարելի է միայն մի շարք եկեղեցական
շենքերի կառուցումը հասկանալ։ Սեննեքերիմի կառուցածը կարող են լինել
ս. Նշան և ս. Հովհաննես եկեղեցիները։ Չեն բացառվում նաև Գետարգել ս.
Խաչը և ս. Սիոնը։

Գավիթն իր չորս սյուների հորինվածքով ավելի բնորոշ է XI դարին։
Նրա վերաբերյալ գրավոր տեղեկություններ չկան։

Այսպիսով, Վարագավանքի եկեղեցիների հիմնական խումբը կառուցվել
է X դարի ընթացքում։ Վանքի ծաղկման երկրորդ շրջանը XVIII—XIX դարե-
րըն են, որի ընթացքում կատարվել են մի շարք նորոգումներ, կառուցվել են
պարսպապատերը, վանականների խուցերը և կոմունալ այլ շինությունները։

Ձորադիր.—Ձորադիրի ս. Էջմիածին կամ Կարմիր վանք կոչվող եկեղեցին
առաջին անգամ գիտությանը հայտնի դարձավ շնորհիվ իտալական ճարտա-
րապետների կազմակերպած գիտարշավի[22]։ Եկեղեցին գտնվում է Աղբակ
գավառում, ունի քառախորան կառուցվածք։ Արևելյան անկյունամասերում
տեղադրված երեք քառորդ որմնախորշերը տանում են դեպի ավանդատները։
Այն, ինչ Վարագավանքի ս. Աստվածածին եկեղեցում դեռևս որոնման վիճա-
կում էր, այստեղ արդեն հասել է կատարելության։ Արևմտյան երեք քառորդ
որմնախորշերը, որպես ներսի անհրաժեշտ առանձնամաս, ակցենտուրներն
շեշտված են նաև արտաքնապես, իսկ արևմտյան ավանդատները բացակայում
են։ Այս հանգամանքը, ինչպես կտեսնենք սորև՝ Աղթամարի օրինակում,
տիպի դեղարվեստական կերպարի կարևոր պայմաններից մեկն էր։ Արևմտյան
ավանդատների բացակայությունը և որմնախորշերի արտաքին շեշտվածու-
թյունը, կողմնային հնգանիստ խորանների հետ միասին, մեծապես հարըս-
տացնում են եկեղեցու պատերի արտաքին ձևավորումը։

Արևելյան խորանն արտաքուստ չափավոր ընդգծված է որմնախորշերով։
Եկեղեցու գմբեթը նորոգված է։ Թմբուկն ունի քառանիստ կառուցվածք և
միայն անկյուններում թեթևակի կլորացված է, կիսասֆերիկ ծածկը կառուց-
ված է խաչաձևվող երկու զույգ կամարների միջոցով։ Մասնագետների
կարծիքով Ձորադիրի եկեղեցին պետք է թվագրել X դարով[23]։ Ժամանակը
ստույգ որոշելու համար, դժբախտաբար մատենագրական կամ վիմագրական
տեղեկություն մեզ չի հասել։ Ավանդության համաձայն եկեղեցին կառուց-
է Աղբակ գավառի Ս. Բարդուղիմեոս եկեղեցու ճարտարապետի աշակերտ
Մուտքի ճակատակալ քարին պահպանվել է հիշատակություն միայն նորոգ-
ման մասին. «Շնորհօք ամենակալին Այ վերստին նորոգեցաւ ս. Էջմիածին
օժանդակութեամբ մահտեսի Սարօյին թուին ՌՃԼ (1681)»[24]։ Հիշյալ նորոգումն
ակներևաբար վերաբերում է գմբեթին։ Միաժամանակ արձանագրությունից
երևում է, որ եկեղեցին մեկ անգամ չէ, որ նորոգվել է։ Եթե հավատանք
ավանդությանը, ապա այստեղ I—II դարերում հեթանոսական տաճար է
եղել։ Ավանդության համաձայն եկեղեցին ս. Էջմիածին է կոչվել այն պատ-
ճառով, որ «Բառբառէ կույսին երևացել է Միածնի տեսիլքը»[25]։

22 Տե՛ս B. Fratadochi, La chiera di sant Ejmiacin a Soradir, Roma, 1971.

23 Տե՛ս „Avchitettura medievale Armena," p. 59, 98.

24 «Աշխատանք», 1912, էջ 1001։

25 Հ. Ոսկեան, ՎՎՎ, Գ, էջ 805։

Ոստան.—Գագիկ Արծրունու շինարարական գործունեության ամենակա-
րևոր և ճարտարապետական արվեստի ամենանշանավոր ստեղծագործու-
թյունները Ոստան քաղաքավանի և Աղթամար կղզում կատարած շինություն-
ներն էին։ Ոստանում նախապես եղել է պալատական շենք, կառուցված Վարդ
Պատրիկի կողմից։ X դարում Գագիկ Արծրունին այս ավանը դարձնում է
նստատեղի և զարդարում բազմաթիվ շինություններով։ Ոստանի մասին պատ-
միչի աված շինարարական տեղեկություններում ուշագրավ են նկարագրված
շենքերը, փողոցները, որոնց մեջ նկատելի է քաղաքի նախագծման որոշակի
գաղափար։ Թ. Արծրունին գրում է. «...ձեռնարկեալ (Գագիկ Արծրունին)
շինէ ի նմա տաճարս և սենեակս և փողոցս հրաշալիս պատկերակերպս և
ազգի ազգի յօրինուածս, զոր ոչ բաւեմ պատմել։ Պարսպէ և զծովակողմն
զօրաւոր վիմօք, դնելով զհիմունս յանհնարին խորութեան, շինէ և ի գլուխ
պարսպին ընդդէմ ծովուն տաճար մի ճեմարանոց ոսկեզարդ և պէսպէս պա-
ճուճեալ դեղովք, արեգակնահրաշ ճառագայթաձևս ի խորտանս աչաց և յու-
րախութիւն սրտի ինքնեան և իւրոց արժանեացն. իսկ դրունս կազմեալ կամա-
րաձևս օդաբերս, զովացուցիչս, միանգամայն և լուսանցոյցս շողախաղացս,
որք ի ծագել և ի մտանել արեգականն փայլատակելով ի վերայ ծովուն՝ շող
գործեն ի սիրտս տաճարին...»[26]։

Այս բոլորից ներկայումս միայն հատ ու կենտ հետքեր են մնացել[27]։
Այս բոլորից ներկայումս միայն հատ ու կենտ հետքեր են մնացել[27]։
Ն. Սարգիսյանի վկայությամբ տեղում պահպանվում էին բերդի մնացորդներ
և ս. Ստեփանոս եկեղեցին[28]։ Ոստանն անմարդաբնակ է դարձել XV դարում՝
թուրքերի ավերածությունների հետևանքով։

Աղթամար.—Վանա լճի Աղթամար կղզում կառուցված շինություններից
պահպանվել է միայն ս. Խաչ եկեղեցին։ Ասողիկի վկայությամբ շինարարու-
թյուն այդտեղ կատարվել է ճակավվին Թեոդորոս Ռշտունու կողմից[29]։ Կղզու
կառուցապատման առավել նշանակալի շրջանը X դարի սկիզբն է, կապված
Գագիկ Արծրունու շինարարական գործունեության հետ։ Թ. Արծրունին ավան-
դում է, որ այստեղ կառուցվել են նավահանգիստ, պալատ, բերդապարիսպ-
ներ և վանական շենքեր։ Այդ շինարարությունն իրականացնելու համար
կատարվել է չափազանց բարդ աշխատանք՝ կղզու տարածությունը լճի հաշ-
վին մեծացնելու ուղղությամբ, որի մասին պատմիչը գրում է. «...ձեռնարկեց
հիմն արկանել գնա ահեղ իմն զարմանալի հիացմամբ. հրաման տուեալ
բազում արուեստաւորաց և անթիվ մարդկանց զհատեալ վէմս ծանունս և
գժուարակիրս հասել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն»։
«...կանգնեցաւ քարայատակն ամբարտակ կանգունս հինգ ի վերայ բարձրա-
ցեալ մկանաց ծովուն, որ մտացն աչօք իբրև ի ցամաքի շարայարեալ տողա-
զարձէ զհաստակառոյցն վիմաց կարգս. յորոյ վերայ լար եդեալ ձգէ զպարիսպ
շուրջանակի իբր ձիարշաւանօք հինգ. և պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ
բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ,
անկիւնաւոր խորանանման տախտակաձև յինքեան անելով գահոյք վըրաս-
նայ...», «...Իսկ ի գլուխս պարսպին ածեալ ի կիրճս դժուարամածս քարան-
ձաւին ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ. ի շրթունս խորայատակ հիմանց

26 Թ. Արծրունի, էջ 292։

27 Տե՛ս И. А. Орбели. Избранные труды, I, М., 1968., стр. 22—25. տե՛ս նաև «Բազմավեպ», 1977, էջ 383։

28 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 254, տե՛ս նաև «Բազմավեպ», 1977, էջ 383։

29 Տե՛ս Ասողիկ, էջ 120, Հ. Ջամչեան, Պատմութիւն հայոց, Բ, էջ 355։

ծովուն ղնէ դրունս աճուրատէս, հաստահեղոյս, բևեռապինդս. որով և զման ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ...»[30]: Հ. Օրբելին մանրամասն քննության առնելով սկզբնաղբյուրները իբրև ականատես գտնում է, որ այդ կառույցները կատարվել են կղզու հարավ-արևմտյան կողմում[31]: Աղթամար կղզում քաղաքաշինական աշխատանքներին մասնակցել են նաև նախարարները, որոնց միացյալ ջանքերի ու միջոցների շնորհիվ կարճ ժամանակահատվածում կառուցել են ապարանքներ, եկեղեցիներ, զբոսայգիներ, բերդապարիսպներ և այլն: Այս մասին Թ. Արծրունու մոտ կարդում ենք. «Եւ այնուհետև ժողովեալ ի դուռն արքայի իշխանաց և տերանց, ազատաց և ռամկաց, եպիսկոպոսաց և կրօնաւորաց, զի ամենեքեան օն անդր փութապէս շինուածս և ձեռակերտս հաստատեսցեն...», «...և զկնի հնգից ամաց յորմէ հետէ սկսան շինել՝ պայծառացեալ բարձրացաւ շինութիւն քաղաքին առաւել քան զառաւել»[32]:

Շինարարական աշխատանքները կատարվել են հինգ տարում, որի ընթացքում կառուցվել են պալատը, պարիսպները, նավահանգիստը, տնտեսական, աշխարհիկ և հոգևոր շենքեր. «Յայնժամ և իւր իսկ արքայի ամենիմաստ հասողութեամբն հանդերձ բազում արուեստաւորք զլար ճարտարութեան ի ձեռն առեալ գծել, միանգամայն և գծագրել նշանակել առ ստորոտով լերինն, որ է գագաթն կղզւոյն, զտեղիս զբօսացուցանողս վայելչութս, ըստ արժանի կայենից արքայական իւրոցն հանգստեան ձգելով պարսպունս, յարդարելով զփողոցս և դարս դարս դարստանաց և զահս ըստ դահից տէրութեանց և բուրաստանս և պարտէզս, բուրաստանաց և ծաղկոցաց որոշեալ հովիտս զորս վաղվաղակի ածեալ ի կատարումն հաստատեաց զամենայն»[33]:

«Պարսպէ անմերձենալի ամրութեամբ և զծայրս ամրոցին, և շինեալ ի նմա շտեմարանս մեծամեծս և համբարանոցս, միանգամայն և տունս գանձուց և զինուց և ասպազինաց անհուն բազմութեանց»[34]:

Կղզու նշանավոր շինություններից է ս. Խաչ եկեղեցին և Գագիկ Արծրունու ապարանքը: Վերջինիս վերաբերյալ Թովմա Արծրունին տալիս է հետևյալ տեղեկությունը. «Եւ քանզի էին ի դրան արքունի զումարեալք արուեստաւորք բազումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ... ումեմն ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւնի, ի խ (40) կանգնս ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն որոյ որմոյն լայնութիւն երիւք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածսն, զունդ անապակ կրոյ և քարի, իբրև զհալուածս կապարի ի պղնձոյ ընդ միմեանս խառնեալ, և շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև ցգլուխ նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն. և է որ արդարև արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս: Ունի և խորանս կամարակիցս և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մտաց և անզննելի աչաց.

30 Թ. Արծրունի, էջ 293—294:

31 Տե՛ս И. А. Орбели, Избр. труды, I, стр. 31—32.

32 Թ. Արծրունի, էջ 294:

33 Նույն տեղում, էջ 294—295:

34 Նույն տեղում, էջ 296:

ունի զումբէթս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճաճանչս, յոր թէ նայել ոք կամիցի՝ իբր թագաւորի իմն պատիւ առնելով՝ նախ ի բաց առցէ զխոյր զգլխոյն, և ապա տանջեալ զպարանոցն հազիւ թէ նշմարել կարիցէ զզանազան գեղոյն կերպագրութիւնս»[35]:

Տաճար այստեղ պետք է պալատական շենք հասկացվի, որի մանրամասն նկարագրությունը նույնիսկ չափագրական բնույթի տեղեկություններ է բովանդակում: Թեև պալատական այս շենքը չի պահպանվել, սակայն պատմիչի թողած նկարագրության հիման վրա Հ. Օրբելին, բազմաթիվ համեմատական նյութեր օգտագործելով, տվել է վերակազմությունը: Ըստ այդ վերակազմության շինությունն ունեցել է խաչաձևող կամարներով ծածկ, որի կենտրոնի քառակուսում եղել է ցածրադիր գմբեթ[36]: Խաչաձևող կամարների այսօրինակ կառուցվածքը, որ մեծապես տարածվեց XII—XIII դարերի հայ և ավելի ուշ՝ համաշխարհային ճարտարապետության մեջ, այստեղ ունի իր առավել հնագույն օրինակը:

Աղթամարի ս. Խաչ եկեղեցին Վասպուրականում մշակված առանց արևմտյան ավանդատների քառախորան-խաչաձև եկեղեցիների տիպի է, որի նախատիպն է Ձորադիրի ս. Էջմիածին եկեղեցին: Արևմտյան ավանդատների բացակայության հետևանքով, շինության արտաքին պատերը չեն ամբողջացվում ուղիղ գծով, ինչպես ավանատիպ քառախորան կառույցների հորինվածքում և Սյունիքում ստեղծված քառախորան եկեղեցիներում: Ավելին, այս տիպի մեջ, ըստ էության, արտաքին խաչաձևությունը պահպանվում է որովհետև հիմնական նպատակը պատերի ուղիղ, հարթ հորինվածքից խուսափելն է: Այդ պատճառով արտաքուստ արևմտյան կողմում ընդգծված են նաև երեք քառորդ որմնախորշեր: Արևելյան՝ առավել երկար ուղիղ գիծը խախտված է գեղեցիկ որմնախորշերով: Այս ամենը միաժամանակ արված է չափազանց նուրբ ճաշակով, համաչափությունների նրբագեղ նկատառումներով, որոնց թերևս ամենաէական դրսևորումն ի հայտ է գալիս հարուստ քանդակազարդման մեջ: Հիշյալ քանդակներն օրվա լուսավորության տարբեր պահերին տարբեր արտահայտություն են ստանում, հատկապես արտաքին պատերի կեռմանվող ուղղությունների շնորհիվ և սկզբունքորեն պատճառաբանում արտաքինապես հարթ պատերից խուսափելու գեղագիտական նշանակությունը: Արտաքին պատերի հարստացման սկզբունքով ստեղծված եկեղեցու այս կերպարը բնորոշ է միայն Վասպուրականի ճարտարապետությանը:

Եկեղեցու հարավային խորանում կառուցված է մի վերնահարկ որմնախորշ՝ ուսումնասիրողների կարծիքով արքունական ընտանիքի համար: Որմնախորշը կամարակապ է, զարդարված կենդանական զարդապատկերներով և որմնանկարներով:

Եկեղեցին մանրամասնորեն նկարագրել է Թ. Արծրունին. «Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր ի վեր անդր ցուցաք, այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր՝ հրաշակերտէ զեկեղեցին զարմանագործ արուեստիւ. և զոր վերագոյնն ցուցաք կրօնաւորն ձեռն տայ նկարագրել զքարինսն ճշգրտագործ նմանահանութեամբ, սկսեալ յԱբրահամայ և ի Դաւիթէ և մինչև ցտէր մեր Յիսուս Քրիստոս, զդասս մարգարէից և առաքելոց յօրինեալ ըստ իւրաքանչիւր հանդեսի զարմանագործ տեսլեամբ»[37]:

35 Նույն տեղում, էջ 295:

36 Տե՛ս И. А. Орбели, Избр. труды, I, стр. 34—68.

37 Թ. Արծրունի, էջ 297—298:

Այնուհետև պատմիչը տալիս է եկեղեցու քանդակների և որմնանկարների նկարագրությունը: Թ. Արծրունու վկայությամբ եկեղեցու, ինչպես և պալատի ճարտարապետը եղել է Մանուելը:

Աղթամարի ամբողջ շինարարական աշխատանքները տևել են տասներեք տարի՝ 908—921 թթ.: Արձանագրելով Աղթամարի եկեղեցու կառուցումը, Թովմա Արծրունին գրում է. «Ի ժամանակս շինութեան հոյակապ և հռչակաւոր և բարձրանշան քաղաքին Աղթամարայ»[38] տեղի է ունենում կռիվ արաբների հետ և նրանց հաղթելուց հետո ձեռնամուխ են լինում եկեղեցու շինությանը: Այս հանգամանքը մտածել է տալիս, որ եկեղեցու հիմնադրումը կատարվել է քաղաքի կառուցման վերջին շրջանում: Նկատի ունենալով, որ առաջին շրջանը տևել է հինգ տարի, դրան գումարած արաբների հետ կռվելու տարին ստացվում է 914—921 թվականները, որի ընթացքում կառուցվել են նախ պալատը, ապա՝ եկեղեցին: Մի արձանագրություն էլ փորագրվել է հյուսիսային ավանդատան պատին՝ «Դարուն կտակի ձեռամբ Գագկա հայոց արքայի»[39]:

Ս. Խաչ եկեղեցին հետագայում ենթարկվել է նորոգումների՝ վերակառուցվել է գմբեթը: Այդ մասին պահպանվել է վիմական վավերագիր, որի լրիվ վերծանությունն առաջին անգամ հրատարակեց Հ. Օրբելին[40]:

Արձանագրությունը գտնվում է հարավային պատի արևելյան վերին անկյունում: Ահա Հ. Օրբելու վերծանությունը.

ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԹԱԳԱՈՐՈՒԹԵԱՆ
[ՈՒԹՄ]ԱՆԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԶՆԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՍ
[ՋԴՀ ԵՍ ՍՏԵՓ]ԱՆՈՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ [Յ]ՈՒԹԵՐՈՐԴ ԱՄԻՆ
[ՀԱՅՐԱՊԵՏՈ]ԻԹԵ ԻՄՈ ՎՆ[ՐՍՏԻՆ] ՆՈՐՈԳԵՑԻ ԶԳՈՒՄԲԵ—
[Թ]Ս [ՍՈՒՐԲ] ԽԱՉԻՍ ԶՈՐ ԷՐ ՇԻՆԵԱԼ Ի ՀԻՄԱՆ—
[Ց] ԳԱԳԻԿ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՈՎ Ո—
[Ր ԿԱՐԴԱՅ]Ք ՅԻՇԵՍ[ՋԻ]Ք Ի ՏԵՐ[41]:

Նկատի առնելով Ստեփանոսի անունից գրված այլ արձանագրությունները Հ. Օրբելին նախ ճշտում է արձանագրության պակասող հատվածները, պարզաբանում Ստեփանոսի ով լինելը և գմբեթի վերակառուցման տարեթիվը՝ 1325:

Հ. Օրբելու կարծիքով այս արձանագրությունն ավանդում է գմբեթի ոչ թե նորոգման, այլ վերակառուցման մասին՝ որպես հիմք ունենալով արևմտյան պատի քանդակներից մեկը, որտեղ պատկերված է Գագիկ Արծրունին՝ տաճարի մոդելը ձեռքին: Քանդակն ունի կատարյալ ճշտության հավակնություն: Այդ մասին վկայում է անգամ Թ. Արծրունին[42]: Եկեղեցու թմբուկն այստեղ պատկերված է ութանիստ, իսկ ծածկը կիսասֆերիկ: Հ. Օրբելու կարծիքով քանդակում պատկերված է եկեղեցու սկզբնական գմբեթը, որը 1325 թվականի նորոգման ժամանակ վերակառուցվել է:

Թեև պարզ է, որ գմբեթը նորոգվել է, սակայն կասկածելի է, որ գմբեթի ծածկը նախկինում կլորավուն է եղել, ինչպես ընդունում է Հ. Օրբելին՝ հիշյալ քանդակի հիման վրա: Քանդակի մեջ ուշադրություն է գրավում մի էական

[38] Նույն տեղում, էջ 297:

[39] «Ազգագրական հանդես», XX էջ 210:

[40] Ն. Սարգիսյանի և Ե. Լալայանցի մոտ կիսատ է: Տե՛ս «Ազգագրական հանդես», XX, էջ 210: Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 277:

[41] *И. А. Орбели,* О первоначальной форме купола Ахтамарского храма, ЗВОРАО, XXV, вып. 1—4, СПб., 1921, стр. 297.

[42] Տե՛ս Թ. Արծրունի, էջ 335:

մանրուք. եկեղեցու գմբեթի ծայրը գտնվում է երկու քարերի հատման եզրին և այդ հետևանքով հողմնահարվել և կլորացել է, ստեղծելով կիսասֆերիկության պատրանք: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ քանդակի միջոցով ապավորություն: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ քանդակի միջոցով
հիմնավորելու հնարավորությունը կասկածելի է: Հ. Օրբելին գրում է, որ այդ սֆերիկությունը երևում է գմբեթի արտաքին ծածկի տակից: Սակայն ավելալ գեպքում խոսքը միայն արտաքին ծածկի ձևի մասին է, որովհետև ներսի կողմից բոլոր գմբեթներն էլ կիսասֆերիկ կառուցվածք են ունենում:

Եկեղեցու հյուսիսային կողմում կան երկու կամարակապ մատուռներ, իսկ հարավային կողմում ս. Ստեփանոս եկեղեցին է: Ավանդության համաձայն Սիմեոն ճգնավորի խորհրդով այն կառուցել է Վարդ Պատրիկը VII դարում[43]: Եկեղեցու մուտքի ճակատակալ քարի նորոգման արձանագրությունը թվագրված է 1823[44]:

Շինարարական հետաքրքիր տեղեկություն կա Թ. Արծրունու պատմության շարունակողի մոտ. «Ի յաթոռ հայրապետութեան իւրոյ ի կղզիս Աղթամար ի դուռն սուրբ խաչիս շինեաց գեղեցիկ եւ մեծանիստ տեղեաւք ի թիկունս սուրբ խաչին գժամատուն եւ մեծ յաւուրս ձմերայնոյ: Իսկ ի կողմն արեւմտից գժամանակն[45] ամարայնոյ մեծանիստ կամարակապ ձեռք կրակապ և սրբատաշ վիմաւք վեց աշխարհի գործ բերեալ գքարինս նորա յաշխարհէն խլաթայ բաղում աշխատանօք ի վերայ անդնդային ծովու»: «Եւ դարձեալ վերնատունս բաղումս բնակչութիւնս ամարայնոյ շինեալ գեղեցիկս և վայելուչս ի վերայ դարպասին, զոր մեծ պարոն Սեֆեդին էր շինեալ յաղագս զաւակին իւրոյ տէր Ստեփաննոսին. եւ այլ բաղում շէնս ու անշէնս հաստատեալ հաւատով եւ յուսով»[46]: Պատմիչի այս տեղեկությունները թվագրված են 1296: Ամառանոց և ձմեռանոց բառերը պետք է հասկացվեն աշխարհիկ շինությունները, կառուցված եկեղեցու արևելյան և արևմտյան կողմերում:

Ս. Խաչ եկեղեցին ունեցել է նաև գավիթ, որն այժմ գոյություն չունի: Սակայն XIX դարի գրականության մեջ հրատարակվել է նրա շինարարական արձանագրությունը, որը փորագրված է եղել հարավային մուտքի վերևում. «Ի ՌՄԺԲ (1763) Շնորհօքն Քի շինեցաւ դարպաս ձեռամբ Թումայի կաթողիկոսի Աղթամարայ, որք աղօթէք տուք զողորմիս»[47]:

Եկեղեցու հարավահայաց մուտքին կից զանգակատունն է, որի պատին վիմական մի անթվակիր վավերագիր կա. «Շինեցաւ զանգակատունս արդեամբք սատուածասէր իշխանացն Ախիջան եւ Գէորգ աղաիցն յանուն սուրբ Համբարձման ի յիշատակ ննջելոցն եւ կենդանեացն»[48]:

Ս. Խաչ եկեղեցու հարավ-արևելյան կողմում է գտնվել ս. Ստեփանոս եկեղեցին: Մուտքի ճակատակալին փորագրված է «ՉԽԲ (1293) ի հայրապետութեան Տռն Ստեփաննոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբասնեալ կրաւնաւորացն Սարգսի եւ Ստեփաննոսի որդեացն Հոռմշահի յարդար վաստակոց իւրեանց. կատարեցաւ յիշատակ հոգւոց իւրեանց եւ ծնողացն և ազգականացն որք հանդիպիք յիշեցէք ի ՔՍ»[49]:

[43] Տե՛ս «Ազգագրական հանդես», XX, էջ 23:

[44] Տե՛ս նույն տեղում, էջ 209: Տե՛ս ՎՎՎ, Ա, էջ 111:

[45] Հ. Ոսկյանն այս բառը սրբագրում է «ժամատունս»:

[46] Թ. Արծրունի, էջ 322—323:

[47] «Ազգագրական հանդես», XX, էջ 209:

[48] Նույն տեղում, էջ 210:

[49] Նույն տեղում, էջ 209:

Ագթամար կղզում եկեղեցի կառուցելու վերաբերյալ մի տեղեկություն էլ պահպանվել է 1461 թվականի մի ավետարանում. «Եւ այսմ ամի շինեցին գաւիթ Գլարգ եւ աշխատեցան... Թվ. ՋԺ (1461)»[50]։ Այս վերջին շինությունների վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել։

Հոգոց վանք.—Գտնվում է Վանա լճի հարավ-արևելյան կողմում, Որոտան գետի ակունքի մոտերքում։ Վասպուրականի ճարտարապետության միանավ գմբեթասրահի ինքնատիպ տարբերակ է Հոգոց (կամ Հոգեաց) վանքի եկեղեցին։ Ի տարբերություն գմբեթասրահների ավանդական տիպի, այստեղ առկա են միայն մեկ զույգ թույլ արտահայտված որմնամույթեր։ Երկայնական համաչափությունն ընդգծված է նաև բավականին խորն ընկած խորանով։

Եկեղեցու արևմտյան կողմում իրար կողքի տեղադրվել են երկու ընդարձակ գմբեթակիր գավիթներ, որոնք միմյանցից բաժանված են միայն արևելյան և արևմտյան որմնամույթերով։

Եկեղեցական շենքերը շրջապատված են վանական համալիրի տարբեր շինություններով և պարսպապատերով, որոնց անկյուններում գտնվում են բոլորաձև աշտարակներ[51]։ Վանքն ունեցել է առաջնորդարան։

Մի ավանդության համաձայն այստեղ, հին դևերի (հեթանոսական պաշտամունքի) վայրում, Բարդուղիմեոս առաքյալը հիմնել է եկեղեցի. «Հիմնարկեալ սուրբ առաքեալն զհիմն տաճարի Սրբուհւոյն իւրովք իսկ կեռօքն շինեալ եկեղեցի փոքրագոյն և անուանեաց զնա սուրբ Աստուածածին...» «Տինէ խրճիթս վանիցն և տեսուչս հրամայէ լինել հաւատացելոցն...» «Եւ անուան է զտեղին Հոգեաց վանս, յանուն Տիրամօրն եւ Կուսին»[52]։ Վանքի հիմնադրումն, այսպիսով, թվագրվում է I դարով։ Ըստ Ոստանիկյանի եկեղեցու անունը կապված է մի ավանդության հետ, որի համաձայն եկեղեցին նվիրվել է Բարդուղիմեոս առաքյալի հոգուն[53]։ Սրվանձտյանի կարծիքով այստեղ եղել է հեթանոսական սրբատեղի, նվիրված Անահիտին[54]։ Սակայն, քանի որ «հոգոց» անունը հոգնակի է, Հ. Ոսկյանը ենթադրում է, որ այն առաջ է եկել չար ոգիների մասին եղած հին ավանդույթից, որոնց հալածել է Բարդուղիմեոս առաքյալը[55]։

Շինարարական աշխատանքներ հետագայում այստեղ կատարվել են Լուսավորչի կողմից, որի ջանքերով հիմնվել է խոշոր վանք։ Պալյանի կարծիքով այս վանքը IV դարի հայ մշակույթի նշանավոր օջախներից մեկն էր[56]։ Սկզբնական շրջանում այստեղ եղել է կուսանոց։ Ալիշանը ենթադրում է, որ վանքը արանց միաբանություն է դարձել հետագայում, երբ հիմնվել է Անձևացյաց եպիսկոպոսական աթոռը և, որի առաջին եպիսկոպոսի՝ Աբիսողոմի անունը հիշատակված է IV դարի վերջերից[57]։

50 Ակինեան, *Հաւաքմունք յիշատակարանաց, Վիեննա, 1961, էջ 126։*

51 *Տե՛ս J. M. Thierry*, Monastéres Arméniennes du Vaspurakan, Revue des études Arméniennes, IV, Paris, 1967, p. 165—186.

52 *«Սրբոյ Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 295։*

53 *Տե՛ս «Արևելք», 1888, էջ 1238։*

54 *Տե՛ս «Համով հոտով», էջ 66—67։*

55 *Տե՛ս* Հ. Ոսկեան, *ՎՎՎ, Գ, էջ 764։*

56 *Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, էջ 1083։*

57 *Տե՛ս* Ալիշան, *Յուշիկ Հայրենեաց, Ա, էջ 309—310, տե՛ս նաև I. Saint Martin*, Memoires Hisoriques et Geographique sur l'Arménie..., Paris, 1818—1819, t. 2, p. 427—429:

Ըստ Մարկվարտի վանքը Ստ. Օրբելյանի[58] հաղորդած Տեառն-ընդառաջ եկեղեցու անունով հայտնի վանքն է[59]։

Վանքի վերջնական շինությունը սովորաբար վերագրվում է Գուրգեն Արծրունուն։ Սակայն Թ. Արծրունու թողած տեղեկությունը միայն ընդհանուր բնույթի վավերագիր է։ Պատմիչը հաղորդում է, որ Անձևացյաց գավառում Գուրգենը շինում է եկեղեցիներ[60]։ Չի բացառվում, որ «եկեղեցիներ» ասելով պատմիչը նկատի ունի նաև այս եկեղեցին։ Որոշակի կարծիքի համար հավաստի վկայություններ չկան։

Գուրգեն Արծրունու կառուցած շինությունների մեջ պատմիչն առանձնացրել է Արծրունյաց նախարարների նշանավոր սրբավայրերից մեկը՝ Ադամակերտը։ Թ. Արծրունին ասում է, որ այստեղ ամփոփված է Աղան Արծրունու աճյունը (V դար)[61]։

Եկեղեցու շինության մասին։ Թ. Արծրունին գրում է. «Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն հայոց Գուրգէն հրաշաղան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին յԱդամակերտ ի մեծն Աղբագ, ի բուն իշխանական սեփհականութեան իշխանութեան զարմին Արծրունեաց»[62]։

Նարեկա վանք.—Գտնվում է Ռշտունյաց գավառում, Վանա լճից մոտ 7 կմ հարավ։ Վանական շենքերի այս համալիրը բաղկացած է ս. Սանդուխտ, ս. Աստվածածին եկեղեցիներից, գավթից, ս. Գրիգոր Նարեկացու մատուռից, զանգակատնից և պարսպապատերից։ Հարավային կողմում գտնվում են առաջնորդարանը, ուսումնարանը և այլ շենքեր։ Կենտրոնական կառույցը ս. Սանդուխտ եկեղեցին է։ Ութագմբեթային կենտրոնը եռախորան է, իսկ արևմտյան մասը՝ ուղղանկյուն։ Կողմնային խորանների արևմտյան վերջավորություններից առաջացած պատերն ունեն որմնամույթերի մշակում և իրենց վրա կրում են գմբեթակիր կամարները։ Դրա շնորհիվ եկեղեցու կառուցվածքում համատեղված են խաչաձև կենտրոնագմբեթ և գմբեթասրահ հորինվածքները։ Ներքին Վարագավանքի ս. Հովհաննես եկեղեցուց հետո սա Վասպուրականի ճարտարապետության մեջ այս տիպի երկրորդ հուշարձանն է և վկայում է նրա տարածված լինելու մասին։ Գմբեթի թմբուկն ութանիստ է։ Եկեղեցու արևելյան կողմում կան երկու ավանդատներ, որոնց մուտքը բացված է հարավային և հյուսիսային խորանների թևերից, փոքրիկ միջանցքների ձևով։ Ավանդության համաձայն խորանում գտնվում է Սանատրուկի դստեր՝ ս. Սանդուխտի տապանը։ Հյուսիսային ավանդատան արևելյան պատից մուտք է բացված դեպի արևելյան կողմում կառուցված քառանկյունի կամարածածկ սենյակը, իսկ վերջինիս հարավային պատին ևս մի մուտք կա դեպի հաջորդ, համեմատաբար մեծ քառանկյունի գմբեթակիր մատուռը, որն ըստ ավանդության կառուցված է Գրիգոր Նարեկացու գերեզմանի վրա[63]։

Ս. Աստվածածին եկեղեցին երկու զույգ որմնամույթերով գմբեթասրահ է։ Ընկած է ս. Սանդուխտ եկեղեցու հարավային կողմում։ Ունի պայտաձև

58 *Տե՛ս* **Ստ. Օրբելեան**, *էջ 21։*

59 *Տե՛ս I. Markwart*, Deux autres eglises etaint pretendivement fonde par Barthelemy l'une Tiarendaraj dans le canton de Goltn:

60 *Տե՛ս* **Թ. Արծրունի**, *էջ 208։*

61 *Տե՛ս նույն տեղում, էջ 83։*

62 *Նույն տեղում, էջ 256։*

63 *Տե՛ս* Հ. Տաշեան, *Ցուցակ ձեռագրաց..., էջ 78։*

16—892

խորան, որոնցից առանձնապես տարածված էին վաղ քրիստոնեության շրջանում։ Որմնամույթերը տեղադրված են սրահի արևմտյան հատվածում՝ ս. Սանդուխտ եկեղեցու որմնամույթերի ուղղությամբ։ Երկու եկեղեցիների արևմտյան հատվածները կամարակապ են։

Գավիթն ուղղանկյուն է, թեթևակի ձգված՝ արևելքից-արևմուտք։ Ցածրադիր գմբեթը հենվում է չորս քառանկյունի հաստահեղույս սյուներից ձգվող կամարների վրա։ Գավթի արևմտյան կողմում գտնվում է մի զանգակատուն, որը նույնպես ուշ ժամանակի է։

Վանքի հիմնադրման մասին տեղեկություն կա Ասողիկի մոտ, որի համաձայն վանքը հիմնել են Բյուզանդիայում հալածված և Հայաստան գաղթած միաբանականները. «Այսպես և յայնմ ժամանակիս (X դ.) շինեցաւ Նարեկ ի յԾոշտունեաց գաւառին նոյն կարգաւորութեամբ, բազմամարդ պաշտօնապայծառ երգեցողովք և գրական գիտողօք»[64]

Նույնն է վկայում նաև Դավիթ Բաղիշեցին իր «Ժամանակագրության» մեջ, ուր ժամանակը որոշված է Աբասի թագավորության շրջանով (930—954)[65]: Ժամանակն ավելի ճշտվում է Անանիա Մոկացու (946—968) տեղեկությամբ. «Եւ զկնի սորա (Տէր Եղիայի) նստաւ Հայրապետ տէր Անանիայ Մոկացի, առաջնորդ սուրբ ուխտին Վարագայ ամս ԻԲ (22), այր սուրբ։ Յաւուրս սորա նախ և Աբասայ թագաւորին բաղում անապատք և վանորայք հաստատեցան. Կամրջաձոր ի գաւառին Արշարունեաց իսկ ի գաւառին Շիրակայ Հոռոմսին կոչեցեալ վանք և սուրբ ուխտն Նարեկ՝ յՌշտունեաց գաւառին, և վանք Հնձուց ի Կարին գաւառի»[66]: Վանքն, այսպիսով, հիմնադրվել է 946—954 թվականների ժամանակաշրջանում։ Ն. Տոկարսկին գրում է, որ վանքը հիմնվել է 935 թվականին, սակայն չի բացատրում, թե ինչ հիման վրա[67]:

Հ. Տաշյանի հրատարակած XVII դարի մի ձեռագրում առաջինը հիշատակված է ս. Սանդուխտ և ապա ս. Աստվածածին եկեղեցին[68]: Հիմք ընդունելով այդ, Ե. Լալայանցը ենթադրում է, որ առաջինը կառուցվել է ս. Սանդուխտ, ապա՝ ս. Աստվածածին եկեղեցին։ Սակայն, ինչպես ցույց են տալիս եկեղեցիների պատերի ընդհանրությունը, որմնամույթերի ընդհանուր գծերը և դրանով պայմանավորված երկու եկեղեցիների երկայնական համաչափությունների նույնությունը, երկուսն էլ պետք է կառուցված լինեն միաժամանակ։ Եկեղեցիները

Գավիթը և զանգակատունը կառուցվել են հետագայում[69]: Եկեղեցիները նորոգվել են 1707 և 1848 թվականներին[70]:

Ժայռափոր սրբատեղի.—Նարեկավանքում կան երկու ժայռափոր շինություններ։ Ըստ Ե. Լալայանցի գտնվում են մոտակա բերդի հյուսիսային կողմում։ Երկուսն էլ կամարակապ խուցեր են, 1,75 մ խորությամբ, 2,50 » լայնությամբ և 3 մ բարձրությամբ[71]: Այս խուցերից մեկի վրա կա հիշարժան մի արձանագրություն՝

---

64 Ասողիկ, էջ 174։

65 Տե՛ս Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., 2, Երևան, 1956, էջ 337։

66 «Բիւզանդիոն», 1903, 2031։

67 Տե՛ս Н. М. Токарский, Арх. Армении..., стр. 224.

68 Տե՛ս Հ. Տաշեան, Ցուցակ ձեռագրաց..., էջ 78։

69 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 37։

70 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 38—41, նաև «Արևելք» 1903, էջ 542։

71 Տե՛ս «Ազգագրական հանդես», XV, էջ 24—25։

ՅՂԸ

\+

ԶԳՈՒՐԳԵՆ ՅԻՇԵՑԷՔ Ի ՏԷՐ

Անկասկած ՅՂԸ (949) կառուցման թվականն է, իսկ Գուրգենը՝ կառուցողը։ Գուրգենի անձնավորությունը մատենագրությունից անհայտ է։

Վանքը կոչվել է գլխավոր եկեղեցու՝ ս. Սանդուխտի անունով։ Երբեմն անվանել են նաև Դրուց վանք։ Նարեկ նշանակում է Նարից եկած։ Գրիգոր Նարեկացին եկել էր Նար գյուղից և հաստատվել այս վանքում։ Հետագայում նրա անունով էլ վանքը կոչվել է Նար-եկ[72]:

Կարմրակ վանք.—Նախկինում կոչվել է Միանձն Անապատ կամ սուրբ Աստվածածին, ինչպես նաև Անեն վանք[73]: Գտնվում է Վանա լճի հարավ-արևելյան կողմում՝ մի անտառապատ ձորակի մեջ։ Վանքը Կարմրակ է կոչվել, ըստ ավանդության, այստեղ ամփոփված է կարմիր քարով ընդերոցվհեան, ըստ ավանդության, այստեղ ամփոփված լուծված կենաց փայտը[74]:

Վանքի հատակագիծը, ինչպես և ճարտարապետական ձևերի քննությունն առաջին անգամ տվել է Թիերին[75]: Վանքն ունի երկու եկեղեցի, որից մեկը զույգ որմնամույթերով գմբեթասրահ է։ Այս շինության կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ որմնամույթերի արևելյան զույգն ընդհուպ կպած է խորանին և բացակայում է որմնամույթերի ու խորանի միջև եղած տարածությունը՝ երևույթ, որը բնորոշ էր IX—XI դարերի չորս որմնամույթերով գմբեթասրահների ատրիճանական վերափոխմանը։ Ե. Լալայանցի հրատարակած հատակագծի համաձայն հյուսիս-արևելյան անկյունում ավանդատուն չի շինվել և պատը մնացել է իր զանգվածային հաստությամբ։ Եկեղեցու արևմտյան հատվածը ներքուստ երկհարկանի է։ Վերնահարկն, ըստ Ն. Սարգսյանի՝ ծառայել է Արծրունի թագավորներին որպես աղոթատեղի[76]: Գմբեթի ութանիստ թմբուկը կառուցված է աղյուսից։ Քիվի տակ, մուգ գույնի քարերով շարված է հյուսվածքաձև երկրաչափական զարդաքանդակների գոտի։ Առանձին

Եկեղեցու պատերը կոփածո քարից են, միացած կրաշաղախով։ Արձանագրություններում ագուցվել են արձանագրված քարեր և խաչքարեր։ Արձանագրություններից հնագույնը կրում է 1276 թվականը։

Հյուսիսային կողմի փոքր եկեղեցին կառուցված է նախորդին կից, թաղածածկ շինություն է, տանիքն ամրացված է հավելյալ կամարներով։ Թիերիի կարծիքով սա նախորդից հին է[77]: Ն. Սարգսյանը և Ե. Լալայանցը վանքի հիմնադրումը վերագրում են Գագիկ Արծրունուն[78]: Այդ թվագրության օգտին կարող են խոսել, թերևս որմնադրության ձևերը՝ կոփածո քարերով, որ ընդունված էր այդ ժամանակաշրջանում։ Սակայն ստույգ որևէ աղբյուր գոյություն չունի։

---

72 Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, էջ 1191։

73 Տե՛ս Ե. Լալաեանց, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915. էջ 46։

74 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 57։

75 Տե՛ս I. M. Thierry, Monastéres..., p. 178—186.

76 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 252։

7 Տե՛ս I. M. Thierry, Monastéres..., p. 181.

78 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 252, «Ազգագրական հանդես», XXI, էջ 57, նաև «Բազմավէպ», 1897, էջ 412։

Ս. Թովմայի վանք.—Կառուցված է Ռշտունյաց գավառի Գանձակ և Մանազկերտ գյուղերի մոտ, Վանա լճի հարավային ափին: Վանքի համալիրը բաղկացած է երկու ավանդատնով գմբեթարահից, գավթից, պարսպապատերից և մի քանի խուցերից:

Որմնամույթեր կան միայն եկեղեցու արևմտյան կողմում: Գմբեթի թմբուկն ութանիստ է, սրածայր ծածկով: Ե. Լալայանցը տեղեկացնում է, որ տաճարն ունի չորս ավանդատուն՝ երկուսն արևելյան, երկուսն արևմտյան կողմում, սակայն իտալացիների հրատարակած հատակագիծն այդ տեղեկությանը չի համապատասխանում[79]: Եկեղեցին կառուցված է սրբատաշ քարերով:

Հիմնադրման վերաբերյալ տարածված է հետևյալ ավանդությունը: Թովմա առաքյալի աշակերտները նրա ոսկորները բերել են Պարձիս գյուղը, դրել քարե տապանի մեջ և նույն տեղում շինել եկեղեցի[80]: Եկեղեցին, իր ներկա ճարտարապետական ձևերով, ավելի բնորոշ է X—XI դարերին: Թե երբ է կառուցվել կամ վերակառուցվել Թովմա առաքյալի աշակերտների հիմնածը՝ գրավոր սկզբնաղբյուրներում տեղեկություններ չկան: Հնագույն հիշատակությունը 1471 թվականին այստեղ գրված մի ավետարան է[81]: Եկեղեցու արևմտյան գավիթը կառուցել է Թովմա վանահայրը 1671 թվականին: Թողել է նաև մի արձանագրություն՝ պարսպի նորոգման մասին[82]:

Սպիտակ վանք.—Գտնվում է Ռշտունյաց գավառում, Արտոս լեռան լանջին, Աթանանց գյուղի մոտ[83]: Մեկ զույգ արևմտյան կողմի որմնամույթերով գմբեթարահ է, երեսապատված սպիտակ սրբատաշ քարերով[84]: Ստորին մասը շարված է մեծածավալ կոփածո քարերով: XX դարի սկզբին գմբեթը նկատելի խարխլված էր[85]: Եկեղեցին ունի շինարարական արձանագրություն. «Թվ. ՆԺ (1001) Քրիստոս, զՏէր Եղիսէ որ առիթ եղեւ այս Մարդկանն... աղամ գատիս (?) ընա սրբոց խորանաց արժանի արասցէ եւ զՀայոց եւ զՎրաց զաստուածասէր Մարդկան, որ արդեամբ կատարեաց զծառայ... Ամէն Տէր աստուած»[86]: Արձանագրությունն այլ հրատարակություններ չունի և այդ պատճառով դժվար է պարզել այս վերծանության կասկածելի հատվածները: Մարդկանի վերաբերյալ տեղեկություններ չկան: Եղիսեն հավանաբար Ռշտունյաց եպիսկոպոսն էր[87]:

Ս. Խաչ.—Կառուցված է Կուռուպաշ գյուղի մոտ՝ մի բլրի գագաթին[88]: Վանքի կազմի մեջ են մտնում ս. Խաչ եկեղեցին, մի կամարածածկ մատուռ, մի գավիթ, պարսպապատեր և այլ շինություններ:

Ս. Խաչ եկեղեցին զույգ որմնամույթերով գմբեթարահ է: Ունի երկու ավանդատուն: Կառուցված է կոփածո քարերով: Գմբեթի թմբուկն ութանիստ է[89]: Եկեղեցու կառուցման վերաբերյալ գրավոր տեղեկություններ չկան: Եղած արձանագրություններից հնագույնը թվագրված է XII դարով, որը հնարավո-

79 Տե՛ս „Architettura medievale Armena", p. 143.

80 Տե՛ս Հ. Տաշեան, Ցուցակ ձեռագրաց..., էջ 56—57։

81 Տե՛ս Ե. Լալաեանց, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, էջ 463—465։

82 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 55։

83 Տե՛ս «Հայրենիք», 1887, էջ 2254։

84 Տե՛ս Շերենց, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 109։

85 Տե՛ս «Արևելք», 1901, էջ 4752։

86 «Բիւզանդիոն», 1900, էջ 1199։

87 Տե՛ս Ոտնայեցի, էջ 49։

88 Տե՛ս Շերենց, Սրբավայրեր, էջ 46, 47։

89 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 85։

րություն է տալիս եկեղեցու կառուցման հավանական ժամանակը փնտրել
X—XI դարերում, երբ հայ ճարտարապետության մեջ տարածվեց գմբեթա-
րահի այդ տիպը: 1802 թվականին գրված կոնդակում վանքի հիմնադրումը
վերագրված է Թադեոս Առաքյալին և կոչված է ս. Աստվածածին: Հետագա-
յում եկեղեցին կոչվել է ս. Խաչ: Ըստ ավանդության Հռիփսիմեան կույսերն
այստեղ ամփոփել են ս. Խաչի մասունքները[90]: Այս նույն տեղեկությունը
կա Յայսմավուրքում, որտեղ վանքի վայրը նշված է Խուրուպաշ[91]: Կամարա-
ծածկ մատուռն ունի շինարարական արձանագրություն, թվագրված 1614[92]:
Ե. Լալայանցի հրատարակած արձանագրությունների համաձայն վանական
շինությունները նորոգվել են 1321, 1709 և 1887 թվականներին: Վեր-
չինս վերաբերում է մասնավորապես գավթին[93]: Գյուղի հյուսիսում կա մի
ավերակ եկեղեցի, որը հայտնի է ս. Հովհաննես անունով: Գյուղի մեջ է ս.
Ստեփանոս եկեղեցին: Կուռուպաշ անունը բացատրելու համար Միրախոր-
յանը հիմնվել է երկու ավանդությունների վրա, որոնցից մեկում Կուռուպաշտ
նշանակում է կռապաշտ[94]:

Սալնապատի վանք.—Գտնվում է Տոսպ գավառում, Վարագա լեռան հյուսի-
սային թևի վրա[95]: Բաղկացած է ս. Աստվածածին, ս. Կարապետ եկեղեցիներից
և ժամատնից[96]: Եկեղեցիները կառուցված են կոփածո քարերով: Երկու եկեղե-
ցիներն էլ զույգ որմնամույթերով գմբեթարահներ են: Առաջինն ունի երկհար-
կանի ավանդատներ, երկրորդն ավանդատներ չունի: Կոնդակի համաձայն
վանքը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ վերաշինել Ներսես Ա կաթողիկոսը[97]:

Ըստ Հ. Ոսկյանի Գ. Լուսավորիչը շինել է Ջորովանքը, իսկ Ներսեսը՝ Նրա-
նից քիչ հեռու գտնվող մի այլ եկեղեցի, որը X դարում եղել է կաթողիկոսա-
նիստ: Սրանց ավերումից հետո Սալնապատին են վերագրվել հին ավանդու-
թյունները, ինչպես նաև Ջորովանք անունը[98]: Ե. Լալայանցը հիմնվելով Թ.
Արծրունու տեղեկության վրա պարզել է, որ Ջորովանքը գտնվում է Սալնա-
պատից ոչ հեռու՝ Համանուն գյուղում[99]: Բոլոր դեպքերում ս. Աստվածածին
եկեղեցին գմբեթարահի իր հորինվածքով IV դարի լինել չի կարող: Վանքի
հնագույն տեղեկությունը վերաբերում է ս. Կարապետ եկեղեցուն. «ՉԹ (1260)
շինումն Նոր ի նորոյ Սալնապատայ սուրբ Կարապետ եկեղեցւոյն որ է Տոսպ
գաւառին, այս վանք այժմ ս. Գրիգոր յորջորջի ի յեանոցս»[100]: Ղևոնդ Տոսպե-
ցու այս տեղեկության մեջ կարևորն այն է, որ ս. Կարապետ եկեղեցին նշված
է որպես նախապես գոյություն ունեցող վանքում կառուցված շենք: Թեև
հայտնի չէ ս. Կարապետ եկեղեցու կառուցման ժամանակը, սակայն այս
վկայությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այն հիմնվել է
նախքան XIII դարը:

90 Տե՛ս «Արծուի Վասպուրականի», 1859, էջ 86—90։

91 Տե՛ս Հ. Տաշեան, Ցուցակ ձեռագրաց..., էջ 63։

92 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 87։

93 Տե՛ս նույն տեղում, էջ 37, 38, 87։

94 Տե՛ս Միրախորեան, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան
Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1885, Բ, էջ 243—244։

95 Տե՛ս «Հայրենիք», 1889, էջ 35։

96 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 83—84։

97 Տե՛ս «Արծուի Վասպուրականի», 1859, էջ 171—173, նաև Թ. Արծրունի, էջ 214։

98 Տե՛ս Հ. Ոսկեան, Վվվ, Ա, էջ 259, նաև Ինճիճեան, Ստորագրութիւն..., էջ 186։

99 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 82, Թ. Արծրունի, էջ 214, 238։

100 «Դիվան», Ժ, էջ 493։

Եկեղեցիները նորոգվել են 1559 թվականին։ Այդ մասին փորագրվել է արձանագրություն ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի վրա[101]*։ Վանքի Սալանապատ անունը Հ. Էփրիկյանը ստուգաբանում է «Սա է անապատ»*[102]*։ Թերևս ավելի ճիշտ է Հ. Ոսկյանը, որը գտնում է, որ Սալանապատ կարող է առաջացած լինել Ջառնապատ գետակի անունից*[103]*։*

* * *

Չորս ավանդատնով գմբեթասրահները Վասպուրականում ևս բավականին վաղ առաջացան և մեծ տարածում գտան։ Այս տիպը Վասպուրականում ներկայացված է Իլու վանքի (երկու եկեղեցի) և Կապույտկողա ս. Հակոբավանքի (4 եկեղեցի) հուշարձանախմբերով։

Իլու վանք.—*Գտնվում է Ռշտունյաց գավառի համանուն գյուղում, Արտոս լեռան հյուսիսային կողմում։ Վանական շենքերը բաղկացած են երկու իրար կից չորս ավանդատնով գմբեթասրահներից։ Բոլոր ավանդատներն էլ կրկնահարկ են։ Ավանդատների այս առատության հետևանքով ժողովուրդն անվանել է նաև Քառասուն խորան*[104]*։ Եկեղեցիներից հարավայինը XX դարի սկզբին կիսավեր էր։ Հյուսիսայինն ունի ութանկյունի գմբեթ, կառուցված է անտաշ քարերով*[105]*։ Աղթամարի միաբանության կոնդակում պահպանված տեղեկության համաձայն վանքը հիմնադրվել է Գագիկ Արծրունու կողմից, Աղթամարի եկեղեցուց հետո 924 թվականից մինչև 937 թվականը (երբ մահացավ Գագիկ Արծրունին)։ «Շինեցին զԻլու եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնին և սուրբ Փրկիչն և սուրբ Սիոն դրունց վանք զի բնակեսցեն ի նմա յամառնային ժամանակին որ ԲՃ (200) անձ և աբեղայ էին, զփակեցունս եւ զսարկաւագունս»*[106]*։*

Հ. Ոսկյանը չի բացառում, որ այս վանքի ճարտարապետը ևս Մանուէլը եղած լինի[107]*։ Որ եկեղեցին կառուցել է Գագիկ Արծրունին համոզված են նաև Ինճիճյանը, Ն. Սարգիսյանը և այլք*[108]*։ Եկեղեցին արձանագրություն չի ունեցել։ Կոնդակից իմանում ենք նաև, որ կառուցվել են երեք եկեղեցիներ, որոնցից, ինչպես նշեցինք, մնացել էին միայն երկուսը, վանական այս շենքերը հիմնվել են Աղթամարի վանահայրերի կողմից որպես առանձին մենաստան և վանականների ամառանոցային վայր։*

Կապույտկողա ս. Հակոբավանք.—*Կառուցված է Ընձաք գյուղի մոտ։ Հայտնի է Ընձակավանք անունով։ Վանական համալիրն ունի չորս ավանդատնով մի գմբեթասրահ եկեղեցի, երեք մատուռ, պարսպապատեր և սենյակներ վանականների համար*[109]*։ Եկեղեցին շինված է անտաշ քարերով, գմբեթի թմբուկն ութանիստ է։*

Ըստ ավանդության վանքը հիմնադրվել է IV դարի կեսերին և նվիրվել Հակոբ Մծբնեցուն։ Այս ավանդությունն, ամենայն հավանականությամբ,

101 *Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 84։*

102 Էփրիկյան, *Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903—1905, էջ 565։*

103 *Տե՛ս* Հ. Ոսկեան, *Վվվ, Ա, էջ 257։*

104 *Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 48—49։*

105 *Լուսանկարը տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 48։*

106 *«Բազմավէպ», 1897, էջ 411։*

107 *Տե՛ս* Հ. Ոսկեան, *Վվվ, Ա, էջ 159—160։*

108 *Տե՛ս* Ինճիճեան, *Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 146,* Ն. Սարգիսեան, *Տեղագրութիւն..., էջ 254։*

109 *Տե՛ս «Ազգագրական հանդես», XXI, էջ 52։*

հյուսված է Բուզանդի տեղեկությունների հիման վրա[110]*։ IV դարի շինություններն այլևս գոյություն չունեն։ Ավանդությունների, ինչպես և վերջին շինության վերաբերյալ պահպանված մի հիշատակարանում ասված է, որ ս. Հակոբի աջ ձեռքի ճկույթը «Եդին ի վանքն ընծայուք, ուր եւ զջուրն եհան զոր յետոյ շինեցան մեծափառ վանք և անուանեցաւ սուրբ Հակոբ։ Իսկ զմարմին սրբոյն Յակոբայ եհաւ Յովաննէս արքայն Սոլոմբալայ, որ կոչեցաւ Ջմշկիկ եւ տարաւ ի Կ. Պոլիս ԴՃ և Ժ (961) թուականիս»*[111]*։ Այստեղից պարզվում է միայն, որ վանքը գոյություն է ունեցել մինչև 961 թվականը, իսկ «յետոյ շինեցաւ մեծափառ վանք» արտահայտությունից կարելի է եզրակացնել, որ խոսքը IV դարից հետո կատարված շինության մասին է։ «Յետո» բառի իմաստն այս վկայության մեջ մնում է անորոշ։ Վանքի պատմության վերաբերյալ մի մենագրություն է հրատարակել Հ. Մինասյանը*[112]*, որտեղ, սակայն, ամբողջապես խառնված են ժամանակագրությունը և պատմական անձինք։ Մինասյանը եկեղեցու շինությունը կապում է Սենեքերիմ թագավորի հետ, որն անհավանական է գտնում Հ. Ոսկյանը*[113]*, պատճառաբանելով Սենեքերիմ թագավորի ապրած ժամանակաշրջանի տագնապալի անցքերը։ Հ. Ոսկյանն իրավացի է գլխավորապես այն առումով, որ եկեղեցին, ինչպես տեսանք, գոյություն է ունեցել Սենեքերիմից առաջ՝ մինչև 961 թվականը։ Նկատի ունենալով հիշյալ վկայություններն ու եկեղեցու կառուցվածքային ձևերը կարծում ենք, որ այն կարելի է թվագրել X դարի առաջին կեսի սահմաններով։ Ուշագրավ է եկեղեցու կառուցվածքի մի մանրամասն, ուր թերևս կարելի է տեսնել հին շինության հետ համատեղելու կռվան։ Ի տարբերություն նույնատիպ եկեղեցիների, ս. Հակոբավանքն ունի նկատելի ձգված համաչափություններ (10×6 մետր)։ Եկեղեցին նորոգվել է XV դարում*[114]*։ Միրախորյանի վկայությամբ Կապույտկող լեռան հակառակ կողմում կան ևս երեք եկեղեցիներ*[115]*։*

Շուշանց ս. Գևորգ.—*Վասպուրականի թագավորությունը կործանվեց երկրի մշակութային զարգացման ամենաբեղմնավոր շրջանում։ Չնայած XI դարում ծայր առած զանազան բարբարոս ցեղերի արշավանքներին, Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությանը, Սենեքերիմի օրոք Վասպուրականում չէին դադարում շինարարական աշխատանքները։ Հիմնվում էին եկեղեցիներ, քաղաքացիական շենքեր, ավաններ և քաղաքներ։ Շինարարական աշխատանքներին մեծ մասնակցություն է ունեցել նաև Սենեքերիմի կինը՝ Շուշան թագուհին, որին էլ վերագրվում է նրա անունը կրող Շուշանց ավանի և տեղի ս. Գէորգ եկեղեցու կառուցումը*[116]*։*

Շուշանց գյուղը, որ ընկած է Վարագա լեռան արևմտյան ստորոտում[117] *մի փոքրիկ գյուղ է, իսկ եկեղեցին արդեն ավերակ է։*

Ապարանք ս. խաչ.—*Գտնվում է Մոկաց աշխարհում, Ողիմ գյուղի մոտ, պատմական Ապարանքի հյուսիսային կողմում։ Նման է Աղթամարին, սակայն*

110 *Տե՛ս* Բուզանդ, *էջ 35։*

111 Հ. Տաշեան, *Ցուցակ ձեռագրաց..., էջ 69։*

112 *Տե՛ս* Հ. Մինասյան, *Պատմութիւն սուրբ Յակոբա վանից։*

113 *Տե՛ս* Հ. Ոսկեան, *Վվվ, Ա, էջ 167։*

114 *Տե՛ս «Բիւզանդիոն», 1903, էջ 2148, «Նոտարք», էջ 41, 37, 136—139։*

115 *Տե՛ս* Միրախորեան, *Ուղեւորութիւն..., Ա, էջ 107։*

116 *Տե՛ս «Ազգագրական հանդես», XXV, էջ 31։*

117 *Տե՛ս* Շերենց, *Սրբավայրեր, էջ 47։*

ունի հավասարակողմ համաչափություններ[118]: Եկեղեցու մոտ կա կամարակապ շինություն (դարպաս)՝ չորս սյուների վրա: Եկեղեցու և այս շինության պատերը ներքուստ աղյուսաշեն են, իսկ արտաքուստ՝ սրբատաշ քարերով սալապատված: Եկեղեցին ունի զանգակատուն, որի կառուցման ժամանակի վերաբերյալ տեղեկություններ չկան: Միակ գրավոր սկզբնաղբյուրը, որ հիշատակվել է գրականության մեջ 1638 թվականի նորոգման արձանագրությունն է, փորագրված մուտքի ճակատակալ քարին: Թվագրման միակ հիմքը, թերևս, եկեղեցու նմանությունն է Աղթամարի հետ:

Տեղում կան մի քանի այլ եկեղեցիներ ևս: Դրանցից մեկը կոչվում է ս. Կարապետ: Եկեղեցին ավանդաբար համարվում է Լուսավորչաշեն: Այստեղ է թաղված Մոկաց Դավիթ եպիսկոպոսը:

Դավթին հաջորդած Ստեփանոս եպիսկոպոսը շինում է ս. Ստեփանոս և ս. Աստվածածին եկեղեցիները[119]: Կոնդակի համաձայն տեղում, նախապես, մինչև X դարը, գոյություն է ունեցել ս. Կարապետ եկեղեցին: Կոնդակում ասված է. «Եւ աւագ Ուրբաթին հիմնարկեցին զեկեղեցին ի ս. խաչ ավարտեցին և զհիմն ի վերայ սրբոց մասանց եդեալ կաղմեցին և զանազան զարդս անհեղահրաշս շուրջ զնովաւ ածին եւ իբրեւ հարսն երկնաւորի թագաւորին Քի պճնեալ զարդարեցին եւ ամենայն գեղեցկութեամբ որպէս ականակապ ընդելուզեալ մարգարտաւ զոտի ընդ մեջ ածին եւ սբ. ուխտիս Ապարանից սբ. խաչ անուանեցին եւ դարձան օրհնութեամբ զԱծ ի տեղիս իւրեանց յԸՍտամբօլ»[120]:

Այս կոնդակից պարզվում է, որ բոլոր եկեղեցիները կառուցվել են միևնույն ժամանակ, իսկ ս. Խաչը՝ շինարարական աշխատանքների վերջում: Քանի որ հայտնի են կառուցողները, ուստի առանց դժվարության որոշվում է եկեղեցիների կառուցման ժամանակը: X դարում եղել են երկու Վասիլ կայսրեր՝ Վասիլ Ա և Վասիլ Բ: Վասիլ կայսրն այստեղ հիշատակված է իր որդու՝ Կոստանդինի հետ, ուրեմն դա Վասիլ Բ-ն է, որը թագավորել է 976—1025 թվականներին: Այս կողմերում նա եղել է 1021—1024 թվականներին, երբ և համաձայնության է եկել Սենեքերիմ Արծրունու հետ Վասպուրականը Բյուզանդիային հանձնելու հարցում:

Փուրկա ս. Գևորգ.—Գտնվում է Արտոս լեռնաշղթայի արևելյան լանջին: Գմբեթակիր եկեղեցի է, գմբեթը կառուցվել է 1887 թվականին Խաչատուր կաթողիկոսի կողմից, որի վերաբերյալ գավթի կամարաքարերից մեկի վրա փորագրվել է չափածո արձանագրություն[121]:

Եկեղեցուց բացի կա մի թաղածածկ սրահ, որն, ըստ ավանդության, հեթանոսական ժամանակներում եղել է մեհյան[122]: Լալայանցն ավելի հավանական է համարում, որ մեհյանը գտնվել է ս. Գևորգի տեղում[123]: Ա. Ջատյանը Փութկա բառը, ավանդությունների համաձայն, բացատրում է Փութ բառով, որ նշանակում է կուռք[124], Հ. Ոսկյանը հնարավոր է գտնում նաև ընդհանրությունը Բութ անվան հետ և ավելի հավանական է տեսնում Ջանոյանի ստուգաբանությունը, որի համաձայն բութ նշանակում է սուր կամ լեռ: Ըստ Նարլյանի

118 Տե՛ս «Բիւզանդիոն», 1904, էջ 2294, «Լումայ», 1900, էջ 222։

119 Տե՛ս Գ. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Վենետիկ, 1840, էջ 380—387։

120 Նարանեան, Արտոսը Հայաստանի, էջ 199—201։

121 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXII, էջ 99։

122 Տե՛ս Հ. Ոսկեան, Վվվ, Գ, էջ 886։

123 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXII, էջ 97։

124 Տե՛ս «Բիւզանդիոն», 1903, էջ 2156։

վանքի անունն առաջ է եկել պուտուկ բառից[125]: Այս բացատրության համար հեղինակը նկատի է ունեցել մի ավանդություն, ըստ որի ս. Գևորգի մասունքներն այստեղ են բերվել ամփոփված մի պուտուկի մեջ: Նարլյանը չի բացառում նաև Փութկա բառի կապը փոթորիկ բառի հետ, որովհետև փոթորիկը ս. Գևորգի տարերքն է համարվել: Հ. Ոսկյանը հավանական է գտնում մեկ մեկնաբանություն ևս՝ պուտդ-փութդ-պանդոկ: Հեղինակի կարծիքով այստեղ նախկինում եղել է պանդոկ-իջևանատուն[126]:

Ըստ Ոստանիկյանի ս. Գևորգը հիմնականում կառուցվել է Արծրունյաց իշխանության ժամանակ՝ X դարում[127]: Սակայն հեղինակը չի նշում իր եզրակացության համար ունեցած հիմքը:

Դերձու ս. Աստվածածին.—Գտնվում է Մոկաց աշխարհում, Խիզան գավառի Սեղ գյուղից մոտ 1,5 կմ արևելք՝ մի լեռան գագաթի: Եկեղեցին հավասարակողմ համաչափություններով ուղղանկյուն շինություն է: Գրականության մեջ բնորոշված է եռախորան[128], որի տակ կարելի է հասկանալ կամ քառաթև հատակագծով, կամ երեք իրար կողքի դրված խորաններով հորինվածք, որպիսին տարածված էր քաղկեդոնական եկեղեցիներում: Ավանդության համաձայն եկեղեցին կառուցվել է Կոստանդին կայսր կողմից[129]: Դեռևս XIX դարի երկրորդ կեսին կիսակործան վիճակում էր:

Այստեղ եղել է ոչ մեծ չափերի մի աշխարհիկ շենք ևս[130]:

Լիմ անապատ.—Տեղադրված է Վանա լճի համանուն կղզու վրա: Հայաստանի խոշոր միաբանություններից մեկն է: Գլխավոր եկեղեցին կոչվում է ս. Գևորգ: Գլխավոր եկեղեցուց բացի այստեղ կան վեհարան, մատուռ՝ ս. Սիոն, զանգակատուն, որը վերակառուցվել է գավթի[131]: Միաբանության համալիրը շրջափակված է պարիսպներով, որոնց կից տեղադրված են վանականների խուցերը: Եկեղեցին զարդարված է դեկորատիվ ճոխ հարդարանքներով: Գմբեթակիր կամարները պայտաձև են, իսկ թմբուկը՝ կլորավուն:

Վեհարանը գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում, եկեղեցուց մեծ է: Աղոթասրահը բաժանված է ուղղանկյուն չորս սյուներով, որոնց վրա հենվող կամարները նույնպես պայտաձև են: Մուտքի վերին մասը զարդարված է ս. Երրորդության պատկերով: Ըստ ավանդության կղզում առաջին եկեղեցին կառուցել է Գր. Լուսավորիչը: Սակայն ավելի հավանական է Մատթեոսի ավետարանի մի ձեռագրի հիշատակությունը, որի համաձայն վանքը հիմնադրվել է 884 թվականին մի կնոջ կողմից: Մատթեոսի ավետարանի այդ ձեռագրում գրված է. «Գրի ձեռամբ Գրիգոր վարդապետին Քաջբերունւոյ ի թվին ԳՃԼԳ (884) Տրէ ամսոյ ի սուրբ անապատին Լմայ ի սկզբնաւ ի յանոցն Սքանչելագործին»[132]: 1315 թվականին գրված մի ավետարանի մեջ ս. Գևորգ եկեղեցին կոչված է՝ «Նորակազմ տաճարս ի հայրապետութեան տէր Զաքարիայի»[133], որը մատնանշում է եկեղեցու, թերևս արմատական նորոգման

125 Տե՛ս «Արևելք», 1894, էջ 3030—3031։

126 Տե՛ս Հ. Ոսկեան, Վվվ, Գ, էջ 887։

127 Տե՛ս «Արևելք», 1887, էջ 1143։

128 Տե՛ս «Լումայ», 1900, էջ 222։

129 Տե՛ս Նարանեան, Արտոսը Հայաստանի, էջ 183—202։

130 Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, էջ 1127, «Արարատ», 1896, էջ 90։

131 Տե՛ս «Ազգագրական հանդես», XXII, էջ 89—92։

132 «Արարատ», 1910, էջ 623։

133 «Նոտարք հայոց», էջ 175, ծա. 2։

իրողությունը։ Նորոգման թվականը ճշտվում է այլ տեղեկությամբ, որ պահպանվել է մի հիշատակարանում. «Եւ ի թուականութեան Հայոց եօթն հարիւրերորդի յիսներորդի իններորդի (1310) յառաջնորդութեան սուրբ ուխտիս պատուական եպիսկոպոսի տէր Յոհան, որ առաջնորդութեան խրում մեզ հանգիստ շնորհեաց... ընծայեցի զսա ի դուռն սուրբ Գէորգայ տաճարիս... զոր վերստին նորոգեաց բարի հովիւ եւ հովուապետն տէր Զաքարիա, որ կաթողիկոս ամենայն հայոց»[134]։

Ս. Նախավկայի վանք.—Գտնվում է Նախճավանի Շամբի ձորում։ Հայտնի է նաև Մաղարդավանք անունով[135]։ Վանական այս համալիրը ևս բաղկացած է երկու սյուներով մի գմբեթակիր եկեղեցուց, գավթից, պարսպապատերից և միաբանների բնակելի սենյակներից։ Եկեղեցու մոտ կա մի փոքրիկ մատուռ՝ Պողոս—Պետրոս անունով։ Ըստ Խաչիկ կաթողիկոսի կոնդակի վանքի հիմնադիրն է Բարդուղիմեոս առաքյալը։ Վանքը հիշատակվում է նաև IV—V դարերում, երբ Սահակ Պարթևը սահմանել էր թեմ և վիճակ[136]։ Սամուել Անեցուն վերագրվող մի ձեռագրում, թվագրված 650 հիշատակված է Մաղարդավանքն այս բոլոր տեղեկություններով հանդերձ[137]։ Սակայն եկեղեցին իր գմբեթակիր հորինվածքով վաղ քրիստոնեական լինել չի կարող։ Այն պետք է վերակառուցված լինի VII դարում կամ ավելի ուշ։ Եկեղեցու վերջին շինության մասին տեղեկանում ենք մի հիշատակարանից. «...վանք հիմնացեալ ի սուրբ Առաքելոյն Բարդողոմէոսի և կրկին նորոգեալ հրամանաւ մեծ թագաւորէն Աշոտ անուն, զոր կանգնեալ եկեղեցի յանուն սուրբ Նախաւկային սրբոյն Ստեփաննոսի եւ սուրբ զաւրաւարին Գէորգա»[138]։

Աշոտ Ողորմածը 976 թվականին վանքին տվել է մի նվիրագիր[139]։ Կարծում ենք այդ թվականով էլ կարելի է թվագրել եկեղեցիների շինությունը։ Վանքի կառուցումը, վերաշինությունը և նորոգումը Խաչիկ կաթողիկոսի կոնդակում վավերացված է այսպես. «...Եղեւ կատարումն շինութեան և նորոգութեան աստուածաբնակ ս. Նախավկայիս ջանիւք եւ աշխատութեամբ Տեառն Բարգենի, որ էր սա շինեալ սուրբ առաքելոյն Բարդուղեմեոսի»[140]։ Հիշյալ Բարգենը վանքի առաջին վանահայրն է։ Այդ մասին հիշատակված է Աշոտ Ողորմածի նվիրագրում։

Վանքը XVII—XVIII դարերում բազմիցս նորոգվել է. այդ մասին կան բազմաթիվ հիշատակություններ վիմագիր նյութերում[141]։

Թերևս նույն պատմությունն է ունեցել նաև Ագուլիսի ս. Թովմայի վանքը։ Սակայն այդ մասին գրավոր տեղեկություններ մեզ հասել են միայն վաղ քրիստոնեական ժամանակներից և ապա XVII դարից։

Արծրունիների շինարարական վերջին գործը կատարվեց Սեբաստիայում, ուր հաստատվել էր Սենիքերիմ Արծրունին և կառուցեց հայադավան մի եկեղեցի Այդ եկեղեցու կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ ևս

---

[134] «Ազգագրական հանդես», I, էջ 85։
[135] Տե՛ս „Saint Martin, Mémoires...," II, p. 422.
[136] Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 516։
[137] Տե՛ս «Արարատ», 1868, էջ 102, Ս. Անեցի, էջ 279։
[138] Ակինեան, Հաւաք. յիշատ., էջ 1007։
[139] Տե՛ս Սմբատեան, Նկարագիր ս. Կարապետի վանքից, Տփղիս, 1904, էջ 418—490։
[140] Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 305։
[141] Տե՛ս նույն տեղում, էջ 313—316։

որևէ տեղեկություն չունենք։ Եվդոկիային նվիրված Ա. Ալպոյաճյանի աշխատությունից հայտնի է, որ եկեղեցին ունեցել է շինարարական արձանագրություն՝ ՍԵՆԵՔԵՐԻՄ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ԵԿՆ ԵՒ ՇԻՆԵԱՑ ՏԱՃԱՐՍ... ՆՀԱ (1022)[142].

* * *

Վասպուրականի ճարտարապետության աննախընթաց վերելքը X դարում առաջին հերթին կապված էր Արծրունիների հզորացման և երկրի ընդհանուր վերելքի հետ։ Սակայն այդ բուռն վերելքն առանձնապես երկարատև չէր։ Այն գոյատևեց ընդամենը մեկ դար և ավարտվեց Վասպուրականի թագավորության վերացման հետ միասին։

1021—1022 թվականներին Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմն իր թագավորությունը հանձնեց Վասիլ Բ կայսրին և փոխարենը ստացավ Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով։

Արծրունիների տեղափոխությունը Վասպուրականից՝ մեծ հարված էր հայության քաղաքական անկախության հետագա պահպանմանը և մշակույթին։ Սենեքերիմ թագավորի հետ միասին Սեբաստիա գաղթեցին հայ բնակչության հոծ զանգվածներ, նոսրացնելով այդ վայրերը և հնարավորություն ընձեռելով թափառական թուրք սելջուկների և քրդական ցեղերի բնակեցմանը։

XII—XIII և հետագա դարերում Վասպուրականում ստեղծվեցին մահմեդական էմիրություններ, որտեղ հայ մշակույթը Հայաստանի կենտրոնական, առավել ևս հյուսիսային նահանգների համեմատությամբ խիստ տուժեց։

Չնայած մեկդարյա կարճատև ժամանակաշրջանին Վասպուրականում կազմավորվեց չափազանց ինքնատիպ արվեստ, որն իր հորինվածքային ձևերով, կառուցողական մեծ վարպետությամբ և գեղարվեստական բարձր արժանիքներով իրավամբ կարելի է դիտել որպես ճարտարապետական առանձին դպրոցի արգասիք։

* * *

Ինչպես տեսանք, շինարարական արվեստի բազմադարյան տարեգրության, ճարտարապետական դպրոցների վերլուծության, ինչպես նաև ճարտարապետական առանձին տիպերի ու հորինվածքների ժամանակագրության հարցերը բազմիցս բևեռել են մասնագետների ուշադրությունը։

Հենվելով վիմագրական ու մատենագրական հարուստ նյութերի, ինչպես և մասնագիտական գրականության մեջ ճանաչում գտած տեսակետների վրա, ճարտարապետական մտքի զարգացման պատմությունը IV—XI դարերում բաժանել ենք հետևյալ փուլերի՝ IV—V դարեր, VI—VII դարեր, IX—XI դարեր։

IV դարի առաջին քառորդը վաղ քրիստոնեական ճարտարապետական տակավին սաղմնային շրջանն էր, երբ հիմնականում օգտագործված էր հեթանոսական ժամանակներից մնացած ժառանգությունը, թեև ծեսի պահանջների ներքո արդեն կատարվեցին առաջին փոփոխությունները։

IV դարի երկրորդ քառորդը նշանավորվեց նախնական շենքերի առավել մեծ փոփոխություններով, որն էլ վճռական շրջադարձ եղավ պաշտամունքային շենքերի նոր տիպերի ստեղծման գործում։

---

[142] Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, էջ 167—168։

Եկեղեցիների գմբեթավորման առաջին փորձերը ևս կատարվեցին IV դարում։ Սակայն առավել մեծ ճանաչում և տարածում գտավ գմբեթը V դարի երկրորդ կեսից։

V դարից հայտնի են գմբեթավոր եկեղեցիների երեք տիպեր՝ խաչաձև հատակագծով (Էջմիածնի Մայր տաճար), գմբեթավոր բազիլիկ (Տեկոր) և գմբեթասրահ (Զովունի)։

VI—VII դարերում առաջ եկան բազմազան հորինվածքային լուծումներ։ Հիշյալ երեքին զուգընթաց հանդիպում են նաև խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիների տարբերակներ, ներքուստ խաչաձև հատակագծով և չորս ավանդատնով եկեղեցիներ (Արամուս—Սյունի վանք), բոլորաձև քառախորան (Արզնի—Զվարթնոց) և բազմախորան (Արագած—Եղվարդ) հորինվածքները և այլն։

IX—XI դարերի հայ ճարտարապետությունն ամբողջապես հիմնված լինելով տեղական վաղ միջնադարյան ավանդների վրա, ըստ էության այդ ավանդների կատարելագործման շրջան էր։

Ինչպես հորինվածքային առումով, նույնպես և շինարարական եղանակների մշակման տեսակետից այդ ավանդների կատարելագործմամբ IX—XI դարերը փաստորեն այն մեծ ընթացքի ամփոփումը եղան, որտեղից իր սկիզբն էր առել տակավին հեթանոսական ավանդների վրա խարսխված վաղ քրիստոնեական ճարտարապետությունը։

Պաշտամունքային ճարտարապետության ձևավորման ամենագլխավոր սկզբունքը, ինչպես արդեն նշեցինք, ներքին տարածության հորինվածքի առավել կենտրոնացման և ընդհանուր ծավալի պարագծերում ամբողջականացման երևույթն էր։ Այս սկզբունքն էլ կազմեց հայ ճարտարապետական մտքի ամենաբնորոշ և ինքնատիպ առանձնահատկությունը և սկզբունքորեն տարբերվեց հարևան երկրների և, մասնավորապես, բյուզանդական ճարտարապետությունից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
IV—V դարերի շինարարական վկայագրեր 8
VI—VII դարերի շինարարական վկայագրեր 48
IX—XI դարերի շինարարական վկայագրեր 107
Սյունիք 109
Այրարատ 146
Անի 190
Վասպուրական 228

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՄԻ
МАНУЧАРЯН АЛЕКСАНДР АРАМОВИЧ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ IV—XI ԴԱՐԵՐԻ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ
Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ և Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ
Հրատարակչական խմբագիր
Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Նկարիչ
ՅՈՒ. Հ. ՍՌԱՔԵԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՖ 07124 Պատվեր 892 Հրատ. 4637 Տպաքանակ 1500

Հանձնված է շարվածքի 19.11.1976 թ.: Ստորագրված է տպագրության 14.9.1977 թ.:
Տպագրական 15 մամուլ + 12 ներդիր, պայման. 23,1 մամուլ, հրատ. 20.77 մամուլ:
Թուղթ № 1, 70×108 1/16, գինը 2 ռ. 90 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան